Գիրքը համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորի կողմից սիրված Գրքամոլ ֆեյսբուքյան էջը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, սրանք մեր առաջին քայլերն են այս ասպարեզում, և մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան մեզ օգնել այս հանրօգուտ գործում: Մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք տանը ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք Ձեր ցանկության մասին մեր էլ.- հասցեով՝ grqamol@gmail.com: Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

ՄԱՐՏԻՆ ԻԴԵՆ



ՀԱՅՊԵՏՐԱՏ

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

ՄԱՐՏԻՆ ԻԴԵՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Երևան – 1951

Թնագրից թարգմանեց
Հ. ԹԱԹՈՒԱՄՅԱՆ

ДЖЕК ЛОНДОН
МАРТИН ИДЕН
(На армянском языке)
Ереван, Айпетрат, 1951



ԳԼԱԽ I

Առջևից գնացողը ֆրանսիական բանալիով բացեց դուռն ու ներս մտավ։ Նրան հետևեց երիտասարդը, որն անշնորհք կերպով ցած առավ կեսկան գլխից։ Նա հագել էր հասարակ ու կոշտ զգեստ, որից ծովի հոտ էր փչում։ Ընդարձակ դահլիճում նա կարծես իր տեղում չէր։ Նա չէր իմանում, թե ինչ անի իր կեսկան և պատրաստվում էր գրպանը կոխել, բայց ուղեկիցն իսկույն վերցրեց այն նրա ձեռքից այնպես պարզ ու բնական, որ անշնորհք տղան զգացվեց։ «Նա հասկացող է,— անցավ մտքովը,— նա ինձ չի մատնի»։

Տատանվող ու լայն քայլերով, կարծես տախտակամածը ծովի ալիքներից իջնում ու բարձրանում էր, նա հետևեց իր ուղեկցին։ Թվում էր, թե հսկայական սենյակները նեղ էին

նրա լայնարձակ քայլվածքի համար, նա շարունակ վախենում էր ուսով դիպչել դռանը կամ որևէ առարկա ցած գցել բուխարուց։ Նա զգուշությամբ էր անցնում զանազան իրերի մոտից, չափազանցնելով ավելի շատ իր երևակայության մեջ գոյություն ունեցող վտանգը։ Դաշնամուրի ու գրքերով ծանրաբեռ սեղանի արանքով հեշտությամբ կարող էր անցնել վեց մարդ, մինչդեռ նա սիրտ արավ անցնել շունչը պահած։ Նրա ծանր ձեռներն անզոր օրորվում էին։ Չէր իմանում, թե ինչ կերպ վարվի նրանց հետ և հանկարծ որոշակի պատկերացրեց, թե կարող է դիպչել սեղանի վրա դտնվող գրքերին. նա խրտնած ձիու նման մի կողմ ցատկեց և քիչ էր մնացել, որ շուռ տար դաշնամուրի մոտ դրված տարուրետը։ Նա նայում էր վստահորեն քայլող իր ուղեկցին և կյանքում առաջին անդամ անցավ մտքովը, թե որքան անտաշ է իր սեփական քայլվածքը և որքան է տարբերվում ուրիշների քայլվածքից. այդ մտքից նա մի պահ շիկնեց ամոթից։ Քրտինքը դուրս տվեց նրա ճակատին, և նա կանգ առավ ու թաշկինակով սրբեց իր բրոնզագույն դեմքը։

— Արտուր, բարեկամս, մի քիչ շունչ առնենք,— ասաց նա կատակի ձևով՝ փորձելով վարագուրել իր շփոթությունը։ —Առաջին անդամվա համար ինձ չափազանց շատ է այս ամենը։ Թույլ տվեք մի քիչ սրտապնդվել։ Դուք դիտեք, որ ես չէի ցանկանում, իսկ ձերոնք էլ, բնականաբար, ինձ տեսնելու համար անհամբեր չեն սպասում։

— Դատարկ բան է,— հնչեց հանդստացուցիչ պատասխանը,— մեղնից քաշվելու առիթ չկա։ Մենք հասարակ մարդիկ ենք։ Ա՜, տեսնում եմ, որ ինձ նամակ կա։

Նա մոտեցավ սեղանին, բացեց ծրարն ու սկսեց կարդալ, հյուրին հնարավորություն տալով ուշքի դալ։ Հյուրը հասկացավ ու գնահատեց այդ։ Նա շատ զգայուն ու տպավորվող էր և չնայած արտաքին շփոթվածությանը, նրա մեջ արդեն տեղի էր ունենում իրադրության հարմարվելու պրոցեսը։ Նա սրբեց ճակատն ու ավելի հանդարտ նայեց իր շուրջը, թեև նրա աչքերում, ինչպես թակարդից վախեցող վայրի կենդա-

նու աչքերում, դեռևս մնում էր տագնապը։ Նա գտնվում էր անծանոթ շրջապատում, վախենալով, որ կարող է մի ինչ-որ բան պատահել։ Չգիտեր, թե ինչ կհրսպ վարվի, հասկանալով միայն, որ իրեն պահում է պաշտաճ, և որ հավանականորեն այդ անճարությունը դրսևորվում է ոչ միայն քայլվածքում և շարժուձևում։ Նա չափազանց զգայուն էր, անհավատալիորեն ինքնասեր։ դրանով էր բացատրվում, որ այն խորամանկ հայացքը, որը գաղտագողի նրա վրա գցեց Արտուրը նամակի վերևից, դաշույնի հարվածի նման խոցեց նրան։ Նա որսաց Արտուրի հայացքը, բայց չտեսնել ձևացրեց, որովհետև արդեն շատ բան էր սովորել, ամենից առաջ՝ կարգապահություն։ Սակայն, այդ դաշույնի հարվածը վիրավորեց նրա հպարտությունը։ Նա կշտամբում էր իրեն այն բանի համար, որ եկավ այստեղ, բայց իսկույն ևեթ որոշեց՝ որ եկել է, ուրեմն պիտի տոկա մինչև վերջ։ Նրա դեմքը ստացավ խիստ արտահայտություն և աչքերի մեջ փայլատակեց մի հուր։ Նա այժմ ավելի վստահ նայեց շուրջը, ջանալով ուղեղում տպավորել այդ նոպրբ իրադրության բոլոր մանրամասները։ Նրա լայն բացված աչքերից ոչինչ չխուսափեց, և քանի նա նայում էր սիրուն առարկաներին, այնքան նրա աչքերի ցասկոտ հուրը հանգում էր, փոխարինվելով ջերմ փայլով։ Գեղեցիկը միշտ ջերմ ընդունելություն էր գտնում նրա հոգում, իսկ այստեղ հիացմունքի արժանի իրեր շատ կային։

Նրա ուշադրությունը գրավեց պատից կախված նկարը։ Հզոր կոհակը փշրվում էր ջրից դուրս ցցված ապառաժին. մրրկաբեր ամպերը պատել էին մայրամուտային երկինքը, իսկ փոթորկահույզ ալիքների վրա տարուբերվում էր միակայմ նավակը՝ սաստիկ թեքված մի կողմի վրա այնպես, որ նրա ամբողջ տախտակամածը պարզ երևում էր։ Դա գեղեցիկ էր, իսկ գեղեցկությունն անդիմադրելիորեն գերում էր նրան։ Նա մոռացավ իր անշնորհք քայլվածքը և ընդհուպ մոտեցավ նկարին։ Գեղեցկությունն անհետացել էր։ Նա տարակուսանքով նայում էր նկարին, որն այժմ թվում էր մի կոպիտ ծեփվածք։ Ապա նա ետ քաշվեց և իսկույն նկարը նորից գար-

ձավ հիանալի։ «Ֆոկուսով նկար է», մտածեց նա և երեսը շուռ տալով, նորանոր հորդահոս ապավորությունների ազդեցության տակ, արդեն սկսեց զայրանալ, որ այդքան դեղեցկություն զոհաբերվել է մի անմիտ ֆոկուսի համար, Նկարչության մասին նա գաղափար չուներ։ Մինչև այժմ նա տեսել էր միայն խրոմոլիտոդրաֆիաներ, որոնք մոտից թե հեռվից հավասարապես ողորկ ու հստակ էին։ Ճիշտ է, նա խանութների ցուցափեղկերում տեսել էր յուղաներկ նկարներ, բայց ապակին չէր թույլ տալիս դիտել նրանց՝ ինչպես հարկն է։

Նա նայեց իր բարեկամին, որը շարունակում էր կարդալ նամակը, և սեղանի վրա տեսավ գրքեր։ Նրա աչքերը վառվեցին ագահությամբ, ինչպես սոված մարդու աչքերը՝ կերակուր տեսնելիս։ Ակամա քայլեց դեպի սեղանը՝ միշտ նույն տատանվող քայլերով, և հուզված սկսեց գրքերը մի առ մի աչքի անցկացնել։ Նա նայում էր վերնագրերին ու հեղինակներին, բնագրից կարդում էր առանձին նախադասություններ, աչքերով ու ձեռներով շոյում գրքերը։ Հանկարծ նրա աչքովն ընկավ մի գիրք, որը նա կարդացել էր վերջերս։ Բացի այդ մեկից՝ մյուս գրքերը բոլորովին անծանոթ էին նրան, ինչպես նաև նրանց հեղինակները։ Նրա ձեռքին էր Սուինբեռնի հատորիկը և նա սկսեց կարդալ այն՝ մոռանալով, թե որտեղ է գտնվում։ Նրա դեմքը ճառագայթեց։ Երկու անգամ փակեց գիրքը՝ ստուգելու համար հեղինակի անունը, ցուցամատով պահելով էջը, որը կարդում էր։ Սուինբեռն. նա չի մոռանա այդ անունը։ Երևում է, որ այդ Սուինբեռնը սուր աչքեր է ունեցել, որ կարողանում էր տեսնել գծագիրն ու դույները։ Բայց ո՞վ է նա։ Մեռե՞լ է հարյուր տարի առաջ, ինչպես բանաստեղծների մեծ մասը, թե՞ ողջ է ու շարունակում է գրել։ Նա շուռ տվեց առաջին էջը։ Բայց դուրս է գալիս, որ նա գրել է և այլ գրքեր։ Լա՞վ, վազը ևեթ նա կգնա հանրային գրադարան և կփորձի վերցնել Սուինբեռնի երկերից որևէ մեկը։

Նա այնքան էր տարվել ընթերցումով, որ չնկատեց, թե

ինչպես սենյակ մտավ մի երիտասարդ կին։ Նրան սթափեցրեց Արտուրի ձայնը, որը հանկարծ ասաց.

— Ռութ, մեզ մոտ է միստեր Իդենը։

Գիրքը շրխկոցով փակվեց և նա, դեռ ետ չդարձած, ամբողջ մարմնով դողաց նոր զգացումից, որն առաջացավ նրանում ոչ թե աղջկա երևալուց, այլ նրա եզբոր ձայնից։ Նրա ջլուտ մարմնում ապրում էր սրված զգայնություն։ Արտաքին աշխարհի ամենաաննշան ազդեցության տակ նրա զգացումներն ու մտքերը պոռթկում ու բոցավառվում էին. նա խիստ զգայուն էր և տպավորվող, իսկ նրա վառ երևակայությունն անընդհատ գործում էր՝ իրերի փոխհարաբերությունները, նմանությունն ու տարբերությունը սահմանելու համար։ Նրան ցնցեցին «միստեր Իդեն» բառերը։

Նա, որին ողջ կյանքի ընթացքում կոչել էին «Իդեն», կամ «Մարտին Իդեն» և կամ պարզապես «Մարտին», հանկարծ «միստեր» դարձավ։ «Դա որևէ նշանակություն ունի», մտածեց նա։ Նրա խելքը հանկարծ վերածվեց մի ահագին մութ կամերայի, և նրա աչքին անվերջ շարանով պատկերացան նրա կյանքի զանազան դրվագները—հնոցները, նավամբարները, դոկերը, նավամատույցները, բանտերն ու դինեարները, ջերմախտի հիվանդանոցներն ու մռայլ խլանկյունները, որոնց բարքերին ու սովորություններին միայն ծանոթ էր նա և կիրառում էր նրանք իր առօրյա կյանքի բոլոր դեպքերում։

Ահա նա ետ նայեց ու տեսավ աղջկան։ Նրա հիշողության մեջ առաջացած անճոռնի կերպարները միանգամից անհետացան։ Նա մի դժգույն, եթերային էակ էր՝ խոշոր, ծավի, խելացի աչքերով, ոսկեգույն մազերի զանգվածով։ Նա չգիտեր, թե աղջիկն ինչպես էր հագնված. գիտեր միայն այն, որ նրա հագուստը նույնպես հրաշալի էր, ինչպես ինքը Ռութը։ Նա մտովին համեմատեց նրան նուրբ ցողունի վրա բուսած բաց ոսկեգույն ծաղկի հետ։ Ո՛չ, ավելի շուտ նա մի ոգի է, աստվածություն, դիցուհի — այսպիսի վեհ գեղեցկությունը չի կարող երկրային լինել։ Եվ կամ իրոք ճիշտ են ասում գրքերը. հասարակության այլ, բարձր շրջաններում շատ

կան նրա նմանները։ Սուփերեոնը պետք է նրան գովերգեր։ Թերևս Սուփերեոնը նկատի է ունեցել նրա նման մեկին, երբ նկարագրում էր Իզոլդային այն գրքում, որը գրված է այնտեղ, սեղանի վրա։ Մարերի, տեսիլքների և զգացումների այդ ողջ շարահարությունը տեսեց միայն մի ակնթարթ։ Իսկ արտաքին գեղքերն ընթանում էին իրենց հերթին, առանց ընդհատվելու։ Աղջիկը երկարեց նրան իր ձեռքը, և Իդենը նկատեց, թե ինչպես աղջիկը շեշտակի նայում էր նրան, երբ ամուր, բոլորովին առնականորեն սեղմեց նրա ձեռքը։ Նրա ճանաչած կանայք այդպես չէին սեղմում։ Ընդհանրապես նրանցից շատերը ամենևին ձեռք չեն տալիս։ Մարտինին նուրից ողողեց երփներանգ պատկերների մի ամբողջ հոսանք, նրա միտքը պաշարեցին զանազան կանանց հետ իր ծանոթության հիշողությունները։ Բայց նա ետ մղեց բոլոր այդ հիշողությունները և նայեց Ռութին։ Այդպիսի աղջկա նա երբեք չէր տեսել իր կյանքում։ Նրա դիտցած կանայք... իսկույն նրա կողքին շարքով կանգնեցին «այն» կանայք։ Մի վայրկյանում, որը թվաց մի ողջ հավիտենականություն, նա կարծես գտնվում էր դիմանկարների դահլիճում, ուր Ռութը կանգնած է կենտրոնում, իսկ նրան շրջապատել են բազմաթիվ կանայք, որոնց պետք է գնահատել լոկ հարևանցի ակնարկով և համեմատել Ռութի հետ՝ չափանիշ ունենալով հենց նրան։ Նրա աչքին ներկայացան ֆաբրիկայի բանվորուհիների և շուկաներում դեգերող լպիրշ պոռնիկների հիվանդագին դեմքերը, անասնաբուծական ահագին ռանչոներում աշխատող կանայք և Հին Մեքսիկայի թխադեմ, սիգար ծխող բնակչուհիներ։ Այնուհետև, նրա աչքին երևացին տիկնիկների նմանվող, փայտե ներբաններով ճեմող ճապոնուհիներ, Եվրասիայի կանայք նուրբ դիմագծերով և այլասեռումի արդեն նկատելի նշաններով. նրանց հաջորդեցին Խաղաղ օվկիանոսի կղզիների պարարտամարմին, թխամորթ և ծաղիկներով զարդարված կանայք։ Եվ վերջապես, այդ բոլորին խրկեց հրեշավոր, մղձավանջային մի ամբոխ՝ Ուայտչեպլի մայթերին թրև եկող զգզված անառակ կանայք, մռայլ պոռնկանոցների՝ ջինի

տկճոր դարձած ջադուներ, դժոխքի ծնունդների մի ամբողջ ջոլիր, որոնք իջևաններում որսում են նավաստիներին,— նավահանգիստների այդ թափթփուկները, մարդկային աղտահոտի այդ փրփուրն ու մրուրը։

— Խնդրեմ, նստեցեք, միստեր Իդեն,— ասաց աղջիկը,— ես շատ էի ցանկանում ծանոթանալ ձեզ հետ այն դեպքից հետո, որի մասին պատմեց մեզ Արտուրը։ Դա շատ կտրիճ մի քայլ էր ձեր կողմից։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը և մրթմրթաց, որ այդ բոլորը դատարկ բան է, և ով էլ որ լիներ նրա փոխարեն, այդպես կվարվեր։ Ռութը նկատեց, որ նրա աջ ձեռքը ծածկած է թարմ ճանկռվածքներով, նայեց մյուս ձեռքին և նույնը տեսավ այնտեղ էլ։ Հետո մի արագ քննադատող հայացքով նկատեց նրա այտին մի սպի, մի ուրիշը ճակատին՝ հենց մազերի տակ և վերջապես՝ երրորդը, որը անհետանում էր օսլայած փոքր օձիքի տակ։ Ռութը զսպեց իր ժպիտը՝ տեսնելով նրա բրոնզագույն վզի վրա օձիքի հարելուց առաջացած մի կարմիր գոլ։ Երևում է, որ նա սովոր չէ օձիք դնել։ Ռութի կանացի հայացքից չվրիպեցին և նրա կոստյումի պարկանման ձևվածքը, ուսերին և թևերին ծալքեր, որոնց տակ ուրվագծվում էին հուժկու մկանները։

Կրկնելով, որ իր վարմունքում ոչ մի արտասովոր բան չկա, նա հնազանդվեց Ռութին և քայլեց դեպի թիկնաթոռը։ Ընդամենը նա ժամանակ ունեցավ հիանալու, թե աղջիկն ինչպիսի անսեթևեթ շնորհալիությամբ նստեց, իսկ ինքը ավելի ևս շփոթվեց՝ պատկերացնելով իր անշնորհք կերպարանքը։ Այդ բոլորը նրա համար նորություն էր։ Իր կյանքում նա երբեք չէր մտածել, թե ինքը ճարպիկ է, թե՞ անշնորհք։ Երբեք նրա մտքով չէր անցել՝ այդ տեսակետից նայել իրեն վրա։ Նա զգուշությամբ նստեց թիկնաթոռի ծայրին՝ չիմանալով, թե ուր դնի ձեռքերը։ Ուր էլ որ դնում էր իր ձեռքերը, դրանք շարունակ խանգարում էին նրան. նա ավելի ևս շփոթվեց, երբ Արտուրը դուրս եկավ սենյակից, և Մարտին Իդենն ակամա թախիծով նայեց նրա ետևից։ Սենյակում մենակ մնալով

կանացի կերպարանքով այդ զվարճալի ոգու հետ, նա բոլորովին կորցրեց իրենն։ Այստեղ չկար ոչ մահճասենյակ, ոչ կարելի լիներ դիմի պահանջել, ոչ էլ ոգու, որին կարելի էր ու պարկել դարձյալ, որպեսզի այդ զարդ իմիջի օգնությամբ բարեկամական դրություն կարողանար սկսել։

— Ձեր վիճն ոգի կա, միսաեր Եգեն,— ասաց ազջիկը։ Որտեղի՞ց է դու։ Հավանաբար դա կապված է ինչ-որ արտասովոր արկածի հետ։

— Մերսիկացին գանակով վիրավորեց ինձ, միսս,— պատասխանեց նա՝ լեզվով թրջելով շրթունքը և հոգոցով, որպեսզի կոկորդը մարի,—մենք կռվում էինք։ Եվ հետո, երբ ես նրանից խլեցի գանակը, նա ուզում էր կծել-պոկել իմ բիբը։

Նա այդ ասաց միանգամայն պարզ, իսկ նրա աչքերի առաջ պարզվեց հեգնալիշ ատաղձից պիշերվա պատկերը Սալինա-Կրուցում, ծավալի սպիտակ հոգաշերտ, շաքար բարձած շոգենավերի լույսերը, հարբած նավատորների ձայնները հեռվից, բարձակների հոհոցը, մերսիկացու կատաղությունից այրայված դեմքը, ատաղձի լույսի տակ նրա աչքերի գազանային փայլը, վրի վրա դցացած պոպպատի սառնությունը, արյան հոտերը, ամբոխն ու ատաղձակները, երկու մարմին՝ իր և մերսիկացու, որոնք իրար հյուսված, թավալվում են ավազի վրա, և հեռվից լսվող կիսաձայն հնչյունները։ Դա հենց այդպես էլ տեղի է ունեցել։ Հիշելով այդ՝ նա ցնցվեց ու մռայլեց, թե ինչպես կարող էր արած նկարի հետևանքն կկարողանա՞ր արդյոք այդ բոլորը պատկերել պատատոի վրա։ Սպիտակ ծավալը, ատաղձը, բենզակիր շոգենավերի լույսերը պիտի լամ դարձ դան, իսկ մեջտեղում, ավազի վրա, կնկարեր կավոնների շուրջը խռնված մութ ամբոխը։ Նա վրձնեց, որ նկարում պիտի կերպարել նաև գանակը՝ պողպատը շատ սիրուն կփայլեր ատաղձի լույսի տակ։

Բայց այդ բոլորից ոչ մի բան չարտահայտեց նա իր խոսքերում։

— Այո, նա ուզում էր կծել-պոկել իմ քիթը,— ավելացրեց նա։

— Օ՜,— բացագանչեց աղջիկը, և նրա ձայնի շեշտում և դեմքի արտահայտության մեջ նա զգաց շփոթմունք։ Նա ինքն էլ շփոթվեց, և նրա արևակեղ այտերը թեթևակի շիկնեցին, բնդ որում նրան թվաց, թե իր այտերը վառվում են՝ կարծես շոգեկաթսայի բաց հնոցի մոտ մի ողջ ժամ կանգնելուց հետո։ Այդպիսի տգեղ նյութերի մասին, ինչպիսին է դանակամարտը, հազիվ թե պատշաճ է զրուցել աշխարհիկ կնոջ հետ։ Գրքերում նրա շրջանակի մարդիկ երբեք չեն խոսել այդպիսի բաների մասին,— թերևս նրանք այդպիսի բաների մասին մինչև անգամ չգիտեն։

Հազիվ սկսված խոսակցությունը կարճ ժամանակով ընդհատվեց։ Այդ կապակցությամբ Ռութը նորից հարց տվեց՝ այս անգամ նրա այտի սպիի մասին։ Նրա այդ հարցումից Մարտին Իդենը հասկացավ, որ աղջիկը փորձում է դուրս չգալ նրա թեմաների շրջանակից, և որոշեց պատասխանել, և ապա խոսակցությունը փոխել աղջկանը շահագրգռող նյութերի շուրջը։

— Դեպքը պատահեց այսպես,— ասաց նա, ձեռքով շփելով իր այտը։— Մի դիշեր մեծ ալեկոծության ժամանակ մեծ առագաստն իր բոլոր պարաններով պոկվեց։ Տրոսը մեռաղյա լարերից էր. նա սկսեց օձի նման շարժվելով խարազանել շորս կողմը։ Բոլոր հերթապահ նավատորմիները աշխատում էին բռնել այն։ Ես առաջ նետվեցի և ամրացրի տրոսը. բայց այդ վայրկյանին նա խփվեց իմ երեսին։

— Օ՜,— բացագանչեց աղջիկը նորից՝ այս անգամ մի որոշ կարեկցությամբ, թեև բոլոր այդ «մեծ առագաստները» և «տրոսները» նրան նույնքան անհասկանալի էին, ինչքան եթե Մարտինը նրա հետ խոսեր հունարեն։

— Այդ... Սվինբե՛ոնը,— սկսեց Մարտին Իդենը՝ իրագործելու համար իր պլանը, բայց ընդամենը թույլ տալով առողանության սխալ։

— Ո՞վ։

— Սվինբե՛ռն,—կրկնեց նա,—բանաստեղծը։

— Սուի՛նբեռն,— ուղղեց աղջիկը։

— Այո, հենց ինքը,— ասաց նա՝ նորից շիկնելով։— Վա՞ղ է մեռել նա։

— Ես չեմ լսել, որ նա մեռած լինի։— Աղջիկը հետաքրքրությամբ նայեց նրան։— Դուք որտե՞ղ եք ծանոթացել նրա հետ։

— Ես նրան աչքովս չեմ տեսել,— պատասխանեց նա։— Նրա ոտանավորներից ես մի քանի բաներ կարդացել եմ ահա այն սեղանի վրա գտնվող գրքույկից՝ հենց ձեր ներս գալուց առաջ։ Հավանո՞ւմ եք դուք նրա ոտանավորները։

Ռութը ազատ ու հեշտ սկսեց խոսել իրեն հետաքրքրող նյութի մասին։ Մարտին Իդենն իրեն ավելի լավ զգաց և մինչև անգամ ավելի հարմար տեղավորվեց թիկնաթոռին, սակայն շարունակելով ամուր կոթնել արմունկներին. նա կարծես վախենում էր, որ աթոռը դուրս կպրծնի նրա տակից և ինքը երեսի վրա կշպրտվի հատակին։ Նրան հաջողվեց անցնել աղջկա սրտին մոտիկ նյութի, և այժմ լարված լսում էր, զարմանալով, թե նրա փոքրիկ գեղեցիկ գլխում ինչքան շատ գիտելիքներ են ամբարված, և հիանում էր նրա փրխրուն գեղեցկությունը դիտելով։ Նա ճգնում էր ըմբռնել լսածը, թեև աղջկա շրթունքներից այնքան պարզ կերպով թռչող բառերը ապշեցնում էին նրան և աղջկա մտքի ամբողջ ընթացքը բոլորովին օտարոտի էր նրան։ Սակայն այդ բոլորը աշխատեցնում էր նրա ուղեղը։—Ահա, թե որտեղ է մտավորական կյանքը,—մտածեց նա,—ահա, թե որտեղ է վառ ու հրաշալի գեղեցկությունը, որի գոյության մասին նա մինչև իսկ չէր երևակայում։ Նա մոռացավ ամեն բան, որը շրջապատում էր նրան, և ագահորեն սևեռեց իր աչքերը աղջկանը։ Այո, այստեղ կա մի բան, որի համար արժե ապրել, որին արժե հասնել, որի համար արժե պայքարել և որի համար արժե մեռնել։ Գրքերը ճիշտ են ասում։ Աշխարհում լինում են այդպիսի կանայք։ Ահա նրանցից մեկը։ Աղջիկը թեվավորվում էր նրա երևակայությունը. ահագին վառ պաստառ-

ներ էին պարզվում նրա աչքի առաջ և նրանց վրա թռչում-թառում էին խորհրդավոր, ռոմանտիկ կերպարներ, սիրո ու հերոսական սխրագործությունների տեսարաններ՝ կնոջ— դժգույն կնոջ, ոսկե ծաղկի սիրույն։ Եվ այդ երերուն ու դողդոջուն տեսիլքների, ինչպես հրաշալի միրաժի միջով, նա նայում էր կենդանի կնոջը, որը նրա հետ խոսում էր արվեստի ու գրականության մասին։ Նա լսում ու նայում էր, առանց գիտակցելու իր նայվածքի սևեռուն լինելը, և առանց գիտակցելու, որ իր խառնվածքի ամբողջ առնական էությունը արտացոլվում է իր վառվռուն աչքերում։ Բայց աղջիկը, որը քիչ բան գիտեր կյանքի ու տղամարդկանց մասին, հանկարծ կանացիորեն զգուշացավ՝ որսալով նրա այդ բոցավառ հայացքը։ Դեռ ոչ մի տղամարդ այդպես չէր նայել նրան և այդ նայվածքը շփոթեցրեց նրան։ Նա կարկամեց ու լռեց։ Նա հանկարծ կորցրեց իր մտքի կապը։ Այդ մարդը նրան վախեցնում էր, միաժամանակ ինչ-որ պատճառով հաճելի էր, որ նա այդպես նայում է իրեն։ Իր ստացած դաստիարակությունը նախազգուշացնում էր աղջկանը վտանգի և այդ խորհրդավոր նենգ թռչանքի դեմ. բայց նրա արյան մեջ բնազդը զգացնել էր տալիս իրեն, պահանջելով, որ նա մոռանա իր ծագումը և հասարակության մեջ իր դիրքը և ձգտի ընդառաջ գնալու մի այլ աշխարհից եկած այս հյուրին, այս անշնորհք, խոցոտված ձեռքերով, օձիք դնելու անսովոր, վկին կարմիր սպի ունեցող պատանուն,— այլանդակ կյանքից (դա ակներև էր) ապականված պատանուն։ Աղջիկը մաքուր էր և նրա ողջ անբծությունը ընդվզում էր, բայց նա կին էր, այն էլ կանացի բնության զարմանալի պարադոքսի մասին դեռ նոր մտածելու սկսած կին։

— Ինչպե՞ս ասացի ես... ի՞նչ էի ասում,—բացագանչեց նա հանկարծ, կտրելով նախադասությունը, և ուրախ ծիծաղեց։

— Դուք ասում էիք, որ այդ Սուինբեռնը մեծ բանաստեղծ չդարձավ նրա համար, որ... այո՛... ճիշտ այդտեղ էլ դուք կանգ առաք, միսս...

Նա ասաց այդ և կարծես հանկարծական քաղցի նոպա զգաց։ Նրա ծիծաղից Մարտինը հաճելի զարզանդ զգաց։ Իսկական արծաթ, մտածեց նա, իսկական փոքրիկ արծաթե գանգուլակ. և այդ պահին միայն մի ակնթարթ նա փոխադրվեց մի հեռավոր երկիր, ուր նստել էր ծաղկած բալենու տակ, ծխելով սիգարը, լսում էր սրածայր մեհյանի զանգուլակների հնչյունը, որը հարդե մուճակներ հագած ուխտավորներին աղոթքի էր հրավիրում։

— Այո՛, այո՛... շնորհակալ եմ,— պատասխանեց աղջիկը.— Սուինբեռնը մեծ բանաստեղծ չդարձավ այն պատճառով, որ ճիշտն ասած, երբեմն կոպիտ է լինում։ Նա այնպիսի բանաստեղծություններ ունի, որոնք պարզապես շարժե կարդալ։ Իսկական բանաստեղծի ամեն մի տողը համակված է գեղեցիկով, ճշմարիտով և ոգեշնչում է մարդուն ամենավսեմը և ազնիվը։ Մեծ բանաստեղծների գրվածքներից չի կարելի դուրս գցել ոչ մի տող՝ առանց աշխարհին վնասելու։

— Իսկ ինձ դա թվաց շատ լավ,— ասաց Մարտինն անվճռական,— այն, ինչ ես կարդացի այստեղ...իմ մտքովն էլ չանցավ. որ նա այդպիսի անպիտանն է։ Ենթադրում եմ, որ դա արտացոլվում է և նրա մյուս գրքերում։

— Ձեր կարդացած գրքումն էլ կան բազմաթիվ տողեր, որոնք կարելի է դուրս գցել առանց որևէ վնասի,— հայտարարեց Ռոմը հաստատ ու համոզված շեշտով։

— Հավանական է, որ այդպիսի տողեր աչքովս չընկան,— ասաց նա,— իմ կարդացածը անկասկած շատ լավ էր։ Կարծես ինչ-որ լույս ճառագայթում է սրտիդ, արևի կամ լուսարձակի նման։ Ինձ այդպես թվաց, միստ. Թերևս ես ոչինչ չեմ հասկանում ոտանավորներից։

Նա հանկարծ լռեց՝ դառնապես դիտակցելով իր թոթովանքը։ Իր նոր կարդացածի մեջ նա զգաց ջերմություն և կյանքի ահագնությունը, բայց նրան պակասում էին բառեր, որպեսզի պատմի այդ մասին։ Նրան թվում էր, որ ինքը ոտար նավի վրա ընկած մի նավավար է, որը մութ գիշերով

խճճվել է անծանոթ կայմասարքում։ Լա՜վ, վճռեց նա, նշանակում է՝ պետք է ամեն գնով բնտելանալ այս օտար աշխարհին։ Դեռ երբեք չէր պատահել, որ նա չտիրապետի, ինչին որ ուզում է, իսկ այժմ նա տենդագին ուզում էր սովորել, արտահայտել իր զգացումներն ու մտքերն այնպես, որ աղջիկը նրան հասկանա։ Աղջիկը արդեն բռնել էր նրա ամբողջ հորիզոնը։

— Ահա, օրինակի համար, Լոնգֆելլոն...— սկսեց աղջիկը։

— Այո՛, այո՛, ես նրան կարդացել եմ,— աշխուժորեն ընդմիջեց նա ցանկանալով շուտով ցուցաբերել իր բոլոր՝ թեև քիչ-գիտցածը գրականության մարզում։ Թող աղջիկը համոզվի, որ նա այնքան էլ կատարյալ տգետ չի։— Ես կարդացել եմ նրանից «Կյանքի սաղմոսը,» «Էքսցելսիորը»... կարծեմ՝ էլ ոչինչ։

Աղջիկը ժպտաց, գլխով արեց, և Մարտին Իդենը նրա ժպիտում զգաց ներողամտություն, ցավալի ներողամտություն։ Նա հիմարացավ՝ վճռելով պարծենալ իր խղճուկ գիտելիքներով։ Չէ՞ որ այդ Լոնգֆելլոն գրել է, հավանականաբար, անհաշիվ գրքեր։

— Ներեցեք, միսս, որ ես այդ խոսակցությունը սկսեցի ձեզ հետ,— ասաց նա։— Ճիշտն ասած, ես շատ չեմ հասկանում այդպիսի բաներ։ Դա իմ խելքի բանը չի... բայց ես կանեմ ամեն ինչ, որպեսզի դա իմ խելքի բանը լինի։

Այդ վերջին բառերը նա ասաց իբր սպառնալիք։ Նրա ձայնը հնչեղ էր, աչքերը փայլատակում էին, բերանի անկյունի ծալքերը ավելի խտացան։ Աղջկանը այնպես թվաց, որ նրա ծնոտը ցցվեց։ Նրա դեմքը ինչ-որ անհաճո, մարտի հրավիրող արտահայտություն ստացավ։ Միաժամանակ նրանից բխող առնականության մի հուժկու ալիք մտրակեց աղջկան։

— Ես հավատում եմ, դուք կհասնեք...որ դա ձեր խելքի բանը դառնա,—հաստատեց նա ծիծաղելով,— դուք այնքա՜ն ուժեղ էք։

Աղջկա հայացքը մի պահ կանգ առավ նրա առնական, արևից բրոնզի գույն ստացած, առողջություն և ուժ շնչող՝ ցուլի վզի վրա։ Եվ չնայած նրան, որ նա նստած էր աղջկա առաջ այնպես շփոթված ու հեզ, ձգողական մի ուժ նորից քաշում էր նրան դեպի պատանին։ Աղջկա գլխովը հանկարծ մի չարաճճի միտք անցավ։ Նա այնպես պատկերացրեց իրեն, որ եթե գրկի այդ վիզը, նրա ամբողջ ուժն ու հզորությունը կփոխանցվի իրեն։ Այդ միտքը ամաչեցրեց նրան։ Թվում էր, որ աղջիկը անակնկալ կերպով իր մեջ գտավ ինչ-որ արատավորություն։ Բացի այդ, մինչև այժմ ֆիզիկական ուժը շարունակ թվում էր նրան ինչ-որ ստոր ու կոպիտ բան։ Առնական գեղեցկության նրա իդեալը՝ քնքուշը և նուրբն էր։ Սակայն տարօրինակ միտքը չէր հեռանում նրանից։ Նա չէր հասկանում, թե ինչպես կարող էր ծագել նրանում՝ այդ արևակեզ վիզը գրկելու ցանկությունը։ Եվ սակայն ամեն ինչ պարզ էր։ Նա ի ծնե փխրուն էր և նրա մարմինն ու միտքը պապակում էին ուժի, որը պակասում էր նրան։ Բայց աղջիկը չէր գիտակցում այդ բանը. նա գիտեր միայն այն, որ մինչև այժմ ոչ մի տղամարդ չէր հետաքրքրել նրան այնքան ուժգին, ինչպես այս մեկը, որի անճիշտ խոսակցությունը մերթ ընդ մերթ ականջն էր ծակում։

— Այո, ես առհասարակ ցուլի պես առողջ եմ,— ասաց նա,— եթե հարկավոր լինի, կարող եմ մարսել ժանգոտ երկաթը։ Բայց այժմ ես, կարծես անմարսողություն ունեմ։ Ձեր ասածներից շատ բան ինձ համար անմարսելի է։ Ասեմ, որ ինձ երբեք չեն սովորեցրել այդպիսի բան։ Ես սիրում եմ գրքեր ու բանաստեղծություններ և կարդում եմ դրանք, երբ ժամանակ ունենամ։ Բայց ես երբեք նրանց մասին այնպես չեմ մտածում, ինչպես դուք։ Այդ պատճառով էլ ես մի քիչ դժվարանում եմ խոսել նրանց մասին։ Ես կարծես լինեմ մի նավաստի անծանոթ ծովում, առանց քարտեզի և կողմնացույցի։ Իսկ ես ուզում եմ ինձ հաշիվ տալ, թե բանն

այդքան լաւ գիտեր։

— Ես սովորել եմ, դպրոց եմ հաճախել,— պատասխանեց աղջիկը։

— Ես էլ եմ դպրոց գնացել, երբ փոքր տղա էի,— ասաց նա։

— Այո՛, բայց ես ավարտել եմ միջնակարգ դպրոց, որից հետո հաճախել եմ համալսարան, դասախոսություններ լսել...

— Դուք սովորել եք համալսարանո՞ւմ,—հարցրեց նա բացահայտ ապշությամբ։ Եվ միանգամից նրանց միջև բացվեց միլիոնավոր մղոններով տարածություն։

— Ես հիմա էլ սովորում եմ այնտեղ։ Ես անցնում եմ անգլերեն բանասիրության հատուկ դասընթաց։

Տղան չգիտեր, թե ի՛նչ է «բանասիրություն» և այս կետում իր տգիտությունը մատնանշելով հարցրեց.

— Որքա՞ն ժամանակ ես պետք է սովորեմ, որ համալսարան մտնեմ։

Աղջիկը որոշեց խրախուսել նրա այդ ձգտումը դեպի գիտելիքները և ասաց։

— Դա կախված է նրանից, թե ինչքան եք սովորել առաջ։ Դուք երբե՞ք չեք եղել միջնակարգ դպրոցում։ Հասկանալի է, իհարկե չեք եղել... իսկ տարրական դպրոցն ավարտե՞լ եք։

— Մինչև ավարտելը ինձ մնում էր ընդամենը երկու տարի,— պատասխանեց նա,— և դպրոցից հեռացա։ Բայց ես սովորել եմ՝ միշտ ստանալով պարգևներ։

Եվ իսկույն, իրեն կշտամբելով այդ պարծենկոտության համար, նա այնպես պինդ սեղմեց թիկնաթոռի արմունկները, որ նրա մատները, մղկտացին։ Նույն պահին նա տեսավ, որ մի տիկին մտավ սենյակը։ Աղջիկն իսկույն վեր կացավ նրան դիմավորելու։ Նրանք համբուրվեցին և դրկախառն դիմեցին նրան։ Մարտինը վճռեց, որ նա հավանորեն աղջկա մայրն է։ Նա բարձրահասակ, խարտյաշ մի կին էր,

համաչափ և գեղեցիկ, շքեղ հագնված, ինչպես վայել է մի այդպիսի տան տիկնոջ։ Նրա հագուստի նուրբ գծերը հաճելի էին դիտողի աչքին։ Մարտին Իդենի մտքովն անցան այն կանայք, որոնց նա տեսել էր բեմում։ Հետո նա հիշեց, որ այդպիսի պատկառելի տիկինների, նույնպես հագած, նա տեսել է Լոնդոնի թատրոնների նախասրահներում, ուր նա շռում էր իր աչքերը նրանց վրա, մինչև որ ոստիկանը նրան դուրս էր անում անձրևի տակ։ Դրանից հետո երևակայությունը նրան տարավ Իոկոհամա, Գրանդ-Օտել, ուր նույնպես հեռվից նա տեսել էր այդպիսի տիկինների։ Իսկույն նրա աչքի առաջ եկան Իոկոհամայի, քաղաքի և նավամատույցի հարյուրավոր պատկերներ։ Բայց նա ստիպեց իրեն փակել հիշողության կալեյդոսկոպը և կենտրոնացնել ամբողջ ուշադրությունը ներկայի վրա։ Նա կոահեց, որ սենյակ է վեր կենա և ներկայանա. նա դժվարությամբ վեր կացավ թիկնաթոռից զգալով, թե ինչպես խայտառակ կերպով փքվել են իր տաբատի ծնկները։ Նրա ձեռքերը անզոր կախված մնացին, իսկ դեմքը, առաջիկա փորձության մասին մտածելով, մոայլ արտահայտություն ստացավ։

ԳԼՈՒԽ II

Ճաշասրահ անցնելու պրոցեսը մի ամբողջ մղձավանջ էր։ Այդ բոլոր առարկաների միջև շարժումը, երբ ամեն րոպե կարելի է դիպչել նրանց, երբեմն անհնար էր թվում նրան։ Բայց ի վերջո նա անցավ այդ վտանգավոր ճանապարհը և այժմ նստել է Ռութի կողքին։ Դանակների ու պատառաքաղների առատությունը վախեցրեց նրան։ Այդ իրերը նրան սպառնում էին անիմանալի վտանգներ և նա, կարծես հմայված, երկար նայում էր նրանց, մինչև որ աչքերը շլացան նրանց փայլից, և այդ պսպղուն ֆոնի վրա նրան երևաց նավաստիների կամրջակի ծանոթ պատկերը,

ուր նա իր ընկերների հետ ազած միս էր ուտում՝ ծալովի դանակներ գործածելով, կամ պարզապես մատներով, և կամ գդլում էին սիսեռի թանձր ապուր ընդհանուր ամանից՝ երգաթե ծռմռած գդալներով։ Նրա քթածակերին դեռևս կանգնած էր վատորակ մսի հոտը, ականջներին հնչում էր նավաստիների ազմկաձայն լմլմոցը, որին նվագակցում էր կայմասարքի ճռճռոցը։ Նա վճռեց, որ նավաստիները խոզերի նման էին ուտում։ Դե նա այստեղ ուշադիր կլինի իրեն։ Կաշխատի ծամել անազմուկ, երբեք չի մոռանա այդ։

Նա աչքի անցրեց սեղանը։ Նրա դիմացը նստած էին Արաուրը և երկրորդ եղբայրը՝ Նորմանը։ Ազջկա եղբայրները, ասաց նա մտովի և անկեղծ համակրանք զգաց նրանց նկատմամբ։ Որքա՜ն սիրում են իրար այդ ընտանիքի անդամները։ Նա հիշեց, թե ինչպես Ռութը դիմավորեց իր մորը, ինչպես նրանք համբուրվեցին, ինչպես դրկախառն ուղղվեցին դեպի նա։ Այն աշխարհում, որտեղից ծագում է տեսել նա, ծնողների և զավակների միջև այդպիսի քնքշությունների սովոր չեն։ Դա նրա աչքին յուրահատուկ մի հայանություն էր, զգացումների այն վեհության ապացույցը, որին հասել են բարձր դասակարգերը։ Այն ամենից, ինչ Մարտինը տեսել է իրեն համար նոր այդ աշխարհում, դա ամենագեղեցիկն էր։ Նա խորապես զգացվեց, նրա սիրտը համակվեց քնքշությամբ ու համակրանքով։ Նա իր ողջ կյանքում սեր էր որսնում։ Նրա բնությունը ծարավ էր սիրո։ Դա նրա Վության համար օրգանական մի պահանջ էր։ Բայց նա ապրում էր ասանց սիրո, և նրա հոգին մենակության մեջ ավելի ու ավելի էր խոտացել։ Բայց նա երբեք չէր դիտակցել, որ կարիք ունի սիրո։ Նա այժմ էլ չէր դիտակցում այդ։ Նա տեսել էր միայն սիրո արտահայտություններ, որոնք հուզում և ոգեշնչում էին նրան։

Նա ուրախ էր, որ միտեր Մորդը բացակա է։ Նրան բավական էր ծանոթանալ Ռութի, նրա մոր և նրա եղբոր՝ Նորմանի հետ։ Արաուրին նա արդեն մի քիչ դիտեր։ Ծանոթանալ նրա հոր հետ — դա արդեն չափազանց էր։ Նրան թվում

էր, թե իր կյանքում դեռ երբեք այդքան չի աշխատել։ Ամենածանր աշխատանքը, համեմատած սրա հետ, մանկական խաղ էր։ Նրա ճակատին հրևացին քրտնքի մանր կաթիլներ, իսկ շապիկը թրջվեց այն ճիգերից, որոնք պահանջվում էին վճռելու համար միանգամից առաջացած այդքան անսովոր խնդիրներ։ Պետք է ուտել այնպես, ինչպես նա չի կերել երբեք, գործածել առարկաներ, որոնցով չգիտեր ինչ անել, աչքի տակով նայել ուրիշներին՝ հասկանալու համար, թե ինչպես անել այդ բոլորը և միաժամանակ հավաքել նոր տպավորությունների հեղեղը՝ հաղիվ ժամանակ ունենալով դասավորել այն իր գիտակցության մեջ. դեպի աղջիկը զգալ անդիմադրելի հրապուրանք, որը լցնում էր նրան տարտամ և հիվանդագին խռովքով. տոչորվել բուռն ցանկությամբ՝ թափանցելու համար կյանքի այն ոլորտները, ուր ապրում էր աղջիկը, և լարված ու անընդհատ խորհրդածել, թե ինչպես հասնել այդ նպատակին։ Աչքի տակից նայելով իր դիմացը նստած Նորմանին՝ գիտենալու համար, թե որ գանակը կամ պատառաքաղը պիտի գործածել այս կամ այն դեպքում, նա միաժամանակ ջանում էր տպավորել իր գիտակցության մեջ յուրաքանչյուրի դիմագծերը և կռահել, թե ամեն մեկը ինչպիսի հարաբերության մեջ է Ռութի հետ։ Բացի այդ, նա պետք է խոսեր, լսեր, թե ինչ են ասում իրեն, ինչ է խոսվում իր շուրջը, պատասխաններ, երբ դա հարկավոր է՝ ուշադիր լինելով, որ սանձարձակ խոսքերի սովոր իր լեզուն անպատշաճ բան չասի։ Կարծես այդ բոլորը հերիք չէր, դոյություն ուներ մի մշտական սպառնալիք հանձին սպասավորի, որն անաղմուկ հայտնվում էր նրա ուսերի մոտ և ինչ-որ սֆինքսի նման ասում էր հանելուկներ՝ պահանջելով անմիջապես պատասխանել։ Եվ շարունակ անհանգստանում էր՝ մոռածելով մատներն ողողելու թասի մասին։ Նա, ակամա, մերթ ընդ մերթ, հիշում էր այդ թասերը՝ մտածելով, թե ի՞նչ են նրանք ներկայացնում իրենցից և ե՞րբ կրերեն դրանք։ Մինչև այժմ նա այդ թասերի մասին միայն լսել է, ահա թերևս մի երկու բո-

պեից նա կտեսնի դրանք,— չէ՞ որ նա սեղանակցում է բարձրագույն արարածների, որոնք սովոր են ուտելուց հետո լվանալ իրենց մատները, այնպես որ ինքն էլ — այո, ինքն էլ պետք է անի նույն բանը։ Բայց ամենից շատ նրան զբաղեցնում էր մի համառ միտք. ինչպե՞ս պահել իրեն այս մարդկանց մոտ։ Ինչպե՞ս պահել իրեն։ Նա տանջվելով ու լարվածությամբ աշխատում էր վճռել այդ առեղծվածը։ Երբեմն նրա մտքովն էր անցնում, որ լավ կլինի ձևացնել այնպես, որ նա այն չի, ինչպիսին է իրականում։ Բայց խոկույն ծագում էր մի այլ երկչոտ միտք. դա չի հաջողվի և նա սովոր չի կեղծել, այնպես որ հեշտությամբ կարող է հիմար դրության մեջ մնալ։

Զբաղված լինելով բոլոր այդ խորհրդածություններով՝ Մարտինը ճաշի առաջին կեսին լուռ մնաց։ Նա չգիտեր, որ դրանով հերքեց Արտուրի՝ տնեցիներին ասած նախազգուշական խոսքերն այն մասին, թե ճաշի կբերի մի վայրենու, բայց չպիտի վախենալ, որովհետև վայրենին շատ հետաքրքրական է։ Մարտին Իդենի մտքով երբեք չէր անցնում, որ Ռութի եղբայրը կարող է ընդունակ լինել դավաճանության, մանավանդ այն բանից հետո, որ Մարտինը ազատեց նրան փորձանքից։ Եվ նա նստել էր սեղանին՝ ճնշվելով այն գիտակցությունից, որ ինքը լիարժեք չի և դյուրված է ամեն ինչով, որ կատարվում է իր շուրջը։

Նա այժմ հասկացավ, որ ուտելը միայն ֆիզիկական պահանջի բավարարում չի։ Առաջներում նա երբեք չէր նկատում, թե ինչ է ուտում։ Դա ուտելիք է, ուրիշ ոչինչ։ Իսկ այստեղ, այս սեղանին, նա գտնում էր գեղեցկի իր զգացումի բավարարումը, որովհետև ուտելն այստեղ մի էսթետիկ ֆունկցիա էր։ Եվ ոչ միայն էսթետիկ, այլև իմացական։ Նրա ուղեղն աշխատում էր ուժգին։ Նրա շուրջը արտասանվում էին նրա համար անհասկանալի բառեր, և այնպիսի բառեր, որոնց նա հանդիպում էր միայն գրքերում, և որոնք նրա աշխարհին պատկանող մարդկանցից ոչ մեկը չէր կարող մինչև անգամ արտասանել։ Երբ նա լսում

էր, թե այդպիսի բառերը ինչքա՞ն հնչում արտասանվում էին այդ զարմանալի ընտանիքում, աղջկա ընտանիքում, նա հիացմունքից սարսռում էր Բոլոր այն հրապուրիչ, վսեմ ու գեղեցիկ բաները, որոնց մասին նա կարդացել էր գրքերում, ճշմարիտ դուրս եկան։ Նա զտնվում էր այն մարդու երանելի վիճակում, որի երազները հանկարծ դադարել են երազ լինելուց և իրականացել են։

Նա դեռ երբեք չէր եղել կյանքի այդպիսի բարձունքներում և դիտելով ու լսելով աշխատում էր քիչ հրավիրել իր վրա ընդհանուր ուշադրություն՝ պատասխանելով միավանկ բառերով «այո՛, միսս», «ո՛չ, միսս»՝ երբ աղջիկն էր խոսք ուղղում նրան. «այո, մեմ», «ո՛չ, մեմ»՝ երբ նրան խոսք էր ուղղում նրա մայրը։ Նա հազիվ զսպեց իրեն՝ չասելու համար նրա եղբորը «այո՛, սըր», ինչպես այդ պահանջվում էր ծովային դիսցիպլինայի կանոններով։ Նա զգաց, որ դրանով նա կստորացներ իրեն, իսկ դա չպետք է պատահի, եթե նա ուզում է ձեռք բերել աղջկան։

Բացի այդ, նրա հպարտությունն էլ ըմբոստանում էր դրա դեմ։— Աստված վկա, որ ես նրանցից վատ չեմ. և եթե նրանք գիտեն շատ բան, որ ես չգիտեմ, ես էլ կարող եմ այդ բոլորը սովորել։ Բայց հետևյալ պահին, երբ աղջիկը կամ նրա մայրը ասում էին նրան «միստեր Իդեն», նա մոռանում էր իր ըմբոստ հպարտությունն ու ճառագայթում էր հիացմունքից։ Նա այժմ քաղաքակիրթ մարդ էր և ճաշում էր այնպիսի մարդկանց շրջանում, որոնց մասին նա առաջներում միայն գրքույկներումն էր կարդացել։ Ասես՝ նա ինքը գրքի մեջ էր ընկել և գեղերում էր կազմած հատորի էջերում։ Սակայն նստելով սեղանին և նմանվելով ավելի շուտ հեզ գառնուկի, քան վայրենու, որին նկարագրել էր Արտուրը, Մարտինը շարունակ գլուխ էր կոտրում, թե ինչպես պետք է պահի իրեն։ Նա իսկի էլ հեզ գառնուկ չէր, և նրա տիրական բնությունը չէր հաշտվում երկրորդական դերի հետ։ Նա խոսում էր միայն այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ էր, և նրա խոսելը շատ նմանվում էր նրա՝

հյուրասենյակից ճաշասրահը անցնելուն, երբ նա սայթաքում և դիպչում էր կահույքին։ Մարտինը պրպտում էր իր բալմալեզու բառապաշարում՝ վախենալով, որ չի կարողանա պետք եղածին պես արտասանել հարկավոր բառերը, իսկ նրան ծանոթ այլ բառեր դուրս կգան կոպիտ կամ անհասկանալի։ Շարունակ նրան հալածում էր այն միտքը, թե առոգանության մասին այդ հոգատարությունը վնասում է նրան, խանգարում է արտահայտել այն, ինչ նա իրոք զգում է և մտածում։ Բացի այդ, ակամա սանձը կաշկանդում էր նրա անկախ ոգին ճիշտ այնպես, ինչպես օսլայած օձիքը ճնշում էր նրա վիզը։ Մարտինը երկյուղ էր կրում, որ երկար չի դիմանա։ Նրան փոթորկող զգացումներն ու մտքերը համառորեն ձգտում էին լույս աշխարհ դալ և որոշ ձև ընդունել և ի վերջո նա մոռացավ, թե որտեղ է գտնվում, և հին, ծանոթ մի բառ, սովորաբար իր գործածած բառերից մեկը, դուրս պրծավ նրա լեզվից։

Մարտինը մերժեց շարունակ իր կռնակին երևացող լակեյի առաջարկած կերակուրը և կարճ ու արտահայտիչ կերպով ասաց.

— Պառ։

Սեղանի շուրջը բոլոր նստածները սառած մնացին ապշությունից, սպասավորը դժվարությամբ զսպեց չարախինդ ժպիտը, իսկ ինքը՝ Մարտինը արձանացավ սարսափահար։ Սակայն նա շուտով իրեն դատավ։

— Դա կանակերեն բառ է,— ասաց նա,— և նշանակում է՝ «բավական է», «հերիք է»։ Լեզվիցս դուրս թռավ հանկարծ։—Նա սրսաց Ռութի՝ իր երեսին ուղղված հետաքրքիր հայացքը և նրա լուռ հարցումին պատասխանելով շարունակեց.

— Ես նոր եմ ցամաք հկել Խաղաղ օվկիանոսի փոստատար շոգենավերից մեկից։ Նա ուշանում էր, այդ պատճառով մենք ստիպվեցինք նավահանգստում աշխատել նավը բարձելու գործում, և աշխատեցինք ոչ թե մի կերպ, այլ բարեխղճորեն։ Այնուհետև իմ կաշին մի քիչ պատռտվեց։

— Օ՜, ես իսկի էլ դրան չէի նայում,— հապճեպ ասաց աղջիկը։— Ձեր ձեռքերը, համեմատած ձեր ֆիգուրայի հետ, փոքր են թվում։

Մարտինը կարմրեց, կարծես նրա մի այլ թերությունն էլ նշեցին։

— Այո՛,— ասաց նա զգույշ,— իմ բռունցքները մի քիչ թույլ են, դա ճիշտ է։ Մկաններս ուժեղ են, ինչպես ջորու մկանները, և իմ հարվածը՝ ինչպես հարկն է։ Բայց երբ ես որևէ մեկի բթին-բերնին եմ հասցնում, սովորաբար ձեռքս արյունվա է լինում քերծվելուց։

Մարտինը դժգոհ էր, որ ասաց այդ։ Նա զզվանք զգաց իր նկատմամբ, դադարեց ուշադիր լինել իր խոսքերին և միանգամից սկսեց շաղակրատել ոչ այնքան հաճելի բանեբի մասին։

— Ի՞նչ քաջություն էր ձեր կողմից, երբ դուք օգնությյան հասաք Արտուրին, մանավանդ, որ նա բոլորովին օտար էր ձեզ համար,— ասաց Ռութը փափկանկատորեն՝ տեսնելով նրա շփոթությունը, բայց առանց հասկանալու դրա պատճառը։

Իսկ Մարտինը կատարելապես հասկացավ ու գնահատեց աղջկա տակտավորությունը և շնորհակալության զգացումից տարվելով, նորից սկսեց անկաշկանդ խոսել։

— Դա չնչին բան է,—ասաց նա,— իմ տեղը ամեն մարդ էլ կաներ նույն բանը։ Այդ սրիկաների շայկան պարզապես ուզում էր սկանդալ սարքել։ Արտուրը ձեռք էլ չի տվել նրանց։ Նրանք հարձակվեցին նրա վրա, ես էլ նրանց վրա, և ես նրանց թակեցի, ինչպես հարկն է։ Ճիշտ է որ այստեղ էլ իմ ձեռքերի կաշին տուժեց, բայց դրա փոխարեն նրանցից մի քանիսն էլ իրենց ատամները կորցրին։ Ես շատ ուրախ եմ, որ այդպես պատահեց։ Ես երբ տեսնում եմ...

Նա հանկարծ լռեց բերանբաց, ապշած իր սեփական ուշնությունից, զգալով, որ նա անարժան է մինչև անգամ աղջկա հետ միևնույն օդը շնչելու։ Եվ երբ Արտուրը խոսքի

խառնվելով, սկսեց քսաներորդ անգամ պատմել լաստի արկածի մասին,—թե ինչպես ինչ-որ հարբած խուլիգաններ հարձակվեցին նրա վրա, և ինչպես Մարտին Իդենը հասավ նրանց վրա և փրկեց իրեն,— այդ արկածի հերոսը հոնքերը կիտած, լուռ մտածում էր այն մասին, որ տիմարություն արեց պատմելով այդ և առաջվանից ավելի տանջվում էր այն հարցով, թե ինչպես պիտի պահել իրեն այս մարդկանց շրջանակում։ Պարզ է, որ նա շարունակ անում է ոչ այն, ինչ հարկավոր է։ Նա նրանց տեսակի մարդ չէ, դրա համար էլ նրանց լեզվով չդիտի խոսել։ Այդ բոլորն անկասկած է։ Ի՞մանվել նրա՞նց։ Հավանական է, այդ մասկարադը նրան չէր հաջողվի ընդամենն կեղծավորությունը օտարոտի էր նրա բնությանը, խաբեությունն ու կեղծիքը հող չունեին նրա մեջ։ Ինչ էլ որ պատահի, նա պետք է հարազատ մնա իրեն։ Նա վճռական էր այս հարցում։ Այժմ նա պետք է խոսի, խոսի իր լեզվով, իհարկե մեղմելով արտահայտությունները, որպեսզի իր ասածները հասկանալի լինեն նրանց և այնքան էլ չվիրավորեն նրանց դյուրազգացությունը։ Բացի այդ, նա չի ուզում իր լռությամբ առիթ տալ նրանց մտածելու, թե նրա համար պարզ է այն, ինչը իսկապես նրա համար բոլորովին էլ պարզ չի։ Դրա համար էլ, երբ եղբայրները համալսարանական գործերի մասին խոսելիս մի քանի անգամ կիրառեցին «նոանկ» բառը, Մարտին Իդենը հարցրեց.

— Ի՞նչ բան է «նոանկ»։

— Նոանկյունաչափություն,— պատասխանեց Նորմանը։— Բարձրագույն «մաթիկի» մի մասը։

— Իսկ ի՞նչ բան է «մաթիկը»,— հարցրեց երկրորդ անգամ Մարտինը՝ Նորմանի մոտ թեթև ժպիտ առաջացնելով։

— Մաթեմատիկա, թվաբանություն,—պատասխանեց նա։

Մարտին Իդենը գլխով արեց։ Նա թափանցեց իմաստությանի՝ առաջին ակնարկից անսահման թվացող ոլորտները։ Բայց ինչ որ նա տեսավ, նրա համար շաշափելի ձևեր ընդունեց։ Նրա երևակայության անսովոր ուժը վերածում էր վերացական հասկացողությունները կոնկրետ կերպարների։

Նրա ուղեղի ալքիմիական հանդերձանքում առանկյունաչափություններ, մաթեմատիկան ու գիտելիքների ամբողջ մարդը, որի խորհրդանիշն էին այդ բաները, վերածվեց մի պայծառ պաշտամունքարի։ Կարծես նկարում՝ նա տեսնում էր կանաչ ադաղարթը, անտառի բացատները մերթ վառ լուսավորված, մերթ ոսկե ճառագայթներով պարուրված։ Այդ բոլորը հեռվից թվում էր թեթև ծիրանագույն շղարշով պատած, բայց նա հաստատ գիտեր, որ այդ շղարշի ետևը գտնվում է անծանոթ երկիրը, ռոմանտիկ հրաշալիքների աշխարհը։ Այդ բոլորը նրան հարբեցնում էր, ինչպես գինին։ Այստեղ հոգ կար սիրագործության համար, ասպարեզ՝ մտքի ու գործի համար, որը կարելի էր նվաճել,— և իսկույն իր դիտակցության խորքից հայտարերվեց մի միտք,— նրա, իր դիմաց նստած, շուշանի պես գժգույն այդ սովերի սիրուն նվաճել այդ ասպարեզը։

Այդ փայլուն տեսիլքը քանդեց Արտուրը, որը ամեն ջանք թափում էր, որ Մարտինի մեջ վերջապես հայտարերվի վայրենին։

Մարտին Իդենը հիշում էր իր որոշումը։ Այդ երեկո առաջին անգամ լինելով նա գիտակցաբար դարձավ այն, ինչ էր ինքը իրականության մեջ և ապա սկսեց անկաշկանդ, ստեղծագործության հրճվանքից տարված, պատմել՝ ջանալով պատկերացնել կյանքը իր ունկնդիրներին այնպես, ինչպես գիտեր ինքը։ Նա եղել էր նավաստի մարսանենդների «Հալցիոն» երկկայմ նավի վրա, երբ նրան բռնեց մաքսատան կատերը։ Մարտինը ցուցաբերում էր իր տեսնելու ընդունակությունը և այնքան հստակ հաղորդում էր այն, որ ունկնդիրներն իր աչքերովն էին նայում այն բանին, ինչ տեսել էր ինքը։ Իսկական արվեստագետի լուրջ զգացմունքով նա բազմաթիվ մանրամասներից ընտրում էր ամենապայծառն ու ապշեցուցիչը, ստեղծում էր կյանքի լուսավոր ու գունեղ պատկերներ, այնպես որ նրա ունկնդիրները գրավվում էին նրա ինքնատիպ պերճախոսությամբ, ոգեշնչումով և ուժով։ Երբեմն նրա նկատողությունը

ների կենդանությունը կամ խոսքի դարձվածքները դուր չէին գալիս ունկնդիրներին, սակայն նրա պատմվածքում կոպիտին անմիջապես հետևում էր դեղեցիկը, արագիրմը մեղմանում էր զվարճախոսությամբ, նավասարների սրամտության տարօրինակ և զվարճալի նմուշներով։

Եվ քանի Մարտին Իդենը խոսում էր, աղջիկը հիացմունքով նայում էր նրան։ Նրա հուրը ջերմություն էր տալիս աղջկանը։ Ռութը զարմանում էր, թե ինչպես ինքը կարող էր այդպիսի տասը կյանք տպրել իր ողջ կյանքում։ Նա ցանկանում էր կպչել այդ հուժկու, վասվուն մարդուն, որի մեջ եռում էր ուժի և առողջության մի ամբողջ հրաբուխ։ Այդ ցանկությունն այնքան ուժեղ էր, որ աղջիկը դժվարությամբ էր զսպում իրեն։ Բայց միաժամանակ ինչ-որ բան վանում էր նրան Մարտինից։ Վանում էին այդ խոցտված ձեռքերը, որոնց վրա մնում էին աշխատանքի և առօրյա կյանքի կեղտի անջնջելի հետքերը, այդ փքված մկանները, օձիքից արտրված այդ վիզը։ Մարտինի կոպտությունը խրանեցնում էր աղջկան, նրա ամեն մի կոպիտ խոսքը վիրավորում էր աղջկա լսելիքը, նրա կյանքի ամեն մի կոպիտ մանրամասնությունը խոցում էր աղջկա հոգին։ Այնուամենայնիվ, նրան ձգում էր դեպի ազան, ինչպես թվում էր աղջկան, ինչ-որ սատանայական ուժ։ Այն ամենը, ինչ աղջկա ուղեղում ամուր նստել էր, հանկարծ սկսեց տատանվել։ Մարտինի սոմանտիկայով ու արկածներով լի կյանքը տապալում էր բոլոր սովորական պայմանական բմբոնումները։ Լսելով Մարտինի ծիծաղը, նրա ուրախ պատմությունները վտանգների մասին՝ աղջիկը զգաղարում էր համարել կյանքը ինչ-որ լուրջ ու դժվար բան. կյանքն սկսում էր պատկերանալ նրան որպես մի խաղալիք, որով հաճելի է խաղ անել։ Անհոգ շուռ տալ նրան ամեն կողմ, բայց որը կարելի է դեն շպրտել առանց ափսոսանքի։ «Դու էլ այդպես խաղ արա,— ասում էր աղջկան մի ներքին ձայն,— սեղմվիր նրան, եթե ուզում ես, փաթաթվիր նրա վզին»։ Նա ցանկանում էր պարսավել իրեն այդ թեթևամիտ

սադրանքների համար, բայց զուր էր հակադրում նրան իր անբծությունը, իր կուլտուրան—այն ամենը, ինչ տարբերում էր նրան Մարտինից։ Նայելով իր շուրջը՝ Ռութը տեսավ, որ մյուսներն էլ լսում են նրան կախարդվածների պես, բայց մոր աչքերում նա կարդաց նույն սարսափը,— զմայլանքի, բայց և այնպես սարսափ,— և դա ուժ ներշնչեց աղջկան։ Այո՛, խավարից եկած այդ մարդը չարի ծնունդ է։ Նրա մայրը նույնպես տեսնում է այդ, — նշանակում է՝ դա այդպես էլ է։ Ռութը պատրաստ էր հավատալ իր մոր դատողությանը, ինչպես սովոր էր հավատալ միշտ։ Մարտինի բոցը դադարեց նրան այրելուց և սարսափը, որը ներշնչում էր նրան Մարտինը, կորցրեց իր սրությունը։

Ճաշից հետո Ռութը դաշնամուր նվագեց նրա համար, որպես թաքուն մարտահրավեր, իր և Մարտինի միջև գտնվող անդունդը ավելի ևս ընդլայնելու չգիտակցված ցանկությամբ։ Նրա նվագը շշմեցրեց Մարտինին, աղդեց նրա վրա՝ որպես գլխին հասցրած մի դաժան հարված, բայց, շշմեցնելով ու ջախջախելով, միաժամանակ մտրակեց նրան։ Նա ակնածությամբ էր նայում Ռութին։ Նա, ինչպես և աղջիկը, զգաց, որ նրանց բաժանող անդունդը ավելի ևս լայնացավ, բայց հենց այդ պատճառով էլ նա ավելի ուժգին ցանկանում էր անցնել այդ անդունդը։ Մարտինը չափազանց զգայուն և սրտազեղ էր, որպեսզի կարողանար ամբողջ երեկոյուն նայել այդ անդունդին, մանավանդ երաժշտության հնչյունների տակ։ Երաժշտությունը միշտ էլ ուժեղ աղդեցություն էր գործում նրա վրա, որպես թունդ դինի, դրդում էր նրան համարձակ մտքերի ու արարքների, բոցավառում էր նրա երևակայությունը և տանում էր նրան դեպի եթերային բարձրությունները։ Կարծես նրա վրա թևեր էին բուսնում։ Տգեղ իրականությունը դադարում էր գոյություն ունենալուց՝ տեղի տալով գեղեցկին ու անսովորին։ Իհարկե, նա չէր հասկանում Ռութի նվագածը։ Դա ամենևին նման չէր նավաստիների պարերեկոներին նրա լսած ջարդված դաշնամուրի և կամ փողավոր գործիքների նվագախմբի ականջ ծա-

կող հնչյուններին։ Բայց պատահել է, որ նա գրքերում կարդացել է այդպիսի երաժշտության մասին, դրա համար էլ նա հավատ էր ընծայում Ռութի նվագին՝ համբերությամբ սպասելով լսել պարզ հստակ ռիթմ, որին սովոր էր իր ականջը։ Երբեմն թվում էր նրան, որ բոնեց ռիթմերի մի պատկեր և արդեն պատրաստ էր նրան ենթարկել իր աչքի առաջ պատկերացող կերպարների շարանը, բայց իսկույն դարձյալ իրեն կորցնում էր՝ իրեն համար անիմաստ հընչյունների քաոսում, և դա կասեցնում էր նրա երևակայությունը, որը տապալվում էր դեռին, որպես հենակետից զուրկ մի ծանրություն։

Մինչև անգամ մի պահ Մարտինի մտքով անցավ չլինի՞ թե աղջիկը ծիծաղում է իր վրա։ Նրան թվում էր, որ Ռութի նվագում ինչ-որ թշնամական բան կա, և նա աշխատում էր կռահել, թե ի՞նչ են ուզում ասել աղջկա՝ ստեղներին խփող ձեռքերը։

Սակայն, նա շուտով վանեց այդ միտքը՝ համարելով այն անարժան ու անկարելի և ջանաց ավելի ուղատորեն նվիրվել երաժշտության։ Վերջապես սովորական թուչանքը դարձյալ նվաճեց նրան։ Կարծես նրա ուղքերը կտրվեցին գետնից, մարմինը դարձավ ոդի, աչքերի առաջ ծավալվեց լուսաշող ճաճանչ։ Նրան շրջապատող տեսարանն անհետացավ. նա ճախրում էր ինչ-որ անծանոթ աշխարհի վրա, որի մասին վաղուց էր երազում։ Ծանոթն ու անծանոթը իրար խառնվեցին այդ պայծառ և սևեռուն տեսիլքում։ Մարտինը տեսնում էր արևակեզ երկրների անծանոթ նավահանգիստներ, թափառում էր մարդաշատ հրապարակներում, վայրենի ցեղերի գյուղերում, որոնց ոչ ոք երբեք չի տեսել։ Կարծես նա զգում էր կղզիների իրեն ծանոթ բույրը, որը նա սովոր էր շնչել ծովում շոգ գիշերները, նորից Մեծ օվկիանոսում նավավարում էր արևադարձային գոտու երկար ցերեկներին, արմավենիներով ծածկած մարջանի կղզիների արանքով, որոնք փիրուզյա մակերևույթում մերթ անհետանում, մերթ երևան էին գալիս։ Պատկերներն երևում ու անհետանում

էին արագ՝ ինչպես մտքեր։ Նա մերթ ձի նստած սլանում էր արևակեզ անապատում, մերթ, մի պահ հետո, շիկացած օդի ծիածանային շղարշի միջով զննում էր Մահվան հովտի սպիտակ դամբարանը կամ թիակներով խփում էր Սառուցյալ ովկիանոսի ալիքներին, ուր արևի տակ քայլում էին սառույցի ահագին կղզիներ։ Նա մերթ պառկած էր մարջանի կղզում հնդընկույզի ծառի տակ՝ ունկնդրելով մակընթացության համաչափ ժխորին։ Հին, խորտակված նավի կմախքը վառվում էր կապտավուն բոցով, և այդ խորհրդավոր լույսի տակ պարողները կատարում էին «հուլա» պարը՝ երգողների կրքոտ ոռնոցների երգակցությամբ՝ հավայան կիթառի հնչյունների և ծնծղայի թնդյունի նվագակցությամբ։ Արևադարձային գիշեր էր՝ երգով արբած։ Հեռվում աստղագարդ երկնքի ֆոնի վրա երևում էր հրաբխի ուրվագիծը։ Գլխի վերևում դանդաղ սահում-գնում էր դունատ լուսինը և ցածրադիր հորիզոնում պսպղում էին Հարավային Խաչի աստղերը։

Մարտինը նման էր էոլյան տավիղի։ Այն, ինչ ապրել ու փորձել էր իր կյանքում, այդ նվագարանի լարերն էին, իսկ երաժշտությունը՝ դա քամին էր, որը երերում էր այդ լարերը, որոնք ճոճվում էին հիշողություններով ու երազներով։ Նա ոչ միայն պարզապես զգում էր. նրանում ամեն մի զգացողություն ձև ու դույն էր ստանում և ինչ-որ զարմանալի խորհրդավոր ուղիով վերածվում էր կերպարների։ Անցյալը ներկան ու ապագան միաձուլվում էին. նա փոխադրվում էր մի ահագին, տոթ, սքանչելի աշխարհ, կատարում եր մեծ քաջագործություններ՝ ձգտելով ձեռք բերել Ռութին։ Եվ ահա նրա հետ է, նվաճել է նրան, գրկում է նրան, թռցնում-տանում է նրան իր երագների թագավորությունը։

Ռութը նայելով Մարտինին կողմնակի հայացքով՝ նրա դեմքին կարդաց այն, ինչ նա զգում էր։ Դա բոլորովին այլ դեմք էր՝ մեծ, փայլատակող աչքերով, որոնք կարծես թափանցում էին հնչյունների քողը և որսում էին այնտեղ կենդանի կյանքի բաբախումը և երևակայության վիթխարի

տեսիլքները։ Աղջիկը ցնցվեց։ Կոպիտ, անշնորհք ոգան անհասկանալի էր։ Վատ կարված կոստյումը, վիրավորված ձեռքերն ու արհեստկեր դեմքը առաջվա պես մնում էին, բայց դրանք այժմ թվում էին նրան լոկ բանտի վանդակապատ, որի արտերով աղջիկը տեսնում էր մեծ, հեռուները նայող, բայց անճար ու անխոս հոգին, որովհետև չկան բառեր, որոնք կարողանային արտահայտել այդ հոգին հուզող զգացմունքները։ Սակայն Ռոմեր միայն մի պահ տեսավ այդ բոլորը. նորից նրա աչքի առաջ կանգնեց անշնորհք պատանին, և նա ծիծաղեց իր ֆանտազիայի վրա։ Սակայն այդ մի պահի ապաժամանակությունը պահպանվեց և երբ Մարտինը անճարակ կերպով մատնացույց նրան՝ հրաժեշտ տալու համար, աղջիկը նրան տվեց Սուլիերենի հատորիկը, բացի այդ և Բրոնտինի գրքույկը,— հենց այժմ Ռոմեր անդրիակ գրականության դասընթացում ուսումնասիրում էր Բրոնտինները։ Երբ Մարտինը մրթմրթում էր շնորհակալության իր բառերը, նա միանգամից աղջկանը թվաց մի երեխա, որի նկատմամբ նա տիրամա զգաց մայրական քնքշության և կարեկցության։ Նա մոտացավ և կոպիտ պատանուն, և կերված հոգին, և տգեղամարդուն, որը այնպես առնարար նայում էր նրան՝ իր հայացքով ուրախացնելով, միաժամանակ և վախեցնելով։ Աղջիկն իր առջև տեսնում էր մի երեխայի, որը իր կոշտ ու կոպտացած ձեռքով սեղմելով նրա ձեռքը՝ ճանկռեց նրա կաշին, և որը կարկամելով ասում էր նրան.

— Սա իմ կյանքում ամենանշանավոր օրն է։ Տեսնո՞ւմ եք, ես այնքան էլ սովոր չեմ այս բոլորին,— նա շփոթված նայեց իր շուրջը,— այսպիսի մարդկանց ու այսպիսի տեսարանների։ Այդ ամենը նորություն է ինձ համար... և դա ինձ դուր է գալիս։

— Հույս ունեմ, որ դուք էլի կգաք մեզ մոտ,— ասաց աղջիկը, երբ տղան հրաժեշտ էր տալիս նրա եղբայրներին։

Նա գլխին քաշեց իր գլխարկը, անշնորհք կերպով դայթեց շեմքին և դուրս եկավ։

— Դե ասա, ի՞նչ կարծիք կազմեցիր նրա մասին,— հարցրեց Արտուրը։

— Շատ հետաքրքրական է։ Եվ մեզ համար կարծես օգոնի մի հոսանք,— պատասխանեց աղջիկը։— Քանի՞ տարեկան է նա։

— Քսան, գրեթե քսանմեկ։ Ես այսօր հարցրի նրան այդ մասին։ Ես երբեք չէի կարծում, որ նա այդքան երիտասարդ է։

«Նշանակում է, որ նա ամբողջ երեք տարով մեծ եմ նրանից» մտածեց Ռութը՝ համբուրելով և բարի գիշեր մաղթելով իր եղբայրներին։

ԳԼՈՒԽ III

Սանդուղքից իջնելով՝ Մարտին Իդենը ձեռքը տարավ իր վերարկուի գրպանը և հանեց մի կտոր դարչնագույն թուղթ և մի պտղունց մերսիկական ծխախոտ, գլանակ փաթաթեց, խորը ներս քաշեց ու գանդաղ արտաշնչեց ծուխը։

— Սատանա՛ն տանի,— բացագանչեց նա պատկառանքով ու զարմանքով։

— Սատանա՛ն տանի,— կրկնեց նա և, լռելով մի անգամ էլ թրթմնջաց.— Սատանա՛ն տանի։

Հետո նա քանդեց օձիքը և գրպանը դրեց այն։ Սառը անձրև էր գալիս, բայց Մարտինը գլխարաց էր և կուրտիկի կոճակները քանդած, առանց նկատելու իրեն շրջապատող իրերը։ Միայն ապուտ կերպով էր գիտակցում, որ անձրևում է։ Նա համակված էր ինչ-որ էքստազով, զարթուն՝ երազներ էր տեսնում, մտովին վերապրելով այն ամենը, ինչ քիչ առաջ պատահել էր նրա հետ։

Վերջապես նա հանդիպել էր այն կնոջ, որի մասին նա, ճիշտ է՝ հազվադեպ, մտածել էր,— նրա բնավորությանը հատուկ չէր իսրհել կանանց մասին,— բայց որին

իր կյանքի ճամփին հանդիպելու մասին միշտ էլ աղոտ հույս էր ունեցել։ Նա սեղան է նստել այդ կնոջ կողքին, սեղմել է նրա ձեռքը, նայել է նրա աչքերին և նրանց մեջ տեսել է նրա հոգու գեղեցկությունը, որը հավասարվում էր այդ աչքերի գեղեցկությանը, որոնց մեջ այն ճառագայթում էր, այդ մարմնի գեղեցկությանը, որում այն բնակվում էր։ Բայց նրա մարմնի մասին Մարտինը չէր մտածում որպես մարմնի,— և այդ բանը նրա համար նորություն էր, որովհետև իր ճանաչած կանանց մասին նա ոչ մի անգամ այլ կերպ չէր մտածել։ Ռութի մարմինը ինչ-որ առանձին բան էր. մինչև անգամ թվում էր, որ նրա մարմինը չպետք է ենթակա լինի սովորական ֆիզիկական հիվանդությունների և տկարությունների։ Այդ մարմինը ոչ միայն նրա հոգու բնակարանն է. դա հոգու սկզբնաղբյուրն է, նրա աստվածային էության ամենամաքուր և ամենագեղեցիկ մարմնավորումը։ Աստվածայնության այդ տպավորությունը ապշեցրեց Մարտինին և ցրելով նրա երազանքը, զարթեցրեց նրանում ավելի զգաստ մտքեր։ Մինչև այժմ աստվածայինի մասին ոչ մի խոսք, ոչ մի ցուցում, ոչ մի ակնարկություն չէին հասնում նրա գիտակցությանը։ Մարտինը ոչ մի ժամանակ չէր հավատում աստվածայինին։ Նա միշտ անկրոն մարդ էր եղել և ուրախ ծիծաղում էր հոգևորականների և հոգու անմահության մասին խոսող երկերի վրա։ Ոչ մի կյանք «այնտեղ», ասում էր նա իրեն, չկա և չի կարող լինել. ողջ կյանքը այստեղ է, իսկ դրանից դենը՝ հավիտենական խավար։ Բայց այն, ինչ նա տեսավ աղջկա աչքերում, դա հենց հոգին է՝ անմահ հոգին, որը չի կարող մեռնել։ Ոչ մի տղամարդ, ոչ մի կին, որոնց ճանաչել է նա մինչև այդ, նրանում չէին առաջացրել անմահության միտքը։ Իսկ Ռութը առաջացրեց։ Նա անշշուկ փսփսաց նրան այդ մասին միանգամից՝ հենց որ նայեց Մարտինին։ Աղջկա դեմքը հիմա էլ ճառագայթում էր գունատ և լուրջ, փաղաքշող և արտահայտիչ, այնքան քնքուշ ու կարեկից ժպտացող, ինչպես կարող են ժպտալ միայն ոգիները, և այնպիսի անրծության ցոլքով

լուսավորված, որի մասին նա երբեք չի էլ երազել։ Ռութի անբծությունը ապշեցրեց ու ցնցեց նրան։ Նա գիտեր, որ գոյություն ունեն բարին ու չարը, իսկ անբծության միտքը, որպես կենդանի կյանքի հատկանիշներից մեկը, երբեք չէր անցել նրա մտքով։ Իսկ այժմ — այդ աղջկա մեջ — նա տեսավ այդ անբծությունը, բարության և անարատության բարձրագույն աստիճանը, որոնց զուգակցության մեջ է հենց կայանում հավիտենական կյանքը։

Եվ հանկարծ նրանում ծագեց հավիտենական կյանքը նվաճելու փառասեր տենչը։ Նա շատ լավ գիտեր, որ արժանի չէ մինչև անգամ ջուր կրելու այդ աղջկա համար. հենց այն, որ նրա հետ նստել է ամբողջ երեկո և խոսակցել, անակնկալ ու ֆանտաստիկ մի հաջողություն էր։ Իհարկե, դա լոկ պատահականություն էր։ Նա ոչնչով արժանի չէր այդ բանին։ Նա արժանի չէր այդ երջանկության։ Նրան տիրեց կրոնական տրամադրություն։ Նա դարձավ հեզ ու խոնարհ, պատրաստ անձնուրացության և ինքնանվաստացման։ Այդ վիճակումն է, որ մեղավորը դնում է խոստովանանքի։ Նրա մեղքը ապացուցված էր։ Բայց ինչպես ամեն մեղավոր, զրկելով ու քավելով իր մեղքերը, դուշակում է իր ապագա երանությունը, այնպես էլ Մարտինը տեսնում էր առաջիկայի իր երջանկությունը, որը նա ձեռք կբերի՝ տիրելով աղջկան։ Բայց այդ նվաճումը պատած էր ինչ-որ մշուշով և բոլորովին տարբեր այն նվաճումից, որը ծանոթ էր նրան։ Փառասիրական երազները թևավորեցին նրան. նա պատկերացնում էր, որ աղջկա հետ միասին ճախրում է գլխապտույտ բարձունքում, մտքեր է փոխանակում նրա հետ, հրճվում է նրա հետ միասին ամեն ինչով, որ գեղեցիկ է և վեհ։ Նրա երազածը հոգեկան նվաճում էր, ամեն կոպտությունից զերծ, հոգիների ազատ ընկերակցություն, որը որոշակի պատկերացնել չէր կարողանում. նա երբեք չէր էլ աշխատում պատկերացնել։ Նա առհասարակ ոչ մի բանի մասին չէր մտածում։ Նրանում զգացողությունը գերիշխում էր բանականության վրա, և նա անձնատուր եղավ հոգու այն-

պիսի հույզերի, որպիսիք նա անցյալում երբեք չէր ունեցել, հոսանքով գնում էր զգացումների ծովում՝ տարվելով իրական կյանքի սահմաններից դուրս։ Նա քայլում էր հարբածի նման տատանվելով և կիսաձայն մրթմրթալով.

— Սատանա՛ն տանի։ Օ՜, սատանա՛ն տանի։

Փողոցի անկյունում կանգնած ոստիկանը կասկածոտ նայեց նրան և քայլվածքից հասկացավ, որ նա նավաստի է։

— Ո՞րտեղ բեռնվեցիր,— հարցրեց ոստիկանը։

Մարտին Իդենը վերադարձավ իրական աշխարհը։ Նա բնականից օժտված էր ներքին ճկունությամբ, հանգամանքներին շուտ հարմարվելու ունակությամբ։ Հենց որ ոստիկանը ձայնեց նրան, նա իսկույն ուշքի եկավ, որոշակի պատկերացրեց կացությունը։

— Հետաքրքի՞ր է,— բացագանչեց նա ծիծաղելով,— ես չգիտեի, թե խոսում եմ ինքս ինձ լսելի ձայնով։

— Մի քիչ հետո կսկսես երգել,— որոշեց նրա վիճակը ոստիկանը։

— Ո՛չ, չեմ սկսի։ Մի լուցկի տվեք ինձ, և ես իսկույն կնստեմ տրամվայ և կգնամ տուն։

Նա վառեց գլանակը, բարի դիշեր մաղթեց ոստիկանին և շարունակեց ճանապարհը։

— Ի՞նչ կասես, հավանեցի՞ր այդ,— քրթմնջաց նա,— այդ տիմարը կարծեց, թե ես հարբած եմ։— Նա ծիծաղեց քթի տակ ու մտածեց. «Ի՛սկ որ ես հարբած եմ. չէի կարծում, որ կնոջ դեմքը կարող է ինձ հարբեցնել»։

Հեռագրատան պողոտայում նա նստեց տրամվայ, որը գնում էր Բերկլի։ Վագոնը լի էր երիտասարդներով՝ որոնք ուսանողական երգեր էին երգում։ Նա հետաքրքրությամբ դիտում էր նրանց։ Նրանք համալսարանի ունկնդիրներ էին, գնում էին նույն դասախոսություններին, որոնց ներկա էր լինում Ռութը, պատկանում էին նույն սոցիալական հասարակության, կարող էին ծանոթ լինել նրա հետ, եթե ուզենային կարող էին ամեն օր տեսնել նրան։ Նա զարմացավ, որ նրանք չեն ցանկանում այդ, որ նրանք ամբողջ երեկո

ժամանակ են անցկացրել մի որևէ տեղում՝ փոխանակ նրա հետ լինելու, նրա հետ խոսակցելու, պատկառանքով հիանալու նրանով։ Նա նկատեց մի պատանու՝ նեղ ու փոքր աչքերով և կախ շրթունքով։—Անպետք, արատավոր պատանի է,— վճռեց նա։— Նավում դա կլիներ վախկոտ, լացկան ու մատնիչ։ Այն միտքը, որ նա, Մարտինը, այդ պատանուց անհամեմատ լավ է, չափազանց ուրախացրեց նրան։ Այդ միտքը կարծես մոտեցրեց Մարտինին աղջկանը։ Նա սկսեց բաղդատել իրեն այդ ուսանողների հետ։ Նա մտածեց իր ուժեղ, մկանոտ մարմնի մասին և վճռեց, որ ֆիզիկապես կհաղթի նրանցից ամեն մեկին։ Բայց նրանց գլուխները լիքն են գիտելիքներով, որոնք թույլ են տալիս խոսելու աղջկա հետ միևնույն լեզվով. ահա հենց այդ միտքն էլ ճնշում էր նրան։ Միաժամանակ նա մտածեց. «Ի վերջո ինձ էլ է ուղեղ տրված ինչ-որ բանի համար։ Այն, ինչի հասել են նրանք, ես էլ կարող եմ նվաճել»։ Նրանք ուսումնասիրում էին կյանքը գրքերով, երբ ինքը զբաղված էր ապրելով։ Նրա գլուխը նույնպես լիքն էր գիտելիքներով, միայն թե դրանք այլ տեսակի գիտելիքներ էին։ Նրանցից ո՞վ կկարողանար առագաստ պրկել, ղեկ վարել, հերթապահության կանգնել։ Նա վերհիշեց իր կյանքը՝ լի վտանգներով, քաջագործությամբ, դրկանքներով ու աշխատանքով։ Նա հիշեց այն ամենը, ինչ նա ստիպված էր կրել իր ուսման շրջանում։ Ոչինչ, համենայն դեպս դա օգտակար է եղել նրան։ Կգա ժամանակ, որ նրանք էլ կընդհարվեն կենդանի կյանքի հետ և կտանեն բոլոր այն փորձանքները, ինչ արդեն տարել է ինքը։ Եվ դա շատ լավ է։ Մինչդեռ նրանք կսովորեն այն, ինչ նրան վաղուց է ծանոթ, նա կարող է գրքերից սովորել կյանքի մյուս կողմը։

Տրամվայն անցնում էր Օկլենդի և Բերկլիի միջև ձգված կիսաամայի տարածությունը։ Մարտին Իդենը սպասում էր, որ հասնի իրեն լավ ծանոթ երկհարկանի տանը, որի ճակատին հպարտորեն փայլում էր «Հիդդինբոթամի մանրածախս առևտրական տուն» ցուցանակը։ Այդ տան մոտ նա

իջավ արամվայից և մի բոպե նայեց ցուցանակին, որն ա-վելի շատ բան էր ասում նրան, բան գրված էր այնտեղ։ Թվում էր, որ այդ տառերից փչում էր գծուծություն, եսասիրություն և ողորմելի ոչնչություն։ Բեռնարդ Հիգգինբոթամն ամուսնացած էր Մարտինի քրոջ հետ, և նա արդեն բավական լավ ուսումնասիրել է նրան։ Մարտինն իր բանալիով բացեց դուռը և սանդուղքով բարձրացավ երկրորդ հարկը։ Այստեղ ապրում էր իր փեսան։ Խանութը գտնվում էր ներքևում, բայց հնացած բանջարեղենի հոտը թափանցում էր մինչև այստեղ։ Մութ նախասենյակով անցնելիս՝ նա սայթաքեց խաղալիք-սայլակի վրա, որն այնտեղ թողած կլիներ նրա բազմաթիվ քեռորդիներից մեկը, և դղրդոցով կպավ դուռը։ «Կծծի մարդ,—մտածեց նա,—ափսոսում է երկու ցենտ վճարել գազի համար, որպեսզի կենվորներն իրենց քիթը չջարդեն»։

Շոշափելով գտավ բռնակը, բացեց դուռը և մտավ լուսավորված սենյակը, ուր նստած էին իր քույրը և Բեռնարդ Հիգգինբոթամը։ Քույրը կարկատում էր ամուսնու վարտիքը, իսկ նա թերթ էր կարդում՝ երկու աթոռների վրա երկարած և գորգից կարած ծռմռված մուճակ հագին, ոսկրոտ ոտքերը կախած։ Երբ Մարտինը մտավ սենյակ, նա իր սև, սուր, խորամանկ աչքերով նայեց նրան թերթի վերևից։ Բեռնարդը միշտ էլ բնազդային մի զզվանք էր առաջացնում Իդենի մեջ։ Ի՞նչ կարող էր գտնել քույրը այս մարդու մեջ։ Նա Մարտինին թվում էր մի օձ և նրանում առաջացնում էր անդիմադրելի մի ցանկություն՝ ճզմել նրան իր կրունկի տակ։ «Մի անգամ ես նրա ոտքը կջարդեմ», մխիթարում էր իրեն, և միայն այդ միտքն օգնում էր նրան հանդուրժելու այդ մարդու ներկայությունը։ Նրա չար ու զիշատիչ աչքերը տհաճությամբ նայում էին Մարտինին։

— Դե՞,— հարցրեց Մարտինը,— ի՞նչ է պատահել։

— Այդ դուռը անցած շարաթ ենք ներկել,— ասաց միստեր Հիգգինբոթամը՝ միաժամանակ տրտնջալով և չարա-

նալով,— և դու դիտե՞ս, թե այժմ որքան փող է գլխում միությունը։ Դու կարող էիր ավելի զգույշ լինել։

Մարտինն ուզում էր պատասխանել, բայց հրաժարվեց՝ մտածելով, որ դա անհույս բան է։ Մտքերը ցրելու համար նա նայեց պատից կախած բրոմովիմատիպ նկարին։ Նա զարմացավ։ Այդ նկարը միշտ էլ դուր էր գալիս նրան, իսկ հիմա նա կարծես առաջին անգամն է տեսնում այն։ Դա էժանանոց էր, ինչպես այդ տնակում գտնվող ամեն բան։ Նրա մտքում պատկերացավ այն տունը, որից նա քիչ առաջ էր հեռացել. նա ամենից առաջ տեսավ պատերից կախած նկարները, հետո աղջկան, որը քնքուշ ժպիտով նրա ձեռքն էր սեղմում հրաժեշտ տալիս։ Նա մոռացավ, թե ո՛րտեղ է գտնվում, մոռացավ Բեռնարդ Հիգգինբոթամի գոյությունը և ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ այդ ջենտլմենը հարցրեց.

— Ի՞նչ է, աչքիդ տեսի՞լք երևաց։

Մարտինն ուշքի եկավ և նայելով այդ շոր ու խորամանկ աչքերին՝ հանկարծ հիշեց, թե այդ աչքերը ի՛նչ տեսք են ստանում, երբ նրանց տերը ասրանք է վաճառում կրպակում՝ ծառայամիտ, ինքնագոհ, ճարպոտ և հաճոյակատար։

— Այո՛,—պատասխանեց Մարտինը։—Աչքիս մի տեսիլք երևաց։ Բարի գիշեր, բարի գիշեր, Գերտրուդ։

Նա բայլերն ուղղեց դեպի դուռը, ճամփին դարձյալ սայթաքեց և քիչ էր մնում ընկներ՝ ոտով կառչելով գորգին։

— Մի՛ շրխկացրու դուռը,— նախազգուշացրեց միստեր Հիգգինբոթամը։

Արյունը խփեց Մարտինի գլուխը, բայց նա զսպեց իրեն և զգույշ փակեց դուռը իր ետևից։

Միստեր Հիգգինբոթամը հաղթականորեն նայեց կնոջը։

— Հարբած է,— հայտարարեց նա խռպոտ շշնջյունով,— ասացի որ նա կկոնծի։

Կինը հեղությամբ գլխով արեց։

— Ճիշտ է, որ նրա աչքերը փայլում են,— խոստովա-

նից նա,—և օձիքն էլ չգիտես ո՞ւր էր կորել. նա դուրս եկավ անից օձիքով։ Բայց թերևս նա այնքան էլ շատ չի իմանալ։

— Նա հագիվ էր ոտի կանգնում,—առարկեց ամուսինը,— ես գիտում էի նրան։ Մի քայլ անգամ չէր կարողանում անել առանց սայթաքելու։ Լսեցի՞ր, թե ինչպես նա քիչ էր մնում գետին գլորվեր նախասենյակում։

— Նա անպայման դիպել է Ալիսի սայլակին,— պատասխանեց կինը,—մթության մեջ չնկատելով այն։

Միստեր Հիդդինբոթամը ձայնը բարձրացրեց ավելի և ավելի ջղայնանալով։ Նա ամբողջ օրը կորել էր կրպակում սպասելով, որ երեկոյան ընտանեկան շրջանակում վերջապես իրավունք կունենա լինել այն, ինչ ինքն է։

— Ասում եմ քեզ, որ քո թանկագին եղբայրը հարբած էր։

Նրա ձայնը սառն էր, խիստ, վճռական, նրա շրթունքները դրոշմում-կորում էին մեքենայի նման ամեն մի բառ։ Նրա կինը հառաչեց և լուռ մնաց։ Դա մի խոշոր, փխրուն կին էր՝ միշտ անհնարին հագնված, միշտ ուժասպառ իր մարմնի, աշխատանքի և իր ամուսնու բեռից։

— Ես ասում եմ, որ նա ժառանգել է այդ իր հորից,— շարունակեց միստեր Հիդդինբոթամը մեղադրական ձայնով,— և նույն ճանապարհով էլ կգնա։ Ես ասացի, իսկ դու մտքումդ պահիր այդ։

Կինը դարձյալ գլխով արեց, հառաչեց ու շարունակեց կարել։ Երկուսն էլ համոզված էին, որ Մարտինը ուրն եկավ հարբած։ Նրանց հոգին փակ էր ամեն մի դեղեցկության հանդեպ, այլապես նրանք պետք է հասկանային, որ այդ փայլատակող աչքերն ու այդ լուսաշող դեմքը արտացոլում էին պատանեկան առաջին սերը։

— Լա՞վ օրինակ երեխաների համար,— գոռաց հանկարծ միստեր Հիդդինբոթամը՝ դայրացած իր կնոջ լռությունից։ Երբեմն նա համարյա ցանկանում էր, որ կինը ավելի հաճախ առարկի նրան։—Եթե եղբայրդ մի անգամ էլ այդպիսի բան թույլ տա, թող կորչի։ Հասկացա՞ր։ Ես չեմ ցանկանում, որ

անմեղ երեխաները. տեսնելով նրա հարբած դարձելի դեմքը, անբարոյականանան։—Միստեր Հիգգինբոթամը սիրում էր գործածել թերթում իր նոր հանդիպած բառերը։—Այո որպեսզի չանբարոյականանան։Այլ կերպ չի կարելի ասել։

Բայց նրա կինը շարունակում էր միայն հառաչել, շարժել գլուխն ու կարել։ Միստեր Հիգգինբոթամը դարձյալ վերցրեց թերթը։

— Վճարե՞լ է նա անցած շաբաթվա ոտելիքի դրամը,— հարցրեց նա հանկարծ թերթի վրայից։

Կինը գլխով արեց և ավելացրեց։

— Դեռևս նա փող ունի։

— Ե՞րբ է նա դարձյալ գնալու ծովը։

— Կարծում եմ, երբ դրամը սպառվի,—պատասխանեց կինը։— Նա երեկ գնաց Սան-Ֆրանցիսկո տեսնելու, թե նավ չկա՞։ Բայց քանի նրա մոտ դրամ կա, նա իհարկե ամեն մի պատահած նավում ծառայելու պայմանագիր չի կնքի։ Նա դժվարահաճ է։

— Տախտակամածի հավաքարարին վայել չի այդպիսի դժվարահաճություն,—քմծիծաղեց միստեր Հիգգինբոթամը։— Դժվարահա՛ճ։ Մի դրան նայեք, է՞։

— Նա ասում էր ինչ-որ երկկայմանավի մասին, որը պատրաստվում է գնալ արտասահման ինչ-որ գանձ բերելու համար։ Նա հենց այդ նավով էլ ուզում էր գնալ, եթե միայն նրա դրամը բավականացնի սպասելու այդ նավին։

— Եթե նա ցանկանար հաստատվել այստեղ, ես նրան կընդունեի ինձ մոտ որպես կառապան,— ասաց ամուսինը՝ առանց բարյացակամության շեշտի։— Դոմը դուրս եկավ դուրսից։

Կինը նայեց նրան վրդովված ու հարցական հայացքով։

— Այս երեկո գնաց։ Նա աշխատելու է Կառուզերսների մոտ։ Նրանք վճարում են նրան այնքան, որ ես չեմ կարող։

— Ես ասել եմ քեզ, որ դու նրան ձեռքից կհանես,— բղավեց կինը։—Դու նրան վճարում էիր ավելի քիչ, քան նա արժանի է։

— Ահա, թե ինչ, պառավ,— չարացած ասաց Հիգգինբոթամը,—հազար անգամ ասել եմ քեզ, որ իմ գործերին չխառնվես։ Էլ չեմ կրկնելու այդ։

— Ինչպես ուզում ես,— մրթմրթաց կինը։—Թոմը լավ տղա էր։

Ամուսինը կատաղի հայացք ուղղեց կնոջը։ Դա կնոջ կողմից անասելի հանդգնություն էր։

— Եթե քո եղբայրը ծույլ չլիներ, կարող էր աշխատել սայլի վրա,—բթի մեջ ասաց նա։

— Նա վճարում է ուտելիքի և սենյակի համար,— առարկեց կինը։— Նա իմ եղբայրն է, և քանի նա քեզ պարտական չէ, ոչ մի դեպքում դու իրավունք չունես շարունակ կովախնդիր լինել նրան։ Ես էլ դեռ զգացումներ ունեմ, թեև ամբողջ յոթ տարի է, որ ամուսնացել եմ քեզ հետ։

— Ասացի՞ր նրան, որ նա պետք է վճարի գաղի դրամը, եթե շարունակի կարդալ գիշերները,—հարցրեց նա։

Միսսիս Հիգգինբոթամը ոչինչ չպատասխանեց։ Նրա վրդովմունքը անհայտացավ, նրա ոգին ընկղմեց հոգնած մարմնի մեջ։ Նրա ամուսինը հաղթանակել էր։ Նա հաղթեց կնոջը։ Ամուսնու մանրիկ աչքերը չարախինդ փայլատակեցին, և նա հրճվում էր՝ լսելով կնոջ արձակած հառաչանքները։ Նա մեծ բավականություն էր զգում սաստելով կնոջը, որին վերջերս դյուրին էր սաստել, այլ բան էր նրանց ամուսնության առաջին տարիներին, նախքան երեխաների ծնունդը, երբ ամուսնու մշտական կովախնդրությունը դեռ չէր ջլատել նրա ուժերը։

— Լավ, վաղը կասես նրան,— ասաց ամուսինը։— Հա, չմոռանամ ասելու, որ կանչել տուր Մերիենին, թող նա վաղը նայի երեխաներին, որովհետև Թոմը հեռանում է, այնպես որ ես ինքս պետք է գնամ սայլով ապրանք բերելու, իսկ դու իմ փոխարեն խանութում առևտուր կանես։

— Ես վաղը լվացք ունեմ,— առարկեց կինը անվճռականորեն։

— Ուրեմն, վաղ վեր կաց, ահա և ամենը... Ես ժամը տասից առաջ չեմ կարող գնալ։

Նա բարկացկոտ շուռ տվեց թերթը և շարունակեց ընթերցումը։

ԳԼՈՒԽ IV

Մարտին Իդենի ականջը դեռ ևս խշխշում էր իր փեսայի հետ ընդհարվելուց հետո, երբ նա մութ նախասենյակով անցնում էր իր սենյակը՝ մի փոքր խցիկ, ուր հագիվ զետեղված էին մի մահճակալ, մի լվացարան ու մի աթոռ։ Միստեր Հիդգինբոթամը շատ էր կծծի՝ մի աղախին պահելու համար, քանի որ իր կինը կարող էր աշխատել։ Բացի այդ աղախնին հատկացված սենյակում կարող էր լինակվել մի երկրորդ կենվոր։ Մարտինը Սուինբեռնը և Բրոուինինգը դրեց աթոռին, հանեց կուրտիկը և նստեց մահճակալին։ Զսպանակները տնքացին նրա մարմնի ծանրությունից, բայց նա ուշադրություն չդարձրեց դրան։ Նա սկսեց կոշիկները հանել կքած, երբ դիմացի պատին սպիտակ սվաղի վրա նկատեց կեղտոտ երկար բծեր երդիկից ծորած անձրևից և անզգայացավ։ Այդ կեղտոտ ֆոնի վրա սկսեցին երևալ ու անհայտանալ զանազան տեսիլքներ։ Մարտինը մոռացավ իր կոշիկները և երկար նայում էր պատերին, ապա նրա շրթունքները սկսեցին շարժվել և նա մրմնջաց՝ «Ռո՜ւթ», «Ռո՜ւթ»։ Մարտինը երբեք չէր էլ մտածել, որ մի պարզ հնչյուն կարող էր այդքան գեղեցիկ լինել։ Այդ հնչյունը փաղաքշում էր նրա լսողությունը, և նա զմայլանքով կրկնում էր «Ռո՜ւթ», «Ռո՜ւթ»։ Դա մի թալիսման էր, մոգական մի թովչություն։ Եվ ամեն անգամ, որ նա տալիս էր այդ անունը, Ռութի դեմքը պատկերանում էր նրա աչ-

էին, կեղտոտ պատը լուսավորելով ոսկի շողով։ Այդ շողը չէր սահմանափակվում պատով, այլ տարածվում էր մինչև անհունություն, որի ոսկե խորքերում իր հոգին պտտում էր Ռութի հոգին։ Նրանում գտնվող ամեն լավագույն բան հուժկու հոսանքով հորդեց դեպի դուրս։ Հենց Ռութի մասին մտածելը ազնվացնում, մաքրում և դարձնում էր նրան ավելի լավ և ցանկություն էր առաջացնում լինել ավելի լավ։ Այդ բանը մի նոր երևույթ էր Մարտինի համար։ Մարտինը դեռ երբեք չէր հանդիպել այնպիսի կանանց, որոնք ավելի լավ դարձնեին նրան՝ քան էր ինքը։ Ընդհակառակը, նրանք միշտ էլ նրան կոպիտ կենդանու էին վերածում։ Նա չէր գիտակցում, որ այդ կանանցից շատերը նրան տվել են իրենց լավագույնը, ինչքան էլ որ այդ լավագույնը խղճուկ լիներ։ Երբեք չմտածելով իր մասին՝ նա չէր իմանում, որ իր մեջ կա ինչ-որ բան, որը կանանցից սեր է քաշում, և հենց դրա համար էլ կանայք այդքան համառորեն ձգտում էին ձեռք բերել նրա երիտասարդությունը։ Նա երբեք չէր փնտրել նրանց. նրանք էին փնտրում նրան և նրա մտքովը երբեք չէր անցել, որ կան կանայք, որոնք իր շնորհիվ ավելի լավ են դարձել։ Նա մինչև այժմ ապրել էր շափաղանց անհոգ, և հիմա նրան թվում էր, որ միշտ էլ կանայք են բռնել նրան և պինդ պահել իրենց կեղտոտ ձեռքերով։ Դա արդարացի չէր ոչ կանանց, ոչ էլ իր նկատմամբ։ Սակայն նա, առաջին անգամը դիտակցելով իրեն, ի վիճակի չէր դատելու, այլ միայն ամոթից դեմին էր անցնում՝ հիշելով իր անառակությունը։

Մարտինը հանկարծ ոտի կանգնեց և աշխատեց տեսնել իրեն՝ լվացարանից վերև կախած կեղտոտ հայելու մեջ։ Նա մաքրեց այն երեսսրբիչով ու երկար և ուշադիր նայեց իրեն։ Իր կյանքում առաջին անգամն էր, որ նա իրոք տեսնում էր իրեն։ Նրա աչքերը ստեղծվել էին տեսնելու համար, բայց մինչև այժմ նրանք մնում էին սևեռված դեպի աշխարհի անընդհատ փոփոխվող կերպարը, և նա այնքան էր զբաղված դրանով, որ ժամանակ չուներ մինչև անգամ նայելու

իրեն։ Հայելիում նա տեսավ բան տարեկան մի պատանու գլուխն ու դեմքը, բայց չէր կարող որոշել, դեղեցի՞կ է ինքը, թե ոչ, որովհետև այդպիսի գնահատման չափանիշ չուներ։ Բարձր ու սեպ ճակատից վերև նա տեսավ շաղանակագույն մազերի մի փունջ։ Նրա դանդուրները դուր էին գալիս կանանց. նրանք սիրում էին մատներով խառնել ու շոյել այդ մազերը։ Բայց նա ուշադրություն չդարձրեց իր մազերին՝ համարելով, որ դրանք Ռութի համար չեն կարող ոչ մի նշանակություն ունենալ, և երկար ու խոհուն դիտեց իր բարձր ու սեպ ճակատը՝ աշխատելով թափանցել նրա մեջ, պարզել, թե ի՛նչ է թաքնված նրա ետևում։ Ի՞նչ կարելի էր սպասել այդ ուղեղից,— համառորեն հարցնում էր նա իրեն, և մինչև ո՞ւր կարող է հասնել նրանով։

Կարո՞ղ է այդ ուղեղը հասցնել նրան Ռութին։

Մարտինը հարց էր տալիս իրեն, թե երևո՞ւմ է իր հոգին այդ կապտավուն-գորշ աչքերում, որոնք հաճախ բոլորովին երկնագույն էին դառնում՝ կարծես արևաշող ծովի հարթ մակերեսը ծծած լինեին իրենց մեջ։ Նրան հետաքրքրական էր իմանալ թե ի՛նչպիսի աչքեր կարող են դուր գալ Ռութին։ Նա փորձեց նայել այդ աչքերին այնպես, ինչպես կնայեր աղջիկը, բայց դա ապարդյուն անցավ։ Սովորաբար նա հեշտությամբ էր գուշակում այլ մարդկանց մտքերը, բայց դրանք այնպիսի մարդիկ էին, որոնց կյանքը նա լավ գիտեր։ Իսկ Ռութի կյանքը նրան բոլորովին անծանոթ էր։ Դա նրա համար հանելուկ և հրաշք էր. նա որտեղի՞ց կարող էր իմանալ աղջկա թեկուզ մի միտքը։ Համենայն դեպս սրանք—եզրակացրեց նա — ազնիվ աչքեր են, և նրանց մեջ չկա ո՛չ մի ստություն, ո՛չ մի նենգություն։ Նրան զարմացրեց իր արևակեզ դեմքի թուխ գույնը. նա մինչ այդ երբեք չէր կարծել, որ այդքան սև է։ Նա վեր քաշեց իր շապկի թեզանիքը և արևից քիչ կիզված արմունկից վերև գտնվող մաշկը համեմատեց երեսի մաշկի հետ։ Ոչ, այնուամենայնիվ, նա սպիտակ է։ Բայց ձեռները նույնպես արևակեզ էին։ Այն ժամանակ նա թեքեց ձեռքը և մկանները լարե-

յով, աշխատեց տեսնել ձեռքի այն մասերը, որոնց ամենեին չէր դիպել արեը, դրանք շատ սպիտակ էին։ Նա ծիծաղեց հայելու միջի իր բրոնզե դեմքի վրա՝ մտածելով, որ մի ժամանակ նա էլ այնպես սպիտակ էր, ինչպես իր բաղուկը. նրա մտքովն էլ չանցավ, որ աշխարհում այնքան էլ շատ չեն կանայք, որոնք կարողանային պարծենալ իրենց կաշվի այդպիսի սպիտակությամբ, ինչպիսին իրենն էր,— մարմնի այն մասերում, որոնք չէին կիզված արևից։ Նրա բերանը կարող էր նմանվել քերովբեի բերանին, եթե սովորություն չունենար շարացած ժամանակ պինդ սեղմելու իր լիքը, գգայուն շրթները։ Երբեմն նա այնքան պինդ էր սեղմում դրանք, որ բերանը դառնում էր լուրջ ու խիստ, մինչև անգամ ասկետորեն ժուժկալ։ Դրանք մարտիկի և սիրեկանի շրթներ էին։ Նրանք կարող էին լիովին վայելել կյանքի քաղցրությունը, բայց և մի կողմ թողնել այն քաղցրությունը և իշխել կյանքին։ Կզակը, ինչպես և ուժեղ, մի փոքր ագրեսիվ ներքևի ծնոտը կարծես ստեղծված լինեին իշխելու կյանքին։ Նրանում ուժը հավասարակշռում էր զգայականությանը և գորացույցիչ ազդեցություն էր գործում դրա վրա և այդ պատճառով նա սիրում էր առողջ դեղեցկությունը և արձագանքում առողջ զգացումներին։ Եվ շրթների արանքում փայլում էին ատամները, որոնք գեռ երբեք կարիք չէին զգացել ատամնաբույժի խնամքին։ Դրանք սպիտակ էին, պինդ և ուղիղ,— այդպես վճռեց նա, երբ դիտեց նրանց. ինչպես հարկն էր։ Բայց դիտելիս, նա հանկարծ շփոթվեց։ Նրա հիշողության մի խորշում մի ազոտ տպավորություն պատկերացավ այն մասին, որ՝ կան մարդիկ, որոնք ամեն օր մաքրում են իրենց ատամները։ Դրանք բարձր դասի, Ռութի շրջանակի մարդիկ են։ Հավանական է, որ Ռութն էլ ամեն օր մաքրում է ատամները։ Ի՞նչ կմտածի աղջիկը նրա մասին, եթե իմանա, թե նա իր ողջ կյանքում ոչ մի անգամ չի մաքրել ատամները։ Նա վճռեց վազը ևեթ դնել ատամի խոզանակ և սովորություն դարձնել ատամները մաքրելը։ Միայն թաջագործությունների վրա չի կարելի հույս դնել՝

աղջկան նվաճելու համար։ Նա պետք է փորձի իր անձին վերաբերյալ ամեն բան՝ ատամ մաքրելուց մինչև օձիքը հագնելը, թեև օսլայած օձիք հագնելով նրան թվում էր, թե զրկվում է ազատությունից։

Մարտինը բարձրացրեց ձեռքը և մատով քերեց կոշտաշատ ձեռքը. նա նկատեց, որ կեղտը, թվում է, այնքան է իրվել կաշվի մեջ, որ խոզանակով էլ չես քերի այն։ Ի՞նչ ափունի Ռութը։ Մինչև անգամ մտաբերելը մեծ բավականություն է պատճառում։ Այդ ափը քնքուշ է, ինչպես վարդի ծաղկաթերթը, զով ու թեթև՝ ինչպես ձյունի փաթիլները։ Նա երբեք չէր մտածել այն մասին, որ կնոջ ձեռքը կարող է լինել այնքան փափուկ ու քնքուշ։ Նա մտածեց այն մասին, թե ի՞նչ վայելք կարող է տալ այդպիսի մի ձեռքի փաղաքշանքը, և այդ միտքը նրան շիկնեցրեց ու շփոթեցրեց։ Այդ միտքը աղջկա նկատմամբ չափազանց կոպիտ էր և նսեմացնում էր նրա հոգեկան գեղեցկությունը։ Ռութը մի դրժդույն ոգի էր, մի ուրվական, որը ճախրում էր բարձունքում՝ հեռու ամեն ինչից, որ մարմնեղեն է։ Եվ, սակայն, նա չէր կարողանում իր մտքերից հեռու վանել նրա փափուկ ափի հիշողությունը։ Նա սովոր է տնային աշխատանքում տանջված կանանց կոշտ, կոպտացած ձեռքերին։ Իհարկե նա հասկանում էր, թե ինչո՞ւ նրանց ձեռքերն այդպես կոպիտ են։ Ռութի ձեռքը քնքուշ և փափուկ է նրա համար, որ անծանոթ էր աշխատանքը։ Անդունդը նորից բացվեց իր և Ռութի միջև՝ հենց որ նա մտածեց, որ կան մարդիկ, որոնք կարիք չունեն աշխատելու՝ ապրելու համար։ Նրա աչքին հանկարծ պատկերացավ ազնվականների կերպարը. այն մարդկանց, որոնք չեն աշխատում։ Այդ կերպարը նրան երևաց պատի վրա՝ բրոնզե զոռոզ և ուժեղ մի պատկերի ձևով։ Մարտինը ինքն էլ է աշխատել, թվում է, որ առաջին հիշողությունները կապված են աշխատանքի հետ. նրա ամբողջ ընտանիքն էլ աշխատող է եղել։ Վերցնենք հենց Գերտրուդին։ Երբ նրա ձեռքերը չէին կոպտանում տնային անվերջ աշխատանքից, ուռած ու խաշած հորթի մսի նման

կարմիր էին լինում լվացրից։ Եվ կամ վերցնենք նրա մյուս քրոջը՝ Մերիենին։ Անցած ամառ նա աշխատում էր կոնսերվի գործարանում, և նրա փոքրիկ, սիրուն ձեռքերը ամբողջովին ճանկված էին՝ պամիդոր կտրող դանակներից։ Բացի այդ, անցած ձմեռը, երբ նա աշխատում էր կարտոնաժի ֆաբրիկայում, նրա երկու մատները կտրվեցին հատիչ մեքենայով։ Մարտինը հիշեց և իր մոր կոպիտ ձեռքերը, որոնք դագաղում խաչաձև դրված էին իրար վրա։ Նրա հայրն էլ աշխատել էր մինչև կյանքի վերջին օրը, և նրա ձեռքերը պատած էին ամեն մեկը համարյա կես մատնաչափ մեծությամբ կոշտերով։ Իսկ Ռութի ձեռքերը քնքուշ էին, և ոչ միայն նրա, այլև նրա մոր և եղբայրների ձեռքերը։ Այս բանը առանձնապես զարմացրեց նրան. դա նրանց կաստայի բարձրության պերճախոս նշանն էր, Ռութի և իր՝ Մարտինի միջև գտնվող ահագին տարածության ապացույցը։

Մարտինը դառը ծիծաղով նստեց մահճակալին և վերջապես հանեց կոշիկները։ Նա խելագարվել-հարբել էր մի կնոջ դեմքից և փափուկ ու սպիտակ ձեռքերից, Հանկարծ սվաղած պատի վրա նրա աչքին երևաց մի նոր տեսիլք։ Նա կանգնած է գիշերով Լոնդոնի Իստ-Էնդում մի ահագին, մռայլ տան առաջ, իսկ իր կողքին՝ տասնհինգ տարեկան Մարջին—ֆաբրիկայի մի բանվորուհի։ Նա տեսել էր այդ աղջկա բնակարանը գործարանատիրոջ տարին մի անգամ սարքվող համատեղ ճաշից հետո, երբ ընկերակցել էր նրան դեպի տուն։ Աղջիկն ապրում էր այդ մռայլ բնակարանում, ուր խոզն էլ չէր ուզենա ապրել։ Հրաժեշտ տալիս Մարտինը երկարեց նրան իր ձեռքը։ Աղջիկը դեմ արեց իր շրթունքը համբուրվելու համար, բայց Մարտինը չէր ցանկանում նրան համբուրել։ Աղջկա մեջ ինչ-որ բան խրտնեցնում էր նրան։ Այն ժամանակ աղջիկը տենդագին սեղմեց նրա ձեռքը։ Մարտինը զգաց նրա փոքրիկ ձեռքի կոշտերը և համակվեց մեծ կարեկցությամբ դեպի աղջիկը։ Նա տեսավ աղջկա պաղատագին, սոված աչքերը, նրա կանացի նիհար կերպարը,

տրի մեջ տրդեն զարթնել էր իր կանացի, անհամարձակ, բայց մոլեգին բնազդը։ Եվ նա, կարեկցությունից մղված, գրկեց աղջկան և համբուրեց նրա շրթները։ Նա լսեց աղջկա ուրախ բացագանչությունը և զգաց, թե աղջիկը ինչպես, կատվի նման փարվեց նրան։ Խե՞ղճ, փոքրիկ, վտիտ էակ։ Մարտինը դիտում էր այդ հեռավոր անցյալի տեսիլքը։ Նա սարսռեց ամբողջ մարմնով, ինչպես սարսռել էր այն երեկո, երբ աղջիկը փաթաթվեց նրան և նրա սիրտը ճմլվեց թախծից։ Դա մի գորշ տեսիլ էր— այն ժամանակ երկինքը գորշ էր և գորշ անձրև էր տեղում փողոցի կեղտոտ սալաքարերի վրա։ Բայց հանկարծ պատի վրա երևաց լուսաշող մի ցոլք, որը մթագնեց բոլոր կերպարներն ու տեսիլքները. նրա աչքին շողշողաց Ռութի դունատ դեմքը՝ պսակված ոսկեգույն մազերով, հեռու և անիմանալի աստղերի նրման։

Մարտինը վերցրեց աթոռից Սուինբեռնի և Բրաունինգի գրքույկներն ու համբուրեց նրանք։—Այնուամենայնիվ նա հրավիրեց ինձ այցելել— անցավ նրա մտքով։ Նա մի անգամ էլ նայեց իրեն հայելու մեջ և բարձրաձայն ու հանդիսավորապես ասաց.

— Մարտին Իդեն, վաղը առավոտ քո առաջին գործը կլինի դնալ ձրի գրադարան և կարդալ որևէ բան բարեկրթության մասին։ Հասկացա՞ր։

Այնուհետև նա հանգցրեց գազը, և մահճակալի զսպանակները տնքացին նրա մարմնի ծանրության տակ։

— Իսկ դլխավորը, Մարտին, դու կարելույն չափ քիչ հայհոյիր, լսո՞ւմ ես, բարեկամ,— ասաց նա բարձրաձայն։ Այդ ասելուց հետո նա քնեց, և նրա երազներն իրենց ցնորամտությամբ ու համարձակությամբ կարող էին մրցել միայն ափիոն ծխողի երազների հետ։

ԳԼՈՒԽ V

Հաջորդ առավոտ զարթնելով իր վարդագույն երազնե-լից, նա զգաց օճառի և կեղտոտ սպիտակեղենի հոտը և լսեց՝ աշխատանքային տանջալից օրը սկսած մարդկանց կովի ու հայհոյանքի ժխորը։ Երբ դուրս եկավ իր սենյակից, նա լսեց իր քրոջ ցասկոտ աղաղակը և մի ապտակի հնչյուն, որը հասցրեց նա իր բազմաթիվ երեխաներից մեկին՝ իր բարկությանը մի ելք գտնելու համար։ Երեխայի ճիչը դա-նակի պես կտրեց նրա լսելիքը։ Այստեղ նրան զզվելի էր թվում ամեն ինչ, մինչև անգամ օդը, որը շնչում էր նա։ Ի՞նչպես այդ բոլորը նման չի՝ Ռութի բնակած տանը տի-րող հանգստին և ներդաշնակությանը։ Այնտեղ ամեն բան վսեմ էր, ոգեղեն, իսկ այստեղ՝ նյութական, կոպիտ նյութա-կան։

— Այստեղ արի, Ալֆրեդ,—կանչեց նա լացող երեխա-յին և ձեռքը տարավ գրպանը, ուր դրամներ կային։ Նա անխնամ էր վերաբերվում դրամներին. դրանում արտա-յոլում էր իր սրտաբացությունը։ Նա մանչուկի ափը դրեց մի դրամ և գրկեց նրան, որպեսզի հանգստացնի։

— Վազիր, գնիր շաքարեղեն և մի մոռանա տալ նաև եղբայրներիդ ու քույրերիդ։ Վերցրու այնպիսի շաքարեղեն, որ երկար ժամանակ չհալչի։

Նրա քույրը տաշտակից բարձրացրեց իր մեջքը և նայեց նրան։

— Բավական էր և մի ցենտ,— ասաց նա,— դու դրամի արժեքը չգիտես։ Երեխան կտրաքվի ուտելուց։

— Լավ է, քույրիկ,— ասաց նա ուրախ,— իմ դրամներն իրենք գիտեն իրենց արժեքը։ Բարի լույս, քույրիկ, եթե դու այդքան զբաղված չլիներիր, ասված վկա կհամբուրեի քեզ։

Նա ցանկանում էր սիրալիր լինել քրոջ հետ, որը բարի սիրտ ուներ և յուրովի (նա գիտեր այդ) սիրում էր Մարտի-նին։ Ճիշտ է, որ տարիների ընթացքում նա ավելի և ավելի

էր կարդնում իր նախկին կերպարը, զարմանում էր կովարար ու դյուրազրգիռ Մարտինը վճռեց, որ այդ փոփոխությունը բացատրվում է ծանր աշխատանքով, մեծ ընտանիքով և ամուսնու անատանելի բնավորությամբ, նվ հանկարծ նրան այնպես թվաց, որ քույրը կարծես ստստրվել է այդ փոքր բանջարեղենի, կեղտոտ սպիտակեղենի և գլուխ պղնձագրամանների դարշելի հոտով, այն պղնձագրամանների, որ նա հաշվում էր վաճառատեղանի առաջ։

— Գնա նախաճաշիր,— ասաց քույրը արտաքուստ կոպիտ կերպով, իսկ ներքուստ զոհունակությամբ։ Աշխարհի երեսին թափառող իր բոլոր եղբայրներից Մարտինը միշտ էլ ամենից սիրելին էր։

— Արի՛, ես քեզ ուզում եմ համբուրել,— ասաց նա՝ ենթարկվելով իր հանկարծական հույզին։

Նա մատներով հավաքեց փրփուրը՝ նախ մի ձեռքից, հետո մյուսից։ Մարտինը գրկեց նրա ծանր իրանը և համբուրեց խոնավ ու եռացած ջրով փափկացած շրթունքը։ Քրոջ աչքերում երևացին արցունքներ ոչ այնքան զգացումների զեղումից, որքան մշտական հոգնածությունից առաջացած թուլությունից։ Քույրը ետ մղեց նրան, բայց Մարտինը այնուամենայնիվ նկատեց նրա արցունքները։

— Նախաճաշը վառարանումն է,— ավելացրեց նա արագ,— անկասկած, Ջիմն արդեն վեր է կացել։ Այսօր ես լվացքի կապակցությամբ վեր կացա դեռ լույսը չբացված։ Գնա, շուտով կեր և հեռացի՛ր այստեղից. այսօր օրը դժբնդակ է մեզ համար։ Թոմը դուրս եկավ ծառայությունից, հետևաբար Բեռնարդին կարիք կլինի անձամբ գնալ սայլով։

Մարտինը ընկճված սրտով դնաց խոհանոց։ Քրոջ կարմիր դեմքն ու կեղտոտ ձեռքը խորը տպավորվեցին իր հիշողության մեջ։ Մարտինը մտածեց։ Նա կսիրեր ինձ, եթե ժամանակ ունենար։ Սակայն նա ջլատվում է աշխատանքից։ Անասո՞ւն է այդ Բեռնարդ Հիդդինբոթամը, որ ստիպում է կնոջը այդքան աշխատել։ Միաժամանակ Մարտինը չէր կա-

բողանում պոկ գալ այն մտքից, որ քրոջ համբույրի մեջ ոչ մի գեղեցկություն չկար։

Իրավ է, որ այդ համբույրը ըստինքյան անսովոր էր։ Արդեն շատ տարիներից ի վեր Գերտրուդը համբուրում էր նրան միայն հրաժեշտ տալիս նրա նավարկության գնալու ժամանակ, կամ նրա տուն վերադարձին դիմավորելիս։ Բայց այդ համբույրում զգացվում էր օճառի փրփուրի համը, իսկ քրոջ շրթունքները թարշամած էին։ Այդ շրթունքները չէին սեղմվում արագ ու պինդ իր շրթներին, ինչպես պիտի լինեն համբույրները։ Դա այնքան հոգնած կնոջ համբույրն էր, որը մինչև անգամ մոռացել է, թե ինչպես են համբուրվում։ Մարտինը ակամա հիշեց, թե ինչպես իր քույրը սմուսնանալուց առաջ կարող էր ողջ դիշերը պարել ծանր աշխատանքով անցած օրվանից հետո և կարծես դա ոչ մի նշանակություն չուներ։ Նա պարից ուղղակի գնում էր աշխատանքի՝ իր լվացքատունը։ Այդ ժամանակ Մարտինը նորից մտածեց Ռութի մասին, նույնպես այն մասին, որ հավանականորեն նրա շրթունքները նույնքան թարմ են, ինչքան նա ամբողջովին։ Հավանական է, որ Ռութը համբուրում է ճիշտ այնպես, ինչպես նայում է, ինչպես պինդ ու անկեղծ ձեռք է սեղմում։ Մարտինը մինչև անգամ հանդգնեց պատկերացնել իրեն, թե ինչպես Ռութի շրթունքները հպվում են իր շրթներին, և նա այնպես կենդանի պատկերացրեց այդ, որ նրա գլուխը պտույտ եկավ։ Նրան թվում էր, թե դանդաղ լողում է վարդի ծաղկաթերթերից կազմված ամպերում, որոնք իրենց բույրով հարբեցնում են նրան։

Խոհանոցում նա դտավ մյուս կենվորին՝ Ջիմին, որը դանդաղ ուտում էր վարսակից պատրաստած իր խյուսը, բութ, երազկոտ հայացքը սևեռելով դեպի անհայտ տարածությունը։ Ջիմը փականագործի աշակերտ էր, և նրա դանդաղկոտությունն ու կամազուրկ կզակը, ինչպես և որոշ չափով մտավոր հետամնացությունը հաջողություն չէին խոստանում նրան գոյության համար մղվող պայքարում։

— Դու ինչո՞ւ չես ուտում,— հարցրեց նա՝ տեսնելով,

որ Մարտինը դժկամությամբ բշխորում է իր բաժին վաբ-սակի խյուսը։— Դու երեկ նորից հարբեցիր։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը։ Շրջապատի արտասովոր ողորմելիությունը չափազանց ընկճում էր նրան։ Ռութ Մորզը այժմ ավելի հեռավոր էր թվում իրեն, քան երբեք։

— Իսկ ես հարբեցի,— ասաց Ջիմը պարծենկոտ, ջղա-յին ծիծաղով։— Ուղղակի դինու տիկ էի դարձել։ Է՜հ, աղջիկը լավիկն էր։ Ինձ քարշելով տուն է բերել Բիլլը։

Մարտինը գլխով արեց՝ հասկացնելով, որ լսում է,— նա անգիտակցաբար սովորություն ուներ այդ ձևով ցուցա-բերելու իր ուշադրությունը խոսակցին, ով էլ որ լինի նա։ Հետո նա լցրեց իրեն մի բաժակ դաղջ սուրճ։

— Այսօր երեկոյան կգնա՞ս «Լոտոս» ակումբը պարե-լու,—հարցրեց Ջիմը։— Այնտեղ դարեջուր կլինի։ Իսկ եթե Տեմեսկալից տղերք գան, անպայման տուրուդմբոց կլինի։ Իհարկե, դա բոլորովին չի հետաքրքրում ինձ։ Միևնույն է, ես կբերեմ այնտեղ իմ աղջկան։ Թո՜ւհ, ի՛նչ վատ համ կա բերանումս։

Նա ծամածռեց իր դեմքը և ողողեց բերանը մի ումպ սուրճով։

— Ջուվիային ճանաչո՞ւմ ես։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը։

— Նա հիմա ինձ հետ է,— բացատրեց Ջիմը։— Հիա-նալի աղջիկ է։ Ես կծանոթացնեի քեզ նրա հետ, բայց դու կխլես նրան ինձանից։ Աստված վկա, ես չեմ հասկանում թե աղջիկները ի՞նչ են գտել քո մեջ, որ պոկ չեն գալիս քեզա-նից։ Մինչև անգամ վիրավորական է տեսնել, որ դու շատ հեշտությամբ խլում ես ամեն մի աղջկա։

— Ես քեզանից մինչև այժմ ոչ մեկին չեմ խլել,— նկատեց Մարտինը անտարբեր, որպեսզի առանց վեճի վերջացնի նախաճաշը։

— Ինչպե՞ս թե չէ,—առարկեց Ջիմը,—բա Մե՞գգին։

— Ես երբեք գործ չեմ ունեցել նրա հետ։ Այն մի անգամից հետո ես մինչև անգամ չեմ սարել նրա հետ։

— Հենց բանն էլ այդ է,— ճչաց Ջիմը,— դու միայն պարեցիր նրա հետ և մի երկու անգամ նայեցիր նրան, և բանը վերջացավ։ Թերևս այդպիսի բան մտքովդ էլ չի անցել։ Իսկ Մեգգին դրանից հետո իմ երեսին անգամ նայել չուզեց։ Նա շարունակ քո մասին էր հարցնում։ Եթե դու ուզենայիր, նա միանգամից կժամադրվեր քեզ հետ։

— Բայց չէ՞ որ ես չուզեցի։

— Դա կարևոր չի։ Միևնույն է, դրանից հետո նա ինձ լքեց։—Ջիմը հիացմունքով նայեց նրան։— Ինչպե՞ս է դա հաջողվում քեզ, Մարտին։

— Ես քիչ եմ մտածում նրանց մասին, ահա և ամբողջ գաղտնիքը,— պատասխանեց նա։

— Ուրեմն դու այնպես ես ձևացնում, որ ուշադրություն չես դարձնում նրանց վրա,— վրա բերեց Ջիմը կրքոտ հետաքրքրությամբ։ Մարտինը մի պահ մտածեց, թե ինչ պատասխանի։

— Թերևս դա էլ նշանակություն ունի։ Բայց ես իրոք չեմ մտածում նրանց մասին։ Դու փորձիր այդպես ձևանալ. կարող է պատահել, որ դրանից մի բան դուրս կգա։

— Ափսո՞ս, որ դու երեկ երեկո չէիր եկել Ռայլիի մոտ,— հանկարծ ասաց Ջիմը՝ առանց տրամաբանական հետևողականության,— այնտեղ էր Արևմտյան Օկլենդից մի գեղեցիկ տղամարդ՝ «առնետ» մականունով։ Տեսնեիր, ի՛նչ ճարպիկ է կռվում։ Մեր տղաներից ոչ մեկը չկարողացավ տապալել նրան։ Բոլորը ափսոսում էին, որ դու չկաս։ Ո՞րտեղ էիր երեկ։

— Օկլենդում,— պատասխանեց Մարտինը։

— Թատրո՞ն գնացիր։

Մարտինը ետ մղեց իր պնակը և գնաց դեպի դուռը։

— Այս երեկո կգա՞ս պարելու,— բղավեց Ջիմը նրա ետևից։

— Ո՛չ, դժվար թե դամ,— պատասխանեց նա։

Նա իջավ սանդուղքներից և դուրս եկավ փողոց՝ կարիք զգալով ազատ օդի։ Նա խեղդվում էր այդ տան մի՛ն տրտում, իսկ Ջիմի հետ խոսակցությունը նրան կատաղեցրեց։ Երբեմն նրան թվում էր, թե իրեն ուրիշ բան չի մնում անել, եթե ոչ վեր կենալ և Ջիմի քիթը կոխել շիլայի պնակի մեջ։ Ինչքան շատ էր խոսում Ջիմը, այնքան շատ էր հեռանում Ռութը։ Կարո՞ղ էր նա հուսալ, որ ապրելով այդպիսի անբանների շրջանում, երբևէ արժանի կլինի Ռութին։ Նրան հուսահատեցնում էր իր առաջ դրված խնդիրը. նա զգում էր, որ իր դրությունը՝ բանվոր դասակարգին պատկանող մարդու դրությունը անելանելի է։ Իսկ շրջապատում ամեն ինչ նրան ցած էր գցում և թույլ չէր տալիս բարձրանալու, և՛ քույրը, և՛ նրա տունը, և՛ փականագործ Ջիմը, և՛ իր բոլոր ծանոթները,— կյանքի բոլոր կապերը։ Կյանքը անհամ դարձավ նրա համար։ Մինչև այժմ նա կյանքը ընդունել էր այնպես, ինչպես այն կար։ Լա՞վ է այդ, թե վատ,— նա երբեք չէր մտածել այդ մասին՝ բացի այն դեպքից, երբ գիրք էր կարդում։ Բայց չէ՞ որ դրանք միայն գրքեր էին, հիանալի պատմվածքներ՝ ավելի ևս հիանալի անգո աշխարհում։ Իսկ հիմա նա տեսավ, որ այդ աշխարհը գոյություն ունի իրականության մեջ, ինչպես և ծաղիկ-աղջիկը, որը կոչվում է Ռութ, այդ աշխարհի կենտրոնում։ Եվ ահա այդ բոպեից նա ճանաչեց կյանքի դառնությունը, տենչն ու անհուսությունը, որն առանձնապես տանջալի էր այն պատճառով, որ սնվում էր հույսով։

Մարտինը երկար ժամանակ չէր կարողանում վճռել, թե ո՛ւր գնա — Բերկլիի հանրային գրադարանը, թե՞ Օկլենդի գրադարանը, և կանգ առավ Օկլենդի վրա, որովհետև Ռութը ապրում էր Օկլենդում։ Ի՞նչ իմանաս- գրադարանը ամենահարմար տեղն է Ռութի համար և շատ հավանական է, որ նրան կհանդիպի այնտեղ։ Նա բոլորովին ծանոթ չէր գրադարանի բաժիններին և թափառում էր դեղարվեստական գրականության անվերջ դարակների արանքում, մինչև որ ինչ-որ

նիհար, հավանորեն ֆրանսիացի մի աղջիկ նրան ասաց, թե տեղիկանքի բաժինը գտնվում է վերևի հարկում, նա դլխի չընկավ դիմելու սեղանի առջև նստած մարդուն և պատահաբար ընկավ փիլիսոփայության բաժինը։ Նա լսել էր, որ փիլիսոփայական դրքեր գոյություն ունեն, բայց երբեք չէր կասկածում, որ այդ դիտության շուրջը այդքան բան է գրված։ Հետո հատորներով լցված բարձր պահարանները ճնշում և միաժամանակ գրգռում էին նրան։ Այստեղ շատ բան կար Մարտինի ուղեղը զբաղեցնելու համար։ Մաթեմատիկայի բաժնում նա գտավ եռանկյունաչափության դրքեր և երկար զննում էր անիմաստ թվացող ֆորմուլաներն ու գծագրությունները։ Նա կարդում էր նրանց մեջ անդլերեն բառեր, որոնց նշանակությունը չէր հասկանում։ Դա ինչ-որ առանձին լեզու էր։ Նորմանն ու Արտուրը գիտեն այդ լեզուն, նա լսեց, թե նրանք ինչպես էին խոսում այդ լեզվով։ Իսկ նրանք Ռութի եղբայրներն էին։ Մարտինը հուսալքված հեռացավ փիլիսոփայության բաժնից։ Նրան թվում էր, թե գրքերն ամեն կողմից շարժվում են նրա վրա՝ սպառնալով ճզմել նրան։ Նա երբեք չէր կասկածում, որ մարդկային գիտելիքներն այդքան ահագին են։ Սարսափը պատեց նրան— կկարողանա՞ հաղթահարել— շատ մարդիկ հաղթահարել են այդ։ Եվ նա ջերմորեն երդվեց, որ իր ուղեղն էլ կկարողանա տիրապետել այն բոլորին, ինչին տիրապետել են ուրիշները։

Եվ այդպես նա դեգերում էր՝ մատնվելով մերթ հուսահատության, մերթ հիացմունքի, իմաստության գանձերով դարակների միջև։ Ընդհանուր բաժնում նա գտավ Նոթիի «Կոնսպեկտը»։ Նա պատկառանքով թերթեց այդ գիրքը։ Այստեղ համենայն դեպս ինչ-որ հարազատ բան կար։ Նրա հեղինակը նույնպես նավաստի էր, ինչպես և ինքը։ Հետո նա գտավ մի գիրք «Բոուդիչ» խորագրով, կաշեկազմ, հեղինակություն Ընկկիի ու Մարշալլի։ Հրաշալի՛։ Նա կարող է զբաղվել նավագնացության ուսումնասիրությամբ, կհրաժարվի խմելուց, կսկսի եռանդով աշխատել և կդառնա կապի-

տան։ Այդ պահին Ռութը նրան թվում էր բոլորովին մոտիկ։ Իրը կապիտանը՝ նա արդեն կարող է ամուսնանալ Ռութի հետ (եթե Ռութը ցանկանա)։ Իսկ եթե չցանկանա, այդ ոչինչ, Ռութի շնորհիվ նա կապրի լավ, արժանավոր կյանքով, իսկ խմելը կթողնի՝ անկախ դրանից։ Հետո նա հիշեց ապահովագրողին և նավատերերին՝ կապիտանի այդ երկու տերերին, որոնցից յուրաքանչյուրը կարող է և կուզենա խորտակել իրեն, և որոնց շահերը սրամագծորեն հակառակ են իրար։ Նա գննեց սենյակը, մինչև անգամ աչքերը կկոցեց տեսնելով տասը հազար հատոր դիրք։ Չէ՞, նրա համար այսուհետև ոչ մի ծով։ Այստեղ, դրքերի այդ շատության մեջ ահագին ուժ կա, և եթե նա ուզում է մեծ գործեր կատարել, պետք է կատարի այդ բոլորը ցամաքում։ Բացի այդ, նավապետներին չի թույլատրվում հետները վերցնել իրենց կպնանց։

Կեսօր եղավ և բավական ժամանակ էլ անցավ։ Մարտինը մոռացավ ուտելը և շարունակում էր կարդալ դրքերի խորագրերը։ Նրա միտքը, բացի կարիերայից, զբաղված էր նաև պարզ ու չափազանց կոնկրետ մի հարցով. եթե հանդիպում եք մի երիտասարդ լեդիի և նա խնդրում է ձեզ մի անգամ էլ այցելել. ինչքա՞ն ժամանակից հետո կարելի է գնալ նրան տեսնելու։ Բայց երբ նա վերջապես գտավ իսկական դիրքը, իզուր էր այդ հարցի պատասխանը փնտրում։ Նա սոսկաց քաղաքավարության ձևերի բարդությունից ու բազմազանությունից, շվարեց աշխարհիկ հասարակության մեջ ընդունված այցեստոմսերի փոխանակության կարգի բոլոր այդ կանոններում։ Նա դադարեցրեց իր որոնումները։ Նա չգտավ, ինչ փնտրում էր, բայց հասկացավ, որ մի ամբողջ կյանք է հարկավոր՝ քաղաքավարության բոլոր ձևերը սովորելու և քաղաքավարի մարդ դառնալու համար։

— Ձեր ուղածը գտա՞ք,—հարցրեց սեղանի առաջ նստած մարդը, երբ նա պատրաստվում էր հեռանալ։

— Այո՛, սրբ, ձեր դրադարանը հիանալի է,— պատասխանեց Մարտինը։

Մայոր գլխով արեց։

— Մենք ուրախ կլինենք, եթե դուք ավելի հաճախ գաք մեզ մոտ։ Դուք նավաստի՞ եք։

— Այո՛, սըր։ Ես էլի կգամ այստեղ։

«Ինչպե՞ս իմացավ, որ ես նավաստի եմ»,—հարցրեց նա ինքն իրեն, սանդուղքներից իջնելիս։

Դուրս գալով փողոց՝ նա ջանաց քայլել ուղիղ, առանց անշնորհք կերպով ճոճվելու, մինչև որ մտքերով տարվելով մոռացավ իրեն և սկսեց գնալ իր սովորական քայլվածքով։

ԳԼՈՒԽ VI

Քաղցի սանջանքին նմանվող մի անհանգստություն համակեց Մարտին Իդենին։ Նա մաշվում էր աղջկանը նորից տեսնելու ցանկությունից—աղջկան, որի քնքուշ ձեռքերը մի հսկայի ուժգնությամբ բռնեցին նրա կյանքը։ Նա չէր համարձակվում գնալ այդ աղջկա մոտ, վախենում էր, որ դա չափազանց շուտ կլինի և այդպիսով կխախտեր քաղաքավարություն կոչված ահարկու կանոնագիրքը։ Նա ժամերով մնում էր Օկլենդի և Բերկլիի գրադարաններում, որոնց անդամագրվեց իր, Գերտրուդի, Մերիենի անուններով, մինչև անգամ Ջիմի անունով, որը համաձայնեց, երբ Մարտինը նրան շռայլորեն հյուրասիրեց գարեջրով։ Այդ չորս բաժանեգրություններով նա հավաքեց գրքեր և նրա սենյակում համարյա ողջ գիշեր վառ էր մնում գազը, որի համար միստեր Հիգգինբոթամին ամսական հինուն ցենտ ավելորդ գրամ էր վճարում։

Սակայն նրա կարդացած գրքերը միայն ավելացնում էին նրա անհանգստությունը։ Մի նոր գրքի յուրաքանչյուր էջ նրան թվում էր մի անցում դեպի դիտելիքների պարտեզները։ Այդ գրքերը կարդալուց նրա քաղցն ավելի էր աճում։ Նա չգիտեր նաև, թե ինչի՞ց պիտի սկսել և շարունակ տանջվում էր նախապատրաստական կրթություն չունենալուց։ Նա

չէր իմանում մինչև անգամ ամենահասարակ բաները, որոնք պետք է գիտենա ամեն մարդ, որ դիբք-է վերցնում կարդալու։ Նույնը կարելի էր ասել և բանաստեղծության մասին, որը կարդում էր Մարտինը արտասովոր հափշտակությամբ։ Սուինբեռնից նա կարդաց ոչ միայն Ռութի տված գրքույկի բովանդակությունը, այլև «Դոլորեսը» և հիանալիորեն հասկացավ այդ ամենը։ Բերևս Ռութը չի հասկանում այդ երկասիրությունը,— վճռեց նա։ Ապրելով այդպիսի նուրբ կյանք՝ Ռութը ինչպե՞ս կարող էր հասկանալ այդ։ Հետո նրա ձեռքն անցան Կիպլինգի բանաստեղծությունները և նա դյութվեց՝ ծանոթ բաների մասին նրա գրած տողերի երաժշտականությամբ, ռիթմով, կախարդական պատկերավորությամբ։ Նա հիացավ Կիպլինգի բոլոր բանաստեղծություններից արտացոլող կյանքի սիրով և հոգեբանության նրբությամբ։ Հոգեբանությունը մի նոր բան էր Մարտին Իդենի բառապաշարում։ Նա գնեց մի բառարան և դրանով ջլատեց իր ֆինանսները, կրճատեց ցամաքում մնալու իր ժամկետը և, բացի այդ, կատաղեցրեց միստեր Հիդդինբոթամին, որը կգերադասեր ստանալ այդ դրամը սենյակի վարձի հաշվին։

Ցերեկով Մարտինը մինչև անգամ չէր համարձակվում մոտենալ Ռութի բնակարանին, իսկ դիշերները դոդի նման դեգերում էր Մորդի ընտանիքի տան շուրջը՝ աննկատելի նայելով լուսավորված պատուհաններին և քնքշություն զգալով մինչև անգամ այդ տան պատերի նկատմամբ։ Քանիցս նա, քիչ էր մնում, երես-երեսի հանդիպեր Ռութի եղբայրներին, իսկ մի անգամ նա երկար քայլեց միստեր Մորդի ետևից՝ փողոցի լապտերների լույսի տակ ուսումնասիրելով, նրա դեմքը և բուռն կերպով ցանկանալով, որ այդ պատվարժան ջենտլմենը ենթարկվի մահացու վտանգի, որպեսզի Մարտինը առիթ ունենա փրկելու նրա կյանքը։ Մի այլ անգամ նա հանկարծ տեսավ Ռութին երկրորդ հարկի պատուհանից։ Երևում էին միայն նրա գլուխը, ուսերն ու ձեռքերը, ըստ երևույթին աղջիկը սանրվում էր հայելու առաջ։ Դա տևեց միայն մի պահ, բայց դա էլ բավական էր բորբո-

քելու նրա արյունը՝ կարծես դինու ազդեցության տակ։ Ճիշտ է, որ աղջիկն իսկույն իջեցրեց պատուհանի վարագույրները, բայց նա իմացավ, թե որտեղ է աղջկա սենյակը. դրանից հետո նա ժամերով կանգնում էր դիմացի մայթին՝ ծառի տակ և ոնվերջ զլանակ էր ծխում։ Մի անգամ նա տեսավ աղջկա մորը բանկից դուրս գալիս և մի ավելորդ անգամ ևս համոզվեց, որ մի անսահման տարածություն բաժանում է իրեն աղջկանից։ Ռութը պատկանում էր այն մարդկանց, որոնք բանկումն են պահում իրենց դրամը։ Նա համոզված է, որ այդպիսի հիմնարկները հաճախում են միայն շատ հարուստ և շատ հզոր մարդիկ։

Որոշ չափով՝ նա ապրում էր մի բարոյական ռևոլուցիա։ Աղջկա մաքրությունն ու անարատությունը նրա վրա այնպիսի տպավորություն էին գործել, որ նա որոշեց, ինչ էլ որ լինի, նույնպես մաքուր լինել։ Նա պետք է մաքուր լինի, եթե ուզում է արժանի դառնալ աղջկա հետ միևնույն օդը շնչելու։ Նա մաքրում էր ատամները և շարունակ քերում էր ձեռքը խոհանոցի խոզանակով, մինչև որ մի անգամ մի խանութի ցուցափեղկում տեսավ եղունգների խոզանակ և գուշակեց. թե դա ի՛նչ բանի է գործածվում։ Վաճառողը նայելով նրա եղունգներին, առաջարկեց նրան նաև եղունգմաքրիչ և այդ կերպով նրա տուալետի ժողովածուն հարստացավ մի առարկայով ևս։ Նա գրադարանից վերցրեց առողջապահության մի գիրք և նրա մեջ կարդաց, որ անհրաժեշտ է ամեն առավոտ լողանալ սառը ջրով։ Դա զվարճացրեց Ջիմին, իսկ սաստիկ վրդովեցրեց միստեր Հիգգինբոթամին, որը չհամակրելով այդպիսի տարօրինակությունները, սկսեց լրջորեն քննարկել այն հարցը, թե արդյոք հարկավոր չէ՞ Մարտինից ստանալ առանձին վճար ջրի համար։ Առաջադիմության ճանապարհին հետևյալ քայլը—դա անդրավարտիքի ձևի մասին հոգածությունն էր։ Հետաքրքրվելով այդ հարցով՝ Մարտինը շուտով նկատեց բանվորների պարկանման շալվարների և բարձր դասակարգի մարդկանց անդրավարտիքների միջև զանազանությունը, վերջինների ուղիղ ծալքը մինչև ներքանը։

Գուշակելով, թե ինչո՞ւն է գոպանիրը, Մարտինը գնաց իր քրոջ խոհանոցը՝ արագակ և արագակնու ատխատակ բերելու համար։ Բայց առաջին փորձը վերջացավ անհաջող։ Նա վանեց իր անդրավարտիքը և ստիպվեց գնել նորը՝ դրա՞ վ ավելի նա մտանելով նավապետության մեկնելու իր ժամկետը։

Բայց բանը չսահմանափակվեց այդ ռեֆորմներով, նա շարունակում էր ծխել, իսկ խմելը թողեց։ Մինչև այժմ նա դանում էր, որ հարբեցողությունը ապամարդու համար ամենահարմար դրդապատճառն է, մինչև անգամ նա շատ էր հպարտանում իր պինդ գլխով, որը նրան թույլ էր տալիս շարունակել խմել, երբ իր ընկերներից շատերն արդեն սեղանի տակ թավալվում էին։ Սան-Ֆրանցիսկոյում նա ուներ շատ ընկերներ նախկին նավաստիությունից, որոնց հետ հանդիպելիս նա առաջվա նման հյուրասիրում էր գինով, իսկ իրեն համար պատվիրում էր միայն մի գավաթ գարեջուր կամ թույլ «էյլ» և բարեմտորեն հանդուրժում էր բոլոր ծաղրանքները։ Նա հեռատեսությամբ դիտում էր, թե ինչպես նրանք հարբած, հեծկլտալ անասունի էին նմանվում և ուրախանում էր, որ ինքը նրանց նման չի։ Նրանցից ամեն մեկն իր ցավերն ուներ և գինին օգնում էր նրանց մոռանալ իրականությունը և փոխադրվել երազների ու երևակայության աշխարհը։ Բայց Մարտինին արդեն հարկավոր չէր ալկոհոլ։ Նա գտնվում էր ավելի խոր հարբեցման վիճակում,—նա հարբել էր Ռութով, որը վառեց նրա մեջ սեր, ձգտում, մի նոր, ավելի լավ կյանքի. նա հարբած էր գրքերով, որոնք նրանում գարթեցրին բյուրավոր չհաղթված ցանկություններ, հարբած էր սեփական մաքրության մտքով, որը նրան տվեց առողջություն՝ առաջվանից ավելի լրիվ զգացողություն և նրա ամբողջ մարմինը ստիպեց թոթռալ գոյության ֆիզիկական ուրախությունից։

Մի երեկո Մարտինը թատրոն գնաց՝ Ռութին այնտեղ տեսնելու ազատ հույսով և երկրորդ հարկի պատշգամբից իրոք տեսավ նրան։ Նա պարտերով անցավ՝ ընկերակցությամբ Արտուրի և ինչ-որ տարօրինակ, ակնոցավոր, ֆուտ-

բոլիսաի մակերով երիտասարդի, որը Մարտինի մեջ իսկույն խռովք ու իանդ առաջացրեց։ Նա նստեց առաջին շարքում և ամբողջ երեկոյի ընթացքում համարյա ոչինչ չէր տեսնում, բացի նրա բաբեկազմ ուսերից և հեռավորությունից միգապատ՝ ոսկեգույն մակերից։ Բայց և այնպես նա մի երկու անգամ նայեց իր չորս կողմը և նկատեց իրենից մի քանի աթոռ հեռու նստած երկու աղջիկների, որոնք ժպտալով աչքով արին նրան։ Նա միշտ էլ ուրախությամբ էր ծանոթանում և նրանում բնավորություն էր դարձել անպատասխան չթողնել ուշադրության այդպիսի նշաններ։ Դեռ վերջերս նա անսպասման կժպտար նրանց իր հերթին և ավելի հեռու կգնար։ Իսկ հիմա ամեն ինչ փոխվել է։ Ճիշտ է, նա ժպտաց, բայց անմիջապես երեսը դարձրեց և աշխատում էր չնայել նրանց կողմը։ Սակայն մի քանի անգամ մոռանալով երկու աղջիկների գոյությունը, նա իր հայացքով որսաց նրանց ժպիտը։ Դժվար էր մի օրում փոխվել, բացի այդ. նա բնությունից քաղաքավարի էր և այդ պատճառով ակամա ժպտով էր պատասխանում այդ աղջիկներին, ժպտում էր պարզ, ընկերաբար։ Այդ բոլորը այնքան հին էր, ինչքան աշխարհը։ Նա գիտեր, որ նրանք իր հետ սովորական կանացի խաղ են խաղում։ Սակայն նրա համար այժմ ամենը այլ բնույթ էր ստացել։ Այնտեղ, հեռուն, առաջին շարքում նստել է մի կին, աշխարհում միակը, որը նման չի. անհունորեն նման չի, իր դասակարգի այն երկու աղջիկներին, որոնց նկատմամբ արդեն միայն խղճահարություն էր զգում։ Նա սրտանց ցանկանում էր նրանց՝ դեթ անչափով ունենալ Ռութի առատաձեռն զեղեցկությունը։ Նա ոչ մի գնով չէր կշտամբի նրանց այն բանի համար, որ նրանք շտապանց համարձակ խաղ են անում իրեն հետ։ Սակայն նա Մարտինի ինքնասիրությունը չէր շոյում նվ աղջիկների ամեն նայվածքից նա զգում էր, թե ինչպես իր աշխարհի կոչման շուշափուկները զարգանում են իր չարքը և քաշում են նրան ցած։

Մարտինը վեր կացավ իր նստած տեղից վերջին զոր-

ծողությյան վարձանից մի քիչ առաջ ցանկանալով տեսնել Ռուբին թատրոնից դուրս գալիս, թատրոնի դռանը միշտ էլ հավաքվում էին բազմաթիվ բերանբաց դիտողներ, այնպես որ կարելի է աննկատելի մնալ՝ կեսկան ցած իջեցնելով ճակատին և որևէ մեկի հետևում թաքնվելով։ Մարտինը դուրս եկավ բոլորից շուտ և խառնվեց բազմությանը, բայց հենց որ նա իր դիտակետում դիրք բռնեց, ևկան այն երկու աղջիկները։ Նա դիտեր, որ նրանք փընտրում են իրեն, և այդ պահին նա անիծում էր այն ուժը, որը դեպի իրեն է ձգում կանանց։ Սկզբում նրանք կարծես թե չնկատեցին նրան, բայց նա շուտով հասկացավ, որ դա պարզապես մանևր է։ Ավելի մոտենալով, նրանք դանդաղեցրին իրենց քայլերը և վերջապես նրանցից մեկը նրա առջևով անցնելիս, ուսով դիպավ նրան և ետ նայեց այնպես ձևացնելով, որ հենց նոր ճանաչեց նրան։ Դա վայելչակազմ ութիաղեմ մի աղջիկ էր՝ սև, խորամանկ աչքերով։ Երկու աղջիկները դարձյալ ժպտացին, և Մարտինը նույնպես պատասխանեց նրանց ժպիտով։

— Հելլո,— ասաց նա։

Նա ասաց դա բոլորովին մեքենայաբար, ինչպես սովոր էր արտասանել այդ բառը նման դեպքերում։ Ի միջի այլոց բնական բարեկեցությունն ու սիրալիրությունը չէին թույլատրի նրան այլ կերպ վարվել։ Սևաչյա աղջիկը ուրախ և դրդիչ կերպով ժպտաց նրան և իր ընկերուհու ձեռքից բռնելով ցանկացավ կանգնել. ընկերուհին ծիծաղեց՝ հայտնելով իր համաձայնությունը։ Մարտինը սարսափեց. Ռուբը կարող էր մոտից անցնել և տեսնել, որ նա խոսակցում է այդ աղջիկների հետ։ Նա գնաց պարզապես դեպի այդ սևաչյա աղջիկը, կարծես այդպես էլ հարկավոր էր, և սկսեց նրա հետ միասին քայլել։ Այստեղ նրա խոսքերն ու շարժումները չէին կարող անվայել թվալ։ Այստեղ նա զգում էր իրեն, ինչպես իր սեփական տանը, կարող էր հայտարերել սրամտություն և հպարտանալ ժարգոն բառերով, կարող էր ծիծաղել և խոսել ամեն բանի մասին՝ օգտվելով շուտափույթ և պա-

տահական ծանոթության բոլոր առավելություններով։ Հասնելով անկյունը՝ նա փորձեց ետ մնալ դեպի առաջ շարժվող բազմությունից և ծռվել դեպի միջափողոց։ Սակայն սևաչյա աղջիկը բռնեց նրա արմունկը՝ առանց իր ընկերուհու ձեռքը բաց թողնելու, և ճչաց.

— Կա՛ց, Բիլլ, ո՞ւր ես շտապում, մի՞թե ուզում ես փախչել մեզանից։

Մարտինը կանգ առավ և ծիծաղելով երեսը դարձրեց նրանց։ Նրանց ետևում, փողոցի լապտերների պայծառ լույսի տակ գնում էր մարդկային հոսանքը։ Այնտեղ, ուր նրանք կանգնած էին, համեմատաբար մութ էր և նա կարող էր աննկատելի մնալով տեսնել Ռութին, եթե նա տնցնի իր կողքից։ Իսկ Ռութն անպայման այստեղով պիտի անցներ, որովհետև այս ճանապարհն էր տանում դեպի նրա տունը։

— Ի՞նչ է նրա անունը,— հարցրեց Մարտինը ցույց տալով սևաչյա աղջկան և դիմելով նրա ծիծաղող ընկերուհուն։

— Հենց իրեն էլ հարցրեք,— պատասխանեց նա քրքջալով։

— Լա՛վ, ինչպե՞ս է ձեր անունը,— հարցրեց նա՝ դառնալով դեպի սևաչյան։

— Իսկ դուք ասացի՞ք ինձ ձեր անունը,— առարկեց նա։

— Դուք չհարցրիք այդ,— ասաց Մարտինը ծիծաղելով,— բայց դուք գուշակեցիք. իմ անունս իրոք Բիլլ է։ Ճիշտ եմ ասում, ճիշտ։

— Բավակա՞ն է։— Աղջիկը նայեց նրան՝ երկար, հրավիրող ու բացահայտ կրքոտ հայացքով։— Անկեղծ, ասացե՛ք։

Եվ աղջիկը նորից նայեց նրան։ Նրա հայացքում պերճախոս կերպով արտահայտվում էր դարերով անփոփոխ մնացած կանացի էությունը։ Նա անգամ չափեց նրան՝ դիտենալով, որ աղջիկը հիմա կսկսի հեզ ու փափկանկատորեն նահանջել, պատրաստ լինելով ամեն րոպե հարձակվելու՝ հենց որ զգա, թե Մարտինի մեջ հետապնդելու

եռանդը սառչում է։ Ինչ էլ լինի՝ նա տղամարդ է, ակամա ձգտում է նրան, իսկ աղջկա կրքոտ հայացքը փաղաքշում էր նրա ինքնասիրությունը։ Օ՜հ, նա շատ լավ էր ճանաչում այդ աղջիկներին, թափանցում էր նրանց ամբողջ էությունը։ Նրանք պատվական, լավ աղջիկներ էին, որքան կարող են լավ լինել այդ դասակարգի աղջիկները, որոնք ծանր աշխատանքով հազիվ կարողանում են ապրել։ Լինելով չափազանց հպարտ՝ իրենց փաղաքշանքը վաճառելու համար, նրանք իրենց կենցաղային անապատում որոնում էին դեթ մի քիչ երջանկություն՝ աշխատելով չնայել այն անդունդին, որը կոչվում է ապագա, ուր նրանց սպասում է կամ դժբնդակ ու անվերջ աշխատանքը, կամ ավելի լավ վճարվող, բայց սոսկալի ճանապարհ։

— Բիլլ,— պատասխանեց նա դարձյալ գլուխը շարժելով։— Բիլլ Պիտ, և ոչ այլ անուն։

— Կատակո՞ւմ եք,— նորից հարցրեց աղջիկը։

— Իսկի էլ Բիլլ չի,— միջամտեց մյուս աղջիկը։

— Իսկ դուք որտեղի՞ց գիտեք։ Դուք ինձ չեք էլ տեսել։

— Կարիք էլ չկա տեսնելու։ Ես այնպես էլ գիտեմ, որ դուք ստում եք։

— Լավ, ուրեմն ի՞նչ, Բի՞լլ,— հարցրեց առաջին աղջիկը։

— Թող Բիլլ լինի, վնաս չունի,— ասաց նա սիրալիր։ Աղջիկը բռնեց նրա ուսից և ուժգին ցնցեց։

— Ես այնպես էլ գիտեի, որ դուք ստում եք։ Այնուամենայնիվ ինձ թվում է, որ դուք լավիկն եք։

Նա սեղմեց աղջկա որոնող ձեռքերը և նրա ափին շոշափեց իրեն ծանոթ ճանկռվածքներն ու ճեղքվածքները։

— Վաղո՞ւց է հեռացել եք պահածոների գործարանից,— հարցրեց Մարտինը։

— Ինչպե՞ս հասկացաք այդ։ Դուք հո գուշակ չեք,— բացագանչեցին երկու աղջիկները։

Եվ նրանց հետ զանազան հիմար կատակներ փոխանակելով՝ նա հանկարծ մտքով տեսավ իր առջև դրադարա-

նի ահագին հատորները—դարերի պահպանվող իմաստու-թյունը։ Նա դառնորեն ժպտաց այժմ բոլորովին անտեղի այդ տեսիլքին և տարակույսները դարձյալ պաշարեցին նրան։ Բայց բոլոր այդ մտքերի ու խոսքերի հետ միասին՝ նա իր հայացքը չէր հեռացնում փողոցով անցնող բազմության հոսանքից։ Եվ ահա նա տեսավ Ռութին՝ լապտերների վար լույսի տակ։ Նա գնում էր եղբոր և մի անծանոթ ակնոցավոր պատանու միջև։ Մարտինի սիրտը նվազեց։ Նա երկար սպասել էր այդ պահին։ Նա կարոգացավ նկատել Ռութի գլխին ինչ-որ թեթև, օդային բան, նրա մարմնի բարեկազմ գծագրերը, նրա քայլվածքի նրբությունը, փողոցն անցնելիս շրջազգեստը բռնելու շարժումը։ Եվ ահա Ռութը անցավ, իսկ ինքը մնաց այդ երկու բանվորուհիների հետ, կանգնել ու նայում էր նրանց խղճուկ զգեստին, որը կրում էր զարդարվելու համար նրանց թափած ողորմելի հուսահատ ջանքերի հետքերը, նայում էր նրանց էժանագին կոշիկներին, էժան ժապավեններին, կոպիտ մատներին դրած նրանց էժան մատանիներին։ Ինչ-որ մեկը դիպավ նրա ձեռքին,— և նա լսեց մի ձայն, որն ասաց.

— Զարթնեցե՛ք, Բի՛լլ, ի՞նչ պատահեց ձեզ։

— Ինչ ասացի՞ք,— հարցրեց նա։

— Հենց այնպես, առանձնապես ոչինչ,— պատասխանեց սևաչյան՝ ցնցելով իր գլուխը,— ես միայն մտածում էի...

— Ի՞նչ։

— Վատ չէր լինի, որ դուք մի կավալեր գտնեիք նրա համար,— նա ցույց տվեց իր ընկերուհուն,— և մենք մի տեղ կգնայինք սուրճ խմելու և պաղպաղակ ուտելու։

Հանկարծ Մարտինը զգաց հոգեկան սիրտխառնուք։ Շատ կոպիտ էր անցումը Ռութից դեպի այդ բոլորը։ Այդ աղջկա հրավիրող աչքերի կողքին՝ Մարտինը հանկարծ տեսավ Ռութի լուսաշող, հստակ աչքերը, որոնք նայում էին իրեն մաքրության անհասանելի բարձունքից։ Եվ Մարտինը իր մեջ զգաց մի մեծ ուժ։ Նա այդ բոլորից բարձր էր։ Նրա

համար կյանքն ավելի արժե, քան կավալերների ու պաղ-պաղակի մասին երազող աղջիկների համար։ Նա հիշեց, որ առաջներում էլ նա մտովին ապրում էր առանձին, թաքուն կյանքով։ Նա երբեմն փորձում էր այդ մտքերը վստահել ուրիշներին, բայց մինչև այժմ չգտնվեց ոչ մի կին, որ ընդունակ լիներ հասկանալու դրանք, նույնպես ոչ մի տղամարդ։ Եթե բարձրաձայն էր արտահայտում այդ մտքերը, լսողները ապշած նայում էին նրան։ Այո՛, եթե նրա մտքերը անմատչելի են նրանց համար, դա նշանակում է, որ ինքը նրանցից բարձր է կանգնած։ Նա իր մեջ ուժ զգաց և սեղմեց բռունցքները։ Եթե կյանքը նրա համար ավելի արժե, նա իրավունք ունի նրանից պահանջելու ավելին, բայց ոչ այստեղ, իհարկե, ոչ այս մարդկանց հետ հարաբերվելով։ Այդ սև աչքերը չեն կարող ոչինչ տալ իրեն։ Նա գիտեր, թե ի՛նչ երազանք է արտացոլում նրանց հայացքում,— պաղ-պաղակի և այլ բաների մասին։ Իսկ Ռութի չքնաղ հայացքը նրան խոստացել է այն բոլորը, ինչին նա ձգտում է և դեռ անսահմանորեն շատ բան։ Այդ հայացքը նրան խոստացել է գրքեր, նկարներ, գեղեցկություն և անդորրություն, վսեմ ու նուրբ կյանքի շքեղություն։ Իսկ այս սև աչքերի ետևում տեղի ունեցող մտածողությունը ծանոթ էր Մարտինին, բոլոր մանրամասնություններով։ Դա նման էր ժամացույցի մեխանիզմին, որի ամեն մի անիվի շարժմանը նա կարող էր հետևել։ Այդ աչքերը կոչ էին անում ստոր, չնչին զվարճությունների՝ նույնքան նեղ, ինչպես գերեզմանը։ Իսկ այն չքնաղ հայացքը կոչ էր անում թափանցել անհասանելի գաղտնիքը, հավիտենական կյանքի հրաշքը։ Այդ հայացքում Մարտինը տեսնում էր Ռութի հոգու ցոլացումը, նույնպես և իր հոգու ցոլացումը։

— Այդ ծրագրին միայն մի բան է խանգարում,— ասաց նա բարձրաձայն,— ես այսօր զբաղված եմ։

Աղջկա աչքերը արտահայտեցին հուսահատություն։

— Ենթադրում եմ, որ դուք ուզում եք այցելել հիվանդ բարեկամի,— խայթեց աղջիկը։

— Ո՛չ, ապնիվ խոսք, իսկական ժամադրության,— կմկմաց նա,— մի աղջկա հետ։

— Չե՞ք սառում,— հարցրեց աղջիկը խստորեն։

— Ապնի՛վ խոսք, ճիշտ է։ Բայց մենք կարող ենք հանդիպել մի այլ անգամ։ Ինչպե՞ս է ձեր անունը։ Որտե՞ղ եք բնակվում։

— Իմ անունը Լիզզի է,— պատասխանեց աղջիկը՝ սեղմելով նրա ձեռքը և իր ողջ մարմնով կռանալով դեպի Մարտինը։— Լիզզի Կոնոլլի։ Ես ապրում եմ Հինգերորդ փողոցում, շուկայի մոտ։

Նրանք շարունակեցին խոսակցել մի հինգ րոպե ևս, որից հետո Մարտինը հրաժեշտ տվեց նրանց։ Նա չէր ուզում միանգամից տուն վերադառնալ։ Նա ուղղվեց դեպի ծանոթ ծառը, կանգնեց սովորական տեղում՝ Ռութի պատուհանի տակ և հուզմունքով շշնջաց.

— Ես ժամադրություն ունեմ ձեզ հետ, Ռութ։ Այլ ժամադրություն չեմ ուզում։

ԳԼՈՒԽ VII

Մի շաբաթ անցավ այն օրից, երբ Մարտինը ծանոթացավ Ռութի հետ, բայց նա դեռ չէր վճռում այցելել աղջկան։ Երբեմն նա գրեթե վերջնականապես վճռում էր գնալ նրա մոտ, բայց ամեն անգամ էլ տարակույսը գերակշռում էր։ Նա չգիտեր, թե ի՛նչ ժամկետից հետո պատշաճ է կրկնել այցելությունը, և չկար մեկը, որ կարողանար ասել այդ, իսկ ինքը վախենում էր անուղղելի սխալ գործել։ Նա հեռացավ բոլոր իր նախկին ընկերներից և պակ եկավ բոլոր իր նախկին սովորություններից, իսկ նոր ընկերներ չուներ, և նրան մնում էր միայն զբաղվել ընթերցանությամբ։ Նա ընթերցում էր այնքան, որ մարդկային սովորական աչքերը վաղուց հոգնած կլինեին այդքան լարվածությունից։ Սակայն

Մարտինը տոկուն աչքեր և պինդ, դիմացկուն օրգանիզմ ուներ։ Բացի այդ, նա մինչև այժմ ապրել էր գրքերի վերացական մտքերից հեռու և նրա ուղեղը հանգիստանում էր խոպան, ցանքսի համար բարերեր հող։ Նա հոգնած չէր գիտությունից և այժմ սուր ատամներով պինդ կառչել էր գրքերի իմաստությանը։

Շաբաթվա վերջին Մարտինին թվաց, որ ապրել է ամբողջ տարի,— այնքան հեռու էին նախկին կյանքն ու նրա նախկին հայացքները կյանքի մասին։ Բայց պատրաստականության պակասը շարունակ խանգարում էր նրան։ Նա փորձում էր կարդալ այնպիսի գրքեր, որոնք պահանջում էին շատ տարիների հատուկ պատրաստվածություն։ Այսօր նա ընթերցում էր հին փիլիսոփայության գրքեր, իսկ վաղը՝ նոր փիլիսոփայության, այնպես որ նրա գլխում շարունակ մտքերի շփոթություն էր տիրում։ Նույն բանը տեղի էր ունենում և տնտեսական գիտելիքների վերաբերմամբ։ Գրադարանի միևնույն դարակում նա գտավ կողք-կողքի Կարլ Մարքսին, Ռիկարդոյին, Ադամ Սմիթին և Միլլին, որոնցից մեկի անհասկանալի ֆորմուլաները հիմք չէին տալիս նրան հաստատելու մյուսների գաղափարների ճշտությունը։ Նա բոլորովին կորցրեց գլուխը, բայց և այնպես ուզում էր գիտենալ ամեն բան՝ միաժամանակ տարվելով և՛ տնտեսագիտությամբ, և՛ արդյունաբերությամբ, և՛ քաղաքականությամբ։ Մի օր, Սիթի-Հոլլ պարկով անցնելիս, նա տեսավ մի բազմություն՝ հինգ-վեց մարդկանց շուրջ, որոնք ըստ երևույթին ինչ-որ բանի մասին տաք վիճաբանում էին։ Նա մոտեցավ նրանց և այստեղ առաջին անգամ լսեց՝ իրեն համար դեռևս անծանոթ ժողովրդական փիլիսոփայության լեզուն։ Նրանցից մեկը թափառաշրջիկ էր, երկրորդը՝ արհեստակցական միության ագիտատոր, երրորդը՝ իրավաբանական ֆակուլտետի ուսանող, իսկ մյուսները՝ պարզապես վիճաբանություն սիրող բանվորներ։ Նա առաջին անգամ լսեց անարխիզմի, սոցիալիզմի, միասնական տուրքի մասին. հասկացավ, որ գոյություն ունեն սոցիալիստական փիլիսո-

փայության այլապան, իրար հանդեպ թշնամական սիստեմներ։ Նա լսեց հարյուրավոր նոր տերմիններ գիտության այնպիսի ճյուղերից, որոնք նա դեռ երբեք չէր շոշափել իր աղքատիկ ընթերցումների ժամանակ։ Այդ պատճառով նա չէր կարող հետևել վիճաբանության ընթացքին և միայն բնազդով էր գուշակում այդ տարօրինակ բառերի տակ թաքնված գաղափարները։ Վիճաբանողներից մեկը ճաշարանի սեփական մի մատուցող էր՝ թեոսոֆ, հացթուխների պրոֆմիության անդամը՝ ադնոստիկ, մի ծերունի, որը ջախջախեց բոլորին իր վարմանալի փիլիսոփայությամբ՝ հիմնված այն մտքի վրա, որ ճիշտ ու արդարացի է այն ամենը, ինչ գոյություն ունի, և մի այլ ծերունի, որը երկարապատում խորհրդածում էր տիեզերքի, հայր-ատոմի և մայր-ատոմի մասին։

Մարտին Իդենի գլուխն ուռել էր այդ դատողություններից, երբ նա մի քանի ժամ անց վազեց գրադարան՝ ստուգելու համար մի տասնյակ, բայց իր հիշողության մեջ տպավորված բառերի նշանակությունը։ Գրադարանից դուրս գալիս նա կոնատակին տանում էր տիկին Բլավատսկու երկերից չորս հատոր՝ «Գաղտնի դոկտրինա», «Առաջադիմություն և աղքատություն», «Սոցիալիզմի բուն էությունը», «Պատերազմ կրոնի և գիտության միջև»։ Դժբախտաբար նա սկսեց «Գաղտնի դոկտրինայից»։ Այս գրքի ամեն մի տողը լի էր բազմավանկ-բառերով, որոնց նշանակությունը նա չգիտեր, նա նստած էր մահճակալին և ավելի հաճախ նայում էր բառարանը, քան կարդում էր գիրքը։ Նա այնքան շատ նոր բառեր նայեց բառարանում, որ երբ նրանք նորից էին հանդիպում, արդեն մոռացած էր լինում նրանց նշանակությունը և կարիք էր լինում դարձյալ դիմել բառարանի։ Նա վճռեց անծանոթ բառերը գրել առանձին տետրակում և կարճ ժամանակում ամբողջ էջեր լցրեց այդպիսի բառերով։ Այնուամենայնիվ նա ոչինչ չէր կարողանում հասկանալ։ Նա ընթերցեց մինչև առավոտյան ժամը երեքը։ Քիչ էր մնում, որ ցնորվի, բայց և այնպես բնազդի ոչ մի էական միտքը նա չըմբռնեց։ Նա բարձրացրեց գլուխը և նրան թվաց, որ ամ-

բողջ սենյակը բարձրանում, թեքվում և ընկղմում է, ինչպես նավը ծովում։ Նա հայհոյեց, դեն շպրտեց «Դազանի դոկտրինան», հանդցրեց դազը և վճռեց քնել։ Մյուս երեք գրքերի հետ էլ գործը ավելի հաջող չգնաց։ Բանն այն չէր, որ նրա ուղեղը տկար կամ անընդունակ էր — նա կարող էր յուրացնել բոլոր այդ մտքերը, բայց նրան պակասում էին մտամարզանք և բառապաշար։ Վերջապես նա հասկացավ այդ և մի ժամանակ մինչև անգամ մտածում էր ընթերցել միայն բառարանը՝ մինչև բերանացի կսովորի բոլոր անծանոթ բառերը։

Մարտինի համար միակ մխիթարությունը բանաստեղծությունն էր. նա հիացմունքով էր կարդում այն պարզ բանաստեղծներին, որոնց յուրաքանչյուր տողը հասկանալի էր իրեն։ Նա սիրում էր գեղեցկությունը, որը նա առատորեն գտնում էր այդ բանաստեղծություններում։ Բանաստեղծությունն ազդում էր նրա վրա նույնքան ուժեղ, ինչպես երաժշտությունը, և աննկատելիորեն նախապատրաստում էր նրա միտքը ապագայում ավելի դժվար աշխատանքի։ Նրա հիշողության էջերը դատարկ էին, և նա առանց որևէ ճիգ թափելու հիշում էր կարդացածի ամեն մի տունը, այնպես որ շուտով կարող էր արդեն արտասանել ամբողջ ոտանավորներ՝ հրճվելով տպագրական կենդանացած տողերի ներդաշնակ հնչյուններով։ Մի օր նա պատահմամբ գտավ Գեյլիի «Կլասիկ առասպելները» և Բելֆինչի «Հեքիաթի դարը»։ Կարծես պայծառ լույսի մի ճառագայթ հանկարծ ճեղքեց նրա տգիտության խավարը, և նա ավելի ևս կլանվեց բանաստեղծությամբ։

Սեղանի առաջ նստած մարդը արդեն դիտեր Մարտինին, շատ սիրալիր էր նրա նկատմամբ և բարեկամաբար գլխով էր անում, երբ Մարտինը գալիս էր դրադարան։ Այդ պատճառով Մարտինը մի օր վճռեց մի հանդուգն քայլ անել։ Նա վերցրեց մի քանի գիրք և երբ դրադարանապետը դրոշմում էր նրա քարտերը, մրմնջաց.

— Լսե՛ք, կարելի՞ է ձեզ հարցնել մի քանի բան։

Գրադարանապետը ժպտաց և գլխով քաջալերանքի նշան արեց։

— Եթե դուք ծանոթացել եք մի երիտասարդ լեդիի հետ և նա խնդրել է ձեզ այցելել... ուրեմն... ե՞րբ կարելի է անել այդ։

Մարտինը զգաց, որ իր շապիկը կպել է հուզմունքից քրտնած կռնակին։

— Իմ կարծիքով՝ միևնույն է, թե երբ,— պատասխանեց գրադարանապետը։

— Ո՛չ, դուք չեք հասկանում,— առարկեց Մարտինը։— Բանը նրանումն է, որ նա կարող է տանը չլինել։ Նա համալսարան է հաճախում։

— Լա՛վ, կգնաք մի ուրիշ անգամ։

— Ես այդ չէի ուզում ասել,— խոստովանեց Մարտինը վարանոտ՝ վերջապես վճռելով ամբողջովին հանձնվել խոսակցի ողորմածությանը։— Ես միայն մի հասարակ տղա եմ և կյանքումս չեմ եղել այդպիսի հասարակության մեջ։ Այդ աղջիկը բոլորովին այն չէ, ինչ ես եմ, և ես բոլորովին այն չեմ, ինչ նա է... Դուք մի՛ կարծեք, որ ես հիմար եմ ձևանում,— հանկարծ ընդմիջեց իրեն։

— Ո՛չ, ո՛չ, ի՞նչ եք ասում,— բողոքեց գրադարանապետը։— Ճիշտ է, որ ձեր այդ հարցապնդումը չի մտնում տեղեկանքների բաժնի իրավասության մեջ, բայց ես հաճույքով կաշխատեմ օգնել ձեզ։

Մարտինը հիացմունքով նայեց նրան։

— Է՞հ, եթե ես էլ կարողանայի այդպես բլբլալ, շատ լավ կլիներ,— ասաց նա։

— Ներեցե՛ք, ինչ ասացի՞ք...

— Ես ուզում եմ ասել, որ ամեն ինչ լավ կլիներ, եթե ես կարողանայի այնպես զոզոլիկ ու քաղաքավարի խոսել, ինչպես դուք։

— Հա՞,— համակրանքով պատասխանեց գրադարանապետը։

— Ե՞րբ է ամենից հարմար գնալ նրա մոտ։ Ցերեկո՞վ,

բայց ոչ ճաշից անմիջապես առաջ, թե՞ երեկոյան. Թեոդոս և կիրակի՞ օրը։

— Ես կասեմ ձեզ,— ասաց դրադարանապետը ժպտալեմ։—Դուք հեռախոսով հարցրեք աղջկան այդ մասին։

— Այդպես էլ կանեմ,— ասաց նա և հավաքելով գրքերը՝ ուղղվեց դեպի դուռը։ Շեմքին նա եւ դարձավ և հարցրեց։

— Երբ դուք խոսում եք երիտասարդ լեդիի, ենթադրենք միս Լիզզի Սմիթի հետ, ինչպե՞ս պիտի ասել—միս Լիզզի, թե՞ միս Սմիթ։

— Ասացեք «միս Սմիթ»,—ասաց նրան դրադարանապետը հեղինակավոր տոնով,—ասացեք «միս Սմիթ» մինչև ավելի մոտիկ կծանոթանաք նրա հետ։

Այդպիսով Մարտին Իդենը լուծեց առեղծվածը։

— Եկեք, երբ կուզեք։ Ճաշից հետո ես միշտ տանն եմ,— պատասխանեց Ռութը հեռախոսով նրա հարցին, թե ե՞րբ կարող է վերադարձնել նրանից վերցրած գրքերը։

Աղջիկն անձամբ դիմավորեց նրան դռանը, և նրա կանացի աչքն անմիջապես նկատեց Մարտինի տաբատի արդուկված ծալքը, և նրանում ինչ-որ անըմբռնելի փոփոխություն դեպի լավը։ Սակայն ամենազարմանալին էր Մարտինի դեմքի արտահայտությունը։ Թվում էր, որ նրանից հորդում էր մի առողջ ուժ, որի ալիքները բախում էին իրեն՝ Ռութին։ Նա դարձյալ ցանկություն զգաց սեղմվել Մարտինին, զգալ նրա մարմնի ջերմությունը, և նորից ապշեց, թե Մարտինի ներկայությունն ինչպե՞ս է ազդում իր վրա։ Իսկ տղան իր հերթին նորից զգաց մի երանավետ սարսուռ, երբ աղջիկը ձեռք տվեց նրան։ Նրանց մեջ զանազանությունը նրանումն էր, որ աղջիկը արտաքուստ ոչնչով չէր արտահայտում իր հուզմունքը, իսկ նա կարմրեց մինչև մազերի արմատները։

Նա հետևեց աղջկանը՝ այս անգամ ևս քայլելիս անշընորհք օրորվելով։ Բայց երբ նրանք նստեցին հյուրասենյակում, Մարտինը, հակառակ սպասածին, բավական աղատ

զգաց իրեն։ Աղջիկը աշխատում էր ստեղծել նրանում չճրնշվածության զգացում և անում էր այդ այնքան փափկանկատ և զգույշ, որ տղի համար հարյուրապատիկ ավելի սիրելի դարձավ։ Նախ նրանք խոսակցեցին գրքերի, Սուինբեռնի մասին, որով Մարտինը սքանչանում էր, և Բրոուինինգի մասին, որը նրա համար անհասկանալի էր։ Զրույցին ուղղություն էր տալիս Ռութը, որը շարունակ մտածում էր, թե ինչպե՞ս օգնի Մարտինին։ Աղջիկը հաճախ մտածել էր այդ մասին՝ նրանց առաջին հանդիպումից հետո։ Ռութն անպայման ուզում էր օգնել նրան։ Նա համակված էր քնքշության ու կարեկցության զգացմունքով Մարտինի նկատմամբ, բայց այդ կարեկցության մեջ վիրավորական ոչինչ չկար. դա համարյա մայրական մի զգացում էր, որը նա մինչ այդ երբեք չէր ունեցել։ Մի՞թե դա կարող էր լինել մի պարզ, սովորական կարեկցություն, եթե այդ զգացումը զարթեցրած մարդու մեջ աղջիկն այն աստիճան զգում էր տղամարդուն, որ միայն նրա մոտիկությունն էլ վախեցնում էր նրան կուսական անդիտակից երկյուղով և ստիպում էր նրա սիրտը բաբախել՝ զարթեցնելով տարօրինակ մտքեր ու զրգիռներ։ Նրանում էլի ցանկություն առաջացավ փաթաթվելու Մարտինի վզին կամ իր ձեռքը դնել նրա ուսին, և առաջվա նման այդ ցանկությունը վրդովում էր նրան, բայց նա արդեն սովորեց դրան։ Նրա մտքովն էլ չէր անցնում, որ սաղմնավորվող սերը կարող է այդպիսի տարրական ձևեր ընդունել։ Սակայն աղջկա մտքովը չէր անցնում նաև այն, որ նրան համակած զգացումը կարելի է կոչել սեր։ Նրան թվում էր, որ Մարտինը հետաքրքրել է նրան պարզապես իբր ոչ բոլորովին սովորական մարդ՝ մեծ, անմշակ հնարավորություններով, և որ նա զեկավարվում է Մարտինի նկատմամբ գրեթե մարդասիրական դրդումներով։

Ռութը չէր հասկանում, որ ցանկանում է նրան։ Իսկ Մարտինի համար հարցը տարբեր էր։ Նա գիտեր, որ սիրում է Ռութին, որ նրան ցանկանում է այնպես, ինչպես զեռ երբեք չի ցանկացել իր կյանքում։ Նա առաջ էլ սիրում

Էր բանաստեղծությունը, սիրում էր ամեն ինչ, որ գեղեցիկ է, բայց Ռուբին հանդիպելուց հետո նրա առջև բացվեց սիրո պոեզիայի լայնածավալ աշխարհը։ Ռուբը տվեց նրան ավելին, քան Բելֆինչն ու Գեյլին։ Մի շարաթ առաջ նա չէր մտածի, օրինակի համար, այնպիսի մի տողի վրա. «Վշտո՞ւ պատանի, նա տառապում է սիրուց և պատրաստ է մեռնել համբուրելիս», իսկ հիմա այդ բառերը նրա ղլխից դուրս չէին գալիս։ Նա հիանում էր այդ բառերով, ինչպես ամենամեծ ճշմարտությամբ. նա նայում էր Ռուբին և մտածում, որ ուրախությամբ կմեռնի համբուրելիս։ Նա զգում էր իրեն իբրև այն վշտոտ պատանին, որը «տառապում է սիրուց» և հպարտանում էր դրանով ավելի շատ, քան եթե նրան ասպետության աստիճան շնորհեին։ Վերջ ի վերջո նա ըմբռնեց կյանքի իմաստը, աշխարհի երեսին իր գոյության իմաստը։

Երբ Մարտինը նայում և լսում էր նրան, իր մտքերը ավելի համարձակ էին դառնում։ Նա մտաբերում էր այն վայելքը, որը ունեցավ նա աղջկա ձեռքը սեղմելիս և ծարավի էր մի անգամ ևս զգալու այդ։ Նա մերթ ագահ տենչանքով նայում էր աղջկա շրթներին։ Բայց այդ տենչանքում չկար ոչինչ կոպիտ ու երկրային։ Նա անասելի վայելք էր զգում՝ որսալով նրա շրթունքի ամեն մի շարժումը, երբ նա խոսում էր. դրանք սովորական շրթներ չէին, ինչպես բոլոր կանանց ու տղամարդկանց մոտ։ Դրանք մսից ու արյունից չէին։ Դրանք անմարմին ոգու բերանն էին և դրանք համբուրելու ցանկությունը բոլորովին նման չէր այլ կանանց հարուցած ցանկությանը։ Իհարկե, նա ուրախությամբ կուզենար սեղմել այդ բերանին իր մարդկային շրթները, բայց դա նույնը կլիներ, ինչ համբուրել նույն ինքն աստծու պատկերը։ Նա չէր կարողանում հասկանալ արժեքների այն յուրահատուկ վերագնահատությունը, որը կատարվում էր նրանում և չէր իմանում, որ վերջին հաշվով, երբ նայում է աղջկանը, իր աչքերը վառվում են այն միևնույն հրով, որով վառվում են սիրո ծարավի յուրաքանչյուր տղամարդու աչքերը։ Նա հասկացողություն չուներ, թե ինչքա՞ն վառվռուն և առնական է

իր հայացքը, ինչքա՜ն խորը հուզում է նա աղջկա ամբողջ էությունը։ Նրա կուսական անբծությունը ազնվացնում էր Մարտինի սեփական զգացումները և հասցնում էր նրանց աստղերի սառը անարատությանը։ Նա կցնցվեր, եթե իմանար, որ իր աչքերը փայլատակում են մի խորհրդավոր ջերմությամբ, որը թափանցում է աղջկա էության ընդերքը, և այնտեղ վառում է նույն հուրը։ Նրա հայացքից շփոթվելով ու հուզվելով՝ աղջիկը քանիցս կորցրեց խոսակցության թելը և բավական դժվարությամբ կարողացավ նորից ամփոփել իր մտքերի կտորտանքը։ Սովորաբար Ռութը չէր դժվարանում խոսակցության ժամանակ և այժմյան իր վիճակը բացատրում էր իր խոսակցի բացառիկությամբ։ Ռութը շատ ընդունակ էր ամեն տեսակ տպավորություններ յուրացնելու, և վերջ ի վերջո ոչինչ չկար զարմանալու, որ մի այլ աշխարհից եկվոր ալեկոծում է նրան։

Աղջիկը մտածում էր, թե ինչպե՜ս օգնի նրան և ուզում էր զրույց սկսել այդ ուղղությամբ, բայց Մարտինը ինքը օգնության հասավ նրան։

— Չգիտեմ, թե կարո՞ղ եմ ձեզանից խորհուրդ հարցնել,—սկսեց նա և քիչ էր մնում խեղդվեր ուրախությունից, երբ աղջիկը պատրաստակամություն հայտնեց անել նրա համար ամեն բան՝ իր ուժերի սահմաններում։

— Հիշո՞ւմ եք, որ ես այն ժամանակ, երբ այստեղ էի, ասացի, թե չեմ կարող խոսել գրքերի և այդպիսի բաների մասին, որովհետև ոչինչ չի դուրս գալիս դրանից։ Ահա այդ ժամանակից ի վեր ես շատ բանի մասին եմ խորհրդածել։ Ես սկսեցի հաճախել գրադարան, վերցրի այնտեղ ամեն տեսակ գրքեր, բայց այդ բոլորը իմ խելքի բանը չի։ Թերևս ավելի լավ կլիներ սկզբից սկսել։ Չէ՞ որ ես երբեք չեմ սովորել, ինչպես հարկն է։ Ես ստիպված եմ եղել աշխատել հենց մանկությունից, իսկ հիմա ես գնացի գրադարան, նոր աչքերով նայեցի գրքերին, և տեսնում եմ, որ առաջներում ես բոլորովին էլ այն չէմ կարդացել, ինչ հարկավոր է։ Հասկանո՞ւմ եք, ագարակում որևէ տեղ և կամ շոգենավի կամրջ-

ջակին այդպիսի դրքեր չես գտնի, ինչպես, օրինակ, ձեր տանը։ Այնտեղ ընթերցանության այլ նյութեր կան, որոնց ես սովոր եմ, ի միջի այլոց, առանց պարծենկոտության կասեմ, որ ես տարբեր եմ եղել այն մարդկանցից, որոնց հետ հարաբերվել եմ։ Ես չեմ ասում, որ ավելի լավն եմ եղել, քան մյուս նավաստիներն ու կովբոյները,— ես եղել եմ նաև կովբոյ,— բայց ես միշտ էլ սիրել եմ գրքերը և կարդացել եմ այն ամենը, ինչ իմ ձեռքն է ընկել և ինձ թվում է, որ իմ գլուխն այլ կերպ է աշխատում, քան ընկերներիս գլուխը։ Բայց բանը դրանումն էլ չի։ Տեսեք, թե բանն ինչո՞ւմն է։ Ես երբեք չեմ եղել այնպիսի տներում, ինչպիսին ձեր տունն է։ Երբ ես անցյալ շաբաթ եկա ձեզ մոտ և տեսա ձեզ, ձեր մորը, ձեր եղբայրներին, և ամեն բան,— շատ հավանեցի։ Առաջներում ես միայն գրքումն եմ կարդացել այդպիսի բաների մասին. բանից դուրս եկավ, որ գրքերը սուտ չեն գրում։ Եվ դա ինձ դուր եկավ։ Ես ցանկացա այդ ամենը, ցանկանում եմ և այժմ։ Ես կուզենայի շնչել այնպիսի օդ, ինչպիսին կա ձեր տանը. կուզենայի, որ ամեն տեղ լինեն նկարներ և ամեն տեսակ սիրուն առարկաներ, որ մարդիկ չգոռան, այլ խոսեն մեղմ ձայնով, լավ հագնված լինեն, մարդկանց մտքերը ևս մաքուր լինեն։ Ես ամբողջ կյանքումս շնչել եմ այնպիսի օդ, որից խոհանոցի, դինու, հայհոյանքի և բնակարանային վարձի մասին խոսակցության հոտ է գալիս։ Երբ դուք վեր կացաք ձեր մորը համբուրելու համար, դա ինձ այնքան գեղեցիկ թվաց, որ աշխարհում դրանից ավելի գեղեցիկ բան ես չեմ տեսել։ Ես շատ բան եմ տեսել կյանքում և կարող եմ ասել, միշտ ավելին եմ տեսել, քան ուրիշները։ Ես շատ եմ սիրում նայել և միշտ ուզում եմ տեսնել նորանոր բաներ։

— Բայց ես դեռ չասացի գլխավորը։ Ահա թե բանն ինչո՞ւմն է. ես կուզենայի հասնել այնպիսի կյանքի, որով դուք ապրում եք այս տանը։ Չէ՞ որ կյանքը չի կայանում միայն հարբեցողության, դժնդակ աշխատանքի և տուրուդրմբոցի մեջ։ Այժմ հարցը նրանումն է, թե ինչպե՞ս հասնել

այդ նպատակին Ինչի՞ց պետք է սկսեմ է։ Ես ուզում եմ հասնել դրան իմ աշխատանքով, իսկ ինչ վերաբերում է աշխատանքին, ես դրանում կհաղթեմ ամեն մարդու։ Մի անգամ որ սկսեմ, ես դիշեր-ցերեկ կաշխատեմ։ Թերևս ծիծաղելի է ձեզ համար, որ ես խոսում եմ ձեզ հետ այդ բոլորի մասին։ Գիտեմ, որ դուք միակ մարդն եք, որին ես կարող եմ դիմել, ուրիշ ոչ ոքի, դուցե բացի Արտուրից։ Թերևս հարկավոր էր, որ ես նրան դիմեի։ Եթե ես լինեի...

Նա հանկարծ լռեց, Նրա հաստատ ծրագրված պլանը երերաց այն սոսկալի մտքից, որ նա իսկապես պետք է հարցներ Արտուրին, իսկ նա հիմարացավ։ Ռութը անմիջապես չխոսեց. նա կլանված էր այն բանով, թե ինչպես իրար կապել նրա խառնաշփոթ խոսքերն ու պրիմիտիվ մտքերն այն բանի հետ, որը նա կարդում էր Իդենի աչքերում։ Նա դեռ ոչ մի անգամ չէր տեսել այնպիսի աչքեր, որոնք արտահայտեին այդպիսի անընկճելի ուժ։ Այս մարդն ընդունակ է անել ամեն ինչ,— ահա՛, թե ինչ էր ասում նրա հայացքը, իսկ դա թույլ էր արտահայտվում Մարտինի անկապ խոսքերում։ Աղջկա սեփական խելքն այնքան նուրբ և բարձր էր, որ չէր կարող, ինչպես հարկն է, գնահատել պարզությունն ու անմիջականությունը։ Այնուամենայնիվ մինչև անգամ Մարտինի մտքերի այդ թոթովանքում զգացվում էր նրա ուժը։ Մարտինը պատկերանում էր նրան իբր մի հսկա, որը ճգնում է կտրատել իր շղթաները։ Աղջկա դեմքը համակված էր փայփայանքով, երբ նա ասաց.

— Դուք ինքներդ դիտեք, թե ի՛նչ է պակասում ձեզ. ձեզ պակասում է կրթությունը։ Դուք պետք է սկսեք հենց սկզբից. ավարտեք դպրոցը, ապա հաճախեք համալսարանական դասընթացները։

— Դրա համար դրամ է հարկավոր,— ընդհատեց նրան Մարտինը։

— Օ՛,— գոչեց աղջիկը,— ես չմտածեցի դրա մասին։ Բայց մի՞թե ձեր հարազատներից ոչ ոք չի կարող օգնել ձեզ։

Նա բացասաբար շարժեց գլուխը։

— Իմ հայրն ու մայրը վախճանվել են։ Ես ունեմ երկու քույր— մեկը ամուսնացած է, իսկ մյուսը հավանաբար շուտով կամուսնանա։ Ես շատ եղբայրներ ունեմ, ես կրտսերն եմ, բայց նրանք երբեք չեն օգնել ոչ ոքի։ Եվ նրանք արդեն վաղուց են ցրվել աշխարհի չորս կողմը բախտ որոնելու, ամեն մեկն իրեն համար։ Մեծ եղբայրս մեռել է Հնդկաստանում։ Այս բոպեին երկու եղբայրներս Հարավային Աֆրիկայում են, մեկը աշխատում է կեստրոսական նավի վրա, իսկ վերջինը ճամփորդում է շրջիկ կրկեսի հետ իբր բարախաղաց։ Ես էլ նրանց նման եմ. տասնմեկ տարեկան հասակից մորս մահից հետո, ես ինքս եմ կերակրում ինձ։ Ես ինքս եմ սովորել այն, ինչ գիտեմ, և ինքս էլ պետք է հասնեմ այնտեղ, ուր ցանկանում եմ։ Ես միայն ուզում եմ իմանալ, թե ինչի՛ց սկսեմ։

— Ամենից առաջ ձեզ հարկավոր է զբաղվել լեզվով։ Դուք երբեմն արտահայտվում եք (նա ուզում էր ասել «ասոսկալի», բայց զսպեց իրեն) ոչ բոլորովին լավ։

Քրտինքը պատեց Մարտինի ճակատը։

— Գիտեմ, որ ես երբեմն այնպիսի բառեր եմ գործածում, որ դուք չեք հասկանում, բայց ես միայն դրանք կարող եմ ուղիղ արտասանել։ Գլխումս կան մի շարք բառեր՝ գրքերից սովորած, բայց չգիտեմ, թե ինչպես են արտասանվում, այդ պատճառով էլ չեմ գործածում դրանք։

— Հարցը ոչ այնքան նրանումն է, թե դուք ի՛նչ եք խոսում, այլ նրանում, թե ինչպե՛ս եք խոսում։ Կարելի՞ է ձեզ հետ անկեղծ խոսել։ Դուք չե՞ք վիրավորվի։

— Ոչ, ոչ,—բացագանչեց նա՝ մտովին օրհնելով աղջկա բարեսրտությունը։— Հո՛ւպ տվեք։ Ինձ համար ավելի լավ է այդ բոլորը իմանալ ձեզանից, քան թե մի ուրիշից։

— Դե՛, լա՛վ։ Ամենից առաջ դուք պետք է սովորեք հոլովումներն ու խոնարհումները։ Հետո դուք նոր ասացիք «հուպ տվեք», «խոսեցեք» իմաստով։ Դա գրական արտահայտություն չի, այլ ժարգոն։

— Հասկանում եմ,— ասաց նա,— կան բառեր, որոնք

ոչ միշտ և ոչ ամեն տեղ կարելի է ասել։ Նավաստուն կարելի է ասել «հուպ տուր» և «բլրլա», իսկ ձեզ պիտի ասել «խոսեցեք»։ «Հուպ տվեք»— լավ է նավի կամրջակում, իսկ հյուրասենյակում անհարմար է... իսկ դրական լեզուն կհասկանան ամեն տեղ։

Աղջիկն ուրախացավ և զարմացավ նրա ըմբռնողության վրա։

— Այն ամենը, ինչ հարկավոր է, դուք կգտնեք բերականության մեջ։ Ձեր խոսակցության մեջ ես նկատեցի շատ բան, որ դուք չպիտի գործածեք։ Իսկ քերականությունը ես իսկույն կբերեմ ձեզ։

Երբ Ռութը վեր կացավ, Մարտինը հիշեց քաղաքավարության մի կանոն, որը նա կարդացել էր գրքում, և նա անշնորհք կերպով ոտի կանգնեց, բայց անմիջապես վախեց. չլինի՞ թե աղջիկը կարծի, որ նա ուզում է հրաժեշտ տալ։

Ռութը բերեց քերականությունը և իր աթոռը մոտեցրեց նրա աթոռին, ընդամին Մարտինը մտածեց, որ հավանաբար պետք է օգնել աթոռը մոտեցնելու գործում։ Աղջիկը բացեց գիրքը, և նրանց գլուխները մոտեցան։ Մարտինը դժվարությամբ էր հետևում աղջկա բացատրություններին— այնքան հուզված էր նա Ռութի հրապուրիչ մոտիկությունից։ Բայց երբ աղջիկը սկսեց բացատրել նրան բայի խոնարհումների դաղտնիքները, նա մոռացավ ամեն ինչ։ Նա դեռ երբեք չէր լսել խոնարհումների մասին, և խոսքի խորհրդավոր գաղտնիքների մեջ այդ առաջին թափանցումը դյուրեց նրան։ Նա ավելի ևս ծռվեց դեպի գիրքը, և հանկարծ աղջկա մազերը դիպան նրա այտերին։

Մարտին Իդենն իր կյանքում միայն մի անգամ էր ուշագնաց եղել. այստեղ նա կարծեց, որ հիմա դա կկրկնվի։ Նրա շնչառությունը կանգ առավ կրծքում, իսկ սիրտը այնքան ուժգին բաբախեց, որ կարծես այս բոպեին դուրս կթռչի։ Դեռ երբեք Ռութը այնքան մատչելի չէր թվացել նրան։ Նրանց բաժանող անդունդի վրա մի պահ կամուրջ էր ձգված։ Բայց դրանից Մարտինի զգացումների վեհու-

թյունը չնվազեց։ Աղջիկը չցածրացավ մինչև նա։ Նա էր, որ բարձրացավ ամպերից վեր և մոտեցավ աղջկան։ Մարտինի սերը, առաջվա պես լի էր կրոնական պատկառանքով։ Նրան թվաց, որ մտել է սրբություն սրբոցը, և նա զգույշ հեռացրեց իր գլուխը, որպեսզի խուսափի այդ հպումից, որն ադդում էր նրա վրա, ինչպես էլեկտրական լիցքը։ Սակայն Ռութը ոչինչ չնկատեց։

ԳԼՈՒԽ VIII

Անցավ մի քանի շաբաթ, իսկ Մարտին Իդենը շարունակում էր ուսումնասիրել քերականությունը, աչքի էր անցկացնում բարեկրթության վերաբերյալ գրքեր և ագահաբար կարդում էր ամեն գիրք, որը գրգռում էր նրա երևակայությունը։ Իր նախկին շրջապատից նա բոլորովին հեռացավ։ «Լոտոս» ակումբի աղջիկները չէին հասկանում, թե ինչ է պատահել նրան և անվերջ հարցումներ էին ուղղում Ջիմին, իսկ շատ երիտասարդներ ուրախ էին, որ նա այլևս չի երևում Ռայլիի մոտ տեղի ունեցող մրցումներին։ Գրադարանի գանձարանում նա մի թանկագին գյուտ ևս արեց։ Ինչպես որ քերականությունը բացեց նրա առաջ լեզվի հիմքը, այնպես էլ այդ նոր գիրքը նշեց նրան բանաստեղծության հիմքը կազմող կանոնները։ Նա սկսեց ուսումնասիրել տաղաչափության ձևերն ու կանոնները և հասկացավ, թե ինչպես է ստեղծվում նրա սքանչելի գեղեցկությունը։ Մի այլ նորագույն գրքում, որը նա գտավ, բանաստեղծությունը դիտվում էր որպես կերպարվեստ։ Այդ գրքում սպառիչ կերպով պարզաբանված տեսությունը հաստատվում էր լավագույն գրականությունից մեջբերված բազմաթիվ օրինակներով։ Մարտինը ոչ մի վեպ չէր կարդացել այդքան մեծ հետաքրքրությամբ, որքան այդ գրքերը։ Եվ նրա թարմ, չծանրաբեռնված քսանամյա ուղեղը, մղվելով գիտելիք-

ների ծարավից, յուրացնում էր ամեն ինչ՝ շարքային ուսանողների համար անսովոր ակտիվությամբ ու արագությամբ։

Այժմ, երբ Մարտինը իր դիտակետից նայում էր ետ, դեպի իրեն ծանոթ հին աշխարհը,— հեռավոր երկրների, ծովերի, նավերի, նավատորմիների և առևտրական կանանց, աշխարհը, դա թվում էր նրան շատ փոքր, բայց և այնպես իր որոշ սահմանագծերով հպվում էր մեծ ու նոր աշխարհին, որը բացվել էր Մարտինի առաջ։ Նրա միտքը միշտ ձգտում էր միասնականության, սակայն նա զարմացավ, երբ առաջին անգամ սկսեց նկատել այդ երկու աշխարհների միջև շփման կետերը։ Միաժամանակ նա բարձրացավ հին աշխարհից վեր՝ շնորհիվ դրբերից բաղած վեհ մտքերի և զգացումների։ Դա մղեց Մարտինին ավելի հաստատ հավատալու, որ այն բարձր շրջանակում, որին պատկանում են Ռութը և նրա ընտանիքը, բոլոր տղամարդիկ ու բոլոր կանայք խորհում են այդ մտքերով և ապրում են նրանցով։ Մինչև այժմ նա ապրել է ճահճում, իսկ այժմ ուզում է մաքրվել ու բարձրանալ վերև։ Դեռ մանկությունից և պատանեկությունից ինչ-որ աղոտ բան շարշարում և հուզում էր նրան, բայց նա, մինչև Ռութի հետ հանդիպելը, երբեք չէր հասկացել, թե ի՞նչ է ուզում։ Այժմ այդ փափագը սրվել և հիվանդագին էր դարձել. նա պարզ ու հաստատ հասկացավ, որ փնտրում է գեղեցկություն, խելք ու սեր։ Այդ շաբաթների ընթացքում նա վեց անգամ տեսակցեց Ռութի հետ, և ամեն անգամ նրա հետ հանդիպումը ոգեշնչում էր Մարտինին։ Աղջիկն ուզում էր նրա լեզուն և առոգանությունը, թվաբանություն էր պարապում նրա հետ։ Սակայն նրանց խոսակցությունները չէին սահմանափակվում տարրական պարապմունքներով։ Մարտինը չափազանց շատ բան էր տեսել կյանքում, նրա միտքը չափազանց հարուստ էր, և նա չէր կարող բավարարվել կոտորակներով, խորանարդ արմատներով, վերլուծությամբ ու խոնարհումներով։ Լինում էին բոպեներ, երբ նրանց խոսակցությունը բոլորովին այլ նյութի շուրջն էր դառնում. նրանք խոսում էին այն ոտանավորների

մասին, որոնք Մարտինը նոր էր կարդացել, այն բանաստեղծի մասին, որին ուսումնասիրում էր այժմ Ռութը։ Եվ երբ նա բարձրաձայն կարդում էր իր սիրած բանաստեղծությունները Մարտինը անասելի երանություն էր զգում։ Նա գեռ երբեք այդպիսի ձայն չէր լսել։ Անդամ աղջկա խոսքերի հնչյունից նրա սերը ծաղկում էր, ամեն մի բառից նրա սիրտը արոփում էր։ Այդ ձայնը հանդարտ ու երաժշտական էր՝ որպես վսեմ ու ճոխ արդասիք կուլտուրայի և հոգեկան ազնվության։ Լսելով Ռութին՝ նա ակամա հիշում էր վայրենի ցեղերի և նավահանգիստներում թրև եկող կանանց պոռչտուն ձայները, ֆաբրիկայի բանվորուհիների աններդաշնակ կրույցը։ Նրա երևակայությունն անմիջապես սկսում էր աշխատել, տեսնում էր այդ կանանց ամբողջ շարաններ, և նրանցից յուրաքանչյուրը, որպես հակապատկեր, առավել փայլեցնում էր Ռութի լուսապսակը։ Բայց նա ոչ միայն սիրում էր լսել Ռութի ձայնը. նրան անսահմանորեն հաճելի էր այն միտքը, որ Ռութը հասկանում է իր կարդացածը և վառ արտահայտություն է տալիս բանաստեղծական մտքի գեղեցկությանը։ Աղջիկը շատ էր կարդում նրան «Իշխանուհուց», ընդ որում նա հաճախ Ռութի աչքերում տեսնում էր արտասուքի շիթեր,— այնքան նուրբ էր զգում նա գեղեցկությունը։ Այդպիսի բոպեներին Մարտինին թվում էր, որ բարձրանում-հասնում է մինչև աստվածային ամենաթափանցությանը. նայելով աղջկան ու լսելով նրա ձայնը՝ նա կարծես զննում էր հենց կյանքը և ընթերցում էր նրա խորհրդավոր գաղտնիքները։ Հասնելով զգացմունքի այդ բարձունքներին՝ Մարտինը սկսում էր հասկանալ, որ հենց դա է սերը, և որ սերը աշխարհում ամենավսեմ բանն է։ Եվ նրա ներքին հայացքի առջևից անցնում էին՝ ժամանակին իր զգացած բոլոր ուրախությունները — հարբածությունը, կանացի փայփայանքը, խաղը, ըմբշամարտի տուրուդմբոցը,— և այդ բոլորը թվում էր անտանելիորեն անարդ ու գծուծ՝ համեմատած այն զգացումների հետ, որոնք համակել են նրան այժմ։

Ռութը չէր դիտակցում, թե ինչ է տեղի ունենում իր մեջ։ Նա դեռևս ոչ մի փորձառություն չուներ սրտի վերաբերյալ գործերում, Այն ամենը, ինչ նա դիտեր, քաղված էր գրքերից, որոնց մեջ առօրյա կյանքի դեպքերը միշտ էլ պատկերացվում էին որպես դեղեցիկ, բայց անիրական յաններ. աղջկա մտքովն էլ չէր անցնում, թե այս կոպիտ նավաստին նվաճում է նրա սիրտը և մի դեղեցիկ օր նրանում հաստատվող զգացումը կհորդի և հրեղեն ալիքներով կողողի նրա ողջ էությունը։ Աղջիկը չէր իմանում, թե իսկապես ի՞նչ է սիրո բոցը։ Նրա բոլոր պատկերացումներն այդ մասին բացառապես տեսական էին, իսկ «սեր» բառը նրանում ոգեկոչում էր աստղերի հեզիկ փայլը, ծովի հանդարտ մակերեսին մեղմիկ ալյակները, ամառային թավշյա դիշերից հետո թեթև ցողը։ Սերը պատկերանում էր նրան որպես քնքուշ անձնվիրություն, ծառայություն իր սիրած էակին՝ ծաղիկների բույրով և երջանկալեռ անդորրությամբ համակված գով լռության մթնոլորտում։ Նա չէր էլ հասկանում սիրո հրաբխային պոռթկումները, նրա սոսկալի տոթը, որը վերածում է սիրտը տաք մոխիրով պատած ամայության։ Նա ոչինչ չգիտեր աշխարհում թաքնված ուժերի, իր մեջ իսկ թաքնված ուժերի մասին. կյանքի խորքերը նրա համար պատրանքների մշուշապատ ծով էին։ Իր հոր ու մոր ամուսնական նվիրվածությունը նրա համար սիրո միության իդեալն էր, և նա հանդիստ սպասում էր, որ ապագային կգա այն օրը, երբ նա առանց հուզմունքի ու ցնցումների կթևակոխի նույնպիսի խաղաղ կենակցության իր սիրելի մարդու հետ։

Այդպիսով, նա Մարտին Իդենի վրա նայում էր որպես մի նորության, մի անօրինակ, բացառիկ էակի, և այդ նորությանն էր վերագրում այն անսովոր զգացումները, որը Մարտինը ոգեշնչում էր նրա մեջ։ Դա բնական էր։ Նա նույնպիսի զգացմունքներ էր ունենում, երբ գալանանոցում նայում էր վայրենի կենդանիներին, կամ երբ տեսնում էր փոթորիկն ու սարսռում ամպրոպից։ Այդպիսի երևույթներում

կար ինչ-որ կոսմիկ բան, և Մարտինի մեջ էլ անկասկած կա ինչ-որ կոսմիկ բան։ Մարտինը նրան բերեց ծովի շունչը, երկրագնդի տարածությունների անսահմանությունը։ Արևադարձային արևի փայլը դրոշմվել է նրա դեմքին, իսկ նրա պինդ, երկաթե մկաններում կենսական նախնական ուժ կա։ Նա ամբողջովին ծածկված է սպիներով ու քերթվածքներով, որոնք ստացվել են դաժան մարդկանց և դաժան արարքների այդ անծանոթ աշխարհում, որը սկսվում է աղջկա տեսահորիզոնի սահմաններից դենը։ Դա մի վայրենի է, դեռ չվարժեցրած, և Ռութի ինքնասիրությունը շոյում է այն միտքը, որ Մարտինը այնքան հլու է նրան։ Աղջկանը ղեկավարում էր վայրենուն ձեռնասուն դարձնելու ցանկությունը, ուրիշ ոչինչ։ Այդ ցանկությունն անգիտակցական էր, և նրա մտքովն էլ չէր անցնում, թե ուզում է Մարտինից ստեղծել իր հորը նման մի մարդու, որովհետև իր հայրը թվում էր նրան կատարելության տիպար։ Իր անգիտությամբ՝ նա չէր կարող հասկանալ և այն, որ Մարտինի կողմից նրա մեջ առաջացրած կոսմիկ զդացումը հենց սերն է—այն անհաղթելի ուժը, որը տղամարդուն ու կնոջն իրար է ձգում ամբողջ աշխարհի վրայով, որը եղջերուներին ստիպում է զուգավորման շրջանում իրար սպանել և բոլոր կենդանի էակներին մղում է միավորման։

Մարտինի արագ զարդացումը չափազանց զարմացնում ու հետաքրքրում էր նրան։ Աղջիկը նրա հոգում հայտաբերել էր այնպիսի կողմեր, որոնց գոյության մասին չէր էլ կարող կասկածել, իսկ դրանք բացվում էին ամեն օր, ինչպես ծաղիկները բարեբեր հողում։ Ռութը բարձրաձայն կարդում էր Բրոունինգից և երբեմն ապշում էր, երբ Մարտինը անակնկալ կերպով մեկնաբանում էր խրթին տեղերը։ Աղջիկը չէր հասկանում, որ կյանքի և մարդկանց ճանաչողության վրա հիմնված նրա մեկնաբանությունները հաճախ ավելի ուղիղ էին, քան իր մեկնաբանությունները։ Նրա դատողությունները աղջկան թվում էին միամիտ, թեև երբեմն նրան հրապուրում էր Մարտինի մտքի թռիչքը, որը նրան

տանում է դեպի աստղերից դենը այնպիսի հեռավորություններ, ուր աղջիկը նրան չէր կարող հետևել և միայն սարսրոում էր ինչ-որ անհասկանալի ուժի հետ ընդհարվելուց։ Հետո Ռութը նվագում էր նրա համար, և երաժշտությունը թափանցում էր Մարտինի էության խորքը, որն անչափելի էր աղջկա համար։ Նրա ողջ էությունը բացվում էր երաժշտության հնչյուններից, ինչպես ծաղիկը բացվում է արևի ճառագայթների ազդեցության տակ։ Նա շատ շուտով մոռացավ ստորին դասակարգի երաժշտության ընդհատ ռիթմերը և բութ ու ճչան ներդաշնակությունը և սովորեց գնահատել Ռութի սիրած կլասիկ ռեպերտուարը։ Սակայն նա ինչ-որ դեմոկրատական կողմնակցություն էր հայտաբերում դեպի Վագները, և «Տանհոյզերի» նախերգանքը, մանավանդ Ռութի բացատրությունից հետո, նրան առավել դուր եկավ։ Այդ նախերգանքը կարծես Մարտինի կյանքի նախաստիպարն էր։ Դա անմիջականորեն անձնավորում էր Մարտինի կյանքը։ Նրա ամբողջ կյանքը արտահայտված էր Վեներայի քարանձավի մոտիվում, իսկ Ռութի կյանքը նա որոշ չափով նույնացնում էր ուխտավորների խմբերի մոտիվի հետ, թվում էր, որ Վագների մեղեդիները նրան տանում էին ոգու երևակայական աշխարհը, ուր չարն ու բարին հավիտենական պայքար են մղում։

Երբեմն Մարտինը հարցեր էր տալիս, և Ռութին սկըսում էր թվալ, թե ինքը սխալ է հասկանում երաժշտությունը։ Իսկ երբ Ռութը երգում էր, Մարտինը ոչինչ չէր հարցնում։ Երգեցողության ժամանակ նա ունկնդրում էր միայն նրան՝ աղջկան և մնում էր անշարժ նստած՝ ըմբոշխնելով նրա սոպրանոյի հստակ հնչյունը։ Եվ նա կրկին հիշում էր ֆաբրիկայի աղջիկների ճղճղան երգերը և նավահանգստի գինետներում հարբած մեգերանների խզխզան խմբերգը։ Ռութը հաճույքով էր նվագում և երգում նրա համար։ Ըստ էության Ռութը առաջին անգամ էր գործ ունենում մարդկային կենդանի հոգու հետ — այնպիսի փափուկ և ճկուն հոգու, որին հաճելի էր կաղապարել — կուռել։ Ռութին թվում էր, որ

ինքը մի քան բանդակում է Մարտինի հոգուց և այդ անում է լավագույն մտադրություններով։ Բայց այդ բոլորից, Ռութը բավականություն էր զգում Մարտինի հետ միասին գտնվելուց։ Մարտինը այլևս վախ չէր ներշնչում նրան։ Առաջին անգամ նա Ռութի վրդովված հոգում իրոք առաջացրեց մի տարտամ վախ, բայց այդ վախը այժմ անհետացել է։ Ռութը, առանց դիտակցելու, արդեն զգում էր, թե ինչ-որ իրավունքներ ունի Մարտինի վրա։ Մյուս կողմից Մարտինը նրա վրա կենարար ազդեցություն էր գործում։ Ռութը խիստ շատ էր դրգռվում համալսարանում և նրան, ըստ երևույթին, օգտակար էր երբեմն պոկվել գրքերի փոշուց և շնչել ծովի զով քամին, որով սնվել էր Մարտինը։ Ո՛ւժ։ Այո՛, նրան հարկավոր էր ուժ, և Մարտինը վեհանձնորեն բաժանում էր այն նրա հետ։ Նրա հետ միևնույն սենյակում գտնվել, նրան դիմավորել դռանը — դա նշանակում էր արդեն լիաթոք շնչել։ Եվ երբ Մարտինը հեռանում էր, Ռութը կրկնակի եռանդով էր սկսում կարդալ իր գրքերը։

Ռութը շատ լավ գիտեր Բրոունինգին, բայց նա երբեք չէր մտածում, որ մարդկային հոգու հետ խաղալը բավական վտանգավոր է։ Ինչքան շատ նա հետաքրքրվում էր Մարտինով, այնքան ուժեղ էր ցանկանում վերածնել նրա կյանքը։

— Ահա վերցրեք միստեր Բետլերին,— ասաց մի օր Ռութը, երբ քերականության, թվաբանության ու բանաստեղծության մասին խոսակցությունը վերջացավ,—նա սկզբում ոչ մի բանում հաջողություն չուներ։ Նրա հայրը բանկում գանձապահ էր, բայց քանի տարի հիվանդացավ և Արիզոնայում մեռավ հյուծախտից, այնպես որ միստեր Բետլերը— նրա անունն է Չարլզ Բետլեր—բոլորովին մենակ մնաց։ Նրա հայրը ծագումով ավստրալիացի էր, և նա Կալիֆորնիայում ազգականներ չուներ։ Նա աշխատանքի տեղավորվեց տպարանում,— մի քանի անգամ նա պատմել է ինձ այդ մասին, և սկզբներում շահում էր շաբաթական երեք դոլլար, իսկ հիմա նա շահում է տարեկան մոտ երեսուն հազար դոլլար։ Ինչպե՞ս հասավ այդ աստիճանին։ Նա աղնիվ, աշխատասեր և խնա-

յասեր էր։ Նա հրաժարվում էր բավականություններից, որոնք առհասարակ շատ են սիրում երիտասարդները։ Նա իրեն համար կանոն էր սահմանել ամեն շաբաթ ետ գցել մի որոշ գումար՝ ամեն տեսակ դրկանքների գնով։ Նա շուտով սկսեց շահել շաբաթական երեք դոլլարից ավելի, և իր եկամուտի ավելանալու հետ զուգընթաց շատանում էր նրա խնայողությունը։ Ցերեկը աշխատում էր, իսկ աշխատանքից հետո հաճախում էր երեկոյան դպրոց։ Նա շարունակ մտածում էր ապագայի մասին։ Հետո նա սկսեց հաճախել երեկոյան դասընթացներ։ Տասնյոթ տարեկան հասակում նա արդեն գրաշար էր և ստանում էր լավ ռոճիկ, բայց փառասեր էր։ Նա ուզում էր առաջ գնալ և ոչ թե ունենալ մի պատառ ապահովված հաց, և պատրաստ էր ամեն զոհողության՝ ապագայի սիրուն։ Նա վճռեց փաստաբան դառնալ և մտավ ծառայության իմ հոր գրասենյակը — երևակայեցեք՝ իրը ցրիչ շաբաթը չորս դոլլար ռոճիկով։ Բայց նա սովորել էր խնայասեր լինել և մինչև անգամ այդ չորս դոլլարից կարողանում էր խնայել։

Ռութը մի պահ լռեց շունչ առնելու և տեսնելու համար, թե Մարտինը ինչպե՞ս է ընդունում այդ պատմությունը։ Մարտինի երեսը կենդանացավ՝ շահագրգռվելով միստեր Բետլերի երիտասարդական պայքարով, միաժամանակ հոնքերը թեթևակի կիտեց։

— Երևում է, որ նրա համար հեշտ չէր ապրելը,— ասաց նա,— շաբաթական չո՞րս դոլլար։ Ինչպե՞ս կարող էր նա ապրել դրանով։ Ես շաբաթական հինգ դոլլար եմ վճարում բնակարանի և ճաշի համար, և աստված վկա, ոչ մի լավ բան չունեմ։ Հավանաբար նա շան կյանք էր վարում։ Նա անպայման սնվում էր...

— Նա ինքն էր կերակուր պատրաստում իրեն համար կերոսինկայի վրա,— ընդհատեց նրան Ռութը։

— Հավանաբար նա նույնպես վատ էր սնվում, ինչպես ձկնորսանավերի նավաստիները, իսկ դա նշանակում է, որ դրանից վատ բան չի կարող լինել։

— Բայց երևակայեցեք, թե նա այժմ ի՛նչ դարձավ,— բացագանչեց աղջիկը ոգևորությամբ։—Պատկերացրեք, թե նա ի՛նչ եկամուտ ունի հիմա։ Նրա առաջվա գրկանքները այժմ հազարապատիկ փոխարինվում են։

Մարտինը շեշտակի նայեց նրան։

— Գիտե՞ք, ես ինչ կասեմ ձեզ,— առարկեց նա,— ձեր միստեր Բեալերը այնքան էլ զվարթ չի ապրում այժմ, երբ հարուստ է։ Ամբողջ տարիներ նա այնքան վատ է սրնվել, որ պիտի ենթադրել, որ նրա ստամոքսը անպետքացել է։

Ռութը շուռ տվեց աչքերը՝ չդիմանալով նրա հայացքին։

— Ես գրազ կդամ, որ նա տառապում է կատառով։

— Այո՛— համաձայնեց Ռութը,— բայց...

— Եվ ենթադրում եմ,— շարունակեց Մարտինը,— նա հիմա բարկացկոտ ու տաղտկալի է, ինչպես ծեր բվեճը, և նրա երեսուն հազարը ոչ մի ուրախություն չի բերում նրան։ Հավանաբար նա չի էլ սիրում նայել, երբ նրա շուրջը ուրախանում են։ Ճի՞շտ եմ ասում ես, թե ոչ։

Ռութը գլխով հաստատական նշան արեց և ուզում էր բացատրել.

— Բայց նա այդ տիպի մարդ չի։ Նա բնականից մոայլ է և լուրջ։ Նա միշտ էլ այդպես է եղել։

— Իհարկե, այդպես էլ պիտի լիներ,— բացագանչեց Մարտինը,— շաբաթը երեք կամ չորս գոլլարով։ Երիտասարդ տղան ինքն է ճաշ եփում, որպեսզի գրամ խնայի։ Ցերեկը աշխատում է, գիշերը սովորում է, աշխատանքից դատ ոչինչ չգիտի, ոչ մի անգամ չի զվարճանում, երբեք քեֆ չի անում, թերևս չգիտի էլ, ինչպե՛ս պիտի քեֆ անել։ Անկասկած նրա այդ երեսուն հազարը չափազանց ուշ է եկել։

Նրա հաճոյակատար երևակայությունը իսկույն մանրամասնորեն գծագրեց նրա աչքի առաջ այդ խնայասեր պատանու կյանքը և այն հոգեկան նեղ շավիղը, որը նրան հետագայում առաջնորդեց դեպի տարեկան երեսուն հազարա-

նոց եկամուտը։ Չարլզ Բետլերի բոլոր մտքերն ու արարքները նրա առաջ պատկերացան՝ կարծես հեռադիտակով տեսնելիս լիներ։

— Գիտե՞ք,— ավելացրեց Մարտինը,— ես խղճում եմ նրան, այդ միստեր Բետլերին։ Նա այն ժամանակ չափազանց երիտասարդ էր և չէր հասկանում, որ ինքը գողացել է իր ողջ կյանքը՝ այդ երեսուն հազարի սիրուն, որը այժմ նրան ոչ մի ուրախություն չի պատճառում։ Այժմ նա արդեն երեսուն հազարով չի կարող գնել այն, որը նա այն ժամանակ կարող էր գնել տասը ցենտով — ասենք որևէ շաքարեղեն, երբ երեխա էր, կամ ընկույզ և կամ վերնասրահի տոմս։

Այսպիսի մոտեցումը միշտ էլ որոշ չափով ապշեցնում էր Ռութին։ Դա ոչ միայն բոլորովին նոր էր Ռութի համար, այլև չէր համապատասխանում նրա հայացքներին. նա աղոտ կերպով կռահում էր դրանում ճշմարտության որոշ բաժին, որը սպառնում էր տապալել և հիմնովին այլափոխել կյանքի մասին նրա ունեցած բոլոր գաղափարները։ Եթե Ռութը լիներ ոչ թե քսանչորս, այլ տասնչորս տարեկան, թերևս նա, Մարտինի ազդեցության տակ, շատ շուտ փոխեր իր հայացքները։ Բայց նա քսանչորս տարեկան էր և, բացի այդ, խառնվածքով պահպանողական էր, իսկ նրա ստացած կրթությունը արդեն հարմարեցրել էր նրան այն շրջապատի ապրելակերպին ու գաղափարներին, ուր նա ծնվել ու զարդացել էր։ Ճիշտ է, որ Մարտինի տարօրինակ պատողությունները երբեմն վրդովում էին նրա խոսակցության ժամանակ, բայց Ռութը վերագրում է այդ նրա անձնավորության և ճակատագրի ինքնասիրությանը և աշխատում էր շուտով մոռանալ դրանը։ Թեև Ռութը չէր համաձայնում նրա մտքերին, այնուամենայնիվ նրա համոզելու ուժը, խոսելիս նրա աչքերի փայլն ու դեմքի լրջությունը միշտ էլ հուզում էին ապշկան և հրապուրում նրան։ Ռութի մտքովն էլ չէր անցնում, որ նրա աշխարհայացքի սահմանների դրսից եկած այս մարդը շատ հաճախ արտահայտում էր նրա համար չափազանց խոր մտքեր և չափազանց վեր

էր բարձրանում նրա սովորական մտամակարդակից։ Ռութի աշխարհայացքի սահմանները, նրա կարծիքով, միակ ուղիղ սահմաններն էին։ Բայց սահմանափակ մտքերը միայն ուրիշների մոտ են նկատում սահմանափակվածությունը։ Այդպիսով նա իր աշխարհայացքը համարում էր շատ լայն և դրանով էլ բացատրում իր և Մարտինի միջև ծագած գաղափարական ընդհարումները և երազում էր սովորեցնել նրան դիտել իրերը իր՝ Ռութի աչքերով և ընդլայնել նրա տեսահորիզոնը մինչև իր հորիզոնի սահմանները։

— Բայց ես դեռ չեմ վերջացրել իմ պատմությունը,— ասաց Ռութը։— Ինչպես պատմել է իմ հայրը, նա աշխատում էր հաղվադյուտ եռանդով ու ջանասիրությամբ։ Միստեր Բետլերը միշտ էլ աչքի էր ընկնում արտասովոր աշխատունակությամբ։ Նա երբեք չէր ուշանում աշխատանքից. ընդհակառակը, շատ հաճախ ներկայանում էր ժամանակից շուտ, Բայց և այնպես նա կարողանում էր ժամանակ խնայել։ Ամեն մի ազատ րոպե նա հատկացնում էր ուսման։ Ուսումնասիրում էր հաշվապահություն, սովորեց տպել գրամեքենայի վրա, սղագրության դասեր էր վերցնում և, որպեսզի կարողանար վճարել դասերի համար, գիշերները թեյարանում էր դատական մի ռեպորտյորի, որը պրակտիկայի կարիք էր զգում։ Շուտով նա ցրիչից դարձավ գրագիր և իր տեսակում անփոխարինելի էր։ Իմ հայրը կատարելապես գնահատեց նրան և տեսավ, որ նա մեծ ապագա ունեցող մարդ է։ Իմ հոր խորհրդով նա մտավ իրավաբանական դրպրոց, փաստաբան դարձավ և գրասենյակ վերադարձավ իբր հորս գործի կրտսեր ընկերը։ Նա ականավոր մարդ է։ Նա արդեն մի քանի անգամ հրաժարվել է Միացյալ Նահանգների սենատորությունից և եթե ուզենար, կարող էր դառնալ Գերագույն դատարանի անդամ։ Այդպիսի կյանքը պետք է սգեորի մեզ բոլորիս։ Դա ապացուցում է, որ համառ և ուժեղ կամք ունեցող մարդը կարող է կյանքում հասնել ամեն նպատակի։

— Այո՛, նա ականավոր մարդ է,— բոլորովին անկեղծորեն համաձայնեց Մարտինը։

Եվ սակայն այդ պատմության մեջ ինչ-որ բան վատ էր կապակցվում կյանքի ու դեղեցկության մասին նրա հասկացողությունների հետ։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում բավականաչափ հիմք գտնել բոլոր այն զրկանքների ու կարիքների համար, որոնց ենթարկվել է միստեր Բետլերը։ Եթե նա այդ աներ կնոջ սիրո համար կամ դեղեցիկից հրապուրված,— Մարտինը կհասկանար նրան։ Սիրուց տառապող պատանին կարող է մեռնել մի համբույրի համար, բայց ոչ տարեկան երեսուն հազար դոլլարի համար։ Միստեր Բետլերի կարիերայում կար ինչ-որ խղճուկ բան, և դա առանձնապես չէր ոգեշնչում Մարտինին։ Երեսուն հազար դոլլար— դա իհարկե վատ չի, բայց կատաղը և կյանքով ուրախանալու անընդունակությունը ոչնչացնում էին այդ դոլլարների արժեքը։

Մարտինը այդ նկատառումներից շատերը արտահայտեց Ռութին, որով մի ավելորդ անգամ համոզեց աղջկան, որ անհրաժեշտ է զբաղվել նրա վերադաստիարակությամբ։ Ռութի համար հատկանշական էր այդ առանձնահատուկ նեղմտությունը, որը ստիպում է որոշ շրջանակի մարդկանց մտածել, որ միայն իրենց ռասան, կրոնը և քաղաքական համոզմունքներն են լավ և ճիշտ, և որ աշխարհի երեսին բոլոր մյուս մարդկային էակները նրանցից ցած են կանգնած։ Դա նույն այն նեղմտությունն էր, որը ստիպում էր հինավուրց հրեային շնորհակալ լինել աստծուց նրա համար, որ կին չի ծնվել, իսկ հիմա միսիոներներին ստիպում է ճամփորդել ամբողջ երկրագնդում, որպեսզի բոլորին պարտադրեն իրենց աստծուն։ Այդ նույն նեղմտությունն էլ ներշնչում էր Ռութին՝ կյանքի բոլորովին այլ պայմաններում մեծացած այդ մարդուն վերցնել և վերաձևել նրան իր շրջանակի մարդկանց կերպարով։

ԳԼՈՒԽ IX

Մարտին Իդենը վերադարձավ նավարկությունից և շտապեց գնալ Կալիֆորնիա՝ մղվելով սիրո տենչանքից, ուր ամիս առաջ, ծախսելով իր դրամները, նա վարձվեց ծառայության մի նավի վրա, որը գնում էր փնտրելու՝ Սոլոմոնյան կղզիների ինչ-որ վայրում թաղված մի գանձ։ Երկար ու անհաջող որոնումներից հետո այդ ձեռնարկը ձախողված ճանաչվեց։ Նավաստիների հետ հաշիվ տեսան Ավստրալիայում, և Մարտինը անմիջապես վարձվեց աշխատանքի Սան-Ֆրանցիսկո գնացող մի նավի վրա։ Այդ ութ ամսվա ընթացքում նա ոչ միայն բավականաչափ դրամ շահեց, որպեսզի ցամաքում ավելի երկար դիմանա, այլև կարողացավ ժամանակ գտնել շարունակելու իր պարապմունքները։

Նա ընդունակ էր սովորելու, ընդսմին նրան օգնում էին բնական հաստատակամությունն ու Ռութի նկատմամբ նրա սերը։ Ուսումնասիրելով քերականությունը՝ նա մի քանի անգամ կրկնեց այն և ի վերջո լիովին տիրապետեց այն։ Նա այժմ նկատում էր նավաստիների խոսակցության մեջ անճշտություններ և մտքումն ուղղում էր նրանց սխալներն ու արտահայտության կոպտությունը։ Նա ուրախությամբ էր նկատում, որ իր ականջը շատ զգայուն է դարձել և որ իր մեջ զարգացել է քերականական նուրբ զգացողություն։ Խոսակցության ամեն մի անճշտություն աններդաշնակ էր հնչում նրա ականջին, թեպետ սովորության պատճառով պատահում էր, որ նրա բերանից էլ էին թռչում նման անճշտություններ։ Երևում էր, որ ժամանակ էր հարկավոր՝ դրանից վերջնականապես ազատվելու համար։

Վերջացնելով քերականությունը՝ նա ձեռնարկեց բառարանին և իրեն համար կանոն դրեց ամեն օր քսան բառ ավելացնել իր բառապաշարին։ Դա հեշտ խնդիր չէր և կանգնելով հերթապահության կամ ղեկի անիվի մոտ՝ նա կրկնում էր սովորած բառերը և աշխատում արտասանել նրանք, ինչպես հարկն է։ Նա հիշում էր Ռութի բոլոր հրա-

հանգները և խիստ զարմացավ, երբ շուտով երևան հանեց, որ սկսել է անգլերեն խոսել ավելի մաքուր և ճիշտ, քան սպանները և կայուտում նստող այն ջենտլմենները, որոնք ֆինանսավորում էին ամբողջ այդ արկածախնդրությունը։

Նավապետի՝ ձկան աչքերով նորվեգիացու մոտ պատահաբար ճարվեց Շեքսպիրի երկերի լիակատար ժողովածուն, որը նա, իհարկե, ոչ մի անգամ աչքի չէր անցկացնում, և Մարտինը թույլատվություն ստացավ օգտվել այդ թանկագին գրքերից՝ փոխարենը լվանալով նրանց տիրոջ սպիտակեղենը։ Ողբերգությունների առանձին տողերը նրա վրա թողնում էին այնպիսի տպավորություն, որ նա առանց որևէ դժվարության մտաբերում էր դրանք, և միաժամանակ ամբողջ աշխարհը նրա աչքին պատկերանում էր եղիսաբեթյան շրջանի թատրոնի կերպարներով ու ձևերով, իսկ նրա մտքերը ինքնաբերաբար շարունակվում էին սահուն ոտանավորների ձևով։ Դա մի օգտակար վարժություն էր նրա լսելիքի համար և նրան սովորեցրեց գնահատել անգլերեն լեզվի վայելչությունը, թեպետ միաժամանակ մուծեց նրա խոսակցական լեզվի մեջ հնացած և չգործածվող շատ ասացվածքներ։ Մարտինը լավ անցկացրեց այդ ութ ամիսը։ Նա սովորեց ուղիղ խոսել ու մտածել և ավելի լավ ճանաչեց իրեն։ Մի կողմից նա համեստորեն գիտակցում էր իր տգիտությունը, իսկ մյուս կողմից՝ իր մեջ զգում էր մեծ ուժ։ Նա տեսնում էր իր և իր ընկերների միջև ահագին տարբերություն, բայց բավական խելացի էր հասկանալու համար, որ այդ տարբերությունը ոչ թե արդեն ձեռք բերվածի մեջն է, այլ այն բանում, որ նա հնարավորություն ունի ձեռք բերելու։ Ինչ անում էր նա, կարող էին անել և նրանք, բայց նրանում սեղի էր ունենում ինչ-որ աշխատանք, որն ասում էր նրան, որ նա ընդունակ է ավելի շատին։ Նա հիանում էր աշխարհի գեղեցկությամբ և ցանկանում էր, որ Ռութն էլ կարողանար իրեն հետ միասին սքանչանալ այդ գեղեցկությամբ։ Նա վճռեց նկարագրել Ռութին խաղաղ օվկիանոսի վեհությունը։ Այդ միտքը նրանում զարթեցրեց ստեղծա-

գործական գրգիռ և նա ցանկացավ հաղորդել աշխարհի գեղեցկությունը ոչ միայն Ռութին։ Եվ այդ շլացուցիչ շողքում նա հղացավ մի վեհ գաղափար. նա պիտի գրի։ Նա կլինի մեկը այն աչքերից, որոնցով նայում է աշխարհը, մեկը այն ականջներից, որոնցով լսում է աշխարհը, մեկը այն սրտերից, որոնցով զգում է աշխարհը։ Նա կգրի ամեն ինչ. բանաստեղծություն և արձակ, վեպեր և ակնարկներ, նաև պիեսներ, ինչպես Շեքսպիրը։ Դա իսկական կարիերա է, և դա դեպի Ռութի սիրտն առաջնորդող ուղին է։ Չէ՞ որ գրողներն աշխարհի հսկաներն են, որոնց չի կարող հասնել մի ոմն միստեր Բեսլեր, որը տարեկան երեսուն հազար է շահում և կարող էր Գերագույն դատարանի անդամ դառնալ, եթե ուզենար։

Հազիվ հղացված, այդ գաղափարը ամբողջովին նվաճեց նրան, և նրա Սան-Ֆրանցիսկո վերադարձը երազի նմանվեց։ Նա հարբած էր իր ուժի գիտակցությամբ և այն զգացումով, որ կարող է անել ամեն բան։ Մեծ օվկիանոսի հանդարտ առանձնության մեջ նա ձեռք բերեց իրերի հեռանկարը։ Նա հիմա առաջին անգամը պարզ տեսավ Ռութին և այն շրջանը, որ ապրում էր նա։ Այդ երևույթները նրա մտքում ստացան կոնկրետ ձև. կարծես նա կարող էր ձեռքով վերցնել դրանք, շուռ տալ ամեն կողմ, զննել։ Այդ աշխարհում շատ բան անհասկանալի ու մշուշապատ էր, բայց նա նայում էր ամբողջին, ոչ թե մանրամասներին, միևնույն ժամանակ տեսնում էր նրանց բոլորին տիրանալու եղանակը։ Գրե՛լ։ Այս միտքն այրում էր նրան կրակի պես։ Նա կսկսի գրել վերադառնալուց անմիջապես հետո։ Ամենից առաջ նա կնկարագրի դանձ որոնելու գնացած արշավախումբը։ Նա կուղարկի այդ պատմվածքը Սան-Ֆրանցիսկոյի որևէ ժուռնալի, առանց ոչինչ ասելու Ռութին այդ մասին, և նա կզարմանա և կուրախանա տեսնելով մամուլում նրա անունը։ Նա կարող է միաժամանակ գրել և սովորել։ Չէ՞ որ օրը քսանչորս ժամ ունի։ Նա անհաղթելի է, որովհետև գիտի աշխատել և բոլոր ամբոցները փուլ կգան նրա առաջ։ Նա

արդեն կարիք չի ունենա ծովագնացությամբ պարապել իբր պարզ նավասարի—իր երևակայության մեջ նա հանկարծ տեսավ իր սեփական գրասանավը։ Չէ՞ որ կան սեփական գրասանավեր ունեցող գրողներ։ Իհարկե—նա կասեցնում էր իրեն—հաջողությունը միանգամից չի գա. լավ կլինի, որ սկզբնական շրջանում նա իր գրելով կարողանար շահել թեկուզ այնքան, որ բավական լիներ ուսումը շարունակելու համար։ Իսկ հետո, մի ժամանակ անց,—անորոշ ժամանակ անց, երբ կսովորի և կպատրաստվի, նա կսկսի գրել վեպեր և իր անունը աշխարհահռչակ կդառնա։ Բայց դրանից ավելի կարևոր, ամենակարևորից էլ անսահմանորեն ավելի կարևորն է այն, որ այն ժամանակ նա վերջապես արժանի կդառնա Ռութին։ Փառքը ինքնըստինքյան լավ բան է, բայց նրանում այդ երազները ծագեցին ոչ թե փառքի, այլ Ռութի սիրուն։ Նա հետամուտ չէր փառքի, այլ միայն սիրատոչոր մի պատանի էր։

Երբ Մարտինը Օկլենդ եկավ՝ գրպանում ունենալով բավականին դրամ, տեղավորվեց Բեռնարդ Հիգգինբոթամի տանը իր նախկին սենյակում և սկսեց աշխատել։ Նա չհաղորդեց Ռութին, որ վերադարձել է։ Նա վճռեց աղջկա մոտ գնալ միայն գանձ որոնողների մասին իր ակնարկը վերջացնելուց հետո։ Այդ որոշումը նա կայացրեց առանց դժվարության, որովհետև ամբողջովին համակված էր ստեղծագործական տենդով։ Բացի այդ, նրա գրած ամեն մի նախադասություն մոտեցնում էր աղջկան իրեն։ Նա չգիտեր, թե ինչ ծավալ պիտի ունենա պատմվածքը, բայց հաշվեց բառերի քանակությունը մի ակնարկում, որը երկու սյունակ էր գրավել «Սան-Ֆրանցիսկոյի տեսաբան» թերթի կիրակնօրյա հավելվածում, և որոշեց ղեկավարվել դրանով։ Երեք օր առանց հանգստանալու աշխատելուց հետո Մարտինը վերջացրեց իր ակնարկը, ապա խոշոր տառերով ու ամենամեծ խնամքով արտագրեց այն, որպեսզի ավելի ընթեռնելի դառնա,— և հենց այն ժամանակ իմացավ գրադարանից վերցրած բանահյուսության դասագրքից, որ գոյություն ու-

նեն նոր տողեր և չակերտներ։ Իսկ նա այդ մասին չէր էլ մտածել։ Մարտինը իսկույն դարձյալ նստեց ակնարկն արտագրելու՝ շարունակ դիմելով այդ դասագրքի օգնությանը և մի օրվա ընթացքում այնքան շատ տեղեկություններ ձեռք բերեց շարադրության արվեստի մասին, որքան սովորական դպրոցականը ձեռք չի բերում մի տարում։ Երբ երկրորդ անգամ արտագրեց ակնարկը և զգուշությամբ գլանաձև ոլորեց, պատահմամբ կարդաց մի թերթում՝ սկսնակ հեղինակների համար դրված կանոնները, որոնց մեջ ասվում էր, որ չի կարելի գլանաձև ոլորել ձեռագիրը, և որ պետք է գրել թղթի միայն մի երեսը։ Նա խախտել էր այդ օրենքի երկու կետերն էլ։ Բայց նա կարդաց նաև, որ լավագույն ժուռնալներում վճարում են ամեն մի սյունակի համար ոչ պակաս տասը դոլլարից։ Երրորդ անգամ արտագրելով՝ Մարտինը մխիթարվում էր նրանով, որ անվերջ բազմապատկում էր տասը սյունակը տասը դոլլարով։ Ամեն անգամ էլ միևնույն արդյունքն էր ստացվում—հարյուր դոլլար,—և նա վճռեց, որ դա իրր նավաստի ծառայելուց շատ ավելի ձեռնատու է։ Եթե նա երկու անգամ չսխալվեր, պատմվածքը երեք օրում պատրաստ կլիներ։ Հարյո՞ւր դոլլար երեք օրում։ Նրան հարկավոր կլիներ երեք ամիս թափառել ծովերում այդպիսի գումար շահելու համար։ Մարդ հիմար պիտի լինի, որ ծառայի նավերի վրա, եթե կարող է գրել։ Սակայն դրամը ինքնըստինքյան առանձին նշանակություն չուներ Մարտինի համար։ Դրամի նշանակությունը կայանում էր նրանում, որ նա կարող է տալ նրան ազատ ժամանակ, վայելուչ կոստյում դնելու հնարավորություն, իսկ այդ բոլորը միասին վերցրած Մարտինին պետք է մոտեցներ բարեկազմ դժգույն աղջկան, որը փոխակերպեց նրա ողջ կյանքը և ոգեշնչում է նրան հետագա կատարելագործումների։

Մարտինը դրեց ձեռագրերը մի մեծ ծրարի մեջ, կնքեց և հասցեագրեց «Սան-Ֆրանցիսկոյի տեսաբան» թերթի խմբագրին։ Նա այնպես էր պատկերացնում, թե խմբագրություն ուղարկված բոլոր նյութերն անմիջապես հրատարակ-

վում են, և որովհետև ակնարկն ուղղված էր ուրբաթ օրը, սպասում էր, որ նա լույս կտեսնի կիրակնօրյա համարում։ Հանելի կլիներ այդ ձևով իմացնել Ռութին, որ նա վերադարձել է։ Նույն կիրակի էլ նա կգնա աղջկա մոտ։ Այնինչ նրանում ծագեց մի նոր միտք, որը արտասովոր սրամիտ, օգտակար և համեստ թվաց նրան. գրել արկածային պատմվածք երեխաների համար և վաճառել այն «Պատանեկության ուղեկից» ժուռնալին։ Նա գնաց գրադարան և աչքի անցկացրեց «Պատանեկության ուղեկցի» մի քանի կոմպլեկտներ։ Պարզվեց, որ մեծ պատմվածքներն ու վիպակները մաս առ մաս են տպագրվում այդ շարաթաթերթում՝ մոտավորապես երեք հազար բառ ամեն անգամ։ Ամեն մի վիպակ շարունակվում էր հինգ, մինչև անգամ յոթ համարներում, և նա վճռեց ելակետ ունենալ այդ հաշիվը։

Մարտինը ժամանակին նավարկել էր Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսում կետորսական նավի վրա. այդ նավարկությունը հաշված էր երեք տարով, բայց վերջացավ վեց ամսում՝ նավաբեկության հետևանքով։ Թեպետ Մարտինը վատ երևակայություն ուներ, բայց նրա ֆանտազիան միշտ էլ սնունդ էր ստանում ճշմարտությունից, և նա ուզում էր գրել միայն իրեն ծանոթ բաների մասին։ Նա շատ լավ գիտեր կետորսությունը և, փաստացի նյութի վրա հիմնված, որոշեց պատմվածք գրել իր հերոսները դառնալիք երկու տղաների մտացածին արկածների մասին։ Դա դժվար չէր, և շարաթ երեկո նա արդեն գրեց պատմվածքի առաջին մասը—երեք հազար բառ, որով նա մեծ բավականություն պատճառեց Ջիմին, իսկ միստեր Հիդդինրոթամը ճաշի ժամանակ մի շարք բացահայտ հեգնական դիտողություններ արեց իրենց ընտանիքում երևացած «գրողի» մասին։

Մարտինը լուռ էր մնում և միայն հրճվում էր պատկերացնելով, թե ինչպես կզարմանա իր փեսան, երբ «Տեսքանի» կիրակնօրյա համարը բաց անելով կկարդա դանձ որոնողների մասին պատմվածքը։ Կիրակի օրը նա առավոտվաղ փողոց դուրս եկավ՝ սպասելով թերթերի երևալուն,

Մի բանի անգամ ուշադիր աչքի անցկացնելով թերթը՝ նա ծալեց այն ու դրեց տեղը, ուրախանալով, որ իր այդ փորձի մասին ոչ ոքի չի ասել։ Լավ մտածելուց հետո նա վճռեց, որ սխալվել է մամուլում պատմվածքների լույս տեսնելու արտադրության հարցում։ Հետո նրա ակնարկում հրատարակ ոչինչ չկար և շատ կարելի է, որ խմբագիրը որոշել է նախօրոք գրել նրան իր նկատառումները։

Նախահաշիվ հետո Մարտինը նորից զբաղվեց վիպակով։ Բառերը սահում էին նրա գրչի տակից, թեպետ նա հաճախ ընդմիջում էր աշխատանքը՝ բառարան կամ բանահյուսության դասագիրքը նայելու համար։ Երբեմն այդպիսի դադարների ժամանակ նա կրկին ու կրկին կարդում էր գրված գլուխը իրեն մխիթարելով, որ ստեղծագործական մեծ գործից կտրվելով, նա օգտվում է այդ ժամանակից. որպեսզի յուրացնի շարադրության կանոնները և սովորի արտահայտել ու շարահյուսել իր մտքերը։ Նա գրում էր մինչև մութն ընկնելը, ապա գնում էր ընթերցարան և պրպտում էր շաբաթաթերթերում ու ամսագրերում մինչև երեկոյան ժամի տասը, այսինքն մինչև ընթերցարանի փակումը։ Այդ շաբաթվա համար դա էր նրա ծրագիրը։ Ամեն օր նա գրում էր երեք հազար բառ և ամեն երեկո գնում էր ընթերցարան, քրքրում էր ժուռնալները՝ աշխատելով պարզել թե ինչպիսի ոտանավորներ, վիպակներ ու պատմվածքներ են դուր գալիս հրատարակիչներին։ Անկասկած էր մի բան. նա կարող էր գրել ամեն ինչ, որ գրել են այդ անհամար գրողները, բացի այդ, ժամկետ տվեք, և նա շատ կգրի այնպիսի բաներ, որ նրանք չեն կարող։ Նա հաճույքով կարդաց «Գրքերի բյուլետենում» հոնորարների մասին, ուր ասված էր, որ Կիպլինգը մի դոլլար է ստանում ամեն մի բառի համար, իսկ սկսնակ գրողների համար, դա առանձնապես հետաքրքրեց Մարտինին— առաջնակարգ ժուռնալներում տալիս են առնվազն երկու ցենտ։ «Պատանեկության ուղեկիցը» անկասկած առաջնակարգ ժուռնալ է, այնպես որ իր ամեն օր գրած երեք հազար բառի համար նա պետք է ստանար

վաթսունակոն գոլլար, այսինքն այնքան, ինչքան նա կարող էր շահել նավարկության մեջ երկու ամսում։

Ուրբաթ երեկո նա վերջացրեց իր վիպակը։ Դա բաղկացած էր ճիշտ քառասուն հազար բառից։ Եթե նույնիսկ երկու ցենտ վճարեն բառին, նա կստանա չորս հարյուր քսան դոլլար։ Դա վատ վճար չի մի շաբաթվա աշխատանքի համար։ Նա իր ողջ կյանքում միանգամից չէր ունեցել այդքան դրամ։ Նա մինչև անգամ չէր հասկանում, թե ի՞նչ բանի կարելի է ծախսել այդքան շատ դրամ։ Նա իսկական ոսկեհանք էր գտել։ Նա կարող էր անվերջ ոսկի հանել այնտեղից։ Նա վճռեց ձեռք բերել վայելուչ հագուստ, բաժանորդագրվել շատ թերթերի և ժուռնալների, գնել բոլոր անհրաժեշտ տեղեկագրքերը, որոնց համար նա այժմ ստիպված էր վաղել գրադարան։ Եվ սակայն չորս հարյուր քսան դոլլարից դեռևս մնում էր բավական խոշոր մի գումար, և նա գլուխ էր ջարդում, թե ինչի՞ օգտագործել այն, մինչև որ վերջապես որոշեց մի սպասուհի վարձել Գերտրուդի համար և մի հեծանիվ գնել Մերիենին։

Մարտինն իր մեծածավալ ձեռագրերն ուղարկեց «Պատանեկության ուղեկցին» և շաբաթ երեկոյան մարգարիտի որսի մասին ակնարկի պլանը կազմելուց հետո, գնաց Ռութի մոտ։ Նա նախօրոք զանգահարել էր նրան, և ինքը՝ Ռութը բացեց նրան դուռը։ Մարտինից բխող ուժի և առողջության զգացումը դարձյալ պարուրեց նրան ոտից մինչև գլուխ։ Թվում էր, որ այդ ուժը լցնում էր աղջկա ողջ մարմինը՝ հոսելով նրա երակների մեջ և հուզմունքից սարսռացնելով նրան։ Մարտինը բռնկվեց՝ շոշափելով նրա ձեռքը և նայելով նրա ծավի աչքերին, սակայն աղջիկը չնկատեց այդ նրա սևացած, ութ ամսում արևից կիզված դեմքին։ Բայց վզին՝ օձիքի քերծած շերտը չէր ծածկվել նույնիսկ արևայրուկից, և Ռութը, նկատելով այդ, հպվեց իր ժպիտը։ Սակայն աղջկա ծիծաղելու ցանկությունն անցավ, երբ նա նայեց Մարտինի կոստյումին։ Տարատն այս անգամ հրաշալի նստել էր նրա վրա,—դա նրա առաջին կոստյումն

էր՝ պատվերով կարած և Մարտինը նրանում շատ ավելի բարեկազմ ու նուրբ էր երևում։ Բայց այդ նա փոխարինել էր իր կեպկան փափուկ գլխարկով, որը աղջիկը հրամայեց նրան հագնել ու չափել գլխին, և գովեց արտաքինը։ Ռութը երջանիկ էր ավելի, քան երբևիցե։ Նրանում այդ փոփոխությունը աղջկա գործն էր և, հպարտանալով այդ փոփոխությամբ, Ռութը ոգևորված էր նրան հետագայում էլ օգնելու պատվախնդրությամբ։

Բայց հատկապես մի հանգամանք, այն էլ ամենակարևորը, ուրախացնում էր աղջկան — նրա խոսակցական լեզվի փոփոխությունը։ Նա այժմ խոսում էր ոչ միայն ավելի կանոնավոր, այլև ավելի ազատ, և նրա բառապաշարը զգալիորեն հարստացել էր։ Ճիշտ է, որ հավշտակության բոպեներին նա մոռանում էր իրեն և զարձյալ սկսում էր գործածել ժարգոն բառերը և բառերի վերջի բաղաձայնները կուլ էր տալիս։ Երբեմն նա կորցնում էր, երբ պատրաստվում էր արտասանել վերջերս սովորած բառերը։ Բայց նրա խոսակցությունը բարելավվել էր ոչ միայն արտաքնապես. նրա խոսակցությունը ավելի փայլ ու սրություն էր ստացել և դա չափազանց ուրախացրեց Ռութին։ Հայտաբերվում էր նրա բնածին հումորը, որի համար նրա ընկերները միշտ սիրում էին նրան, բայց որը նա առաջներում չէր կարող երևան հանել աղջկա մոտ այն պատճառով, որ հարմար բառեր չէր գտնում։ Այժմ նա իրեն արդեն չէր զգում իրը օտարոտի տարր։ Բայց և այնպես նա շատ չափազանցված ձևով զգուշավոր էր և, Ռութին թողնելով արամիտ խոսակցություն վարելը, թեև աշխատում էր նա չմնալ նրանից, ոչ մի անգամ նախաձեռնություն չէր վերցնում իր վրա։

Մարտինը պատմեց նրան, թե ինչո՞վ է զբաղված, բացատրեց գրականությամբ զբաղվելու իր պլանը՝ ապրուստ հայթայթելու համար և միաժամանակ շարունակելու իր ուսումը։ Սակայն նրան ապատում էր հիասթափում։ Ռութը չափազանց ակնածելիորեն վերաբերվեց այդ պլանին։

— Գիտե՞ք,— ասաց նա անկեղծորեն,— գրականու-

թյունն էլ այնպիսի արհեստ է, ինչպես ամեն մի այլ արհեստ։ Իհարկե ես մոսնապետ չեմ. ես պարզապես արտահայտում եմ ընդհանրապես ընդունված հայացքներ։ Չի կարելի դարձին լինել՝ առանց նախապես սովորելու երեք, թերևս հինգ տարի։ Բայց գրողները դարձիններից շատ են չահում և այդ պատճառով շատ շատերն են ուզում գրող դառնալ և փորձում են իրենց ուժերը։

— Իսկ դուք ինչո՞ւ չեք ենթադրում, որ ես ընդունակություններ ունեմ այդ գործում,—հարցրեց Մարտինը՝ մտքումն ուրախանալով, որ այդքան լավ արտահայտվեց. բայց անմիջապես նրա վառ երևակայությունը նկատեց հյուրասենյակում տեղի ունեցող այդ խոսակցության պատկերը, իսկ դրա կողքին կոպիտ ու զզվելի հարյուրավոր պատկերներ նրա նախկին կյանքից։

Բայց բոլոր այդ խայտաբղետ տեսիլքները մի ակնթարթում եկան ու անցան՝ առանց ընդհատելու նրա մտքի թելը, առանց դանդաղեցնելու խոսակցության տեմպը։ Մարտինն իր երևակայության էկրանում տեսավ դեմ առ դեմ իրեն և այդ հաճելի ու գեղեցիկ աղջկան՝ խոսակցելիս լավ անգլերեն լեզվով, հանգստավետ սենյակում, շրջապատված գրքերով ու նկարներով, ներդաշնակությամբ և կուլտուրայով, և այդ բոլորը մեղմ հստակ լույսով ողողուն։ Իսկ շուրջը, էկրանի եզերքներին երևում և անհետանում էին բոլորովին այլ տեսարաններ, բայց նա, իբր հանդիսատես, կարող էր նայել նրանց ըստ ցանկության։ Նա դիտում էր այդ բոլորը մշուշի քողի միջով, որը հանկարծ ցրվում էր վառ կարմրավուն լույսի ճառագայթներով։ Նա տեսավ գինետնում այրող վիսկի խմող կավրոյներին. չորս կողմից լսվում էր անվայելուչ արտահայտություններով համեմված կոպիտ խոսակցություն, իսկ նա ինքը կանգնած էր ամենաթունդ թոկից փախածների արանքում և նույնպես խմում էր հայհոյելով ու գոռալով,— կամ նստած էր նրանց հետ սեղանին կերոսինի դարշահոտ լամպի տակ, բաժանելով խաղաքարտեր և զրնգացնելով դրամանիշներ։ Հետո տեսավ ինքնիրեն մինչև

մեջքը մերկ, բռունցքները սեղմած, շիկակարմիր լիվերպուլցու հետ «Սասկվեհաննա» նավի տախտակամածի վրա նշանավոր մենամարտը սկսելուց առաջ. ապա նա տեսավ «Ջոն Ռոջերսի» արյունլվա տախտակամածը այն ամպամած առավոտյան, երբ ծագեց ըմբոստությունը, տեսավ նավապետի ավագ օգնականին՝ հողեարքի գալարումներով այլանդակված, նավապետի ձեռքին ատրճանակը, որ կրակ ու բոց էր արձակում, շուրջը նավաստիների բազմությունը՝ կատաղությունից գազազած դեմքերով,— և նորից իր հայացքն ուղղելով հանդարտ ու խաղաղ. վառ լույսով պարուրված կենտրոնական տեսարանին՝ տեսավ Ռոբին, որը զրուցում էր նրա հետ գրքերի և նկարների միջև, տեսավ մեծ ռայալը, որ աղջիկը հետո կնվագի նրա համար. լսեց իր սեփական, կանոնավոր կազմած ու արտասանած նախադասությունը։

— Իսկ ինչո՞ւ դուք չեք կարծում, որ ես ընդունակ եմ այդ բանին։

— Եթե մարդ մինչև անգամ ընդունակություններ ունի դարբնի արհեստին,— առարկեց աղջիկը ծիծաղելով.— մի՞թե դա բավական է։ Ես երբեք չեմ լսել, որ որևէ մեկը դարբին դառնա՝ առանց նախապես աշակերտություն անելու։

— Այդ դեպքում ուրեմն ի՞նչ խորհուրդ կտաք ինձ.— հարցրեց նա։—Բայց մի՛ մոռանաք. որ ես իրոք զգում եմ, որ կարող եմ գրել։ Չեմ կարող բացատրել, բայց այդ այդպես է։

— Դուք հիմնական կրթություն պետք է ստանաք,— պատասխանեց աղջիկը,— անկախ նրանից, թե դուք գրող կդառնա՞ք, թե ոչ։ Ձեզ անհրաժեշտ է կրթություն. ինչ սայարեղ էլ որ ընտրեք, և այդ կրթությունը պիտի լինի սիստեմատիկ և ոչ թե պատահական։ Դուք պիտի հաճախեք միջնակարգ դպրոց։

— Այո՛...— սկսեց նա, բայց Ռուբին ընդմիջեց նրան։

— Դուք կարող եք այն ժամանակ էլ շարունակել կրել։

— Կշարունակեմ,— ակամա պատասխանեց նա կոպիտ։

— Ինչո՞ւ այդպես։

Աղջիկը համարյա անբարոյական նայեց նրան՝ չհավանելով, որ նա այդքան համառությամբ պնդում է իր ասածի վրա։

— Որովհետև առանց դրան չի լինի և միջնակարգ կրթություն։ Չէ՞ որ ես պետք է ուսում, դրքեր գնեմ, հագնեմ։

— Ես շարունակ մոռանում եմ այդ,— ասաց Ռութը ծիծաղելով— Ինչո՞ւ դուք չծնվեցիք պատրաստի եկամուտով։

— Ես գերադասում եմ առողջությունն ու երեսակայությունը,— պատասխանեց նա,— իսկ եկամուտն ինքն-իրեն կգա։ Ես շատ բաներ կանեի...—քիչ էր մնում, որ ասեր «ձեր սիրուն», բայց փոխեց միտքը և ասաց «կանեի որևէ մեկի սիրուն»։

— Մի՝ ասեք «բաներ»—բացագանչեց աղջիկը կատակի համար սարսափելով։— Դա սոսկալի է, զռեհիկ։

Մարտինը շփոթվեց։

— Դուք իրավացի եք,— ասաց նա,— ես ցանկանում եմ, որ դուք միշտ ուղղեք ինձ։

— Ես... ես ուրախությամբ,— պատասխանեց Ռութն անվստահ։— Ձեր մեջ շատ կան լավ դծեր, և ես կուզենայի տեսնել ձեզ կատարյալ։

Մարտինը նորից կավ դարձավ նրա ձեռքին և տենդագին ցանկանում էր, որ աղջիկը նրանից կաղապարի, ինչ-որ ուզում է. աղջիկը նույնպես բուռն կերպով ցանկանում էր նրանից կերտել այն կերպարի մի տղամարդ, որը իդեալական էր թվում նրան։ Երբ աղջիկը նրան հաղորդեց, թե միջնակարգ դպրոցի ընդունելության քննությունները կրկրվեն երկուշաբթի, նա անմիջապես ասաց, որ կտա այդ քննությունները։

Դրանից հետո աղջիկը նստեց ոոյալի առաջ և երկար նվագում և երգում էր նրա համար, իսկ Մարտինը նրան

նայում էր ագահ աչքերով, հիանալով նրանով և զարմանալով, թե ինչու Ռութի շուրջը չեն խռնվում հարյուրավոր երկրպագուներ՝ լսելու նրան և տոչորվելու նրա համար, ինչպես լսում ու տոչորվում է ինքը։

ԳԼՈՒԽ X

Այդ երեկո Մարտինը ճաշի մնաց Մորգերի մոտ և, ի մեծ բավականություն Ռութի, նրա հոր վրա շատ լավ տպավորություն թողեց։ Խոսակցությունը տեղի էր ունենում նավաստու պրոֆեսիայի մասին, որը Մարտինը գիտեր իր հինգ մատի պես. միստեր Մորգը հետաքրքրվեց նրա մասին, ինչպես շատ ուշիմ և աղջամիտ երիտասարդի։ Մարտինը աշխատում էր խուսափել կոպիտ բառերից և անճիշտ արտահայտություններից, դրա համար էլ խոսում էր դանդաղ և իր մտքերն ավելի լավ էր ձևակերպում։ Ճաշին նա ավելի համարձակ էր պահում իրեն, քան առաջին անգամ, մոտ մի տարի առաջ, բայց մնաց համեստ մի քիչ ամաչկոտ և դա շատ դուր եկավ միսիս Մորգին, որի համար միաժամանակ հաճելի սյուրպրիզ էր նրանում տեղի ունեցած ակների փոփոխությունը։

— Դա առաջին աղամարդն է, որը տպավորություն թողեց Ռութի վրա,— ասաց նա իր ամուսնուն։— Նա միշտ էլ այնքան անտարբեր է եղել աղամարդկանց նկատմամբ, որ դա մինչև անգամ սկսել էր անհանգստացնել ինձ։

Միստեր Մորգը զարմանքով նայեց նրան։

— Դու ուզում ես, որ այդ երիտասարդ նավաստին արթնացնի՞ նրան,— հարցրեց նա։

— Ես չեմ ուզում, որ Ռութը մեռնի որպես տանը մնացած օրիորդ։ Եթե Իդենը կարող է նրան ստիպել հետաքրքրվել առհասարակ աղամարդկանցով, դա արդեն լավ բան է։

— Լա՜վ բան,— կրկնեց միստեր Մորգը,— հը՜մ, Բայց ենթադրենք,— երբեմն կարիք է լինում, սիրելիս, ենթադրություններով զբաղվել,— ենթադրենք, որ Իդենը նրանում շահագրգռություն առաջացնի ոչ թե ընդհանրապես, այլ մասնավորապես իր նկատմամբ. այդ դեպքո՞ւմ...

— Դա անհնարին է,— ծիծաղելով ասաց միսիս Մորգը—Ռութը նրանից երեք տարով մեծ է և հետո դա պարզապես անկարելի է։ Ոչ մի վատ բան չի դուրս գա, Վստահի՛ր ինձ։

Այդպիսով Մարտին Իդենի դերը շատ որոշակի սահմանվեց։ Այդ միջոցին Մարտինը Արտուրի և Նորմանի դրդումով նյութում էր մի գիժ ձեռնարկ։ Խոսքը այն մասին էր, որ կիրակի օրը նրանք հեծանիվներով կգնան քաղաքից դուրս շրջագայելու. իհարկե, այդ բանը հազիվ թե հետաքրքրական կլիներ Մարտինի համար, եթե նա չիմանար, որ Ռութն էլ է հեծանիվ նստում և կգնա նրանց հետ։ Մարտինը երբեք չէր նստել և չէր ունեցել հեծանիվ, բայց քանի որ Ռութը մասնակցելու է շրջագայությանը, նրա համար անկասկած դարձավ, որ ինքն էլ պետք է սովորի հեծանիվ նստել։ Այդ պատճառով տուն գնալիս նա մտավ խանութ և քառասուն դոլլարի գնեց մի հեծանիվ։ Այդ գումարը նա իր ծանր աշխատանքով չէր կարող շահել նույնիսկ մի ամսում, և այդ ծախսը նրա գրպանի համար չափազանց զգալի էր։ Բայց ավելացնելով իր՝ «Տեսաբանից» ստանալիք հարյուր դոլլարի վրա նաև չորս հարյուր քսան դոլլարը, որը կվճարի նրան «Պատանեկության ուղեկիցը», նա մինչև անգամ ուրախացավ, որ բոլոր այդ դրամների գոնե մի մասը ծախսելու խելոք մի ձև գտավ։ Նրան չշփոթեցրեց և այն հանգամանքը, որ հեծանիվ նստելու առաջին փորձին իսկ պատռեց տաբատն ու պիջակը։ Նա իսկույն զանգահարեց Հիգգինբոթամի խանութի ղերձակին և իրեն համար մի նոր կոստյում պատվիրեց։ Հետո նա արտաքին նեղլիկ սանդուղքով բարձրացրեց հեծանիվը իր սենյակը և երբ մահ-

ճակալը հեռացրեց պատից, սենյակում տեղ մնաց միայն իրեն և հեծանիվի համար։

Նա վճռեց կիրակի օրը հատկացնել ընդունելության մուտքի քննությունների պատրաստմանը, բայց մարգարտի որսի մասին պատմվածքն այնքան գրավեց նրան, որ ամբողջ օրը անցկացրեց ստեղծագործական տենդով՝ կլանված իր ուղեղում արծարծվող պատկերների գեղեցկությամբ։ Այդ կիրակի «Տեսաբանը» էլի չտպեց գանձ որոնողների մասին նրա գրած պատմվածքը, բայց դա չվրդովեց նրան։ Նա իր երևակայության թևերով չափազանց բարձր էր թռել և մինչև անգամ չլսեց, որ նրան երկու անգամ ճաշի կանչեցին։ Նա այնպես էլ դուրս եկավ տնից՝ առանց համտեսելու այն ընտիր ճաշը, որով միստեր Հիգգինբոթամը սովորություն ուներ նշելու կիրակիները։ Միստեր Հիգգինբոթամի համար այդպիսի ճաշերը նրա կենցաղային հաջողության առարկայական ապացույցն էին, և նա շարունակ օգտվում էր այդ առիթով՝ գովելու համար Ամերիկայի իմաստուն կարգերը և այն ճոխ հնարավորությունները, որ այդ կարգերը տալիս են մարդկանց. օրինակ, դա հնարավորություն է տալիս բարձրանալու,— նա հատկապես ընդգծում էր այդ,— բանջարեղենի կրպակի գործակատարի պաշտոնից մինչև խանութի տիրոջ աստիճանը։

Երկուշաբթի առավոտ Մարտին Իդենը տխուր նայեց մարգարտի որսի մասին իր չվերջացրած ակնարկին և գնաց Օկլենդի դպրոցը։ Երբ նա մի քանի օրից էլի ներկայացավ այնտեղ, որպեսզի արդյունքն իմանա, նրան հաղորդեցին, որ բոլոր առարկաներից տապալվել է, բացի քերականությունից։

— Քերականությունը դուք հրաշալի գիտեք,— ասաց նրան պրոֆեսոր Հիլտոնը՝ հաստ ակնոցների միջից նրան նայելով,— բայց այլ առարկաներից դուք ոչինչ չգիտեք, իսկ ձեր պատասխանները Միացյալ Նահանգների պատմության շուրջը հրեշավոր են, այլ կերպ չի կարելի որակել,— պարզապես հրեշավոր։ Ես ձեզ խորհուրդ կտայի...

Պրոֆեսոր Հիլտոնը լռեց և տհաճ ու անտարբեր նայեց նրան, ինչպես իր անոթներից մեկին։ Նա ֆիզիկայի պրոֆեսոր էր, մեծ ընտանիք ուներ, քիչ ռոճիկ էր ստանում և տիրապետում էր դիտելիքների ահագին պաշարի՝ այնպես անգիր արած, ինչպես Թուրքակն է անգիր անում բառերը։

— Այո՛, սըր— խոնարհաբար ասաց Մարտինը՝ ափսոսալով, որ պրոֆեսոր Հիլտոնի փոխարեն նրա հետ չի խոսում դրադարանի տեղեկանքի բաժնի պաշտոնյան։

— Ես ձեզ խորհուրդ կտայի երկու տարի էլ սովորել նախնական դպրոցում։ Մնաք բարով։

Այդ անհաջողությունը շատ էլ չվրդովեցրեց Մարտինին, բայց նա ապշեց տեսնելով, թե ինչպես վշտացավ Ռութը, երբ նա հաղորդեց նրան պրոֆեսոր Հիլտոնի կարծիքը։ Ռութի վշտանալն այնքան ակներև էր, որ Մարտինն ինքն էլ ափսոսաց իր տապալման մասին՝ գլխավորապես Ռութի համար։

— Տեսնո՞ւմ եք,— ասաց աղջիկը,— ես ճիշտ էի ասում։ —Դուք ավելի բան գիտեք, քան ուսանողներից ոմանք, բայց չեք կարողանում քննություն տալ։ Դրա պատճառն այն է, որ դուք սովորել եք ի միջի այլոց, հարևանցի։ Դուք պիտի սովորեք որոշ սիստեմով, իսկ դրա համար հարկավոր են լավ ուսուցիչներ։ Գիտելիքները պիտի լինեն հիմնավոր։ Պրոֆեսոր Հիլտոնն իրավացի է, և ես որ ձեր տեղը լինեի կգնայի երեկոյան տարրական դպրոց։ Մեկուկես տարում դուք կավարտեք դասընթացը և կխնայեք վեց ամիս։ Բացի այդ, ցերեկները դուք ժամանակ կունենաք գրելու կամ այլ աշխատանքով պարապելու, եթե ձեզ չհաջողվի գրամ շահել գրչի աշխատանքով։

«Իսկ եթե ցերեկները ես պիտի աշխատեմ և երեկոները դպրոց գնամ, հապա ե՞րբ պիտի տեսակցեմ ձեզ հետ»— դա էր Մարտինի մեջ ծագած առաջին միտքը, որը նա վախեց արտահայտել։ Դրա փոխարեն նա ասաց։

— Շատ երախտագիտական դրդմունք է ինձ համար երեկոյան դպրոց հաճախելը։ Իհարկե, ես կհաճախեի, եթե

գիտենայի, թե արժե։ Սակայն իմ կարծիքով չարժե։ Ես ինքս կարող եմ ավելի շուտ սովորել այդ բոլորը, քան դպրոցական ուսուցիչների հետ պարապվելով։ Դա կլինի ժամանակի աննպատակ վատնում (նա մտածեց աղջկա մասին, նրան ձեռք բերելու մասին), իսկ ես չեմ կարող ժամանակ վատնել։ Ես ժամանակ չունեմ։

— Բայց չէ՞ որ ձեզ հարկավոր է այնքան շատ բան անել։

Աղջիկը սիրալիր նայեց նրան։ Մարտինը մտքում իրեն անվանեց կոպիտ անասուն նրա համար, որ համարձակվեց հակաճառել նրան։

— Ֆիզիկայի և քիմիայի համար հարկավոր են լաբորատորիաներ,— ասաց Ռութը։— Դուք երբեք չեք կարող ինքնուրույն կերպով գլուխ հանել գրահաշվից և երկրաչափությունից։ Ձեզ անհրաժեշտ է ղեկավար, փորձառու մասնագետ-մանկավարժներ։

Մարտինը մի բոպե լռեց՝ ուշի ուշով կշռադատելով, թե ինչպե՞ս ավելի լավ պատասխանի նրան։

— Մի՛ կարծեք, որ ես գոռոզանում եմ,— ասաց նա,— բանը իսկի էլ դրանում չի։ Ես այն զգացումն ունեմ, որ հեշտությամբ կարող եմ սովորել ամեն բան։ Ես ինքս կարող եմ սովորել ամեն բան։ Ես այնպես եմ ձգտում ուսման, ինչպես բաղը ջրին։ Դուք ինքներդ տեսաք, թե ես ինչպես հաղթահարեցի քիրականությունը։ Ես ուսումնասիրել եմ շատ այլ բաներ, որ դուք երևակայել անգամ չեք կարող, թե ինչքա՞ն շատ... Բայց չէ՞ որ ես դեռ նոր եմ սկսել սովորել։ Սպասեցեք մինչև ես կուսանամ... Նա մի բոպե կարկամեց, իսկ հետո հաստատ ասաց,— հարակայություն։ Ես դեռ նոր եմ սանում իրերի առաջին իրական հասկացողություն։ Ես նոր եմ շարք մտնում...

— Ի՞նչ է նշանակում «շարք մտնել»,— ընդմիջեց աղջիկը։

— Ասենք հասկանալ, պարզել, թե ի՞նչը ինչին է վերաբերում։

— Այդ նախադասությունը բոլորովին անիմաստ է,— ասաց դարձյալ Ռութը։

Մարտինը վճռեց այլ կերպ արտահայտվել։

— Ես միայն հիմա եմ սկսում հասկանալ ուղղությունը, թե ո՛ւր եմ գնում։

Աղջիկը խղճահարությունից այս անգամ լուռ մնաց, և Մարտինը շարունակեց.

— Դիտությունն ինձ թվում է ղեկապետի ձեղնախցիկ, ուր պահվում են ծովային քարտեզները։ Երբ դրադարան եմ գնում, ես միշտ դրա մասին եմ մտածում։ Ուսուցչի գործն է աշակերտին հերթով ծանոթացնել բոլոր քարտեզներին։ Ուրիշ ոչինչ։ Նա մի տեսակ ուղեցույց է։ Նա իր դիսից ոչինչ չի կարող հնարել։ Նա ոչ մի նոր բան չի ստեղծում։ Քարտեզներում կա ամեն բան և նա միայն պետք է ցույց տա նորեկին որտե՛ղ ի՛նչ կա, որպեսզի նա ճամփին չմոլորվի։ Իսկ ես չեմ մոլորվի։ Ես հոտառություն ունեմ։ Իմ նայվածքը թափանցրում է ամեն բան... Նորի՞ց ինչ-որ բան սխալ ասացի։

— «Թափանցրում» չէ, այլ «թափանցում»,— ասաց Ռութը։

— Ճիշտ է, թափանցում,— կրկնեց նա երախտագիտությամբ,— իմ աչքը թափանցում է ամեն բան։ Ի՞նչ էի ասում, հա՛, կան մարդիկներ...

— Մարդիկ,— ուղղեց աղջիկը։

— Կան մարդիկ, որոնց հարկավոր են ուղեցույցներ։ Դա այդպես է։ Իսկ ինձ թվում է, որ ես կարող եմ յոլա գնալ առանց նրանց։ Ես արդեն բավական շրջել եմ այդ քարտեզների մոտ և գիտեմ, թե որոնք են ինձ հարկավոր. գիտեմ նաև, թե ինչ ծովափեր եմ հետազոտելու։ Ես ինքս ավելի շուտ կընտրեմ իմ մարշրուտը։ Նավատորմի արագությունը միշտ չափվում է ամենադանդաղաշարժ նավի արագությամբ։ Նույնն է և դպրոցի վերաբերմամբ։ Ուսուցիչները պետք է ընթանան հետամնաց աշակերտների քայլով, իսկ ես մենակ կարող եմ առաջ գնալ։

«Բայց ես կցանկանայի ավելի հաստատուն քայլել ձեզ հետ»,— ուզում էր ավելացնել նա։ Նրա աչքի առաջ բացվեց անսահման աշխարհի տեսարանը՝ արևաշող տարածություններով, ուր նա աստղաբերձ ճամփաներով թռչում է Ռութի հետ ձեռք-ձեռքի և աղջկա բաց ոսկեգույն մազերը, ծածանվելով, հպում են նրա այտերին։ Իսկույն նա զգաց իր խոսքերի խղճուկ անզորությունը։ Աստվա՜ծ իմ, եթե նա կարողանար պատմել աղջկան այդ ամենի մասին այնպես, որ նա էլ կարողանար տեսնել այն, ինչ տեսնում էր ինքը։ Նրան շարչարում էր բուռն, տանջալից ու անպարտելի մի ցանկություն—նկարել աղջկան այն կերպարները, որոնք անկոչ կերպով հանկարծ առաջացան իր հիշողության հայելու վրա։ Եվ հանկարծ նա հասկացավ։ Հենց այդ է գաղտնիքի բանալին։ Չէ՞ որ այդպես են անում մեծ վարպետները—բանաստեղծներն ու գրողները։ Նրանց մեծության գաղտնիքը հենց դրանումն է։ Նրանք կարող են բառերով արտահայտել այն բոլորը, որ տեսնում են, մտածում և զգում։ Արևի տակ նիրհող շները հաճախ վնգստում և հաչում են, բայց չեն կարող բացատրել, թե ի՞նչը ստիպեց նրանց վնգստալ և հաչել։ Հո ինքն էլ ետ չի մնում արևի տակ նիրհող շնից, ինքն էլ է տեսնում հրաշալի, հեքիաթային երազներ, բայց միայն կարող է վնգստալ ու հաչել Ռութի վրա։ Հիմա արդեն բավ է քնել արևի տակ։ Նա պիտի սովորի, աշխատի մինչև աչքերն ու լեզուն կբացվեն, մինչև կկարողանա բաժանել նրա հետ իր տեսիլքների հեքիաթային գանձը։ Օ՜հ, կան մարդիկ, որոնք գիտեն իրենց մտքերն արտահայտելու գաղտնիքը, գիտեն բառերը դարձնել իրենց հնազանդ ստրուկներ, կապակցել նրանց այնպես, որ առաջանում է ինչ-որ նոր բան, և այդ նորը ավելի շատ է, քան առանձին նշանակությունների պարզ գումարը։ Նա խորապես ցնցված էր այն մտքով, որ մի պահ թափանցեց՝ վաղուց նրան տանջող գաղտնիքը, և դարձյալ նրա աչքին շողացին արևոտ և աստղալից տարածություններ։ Վերջապես

նա ուշքի եկավ, տիրող լռությունից ապշած, և տեսավ, որ Ռութը նայում է նրան ուրախ ժպիտով։

— Ես հենց նոր երազում էի արթմնի, — ասաց Մարտինը, և լսելով իր այդ բառերը՝ սիրտն ուժեղ տրոփեց։

Ինչպե՞ս գտավ նա այդ բառերը։ Դրանք ճիշտ բացատրեցին իրենց խոսակցության այն ընդմիջումը, որ առաջացավ նրա տեսիլի կապակցությամբ։ Դա հրաշք էր։ Նա դեռ երբեք այդպես հիանալի չի արտահայտել գեղեցիկ մտքեր։ Բայց չէ՞ որ նա երբեք չի էլ փորձել։ Հիմա ամեն ինչ պարզ է։ Նա չի փորձել։ Սուինբեռնը, Տեննիսոնը, Կիպլինգը և այլ մեծ բանաստեղծներ փորձել են և դրանց այդ հաջողվել է։ Նա հիշեց իր «Մարգարիտ որսացողները»։ Նա երբեք չի փորձել բառերով պատկերացնել՝ իր մեջ ապրող գեղեցկությունը։ Եթե նա փորձեր, այդ պատմվածքը բոլորովին այլ գույն կստանար։ Նա համարյա ոսկաց մտածելով, թե ինչքա՛ն գեղեցիկ բաներ նա կարող էր նկարագրել, իսկ երևակայությունը տանում էր նրան ավելի հեռուն, և նա հանկարծ մտածեց. իսկ եթե նա իրեն հուզող ամբողջ գեղեցկությունն արտահայտի հնչեղ, քնքուշ ոտանավորո՞վ, ինչպես անում են այդ մեծ բանաստեղծները։ Արտահայտել թեկուզ իր սերը Ռութի նկատմամբ, այդ սիրո խորհրդավոր վայելքն ու հոգեկան վսեմությունը։ Ինչ՞ու նա չի կարող անել այն, ինչ անում են մեծ բանաստեղծները։ Նրանք երգում են սերը։ Ինքն էլ կերգի։

— Սատանա՛ն տանի։

Այդ բացադանչությունն իր ականջին հնչեց որպես շանթի հարված։ Երազներով տարվելով՝ նա բարձրաձայն արտասանեց այդ խոսքը։ Արյունը խփեց նրա երեսին՝ իրար հաջորդող ալիքներով, մինչև որ ամոթից շիկնեցրեց նրա բրոնզագույն դեմքը՝ վզից սկսած մինչև մազերի արմատը։

— Ես... ես... ներեցեք, խնդրեմ,— շշնջաց նա։— Ես խորասուզվել էի մտածմունքների մեջ...

— Դուք այս ասացիք այնպիսի շեշտով, կարծես աղո-

թելիս լիներ,—աղջիկը քաջությամբ փորձեց կատակել, բայց նրա ներսում ամեն ինչ սարսռում էր։

Կյանքումն առաջին անգամն էր, որ աղջիկն իր ծաղրի բերնից լսում էր այդպիսի հայհոյական խոսք և խորապես ցնցվեց ոչ միայն նրա համար, որ դա վիրավորեց իր ականջը և բարեկրթության զգացմունքը,—աղջկան վախեցրեց բամու այն խիստ հոսանքը, որը հանկարծ ներխուժեց խնամքով ծածկված նրա այն պարտեզը, որի մեջ անցել է նրա պատանեկությունը։

Եվ սակայն աղջիկը ներեց նրան և զարմացավ իր ներողամտության վրա։ Չգիտես ինչու՝ դժվար չէր ներել Մարտինին։ Պայմանները չեն թույլատրել, որ նա այլ մարդկանց նման լինի, բայց նա աշխատում է ուղղել այդ և արդեն շատ բան է ձեռք բերել այդ ուղղությամբ։ Աղջկա մրտքովն էլ չէր անցնում, թե կան այլ պատճառներ, որոնք ավելի պարզ են բացատրում նրա ներողամտությունը։ Ռութը իսկական քնքուշ զգացումներ էր տածում Մարտինի նկատմամբ, բայց ինքը չէր կռահում այդ բանը։ Եվ չէր էլ կարող կռահել։ Աղջիկը հանգիստ ապրել էր իր քսանչորս տարին՝ առանց ոչ մի անդամ զգալու սիրային թեկուզ թեթև հրապուրանք, չգիտեր վերլուծել իր զգացումները և, գաղափար չունենալով սիրո ջերմացնող բոցի մասին, չէր հասկանում, թե հիմա սերն է ջերմացնում նրան։

ԳԼՈՒԽ XI

Մարտինը նորից ձեռնարկեց իր «Մարգարիտ որսացողներին» և հավանական է, շուտով կվերջացներ այդ պատմվածքը, եթե չտարվեր ոտանավորներ գրելու ցանկությամբ։ Նա գրում էր սիրային ոտանավորներ, որոնց ոգեշնչողն էր Ռութը, բայց նա չէր կարողանում վերջացնել նրանցից ոչ մեկը։ Չէր կարելի կարճ ժամանակամիջոցում տիրապե-

տել բանաստեղծության ազնիվ արվեստին։ Ոտանավորի հանգը, չափը, ընդհանուր կառուցվածքը ինքնրստինքյան բավական բարդ էին, սակայն, բացի այդ բոլորից, կար և ինչ-որ անհասկանալի բան, որը նա նկատում էր մեծ բանաստեղծների ոտանավորներում, բայց ոչ մի կերպ չէր կարողանում ներդրել իր ոտանավորներում։ Դա հենց բանաստեղծության ոգին էր, որը նրան ոչ մի կերպ չէր հաջողվում։ Մարտինին դա թվում էր որպես մի շող, պատած հրեղեն մշուշով, որը, ամեն անգամ նրան մոտենալիս, ցրվում էր, իսկ լավագույն դեպքում հաջողվում էր բռնել միայն նրա թուլաները, շարադրել առանձին գեղեցիկ տողեր, որոնք իր ուղեղում հնչում էին իբր երաժշտություն կամ սահմանցնում էին իր աչքի առաջով որպես աղոտ տեսիլքներ։ Դա տանջում էր նրան։ Գեղեցիկ զգացումները պահանջում էին արտահայտվել, իսկ նրա դրչից դուրս էին դալիս իբր սովորական պրոզայիկ նախադասություններ։ Մարտինը բարձրաձայն կարդում էր իրեն համար իր ոտանավորները։ Չափաբերությունը պահպանված էր ըստ բոլոր կանոնների, հանգերն ու ռիթմը նույնպես տեղին էին, բայց ավա՜ղ, նրանց մեջ չկար ոչ հուր, ոչ վսեմ ներշնչում։ Նա բոլորովին չէր հասկանում, թե դա ինչի՞ց է առաջանում և երբեմն հուսահատված, վերսկսում էր գրել իր պատմվածքը։ Արձակն ավելի հլու գործիք էր նրա ձեռքում։

Շարունակելով իր պատմվածքը մարդարիտ որսագողների մասին, Մարտինը գրեց և այլ ակնարկներ—ծովային ծառայության, կրիաներ որսալու, հյուսիս-արևելյան պասատի մասին։ Հետո, իբր փորձ, նա սկսեց գրել սյուժետային մի փոքր պատմվածք և տարվելով այդ ցանկությամբ, միանգամից գրեց վեց հատ և ուղարկեց դրանք զանազան ժուռնալների։ Նա գրում էր լարված և եռանդուն՝ առավոտից մինչև երեկո, մինչև անգամ ուշ գիշեր, բացի այն ժամանակից, երբ հաճախում էր գրադարան կամ այցելում էր Ռութին։ այդ օրերին Մարտինն անսովոր երջանիկ էր, նրա կյանքը լի էր և գեղեցիկ, ստեղծագործական տենդը երբեք

չէր լրում նրան։ Մանկությունը ուրախություն էր, որը նա մինչև այդ համարում էր ստանձնահատկություն, հիմա մոռացել էր և իրենց նրան շրջապատող ամեն բան — փառած բանջարեղենի և ծառաստանի հոտը, քրոջ խղճալի տեսքը և միասներ Հիպոլիտոսիմի հեգնող դիմագիծը — այդ բոլորը երազ էր թվում նրան։ Իրական աշխարհը գոյություն ուներ միայն նրա ուղեղում, և նրա գրած պատմվածքները այդ աշխարհի բնակիչներն էին։

Օրերը շատ կարճ էին թվում,— չափազանց շատ էին դասերը այն մարդկերը, որ նա ցանկանում էր թափանցել։ Նա կրճատեց իր քունը մինչև օրական հինգ ժամ և համոզվեց, որ դա բավարար է։ Մինչև անգամ փորձեց քնել միայն չորսուկես ժամ, բայց ստիպված էր ափսոսալով վերադառնալ հինգժամյա նորմային։ Բոլոր մնացած ժամանակը նա խանդավառությամբ հատկացնում էր իր պարապմունքներին, ակամա ընդհատում էր դրելը՝ ուսումով զբաղվելու համար, ընդհատում էր և ուսումը գրագրան դնալու համար, դանդաղում էր հեռանալ դիտության զեկապետի ձեղնախցիկից և ցավելով էր բաժանվում այն խորհրդավոր զրողների պատմվածքներով լի ժուռնալների ընթերցումից, որոնց հաջողվել էր սաղացնել իրենց ապրանքը։ Երբ Մարտինը այցելում էր Ռութին, ամեն անգամ վեր կենալիս ու դուրս գալիս նրան հարկ էր լինում կարծես պոկել աղջկան իր սրտից. իսկ դուրս գալով նրա մոտից՝ աճապարանքով վազում էր մութ փողոցներով, որպեսզի ըշտապի վերադառնալ գրքերին և հնարավոր չափով քիչ ժամանակ կորցնի։ Սակայն ամենադժվարն էր փակել գրահաշվի կամ բնագիտության դասագիրքը, մի կողմ գցել գրիչն ու տետրակը և վճռել փակել հոգնած աչքերը։ Թեկուզ կարճ ժամանակով դուրս ընկնել կյանքից—դա սարսափելի էր թվում Մարտինին։ Նրան մխիթարում էր միայն այն գիտակցությունը, թե հինգ ժամ հետո ժամացույցը կզարթեցնի նրան։ Նա կկորցնի միայն հինգ ժամ, որից հետո ժամացույցի պանդի զիլ զրնգոցը կազատի նրան անօգուտ ինքնամոռա-

ցումից, և նրա տրամադրության տակ կլինի լրիվ տասնինը ժամ աշխատանքի համար։

Ժամանակն անցնում էր։ Մարտինի մոտ փողը վերջանում էր, իսկ հոնորար դեռ չէր ստացվում։ Մի ամիս անց նա ետ ստացավ «Պատանեկության ուղեկցին» ուղարկած ձեռագիրը։ Մերժումը գրված էր շատ փափկանկատ ձևով, այնպես որ Մարտինը մինչև անգամ լավ տրամադրվեց հրատարակչի նկատմամբ։ Նա նույն համակրանքը չբղկաց «Սան-Ֆրանցիսկոյի տեսաբանի» հրատարակչի վերաբերմամբ։ Երկու շաբաթ սպասելուց հետո Մարտինը գրեց նրա խմբագրության, մի շաբաթ անց նորից գրեց։ Ի վերջո նա գնաց խմբագրատուն՝ անձամբ խոսելու խմբագրի հետ։ Սակայն շիկակարմիր մազերով պատանու կերպարով մի կերբերոս, որը պահապան էր կանգնած դռանը, թույլ չտվեց նրան այդքան նշանավոր մի անձնավորության տեսակցության արժանանալու։ Հինգերորդ շաբաթվա վերջում Մարտինի ձեռագիրը վերադարձվեց առանց որևէ բացատրության։ Ձկար ոչ մերժում, ոչ էլ բացատրական նամակ։ Շուտով վերադարձվեցին նույնպես մնացած ձեռագրերը, որոնք նա ուղարկել էր Սան-Ֆրանցիսկոյի խոշոր ժուռնալներին։ Մարտինն ուղարկեց իր ստեղծագործությունները արևելյան նահանգների սրաթերթերին, բայց շատ չանցած ետ ստացավ նրանք՝ մերժումի տպագրված ծանուցագրերով։

Նույն բախտն ունեցան և Մարտինի պատմվածքները։ Նա մի քանի անգամ կարդաց դրանք, և դրանք այնպես դուր եկան իրեն, որ նա չէր կարող ըմբռնել այդքան վճռական մերժումները, մինչև որ մի թերթում կարդաց, որ նյութերը պիտի ներկայացվեն խմբագրության անպայման մեքենագրված ձևով։ Ամեն ինչ պարզվեց։ Անկասկած խմբագիրներն այնքան են զբաղված, որ չեն կարող ժամանակ վատնել՝ անընթեռնելի ձեռագրերի ուսումնասիրության վրա։ Մարտինը վարձով վերցրեց մի գրամեքենա և մի ողջ օր հատկացրեց նրա վրա տպագրել սովորելու համար։ Նա ամեն օր ուսում էր մեքենայի վրա նույն օրվա ընթացքում իր գրածը,

աստիճանաբար տպագրելով և իր նախորդ երկերը։ Նա շատ զարմացավ, որ մեքենադրվածներն էլ սկսեցին վերադարձվել նրան։ Մարտինի դեմքը ստացավ խիստ արտահայտություն, ծնոտն ավելի ցցվեց։ Նա համառորեն շարունակում էր ուղարկել իր նյութերը նորանոր հասցեների։

Վերջապես նա կռահեց, որ շատ դժվար է իրեն համար դատել իր երկերը։ Նա վճռեց փորձել նրանց Գերտրուդի վրա և կարդաց իր մի քանի պատմվածքները։ Քրոջ աչքերը փայլեցին և նա, հպարտ նայելով իր եղբորը, ասաց.

— Դա հիանալի է, որ դու այդպիսի բաներ ես գրում։

— Այո՛, այո՛,— պատասխանեց նա անհամբեր։— Դու ասա, թե հավանո՞ւմ ես։

— Ի՞նչ ես ասում,— պատասխանեց քույրը,— իսկապես հրաշալի է. դրանք չափազանց հուզեցին ինձ։

Մարտինը հասկացավ, որ իր պատմվածքներում ոչ ամեն բան բոլորովին պարզ է քրոջ համար։ Գերտրուդի բարեհոգի դեմքը արտահայտում էր վարանում։ Մարտինը սպասում էր։

— Ասա՛, Մարտ,— ասաց նա երկարատև լռությունից հետո,— վերջը ի՞նչ եղավ։ Այդ տղան, որ այնքան փքուն խոսում է, ամուսնացա՞վ աղջկա հետ։

Եվ միայն այն բանից հետո, որ Մարտինը բացատրեց նրան պատմվածքի վերջը, որը նրան թվում էր գեղարվեստորեն արդարացած, Գերտրուդը ասաց.

— Ես այդպես էլ կարծում էի։ Իսկ ինչո՞ւ դու ուղղակի այդպես էլ չես գրել։

Գերտրուդին մի տասնյակ պատմվածքներ կարդալուց հետո նա հասկացավ, որ քրոջը դուր են գալիս միայն բարեհաջող վերջացող պատմվածքները։

— Այս պատմվածքը շատ լավն է,— բացատրեց Գերտրուդը՝ տաշտից բարձրացնելով գլուխը և հառաչանքով սրբելով իր ճակատը կարմիր, խաշած ձեռքով,— միայն շատ ծանր ազդեց ինձ վրա։ Լացս էր գալիս։ Առանց այն էլ աշխարհում տխուր բաներ շատ կան։ Երբ ես լսում եմ մի

լավ բան, ինձ ավելի լավ եմ զգում։ Եթե տղան ամուսնանար աղջկա հետ և... Չե՞ս չարանա ինձ վրա, Մարտ,— հարցրեց նա շփոթված։—Կարող է պատահել, ինձ այդպես թվում է նրա համար, որ ես շատ եմ հոգնած։ Բայց պատմվածքը սքանչելի է։ Իսկապես սքանչելի։ Որտե՞ղ ես ուզում վաճառել այն։

— Դա արդեն այլ հարց է,— ծիծաղեց նա։

— Իսկ եթե հաջողվի հրատարակել այն, ինչքա՞ն գրամ կստանայիր դրա համար։

— Ա՜, մի հարյուր դոլլար ամենաքիչը՝ այժմյան գնով։

— Օհո՜, հուսամ, որ քեզ կհաջողվի վաճառել այն։

— Վատ գոմար չի, այնպես չէ՞։— Եվ նա հպարտությամբ ավելացրեց,— նկատի ունեցիր, որ ես գրել եմ երկու օրում։ Օրական հիսո՛ւն դոլլար։

Մարտինը շատ էր ցանկանում կարդալ իր պատմվածքները Ռութին, բայց չէր համարձակվում։ Նա վճռեց սպասել, մինչև, որ դրանցից որևէ մեկը կտպվի, համենայն դեպս Ռութն այդ դեպքում ավելի լավ կգնահատի նրա ջանքերը։ Միաժամանակ նա շարունակում էր սովորել։ Ոչ մի արկած այնպես հրապուրիչ չէր թվում նրան, ինչպես ճամփորդությունն դեպի բանականության այդ չհետախուզված խորքերը։ Նա գնեց բնագիտության և քիմիայի դասագրքեր և գրահաշվի հետ միաժամանակ ուսումնասիրում էր բնագիտության օրենքներն ու դրանց ապացույցները։ Լաբորատորիական փորձերին նա կուրորեն հավատում էր՝ առանց անձամբ փորձելու իսկ նրա հզոր երևակայությունը օգնում էր նրան կարծես ակներև տեսնելու քիմիական ամեն տեսակ ռեակցիաներ, և նա ավելի լավ էր հասկանում նրանք, քան փորձերին ներկա գտնվող ուսանողները։ Մարտինը դասագրքերի էջերից աստիճանաբար սկսում էր տեսնել բնության ու աշխարհի գաղտնիքները։ Առաջ նա ընդունում էր աշխարհը որպես աշխարհ, որպես տվյալ մի բան, իսկ հիմա սկսել է հասկանալ աշխարհի կառուցվածքը, ուժերի խաղն ու փոխհարաբերությունը, մատերիայի կերտվածքը։ Նրա խելքը հի-

մա աշխատում էր բացատրել վաղուց ծանոթ իրեր. լծակներն ու ճախարակները հիշեցրին նրան կարապիկներն ու ամբարձիկ կրանները, որոնց հետ նա գործ էր ունենում ծովում։ Նավագնացության թեորիան, որը նավերին հնարավորություն էր տալիս չշեղվել ճանապարհից բաց ծովում, հանկարծ պարզ ու հասկանալի դարձավ։ Նա ըմբռնեց փոթորիկների, անձրևի, մակընթացության դաղտնիքները, պասատ քամիների ծագման պատճառը և մինչև անգամ մտածեց, թե շատ չի՞ շտապել գրելու իր ուսնարկը հյուսիս-արևելյան պասատի մասին։ Համենայն դեպս զգում էր, որ հիմա ավելի լավ կգրի այն։ Մի օր նա Արտուրի հետ միասին գնաց համալսարան և շունչը պահելով, կրոնական երկյուղածությամբ նայում էր լաբորատորիայում կատարվող փորձերին և լսում էր ուսանողներին դասախոսություն կարդացող պրոֆեսորին։

Սակայն Մարտինը չքեց իր գրական պարապմունքները։ Նրա դրչի տակից հոսում-թափվում էին մանր պատմվածքներ, և նա դեռ ժամանակ էր գտնում գրելու ժուռնալներում տպվածների նման ոտանավորներ։ Հետո հանկարծ գլուխը կորցրեց և երկու շաբաթում գրեց մի ողբերգություն անհանգ ոտանավորով, որը կես դյուժին հրատարակիչներ, ի մեծ զարմանս իրեն, անմիջապես խոտանեցին։ Մի օր Գենլիից երկար կարդալուց հետո, նա գրեց ծովի մասին ոտանավորների մի ամբողջ սերիա՝ «Պոեմներ հիվանդանոցի մահճից»-ի օրինակով։ Դրանք հասարակ ոտանավորներ էին, պայծառ և զուսնեղ՝ ռոմանտիկայով և մարտական ոգով լի։ Մարտինն անվանեց դրանք «Ծովի երգեր» և վճռեց, որ դրանք իր գրածներից ամենալավերն են։ Այդ սերիան բաղկացած էր երեսուն ոտանավորից. նա գրել էր օրական մի ոտանավոր, այն էլ արձակի վրա իր օրական աշխատանքը վերջացնելուց հետո, որը սովորաբար միջակ դրողից կիսլեր մի ամբողջ շաբաթ։ Սակայն Մարտինի համար աշխատանքը ինքնաբավության ոչ մի նշանակություն չուներ։ Նա տիրապետեց խոսքի ձիրքին, և դեղեցիկի մասին իր բոլոր երազներն

ու մտքերը, որոնք երկար տարիներ անխոս ապրում էին նրանում, անդիմադրելի և հզոր հոսանքով դուրս թափվեցին։

Մարտինը ոչ ոքի ցույց չտվեց իր «Ծովի երգերը» և ոչ մի տեղ չուղարկեց դրանք։ Խմբագիրների նկատմամբ նրա հավատը կորել էր։ Սակայն այս անգամ նրանց չհավատալուն համար չէր, որ ձեռնպահ մնաց իր ստեղծագործությունն ուղարկելուց։ Նրա համար այդ գրվածքը տոգորված էր այնպիսի գեղեցկությամբ, որ նա ուզում էր բաժանել այդ միայն Ռութի հետ այն երանելի պահին, երբ նա վերջապես կհամարձակվի կարդալ նրան իր երկերը։

Իսկ մինչ այդ նա վճռեց պահել այդ բանաստեղծություններն իր մոտ, կարդում էր դրանք բարձրաձայն կրկին ու կրկին, մինչև որ բերանացի սովորեց։

Զարթուն վիճակում նա լարված ապրում էր ամեն մի վայրկյանը և շարունակում էր ապրել մինչև անգամ քնած ժամանակ։ Նրա գիտակցությունը, բողոքելով հինգժամյա հարկադրական անգործության դեմ, շարունակում էր զարգացնել օրվա ընթացքում իր խոհերն ու ապրումները ծնելով անհավատալի ու անհեթեթ տեսիլքներ։ Այդպիսով նա երբեք չէր հանգստանում, և նրա տեղը՝ ֆիզիկապես նվազ պնդակազմ և ոգով նվազ առողջ մի ուրիշը կտապալվեր։ Նրա տեսակցությունները Ռութի հետ ավելի ու ավելի սակավ էին տեղի ունենում. մոտենում էր հունիսը, որի սկզբին աղջիկը քննություններ պետք է տար և ստանար համալսարանական դիպլոմ։ Արվեստների բակալա՛վր։ Երբ Մարտինը մտածում էր աղջկա այդ կոչումի մասին, նրան թվում էր, որ Ռութը թռչում-հեռանում է նրանից դեպի այնպիսի բարձունքներ, ուր արդեն չի կարելի հասնել նրան։

Բայց և այնպես շաբաթական մի օր Ռութը հատկացնում էր Մարտինին, և նա սովորաբար այդ օրը ճաշի էր մնում Մորդերի տանը և ճաշից հետո երաժշտություն էր լսում։ Դրանք նրա համար տոնական օրեր էին։ Մորդերի տանը ողջ մթնոլորտը հակապատկերն էր այն կեղտոտության, որի մեջ ապրում էր Մարտինը, իսկ Ռութի ներկա-

յությունն այնքան էր թեավորում նրան, որ ամեն անգամ, առն վերադառնալիս, նա մտովին ձգտում էր հասնել այդ լարձունքներին, ինչ էլ լինի։ Չնայած ստեղծագործական անդուսպ թափին և դեղեցկության ծարավին, որը տանջում էր նրան, նա վերջ ի վերջո աշխատում էր միայն սիրո համար։ Ամեն բանից առաջ նա սիրահարված էր և մնացած ամեն բան ստորադրում էր իր սիրուն։ Սիրային որոնումները նրա համար ամեն տեսակ հոգևկան որոնումներից ավելի կարևոր էին։ Աշխարհը նրան զարմանալի էր թվում ոչ թե նրա համար, որ բաղկացած է ինչ-որ խորհրդավոր օրենքների հիման վրա փոխադարձաբար ներգործող մոլեկուլներից և ատոմներից, այլ նրա համար, որ այնտեղ ապրում է Ռութը։ Այս աղջիկն այնպիսի մի հրաշք էր, որի մասին նա առաջներում երբեք չգիտեր, չէր երազել, մինչև անգամ չէր դուշակել։

Սակայն նրանց բաժանող տարածությունը շարունակ հուսահատեցնում էր Մարտինին։ Ռութը անսահմանորեն հեռու էր, և Մարտինը ոչ մի կերպ չէր կարողանում գտնել նրան մոտենալու միջոցը։ Անցյալում նա սովորաբար հաջողություն ուներ իր դասակարգի կանանց և աղջիկների միջև։ Բայց նա երբեք չի սիրել նրանց, իսկ Ռութին սիրեց։ Բանը նրանում չէր, որ Ռութը այլ դասակարգից է։ Մարտինի սերը նրան բարձրացրեց բոլոր դասակարգերից վեր։ Ռութը այլ էակ էր, այնքան տարբեր, որ նա մինչև անգամ չգիտեր, թե ինչպես մոտենալ նրան իր սիրով։ Ճիշտ է, որ ընդլայնելով իր տեսածներն և սովորելով ուղիղ խոսել՝ նա մոտեցել է աղջկան, նրանց միջև առաջացել են ընդհանուր լեզու, ընդհանուր թեմաներ, ճաշակներ ու շահեր, բայց սիրո ծարավը դրանով չէր բավարարվում։ Սիրահարի նրա երևակայությունը պարդևել է աղջկան այնպիսի սրբություն, այնպիսի անմարմնեղեն մարրություն, որ դա բացառում էր մարմնական ամեն մի մոտիկություն։ Ինքը՝ սերը հեռացնում էր աղջկան և անմատչելի էր դարձնում նրան։ Ինքը սերը խլում էր նրանից այն, ինչ նա այնքան ջերմորեն ցանկանում էր։

Եվ ահա մի գեղեցիկ օր նրանց բաժանող վիհի վրա մի պահ կամուրջ ձգվեց և այդ պահից հետո այդ վիհն արդեն այնքան լայն չէր թվում։ Նրանք նստած բալ էին ուտում, խոշոր սև բալեր, որոնց հյութը հիշեցնում էր բարկ գինին։ Եվ հետո, երբ աղջիկը սկսեց կարդալ նրան «Իշխանուհին», Մարտինը նրա շրթունքների վրա նկատեց բալի հյութը։ Մի պահ Ռութի աստվածայնությունը տատանվեց։ Ուրեմն նա մարմնեղեն արարած էր, նրա մարմինը ենթակա էր նույն օրենքներին, ինչ իր մարմինը, ինչ որ ամեն մի մարդու մարմինը։ Նրա շրթունքները նույնպես մարմնեղեն էին, ինչպես իր շրթունքները, և բալը նրանց վրա նույնպիսի հետքեր է թողել։ Եվ եթե նրա շրթունքները մարմնեղեն են, այդպիսին պետք է լինի մնացած ամեն ինչ։ Նա կին է, ինչպես ուրիշ ամեն կին։ Այս միտքը կարծես շանթահարեց նրան։ Դա իսկական մի հայտնություն էր Մարտինի համար։ Նա կարծես տեսավ երկնքից ընկնող արևը, կամ ներկա եղավ աստվածության սրբապղծմանը։

Երբ Մարտինը բոլորովին պարզեց իրեն համար այդ հայտնագործման իմաստը, զգաց, թե ինչպես իր սիրտը տրոփում և մղում է ձեռք բերել այս կնոջ սերը, որը ամենևին էլ երկնքից իջած ոգի չի, այլ սովորական մի կին՝ բալի հյութից աղարտված շրթունքներով։ Նա սարսռաց այդ ժպիրհ մտքերից, բայց նրա բանականությունն ու սիրտը հրճվում էին և համոզում նրան, որ նա իրավացի է։ Պիտի ենթադրել, որ Ռութը նկատեց Մարտինի տրամադրության այդ անակնկալ փոփոխությունը, որովհետև հանկարծ դադարեցրեց ընթերցումը, նայեց նրան և ժպտաց։ Մարտինի հայացքը սահելով անցավ նրա դեմքով՝ ծավի աչքերից դեպի շրթունքները, ուր երևում էին բալի հյութի հետքերը — մի փոքր բիծ, որը նրան խելահան էր անում։ Նրա ձեռքերը երկարեցին դեպի աղջիկը, ինչպես հաճախ երկարում էին դեպի այլ կանայք անցյալում, նրա անառակ կյանքի շրջանում։ Աղջիկը կարծես հակվեց դեպի նա և սպասում էր, և

Մարտինին հարկ եղավ պրկել իր ողջ կամքի ուժը, որպեսզի զսպի իրեն։

— Դուք ոչ մի բառ չլսեցիք,— ասաց Ռութը վիրավորված տոնով։ Եվ իսկույն ժպտաց նրան՝ հրճվելով նրա շփոթվածությամբ։ Մարտինը նայեց նրա հստակ աչքերի մեջ և հասկացավ, որ նա ոչինչ չի կռահել, թե ինչ է տեղի ունենում իր մեջ, և ամաչեց։ Նա համարձակվեց չափազանց հեռու գնալ իր մտքերով։ Նա չգիտեր ոչ մի կնոջ, որը չկռահեր, ոչ մեկին, բացի Ռութից։ Իսկ սա չկռահեց։ Ահա հենց այստեղ է տարբերությունը։ Ռութը բոլորովին այլ է։ Մարտինը զարհուրեց՝ մտածելով իր կոպտության և աղջկա անմեղության մասին, և նրանց միջև դարձյալ բացվեց անդունդը։

Կամուրջը քանդված էր։

Բայց և այնպես այս դեպքը մոտեցրեց նրան Ռութին։ Այս դեպքի հիշողությունը չէր անհետանում և միխթարում էր Մարտինին հիասթափությունների և տարակուսանքի րոպեներին։ Վիհն արդեն այնքան լայն չէր, ինչպես առաջ։ Նա շատ ավելի ճամփա է անցել, քան այն ճամփան, որն իրավունք է տալիս բակալավրի կոչումին։ Ճիշտ է, որ աղջիկը անարատ է, այնքան մաքուր, որ նա մինչև այդ չէր էլ իմանում, թե գոյություն ունի այդպիսի մաքրություն։ Բայց բալերը նրա շրթունքներին բծեր են թողնում։ Նա ենթակա է ֆիզիկական օրենքներին, ինչպես աշխարհում ամեն բան. նա պետք է ուտի որ ապրի, կարող է մրսել ու հիվանդանալ։ Սակայն դա չէ կարևորը։ Կարևորն այն է, որ աղջիկը կարող է զգալ քաղց ու ծարավ, տառապել տոթից ու ցրտից, հետևաբար կարող է զգալ և սեր, սեր դեպի տղամարդը։ Իսկ Մարտինը տղամարդ է։ Այդ դեպքում ինչո՞ւ ինքը չլինի այդ տղամարդը։ «Ես կնվաճեմ երջանկությունը,— շշնջում էր նա տենդագին։— Ես կդառնամ այդ տղամարդը։ Կկարողանամ դառնալ։ Ես կնվաճեմ երջանկությունը»։

ԳԼՈՒԽ XII

Մի երեկո, երբ Մարտինը շարշարվում էր մի սոնետի վրա և զուր էր աշխատում նկարագրել այնտեղ՝ իր ուղեղում կուտակված մշուշապատ, բայց սքանչելի կերպարները, նրան կանչեցին հեռախոսի մոտ։

— Կանացի ձայն է, շատ գեղեցիկ ձայն,— հեգնորեն ասաց Միստեր Հիգգինբոթամը՝ կանչելով։

Մարտինը մոտեցավ սենյակի անկյունում գտնվող հեռախոսին և նրա մարմնով մի տաք ալիք անցավ, երբ լսեց Ռութի ձայնը։ Չարշարվելով իր սոնետի վրա՝ նա մոռացել էր Ռութի գոյության մասին, բայց ծանոթ ձայնի հնչյունի վրա՝ սերը նոր թափով բռնկվեց նրա մեջ, շանթահարեց նրան։ Ի՞նչ ձայն էր դա։ Քնքուշ և քաղցրահնչյուն կարծես մի հեռավոր երաժշտություն լիներ, արծաթե զանգակների հնչյուն՝ բյուրեղային մաքրությամբ։ Սովորական մահկանացու կինը չէր կարող այդպիսի ձայն ունենալ։ Դրանում ինչոր երկնային բան կար, ոչ այս աշխարհից։ Ենթարկվելով դդացումների հեղեղին՝ նա հազիվ էր կարողանում հասկանալ, թե ի՞նչ էր ասում Ռութը, թեև աշխատում էր պահպանել զեմքի անդորրությունը՝ դիտենալով, որ Միստեր Հիգգինբոթամի մկան աչքերը սևեռված էին իրեն վրա։

Ռութն առանձնապես ոչինչ չասաց. նա այս երեկո ուզում էր Նորմանի հետ միասին գնալ հրապարակային դասախոսության, բայց — անախորժ բան — Նորմանի գլուխը սկսեց ցավել, և որովհետև տոմսերն արդեն գնված են, Մարտինը չի՞ ցանկանում նրա հետ գնալ, եթե զբաղված չէ։

Եթե զբաղված չլի՞։ Մարտինը հազիվ էր կարողանում զսպել իր ձայնի դողը։ Նա չէր հավատում իր ականջներին։ Մինչև այժմ նա հանդիպել էր աղջկա հետ միայն նրանց մոտ, տանը, և երբեք չէր համարձակվել հրավիրել նրան որևէ տեղ։ Հեռախոսի լսափողակը ձեռքին կանգնած՝ նա հանկարծ անհագթելի մի ցանկություն զգաց մեռնելու աղջկա համար, և նրա մտքում ծագեցին հերոսական կերպար-

ներ, սիրո համար անձնազոհության տեսարաններ։ Նա այն-քա՞ն ուժգին էր սիրում Ռութին, այնքա՞ն սարսափելի, այնքա՞ն անհույս։ Նա այնպիսի խելագար ուրախությամբ համակվեց՝ պատկերացնելով, որ աղջիկը դուրս կգա նրա հետ, դասախոսության կգնա նրա հետ, Մարտին Իդենի հետ, որ այդ պահին նրա միտքը ոչ մի այլ բան չընկավ՝ բացի նրա համար մեռնելուց։ Դա միակ բանն էր, որով նա կարող էր ապացուցել իր անսահման ու անշահախնդիր զգացումը։ Դա ամեն մի իսկական սիրահարի ծանոթ անձնուրացության ուժգին խոյանքն էր, որը հեռախոսով կարճատև խոսակցության ժամանակ, հրեղեն մրրիկի նման հափշտակեց նրան։ Մեռնել նրա համար,— մտածեց նա,— դա կնշանակի իսկապես ապրել ու սիրել։ Նա ընդամենը քսանմեկ տարեկան էր, ի դա նրա առաջին սերն էր։

Նա դողդոջուն ձեռքով կախեց լսափողը՝ իր նոր ապրած ցնցումից հետո թուլություն զգալով։ Նրա աչքերը փայլում էին, ինչպես հրեշտակի աչքեր, դեմքը այլակերպվել էր, կարծես ազատված լիներ երկրային աղտից և սուրբ ու անաղարտ դարձել։

— Ըհը՞, տեսակցությո՞ւն է նշանակվում,— չարամիտ թշշաց փեսան։— Իսկ գիտե՞ս, թե դա ինչով է վերջանում։ Ուղիղ ոստիկանական դատարանը կընկնես, սիրելիս։

Բայց Մարտինը չէր կարող միանգամից ցած իջնել բարձունքներից։ Մինչև անգամ այդ կոպիտ վարմունքը չէր կարող նրան վերադարձնել գետնին։ Նա զայրույթից ու գրգռումից բարձր էր կանգնած։ Նա դեռևս ամբողջովին գտնվում էր այն հրաշագեղ տեսիլքի ազդեցության տակ և, որպես աստվածություն, այդպիսի չնչին արարածներին կարող էր միայն կարեկցել։ Միստեր Հիգգինբոթամին նա չէր էլ նկատում։ Մարտինի աչքերը թեև նայում էին նրան, բայց չէին տեսնում նրան, և նա, կարծես քնի մեջ դուրս եկավ սենյակից զգեստը փոխելու համար։ Միայն այն ժամանակ, երբ նա, իր փոքր հայելու առաջ կանգնած, փողկապն էր կապում, նրա գիտակցությանը հասավ ինչ-որ անհաճո հրն-

չյուն։ Դա միստեր Հիդդինբոթամի՝ իր լսողության մեջ մնացած հոհոցն էր, որը նա կարծես նոր էր լսում։

Երբ Մորդերի տան դուսը նրանց ետևից փակվեց, և Մարտինը հասկացավ, որ գնում է փողոցով Ռութի կողքին, հանկարծ շփոթվեց։ Աղջկա հետ ման գալու ուրախությունը մթագնվեց չնախատեսված տարակույսներով։ Նա չգիտեր, ինչպե՛ս պահել իրեն։ Նա քանիցս տեսել էր, որ Ռութի շրջանակի մարդիկ դուրս են գալիս փողոց՝ տիկնոջ կամ օրիորդի հետ թևանցուկ։ Բայց դա միշտ չէր պատահում, և Մարտինը չէր իմանում, թե ընդունված է թևանցուկ ման գալ միայն երեկոները, թե՞ դուցե այդպես են ման գալիս միայն ամուսինները կամ եղբայրները քույրերի հետ։

Ռութի հետ միասին նախասենյակի սանդուղքներից իջնելիս՝ նա հիշեց Միննիին։ Միննին միշտ էլ մոդայի մոլի հետևող էր։ Երբ Մարտինը երկրորդ անգամ ման էր գալիս նրա հետ, աղջիկը նկատողություն արեց նրան, որ նա մայթի ներսի կողմից է քայլում, մինչդեռ իսկական ջենտլմենը, որևէ լեդիի հետ ման գալիս, միշտ պետք է քայլի դրսի կողմից։ Եվ Միննին սովորություն դարձրեց կոխել նրա ոտին, երբ նրանք անցնում էին փողոցի մյուս կողմը, որպեսզի նա չմոռանա քայլել դրսի կողմից։ Բայց Մարտինը չգիտեր, ո՞ր տեղից էր Միննին հանել քաղաքավարության այդ կանոնը, իրո՞ք ընդունված է դա բարձր դասում և հարկավո՞ր է հարգել այդ կանոնը։

Վերջ ի վերջո Մարտինը վճռեց, որ դրանից համենայն դեպս ոչ մի վատ բան չի պատահի, և երբ փողոց դուրս եկան՝ նա թողեց, որ Ռութն առաջ անցնի, իսկ ինքը սկսեց քայլել կողքից, մայթի դրսի եզերքից։ Սակայն այստեղ երկրորդ առեղծվածը երևան եկավ. հարկավո՞ր է նրան առաջարկել իր թևը։ Մինչև այժմ նա ոչ մի անգամ իր թևը չի առաջարկել որևէ կնոջ, որին ընկերակցել է։ Այն աղջիկները, որոնց հետ նա ման է եկել, կավալերների հետ թևան-

ցուկ մաև չէին գալիս։ Ծանոթության սկզբում նրանք պարզապես կողքից էին քայլում, իսկ հետո, ջանալով մութ նրբ բափոդոցներ ընտրել, քայլում էին՝ գլուխները դրած ուղեկցի ուսին, որը դրկում էր նրանց իրանը։ Սակայն այստեղ հարցը այլ կերպ էր։ Նա մի այլ շրջանակի աղջիկ էր։ Եվ Մարտինը չգիտեր, թե ինչպե՛ս վարվի։

Նրա մտքովն անցավ թեթևակի կռացնել իր աջ թևը, իբր թե պատահմամբ, ըստ սովորության։ Եվ այստեղ մի հրաշք տեղի ունեցավ։ Մարտինը զգաց, թե ինչպես աղջիկն իր ձեռքը դրեց նրա թևին։ Մի դուրեկան սարսուռ անցավ նրա մարմնով և մի քանի վայրկյան նրան այնպես թվաց, թե ոտքերը կտրվեցին գետնից, իսկ թիկունքին թևեր բուսան։ Բայց մի նոր բարդություն նրան վերադարձրեց դեպի իրականություն։ Նրանք անցան փողոցի մյուս կողմը, այնպես որ հիմա Մարտինը մայթի ոչ թե դրսի, այլ ներսի կողմն էր։ Ի՞նչ պետք է անել։ Թողնել նրա ձեռքը և անցնել մյո՞ւս կողմը։ Իսկ ի՞նչ անել, եթե կարիք լինի երկրորդ անգամ անցնել փողոցի այն կողմը։ Երրորդ անգա՞մ։ Այստեղ ինչ-որ բան այնքան էլ պարզ չէր, և Մարտինը վճռեց անտեսել կանոնը՝ տգեղ ձևանալով։ Բայց այդպիսի որոշումը ոչ բոլորովին բավարարում էր նրան և, մայթի ներսի կողմից քայլելով՝ նա սկսեց արագ ու հափշտակված խոսել, այնպես ձևացնելով, որ խոսակցությունից տարվելով մոռացավ տեղը փոխել։ Թող աղջիկը վերագրի այդ նրա խանդավառությանը։

Երբ նրանք անցնում էին Բրոդվեյով, Մարտինին մի նոր փորձություն էր սպասում։ Փողոցի լապտերների լույսի տակ նա հանկարծ տեսավ Լիզզի Կոնոլլիին և նրա ծիծաղկոտ ընկերուհուն։ Մի պահ, միայն մի պահ նա վարանեց, բայց անմիջապես հանեց գլխարկը և բարևեց։ Նա մտադիր չէր ամաչել իր դասակարգից, և նրա բարևը վերաբերում էր ոչ միայն Լիզզի Կոնոլլիին։ Աղջիկը պատասխանեց նրան գլխով անելով և խիզախորեն նայելով նրան իր դեղեցիկ ու ծաղրական աչքերով, որոնք բոլորովին նման չէին Ռութի հեզ և քնքուշ աչքերին։ Լիզզին իր հայացքով չափեց

նաև Ռութին և, ըստ երևույթին, միանգամից գնահատեց նրա արտաքինն ու զգեստը և հասկացավ նրա հասարակական դիրքը։ Մարտինը նկատեց, որ Ռութն էլ ուղղեց աղջկանը հարևանցի ու փաղաքշական մի հայացք, որը բավական էր նկատելու նրա և էժանագին հագուստը, և տարօրինակ վլխարկը, որոնցով այն ժամանակ սիրում էին պճնվել բանվորական շրջանակի աղջիկները։

— Ի՞նչ գեղեցիկ աղջիկ է,— ասաց Ռութը մի բոպե անց։

Մարտինը պատրաստ էր օրհնել նրան այդ խոսքի համար, բայց ասաց միայն.

— Չգիտեմ։ Ճաշակի բան է, ինչպես երևում է. ես նրան առանձնապես գեղեցիկ չեմ համարում։

— Ի՞նչ եք ասում։ Այդպիսի ուղիղ դիմագծեր հազարից մեկ են պատահում։ Նրա դեմքը այնքան մաքուր է, կարծես կամեյոն լինի։ Աչքերն էլ հիանալի են։

— Դուք գտնո՞ւմ եք,— անտարբեր ասաց Մարտինը, քանի որ նրա համար աշխարհի երեսին կար միայն մի գեղեցիկ կին, որը այս բոպեիս նրա կողքից է քայլում՝ իրեն հետ թևանցուկ։

— Եթե այդ աղջկան հագցնեին, ինչպես հարկն է, և սովորեցնեին, թե ինչպե՛ս պիտի պահի իրեն, հավատացնում եմ ձեզ, որ նա կնվաճեր բոլոր տղամարդկանց, նրանց թվում նաև ձեզ, միստեր Իդեն։

— Նրան պետք է ամենից առաջ խոսել սովորել,— պատասխանեց նա,— այլապես տղամարդկանց մեծամասնությունը չէր էլ հասկանա նրան։ Ես վստահ եմ, որ դուք կեսն էլ չեք հասկանա այն բոլորից, որ նա կասի ձեզ, եթե նա խոսի այնպես, ինչպես սովոր է։

— Անմիտ բան եք ասում։ Դուք նույնքան համառ եք, որքան Արտուրը, երբ ուզում եք ապացուցել մի բան։

— Իսկ դուք մոռացե՞լ եք, թե ինչպես էի խոսում ես, երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք։ Այժմ ես բոլորովին այլ կերպ եմ խոսում։ Իսկ այն ժամանակ ես էլ էի

խոսում այնպես, ինչպես այդ աղջիկը։ Բայց այդ ժամանակ պաշտպանում ես սովորեցի ձեր լեզուն և կարող եմ հավաստել ձեզ հասկանալի բառերով, որ դուք նրա լեզուն ոչ մի կերպ չեք հասկանա։ Իսկ դիտե՞ք, ինչո՞ւ է նա այդպես պահում իրեն։ Ես հիմա շարունակ մտածում եմ այնպիսի բաների մասին, որոնք առաջներում մտքովս էլ չէին անցնում,— և ես սկսել եմ հասկանալ շատ բան։

— Ինչո՞ւ նա այդպես է պահում իրեն։

— Նա արդեն մի քանի տարի է, ինչ աշխատում է ֆաբրիկայում։ Մատղաշ մարմինը մեղրամոմի պես փափուկ է, և ծանր աշխատանքը կաղապարում է նրան. այդպիսի մարմինը ակամա վարժվում է տվյալ աշխատանքին հարմար դիրքի։ Ես մի նայվածքով կարող եմ որոշել, թե փողոցում ինձ հանդիպած բանվորն ի՞նչ գործով է զբաղված։ Նայեցե՛ք ինձ։ Ինչո՞ւ ճոճվում եմ քայլելիս։ Նրա համար, որ գրեթե ողջ կյանքս անց եմ կացրել ծովի վրա։ Եթե ես բոլոր այդ տարիներում նավաստի չլինեի, այլ մսավաճառ, տատանվելով չէի քայլի, բայց ոտներս ծուռ կլինեին։ Այդ աղջկա հետ էլ ահա այդ է տեղի ունեցել։ Դուք նկատեցիք՞, թե ինչպիսի՛, եթե կարելի է այսպես արտահայտվել, խիստ հայացք ունի նա։ Չէ՞ որ նա երբեք չի ապրել որևէ մեկի թևի տակ։ Նա շարունակ ինքը պետք է մտածի իր մասին, իսկ երբ աղջիկը ստիպված է ինքը մտածել և հոգալ իր մասին, նա չի կարող ունենալ այնպիսի քնքուշ, հեզ նայվածք, ինչպես... ինչպես, օրինակի համար, դուք։

— Ընդունում եմ, որ դուք իրավացի եք,— ցածր ձայնով ասաց Ռութը։—Ի՞նչ սարսափելի է այդ։ Նա այնքան գեղեցիկ...

Մարտինը նայեց նրան և տեսավ, որ նրա աչքերը կարեկցություն են արտացոլում։ Իսկույն նա մտածեց այն մասին, թե ինչպե՛ս սիրում է Ռութին և ինչ անսովոր երջանկություն վիճակվեց իրեն — նրա հետ երկուսով քայլել թեվանցուկ՝ դասախոսության գնալու համար։

«Ո՞վ ես դուն Մարտին Իդեն — հարցնում էր նա

ինքնիրեն այդ երեկո, երբ տուն վերադարձավ և հայելու մեջ նայեց իրեն։ Նա երկար ու հետաքրքրությամբ նայում էր։ — Ո՞վ ես դու և ի՞նչ ես դու։ Ո՞րն է քո տեսակը։ Քո տեղը՝ Լիզզի Կոնոլլիի նման աղջկա մոտ է։ Քո տեսակը աշխատավորների բազմության մեջ է,— այնտեղ, որ ամեն ինչ զոհիկ է, ստոր և կոպիտ։ Քո տեղն աշխատող անասունների, կեղտի և աղբի մեջ է։ Քո տակը բանջարեղենի աղբյուս է։ Փտած կարտոֆիլը։ Ծծի՛ր այդ գարշահոտությունը, սատանա՛ն տանի քեզ, մի կուշտ հոտ քաշիր։ Եվ դու համարձակվում ես բիլդ կոխել գրքերի մեջ, հրաշալի երաժշտություն լսել, հիանալի նկարներով սրանչանալ, հոգ տանել քո լեզվին, մտածել այնպիսի բաների մասին, որոնք չեն հետաքրքրում քո ընկերներից ոչ մեկին, աղատվել Լիզզի Կոնոլլիից և սիրել մի աղջկա, որը միլիոնավոր մղոններով բարձր է քեզանից և ապրում է աստղերի միջև։ Ո՞վ ես դու։ Ի՞նչ ես դու։ Գրողը քեզ տանի։ Ի՞նչ լավ բան կտա քեզ այդ բոլորը»։

Նա բռունցքով սպառնաց իրեն հայելու մեջ և նստեց մահճակալի ծայրին՝ լայն բացած ու չթեսնող աչքերով նայելով իր առաջ։ Մի քիչ անց նա վերցրեց իր տետրակը, գրահաշվի դասագիրքը և խորասուզվեց քառակուսի հավասարությունների մեջ։ Իսկ ժամերը թռչում էին, աստղերը աղոտանում էին և պատուհանից արդեն երևում էր առավոտյան աղջամուղջը։

ԳԼՈՒԽ XIII

Բանվոր դասակարգից զրուցասեր սոցիալիստների և փիլիսոփաների խմբակը, որը շոգ օրերին հավաքվում էր Սիտի-Հոլ պարկում, պատահաբար մղեց մի մեծ հայտնագործության։ Ամիսը երկու անգամ, գրադարան գնալիս անցնելով պարկի միջով, Մարտինն իջնում էր հեծանիվից,

լսում էր նրանց վիճաբանությունը և ամեն անգամ էլ զմայլությամբ էր բաժանվում նրանցից։ Այդ վիճաբանությունների ընդհանուր առնչությունը չէր, ինչ միտքը Մարդի սեպանի շուրջը սեպի աննկարագրելի խառակցությունը։ Վիճողներն ոչի ընկնող և իրենց արժանապատվության դիտակից մարդիկ չէին։ Նրանք ապատ արատահայտություն էին տալիս իրենց խառնվածքին և վիրավորական մականուններով էին հարձարձում իրար, փոխանակում էին հայհոյանք և թանալիք ակնարկություններ։ Մի-երկու անգամ բանը հասավ և մինչև ծեծը։ Այնուամենայնիվ Մարտինը, առանց պարզ հաշիվ տալու իրեն, այդ բոլոր բանավեճերում գտնում էր ինչ-որ կենդանի հիմք. գրանք ավելի ուժգին էին ազդում նրա վրա, քան միտքը Մարդի հանգարտ հավատարմությունն ու գոդմատիկությունը։ Այդ մարդիկ, որոնք չարաչար ատհատում էին անդրեանց լեզուն, գժելի շարժուձևեր էին անում և նախնական մարդու կատաղությամբ հարձակվում էին իրենց գաղափարական հակառակորդների վրա,—այդ մարդիկ նրան թվում էին ավելի կենդանի, քան միտքը Մարդը և նրա բարեկամ միտքը Բեռլերը։

Պարկի այդ հավաքույթներում Մարտինը մի քանի անգամ լսեց Հերբերտ Սպենսերի անունը. մի օր էլ այնտեղ երևաց նրա աշակերտն ու հետևորդը, մի ոլորմելի թափառաշրջիկ՝ հագին պատառոտված կուրտիկ, որը ամբողջովին կոճկած էր՝ ծածկելու համար իր անշապիկ լինելը։ Ինվերջ գլանակների ծխի և ծամվող ծխախոտի թքի հեղեղի մեջ սկսվեց ընդհանուր ճակատամարտը, որի ընթացքում թափառաշրջիկը ճարպիկորեն ետ էր մղում բոլոր հարձակումները, մինչև անգամ այն ժամանակ, երբ մի բանվոր-սոցիալիստ հեգնորեն պոռաց. «Չկա աստված. բացի Անիմանալիից, և Հերբերտ Սպենսերը՝ նրա մարգարեն է»։ Մարտինը չհասկացավ, թե ինչի մասին են վիճաբանում. բայց հետաքրքրվեց Հերբերտ Սպենսերով և գրադարան մտնելով ուզեց «Հիմնական սկզբունքները», որովհետև թափառաշրջիկը տաք վիճաբանության ընթացքում հաճախ

հիշատակում էր այդ երկասիրությունը։ Դա էր մեծ գյուտի սկիզբը։ Մարտինը մի անգամ արդեն փորձել էր կարդալ Սպենսերին, բայց որովհետև նա ընտրել էր «Հոգեբանության հիմունքները», անհաջողության մատնվեց, ինչպես այդ պատահել էր և տիկին Բլավատսկայայի հետ։ Նա ոչինչ չհասկացավ այդ գրքում և առանց կարդալու վերադարձրեց այն։ Իսկ այդ գիշեր, դրահաշվից և ֆիզիկայից հետո և սոնետի հետ երկար պայքարից հետո, նա մտավ անկողին և բացեց «Հիմնական սկզբունքները»։ Արդեն առավոտ էր, բայց նա շարունակում էր կարդալ։ Քունը չէր տանում։ Այդ օրը նա մինչև անգամ չգրեց։ Նա պառկած կարդում էր մինչև այն ժամանակ, որ կողքերը սկսեցին ցավել. նա իջավ անկողնուց, պառկեց մերկ հատակին և շարունակեց կարդալ՝ գիրքը բռնած գլխի վերև կամ արմունկին հենած։ Այդ գիշեր նա քնեց և առավոտյան նոտեց գրելու, բայց հրապուրանքն այնքան մեծ էր, որ շուտով դարձյալ սկսեց կարդալ՝ մոռանալով աշխարհում ամեն բան, մինչև անգամ այն, որ այս երեկո սպասում է Ռութը։ Նա ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ Բերնարդ Հիգգինբոթամը դուռը բաց անելով հարցրեց. գուցե նա կարծում է, թե իրենք ճաշարա՞ն են պահում։

Մարտին Իդենը միշտ էլ աչքի էր ընկնում իր հարցասիրությամբ։ Նա ուզում էր ամեն բան գիտենալ և մասամբ դրա համար էլ տարվեց համաշխարհային թափառաշրջիկի — նավաստու պրոֆեսիայով։ Բայց հիմա, կարդալով Սպենսերը, նա հասկացավ, որ ոչինչ չգիտի, որ երբեք ոչ մի բան չի գիտենա, ինչքան էլ որ դեգերի ծովերի վրա։ Նա միայն հարևանցի նայել է իրերին, դիտելով առանձին երևույթներ, կուտակելով առանձին փաստեր, երբեմն անելով փոքրիկ, մասնակի ընդհանրացումներ,— այդ բոլորը՝ առանց փորձելու կապ հաստատելու նրանց միջև, առանց սիստեմի վերածելու ասխարհը, որը նա պատկերացնում էր իրեն՝ որպես պատահականությունների քմահաճ շաղկապում։ Դիտելով թռչուններին՝ նա հաճախ խորհրդա-

ծում էր նրանց թռիչքի մեխանիզմի մասին, բայց երբեք չէր ընդհանրացնում այդ երևույթը, չէր մտածում առհասարակ թռիչքի մեխանիզմի մասին և զարգացման այն պրոցեսի մասին, որը առաջացրել է թռչող կենդանի էակներին։ Նա մինչև անգամ չէր կասկածում այդպիսի պրոցեսի գոյության մասին։ Թռչունների «լինելությունը» նրա մտքովն էլ չէր անցնում։ Նրանք «կային» — և դրանով էլ հարցը փակվում է. այդպես է պատահել, ուրիշ ոչինչ։

Ինչպես թռչունների հետ, նույնը պատահել է և բոլոր մնացածների հետ։ Փիլիսոփայական եզրակացություններ անելու նրա փորձերը ձախողվում էին՝ գիտելիքների պակասության և մտածելու ունակության բացակայության պատճառով։ Կանտի միջնադարյան մետաֆիզիկան ոչ մի բան չրացեց նրա առաջ, այլ միայն ստիպեց տարակուսել իր մտավոր ուժերի մասին։ Նույնպիսի ձախողանք կրեց նա, երբ սկսեց ուսումնասիրել էվոլուցիայի տեսությունը Ռոմենսի չափազանց մասնագիտական դրքով։ Միակ բանը, որ նա եզրակացրեց, այդ ընթերցումից, դա այն էր, որ նա իրեն պատկերացրեց էվոլուցիան, ինչպես անվերծանելի լեզվով բացատրվող շոր ու ցամաք պեդանտների անհիմն. մտացածին մի թեորիա։ Իսկ այժմ նա տեսնում էր, թե դա իսկի էլ դատարկ տեսություն չի, այլ զարգացման ընդունված մի օրենք, և որ եթե այդ հարցում դեռևս վիճաբանություններ են ծագում, դա լոկ էվոլուցիայի ձևերին վերաբերող մասնավոր հարցերի մասին է։

Եվ ահա երևան եկավ մի մարդ— Սպենսերը, որը սիստեմի է վերածել այդ ամենը, միացրել, եզրակացություններ հանել և Մարտինի ապշահար հայացքին ներկայացրել է այդ կոնկրետ և կարգի բերված աշխարհն այնպես պարզ ու հասկանալի, որ նա հիշեցնում էր Մարտինին նավերի փոքրիկ մոդելները, որոնք նավաստիները շինում և վաճառում են ապակե բանկաներում։ Այստեղ չկան ոչ քմահաճույքներ, ոչ էլ պատահականություններ։ Ամեն ինչում օրենք կա։ Այդ օրենքին ենթարկվելով է, որ թռչունը

Ոչում է. նույն օրենքին ենթարկվելով է, որ անձն պլազման սկսել է շարժվել, գալարվել. նրանում թևեր ու թաթիկներ են բուսել,— և այդպիսով աշխարհում առաջացել է Ոչունը։

Մարտինն իր մտավոր կյանքում ընթանում էր մի բարձունքից մյուսը և այժմ հասավ նրանցից ամենաբարձրին։ Նա հանկարծ թափանցեց իրերի գաղտնի էությունը մեջ, և բնության գաղտնիքների ճանաչումը հարբեցրեց նրան։ Գիշերը, քնած ժամանակ, տարվելով վեհ տեսիլքներով, նա տպրում էր աստվածների հետ։ Ցերեկը նա թափառում էր որպես լուսնոտ՝ իր մոլար հայացքի առաջ տեսնելով միայն այն աշխարհը, որը նրա առաջ բացեց Սպենսերը։ Ճաշի ժամանակ կենցաղային զանազան մանրուքների մասին տեղի ունեցող խոսակցություններն ու վիճաբանությունները նա չէր լսում, որովհետև նրա միտքը շարունակ լարված աշխատում էր՝ իր առջև դանվող ամենանում բաց անելով պատճառային կապը։ Պնակում դանվող մսի մեջ նա դուշակում էր արևի ճառագայթներ և բոլոր ձևափոխությունների միջով նա որոնում էր նրանց սկզբնաբյուրը տանող ճանապարհը, որը միլիոնավոր մղոնների հետ էր դանվում, և կամ մտածում էր այն ուժի մասին, որը շարժում է նրա ձեռքի մկանները՝ ստիպելով նրան միս կրատել, և մկաններին հրաման ուղարկող ուղեղի մասին՝ մինչև որ վերջ ի վերջո գարձյալ հասնում էր արևի էներգիային։ Մարտինն այնքան տարված էր իր մտքերով, որ չէր լսում, թե ինչպես Ջիմը քրքջաց, ասելով թույլել է, առանց նկատելու բրոջ անհանգիստ հայացքները և առանց ուշադրություն դարձնելու Ելենայի Հիպոկրատիի մասին, որը նա մի քանի անգամ արտահայտիչ կերպով պատասխանեց իր հակառակին։

Մարտինին ամենից շատ ապշեցրեց գիտությունների՝ բոլոր գիտությունների փոխադարձ կապը։ Նա միշտ էլ ծարավի էր գիտելիքների, և այն գիտությունները, որոնք նա հաջողում էր ձեռք բերել, կարծես դասավորվում էին

առանձին-առանձին նրա հիշողության խորշերում։ Այսպես-ոչ խորշում բաղմաթիվ կիսատ-պռատ տեղեկություններ նավագնացության մասին։ Մյուս խորշում՝ կանանց մասին։ Բայց այդ երկու խորշերը ոչ մի կապ չունեին իրար միջև։ Այն միտքը, թե կարելի է կապ սահմանել կնոջ հիստերիկայի և փոթորկի ժամանակ նավի տարուբերումի միջև, Մարտինին արտառոց և անհնարին կթվար։ Իսկ Հերբերտ Սպենսերն ապացուցեց նրան ոչ միայն այն, որ ոչ մի արտառոց բան չկա դրանում, այլ. ընդհակառակը, այդ երկու երևույթների միջև չի կարող կապ չլինել։ Աշխարհում ամեն բան կապված է իրար հետ՝ երկնային տարածություններում ամենահեռավոր աստղից մինչև մարդու ոտի տակի ավազի ամենափոքր հատիկը։

Մարտինի համար դա զարմանքի մշտական աղբյուր էր, և նա այժմ շարունակ զբաղված էր գտնելով իրերի և երևույթների կապակցությունը մոլորակում, նույնպես և մյուս մոլորակներում։ Նա կազմում էր բոլորովին այլատեսակ իրերի ամբողջ ցուցակներ և չէր կարողանում հանգստանալ, մինչև որ նրանց միջև կապ չահմաներ։ Օրինակ, նա կապ էր հաստատում սիրո, բանաստեղծության, երկրաշարժի, կրակի, բոժոժավոր օձի, ծիածանի, թանկագին քարերի, այլանդակության, մայրամուտի, առյուծի մռնչյունի, լույսի դազի, մարդակերության, դեղեցկության, սպանության, սիրահարների, լծակների, գարնիրի և ծխախոտի միջև։ Հիմա տիեզերքը, ներկայացավ նրան որպես մի ամբողջություն, և նա դեգերում էր նրա ծակ ու ծուկերում, անելներում ու խոռոչներում ոչ իբր մոլորված համփորդ, որը խորհրդավոր թավուտի միջով դժվարությամբ առաջ է ընթանում դեպի անհայտ նպատակը, այլ իբր փորձառու համփորդ-դիտող, որը աշխատում է ոչինչ աչքաթող չանել և ամեն ինչ նշանակում է քարտեզում։ Նվ ինչքան շատ էր իմանում, այնքան շատ էր հիանում աշխարհով ու կյանքով և այդ աշխարհում իր սեփական կյանքով։

— Ա՜յ դու, տխմար,— դոռում էր նա հայելու միջի իր

պատկերին։— Դու ուզում էիր գրել, և գրում էիր. իսկ գրելու բան չունեիր։ Դե, ի՞նչ ունեիր դու։ Նրեխայական հասկացողություններ, տհաս զգացումներ, գեղեցկության մասին աղոտ պատկերացում, տգիտության ահագին սև մի զանգված, սիրուց պայթելու պատրաստ սիրտ, քո սիրտ շատ ուժեղ ինքնասիրություն—նույնքան անհույս, որքան քո տգիտությունը։ Եվ դու ուզում էիր գրե՞լ։ Բայց չէ՞ որ միայն նոր է սկսում հայտաբերվել քեզանում գրելու բան։ Դու ուզում էիր ստեղծել գեղեցկություն, բայց ինքդ ոչինչ չգիտեիր գեղեցկության բնույթի մասին։ Ուզում էիր գրել կյանքի մասին, իսկ ինքդ հասկացողություն չունեիր կյանքի էության մասին։ Ուզում էիր գրել աշխարհի մասին, իսկ աշխարհը քեզ համար չինական հանելուկ էր, և ինչ էլ որ գրեիր, միայն մի ավելորդ անգամ կստորագրեիր քո տգիտության տակ։ Բայց մի՛ վհատվիր, Մարտին, տղաս։ Դու դեռ պիտի գրես։ Արդեն որոշ բաներ գիտես. ճիշտ է, դեռ շատ քիչ բան, բայց արդեն ուղիղ ճամփով ես գնում և շուտով շատ բան կգիտենաս։ Եթե բախտդ բանի, կգա ժամանակ, երբ դու կգիտենաս համարյա ամեն բան, որ կարելի է գիտենալ։ Եվ այն ժամանակ դու կգրես։

Մարտինը Ռութին հաղորդեց իր մեծ գյուտը՝ մտադրվելով բաժանել նրա հետ իր ուրախությունն ու զարմանքը։ Բայց աղջիկը շատ հանգիստ վերաբերվեց։ Եվ նրան չզարմացրեց այդ վերաբերմունքը, որովհետև հասկանում էր, որ Ռութի համար այդ ամենը նորություն չի, ինչպես իրեն համար։ Արտուրը և Նորմանը, ինչպես նրան հաջողվեց պարզել, կողմնակից էին էվոլուցիոն թեորիային և երկուսն էլ կարդացել էին Հերբերտ Սպենսերին, թեպետ նա, ինչպես երևում է, նրանց վրա այնքան խոր տպավորություն չի թողել, իսկ ակնոցավոր երիտասարդը՝ Վիլլ Օլնեյը, երբ հիշվեց Սպենսերի անունը, անախորժ ծիծաղեց և կրկնեց՝ Մարտինին արդեն ծանոթ սրախոսությունը. «Ջկա աստված, բացի Անիմանալիից, և Հերբերտ Սպենսերը՝ նրա մարգարեն է»։

Սակայն Մարտինը նրան ներեց այդ ծաղրը, որովհետև

սկսեց հասկանալ, որ Օլենյը ամենևին էլ սիրահարված չի Ռութին։ Հետագայում գանազան մանր փաստերի հիման վրա նա համոզվեց, որ Օլենյը ոչ միայն սիրահարված չի Ռութին, այլև բացահայտ թշնամությամբ է վերաբերվում նրան։ Մարտինը չէր կարողանում հասկանալ այդ։ Դա սյնպիսի մի ֆենոմեն էր, որը նա ոչ մի կերպ չէր կարողանում կապակցել տիեզերքի մյուս երևույթների հետ։ Նա մինչև անգամ խզճում էր այդ պատանուն, որին ակներև կերպով ինչ-որ բնածին թերություն խանգարում էր գնահատել Ռութի գրավչությունն ու գեղեցկությունը։ Նրանք բոլորը շատ հաճախ կիրակի օրերը միասին ման էին գալիս հեծանիվներով, և Մարտինը այդ պտույտների ժամանակ համոզվեց, որ Ռութը և Օլենյը զինված հաշտության վիճակումն են իրար հանդեպ։ Օլենյը բոլորից շատ մտերմական հարաբերության մեջ էր Նորմանի հետ՝ թողնելով, որ Ռութը, Արտուրն ու Մարտինը ընկերություն անեն իրար հետ, և դրա համար Մարտինը շատ շնորհապարտ էր նրան։

Այդ կիրակիները Մարտինի համար կրկնակի տոներ էին նրա համար, որ նա հնարավորություն ուներ անցկացնել դրանք Ռութի հետ և, բացի այդ, վարժվել նրա դասակարգին պատկանող երիտասարդների հասարակությանը։ Թեև այդ մասդիկ սիստեմատիկ կրթություն էին ստացել, բայց Մարտինը տեսնում էր, որ մտավորապես ետ չի մնում նրանցից, իսկ նրանց հետ զրույցը իրեն համար բերանացի խոսակցության հիանալի մի պրակտիկա է։ Նա արդեն վաղուց դադարել էր վարվելակերպի կանոնների մասին գրված գրքեր կարդալուց՝ վճռելով հույսը դնել իր դիտունակության վրա։ Բացի այն դեպքերից, երբ տարված էր լինում որևէ բանով, նա շարունակ ուշադիր հետևում էր իր ուղեկիցների վարվեցողությանը՝ ջանալով միտը պահել նրանց՝ իրար նկատմամբ վերաբերմունքի զանազան մանրամասնությունները։

Մարտինը զարմանում էր, որ Սպենսերին առհասարակ բիչ են կարդում։

— Հերբերտ Սպենսերը, — ասաց դրագարանում տեղեկանքի սեղանի աշխատակիցը, — օ՛, նա մեծ իմացականության տեր մարդ է։ — Սակայն, ինչպես երևում է, այդ աշխատակիցը այդ մեծ իմացականության տեր մարդու երկերի մասին շատ քիչ բան դիտեր։ Մի օր Մորդերի մոտ ճաշելիս, միստեր Բեալերի ներկայությամբ, Մարտինը խոսք բացեց Հերբերտ Սպենսերի մասին։ Միստեր Մորդը խստիվ դատապարտեց անգլիացի փիլիսոփայի ագնոստիցիզմը, սակայն միաժամանակ խոստովանվեց, որ «Հիմնական սկզբունքները» չի կարդացել. իսկ միստեր Բեալերը հայտարարեց, որ Սպենսերը տաղտուկ է պատճառում նրան, որ նրա երկերից ոչ մի էջ չի կարողացել կարդալ մինչև վերջը և առանց դրան հիանալի յոլա է գնում։ Մարտինի գլխում տարակույսներ ծագեցին, և եթե նա այդքան ինքնություն չլիներ, կենթարկվեր ընդհանուր կարծիքին և կհրաժարվեր Սպենսերի հետ հետագա ծանոթությունից։ Բայց որովհետև աշխարհի մասին Սպենսերի հայացքները նրան անվիճելի ճշմարտություն էին թվում, նրանցից հրաժարվելը Մարտինի համար նույնքան անհնար էր, որքան ծովագնացի համար կողմնացույցն ու քարտեզը ծովը դցելը։ Այդ պատճառով էլ Մարտինը շարունակում էր ուսումնասիրել էվոլուցիայի թեորիան՝ ավելի ու ավելի տիրապետելով այդ առարկան և Սպենսերի հայացքների հաստատումը գտնելով հազարավոր այլ գրողների մոտ։ Ինչքան առաջ էր ընթանում նա իր պարապմունքներում, նույնքան ավելի բացվում էին նրա առաջ գիտելիքների չհետազոտված մարզեր, և նա ավելի հաճախ էր ափսոսում, որ օրը միայն քսանչորս ժամ ունի։

Մի օր, օրվա կարճատևությունը նկատի ունենալով, Մարտինը վճռեց թողնել գրահաշիվն ու երկրաչափությունը։ Իսկ եռանկյունաչափության նա դեռ ևս չէր էլ ձեռնարկել։ Հետո նա իր օրացուցակից ջնջեց նաև քիմիան՝ թողնելով միայն ֆիզիկան։

— Պարզ է, ես մասնագետ չեմ, — ասաց նա Ռութին՝

իրեն արդարացնելու համար,— և չեմ էլ պատրաստվում մասնագետ դառնալ։ Չէ՞ որ գիտություններն այնքան շատ են, որ մարդու կյանքը հերիք չէ այդ բոլորը ուսումնասիրելու։ Ես ուզում եմ ընդհանուր կրթություն ստանալ։ Երբ ինձ մասնագիտական գիտելիքներ հարկավոր լինեն, կարող եմ դիմել գրքերին։

— Բայց դա ամենևին չի նշանակում, որ դուք ինքներդ տիրապետում եք այդ գիտելիքները,— բողոքեց աղջիկը։

— Իսկ ինչո՞ւ պետք է տիրապետել նրանց։ Մենք միշտ էլ օգտվում ենք մասնագետների աշխատանքներով։ Հենց դրա համար էլ գոյություն ունեն նրանք։ Ձեզ մոտ մտնելիս ես տեսա ծխնելույզ մաքրողներին աշխատելիս։ Նրանք նույնպես մասնագետներ են, և՝ երբ նրանք իրենց գործը կանեն, դուք կօգտվեք մաքրած խողովակներով, մինչև անգամ առանց ոչինչ գիտենալու վառարանների կառուցվածքի մասին։

— Դե, դա բացորոշ բռնաբռսիկություն է...

Ռութը դժկամությամբ նայեց նրան, և Մարտինը նրա նայվածքում և շեշտում կարդաց կշտամբանք։ Սակայն Մարտինը համոզված էր, որ իրավացի է ինքը։

—Ընդհանուր հարցերի մասին միտք հոգնեցնող բոլոր խորհողները, բոլոր մեծագույն խելքերը փաստորեն միշտ էլ օգտվել են մասնագետների երկերով։ Հերբերտ Սպենսերն էլ միշտ նույնն է արել։ Նա ընդհանրացրել է բազմահազար հետազոտիչների հայտնագործումները։ Նրան հարկավոր կլիներ հազար կյանք ապրել, որպեսզի անձամբ ձեռք բերեր այդ բոլորը։ Նույնն է տեղի ունեցել և Դարվինի հետ։ Նա օգտագործել է այն, ինչ ուսումնասիրել են այգեգործները ու անասնարույծները։

— Դուք իրավացի եք, Մարտին,— ասաց Օլենը,—գիտեք, թե ի՞նչ եք ուզում, իսկ Ռութը չգիտի։ Նա մինչև անգամ չգիտի, թե ի՞նչ է հարկավոր իրեն։ Այո՛, այո՛,—շարունակեց նա՝ առանց ժամանակ թողնելու, որ Ռութը առարկի։ —Ես գիտեմ, որ դուք անվանում եք այդ ընդհանուր կուլ-

տուրա։ Բայց եթե ուզում ենք ձեռք բերել այդ ընդհանուր կուլտուրան, միևնույնը չէ՞, թե ի՞նչ ենք սովորում։ Դուք կարող եք ուսումնասիրել ֆրանսերեն, գերմաներեն կամ էսպերանտո լեզուն,—միևնույնն է՝ կունենաք այդ «կուլտուրական ֆոնը» և կամ զբաղվեցեք լատիներենով և հունարենով, թեպետ այդ երկու լեզուներն էլ երբեք հարկավոր չեն լինի ձեզ։ Իսկ կուլտուրականություն դուք ձեռք կբերեք։ Երկու տարի առաջ Ռութը սովորեց անգլո-սաքսոն լեզուն, մինչև անգամ շատ հաջող սովորեց, իսկ հիմա ոչինչ չի հիշում՝ բացի մի տողից. «Ինչպես բուրումնավետ ապրիլ ամիսը տեղում է իր անձրևները»։ Կարծեմ՝ այդպես է, չէ՞։ Եվ դա ձեզ տվել է կուլտուրական ֆոն,—ծիծաղեց նա, դարձյալ Ռութին հնարավորություն չտալով առարկելու,— գիտեմ, գիտեմ։ Չէ՞ որ ես ձեզ հետ միևնույն դասընթացումն էի սովորում։

— Դուք այնպես եք խոսում կուլտուրայի մասին, կարծեք դա միջոց է, և ոչ թե նպատակ,—բացագանչեց Ռութը։ Նրա աչքերը փայլատակեցին, իսկ այտերը կարմրեցին։— Կուլտուրան ինքնանպատակ է։

— Սակայն այդ չէ, որ պետք է Մարտինին։

— Իսկ դուք որտեղի՞ց գիտեք այդ։

— Ի՞նչ է պետք ձեզ, Մարտին,—հարցրեց Օլենյը՝ միանգամից դառնալով դեպի նա։

Մարտինը չափազանց անհարմար զգաց իրեն և պաղատագին նայեց Ռութին։

— Այո՛, ասացեք, ի՞նչ է պետք ձեզ,—ասաց Ռութը։— Դա կվճռի մեր վեճը։

— Իհարկե, ինձ կուլտուրա է հարկավոր,—ասաց Մարտինը անվճռականորեն։—Ես սիրում եմ գեղեցկությունը. իսկ կուլտուրան հնարավորություն է տալիս ինձ ավելի լավ հասկանալ ու գնահատել այն։

Ռութը գլխով հավանության նշան արեց հաղթական տեսքով։

— Դատարկ բան։ Եվ ինքներդ շատ լավ գիտեք այդ.—

հայտարարեց Օլենը։—Մարտինը ձգտում է դեպի կարիերա, և ոչ թե դեպի կուլտուրա։ Որ նրա մարդում կարիերան կապված է կուլտուրայի հետ,— դա պարզ զուգադիպություն է։ Եթե նա ուզենար քիմիկոս դառնալ, կուլտուրան հնարավոր չէր լինի նրան։ Մարտինը ուզում է գրող դառնալ, բայց վախենում է ասել այդ, որպեսզի դուք չպարավեք մեր վեճում։ Իսկ ինչո՞ւ Մարտինն ուզում է գրող դառնալ,— շարունակեց նա։ —Որովհետև նա նյութապես ապահովված չէ։ Ինչու՞ դուք լցրել եք ձեր գլուխը սաքսոն լեզվով և «ընդհանուր կուլտուրայով»։ Նրա համար, որ դուք կարիք չունեք մտահոգվելու ձեր ապագայի մասին։ Դրա մասին հոգում է ձեր հայրը։ Նա գնում է ձեզ համար զգեստ, նա կանի ձեզ համար և մնացած բոլոր բաները։ Ի՞նչ օգուտ այն կրթությունից, որը ստացել եք դուք, նույնպես ես, Արտուրն ու Նորմանը։ Մինչև մեր ուղն ու ծուծը մենք լցված ենք «ընդհանուր կուլտուրայով», իսկ եթե մեր հայրերը վաղը սնանկանան, մենք չենք կարող բընություն բռնել մինչև անգամ դպրոցական ուսուցչի պաշտոնի համար։ Լավագույն դեպքում՝ Ռութը կարող էր հույս ունենալ սարքվել իբր գյուղական ուսուցչուհի և կամ կանանց պանսիոնում իբր երաժշտության դասատու։

— Իսկ ի՞նչ կանեիք դուք,— հարցրեց Ռութը.

— Ոչ մի առանձին լավ բան։ Կարող էի օրական մեկուկես դոլլար շահել ֆիզիկական աշխատանքով կամ մտնել Հանլեյի միավորման ճյուղը իբր հրահանգիչ, ասում եմ «մտնել», որովհետև հավանական է, որ ինձ մի շաբաթից կվռնդեին որպես բոլորովին անպետքի։

Մարտինը լռելյայն լսում էր զրույցը և ընդունելով, որ Օլենն իրավացի է, միաժամանակ դատապարտում էր Նրան Ռութի հանդեպ անհարգալան վերաբերմունքի համար։ Այդ վեճի ժամանակ նրա գլխում նոր հայացքներ էին ծագում սիրո մասին։ Բանականությունը չպետք է միջամտի սիրային գործերին։ Սիրած կինը ուղիղ է դատում, թե՝ սխալ—դա միևնույնն է։ Սերը բանականությունից բարձր է։ Տվյալ դեպքում Ռութը, ինչպես երևում է, չէր հասկանում թե ինչքա՛ն

կարևոր է կարիերան Մարտինի համար, բայց դա պատճառ չի, որ աղջիկը նվազ հրապուրիչ դառնա։ Նա հիանալի էր, և նրա խորհելակերպը ոչ մի առնչություն չուներ այդ հրապուրանքի հետ։

— Ինչ ասացի՞ք,— հարցրեց Մարտինը Օլնեյին, որը անակնկալ հարցումով ընդհատեց նրա մտքի թելը։

— Ասում եմ, որ դուք հավանական է, չեք սկսի լատիներեն սովորել։

— Լատիներենը ոչ միայն կուլտուրա է տալիս,—ընդմիջեց Ռուֆը,— այլև մարզում է միտքը։

— Լավ, Մարտին, դուք ինչպե՞ս, սովորելո՞ւ եք լատիներենը,—համառեց Օլնեյը։

Մարտինը չափազանց դժվարին վիճակումն էր։ Նա տեսավ, որ Ռուֆը անհամբեր սպասում էր նրա պատասխանին

— Վախենում եմ, որ ժամանակ չեմ ունենալու դրա համար,— պատասխանեց նա վերջապես։—Ես կսկսեի սովորել, բայց ժամանակ չեմ ունենա։

— Տեսնում եք։ Մարտինին իսկի էլ հարկավոր չի ձեր «ընդհանուր կուլտուրան»,—հայտարարեց Օլնեյը հաղթական։ —Նա գիտի, թե ի՞նչ է հարկավոր իրեն, գիտի նաև, թե ինչպե՞ս պիտի ձեռք բերել այն։

— Այո՛, բայց չէ՞ որ դա մտամարզանք է, մտքի դիսցիպլինա է։ Լատիներենը դիսցիպլինա է տալիս մտքին։ —Այդ ասելիս՝ Ռուֆը նայեց Մարտինին, կարծես խնդրելով, որ նա փոխի իր դատողությունը։—Տեսե՞լ եք, թե ինչպես ֆուտբոլիստները խաղից առաջ մարզանք են անում։ Նույնն է լատիներենը խորհողների համար։ Դա մարզանք է։

— Ի՞նչ անմտություն։ Այդ բանը մեր դլուխն էին մեխում մանկության տարիներին։ Բայց կա մի ճշմարտություն, որը մոռացել են ներշնչել մեզ իր ժամանակին։—Օլնեյը մի պահ լռեց՝ առավել աղդու դարձնելու համար իր խոսքը և հանդիսավոր շեշտով ասաց,— ջենտլմենը պետք է սովորի լատիներեն, բայց ոչ մի ջենտլմեն չպետք է իմանա լատիներեն։

— Դա անազնիվ է,— բացագանչեց Ռութը,— ես այդպես էլ գիտեի, որ դուք ամբողջ այդ խոսակցությունը կատակի եք վերածեք։

— Բայց համաձայնեցեք, որ սրամիտ կատակ է,— գոչեց նա։— Միաժամանակ դա ճիշտ է։ Լատիներեն գիտցող միակ մարդիկ—դա դեղագործները, փաստաբաններն ու լատիներենի դասատուներն են։ Եթե Մարտինն ուզում է լինել նրանցից մեկը, ես լռում եմ։ Սակայն այս հարցում առհասարակ ի՞նչ դործ ունի Հերբերտ Սպենսերը։ Մարտինը հենց նոր է գտել Սպենսերին և խելակորույս հիացմունք զգացել նրա նկատմամբ։ Ինչու՞։ Որովհետև Սպենսերը տվել է նրան մի բան։ Սպենսերը ոչինչ չի կարող տալ ոչ ձեզ, ոչ էլ ինձ։ Որովհետև մեզ հարկավոր էլ չի ոչ մի բան։ Դուք մի գեղեցիկ օր կամուսնանաք, իսկ ես առհասարակ ոչ մի գործ չեմ ունենալու, որովհետև իմ փոխարեն ամեն ինչ անելու են զանազան գործակալներ, որոնք հոգ կտանեն իմ կապիտալի մասին, երբ ես կստանամ այն հորիցս։

Օլնեյը դեպի դուռն էր ուղղվում, բայց կանգ առավ և իր վերջին լիցն արձակեց.

— Մարտինին հանգիստ թողեք, Ռութ։ Նա ինքը շատ լավ գիտի, թե ինչ է պետք իրեն։ Նայեցեք, թե նա արդեն ինչեր է կարողացել ձեռք բերել։ Երբեմն նա ինձ կարմրացնում է, ստիպում, որ ամաչեմ ինքս ինձնից։ Նա հենց հիմա էլ շատ ավելի բան գիտի աշխարհի, կյանքի և մարդու կոչման մասին, քան Արտուրը, Նորմանը, ես կամ դուք՝ չնայած բոլոր մեր լատիներենին, ֆրանսերենին ու անգլո-սաքսոներենին, չնայած մեր ամբողջ, այսպես ասած, կուլտուրային։

— Բայց Ռութն իմ ուսուցչուհին է,— ասպետորեն առարկեց Մարտինը,— եթե ես որևէ բան էլ դիտեմ, ապա շնորհիվ նրա։

— Դատարկ բա՞ն,— Օլնեյը Ռութին նայեց ինչ-որ անբարյացակամությամբ,— դուք հիմա ինձ կասեք, թե սկսել եք Սպենսեր կարդալ նրա խորհուրդով։ Բայց չէ՞ որ Դարվի-

նի և էվոլուցիայի մասին նա նույնքան գիտի, որքան ես Սողոմոն թագավորի ալմասի հանքերի մասին։ Հիշո՞ւմ եք, սրանից մի քանի օր առաջ դուք մեզ շշմեցրիք Սպենսերի՝ անորոշի, անորսալիի և միատարրի վերաբերյալ մի հատվածի ձեր մեկնաբանմամբ։ Փորձեցեք այդ բացատրել Ռութին և կտեսնեք, նա կհասկանա՞, թե ոչ։ Չէ՞ որ դա «կուլտուրա» չէ։ Օհո-հո՞։ Լսե՛ք Մարտին, եթե դուք սկսեք անգիր անել լատիներենը, ես պարզապես կկորցնեմ հարգանքս ձեր նկատմամբ։

Ուշադրությամբ հետևելով այդ խոսակցությանը, Մարտինը միաժամանակ զգում էր ինչ-որ տհաճություն։ Խոսքը գնում էր սովորելու և դասերի, գիտելիքների հիմունքների մասին և վեճի այդ մակերեսային բնույթը չէր համապատասխանում այն մեծ խնդիրներին, որոնք հուզում էին Մարտինին, ստիպում էին նրան ամուր բռնել բոլոր կենսական երևույթները և ինչ-որ կոսմիկական թրթիռով թրթռալ իր արթնացող ուժի գիտակցությունից։ Նա մտովին իրեն համեմատում էր անծանոթ ափ նետված այն բանաստեղծի հետ, որը ցնցված է շրջապատի գեղեցկությամբ և զուր ճգնում է այն գովերգել վայրի բնիկների՝ իրեն անծանոթ լեզվով։ Այդպես էր և նրա հետ։ Նա իր մեջ զգում էր տանջալից ձգտում՝ ճանաչելու համաշխարհային մեծ ճշմարտություններ, իսկ դրա փոխարեն պետք է լսեր մանկական առարկություններ այն մասին, թե հարկավո՞ր է արդյոք ուսումնասիրել լատիներենը, թե հարկավոր չի։

— Ո՞ր ջհաննամին է պետք այդ լատիներենը,—ասում էր նա ինքն իրեն այդ երեկո, հայելու առաջ կանգնած։— Թող մեռելները մեռած մնան։ Ես ի՞նչ կապ ունեմ այդ մեռելների հետ։ Գեղեցկությունը հավիտենական է և միշտ կենդանի։ Լեզուները ստեղծվում են և անհետանում։ Նրանք մեռածների փոշին են։

Նա հենց այդտեղ մտածեց, որ սովորել է լավ ձևակերպել իր մտքերը և, անկողին մտնելով, ճգնում էր հասկանալ, թե ինչու է կորցնում այդ ընդունակությունը Ռութի ներկա-

յությամբ։ Նրա ներկայությամբ նա դառնում էր աշակերտ և խոսում էր աշակերտի լեզվով։

— Ժամանակ տվեք ինձ,— ասաց նա բարձրաձայն։ — Միայն ժամանակ տվեք ինձ։

Ժամանա՞կ։ Ժամանա՞կ։ Ժամանա՞կ։ Դա նրա մշտական աղերսն էր։

ԳԼՈՒԽ XIV

Չնայած Ռութի նկատմամբ իր սիրուն, Մարտինը չսկսեց լատիներեն սովորել։ Օլնեյի խորհուրդներն այս հարցում դեր չխաղացին։ Նրա համար ժամանակը դրամ էր, իսկ շատ դիտություններ, լատիներենից շատ ավելի կարևոր, հրամայողաբար պահանջում էին նրա ուշադրությունը։ Բացի այդ, նա պետք է դրեր, պետք է դրամ շահեր։ Բայց, ավա՞ղ, նրա գրածները ոչ մի տեղ չէին տպում։ Նրա ձեռագրերը անվերջ դեգերում էին մի ժուռնալից մյուսի խմբագրություններ։ Ինչո՞ւ տպում են ուրիշ գրողների երկերը։ Նա երկար ժամեր անց էր կացնում ընթերցարանում, կարդալով ուրիշների երկերը, ուշադիր և քննադատաբար ուսումնասիրելով նրանք, բաղդատելով իր սեփական գրվածքների հետ և իզուր աշխատելով գտնել գաղտնիքը, որը օգնում էր այդ գրողներին վաճառել իրենց երկերը։

Նա զարմանում էր, որ մամուլի էջերում երևացած գրվածքների ահագին մեծամասնությունը անկենդան է։ Այդ պատմվածքներում չկան ո՛չ լույս, ո՛չ էլ գույներ։ Նրանց մեջ չկա կյանքի շունչը, իսկ նրանց համար վճարում են ամեն մի բառին երկու ցենտ, հազար բառի համար քսան դոլլար,— այդպես էր ասված թերթի հայտարարության մեջ։ Նա կրկին ու կրկին տարակուսանքով կարդում էր անհամար պատմվածքներ, որոնք գրված էին (նա չէր կարող չխոստովանել) թեթև և սրամիտ, բայց առանց իրական կյանքի ճշմարտու-

թյան։ Չէ՞ որ կյանքը ըստինքյան այնքան զարմանալի, այնքան հրաշալի է. նրանում այնքան շատ են չվճռված խնդիրներ, չիրականացած երազներ, հերոսական ճիգեր, իսկ այդ պատմվածքները միշտ էլ արտացոլում են միայն առօրյա կյանքը։ Մարտինը զգում էր կյանքի ուժն ու մեծությունը, նրա տենդոտությունը, տրոփյունը և բմբոստ ոգին.— ահա թե ինչի՛ մասին արժեր գրել։ Նա ցանկանում էր գովերգել վտանգների դեմ գնացող քաջասիրտներին, սիրատանջ պատանիներին, սարսափի և տառապանքի պայմաններում պայքարող հսկաներին, որոնք ճարճատեցնում են կյանքը իրենց հզոր ճիգերի ճնշման տակ։ Իսկ այդ տպված պատմվածքներում գովաբանվում են ամեն տեսակի միստեր բեռլերներ, դոլլարի խզճուկ սիրահարներ, նկարագրվում են չնչին մարդկանց սիրային մանր հույզերը։ «Դա թերևս նրա՞ համար է, որ իրենք խմբագիրները մանր, չնչին մարդուկներ են,— հարց էր տալիս նա իրեն։— Եվ կամ բոլոր այդ խմբագիրները, գրողներն ու ընթերցողները պարզապես վախենում են կյանքից»։

Ամենից շատ նրան շփոթեցնում էր այն, որ նա ծանոթ չէր ոչ խմբագիրների, ոչ էլ գրողների հետ։ Նա ոչ միայն չգիտեր ոչ մի գրողի, այլև չգիտեր որևէ մեկին, որը երբևէ փորձած լիներ գրել։ Չկար ոչ մեկը, որը խոսեր նրա հետ, ուղղություն և լավ խորհուրդ տար նրան։ Նա մինչև անգամ սկսեց տարակուսել, որ խմբագիրները կենդանի մարդիկ են։ Նրանք սկսեցին պատկերանալ նրա աչքին որպես մեքենայի անիվներ։ Այո՛, այո՛, ճիշտ այդպես։ Պատմվածքներում, ակնարկներում և բանաստեղծություններում նա գեղում էր իր հոգին, և այդ գեղումները նա հանձնում էր մեքենայի դատաստանին։ Նա իր գրվածքը ուղարկում էր կնքված մեծ ծրարում, որի մեջ դնում էր պատասխանի համար նամականիշ և զցում էր ծրարը փոստարկղ։ Գրվածքը, որոշ օրեր ցամաքում թափառելուց հետո, վերադառնում էր նրան, արդեն ուրիշ ծրարի մեջ, իսկ ուղարկված նամականիշը կպցված էր լինում ծրարի վրա։ Ամենայն հավանականությամբ, ոչ մի

խմբագիր գոյություն չունի, և գոյություն ունի միայն խորամանկորեն սարքված մի մեխանիզմ որը գրվածքը դնում էր մի ծրարից մյուսի մեջ և փակցնում էր նամականիշ։ Դա որոշ չափով նման է այն ավտոմատներին, որոնց մեջ գցում են դրամ, և անմիջապես դուրս է գալիս մի կտոր ծամոն և կամ շոկոլադի մի սալիկ։ Նույնն է և խմբագրի մեքենան։ Մի անցքից դուրս են գալիս հոնորարի չեկեր, իսկ մյուս անցքից՝ մերժողական նամակներ։ Մինչ այժմ նա միշտ էլ ընկել է երկրորդ անցքը։

Այդ տխրահռչակ նամակները լրացնում էին մեքենայի հետ նմանությունը։ Դրանք տպված ստանդարտ բլանկներ էին, որոնց վրա գրվում էին միայն անուններ ու վերնագրեր։ Մարտինն արդեն ստացել է հարյուրավոր այդպիսի բլանկներ, առնվազն մի դյուժին ամեն մի գրվածքի համար։ Եթե նա ստանար ձեռքով գրած գեթ մի կենդանի տող, որը ուղղված լիներ անձամբ իրեն,— նա երջանիկ կլիներ։ Սակայն ոչ մի խմբագիր կյանքի այդպիսի նշան չի ցույց տվել։ Եվ Մարտինը վերջ ի վերջո եկավ այն եզրակացության, որ աշխարհում ոչ մի կենդանի խմբագիր չի լինում, այլ կան միայն լավ յուղված և փարթամորեն սարքված ավտոմատներ։ Մարտինը հաստատամիտ և տոկուն էր, կարող էր երկար տարիների ընթացքում համառորեն սնուցանել այդ անհոգի մեքենաները։ Սակայն նա արյունաքամ էր լինում, և ոչ թե տարիները, այլ շաբաթները պետք է վճռեին հարցը։ Ապրուստի համար շաբաթական վճարը մոտեցնում էր նրա սնանկության բոպեն, իսկ փոստի ծախսերը ավելի ևս նրպաստում էին դրան։ Նա արդեն չէր կարող գնել գրքեր և վճռեց դրամ խնայել մանր ծախսերից, որպեսզի հետաձգի ճակատագրական վախճանը։ Բայց խնայել չէր կարողանում և մի ամբողջ շաբաթով փութացրեց լուծումը՝ նվիրելով իր քրոջը՝ Մերիենին հինգ դոլլար հագուստի համար։

Մարտինը պայքարում էր խավարում, առանց խորհրդի, առանց խրախուսանքի. կարծես, նրա շուրջը բոլորը խոսքը մեկ են արել՝ ջլատելու համար նրա արիությունը։ Մինչև ան-

գամ Գերտրուդը սկսել է ծուռ նայել նրան. իբր բարի քույր՝ նա սկզբում մատների արանքով էր նայում այն բանին, որը նրան թվում էր երեխայական գժություն, իսկ հետո, դարձյալ իբր բարի քույր, սկսեց անհանգստանալ։ Նրան թվում էր, որ երեխայությունն արդեն խելագարություն է դառնում։ Մարտինը նկատում էր նրա անհանգիստ հայացքները և դրանցից ավելի էր տառապում, քան միստեր Հիգգինբոթամի բացահայտ և կոպիտ ծաղրանքից։ Նա հավատում էր իրեն, բայց իր այդ հավատքում մենակ էր։ Մինչև անգամ Ռութը չէր բաժանում այն։ Ռութը ցանկանում էր, որ նա զբաղվեր միայն ինքնակրթությամբ, և թեպետ աղջիկը երբեք բացեիբաց չէր դատապարտում նրան, որ տարվում է գրականությամբ, բայց և բնավ չէր խրախուսել նրան։

Մարտինը ոչ մի անգամ ցույց չէր տվել նրան իր գրվածքները։ Ինչ-որ առանձին փափկանկատություն կասեցնում էր նրան. բացի այդ, գիտենալով, թե աղջիկն ինչպես զբաղված է համալսարանում, նա քաշվում էր նրա ժամանակը խլելուց։ Բայց քննությունները տալուց և աստիճան ստանալուց հետո՝ Ռութը ինքը խնդրեց ցույց տալ իրեն նրա գրվածքներից որևէ բան։ Մարտինը և՛ ուրախացավ, և՛ վարանեց։ Ռութը իսկական դատավոր է։ Նա գեղեցիկ արվեստների բակալավր է։ Նա ուսումնասիրել է գրականությունը պրոֆեսորների ղեկավարության տակ։ Թերևս խմբագիրներն էլ փորձառու դատավորներ են։ Բայց Ռութը այլ կերպ կվերաբերվի նրա գրվածքներին։ Նա չի տա Մարտինին մերժումի տպագրված բլանկ, չի ասի, թե, չնայած բոլոր արժանիքներին, նրա պատմվածքները դժբախտաբար հարմար չեն տվյալ հրատարակության մեջ տպվելու։ Ռութը նրան կվերաբերվի որպես զգայուն հոգի ունեցող կենդանի էակ և, ամենակարևորը, նա վերջապես կճանաչի իսկական Մարտին Իդենին։ Իր ստեղծագործությունների մեջ նա ներդրել է իր հոգին ու սիրտը, և Ռութը թեկուզ մի քիչ, թեկուզ ամենադույզն չափով կհասկանա, թե ինչի՞ մասին է նրազում Մարտինը, և կզգա նրա մեջ թաքնված ուժը։

Մարտինն ընտրեց մի քանի կարճառոտ պատմվածքներ և մի փոքր տատանումից հետո ավելացրեց նրանց վրա և «Ծովի երգը»։ Հունիսի շոգ օրերից մեկում նա և Ռութը հեծանիվներով քաղաքից դուրս ելան ու գնացին դեպի իրենց սիրելի բլուրները։ Դա նրանց երկրորդ պտույտն էր երկուսով, և երբ նրանք սլանում էին՝ ցերեկվա տոթը բարեխառնող ծովային մեղմ քամու տակ, որը գգվում էր նրանց, Մարտինը խորը, իր ամբողջ էությամբ զգում էր, որ աշխարհը հիանալի է, և որ լավ է ապրել ու սիրել։ Նրանք թողեցին հեծանիվները ճամփի եզերքին, իսկ իրենք բարձրացան բլրի գորշ գագաթը, ուր արևակեզ կանաչից թարմ խոտի չոր ու բարկ հոտ էր գալիս։

— Այս խոտն իր գործն արել է,— ասաց Մարտինը,— երբ նրանք նստեցին բլրին, Ռութը նրա կուրտիկի վրա, իսկ նա՝ ինքը ուղղակի տաք գետնին։

Շնչելով այդ անուշ, զգլխիչ բույրը, նա սովորականի պես իսկույն սկսեց խորհրդածել՝ անցնելով մասնավորից դեպի համաշխարհային պրոբլեմները։

— Սա կատարել է կյանքում իր դերը,—շարունակեց նա, շոյելով չոր խոտը,— սնվել է ձմեռային տեղատարափ անձրևներով, պայքարել է գարնանային առաջին փոթորիկների դեմ, ծաղկել է և կերակրել միջատներին ու մեղուներին, ցրել է դես ու դեն իր սերմերը, իսկ հիմա, աշխարհի հանդեպ իր պարտքը կատարելով...

— Ինչո՞ւ դուք նայում եք ամեն բանի վրա ինչ-որ գործնական տեսակետից,— ընդմիջեց նրան Ռութը։

— Հավանաբար այն պատճառով, որ ես էվոլուցիայի տեսությունն եմ ուսումնասիրում։ Ի միջի այլոց, ճիշտն ասած, ես միայն վերջերս եմ սկսել տեսնել ամեն ինչ իր իսկական լույսով։

— Բայց ինձ թվում է, որ դուք դադարում եք հասկանալու գեղեցկությունը՝ ձեր այդ գործնական մոտեցման պատճառով։ Դուք քանդում եք գեղեցկությունը, ինչպես փոքրիկ

տղան ոչնչացնում է թիթեռնիկներին՝ նրանց թևիկներից սըրելով ծաղկափոշին։

Մարտինը բացասարար շարժեց գլուխը։

— Գեղեցկությունն իր նշանակությունն ունի, բայց ես մինչև այժմ չէի ըմբռնում այդ նշանակությունը։ Գեղեցիկը պուր էր գալիս ինձ պարզապես նրա համար, որ նա գեղեցիկ է, ուրիշ ոչինչ։ Ես չէի հասկանում գեղեցկության էությունը։ Այդ խոտն ինձ համար ավելի սքանչելի է այժմ, երբ ես գիտեմ, թե նա ինչո՞ւ է այդպես, գիտեմ արևի, անձրևների և հողի այն քիմիական աղդեցությունը, որը հարկավոր էր, որպեսզի այս բլրում խոտ բուսնի։ Ամեն մի խոտիկի պատմության մեջ շատ ռոմանտիկ բան կա. նա քիչ արկածներ չի ապրել։ Հենց այդ միտքն էլ ոգեշնչում է ինձ։ Երբ ես մտածում եմ ուժերի և մատերիայի խաղի, կյանքի ողջ մեծ պայքարի մասին, զգում եմ, որ կարող եմ այդ խոտի մասին գրել մի ամբողջ պոեմա, և ոչ միայն մի պոեմա։

— Ինչ լա՞վ եք խոսում,— ասաց Ռութը մտացրիվ։ Բայց Մարտինը նկատեց, որ աղջիկը միաժամանակ իր նայվածքով զննեց նրան։

Մարտինը մի պահ շփոթվեց, և նրա այտերը շիկնեցին։

— Ուրախ եմ, որ վերջապես սովորեցի խոսել,— ասաց նա,— ես այնքա՞ն բան եմ ուզում ասել։ Բայց այդ ամենն այնքան մեծ է, որ չեմ կարողանում գտնել հարմար բառեր։ Երբեմն թվում է ինձ, որ ողջ աշխարհը, ողջ կյանքը, ամեն մի խոտ կոչ են անում ինձ և պահանջում, որ ես խոսեմ նրանց փոխարեն։ Ես զգում եմ այդ, բայց ինչպե՞ս նկարագրեմ այդ։ Ես զգում եմ ամեն բանի վեհությունը. բայց երբ սկսում եմ խոսել, ստացվում է մանկական թոթովանք։ Դա սահագին խնդիր է — իր մտքերն ու զգացումները մարմնավորել բառերով, բերանացի կամ գրավոր, այնպես որ ունկընդիրը կամ ընթերցողը հասկանա նրանց, որ նրանք վերստին մարմնավորվեն նրա մեջ նույն մտքերի ու զգացումների կերպարով։ Դա աստվածային մի խնդիր է։ Ահա տեսեք, ես դեմքով թաղվում եմ խոտի մեջ, և այս բույրը

որը շնչում եմ, իմ մեջ առաջացնում է հաղարավոր մտքեր ու կերպարներ։ Չէ՞ որ ես շնչեցի տիեզերքի բույրը։ Ես լսում եմ երգեր ու ծիծաղ, տեսնում եմ երջանկություն և վիշտ, պայքար, մահ։ Ուղեղումս անհամար տեսիլներ են առաջանում, և ես կուզենայի հաղորդել նրանք ձեզ, ողջ աշխարհին։ Բայց ինչպե՞ս անեմ այդ։ Իմ լեզուն կաշկանդված է։ Ես կուզենայի բառերով հաղորդել ձեզ այն ամենը, ինչ ես զգում էի, երբ քիչ առաջ շնչում էի խոտի բույրը։ Բայց ոչինչ դուրս չեկավ։ Ստացվեցին միայն աղոտ, անհոռնի ակնարկություններ, բառերի ինչ-որ անկապ կուտակում... մինչդեռ ես այնքա՞ն ուզում եմ խոսել։ Օ՜... — նա հուսահատ սկսեց կոտրատել մատները,— դա անհնար է։ Չի կարելի պատմել։ Չի կարելի հաղորդել։

— Բայց դուք շատ լավ եք խոսում,— հավաստում էր Ռութը,— պարզապես զարմանալի է, որ դուք այդ կարճ ժամանակում սովորեցիք խոսել։ Միստեր Բեթլերը հանրածանոթ հռետոր է։ Նահանգի կոմիտեն միշտ նրան է հրավիրում ճառ արտասանելու նախընտրական պայքարի ժամանակ։ Իսկ այն օրը, ճաշին, դուք նրանից վատ չէիք խոսում։ Բայց նա ավելի ինքնաղուսպ է։ Դուք շատ եք տաքանում. բայց դա աստիճանաբար կանցնի։ Ձեզանից հրաշալի հռետոր դուրս կգա։ Դուք շատ առաջ կգնաք... եթե ուզենաք։ Ձեզանում ուժ կա։ Դուք ընդունակ եք մարդկանց տանել ձեր ետևից, ես վստահ եմ դրանում։ Դուք կարող եք հաղթահարել ձեր ճանապարհին ամեն դժվարություն ճիշտ այնպես, ինչպես հաղթահարեցիք քերականությունը։ Դուք կարող եր հայտնի փաստաբան դառնալ։ Կամ քաղաքական գործիչ։ Ոչինչ չի խանգարում ձեզ ձեռք բերել նույնպիսի հաջողություն, ինչպես միստեր Բեթլերը։ Ընդամենը առանց կատակի,— ավելացրեց նա ժպտալով։

Նրանք շարունակեցին զրուցել։ Ռութը, սովորականի պես, սիրալիր, բայց հաստատակամ խոսում էր, որ անհրաժեշտ է սովորել, նշում էր, որ լատիներենը անպայման հիմքն է ամեն տեսակ կարիերայի։ Աղջիկը նրան նկարագրեց

իր իդեալը, թե ինչպես է պատկերացնում մարդուն և աղամարդուն՝ իսկ և իսկ նկարագրելով իր հորը և լրացնելով նրան՝ բացահայտորեն միստեր Բետլերից փոխ առած մի քանի գծիկներով։ Մարտինը լսում էր նրան, կռնակին պառկած և հրճվելով նրա շրթերի ամեն մի շարժումով, բայց Ռութի խոսքերն արձագանք չէին գտնում նրա մեջ։ Աղջկա նշած հեռանկարները չէին հրապուրում նրան, և նա զգում էր հիասթափության մի խուլ դառնություն՝ միախառնված սիրո սաստիկ տանջանքին։ Աղջիկը ոչ մի բառ չասաց նրա գրական աշխատանքի մասին, և նրա բերած գրվածքները թափված էին գետնին, առանց որևէ ուշադրություն դրավելու։

Վերջապես, խոսակցության մի դադարի ժամանակ Մարտինը նայեց արևին, չափեց նրա բարձրությունը հորիզոնից և սկսեց հավաքել իր գրվածքները՝ հիշեցնելով դրանց մասին։

— Ա՜խ, ես մոռացել էի,— աշխույժ ասաց Ռութը,— ես շատ եմ ուզում, որ դուք կարդաք դրանք։

Մարտինը նրան կարդաց այն պատմվածքը, որը իրեն թվում էր ամենալավը։ Նրա վերնագիրն էր «Կյանքի գինին» և այն գինին, որ հարբեցրել էր Մարտինին այդ պատմվածքը գրելիս, նորից խփեց նրա գլխին այժմ, կարդալիս։ Պատմվածքի ինքնատիպ հղացման մեջ յուրահատուկ մի թովչանք կար, և նա աշխատում էր ուժեղացնել այն վառ բառերով ու դարձվածքներով։ Գրելու ժամանակ նրա մեջ վառված ոգեշնչման հուրը դարձյալ համակեց նրան, և նա կարդում էր ահագին հափշտակությամբ, առանց ոչ մի թերություն նկատելու։ Այդպես չէր Ռութի տպավորությունը։ Նրա նուրբ լսելիքը միանգամից նկատեց գրվածքի բոլոր թույլ կողմերը, բոլոր չափազանցությունները, համբակ գրողի ծայրահեղ պաթոսը, նախադասության ռիթմիկ կառուցվածքի հաճախակի խախտումները։ Աղջիկն առհասարակ ռիթմ չէր գտնում նրա պատմվածքում, բացի այն տեղերից, որոնք հնչում էին բրոնագրոսիկ կերպով չափված-ձևված, և դա անախորժ տպավո-

թություն էր թողնում նրա վրա, որպես վատ դիլետանտիզմ. «Դիլետանտիզմ» — այդպես էր աղջկա վերջնական վճիռը, բայց նա չարտասանեց այդ բառը, ընդհակառակը, նա միայն մի քանի անհրաժեշտ դիտողություններ արեց և ասաց, որ ընդհանրապես պատմվածքը նրան շատ է դուր գալիս։

Իսկ Մարտինը հիասթափված էր։ Ռութի քննադատությունն իրավացի էր. նա չէր կարող չխոստովանվել այդ, բայց չէ՞ որ նա կարդաց աղջկան իր գրվածքը ոչ թե նրա համար, որ նա ուղղումներ անի, ինչպես դպրոցում անում են աշակերտների շարադրություններում։ Բանը մանրամասնությունների մեջ չէ։ Այդ բոլորը կարելի է ուղղել։ Իհարկե, վաղ թե ուշ նա ինքը կվարժվի նկատել մանր մեղանչումները և կամ բոլորովին խուսափել նրանցից։ Բայց չէ՞ որ այդ պատմվածքում նա աշխատել է զետեղել մեծ, կենդանի կյանքի մի կտոր։ Նա հենց կյանքի այդ կտորն էր ուզում ցույց տալ Ռութին, և ոչ թե կետերով ու ստորակետներով բաժանված մի շարք նախադասություններ։ Մարտինը ուզում էր, որ նա կդար այն մեծ ու կարևոր բանը, որը նա տեսել է սեփական աչքերով, ըմբռնել է իր բանականությամբ, շոշափել ձեռքերով և զետեղել է ահա այդ կարճառոտ տողերի մեջ։ Ակնհայտ է, որ դա չի հաջողվել, մտածեց նա։ Թերևս խմբագիրները, վերջ ի վերջո, իրավացի են։ Նա տեսնում էր մեծն ու կարևորը, բայց չէր կարողանում խոսքերով արտահայտել այդ։ Եվ, թաքցնելով իր հիասթափությունը, Մարտինը հեշտությամբ համաձայնեց Ռութի քննադատությանը. իսկ աղջկա մտքովն էլ չանցավ, թե բողոքի ինչպիսի՛ մեծ փոթորիկ առաջացրեց Մարտինի մեջ։

— Ահա այս փոքրիկ պատմվածքը ես վերնագրել եմ «Կաթսա»,— ասաց նա, բանալով մի այլ գրվածք։— Չորս թե հինգ ժուռնալ մերժեցին այն, բայց և այնպես այդ պատմվածքը դուր է գալիս ինձ։ Իհարկե, դժվար է ինձ ինքս դատել, բայց, իմ կարծիքով, նրանում ինչ-որ բան կա։ Թերևս դա չի գրավի ձեզ այնպես, ինչպես գրավել է

ինձ, բայց պատմվածքը կարճ է։ Ընդամենը երկու հապավ բառ։

— Ի՞նչ սարսափելի է,— բացագանչեց աղջիկը, երբ նա վերջացրեց ընթերցումը։— Դա սարսափելի է։ Պարզապես սոսկալի է։

Մարտինը թաքուն գոհունակությամբ նայեց նրա գունատ դեմքին, փայլփլող աչքերին ու սեղմված ձեռքերին։ Նա հասել էր իր նպատակին։ Նա կարողացավ հաղորդել նրան այն զգացումներն ու մտքերը, որոնք գրավել էին նրան։ Պատմվածքը գո՞ւր եկավ աղջկան, թե ոչ — միևնույնն է, կարևորն այն է, որ դա նրա վրա տպավորություն թողեց, ստիպեց նրան ուշադիր լսել, այնպես որ աղջիկը մինչև անգամ չնկատեց մանր թերությունները։

— Դա կյանքն է,— ասաց նա,— իսկ կյանքը ոչ միշտ է հրաշալի։ Թերևս ես շատ տարօրինակ եմ կառուցված, բայց ես այստեղ էլ եմ գտնում գեղեցկություն։ Ընդհակառակը, դա ինձ համար տան անդամ ավելի թանկ է թվում այդ...

— Բայց ինչու՞ այդ զժրախտ կինը չէր կարող...— ընդմիջեց նրան Ռութը և իսկույն դարձյալ բացագանչեց վրդովված,— օ՜, դա այլանդակ է, զզվելի է, կեղտոտ է։

Մի պահ Մարտինին թվաց, որ ինքը անզգայացավ։ Կեղտո՞տ է։ Նա երբեք չէր մտածել դրա մասին, երբեք չէր ենթադրել։ Ողջ պատմվածքը նրա աչքի առաջ վառվում էր հրեղեն տառերով և, այդ շողքից շլացած, դրանում ոչ մի կեղտ չէր նկատվում։ Ահա նրա սիրտը դարձյալ արագեց։ Նրա խիղճը հանդիստ էր։

— Ինչու՞ դուք ավելի գեղեցիկ մի սյուժե չընտրեցիք,— ասաց Ռութը։— Մենք գիտենք, որ աշխարհում շատ կեղտոտ բաներ կան, բայց դա բոլորովին չի նշանակում...

Ռութը շարունակեց խոսել ինչ-որ բաներ, զայրույթից բռնկված, բայց Մարտինը նրան չէր լսում։ Նա նայում էր նրա կուսական դեմքին— այնքա՞ն անմեղ, այնքա՞ն սրտառուչ կերպով անմեղ, որ կարծես նրա անարատությունը

թափանցում էր Մարտինի սրտի խորքը՝ մաքրելով ու լվանալով նրան հիերային, զով ու քնքուշ ցոլքով, ինչպես աստղերի փայլը։ Մենք գիտենք, որ աշխարհում շատ կեղտ կա։ Մարտինը մոռացել, թե Ռութը ինչ կարող էր «գիտենալ», և ուրախ ժպտաց ինքն իրեն, կարծես աղջիկը կատակում էր նրա հետ։ Մի ակնթարթում նրա աչքի առաջ բռնկվեց կենցաղային կեղտի անսահման օվկիանոսի տեսիլքը, որը նրան այնքան լավ ծանոթ էր, որի մեջ նա այնքան լողացել է, և նա ներեց աղջկանը, որ չհասկացավ իր պատմվածքը։ Ռութը մեղավոր չէր, որ չհասկացավ։ Մարտինը շնորհակալ եղավ աստծուն, որ Ռութը ծնվել ու մեծացել է այդ բոլորից հեռու։ Իսկ ի՞նքը — ինքը գիտի կյանքը, գիտի նրա անարգությունը նույնքան լավ, ինչպես և նրա մեծությունը. գիտի, որ կյանքը հրաշալի է՝ չնայած նրան ծածկող ամբողջ կեղտոտության, և— սատանա՛ն տանի— նա այդ մասին իր խոսքը կասի աշխարհին։ Զարմանալի չի, որ երկնքի սուրբերը մաքուր են և անարատ։ Այստեղ արժանիք չկա։ Իսկ սուրբերը— կեղտի մեջ— դա արդեն հրաշք է։ Եվ այդ հրաշքի համար արժե ապրել։ Տեսնել անիրավության կոյուղիների վերև բարձրացող բարոյական մեծությունը. աճել և դեռևս կեղտով պատած սեփական աչքերով որսալ դեղեցկության առաջին շողերը. տեսնել, թե ինչպես թուլությունից, արատավորությունից և ոչնչությունից ծաղկում են ուժը, ճշմարտությունն ու հոգու ազնվությունը։

Հանկարծ Մարտինի ականջին հասավ Ռութի ձայնը.

— Ամբողջ տոնը ինչ-որ անարդ է։ Իսկ ինչքան շատ կան վեհ բաներ. հիշեցեք «In memoriam»[1]։

Մարտինն ուզում էր ասել նրան «Իսկ Լոբսլի Հո՞լլը», և կասեր, եթե տեսիլքները նորից չխանգարեին նրան։ Նա նայում էր Ռութին, այդ մարդկային էգին, և միտք էր անում, թե ինչպիսի՜ բարդ ճանապարհներով, հարյուր

---

1 Ի հիշատակ, հիշատակին (լատ.)։

հազարավոր [illegible] ընթացքում բարձրանալով կյանքի սանդուղքներից. նա հասել է-վերջապես [illegible] կերպարին, որը մարմնավորվում է Ռութի մեջ— մաքուր և հրաշալի, [illegible]ածային ուժով օժտված, և կարողացել է ներշնչել նրան՝ Մարտինին սեր և ձգտում դեպի անարատություն և այդ աստվածային ուժը փորձելու [illegible]— նրան, Մ[illegible]ին Իդենին, որը նույնպես [illegible]ելի կերպով բարձրացավ խորքից՝ հաղթահարելով անթիվ արգելքներ ու կյանքի մեծ պրոցեսի շեղումներ: Ահա թե ինչ՛ումն է և՛ ռոմանտիկան, և՛ գեղեցկությունը, և՛ հրաշքը: Ահա թե ինչի՛ մասին պետք է գրել. միայն թե կարողանա գտնել բառեր: Երկնքի սուրբերը թող սուրբ էլ մնան: Իսկ ինքը մա՛րդ է:

— Չեզանում շատ ուժ կա,— լսեց նա Ռութի ձայնը,— բայց այդ ուժը ինչ-որ անսանձ է:

— Նման է ամանեղենի խանութում գտնվող ցուլին,— կատակեց նա՝ պարգևատրվելով աղջկա ժպիտով:

— Դուք պետք է սովորեք ջոկել թեմաները: Դուք պետք է մշակեք ձեր մեջ ճաշակ, նրբություն, ոճ:

Մարտինը մրմնջաց.

— Ըստ երևույթին ես մեծ հավակնություններ ունեմ:

Ռութը պատասխանեց նրան քաջալերիչ ժպիտով և պատրաստվեց լսել հետևյալ պատմվածքը:

— Չգիտեմ, թե ինչպե՛ս կհավանեք,— ասաց Մարտինը, կարծես արդարանալով:— Սա տարօրինակ պատմվածք է: Կարող է պատահել, որ ես այստեղ իմ ուժերից չափազանց վեր գործ եմ բռնել, բայց պիտի ասել, որ լավ հղացում եմ ունեցել: Աշխատեցեք մանրուքների վրա ուշադրություն չդարձնել: Գլխավորը նա է, որ հիմնական միտքը ըմբռնեք: Դա կարևոր և ճշմարիտ միտք է, միայն չգիտեմ, թե կարողացե՞լ եմ հասկանալի դարձնել այն:

Նա սկսեց կարդալ. կարդալիս նա նայում էր Ռութին: Վերջապես նրան թվաց, որ այդ պատմվածքը հափշտակեց աղջկան: Ռութը նստած էր անշարժ, առանց կտրելու իր

հայացքը նրանից. շունչը բռնած, ինչպես երևում էր՝ կախարդվելով Մարտինի ստեղծած կերպարներից։ Պատմվածքի վերնագիրն էր «Արկած», և դա իրոք արկածի ներրողն էր—ոչ թե այնպիսի արկած, որը կարդում ենք գրքերում, այլ իսկական, մեծատառ Արկած՝ ահեղ տիրոջ, պատժելու և վարձատրելու մեջ հավասարապես առատաձեռն, քմահաճ և ուխտադրուժ, ստրկական հնազանդություն և դիշեր-ցերեկ անխոնջ աշխատանք պահանջող տիրոջ, որը մերթ տանում է դեպի արևի շլացուցիչ տարածությունները, մերթ դատապարտում է ծարավի, քաղցի, հոգնեցուցիչ երկար ճամփի տանջանքների, կամ դաժան մահացու ջերմախտի, և քրտնքի, արյան, թունալից միջատների խայթոցների մանր և տգեղ դիպվածների միջով տանում է դեպի փառահեղ ու հաղթական վախճան։

Այդ ամենը և դեռ շատ բան էր նկարագրել Մարտինն իր պատմվածքում. նրան թվում էր, որ այդ ամենը ստիպում էր Ռութին լսել նրան հրավառ աչքերով. աղջկա այտերը կարմրեցին, և ընթերցումի վերջին Մարտինին թվաց, որ նա ուշաթափվելու վրա է։ Ռութն իրոք հուզված էր, բայց ոչ պատմվածքից, այլ իրենից՝ Մարտինից։ Բանը պատմվածքում չէր. աղջիկը դարձյալ հափշտակվեց իրեն արդեն ծանոթ այն ուժով, որը բխում էր Մարտինից և սարսափեցնում էր նրան։ Սակայն տարօրինակ էր, որ այդ պատմվածքը հագեցած էր հենց այդ ուժով, և այժմ դա միակ իողովակն էր, որով այդ ուժի ալիքները հոսում էին դեպի Ռութը։ Աղջիկը զգում էր միայն այդ ուժը, գրեթե չնկատելով այն բանը, որը միջնորդի դեր էր կատարում և, թեպետ նրան հափշտակել էր իրը թե նոր կարդացված պատմվածքը,— իրականում նա ցնցված էր միանգամայն կողմնակի, նրա ուղեղում հանկարծ ծագած սոսկալի մի մտքից։ Ռութը հանկարծ մտածեց ամուսնության մասին, և այդ մտքի քմահաճ համառությունը վախեցրեց նրան։ Դա անհամեստ բան էր։ Դա մինչև այժմ այնքան օտարոտի էր Ռութի համար։ Նրան դեռ երբեք չէր տանջել զարթնող կանացիությունը, և

Նա մինչև այժմ ապրել էր Տենենբաումի պոեզիայով ոգեշնչված երազների աշխարհում՝ խաղ մնալով մինչև անգամ այն փաստիկանկատ ակնարկությունների հանդեպ, որոնցով պոետը շոշափում էր ասպետների և թագուհիների փոխհարաբերությունների անպատշաճ ճշմարտությունը։ Նա մինչ այժմ քնած էր, և հանկարծ կյանքը տիրապետեց նրա դուռը։ Սարսափահար՝ նա կուզենար պինդ փակվել, իսկ զարթնող բնազդը պահանջում էր, որ նա լայն բանա դուռը տարօրինակ և գեղեցիկ հյուրի առաջ։

Մարտինն ինքնագոհ սպասում էր նրա վճռին։ Նա չէր կասկածում, թե ի՞նչ կլինի այդ վճիռը, և ապշեց, երբ Ռութն ասաց.

— Դա գեղեցիկ է։

Մի փոքր դադարից հետո աղջիկը ջերմագին կրկնեց.

— Դա գեղեցիկ է։

Իհարկե, դա գեղեցիկ էր. բայց պատմվածքում կար ինչ-որ ավելի մեծ բան, այնպիսի մի բան, որին գեղեցկությունը ծառայում էր իբր գործիք։ Մարտինը փոված էր դետնին, և տարակուսանքի չարագուշակ թուխպը գրոհում էր նրա վրա... Դարձյալ չհաջողվեց։ Նա չի տիրապետում խոսքի արվեստին։ Նա տեսնում է աշխարհի ամենամեծ հրաշալիքները, բայց չի կարողանում նկարագրել նրանք։

— Իսկ ի՞նչ կասեք...— նա կանգ առավ՝ չվճռելով արտասանել օտար մի բառ,— սյուժեի մասին։

— Սյուժեն մի քիչ խճճված է,— պատասխանեց նա,— դա իմ ընդհանուր տպավորությունն է։ Ես աշխատեցի հետևել հիմնական գծին, բայց դա դժվար է։ Դուք չափազանց երկարաբան եք։ Մթագնում եք գործողությունը՝ միանգամայն կողմնակի նյութ ներմուծելով։

— Բայց հիմնական բովանդակությո՞ւնը,— արագ հարցրեց Մարտինը և բացատրեց,— կոսմիկ և համաշխարհային գաղափարը։ Ես ուզում էի ամբողջ պատմվածքը հագեցնել այդ գաղափարով։ Պատմվածքը միայն թաղանթ է նրա համար։ Ես ուզիղ ճանապարհով եմ ընթացել, բայց

վատ եմ կատարել առաջադրանքս։ Ակներև է, որ ես չեմ կարողացել արտահայտել ուղածս։ Թերևս ժամանակի ընթացքում սովորեմ։

Ռութը չէր լսում նրան։ Նրա մտքերն անհասկանալի էին աղջկան, թեպետ նա գեղեցիկ արվեստների բակալավր է։ Ռութը չէր հասկանում Մարտինի մտքերն ու իր անհասկացողությունը վերագրում էր նրա արտահայտելու անընդունակությանը։

— Դուք չափազանց երկարաբան եք,— կրկնեց նա,— բայց տեղ-տեղ հիանալի է ստացվել։

Նրա ձայնը Մարտինի ականջին հասնում էր կարծես հեռվից, որովհետև այդ ժամանակ մտածում էր, թե արդյոք արժե՞ կարդալ աղջկան «Ծովի երգը»։ Նա պառկած էր մռայլ հուսահատության մեջ, իսկ աղջիկը նայում էր նրան և նրա գլխում շրջում էին ամուսնության վերաբերյալ միշտ նույն անկոչ ու աներես մտքերը։

— Դուք ուզում եք նշանավո՞ր դառնալ։

— Այ՛ո, մի քիչ,— խոստովանվեց նա,— բայց դա չի գլխավորը։ Ինձ զբաղեցնում է ոչ այնքան փառքը, որքան դեպի փառքը տանող ճամփան։ Բայի այդ, փառքը ինձ հարկավոր է այլ բանի համար։ Կա մի բան, որի համար ես շատ եմ ուզում նշանավոր դառնալ։

Նա ուզում էր ավելացնել՝ «ձեզ համար», և հավանորեն կավելացներ, եթե Ռութը ավելի տաք վերաբերվեր նրա գրվածքներին։

Բայց Ռութը այդ պահին չափազանց զբաղված էր Մարտինի ապագայի մասին մտքերով և այդ պատճառով մինչև անգամ չհարցրեց, թե ի՞նչն է ակնարկում նա։ Ռութը հաստատ համոզված էր, որ գրական ասպարեզում նա չի կարող հաջողություն գտնել։ Նա դեռ նոր ապացուցեց այդ իր դիլետանտական միամիտ գրվածքներով։ Նա լավ էր խոսում, բայց բոլորովին չէր տիրապետում գրական ոճին։ Ռութը նրան բաղդատում էր Տեննիսոնի և Բրոուինինգի՝ իր ամենասիրած արձակագիրների հետ, և այդ բաղդատությու-

նը նրա համար ավելի քան աննպաստ էր։ Բայց Ռութը չասաց Մարտինին այն ամենը, ինչ մտածում էր։ Այն տարօրինակ շահադրգռությունը, որ Մարտինը առաջացնում էր նրա մեջ, ստիպում էր նրան չափազանց խստապահանջ չինել։ Վերջ ի վերջո նրա գրելու հակումը մի փոքրիկ թուլություն է, որը, հավանական է, ժամանակի ընթացքում կանհետանա։ Այն ժամանակ նա, իհարկե, իր ուժերը կփորձի կյանքի ավելի լուրջ ասպարեզներում և հաջողություն ձեռք կբերի։ Ռութը վստահ էր այդ բանում։ Մարտինն այնքան ուժեղ է, որ անշուշտ ձեռք կբերի ամեն բան... միայն թե շուտով թողնի գրելը։

— Ուզում եմ, որ ինձ ցույց տաք ձեր բոլոր գրվածքները, միստեր Իդեն,— ասաց նա։

Մարտինը կարմրատակեց ուրախությունից։ Ռութը հետաքրքրվեց—դա անկասկած է։ Վերջ ի վերջո Ռութը հո չի խոտել նրա գրվածքները, մինչև անգամ նա գտել է, որ որոշ տեղեր հիանալի են։ Առաջին անգամը Ռութից է լսել խրախուսիչ խոսքեր։

— Լա՛վ,— ասաց նա խանդավառ,— և խոստանում եմ ձեզ, միս Մորդ, որ ես լավ գրող կդառնամ։ Գիտեմ, որ ես հեռվից եմ եկել, և դեռ երկար ճամփա ունեմ կտրելու, բայց ես կանցնեմ այդ ճամփան, թեկուզ դրա համար կարիք լինի, որ չորեքթաթ գնամ։

Նա հրկարեց աղջկան մի կապոց գրվածքներ։

— Ահա սրանք «Ծովի երգեր» են։ Ես դրանք ձեզ կտամ տուն տանելու, որպեսզի կարդաք, երբ ժամանակ կունենաք։ Բայց հետո անկեղծորեն կասեք ձեր կարծիքը։ Ես շատ կարիք ունեմ քննադատության։ Խնդրում եմ, ասեք ինձ ամբողջ ճշմարտությունը։

— Ես ոչինչ չեմ թաքցնի,— խոստացավ Ռութը՝ իր հոգու խորքում զգալով, որ այս անգամ անկեղծ չի եղել նրա հետ և չգիտենալով, թե կարո՞ղ է անկեղծ լինել հետագայում։

ԳԼՈՒԽ XV

— Առաջին ճակատամարտը տեղի ունեցավ և վերջացավ,— ասաց Մարտինը՝ տասը օր հետո նայելով Հայելուն,— բայց տեղի կունենան և երկրորդը, երրորդը, մինչև որ... Առանց նախադասությունը վերջացնելու նա դիտեց իր խցի չորս կողմը և նրա հայացքը տխրությամբ կանգ առավ անկյունում թափված գրվածքների երկար ծրարների վրա այն վիճակում, որով նրանք վերադարձվել էին նրան։ Նա դրամ չուներ փոստանիշեր գնելու, որպեսզի ուղարկել նրանք նոր հասցեներով, իսկ մի շաբաթվա ընթացքում այդ գրվածքների մի ողջ դեզ է գոյացել։ Նրանք ստացվելու են և վաղը, և մյուս օրը, մինչև որ բոլորը կվերադառնան իրենց տիրոջ մոտ։ Եվ նա արդեն չի կարող ուղարկել նրանք այլ տեղեր։ Արդեն մի ամբողջ ամիս է, որ նա չի վճարել գրամեքենայի վարձը և չէր էլ կարող վճարել, որովհետև նրա մոտի դրամը հազիվ բավեց հատուցելու ապրուստի ծախսը և մուծելու միջնորդ դրասենյակի վճարը։

Նա նստեց և մտածկոտ նայեց իր սեղանին։ Նրա վրա երևում էին թանաքի բծեր, և Մարտինը հանկարծ քնքշությամբ համակվեց դեպի սեղանը։

— Սիրելի՜, վաղեմի սեղան,— ասաց նա,— ես շատ երջանիկ ժամեր եմ անցկացրել քո առաջ, և դու միշտ իմ հավատարիմ բարեկամն ես եղել։ Դու՞ երբեք չես վանել ինձ, երբեք չես վիրավորել անիրավացի մերժումներով, երբեք չես դանգատվել աշխատանքի ծանրությունից։

Նա արմունկով հենվեց սեղանին և ձեռքերով ծածկեց երեսը։ Արցունքները խեղդում էին նրան։ Նա հիշեց իր առաջին կռիվը, երբ, վեց տարեկան հասակում, արտասվաթոր աչքերով, պաշտպանվում էր մի այլ՝ իրենից երկու տարով մեծ տղայից, որը բռունցքներով խփում էր նրան ուժասպառ անելու աստիճան։ Նա տեսավ իրենց սեղմ շրջապատած տղաներին, որոնք վայրենի դոռոց բարձրա-

դրին, երբ նա վերջ ի վերջո ընկավ՝ կուլ տալով քթից հոսող արյունը և ջարդված աչքերից արտասուք թափելով։

—Խ՜եղ՝ փոքրիկ,— մրմնջաց նա,— հիմա քեզ նորից ջարդեցին։ Այնպես ջարդեցին, որ այլևս ոտի չես կանգնի։

Բայց այդ առաջին ճակատամարտի հիշողությունը չէր անհետանում, և դրան հաջորդած բոլոր կռիվները հերթով անցան Մարտինի աչքի առաջով։ Կես տարի անց Ճարպոտ Մռութը (տղային այնպես էին անվանում) դարձյալ հարձակվեց նրա վրա։ Բայց այս անգամ Մարտինն էլ կապտեցրեց նրա աչքի տակը։ Դա որոշ հաջողություն էր։ Նա հիշեց իրար ետևից իր բոլոր մարտերը։ Ճարպոտ Մռութը միշտ էլ հաղթում էր։ Սակայն Մարտինը ոչ մի անգամ փախուստ չտվեց։ Նա հպարտություն զգաց՝ հիշելով այդ։ Նա միշտ էլ տոկում էր մինչև վերջ, թեպետ հետո նա ստիպված էր լինում բուժել իր վերքերը։ Ճարպոտ Մռութը ստոր հակառակորդ էր, միշտ անողոք։ Բայց Մարտինը դիմանում էր։ Նա միշտ էլ դիմացել է մինչև վերջ։

Հետո Մարտինի աչքին պատկերացավ՝ հին կարկասե տների շարքերի միջև մի նեղ նրբափողոց, որի վերջում գտնվում էր մի աղյուսաշեն միհարկանի տուն, որտեղից լսվում էր «Համբավաբեր» օրաթերթը տպող մեքենաների աղմուկը։ Այն ժամանակ Մարտինը տասնմեկ տարեկան էր, իսկ Ճարպոտ Մռութը տասներեք տարեկան. երկուսն էլ թերթի ցրիչ էին։ Այդ պատճառով էլ նրանք սպասում էին տպարանի դռան առաջ կանգնած։ Հասկանալի է, որ Ճարպոտ Մռութն անմիջապես կռվի բռնվեց Մարտինի հետ, բայց մարտի ելքը անորոշ մնաց, որովհետև ժամը չորսից քառորդ պակաս տպարանի դարբասը բացվեց և տղաների ամբողջ բաղմությունը ներս վազեց թերթեր ստանալու համար։

— Ես քեզ կջարդեմ վաղը,— խոստացավ նրան Ճարպոտ Մռութը, և Մարտինը արցունքից զողդոջուն ձայնով հայտարարեց, որ վաղը կլինի այստեղ։

Հաջորդ օրը նա վազեց-եկավ դպրոցից՝ Ճարպոտ

Մոութից երկու բոպե առաջ հասնելով Հակատամարտի վայրը։ Մյուս տղաները գովեցին Մարտինին և տվեցին նրան խորհուրդներ, որոնց հետևելով նա անպայման պետք է ջախջախի հակառակորդին։ Սակայն նույն տղաները նույնպիսի խորհուրդներ տալիս էին և Ճարպոտ Մոութին։ Ինչպե՞ս էին հրճվում այդ ձրի դիտողները։ Մարտինը կանգ առավ այդ հիշողության վրա և մինչև անգամ նախանձում էր այդ տղաներին՝ մտածելով, թե ինչպիսի՛ բավականություն են ստացել նրանք այն ժամանակ։ Մարտը սկսվեց և շարունակվեց ամբողջ կես ժամ՝ մինչև տպարանի դռան բացվելը։

Մարտինը կրկին ու կրկին տեսավ իրեն իր երեխա, որը ամեն օր դպրոցից շտապում էր գնալ տպարան։ Նա չէր կարողանում արագ վազել։ Նա կռացել ու կաղում էր մշտական կոիվների հետևանքով։ Նրա ձեռքերն ամբողջովին կապտած էին, ողջ մարմինը պատած էր ճանկոված-քներով, և վերքերից մի քանիսը սկսել էին թարախակալել։ Մղկտում էին նրա ոտքերն ու ձեռքերը, մղկտում էր կրունակը, մղկտում էր ամբողջ մարմինը. կապարի պես ծանրացած գլուխը մառախլապատ էր։ Դպրոցում նա արդեն չէր կարողանում խաղալ։ Չէր էլ սովորում։ Մինչև անգամ ամբողջ օրը նստարանի առաջ հանգիստ մնալը նրա համար տանջանք էր։ Թվում էր, որ ամբողջ դարեր են անցել այն օրից, երբ սկսվեցին այդ ամենօրյա կռիվները և ժամանակն երկարում էր, ինչպես մղձավանջ՝ անդադար սպասելով նոր ընդհարումների։ «Ինչո՞ւ չի կարելի ջախջախել Ճարպոտ Մոութին», մտածում էր Մարտինը։ Դա միանգամից կաղատեր նրան բոլոր չարչարանքներից։ Բայց երբեք իր մտքովն էլ չէր անցնում անձնատուր լինել և ընդունել, որ Ճարպոտ Մոութն իրենից ավելի ուժեղ է։

Եվ այդպես նա ամեն օր քարշ էր գալիս դեպի տպարանի դուռը, հոգով ու մարմնով խոշտանգված, սովորելու այն մեծ գիտությունը, որի անունն է համբերություն և հաստատակամություն,— և այնտեղ հանդիպում էր իր

հավիտենական թշնամուն—Ճարպոտ Մուրթին, որը նույնպես խոշանկված էր, ինչպես և ինքը, և հոժարակամ կդաղարեցներ ծեծկվուքը, եթե չկրկնեին ցրիչ երեխաները, որոնց առաջ նա չէր ուզում ամոթով մնալ։ Մի օր, քսան րոպե տևող հուսահատ կռվամարտից հետո, կռվի բոլոր պայմանները հարկելով (մեջքից ցած չրոնել իրար և գետին ընկածին չխփել), Ճարպոտ Մուրթն առաջարկեց վերջացնել այն «ոչ ոքի»։ Մարտինն այժմ էլ ցնցվեց այդ հիշողության թաղցրությունից. շնչասպառ և պատռած շրթունքից հոսող արյունից խեղդվելով՝ նա նետվեց Ճարպոտ Մուրթի վրա, թքեց արյունը, որը խանգարում էր խոսել, և գոռաց, որ համաձայն չէ վերջացնել «ոչ ոքի», և եթե Ճարպոտ Մուրթն ուժասպառվել է, թող անձնատուր լինի։ Բայց Ճարպոտ Մուրթը չէր ուզում հանձնվել, և կռիվը շարունակվեց։

Հաջորդ օրը կռիվը վերսկսվեց, և առաջվա պես շարունակվում էր ամեն օր։ Ամեն անգամ ծեծկտուքի սկզբին Մարտինը շատ էր տառապում ցավից, բայց հետո ցավը բթանում էր, և նա կռվում էր կատաղությունից կուրացած, կարծես քնի մեջ, իր առաջը տեսնելով միայն Ճարպոտ Մուրթի լայն այտոսկրները և նրա վառվող, ինչպես գազանի մոտ, աչքերը։ Նա իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց այդ կերպարանքի վրա, իսկ մնացած բոլոր բաները դադարեցին գոյություն ունենալուց։ Աշխարհում ոչինչ չկար՝ բացի այդ կերպարանքից, և Մարտինը գիտեր, որ կհանգստանա միայն այն ժամանակ, երբ այդ կերպարանքը կվերածի անձև, արյունաշաղախ մի զանգվածի և կամ իր դեմքը կվերածվի նույնպիսի արյունլվա զանգվածի։ Այն ժամանակ կարելի է դադարեցնել մրցությունը։ Իսկ համաձայնել «ոչ ոքի»—ի՛նքը, Մարտինը համաձայնի «ոչ ոքի»—դա անկարելի էր։

Մի օր այնպես պատահեց, որ սովորական ժամանակ գալով տպարանի դուռը՝ Մարտինն այնտեղ չգտավ Ճարպոտ Մուրթին։ Նա այնպես էլ չերևաց։ Երեխաները շնորհավորում էին Մարտինին՝ հավաստիացնելով, որ Ճարպոտ Մուրթն անձնատուր եղավ։ Բայց Մարտինը չբավարարվեց

այդպիսի ելքով։ Նա չի հաղթել Ճարպոտ Մոութին։ Ճարպոտ Մոութն էլ չի հաղթել նրան։ Վեճը չի լուծված։ Հետագայում պարզվեց, որ այդ նույն օրը Ճարպոտ Մոութի հայրը հանկարծամահ է եղել։

Մարտինը մտովին թռավ մի քանի տարի և տեսավ իրեն նստած թատրոնում, վերնասրահում։ Նա տասնյոթ տարեկան էր, նոր էր վերադարձել նավարկությունից։ Հանդիսատեսների միջև կռիվ ծագեց։ Ինչ-որ մարդ մի ուրիշին հրեց։ Մարտինը միջամտեց և հանդիպեց բոցավառ աչքերով իր վաղեմի թշնամուն՝ Ճարպոտ Մոութին։

— Ներկայացումից հետո ես քեզ կտրիմ,— շշնջաց նա Մարտինին։

Մարտինը գլխով հավանության նշան արեց։ Այդ սկանդալի վայրը շտապում էր վերնասրահում կարգ ու կանոնի հսկողը։

— Երբ կվերջանա, մենք կպատահենք ելքի մոտ,— փսփսաց Մարտինը՝ շարունակելով նայել բեմին։

Կարգ ու կանոնին հսկողը նայեց նրանց և հեռացավ։

— Դու ընկերներո՞վ ես այստեղ,— հարցրեց Մարտինը Ճարպոտ Մոութին, երբ արարվածը վերջացավ։

— Իհարկե։

— Ես էլ կկանչեմ մի քանի հոգու,—հայտարարեց Մարտինը։

Անտրակտի ժամանակ նա հավաքագրեց իր կողմնակիցներին— երեք բարեկամ՝ մեխի գործարանից, երկաթգծի մի հրդեհաշեջ, կես դյուժին նավաստիներ և նույնքան ղոչաղներ շուկայի հրապարակի նշանավոր շայկայից։

Ներկայացումից հետո երկու խմբերը գնացին փողոցի տարբեր կողմերով։ Հասնելով քաղաքի խուլ մասը՝ նրանք միացան և ռազմական խորհուրդ սարքեցին։

— Ամենահարմար վայրը Ութերորդ փողոցի կամուրջն է,— ասաց մի շիկակարմիր պատանի Ճարպոտ Մոութի շայկայից,— դուք կկռվեք մեջտեղում, էլեկտրական լապտերի տակ,

իսկ մենք կնայենք, թե գալի՞ս են ցլերը (ոստիկանները)։ Եթե նրանք երևան մի կողմից, մենք կփախչենք մյուս կողմը։

— Լա՛վ։ Համաձայն ենք,— ասաց Մարտինը՝ իր մարդկանց հետ խորհրդակցելուց հետո։

Ութերորդ փողոցի կամուրջը, ձգված Սան-Անտոնիոյի դետաբերանի մի թևի վրա, երկարությամբ հավասար է երեք թաղի։ Կամրջի մեջտեղում և երկու ծայրերում վառվում էին էլեկտրական լապտերներ։ Ոչ մի ոստիկան չէր կարող անակատելիորեն մոտենալ։ Մարտինի աչքին այժմ բոլոր մանրամասնություններով պատկերացավ կռվի հարմար այդ վայրը։ Նա տեսավ երկու շայկաները, մռայլ և թշնամական, դեմ առ դեմ կանգնած, ամեն մեկն իր մարտիկի թիկունքում։ Մարտինն ու Ճարպոտ Մռութը մերկացան մինչև մեջքը։ Հսկողները գրավեցին իրենց դիտակետերը կամրջի ծայրերին։ Նավաստիներից մեկը վերցրեց Մարտինից նրա կուրտիկը, շապիկն ու գլխարկը, որպեսզի ոստիկանության դալու դեպքում նրանց հետ միասին փախչի մի ապահով տեղ։ Մարտինը պարզ տեսավ իրեն, թե ինչպես է գնում կռվադաշտի մեջտեղը, նայում է ուղիղ Ճարպոտ Մռութի աչքերին և, բռունցքը բարձրացնելով, ասում է.

— Դա հո խաղալիք չէ, հասկացա՞ր։ Պիտի կռվենք մինչև վերջը։ Հասկացա՞ր։ Ոչ մի հնարք չի օգնի։ Մենք քեզ հետ հին հաշիվներ ունենք և պետք է մաքրել դրանք։ Հասկացա՞ր։

Ճարպոտ Մռութը տատանվեց։ Մարտինը նկատեց այդ, բայց Ճարպոտը ինքնասեր էր և չէր ուզում խայտառակվել այդքան դիտողների ներկայությամբ։

— Թող այդպես լինի, գո՛ւրս արի,— գոռաց նա,— ինչո՞ւ ես շատ խոսում։ Թո՛ղ լինի մինչև վերջը։

Նրանք իսկույն, բռունցքները սեղմած, հարձակվեցին իրար վրա պատանեկության ամբողջ ավյունով, ինչպես երկու մատղաշ մոզիներ՝ տոչորված զարկելու, ջարդելու, խեղելու ցանկությամբ։ Այն ամենը, ինչ ձեռք է բերել մարդկությունը իր երկար ու դժվարին ճամփին, մի ակնթարթում փով

եկավ։ Միայն էլեկտրական լապտերն էր կանգնած որպես պրոգրեսի մոռացված սահմանանիշ։ Մարտինն ու Ճարպոտ Մռութը քարե դարի վայրենիներ էին, քարանձավների և ծառի ապաստանների բնակիչներ։ Նրանք ավելի ու ավելի մխրճվում էին նախնադարյան գոյության ճահճուտը, կուրորեն իրար էին բախվում, ինչպես ատոմներ, որոնք մշտնջենապես ձգում են և մշտնջենապես վանում իրար։

— Աստված իմ, ի՞նչ հիմար ենք եղել մենք։ Ի՞նչ վայրենի գազաններ,— հառաչեց Մարտինը՝ հիշելով այդ կռվի մանրամասնությունները։ Շնորհիվ իր երևակայության անսովոր ուժին՝ նա այնքան վառ գույներով էր տեսնում այդ բոլորը, կարծես կինոյում նստած լիներ։ Նա միաժամանակ և՛ ըմբշամարտիկ էր, և՛ հանդիսատես։ Երկար ամիսների ընթացքում նրա ձեռք բերած կուլտուրան և դիտելիքները սարսռեցնում էին նրան, երբ հիշում էր այդ կռիվը. բայց շուտով անցյալը ետ մղեց ներկան նրա հիշողությունից, և նա նորից դարձավ նախկին Մարտին Իդենը և, նավարկությունից դեռ նոր վերադարձած, նա կռվում էր Ճարպոտ Մռութի հետ Ութերորդ փողոցի կամրջի մեջտեղում։ Նա տառապում էր, չարչարվում էր, արյունլվա էր լինում, հրճվում էր, երբ նրա բռունցքները նշանակետին հասնում էին։

Թվում էր, որ դրանք մարդ չէին, այլ իրար վրա հարձակված երկու կատաղի մրրիկ։ Ժամանակն անցնում էր, և երկու խմբերը կանգնած էին միանգամայն խաղաղ և շնչերը բռնած։ Այդպիսի կատաղություն նրանք դեռ չէին տեսել, և դա նրանց երկյուղ էր ներշնչում։ Նրանց աչքի առաջ կռվում էին երկու գազաններ, գազաններից էլ վայրագ։

Երբ սկզբնական պատանեկան մոլեգնությունը անցավ, հակառակորդները սկսեցին կռվել ավելի զգույշ և մտածված։ Նրանցից ոչ մեկը չէր հաղթում։

— Ոչ որի կլինի,— այդ բառերը հասան Մարտինի ականջին։

Նա պատահաբար ինչ-որ անհաջող շարժում արեց և նույն պահին ստացավ երեսին ահռելի մի հարված, որ ծակեց

այտը մինչև ոսկորը։ Անկեն բռունցքը չէր կարող այդպիսի վերք պատճառել։ Մարտինը լսեց ապշության բացագանչություններ և զգաց, որ այտիցը արյուն է ցայտում։ Բայց նա ձեռացավ, որ չի էլ նկատում այդ։ Նա անմիջապես գգուշացավ, որովհետև գիտեր, թե ո՛ւմ հետ գործ ունի և կարելի է ամեն ստորություն սպասել նրանից։ Նա սկսեց ուշադիր հետևել իր հակառակորդին և, նշմարելով մեռաղի փայլ, ճարպիկ մի շարժումով բռնեց նրա ձեռքը։

— Յո՛ւյց տուր ձեռքդ,— ազաղակեց նա։— Դու կաստետով խփեցիր ինձ։

Երկու խմբերն էլ բղավոցով ու հայհոյանքներով խոյացան իրար վրա. մի վայրկյան էլ, և տեղի կունենար ընդհանուր տուրուզմբոց, և Մարտինը չէր հասցնի վրեժի իր ծարավը։ Նա կորցրել էր իրեն։

— Է՞, մի՛ խառնվեք,— որոտաց նա։— Թող ոչ ոք չխառնվի։ Հասկանալի՞ է։ — Նրանք ընկրկեցին։ Նրանք գազան էին, իսկ Մարտինը կերպարան, և նրա ներշնչած սոսկումը ստիպեց նրանց ենթարկվել։

— Դա իմ գործն է, և թող ոչ ոք չխառնվի։ Է՞յ, դու, տուր այստե՛ղ կաստետը։

Ճարպոտ Մռութը, մի քիչ վախեցած հնազանդվեց և գավազանակաև զենքը տվեց։

— Դո՛ւ տվեցիր նրան կաստետը, շիկակարմիր անզգամ,— շարունակեց Մարտինը՝ կաստետը շպրտելով ցուրը,— ես տեսա, թե դու ինչպես էիր քսվում այստեղ։ Ի՞նչ մի կերպ չէի կարողանում հասկանալ, թե ի՞նչ էիր ուզում։ Եթե դու մի անգամ էլ քիթդ խոթես, ես քեզ շանսատակ կանեմ։ Հասկացա՞ր։

Կռիվը վերսկսվեց, և թեպետ երկու հակառակորդներն էլ ուժասպառության վերջին սահմաններն էին հասել, բայց և այնպես շարունակում էին հարվածներ տեղալ իրար վրա, մինչև որ նրանց շրջապատող գազանների ոհմակը, հագեցնելով իր արյան ծարավը, երկյուղ զգաց և սկսեց նրանց հաճոզել, որ դադարեցնեն կռիվը։ Ճարպոտ Մռութը, որը հազիվ

Լր կարողանում կանգնած մնալ, այդ սոսկալի, մարդկային կերպարանքը կորցրած հրեշը, կանգ առավ անվճռական, բայց Մարտինը խուժեց նրա վրա՝ նորանոր հարվածներ հասցնելով։ Թվում էր, որ նրանք արդեն մի ամբողջ հավիտենականություն կռվում էին, և Ճարպոտ Մուրը նկատելիորեն սկսեց թուլանալ, բայց հանկարծ լսվեց ուժեղ կրճկրտոց, և Մարտինի աջ թևը անզոր կախ ընկավ։ Ոսկորը կոտրվել էր։ Բոլորն էլ լսեցին, բոլորն էլ հասկացան այդ։ Ճարպոտ Մուրը որպես վագր, հարձակվեց նրա մյուս թևի վրա՝ ամբողջ ուժով հարվածներ հասցնելով նրան։ Մարտինի խումբը վրա ընկավ նրան ազատելու համար։ Առողջ ձեռքով պաշտպանվելով հարվածներից՝ Մարտինը բղավեց, որ նրանք չխառնվեն, առանց դադարելու անեծքներ թափելուց և միաժամանակ կատաղության և հուսահատության հառաչներ արձակելուց, և շարունակ խփում էր միակ ձախ ձեռքով, առանց գիտակցելու որևէ բան, թակում էր, հա թակում։ Կարծես հեռվից նրա ականջին հասնում էին վախի փսփսոցներ. հետո նա լսեց, որ ինչ-որ մեկը դողդոջուն ձայնով ասաց.

«Տղերք, դա կռիվ չէ, դա սպանություն է։ Պետք է բաժանել նրանց»։

Սակայն ոչ մեկը չհամարձակվեց մոտենալ, իսկ Մարտինը շարունակում էր խփել ձախ ձեռքով՝ ամեն անգամ դիպչելով ինչ-որ կակուղ, արյունոտ, սոսկալի և մարդկային դեմքի հետ ոչ մի առնչություն չունեցող բանի, և այդ ինչ-որ բանը անձնատուր չէր լինում և շարունակում էր շարժվել նրա պղտորած աչքի առաջ։ Նա խփում էր, նա խփում էր ավելի ու ավելի մեղմ, աստիճանաբար կորցնելով կենսական էներգիայի վերջին մնացորդները, խփում էր կարծես ամբողջ դարեր, հազարամյակներ, մինչև որ այդ անձև, արյունլվա զանգվածը տապալվեց կամրջի տախտակների վրա։ Այն ժամանակ Մարտինը կանգնեց նրա վրա, հարբածի պես, երերալով, հենակետ որոնելով օդում և շարունակելով հարցնել խռպոտ ձայնով.

— Էլի՞ ես ուզում։ Ասա՛... էլի՞ ես ուզում։

Նա շարունակ հարցնում էր՝ համառորեն պատասխան պահանջելով, և հանկարծ զգաց, որ ընկերները բռնում են նրան, քարշ տալիս, փորձում են հագցնել նրա շապիկը։ Այս պահին նա հանկարծ ուշագնաց եղավ։

Սեղանի վրա զարթուցիչը հնչեց, բայց Մարտինը չլսեց այդ և շարունակեց նստել՝ ձեռքերով փակելով դեմքը։ Նա ոչինչ չէր լսում։ Նա ոչնչի մասին չէր մտածում։ Այնքան վառ կերպով նա վերապրեց այդ ամենը, որ դարձյալ ուշքը կորցրեց, ինչպես Ութերորդ փողոցի կամրջում այն գիշերը։ Մի քանի բոպե նրան պատեցին խավարն ու դատարկությունը։ Հետո, կարծես կենդանացած դիակ, նա վեր թռավ՝ փայլատակող աչքերով, ճակատին կպած մազերով։

— Այնուամենայնիվ ես քեզ ջախջախեցի, Ճարպոտ Մռութ,— աղաղակեց նա։— Դրա համար ինձ հարկավոր եղավ վեց տարի, բայց ես ջարդեցի քեզ։

Նրա ոտքերը դողում էին, գլուխը պտտվում էր և, տատանվելով, ստիպվեց նստել անկողնին։ Նա դեռևս անցյալի իշխանության տակ էր գտնվում։ Նա ապշած նայեց չորս կողմը, կարծես չհասկանալով, թե ո՛ւր է, մինչև որ վերջապես տեսավ անկյունում թափած դրվածքների կույտը։ Այն ժամանակ նրա հիշողության անիվներն ավելի արագ սկսեցին դառնալ, անցկացրին նրան չորս տարվա ժամանակամիջոցի վրայով, և նա հիշեց գրքերը, հիշեց այն աշխարհը, որը նրանք բաց արին իր առաջ, հիշեց իր երազներն ու պատվախնդրությունները և իր սերը՝ դեպի դունատ, զդայուն և քնքուշ աղջիկը, որը սարսափից կմեռներ, եթե թեկուզ մի ակնթարթ ականատես լիներ, այն բանին, որը նա նոր վերապրեց, թեկուզ մի ակնթարթ տեսներ, թե կյանքի ինչպիսի տականքներում էր թավալվում նա։

Նա ոտքի կանգնեց և հայելու մեջ նայեց իրեն։

— Հիմա դու այդ ցեխից դուրս ես եկել, Մարտին,— հանդիսավոր կերպով ասաց նա իրեն,— աչքերդ բացվել են պայծառ լույսին, ուսերովդ աստղերին ես դիպչում, լրիվ

կյանքով ես ապրում և նվաճում ես դարերի ամենաթանկագին ժառանգությունը նրանցից, որոնք տիրում են նրան։

Մարտինը ուշադիր նայեց իրեն և ծիծաղեց։

— Մի քիչ հիսաերիկա և մելոդրամա, այնպես չէ՞,— հարցրեց իրեն։— Դա նշանակություն չունի։ Ժամանակին դու հաղթահարեցիր Ճարպոտ Մոսթին, նույնպես կհաղթահարես հրատարակիչներին, մինչև անդամ եթե քեզ կարիք լինի վատնել երեք անդամ վեց տարի։ Դու չես կարող կանգ առնել։ Հիմա դու կարող ես առաջ գնալ։ Գիտես, որ պիտի պայքարել մինչև վերջ։

ԳԼՈՒԽ XVI

Ժամացույցն այնպես հանկարծ զարթեցրեց Մարտինին, որ նվազ պինդ կազմ ունեցող մարդու մոտ՝ քնից դեպի արթնության այդպիսի արագ անցումը անկասկած գլխացավ կառաջացներ։ Թեպետ նա շատ պինդ էր քնած, բայց մի ակնթարթում զարթնեց, կատվի նման, ուրախանալով, որ մոռացության հինգ ժամն անցավ։ Նա ատում էր քունը։

Այնքա՞ն շատ բան կա անելու, այնքա՞ն շատ բան ապրելու։ Նա ափսոսում էր ամեն մի ակնթարթ, որը քունը խլում էր նրանից. և դեռ զարթուցիչն իր ճրթճրթոցը չվերջացրած՝ նա գլուխը կոխեց թասի մեջ՝ սառը ջրից սարսրռալով։

Բայց այդ օրը ևս սկսեց ոչ իր սովորական ծրագրով։ Չկար սկսված մի պատմվածք, որը հարկ լիներ վերջացնել, չկար նոր մտահղացում, որը գրի առնելու պահանջ զգար։ Նախորդ օրը նա շատ ուշ վերջացրեց իր պարապմունքը, և հիմա նախաճաշի ժամանակը մոտենում էր։ Նա փորձեց կարդալ Ֆիսկից մի հատված, սակայն նրա գլուխը վատ էր աշխատում, դրա համար էլ ստիպվեց դեն գցել գիրքը։ Այսօր նա մի նոր մարտ էր ունենալու կյանքի հետ, և նա վճռեց

միառժամանակ ընդհատել գրելը։ Նա տխրեց, ինչպես տխրում է մարդ իր ընտանիքին ու հայրենի տանը հրաժեշտ տալիս։ Նա նայեց անկյունում ընկած իր ձեռագրերին։ Այո՛, նա պետք է լքի իր այդ խեղճ ու խայտառակված դավակներին, որոնց ոչ ոք չէր ուզում ապաստան տալ։ Նա խոնարհեց գլուխը և սկսեց աչքի անցկացնել գրվածքները՝ նորից կարդալով իր սիրած հատվածները։ «Կաթսա» և «Արկած» պատմվածքները նա մինչև անգամ արժանացրեց բարձրաձայն ընթերցման։ Նա հատկապես գոհ մնաց նախօրյակին գրված «Ուրախություն» պատմվածքից, որը նա գցել էր անկյունը՝ նամակագրոշմ չունենալու պատճառով։

— Չեմ հասկանում,— շշնջաց նա,— և կամ թերևս խմբագիրները չեն հասկանում։ Այստեղ չհավանելու ոչինչ չկա։ Նրանք ամեն ամիս տպագրում են սրանից անարժեք բաներ։ Եվ առհասարակ այն ամենը, ինչ նրանք տպագրում են, գրեթե բոլորն էլ սրանից վատ է։

Նախաճաշից հետո նա գրամեքենան գրեց տուփի մեջ և տարավ Օկլենդ։

— Ես մի ամսվա վճար պարտք մնացի,— ասաց նա գործակատարին։— Հայտնեցեք ձեր տիրոջը, որ ես աշխատանքի եմ մեկնում և մի ամսից կամ մոտավորապես, երբ կվերադառնամ, պարտքս կհատուցեմ։

Նա ուղեորվեց Սան-Ֆրանցիսկո և հանդիպեց միջնորդական գրասենյակը։

— Ինչ գործ ուզում է լինի, միևնույնն է,— ասաց նա գործակալին, բայց նա ընդհատեց իր խոսքը, երբ ներս մտավ մի նոր այցելու՝ այնպիսի էժանագին շքեղ հագուստով, որը կրում են «շքեղ կյանքի» հակում ունեցող բանվորները։

Գործակալն անհույս մերժողական մաքով շարժեց գլուխը։

— Մի՞թե ոչ ոք չկա,— հարցրեց նորեկը։ — Սակայն ինձ չափազանց անհրաժեշտ է այսօր գտնել որևէ մեկին։

Նա շուռ եկավ և նայեց Մարտինին, Մարտինն էլ նրան և տեսավ բավական գեղեցիկ մի գեմք, թեև դժգույն և

Հմտիկած, նա հասկացավ, որ այդ մարդը լուսացրել է գիշերը։

— Գո՞րծ ես փնտրում,— հարցրեց նա Մարտինին։ Ի՞նչ գործ կարող ես անել։

— Ամեն տեսակ ծանր աշխատանք, գիտեմ նավագնացություն, գրում եմ մեքենայի վրա, սղագրություն չգիտեմ. կարող եմ ձի նստել,— առհասարակ ամեն գործ կարող եմ անել։

Մյուս մարդը գլխով հավանության նշան արեց։

— Լավ, այդ բոլորը հարմար է։ Իմ անունն է Դաուսոն, Ջո Դաուսոն, և փնտրում եմ ինձ օգնական լվացքատանը։

— Լվացքատա՞նը։ — Այն միտքը, թե նա պիտի արդուկի կանացի նուրբ սպիտակեղեն, ծիծաղելի թվաց Մարտինին։ Բայց այդ մարդը ինչ-որ բանով դուր եկավ իրեն, և նա ավելացրեց,— ես առհասարակ գիտեմ լվացք անել։ Սովորել եմ նավագնացության ժամանակ։

Ջո Դաուսոնը մի բոպե մտածեց։

— Լսիր, ինձ թվում է, որ մենք կարող ենք համաձայնության գալ։ Ուզո՞ւմ ես իմանալ, թե բանն ինչո՞ւմն է։

Մարտինը գլխով հաստատական նշան արեց։

— Մի փոքր լվացքատուն կա «Տաք աղբյուրներ» կոչված կուրորտի հյուրանոցին կից։ Այնտեղ աշխատելու համար երկու հոգի է հարկավոր — ավագ և օգնական։ Ավագը ես եմ։ Ամեն մեկս իր գործն է անում, բայց դու ենթարկվում ես ինձ։ Ինչպե՞ս, հարմա՞ր է քեզ։

Մարտինը մտածեց։ Հեռանկարը հրապուրիչ էր։ Մի քանի ամիս աշխատելուց հետո նա նորից ժամանակ կունենա վերադառնալու նա գիտեր խղճմտությամբ աշխատել և խղճմտությամբ սովորել։

— Լավ ասեցիք և առանձին սենյակ քեզ համար,— ասաց Ջոն։

Դա վճռեց հարցը։ Առանձին սենյակ, ուր ոչ ոք չի խանգարի լույսը վառ պահել գիշերները։

— Բայց աշխատանքը գժոխային է,— ավելացրեց Ջոն։

Մարտինը շփեց իր բազկի փքված մկանները։

— Այս մկանները ծանր աշխատանքում են պնդացել։

— Որ այդպես է, առ՛ր ձեռքդ,

Ջոն մի բոպե շոշափեց իր ճակատը։

— Բյո՜ւ, սատանան տանի։ Մինչև հիմա էլ գլուխս պատվում է և աչքերս մթնում։ Երեկ երեկո ես ծայրահեղության մեջ ընկա ամեն բանում, ամեն բանում։ Ահա պայմանները. երկու աշխատողի տալիս են հարյուր դոլլար և բնակարան։ Ես ստանում էի վաթսուն, իսկ օգնականը՝ քառասուն։ Բայց այն ազան դիտեր գործը, իսկ դու համբակ ես։ Միառժամանակ ես սոխված կլինեմ շատ աշխատել քո փոխարեն։ Ենթադրենք, դու սկզբում կստանաս երեսուն և աստիճանաբար կհասնես քառասունի։ Ես չեմ խաբի։ Հենց որ դու կվարժվես և կսկսես աշխատել, ինչպես հարկն է, կստանաս քո քառասուն դոլլարը։

— Համաձայն եմ,— հայտարարեց Մարտինը և երկարեց իր ձեռքը, որը մյուս մարդը սեղմեց։— Միայն թե լավ կլիներ կանխավճար ստանալ ճամփի և այլ ծախսերի համար։

— Բոլորը մսխել եմ,— տխուր պատասխանեց Ջոն՝ դարձյալ շփելով ճակատը,— մնացել է միայն երկաթուղով վերադարձի տոմսի դրամը։

— Իսկ ես մինչև վերջին ցենտը պետք է տամ բնակարանի վարձը։

— Իսկ դու թքի՛ր դրա վրա,— խորհուրդ տվեց Ջոն։

— Չեմ կարող։ Ես պարտք եմ հարազատ քրոջս։

Ջոն երկար սուլեց՝ դրանով արտահայտելով իր համակրությունն ու ցավակցությունը և խորիմաստ մտածողի տեսք ստացավ։

— Ինձ մոտ կես շշի համար դրամ կճարվի։ Գնանք։ Գուցե մի ելք կգտնենք։

Մարտինը մերժեց այդ առաջարկը։

— Չե՞ս խմում,— հարցրեց Ջոն։

Մարտինը գլխով արեց, որից հետո Ջոն բնկճված շեշտով ասաց.

— Նախանձում եմ։ Իսկ ես չեմ կարող չխմել։ Ամբողջ շաբաթ շաբաշաբ աշխատելուց հետո ակամա դնում ես գինետուն։ Եթե ես չխմեի, վաղուց կտրած կլինեի կոկորդս և կամ հրկիզած կլինեի գործատեղին։ Բայց ուրախ եմ, որ դու չես խմում։ Այդպես էլ շարունակիր։

Մարտինը տեսավ, թե ինչ ահագին անդունդ կա իր և այդ մարդու միջև,— գրքերով ստեղծված անդունդ. բայց Մարտինի համար դժվար չէր անցնել այդ անդնդից։ Իր ողջ կյանքում նա ապրել է բանվոր դասակարգի մարդկանց միջև, և աշխատանքային ընկերակցության զգացումը նրանում դարձել է երկրորդ բնավորություն։ Մարտինն արագ վճռեց աշխատանքի նոր վայրը գնալու խնդիրը, որի լուծումը անհնարին էր Ջոյի շշմած գլխի համար։ Նա իր ճամպրուկը կուղարկի Ջոյի տոմսով իբր բապաժ, իսկ ինքը «Տաք աղբյուրները» կգնա հեծանիվով։ Յոթանասուն մղոն տարածությունը նա հեշտ կարող է անցնել կիրակի օրը, որպեսզի երկուշաբթի սկսի աշխատել։ Իսկ հիմա նա տուն կգնա և կդարսի իրերը։ Ոչ ոքի հրաժեշտ տալու կարիք չուներ։ Ռութն ու նրա ամբողջ ընտանիքը ամառանոց են գնացել Սիերրա, Տեխո լճի ափը։

Մարտինը «Տաք աղբյուրներ» հասավ կիրակի երեկոյան՝ հոգնած և փոշով պատած։ Ջոն ցնծությամբ դիմավորեց նրան։ Ջոյի գլուխը կապած էր թաց երեսսրբիչով, որովհետև նա աշխատել էր ամբողջ օրը։

— Սպիտակեղենի մի մասը մնում էր դեռ անցյալ շաբաթից,— բացատրեց նա,— երբ ես այստեղից մեկնել էի քեզ վարձելու համար։ Քո բապաժն ապահով հասավ և քո սենյակումն է։ Բայց ինչքա՞ն ծանր է քո ճամպրուկը։ Ի՞նչ ես կոխել դրա մեջ։ Ոսկու ձուլածոնե՞ր։

Մինչ Մարտինը զբաղված էր իր ճամպրուկը քանդելով, Ջոն նստել էր նրա մահճակալին։ Իսկապես, դա ճամպրուկ չէր, այլ պարզապես պահածոների արկղ, որի համար միս-

տեր Հիգգինբոթամը կնա դուրս էր վերցրել Մարտինից։ Այդ արկղին անցկացնելով թուղթից շինած երկու բռնակ՝ Մարտինը վերածեց այդ ճամպրուկի նման մի բանի։ Ջոն ապշեց, երբ տեսավ, որ մի քանի ձեռք սպիտակեղենից հետո արկղից սկսեցին դուրս բերվել գրքեր, գրքեր ու գրքեր։

— Ինչպե՞ս։ Մինչև հատակը այդ բոլորը միայն գրքե՞ր են,— հարցրեց նա։

Մարտինը գլխով հաստատական նշան արեց և ջարունակեց դարսել գրքերը՝ լվացարանի դերը կատարող խոհանոցային սեղանի վրա։

— Օհո՞։

Ջոն լռեց և նրա ուղեղում սկսվեց, ինչպես երևում է, առաջանալ ինչ-որ միտք։ Վերջապես նա կարողացավ ձևակերպել այն։

— Ասա, հետաքրքրվո՞ւմ ես աղջիկներով։ Շա՞տ,— հարցրեց նա։

— Ո՛չ,— պատասխանեց Մարտինը,— անցյալում պատահում էր այդ, երբ չէի սկսել գրքեր կարդալ։ Իսկ հիմա ժամանակ չունեմ դրա համար։

— Այստեղ դու ժամանակ չես ունենա և գիրք կարդալու համար, միայն աշխատել և քնել։

Մարտինը հիշեց իր հինգժամյա քունը և ժպտաց։ Նրա սենյակը լվացքատան վերևումն էր. նույն շենքում գետեղված էր և մոտորը, որը ջուր էր հանում, լույս էր տալիս և լվացքատան մեքենաները շարժման մեջ էր դնում։ Հարևան սենյակում բնակվող մոնտյորը վճռեց բարեկամական հարաբերություններ հաստատել և օգնեց Մարտինին էլեկտրական լամպը հարմարեցնելու երկար լարի վրա այնպես, որ կարելի էր տեղափոխել այն սեղանից անկողնին։

Հետևյալ առավոտ Մարտինը վեր կացավ ժամը վեցը անց քառորդ,— նրան ասել էին, որ նախաճաշը տրվում է յոթից քառորդ պակաս։ Պարզվեց, որ լվացքատանը ծառայողների համար լոգարան կա, և Մարտինը սառը ջրով լոգացավ՝ մեծ գարմանք պատճառելով Ջոյին։

— Ա՛յ, ապրե՛ս դու,— բացագանչեց Ջոն, երբ խոհանոցում նստեցին նախաճաշի։ Նրանց հետ նախաճաշում էին և մոնտյորը, այգեպանը, սրա օգնականն ու երկու-երեք տխրոտապան։ Բոլոր նրանք ուտում էին մռայլ ու հապճեպ, հալվադեպ փոխանակելով առանձին բառեր, և Մարտինը, լսելով նրանց խոսակցությունը, հասկացավ թե ինքն ինչ-քա՞ն առաջ է անցել այդ մարդկանցից։ Նրանց մտավոր աղքատությունն անտանելի էր նրա համար, և նա անհամբեր սպասում էր, թե երբ կկարողանա մենակ մնալ։ Ուստի նրանց պես հապճեպ կուլ տվեց իր ջրի ու անհամ շիլան և միայն խոհանոցից դուրս գալուց հետո աղատ շունչ քաշեց։

Փոքրիկ լվացքատունը հիանալի էր սարքավորված ամենանոր մեքենաներով, որոնք անում էին ամեն բան, ինչ կարող էին անել մեքենաները։ Կարճառոտ ցուցումներ ստանալուց հետո՝ Մարտինը սկսեց ջոկել կեղտոտ սպիտակեղենի ահագին մի կույտ, իսկ Ջոն նույն միջոցին աշխատեցրեց մեքենաները և պատրաստում էր հեղուկ օճառ, որը բաղկացած էր քիմիական ուտիչ նյութերից, ընդսմին ստիպված էր երեսսրբիչով կապել աչքերն ու քիթը, այնպես որ նմանվեց մումիայի։ Ջոկելը վերջացնելուց հետո Մարտինը սկսեց քամել արդեն լվացված սպիտակեղենը։ Քամելը կատարվում էր հատուկ մեքենայով, որը մի վայրկյանում մի քանի հազար պտույտ էր գործում և կենտրոնախույս ուժով հեռացնում էր լվացքի տամկությունը։ Հետո Մարտինը շարունակ անցնում էր չորացնող մեքենայից քամիչ մեքենային, միջանկյալ ջոկելով գուլպաները։ Ճաշից հետո, մինչև արդուկների տաքանալը, նրանք զբաղվեցին գուլպաները գլանակելով։ Հետո արդուկեցին տակի սպիտակեղենը մինչև ժամը վեցը, բայց այդ ժամանակ Ջոն տարակուսանքով շարժեց գլուխը։

— Ոչինչ չի դուրս դա,— ասաց նա,— կարիք կլինի աշխատել և ընթրիքից հետո։

Ընթրիքից հետո էլ նրանք աշխատեցին մինչև ժամը տասը՝ շլացուցիչ էլեկտրական լույսի տակ, մինչև որ վեր-

ջին ձեռք սպիտակեղենն էլ արդուկվեց ու պատրաստվեց հանձնելու։ Կալիֆորնիայի տոթ դիշեր էր և, չնայած բոլորովին բաց պատուհաններին, սենյակում, շիկացած սալոջախից և արդուկներից, անտանելի շոգ էր կանգնած։ Մարտինն ու Ջոն, մինչև մեջքները մերկ, արյուն-քրտինք էին մտել և շնչահեղձ էին լինում։

— Ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես արևադարձային նավահանգստում նավ բարձելիս,— ասաց Մարտինը, երբ նրանք բարձրանում էին սանդուղքներով։

— Դու կտանես գործը,— ասաց Ջոն։— Շատ լավ ես աշխատում։ Եթե հետագայում էլ այդպես շարունակվի, դու միայն առաջին ամսում կմնաս երեսուն դոլլարով, իսկ հաջորդ ամսում կստանաս ամբողջ քառասունը։ Սակայն չի կարող պատահել, որ դու անցյալում երբեք արդուկած չինես։

— Աստված վկա, ամբողջ կյանքումս ոչ մի փալաս չեմ արդուկել։

Մարտինը զգում էր սաստիկ հոգնածություն և զարմանում էր դրան՝ մոռանալով, որ աշխատել է անընդհատ տասնչորս ժամ։ Նա լարեց զարթուցիչը ժամը վեցի վրա և, հաշվելով հինգ ժամ, որոշեց կարդալ մինչև ժամը մեկը։ Հանելով մաշիկները, որպեսզի ոտքերը հանգստանան, նստեց սեղանի առաջ և գրքերով շրջապատեց իրեն։ Նա բացեց Ջիսկի գիրքը և սկսեց կարդալ այն տեղից, ուր ընդհատել էր ընթերցումը երկու օր առաջ։ Բայց նրա գլուխը լավ չէր աշխատում, այնպես որ ստիպվեց երկու անգամ կարդալ միևնույն հատվածը։ Հետո նա հանկարծ զարթնեց ուռած մկանների ցավից և պաղ քամուց, որը սարերից փչում էր բաց պատուհանի մեջ։ Նա նայեց ժամացույցին։ Ժամը երկուսն էր։ Նա քնել էր արդեն չորս ժամ։ Նա հանվեց, անկողին մտավ ու քնեց՝ դեռ գլուխը բարձին չդրած։

Երեքշաբթի օրն էլ նույնպիսի լարված աշխատանքով անցավ։ Այն արագությունը, որով աշխատում էր Ջոն, հիացում էր առաջացնում Մարտինի մեջ։ Ջոն աշխատում էր՝

ինչպես մի դյուժին դև։ Նա ամբողջ երկարատև աշխատանքային օրվա ընթացքում ոչ մի ակնթարթ չէր կորցնում, ողջ ուշադրությունը կենտրոնացնում էր աշխատանքի վրա և երբեմն ցույց տալիս Մարտինին, թե որտե՛ղ հինգ շարժումի փոխարեն կարելի է չորս շարժում անել և երեքի փոխարեն՝ երկու շարժում։

Մարտինը նայում էր և աշխատում օրինակ վերցնել նրանից։ Նա ինքն էլ հրաշալի աշխատող էր, ճարպիկ, սրամիտ, և միշտ հպարտանում էր, որ նրան ոչ ոք չի կարող գերազանցել աշխատանքում։ Հիմա նա էլ վճռեց կենտրոնացնել իր ամբողջ ուշադրությունն աշխատանքի վրա և հետևել Ջոյի բոլոր հրահանգներին։ Նա այնպես ճարպկորեն էր քսում օսլան օձիքների վրա, որպեսզի արդուկելիս պղպջակներ չառաջանան, որ Ջոն ինքը գովեց նրան։

Աշխատանքում ոչ մի ընդմիջում չկար։ Վերջացնելով մի գործը՝ Ջոն իսկույն անցնում էր մյուս գործին, առանց ըսպասելու և առանց հետաձգելու որևէ բան։ Նրանք օսլայեցին երկու հարյուր սպիտակ վերնաշապիկ, աջ ձեռքով տաք օսլայի մեջ կոխելով օձիքը, կուրծքն ու մանժետները, իսկ ձախ ձեռքով պահելով շապիկը, որպեսզի մյուս մասերը չդիպչեն այնքան տաք օսլային, որ, քամելով այն, նրանք ստիպված էին ամեն անգամ իրենց ձեռքը կոխել սառը ջրի մեջ։ Այդ երեկո էլ նրանք աշխատեցին մինչև ժամը տասնուկեսը՝ օսլայելով կանացի նուրբ սպիտակեղենի ծալքերը։

— Տրոպիկական երկրներում ավելի հեշտ է,— ծիծաղելով ասաց Մարտինը։

— Միայն ոչ ինձ համար,— լուրջ առարկեց Ջոն,— ես սրանից զատ ոչ մի այլ արհեստ չգիտեմ։

— Բայց այս արհեստը դու շատ լավ գիտես։

— Է՛լ չիմանամ։ Ես սկսեցի աշխատել տասնմեկ տարեկան հասակից, Օկլենդում։ Կանգնում էի շողնշարժ հարթիչի մոտ։ Այդ ժամանակից անցել է տասնութ տարի, և ես ուրիշ ոչնչով չեմ զբաղվել։ Սակայն այնպիսի տաժանակիր

աշխատանք, ինչպես այստեղ, մինչև այժմ չի պատահել ինձ։ Այստեղ պետք էր ուսենալ առնվազն երեք աշխատավոր։ Վաղը կարիք կլինի աշխատել և գիշերը։ Հորեքշաբթի օրերը միշտ հարկավոր է լինում աշխատել գիշերները — օձիքների ու մանժետների վրա։

Մարտինը նորից լարեց պարթուցիչը, նստեց սեղանի առաջ բացեց Ֆիսկի գիրքը։ Բայց չկարողացավ կարդալ և մի հատված իսկ։ Տողերը պարում էին նրա աչքերի առաջ և նա, քնից հաղթահարված, դանդաղեց։ Նա սկսեց նստ ու առաջ քայլել՝ բռունցքներով խփելով գլխին, որպեսզի քունը վանի, բայց ոչինչ չէր օգնում։ Հետո դիրքը դրեց առաջը և փորձեց կարդալ՝ մատներով ետ պահելով կոպերը, այնուամենայնիվ անմիջապես քնեց բաց աչքերով։

Այն ժամանակ, այլևս անկարող լինելով կռվել հոգնածության դեմ, հանվեց՝ հազիվ գիտակցելով, թե ինչ է անում, և ընկավ մահճակալին։ Նա քնեց յոթ ժամ ծանր, անասնական քնով և զարթնեց ժամացույցի զնգոցից՝ դողալով, որ դեռ քունը չի առել։

— Շա՞տ կարդացիր,— հարցրեց նրան Ջոն։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը։

— Ոչինչ,— մխիթարեց նրան Ջոն։— Մենք այս գիշեր կաշխատեցնենք հարթիչը, իսկ վաղը կվերջացնենք ժամը վեցին։ Այն ժամանակ դու ժամանակ կունենաս կարդալու։

Այդ օրը Մարտինը լվանում էր բրդեղեն իրեր՝ ուտիշ օճառի լուծույթով լի մեծ տաշտում, ընդ որում այդ գործողությունը կատարվում էր հատուկ հարմարանքով, որը Ջոն նշեց հպարտությամբ։

— Դա իմ գյուտն է։ Փոխարինում է և՛ լվացքի փայտին, և՛ ձեռքերին և, բացի այդ, խնայում է շաբաթական ամենաքիչը տասնհինգ դոլար։ Իսկ դու գիտես, թե այս դժոխային կործում ամեն մի դոլարն ի՛նչ արժե։

Օձիքներն ու մանժետները գլանակով անցկացնելը նույնպես Ջոյի գյուտն էր, և երբ երեկոյան վառեցին էլեկտրական լույսը, նա բացատրեց, թե բանը ինչումն է.

— Այլ լվացքատներում դեռևս չեն հասել այդ բանին։ Շնորհիվ դրան՝ ես հնարավորություն ունեմ շաբաթ օրերը ժամը երեքին վերջացնել աշխատանքը։ Միայն վարպետորեն պիտի անել գործը— ուրիշ ոչինչ։ Հարկավոր է հատուկ ջերմաստիճան, հատուկ ճնշում, և պետք է անցկացնել երեք անգամ։ Նայիր։

Նա վերցրեց մանժետը։

— Ձեռքով էլ չես անի այդպես, ճի՞շտ է։

Հինգշաբթի օրը Ջոն կատաղեց. նորմայից դուրս ուլարկել էին մի ամբողջ կապոց օսլայվելիք նուրբ սպիտակեղեն։

— Սատանա՛ն տանի,— գոռաց նա,— հոգիս դուրս է գալու։ Էլ չեմ ուզում։ Ամբողջ շաբաթ աշխատել եմ ստրուկի պես, որպեսզի մի աղատ բոպե ունենամ, և հանկարծ, ա՛յ քեզ, ուրախացրին։ Մի կապոց օսլայվելիք նուրբ սպիտակեղեն՝ նորմայից դուրս։ Ես ապրում եմ ազատ երկրում, և ես այդ հաստ հոլանդացուն կասեմ, թե ի՛նչ եմ մտածում նրա մասին։ Եվ ես նրա հետ չեմ խոսելու ֆրանսերեն լեզվով։ Միացյալ Նահանգների լեզվում դեռևս կգտնվեն նրա համար բառեր։ Մի ամբողջ կապոց նորմայից դո՞ւրս։ Ա՛յ քեզ անասուն։

— Կարիք կլինի էլի աշխատել ողջ գիշեր,— ասաց նա մի բոպե անց՝ մոռանալով իր բարկությունը և համակերպվելով ճակատագրին։

Այդ գիշեր էլ Մարտինը հնարավորություն չունեցավ կարդալու։ Ամբողջ շաբաթ նա ոչ մի թերթ չտեսավ և ինքն էլ զարմացավ, որ ցանկություն էլ չունի տեսնելու։ Նորությունները նրան չէին հետաքրքրում։ Նա այնքան հոգնած էր, որ չէր հետաքրքրվում ոչնչով։ Այնուամենայնիվ նա վճռեց շաբաթ օրը Օկլենդ դնալ հեծանիվով։ Յոթանասուն մղոն դնալ, յոթանասուն մղոն վերադառնալ — դա նշանակում է, որ նա բոլորովին չի հանգստանալու, որպեսզի ուժ

հավաքի առաջիկա շաբաթվա համար։ Ավելի լավ կլիներ գնալ երկաթուղով, բայց դա կարժենար երկու և կես դոլլար, իսկ Մարտինը հաստատ վճռել էր դրամ հավաքել։

ԳԼՈՒԽ XVII

Մարտինը ձեռք բերեց բազմաթիվ նոր գիտելիքներ։ Առաջին շաբթում մի օր նա և Ջոն թողարկեցին երկու հարյուր սպիտակ շապիկ։ Ջոն շարժում էր մեքենայի լծակը, որի ձողից կախված էր արդուկը՝ ճնշումը կանոնավորող պողպատյա գսպանակի վրա։ Այդ կերպով արդուկում էր շապկի օսլայած մասերը, հետո գցում էր այն Մարտինին, որը արդուկում էր մնացածը։

Դա ծանր, ուժասպառող աշխատանք էր, որը շարունակվում էր անընդհատ, ժամից ժամ։ Հյուրանոցի բաց վերանդայում տղամարդիկ ու սպիտակազգեստ կանայք ման էին գալիս, կամ փոքր սեղանների առաջ նստած զովացուցիչ ըմպելիքներ էին խմում։ Իսկ լվացքատանն անհանդուրժելի հեղձուցիչ օդ էր կանգնած։ Շիկացած սալօջախը անտանելի շոգ էր արձակում, իսկ թաց սպիտակեղենին դիպչող արդուկների տակից շոգի էր բարձրանում։ Արդուկներն ավելի էին տաքանում, քան նրանց սովորաբար տաքացնում են տանտիկինները։ Այն արդուկը, որը փորձում են մատը թքոտելով, Մարտինին ու Ջոյին կթվար բոլորովին սառը։ Նրանք արդուկի տաքանալու աստիճանը որոշում էին պարզապես մոտեցնելով այն իրենց այտին և գուշակելով ջերմաստիճանը ինչ-որ առանձնահատուկ զգայարանով, որը միանգամայն անբացատրելի էր թվում Մարտինին։ Եթե արդուկը չափազանց տաք էր լինում, այն սուղում էին սառը ջրի մեջ։ Դա նույնպես պահանջվում էր մեծ ունակություն և ճարպկություն։ Բավական էր արդուկը մի վայրկյան ավելի պահել ջրի մեջ, և նա ավելի կպաղեր, քան հարկավոր է և Մարտինը ինքն

և էր զարմանում իր ճշտության՝ ավտոմատիկ ճշտության վրա, որով նա կատարում էր այդ դժվարին մանները։

Սակայն նա ժամանակ չուներ զարմանալու։ Մարտինն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց աշխատանքի վրա։ Նա առանց կանգ առնելու աշխատում էր գլխով ու ձեռքերով, որպես խելացի մեքենա, և աշխատանքը կլանում էր նրանում այն ամենը, ինչ մարդկային է։ Նրա գլխում տեղ չէր մնում աշխարհի և նրա առեղծվածների մասին խորհրդածելու համար։ Նրա ուղեղի բոլոր լայն, ընդարձակ հարկաբաժինները փակած ու կնքած էին։ Նրա գիտակցությունը տեղափոխվեց մի նեղ սենյակ—ղեկապետի մենախցիկը, որտեղից նա հրամաններ էր արձակում իր ձեռքերին ու մատներին, թե ինչպե՞ս բռնել արդուկը, ինչպե՞ս արդուկել անհատնում թևերը, կոնակները, փեշերը, կողքերը՝ առանց մի մատնաչափ շեղվելու, ինչպե՞ս դեն գցել արդուկված շապիկը՝ առանց ճխլտելու։ Եվ հենց որ նրա գլուխը դադարում էր մի շապկի մասին հոգալուց, նա պիտի մտածեր արդեն մյուսի մասին։ Եվ այդպես անցնում էին երկար ժամեր, մինչև որ դրսում Կալիֆորնիայի կիզիչ արևի տակ ամեն ինչ անզգայանում էր։ Բայց լվացքատանը աշխատանքը չէր դադարում։ Հյուրանոցի պճնասեր կենվորները շարունակ մաքուր սպիտակեղեն էին պահանջում։ Մարտինից հեղեղի պես քրտինք էր թափվում։ Նա անհավատալի քանակությամբ ջուր էր խմում, բայց տոթն այնքան ուժեղ էր, որ ջուրը չէր մնում մարմնում, այլ արտաթորվում էր բոլոր ծակոտիներից։ Նավագնացությունների ժամանակ ամենադժվարին աշխատանքը նրան չէր խանգարում անձնատուր լինել իր մտքերին։ Այն նավի տերը, որի համար աշխատում էր Մարտինը, միայն նրա ժամանակի վրա էր իշխում. իսկ այստեղ հյուրանոցի տերը իշխում էր և նրա մտքերի վրա։ Նա չէր կարողանում մտածել այլ բանի մասին՝ բացի աշխատանքից, որը հավասարապես մաշեցնում էր և՛ մարմինը, և՛ միտքը։ Նա այլ մտքեր չուներ։ Նա մինչև անգամ չգիտեր, թե սիրո՞ւմ է արդյոք Ռութին, որը կարծես դադարել էր գոյություն ունե-

նայուց, որովհետև Մարտինի խոշտանգված հոգին ժամանակ չուներ հիշելու նրան։ Միայն երեկոյան, երբ նա մրտնում էր անկողին, կամ առավոտյան, նախաճաշին, Ռուֆ։ որպես մառախլապատ մի տեսիլք, մի պահ փայլում էր նրա աչքին և անհայտանում։

— Ավելի վատ, քան դժոխքում, այնպես չէ՞,— հարցրեց Ջոն մի օր։

Մարտինը գլխով արեց, բայց հանկարծ զգաց ջղայնության նոպա։ Դա պարզ էր և առանց հիշեցնելու։ Առհասարակ նրանք երբեք չէին խոսում աշխատանքի ժամանակ։ Խոսակցությունը խախտում էր աշխատանքի ռիթմը, և հիմա, խանգարվելով Ջոյի հարցումից, Մարտինը արդուկով երկու ավելորդ շարժում արեց։

Ուրբաթ առավոտյան սկսեցին աշխատեցնել լվացքի մեքենան։ Կարիք էր լինում շաբաթը երկու անգամ լվանալ հյուրանոցի սպիտակեղենը՝ սփռոցները, անձեռոցները, սապաններն ու բարձերեսները։ Վերջացնելով այդ բոլորը՝ նրանք ձեռնարկում էին նուրբ սպիտակեղենին։ Դա չափազանց հոգեմաշ և հոգնեցուցիչ աշխատանք էր, որը պետք էր կատարել մեծ զգուշությամբ և Մարտինը այնքան էլ հեշտ չէր սովորում այդ։ Բացի այդ՝ նա վախենում էր սխալներից, որոնք այս դեպքում կորստաբեր կլինեին։

— Տեսնո՞ւմ ես այս,— ասաց Ջոն՝ ցույց տալով կրծքակալը՝ այնքան նուրբ, որ կարելի էր բոի մեջ թաքցնել։— Այրի՛ այն, և քեզանից կբռնեն քսան դոլլար։

Բայց Մարտինը ոչինչ չայրեց. նա կարողացավ թուլացնել մկանների պրկումը՝ ջղերի ավելի մեծ լարվածության գնով և, աշխատելով հանդերձ, բավականությամբ էր լսում Ջոյի հայհոյանքը նուրբ սպիտակեղեն հագնող կանանց հասցեին,— իհարկե միայն նրա համար, որ նրանք ինքները ստիպված չեն լվանալու այդ։ Նուրբ սպիտակեղենը մղձավանջ էր Մարտինի, ինչպես և Ջոյի համար։ Այդ նուրբ սպիտակեղենը զողանում էր նրանցից թանկագին բոպեներ։ Նրանք մի ամբողջ օր էին վատնում դրա վրա։ Ժամը յոթին

նրանք ընդհատեցին լվացքը, որպեսզի արդուկեն տավանաները, սփռոցներն ու անձեռոցները, իսկ ժամը տասին, երբ հյուրանոցում բոլորը քնած էին, նորից ձեռնարկեցին նուրբ սպիտակեղենի և քրտնաթոր աշխատեցին նրա վրա մինչև կես-գիշեր, ժամը մեկը, երկուսը։ Նրանք գործը վերջացրին ժամը երկուսուկեսին։

Շաբաթ օրը առավոտից դարձյալ գործ ունեցան նուրբ սպիտակեղենի և ամեն տեսակ մանր իրերի հետ և, վերջապես, ժամը երեքին վերջացրին շաբաթվա աշխատանքը։

— Հուսամ, որ այս անգամ դու հեծանիվով յոթանասուն մղոն չես գնա մինչև Օկլենդ,—ասաց Ջոն, երբ նրանք տեղավորվեցին աստիճանների վրա և սկսեցին բավականությամբ ծխել։

— Ո՛չ, կգնամ,— պատասխանեց Մարտինը։

— Ինչո՞ւ ես գնում, աղջկա համա՞ր։

— Ո՛չ, ուզում եմ մի քանի գիրք փոխել գրադարանում։ Որպեսզի երկուսուկես դոլլար երկաթուղու տոմսի փող խնայեմ, ես գնում եմ հեծանիվով։

— Ինչո՞ւ այդ գրքերը փոստով չես ուղարկում։ Դա միայն մի քառորդ դոլլար կարժենա։

Մարտինը մտածեց։

— Ավելի լավ կլինի, որ դու վաղը հանգստանաս,—շարունակեց Ջոն,—դա անհրաժեշտ է քեզ։ Ես ինձանով եմ դատում։ Ես միանգամայն ջարդված եմ։

Այդպես էլ երևում էր։ Բոպենների և վայրկյանների այդ անխոնջ որսորդը, հապաղումների թշնամին և արգելքների խորտակիչը, էներգիայի անսպառ աղբյուրը, առավելագույն կարողության մարդկային մոտորը, այդ դևը, և ոչ թե մարդը,— հիմա, շաբաթվա աշխատանքը վերջացնելուց հետո, կատարյալ ուժասպառ վիճակումն էր։ Նա մռայլ և խոշտանգված էր, և նրա գեղեցիկ դեմքը նիհարել էր։ Նա ցրված մտքով էր պապիրոս ծխում, և նրա ձայնը հնչում էր նսեմ և միօրինակ։ Նրանում արդեն չկար ոչ նախկին հուրը, ոչ

եռանդը, և մինչև անգամ հալալ հանդիստը չէր ուրախացնում նրան։

— Իսկ երկուշաբթի օրվանից դարձյալ կսկսենք այդ ամենը,—ասաց նա չարացած,—վերջ ի վերջո ինչո՞ւ համար է այդ բոլորը։ Հա՞։ Խոստովանվեմ, որ երբեմն ես նախանձում եմ թափառաշրջիկներին։ Նրանք չեն աշխատում, բայց այսպես թե այնպես ապրում են։ Օ՜ֆ, օ՜ֆ։ Ես ուրախությամբ կխմեի մի բաժակ գարեջուր, բայց դրա համար պիտի քարշ գալ մինչև գյուղը։ Իսկ դու հիմար մի՛ լինի։ Գրքերդ ուղարկիր փոստով, իսկ դու մնա՛ այստեղ։

— Իսկ ի՞նչ եմ անելու այստեղ մի ամբողջ օր,— հարցրեց Մարտինը։

— Հանգստացիր։ Դու ինքդ չես հասկանում, թե որքան ես հոգնել։ Օրինակ, ես այնքան եմ հոգնած լինում, երբ գալիս է կիրակին, որ մինչև անգամ թերթ չեմ կարողանում կարդալ։ Ժամանակին ես տիֆով հիվանդացա։ Երկուսուկես ամիս պառկած էի հիվանդանոցում, և ոչ մի գործ չէի անում այդ ամբողջ ժամանակամիջոցում։ Ա՛յ, ի՞նչ լավ էր։

— Այո՛, դա շատ լավ էր,— կրկնեց նա երազկոտ, մի բոպե անց։

Մարտինը գնաց լոգանք ընդունելու և վերադարձին տեսավ, որ Ջոն անհետացել էր ինչ-որ տեղ։ Մարտինը վճռեց, որ նա, հավանական է, գնաց մի բաժակ գարեջուր խմելու, բայց սիրտ չարեց գնալ մինչև գյուղը՝ նրան փնտրելու համար։ Նա պառկեց մահճակալին՝ առանց մաշիկները հանելու, և փորձեց կենտրոնանալ մտքերով։ Նա այնպես էլ ձեռք չտվեց գրքերին։ Նա, չափազանց հոգնած, պառկած էր կքեամոռացության մեջ, առանց մտածելու ոչ մի բանի մասին՝ մինչև որ ընթրիքի ժամանակը եկավ։ Ջոն չեկավ ընթրիքի։ Պատասխանելով Մարտինի հարցումին՝ այգեպանն ասաց, որ Ջոն երևի գինետան վաճառասեղանի առաջ մեխված մնացել է։ Ընթրիքից հետո Մարտինն իսկույն պառկեց քնելու և հետևյալ առավոտ զարթնեց միանգամայն հանգստացած, ինչպես թվաց նրան։ Ջոն դարձյալ չկար։ Մարտինը

քացեց կիրակնօրյա թերթը և պառկեց ծառերի տակ, սավերում։ Նա չնկատեց էլ, թե ինչպես անցավ առավոտը։ Նրան ոչ ոք չէր խանգարում, քնած չէր, բայց և այնպես չկարողացավ վերջացնել թերթի ընթերցումը։ Ճաշից հետո նա նորից սկսեց կարդալ, սակայն շատ շուտով քունը տարավ։

Այդպես անցավ կիրակին, իսկ երկուշաբթի առավոտյան նա արդեն ջոկում էր սպիտակեղենը, մինչ Ջոն, գլուխը կապած սրբիչով, անեծք կարդալով օճառաջուր էր պատրաստում և լվացքի մեքենան էր աշխատանքի դցում։

— Այլ կերպ չեմ կարող պարզապես,— բացատրեց նա,— երբ շաբաթ օրն է գալիս, ես պետք է հարբեմ։

Մի շաբաթ էլ անցավ անընդհատ աշխատանքում, ընդ որում դարձյալ բանում էին դիշերները՝ էլեկտրական ուժեղ լույսի տակ, իսկ շաբաթ օրը, ժամը երեքին, Ջոն առանց խանդավառության դիմավորելով անհամբեր սպասված հանգիստը, նորից գյուղ գնաց, որպեսզի հոգսերը մոռանա։ Այդ կիրակին էլ Մարտինն անցկացրեց այնպես, ինչպես նա խորդը։ Նա պառկած էր ծառերի սավերում՝ աչքի անցկացնելով թերթերի սյունակները, նա այդպես պառկած մնաց ամբողջ օրը, առանց ոչինչ անելու, առանց ոչինչի մասին մտածելու։ Նա այնքան շատ էր հոգնել, որ չէր կարողանում մտածել, և արդեն սկսել էր զզվանք զգալ գեպի իր անձը, կարծես ինչ-որ ամոթալի և անուղղելի բան արած լիներ։ Նրանում ամեն վսեմ բան ընկճված էր, նրա պատվասիրությունը բթացել էր, իսկ կենսական ուժն այնքան էր թուլացել, որ արդեն ոչ մի ձգտում չէր զգում իր մեջ։ Նա մեռած էր։ Նրա հոգին մեռած էր։ Նա պարզապես դրաստ էր դարձել, աշխատող դրաստ։ Արդեն ոչ մի դեղեցկություն չէր նկատում՝ կանաչ սաղարթի միջով թափանցող արևի շողքում, և երկնքի կապույտի խորությունն արդեն չէր հուզում նրան և չէր առաջացնում խորհրդածություններ տիեզերքի մասին, որի խորհրդավոր առեղծվածները այնքան ցանկալի էր լուծել։ Կյանքը բութ և անմիտ բան էր, որից վատ համ էր մնում մարդու բերանում։ Նրա երևակայության էկրանի վրա սև վարագույր

էր գցած, իսկ ֆանտազիան տանջվում էր մութ իրցիկում, ուր լույսի ոչ մի ճառագայթ չէր թափանցում։

Մարտինն արդեն սկսեց նախանձել Ջոյին, որը կանոնավոր կերպով ամեն շաբաթ օր խմում էր պյուղում և հարբածության, շշմածության մեջ մոռանում էր առաջիկա շաբաթի տանջալի աշխատանքը։

Անցավ և երրորդ շաբաթը, և Մարտինն անիծում էր իրեն և ամբողջ կյանքը։ Պարտություն կրելու միտքը ճնշում էր նրան։ Խմբագիրներն իրավացի էին, երբ մերժում էին նրա պատմվածքները։ Հիմա նա պարզ հասկանում էր այդ և ինքն էր ծիծաղում իր մոտիկ անցյալի երազների վրա։ Ռութը փոստով վերադարձրեց նրան «Ծովի երգերը»։ Մարտինն անտարբեր կարդաց նրա նամակը։ Երևում էր, որ նա ամեն ճիգ թափել էր արտահայտելու իր հիացումը նրա բանաստեղծություններով։ Բայց Ռութը ստել չգիտեր, իսկ խաբցնել ճշմարտությունը Մարտինից՝ նրա համար նույնպես դժվար էր։ Ռութը չէր հավանել այդ բանաստեղծությունները և դա պարզ երևում էր նրա նամակի ամեն մի տողից։ Եվ Ռութը, իհարկե, իրավացի էր։ Մարտինը համոզվեց դրանում՝ վերանայելով այդ բանաստեղծությունները. նա կորցրել էր գեղեցկի ամեն զգացում և հիմա ոչ մի կերպ չէր կարող հասկանալ, թե ի՞նչն էր դրդել նրան գրել այդ բաները։ Խոսքի համարձակ դարձվածքները հիմա ծիծաղելի թվացին նրան, բաղդատությունները՝ հրեշավոր և արտառոց, իսկ ամբողջը միատեղ՝ անմիտ և ոչ-ճշմարտանման։ Նա ուրախությամբ իսկույն ևեթ կայրեր «Ծովի երգերը», բայց դրա համար պետք էր կրակ վառել, իսկ նա ուժ չուներ մեքենաների բաժանմունքը իջնելու, ամբողջ ուժը վատնել էր ուրիշների սպիտակեղենը լվալու, և իր անձնական գործերի համար արդեն ուժ չէր մնացել։

Մարտինը վճռեց կիրակի օրը սրտապնդվել և նամակ գրել Ռութին։ Բայց շաբաթ երեկո, աշխատանքը վերջացնելուց և լոգանք ընդունելուց հետո, նա մի անհաղթահարելի ցանկություն զգաց մոռանալու իրեն։ «Գնամ, տեսնեմ, թե

Ջոն ինչպես է զվարճանում այստեղ, — ասաց նա ինքնիրեն, և անմիջապես զգաց, որ սատում է. բայց այնքան էներգիա չունեցավ, որ մտածի դրա մասին, — եթե մինչև անգամ էներգիա ունենար, նա չէր ուզենա մերկացնել իր սուտը, որովհետև ամեն բանից շատ նա ուզում էր ինքնամոռացության գիրկն ընկնել։ Առանց շտապելու, կարծես ման գալու համար, նա ուզղվեց դեպի գյուղը, բայց մոտենալով գինետան՝ ակամա փութացրեց քայլերը։

— Չէ՞ որ դու խմող չես, — այս խոսքերով դիմավորեց նրան Ջոն։

Մարտինը չարժանացրեց նրան բացատրություն տալու և վիսկի պատվիրեց, լցրեց իրեն համար մի ամբողջ բաժակ և շիշը փոխանցեց Ջոյին։

— Միայն մի քիչ արագ շարժվիր, — կոպիտ ասաց նա։

Տեսնելով, որ Ջոն դանդաղում էր, Մարտինը չսպասեց նրան, միանգամից պարպեց բաժակը և նորից լցրեց իրեն։

— Հիմա կարող եմ սպասել, — մռայլ կերպով ասաց նա, — այնուամենայնիվ մի քիչ արագ շարժվիր։

Ջոն չստիպեց, որ նրան համոզեն, և նրանք միատեղ խմեցին։

— Վերջ ի վերջո դու էլ այստեղ հասցրիր բանը, հա՞, — ասաց Ջոն։

Բայց Մարտինը չցանկացավ քննարկել այդ հարցը։

— Ես քեզ ասում էի, չէ՞, որ սա դժոխք է, ոչ թե աշխատանք, — շարունակեց Ջոն։ — Ճիշտն ասած, ինձ դուր չի գալիս, որ դու դիրքդ զիջեցիր, Մարտ։ Իսկ, առհասարակ, սատանա՛ն տանի։ Խմե՛նք։

Մարտինը խմում էր լուռ, մեջընդմեջ պատվիրում նոր շշեր և հյուրասիրում էր Ջոյին՝ սարսափեցնելով բարմենին — աղջկա նմանվող, բաց կապույտ աչքերով և մազերը ուղիղ մեջտեղից սանրած գեղջուկ պատանուն։

— Այդպես աշխատեցնել և ուժասպառել մեզ նման խեղճերին դա խայտառակ բան է, — ասում էր Ջոն, — եթե

ես չխմեի. վաղուց կրակի տված կլինեի այս ամբողջ շենքը։ Նրանց բախտին է, որ ես խմում եմ, հավատացնում եմ քեզ։

Մարտինը ոչինչ չպատասխանեց։ Մի քանի բաժակ էլ, և գինովության մեջը սկսեց պատել նրա ուղեղը։ Ա՜հ, այս երեք շաբաթվա ընթացքում նա առաջին անգամ էր, որ զգաց կյանքի շունչը։ Նրա երակները վերադարձան։ Ֆանտազիան գուրս թռավ մութ խցիկից և ելավ մինչև լուսաշող բարձունքները։ Նրա երևակայության էկրանը նորից լուսավոր և արծաթափայլ դարձավ, և վառ տեսիլքները սլսլդալով անցնում էին իրար ետևից։ Գեղեցիկն ու անսովորը գնում էին Մարտինի հետ ձեռք-ձեռքի. նա դարձյալ կիտեր ամեն բան, կարող էր ամեն բան։ Նա ուզում էր բացատրել այդ ամենը Ջոյին, բայց Ջոն իր երազներն ուներ այն մասին, թե ինչպե՞ս վերջ կտա այս տաժանելի աշխատանքին և ինքը տեր կդառնա մի մեծ շոգեշարժ լվացքատան։

— Այո՛, Մարտ, իմ լվացքատանը երեխաներ չպիտի աշխատեն, հավատացնում եմ քեզ, երբե՛ք։ Իսկ երեկոյան ժամը վեցից հետո լվացքատանը ոչ մի մարդ չի լինելու։ Լսու՞մ ես։ Շատ կլինեն մեքենաներ, շատ կլինեն և բանվորները, որպեսզի ամեն ինչ իր ժամանակին վերջանա։ Իսկ քեզ, Մարտ, ես կնշանակեմ իմ օգնականը։ Ահա և իմ պլանը։ Ես թողնում եմ խմելը, սկսում եմ դրամ հավաքել և երկու տարի հետո...

Բայց Մարտինը չէր լսում՝ թողնելով, որ Ջոն իր երազները բացատրի բարմենին, մինչև որ սրան կանչեցին նոր հաճախորդներ՝ տեղական երկու ագարակապաններ։ Մարտինը արքայական առատաձեռնությամբ հյուրասիրեց նրանց և դիմնատանը գտնվող բոլորին՝ մի քանի բատրակների, պարտիզպանի օգնականին, հյուրանոցի ախոռապանին, հենց բարմենին և ինչ-որ թափառաշրջիկի, որը ստվերի նման արագ մտավ դիմնատուն և, նույնպես ստվերի նման, անհայտացավ վաճառասեղանի հեռավոր ծայրում։

ԳԼՈՒԽ XVIII

Երկուշաբթի առավոտ Ջոն հայհոյելով գցեց սպիտակեղենի առաջին պարտիան լվացքի մեքենայի մեջ։

— Ես ասում եմ...— սկսեց նա։

— Վա՛ղն անցիր,— գոռաց նրա վրա Մարտինը։

— Նստիր՝ Ջո,— ասաց նա, երբ նստեցին ճաշելու։ Ջոյի աչքերում արցունքի կաթիլներ երևացին։

— Այդ ոչինչ, բարեկամ,—պատասխանեց նա,— մենք ապրում ենք դժոխքում, այնպես որ զարմանալի չէ, որ երբեմն բարկանում ենք։ Գիտե՞ս ինչ. աստված վկա, ես քեզ շատ սիրեցի։ Այդ պատճառով էլ ես մի քիչ վիրավորվեցի։ Չգիտեմ ինչո՛ւ, ես միանգամից կապվեցի քեզ։

Մարտինը սեղմեց նրա ձեռքը։

—Թողնենք ամեն ինչ և հեռանանք,—առաջարկեց Ջոն, — գնանք թափառականի կյանք վարելու։ Ես ոչ մի անգամ չեմ փորձել այդ, բայց դա չափազանց հաճելի բան պետք է լինի։ Մտածի՛ր միայն—ոչինչ չանելը։ Մի անգամ ես հիվանդանոցում պառկած էի տիֆով. մինչև իսկ հիշելը դուրեկան է։ Ես կուզենայի էլի հիվանդանալ։

Անցան շաբաթներ։ Հյուրանոցը լիքն էր, և նորը սպիտակեղենն ավելի ու ավելի էր ստացվում։ Ջոն ու Մարտինը արիության հրաշքներ էին գործում, աշխատում էին մինչև կես-գիշեր՝ էլեկտրական լույսի տակ, կերակուրի ժամանակը կրճատում էին, սկսեցին կեսաժամ աշխատել և նախաճաշից առաջ։ Մարտինը այլևս սառը վաննաներ չէր ընդունում. դրա համար ժամանակ չկար։ Ջոն մեծ հոգածությամբ էր տնօրինում իր ժամանակը, երբեք չէր կորցնում ոչ մի բոպե. հաշվում էր դրանք, ինչպես ժլատ մարդը հաշվում է ոսկիները. աշխատում էր կատաղի, մոլեգին, որպես մեքենա՝ միշտ շփման մեջ մնալով մյուս մեքենայի հետ, որը ժամանակին մարդ էր՝ Մարտին Իդեն անունով։

Մարտինը հազվադեպ էր մտածում։ Մտքի օթևանը փակ էր. պատուհանները մեխված էին, իսկ ինքը միայն

այդ օթևանի դռանը կանգնած ուրվական պահապանն էր։ Այո, նա ուրվական էր դարձել։ Ջոն իրավացի էր։ Նրանք երկուսն էլ ուրվականներ էին անվերջանալի աշխատանքի թագավորության մեջ։ Թերևս այդ ամենը միայն երազ էր։ Երբեմն, ծանր արդուկը ձյունասպիտակ գործվածքին քսելիս, տաք շոգու քուլաներով շրջապատված, Մարտինն իրեն համոզում էր, որ այդ ամենը իրոք միայն երազ է։ Թերևս շատ շուտ, թերևս և հազար տարի հետո նա դարձյալ կզարթնի իր խցիկում, թանաքից կեղտոտած սեղանին, և կվերսկսի նախօրեին ընդհատված աշխատանքը։ Թերևս դա էլ երազ էր, և նա կզարթնի, որպեսզի նավում ժամապահությունը ստանձնի, և իր մահճից ցատկելով դուրս կգա տախտակամածը և արևադարձային աստղազարդ երկնքի տակ ձեռք կզարկի ղեկանիվին, և պասատյան քամու թարմ հոսանքը կհովացնի նրա կաշին։

Դարձյալ եկավ շաբաթ օրը, և ժամը երեքին աշխատանքը վերջացավ։

— Չգնա՞նք մի բաժակ գարեջուր խմելու,— հարցրեց Ջոն սառը շեշտով, որովհետև տոնական անտարբերությունն արդեն նվաճել էր նրան։

Բայց Մարտինը կարծես զարթնեց։ Նա կարգի բերեց հեծանիվը, յուղեց անիվները, ստուգեց ղեկը և մաքրեց շարժման հաղորդումը։ Ջոն նստած էր գինետանը, երբ Մարտինը նրա առաջով սուրաց-անցավ՝ դեպի ղեկը կռացած, ռիթմիկ կերպով կոխելով հեծանիվի պեդալներին, նայելով դեպի առաջ՝ փոշոտ ճամփան, որով նա պիտի անցներ յոթանասուն մղոն։ Նա գիշերեց Օկլենդում, իսկ կիրակի օրը վերադարձավ և երկուշաբթի սկսեց աշխատել՝ հոգնած, բայց այն դուրեկան գիտակցությամբ, որ այս անգամ չհարբեց։

Անցավ հինգերորդ շաբաթը, հետո վեցերորդը, իսկ նա շարունակում էր ապրել ու աշխատել, ինչպես մեքենա, և միայն նրա հոգու խորքում պահպանվում էր ինչ-որ կայծիկ, որը ստիպում էր նրան ամեն շաբաթվա վերջում հեծանիվով անցնել հարյուր քառասուն մղոն ճամփա։ Սակայն դա

հանգիստ չէր։ Այստեղ գործում էր մեքենայի նույն յարվածությունը, և վերջ ի վերջո Մարտինի հոգում հանդավ և այն վերջին կայծիկը, որը մնում էր նրա անցյալ կյանքից։ Յոթերորդ շաբաթվա վերջում նա, առանց մինչև իսկ փորձելու դիմադրել, Ջոյի հետ միատեղ գնաց գյուղը, նորից «ճաշակեց» կյանքը և ապրեց մինչև երկուշաբթի։

Սակայն հաջորդ շաբաթ նա դարձյալ անցավ յոթանասուն մղոն՝ վանելով հոգնածությունից առաջացած իր անզգայությունը մի այլ անզգայությամբ, որը առաջացած էր ավելի շատ հոգնածությամբ, և միայն երրորդ ամսվա վերջում նա երրորդ անգամ Ջոյի հետ միասին գյուղ գնաց։ Ինքնամոռացության մեջ ընկնելով՝ նա կրկին սկսեց ապրել, իսկ սկսելով ապրել, տեսավ, որպես կայծակի հանկարծական ճայթյունի պահին, թե ինչպիսի անբան անասուն է դարձել,— ոչ թե նրա համար, որ խմում էր, այլ նրա համար, որ այդպես էր աշխատում։ Հարբեցողությունը հետևանք էր, ոչ թե պատճառ։ Դա հաջորդում էր աշխատանքին նույն օրինաչափությամբ, որով գիշերը հաջորդում է ցերեկին։ Երբ գրաստ ես դառնում, երբեք չես հասնի լուսաճաճանչ բարձունքների. վիսկին ներշնչեց նրան այդ միտքը, և նա համաձայնեց դրա հետ։ Վիսկին երևան բերեց մի մեծ իմաստություն, բացահայտեց նրան մի կարևոր ճշմարտություն։

Մարտինը պահանջեց թուղթ և մատիտ, վիսկի պատվիրեց ամբողջ կոմպանիայի համար, և մինչ բոլորը խմում էին նրա կենացը՝ նա, հենվելով վաճառասեղանին, ինչ-որ բան գրեց թղթի վրա։

— Հեռադիր, Ջո,— ասաց նա,— հապա կարդա։

Ջոն սկսեց կարդալ անմիտ, հարբած ըմբիծաղով։ Բայց այն, ինչ կարդաց նա, հանկարծ զգաստացրեց նրան։ Նա կշտամբանքով նայեց Մարտինին, և նրա աչքերում արցունքներ փայլեցին։

— Դու ինձ լրո՞ւմ ես, Մարտ,— հարցրեց նա տխուր։

Մարտինը գլխով հաստատական նշան արեց և, կան-

չելով ինչ-որ տղայի, նրան պատվիրեց վազելով գնալ հեռագրատուն։

— Կաց,— լեզուն կապ ընկած արտասանեց Ջոնը— ես ուզում եմ կշռադատել մի բան։

Նա բռնեց վաճառասեղանը, որպեսզի չընկնի, և Մարտինը գրկեց նրա մեջքն ու պահեց, մինչև որ Ջոն ձեռակերպեց իր միտքը։

— Գրիր, որ երկու աշխատողներն էլ հեռանում են,— միանդամից ասաց Ջոնը։— Գրի՛ր։

— Բայց դո՞ւ ինչու ես հեռանում,— հարցրեց Մարտինը։

— Ճիշտ այն պատճառով, ինչ որ դու։

— Ես գնում եմ նավարկության, իսկ դու չես կարող։

— Ճիշտ է,— պատասխանեց Ջոնը,— բայց ես կդառնամ թափառաշրջիկ։ Դա մինչև անգամ շատ լավ է։

Մարտինը մի բոպե քննական հայացք գցեց նրա վրա և վերջապես բացագանչեց.

— Աստված վկա, դու իրավացի ես։ Ավելի լավ է թափառաշրջիկ դառնալ, քան գրաստ։ Գոնե կապրես։ Իսկ մինչև հիմա դու կյանք չես ունեցել։

— Ունեցել եմ,— ուղղեց նրան Ջոնը,— ես մի անգամ հիվանդանոցումն եմ պառկել։

Մինչ Մարտինը զբաղված էր հեռագրի բովանդակությունը փոխելով, Ջոնը շարունակեց.

— Երբ ես հիվանդանոցում պառկած էի, բոլորովին ցանկություն չունեի խմելու։ Զարմանալի է, չէ՞։ Բայց ես մի ամբողջ շաբաթ աշխատում եմ ձիու պես, ի վերջո պետք է խմեմ։ Բոլորը գիտեն, որ խոհարարները դևերի պես են խմում... հացթուխները նույնպես... Աշխատանքն է այդպես։ Կա՛ց, հեռագրի ծախսի կեսը ես եմ վճարում։

— Լա՛վ, յոլա կգնանք,— ասաց Մարտինը։

— Է՛յ, բոլորդ եկեք այստեղ, ես եմ հյուրասիրում,— գոռաց Ջոնը՝ դրամները թափելով վաճառասեղանին։

Երկուշաբթի առավոտ Ջոնն հուզված էր։ Նա ուշադրու-

թյուն չէր զարձնում իր գլխացավին և չէր հետաքրքրվում աշխատանքով։ Նա կորցրեց շատ թանկագին բոպեներ՝ նստելով և անհոգ նայելով պատուհաններին՝ հրճվելով արևով ու ծառերով։

— Նայե՞ք, այս բոլորը իմն են,— գոռում էր նա։—Սա ազատություն է։ Ես կարող եմ պառկել ծառերի տակ և քընել թեկուզ հազար տարի, եթե կամենամ։ Գնա՛նք, Մարտ։ Թքած ամեն ինչի վրա։ Սատանան տանի նրանց։ Ինչո՞ւ ենք սպասում։ Ահա անգործության աշխարհը և ես տոմս եմ վերցնում հիմա այնտեղ գնալու, միայն առանց վերադարձի տոմսի։

Մի քանի բոպե հետո Ջոն, լցնելով լվացքի մեքենան սպիտակեղենով, տեսավ հյուրանոցի տիրոջ շապիկը. նա գիտեր նրա նիշը։ Եվ, հափշտակվելով նոր ձեռք բերված ազատությամբ, նա գետնին գցեց շապիկը և սկսեց կոխոտել այն։

— Ես կուզենայի, որ սա քո ոտքը լիներ, ճարպակալած սատանա,—բղավում էր նա։—Ա՛յ քեզ։ Ա՛ռ քեզ։ Ա՛յ Ա՛յ Ա՛յ քեզ։ Թող մեկը փորձի ետ պահել ինձ այստեղ։ Թող փորձեն...

Մարտինը, ծիծաղելով, փորձում էր խելքի բերել նրան։ Երեքշաբթի երեկո եկան երկու նոր աշխատողներ, և մինչև շաբաթվա վերջը Ջոն ու Մարտինը զբաղված էին գործը նրանց սովորեցնելով։ Ջոն, նստած, ցուցումներ էր տալիս նրանց, բայց ինքը ոչինչ չէր անում։

— Ո՞նց չէ,— հայտարարեց նա։— Ես ձեռք չեմ տա։ Թող ժամկետից առաջ հեռացնեն գործից, միևնույնն է, ես ձեռք չեմ տա։ Ես այլևս չեմ աշխատելու։ Ես կճամփորդեմ ապրանքատար վագոններում և կքնեմ ծառերի տակ։ Է՞յ, դուք, աշխատողներ։ Հուպ տվեք։ Քրտնեցեք։ Քրտնեցեք, սատանա՛ն տանի ձեզ։ Երբ դուք կսատկեք, կփտեք այնպես, ինչպես և ես, միևնույնը չէ՞, թե ինչպե՛ս եք ապրել։ Բարի եղեք ինձ ասել, վերջ ի վերջո միևնույնը չէ՞։

Շաբաթ օրը նրանք հաշիվները մաքրեցին հյուրանոցի տիրոջ հետ և միասին գնացին մինչև Ճամփարաժանը։

— Իհարկե, դու ինձ հետ չես գնա, շարժե և աշխատե՛լ համոզել քեզ,— հարցրեց Ջոն բոլորովին հուսահատ։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը։ Նա պատրաստվեց նստել հեծանիվ։ Նրանք իրար ձեռքը սեղմեցին, և Ջոն, մի բոպե պահելով Մարտինի ձեռքը, ասաց.

— Մենք քեզ հետ կտեսնվենք դեռ այս աշխարհում, Մարտ։ Ես այդպիսի նախազգացում ունեմ։ Մնաս բարով, Մարտին, ցանկանում եմ քեզ երջանկություն։ Ես սիրում եմ քեզ, աստված վկա, սիրում եմ։

Նա անզոր կանգնած էր ճամփի մեջտեղը՝ նայելով Մարտինի ետևից՝ մինչև որ նա անհետացավ ճամփի շրջադարձին։

— Հրաշալի տղա է,— շշնջաց նա,— շատ հրաշալի։

Հետո նա գնաց ճամփի երկայնքով դեպի ջրամբարը, ուր լրի լանջի տակ կես դյուժին թափառաշրջիկներ, պառկած, սպասում էին ապրանքատար գնացքին։

ԳԼՈՒԽ XIX

Ռութն ամբողջ ընտանիքով վերադարձավ Օկլենդ, և Մարտինը նորից սկսեց տեսակցել նրա հետ։ Ստանալով կիտնականի աստիճան՝ Ռութը դադարեց սովորելուց։ Իսկ Մարտինը, աշխատանքում վատնելով իր հոգու և մարմնի ամբողջ էներգիան, չէր գրում այլևս։ Դա նրանց հնարավորություն էր տալիս ավելի հաճախ տեսակցել, և նրանք է՛լ ավելի մտերմացան։

Սկզբներում Մարտինը միայն հանգստանում էր, ոչինչ չէր անում։ Նա շատ էր քնում, շատ էր մտածում, ընդհանրապես վարվում էր այնպես, ինչպես մի մարդ, որը ուժին ցնցումից հետո ուշքի է գալիս։ Նրանում աստիճանաբար հայտնաբերվող գարթոնքի առաջին նշանն այն էր, որ նա սկսեց հետաքրքրվել թերթերով։ Հետո նորից սկսեց կարդալ՝

նախ բանաստեղծություններ և գեղարվեստական գրականություն. մի քանի օրանց նա ամբողջ էությամբ խորասուզվեց վաղուց մոռացված Ֆիսկի ընթերցանության մեջ։ Նրա ապշեցուցիչ առողջությունն օգնեց վերականգնելու նրա կորցրած կենսական ուժը. և նա վերստին ձեռք բերեց երիտասարդության ողջ հուրն ու բոցը։

Ռութը չափազանց տրտմեց, երբ Մարտինը հաղորդեց նրան, որ կգնա նավաքկության՝ հենց որ բոլորովին կհանգըստանա։

— Ինչո՞ւ,— հարցրեց աղջիկը։

— Դրամ է հարկավոր,— պատասխանեց նա,— ինձ դրամ է հարկավոր հրատարակիչների վրա նոր գրոհ տալու համար։ Դրամ և համբերություն՝ դա ամենալավ զենքն է այդ պայքարում։

— Բայց եթե ձեզ հարկավոր է միայն դրամ, ինչո՞ւ չմնացիք աշխատանքի լվացքատանը։

— Որովհետև լվացքատունն ինձ վերածում էր անասունի։ Այդպիսի աշխատանքը հարբեցողության է մղում։

Ռութը սոսկումով նայեց նրա վրա։

— Դուք ուզում եք ասել...—սկսեց աղջիկը։

Մարտինը հեշտությամբ կարող էր թաքցնել նրանից ճշմարտությունը, բայց նա չէր կարող հանդուրժել սուտը. միաժամանակ նա հիշեց իր վաղուցվա որոշումը՝ միշտ ճիշտ խոսել, ինչ էլ որ լինի հետևանքը։

— Այո՛,— ասաց նա,— մի քանի անգամ պատահել է։

Ռութը ցնցվեց և ետ քաշվեց նրանից։

— Իմ ծանոթներից ոչ ոքի հետ դա չի պատահում։

— Երևում է, որ նրանցից ոչ ոք չի աշխատել «Տաք աղբյուրների» լվացքատանը,— առարկեց Մարտինը դառը ծիծաղով։— Աշխատանքը պատշաճ է բոլորին և ամեն մի մարդու. աշխատանքն օգտակար է — դա են ասում քարոզիչները. և, աստված վկա, ես երբեք չեմ ծուլացել աշխատելու։ Բայց ամեն ինչի չափավորն է լավ։ Իսկ լվացքատանն այդ չափավորությունը չկար։ Այդ պատճառով էլ վճռեցի նավար-

կությանն գնալ։ Դա կլինի իմ վերջին նավագնացությունը։ Իսկ վերադարձիս ես կկարողանամ հաղթահարել հրատարակիչներին։ Ես վստահ եմ դրանում։

Ռութը լռում էր, ախուր և դժգոհ, և Մարտինը զգում էր, որ աղջիկը չի հասկանում, թե ի՞նչ ապրումներ է ունեցել նա։

— Մի ժամանակ ես կնկարագրեմ այդ բոլորը գրքում, որի անունն է լինելու «Աշխատանքի ստորացումը» կամ «Հարստության հոգեբանությունը բանվոր դասակարգում», և կամ այդպիսի մի բան։

Եթե չհաշվել ստաջին ծանոթությունը, դեռ երբեք նրանք իրարից այնքան հեռու չէին եղել։ Նրա անկեղծ խոստովանությունը, որի ետև թաքնված էր նրա հոգու վրդովմունքը, վանեց Ռութին։ Բայց հենց այդ հեռացումը նրան ավելի ապշեցրեց, քան դրա պատճառը։ Ռութը միայն հիմա զգաց, թե ինչպես մոտ էին նրանք իրար, և նա ուզում էր ավելի մտերմանալ։ Աղջկա հոգում ծագում էին անմեղ երազներ՝ Մարտինին ուղղելու մասին։ Ռութը ուզում էր փրկել՝ այդ պատանուն, որը շեղվել էր ուղիղ ճանապարհից, փրկել նրան իր շրջապատից, փրկել հենց իրենից թեկուզ նրա կամքին հակառակ։ Աղջկան թվում էր, որ իրեն ղեկավարում էին վերացական և ազնիվ դրդումներ, և չէր կասկածում, որ այդ բոլորի ետև թաքնված է միայն խանդն ու սիրելու ցանկությունը։

Նրանք հաճախ ման էին գալիս հեծանիվով, քաղաքից շատ հեռու էին գնում աշնան պարզ եղանակին, և այնտեղ, նրանց համար սիրելի բլուրներում, կարդում էին իրար ազնիվ, վեհ բանաստեղծական երկեր, որոնք վեհ մտքեր էին ներշնչում։ Անձնազոհություն, համբերություն, աշխատասիրություն՝ ահա այն սկզբունքները, որոնք Ռութը կոմունակի կերպով աշխատում էր ներշնչել նրան, նկատի ունենալով իր հոր և միստեր Բեյլերի օրինակը, ինչպես և Էնդրյու Կարնեգիի, որը լինելով ներգաղթած տղա՝ դարձավ «գրքերի արքա», որը մատակարարում է ողջ աշխարհին։

Ռութի այդ բոլոր ջանքերը դնահատվեցին Մարտինի կողմից։ Նա հիմա ավելի լավ էր հասկանում աղջկա մտքերը, և նրա հոգին Մարտինի համար արդեն խորհրդավոր մի գաղտնիք չէր։ Նրանք զրուցում էին, մտքեր էին փոխանակում, ինչպես հավասարը հավասարի հետ։ Բայց այդ զրույցների ընթացքում առաջացող տարաձայնությունները չէին ազդում Մարտինի սիրո վրա։ Նրա սերն ավելի ուժեղ էր, քան երբեք, որովհետև նա սիրում էր Ռութին այնպես, ինչպես նա կար, մինչև անգամ աղջկա ֆիզիկական դյուրաբեկությունը նրա աչքին առանձնապես հրապուրիչ էր երևում։ Մարտինը կարդում էր հիվանդոտ Էլիզաբեթ Բարրեթի մասին, որը շատ տարիներ ոտը գետնին չէր դնում՝ մինչև որ վերջապես հասավ այն հիշատակելի օրը, երբ նա փախավ Բրոունինգի հետ և հաստատ կանգնեց հողին՝ բաց երկնքի տակ։ Մարտինը վճռեց, որ Ռութի համար կարող է անել այն, ինչ արել է Բրոունինգը իր սիրուհու համար։ Բայց ամենից առաջ հարկավոր է, որ Ռութը սիրի նրան։ Մնացածը հեշտ է։ Նա Ռութին կտա առողջություն և ուժ։ Նա հաճախ երազում էր իրենց ապագա համատեղ կյանքի մասին։ Նա տեսնում էր իրեն և Ռութին՝ աշխատանքով ստեղծված հարմարությունների և բարեկեցության մեջ։ Նրանք ընթերցում և խոսում են բանաստեղծության մասին։ Ռութը, թեք ընկած, բազմաթիվ գունավոր բարձերի միջև բարձրաձայն կարդում է նրա համար։

Նրա աչքին միշտ պատկերանում էր միևնույն պատկերը՝ նրանց ողջ կյանքի նկարը։ Երբեմն կարդում էր ոչ թե Ռութը, այլ ինքը, նրա իրանը գրկած, ընդ որում աղջկա գլուխը հանգչում էր նրա ուսի վրա. երբեմն նրանք նստած էին լինում իրար սեղմված և լռելյայն կարդում էին միևնույն գիրքը։ Ռութը սիրում էր բնությունը, և Մարտինի հարուստ երևակայությունը թույլ էր տալիս նրան փոխել դեկորացիան, որի ֆոնի վրա պարզվում էր նրանց հավանած տեսարանը։ Մերթ նրանք ընթերցում էին՝ նստած ձորում, շրջապատված բարձր ու սեպ ժայռերով, մերթ գտնվում էին լեռնային

կանաչ մարգագետնում և կամ գորշ ավազակույտերում, որոնցից ոչ հեռու դոռում են ծովի կոհակները. մերթ նա տեսնում էր իրեն՝ Ռութի հետ միասին հրաբխային մի կղզու վրա, արևադարձային դոռում ինչ-որ մի վայրում, ուր դոռոցով թափվում են ջրվեժները, որոնց կաթիլները, քամուց շշվելով, հասնում էին մինչև ծովը։ Բայց միշտ էլ բնության այդ գեղեցկությունների ֆոնի վրա անփոփոխելիորեն դտնըվում էին Մարտինը և Ռութը գիրք կարդալիս, իսկ ինքը՝ բնությունը ուներ երկրորդ, քնքուշ և մառախլապատ մի ֆոն՝ աշխատանքի, հաջողության և նյութական ապահովության պատկերով, որը և թույլ էր տալիս նրանց վայելել աշխարհի բոլոր գանձերը։

— Ես խորհուրդ կտայի իմ աղջկանը՝ մի քիչ ավելի զգույշ լինել,—ասաց մի օր Ռութի մայրը նախազգուշացման շեշտով։

— Գիտեմ, թե դու ինչի՛ մասին ես խոսում, բայց դա անհնար է։ Նա չի...

Ռութը շփոթվեց ու կարմրեց. դա շփոթվածություն էր մի աղջկա, որը առաջին անգամը խոսում էր կյանքի նվիրական գաղտնիքների մասին իր մոր հետ, որը նրա համար նույնպես նվիրական է.

— Նա քեզ համապատասխան չի,— լրացրեց մայրը նրա նախադասությունը։

Ռութը գլխով հավանության նշան արեց։

— Ես չէի ուզում այդ բանն ասել, բայց դա այդպես է։ Նա շատ կոպիտ է, անտաշ, ուժեղ... նա չափազանց ուժեղ է։ Նա ապրել է ոչ...

Ռութը շփոթվեց և չկարողացավ շարունակել։ Նրա համար բոլորովին նոր երևույթ էր՝ մոր հետ այդպիսի բաների մասին խոսելը։ Դարձյալ մայրը լրացրեց նրա միտքը.

— Նա ապրել է ոչ բոլորովին առաքինի կյանքով։ Այ՞դ էիր ուզում ասել դու։

Ռութը նորից գլխով հավանության նշան տվեց և շիկնեց։

— Այո՛, ես հենց դա էի ուզում ասել։ Դրանում, իհարկե, նա մեղավոր չէ, բայց նա հաճախ իրեն պահել է...

— Վա՞տ։

— Այո՛, և նա երկյուղ է ազդում ինձ։ Ես երբեմն պարզապես սարսափում եմ լսելով, թե ինչպիսի հանդգնությամբ խոսում է նա իր ամենախայտառակ արարքների մասին։ Կարծես առանձին ոչինչ անպատշաճ բան չլինի դրանում։ Բայց չէ՞ որ այդպես չի կարելի։ Ճիշտ չե՞մ ասում։

Նրանք նստած էին գրկախառն, և երբ Ռութը լռեց, մայրը փաղաքշանքով շոյում էր նրան՝ սպասելով, որ աղջիկը շարունակի խոսել.

— Բայց Մարտինը շատ է հետաքրքրում ինձ,— շարունակեց Ռութը,— նախ այն պատճառով, որ նա, մի տեսակ, իմ խնամակալության տակ է, հետո... ես երբեք բարեկամ չեմ ունեցել երիտասարդների միջև, թեպետ բոլորովին ճիշտ չէ, որ նա բարեկամ է։ Նա միաժամանակ և բարեկամ է, և հովանավորյալ։ Երբեմն, երբ նա երկյուղ է ազդում ինձ, թվում է, որ ես կարծես բուլդոգի հետ եմ խաղում՝ խոշոր բուլդոգի հետ, որը մռնչում է և ժանիքները ցույց տալիս և ահա պատրաստ է թոկից կտրվելու։

Ռութը նորից լռեց, իսկ մայրը սպասում էր.

— Ես նաև հետաքրքրվում եմ նրանով, ինչպես... բուլդոգով։ Բայց նրանում խիստ շատ են լավ կողմերը. նրանում շատ կան և այնպիսի բաներ, որոնք ինձ կխանգարեին... այլ կերպ վերաբերվել նրան։ Տեսնում ես, որ ես մտածել եմ այդ բոլորի մասին։ Նա հայհոյում է, ծխում, խմում, կոփամարտի է մտնում, նա ինքն է պատմել ինձ այդ մասին, նույնիսկ ասել է, որ սիրում է ծեծկվել։ Նա իսկի էլ այնպիսի մարդ չի, որին ես կուզենայի ունենալ...— Ռութի ձայնը կտրվեց, և նա մեղմ լրացրեց նախադասությունը,— իբր ամուսին։ Բացի այդ, նա արդեն չափից դուրս ուժեղ է։ Իմ սիրածը պիտի լինի նուրբ, բարեկազմ, գեղեցիկ, մազերը պիտի լինեն սև։ Ո՛չ, մի վախենա, ես չեմ սիրահարվի

Մարտին Իդենին. դա ամենամեծ դժբախտությունը կլիներ ինձ համար։

— Ես դրա մասին չեմ խոսում,— խուսափողական կերպով ասաց մայրը,— բայց դու մտածե՞լ ես նրա մասին։ Ամեն տեսակետից այնքան անհարմար մարդ... և հանկարծ սիրի քեզ։

— Բայց նա... նա վաղուց է սիրում ինձ,— աղաղակեց Ռութը։

— Դա սպասելի էր,— սիրալիր ասաց միսիս Մորզը.— Մի՞թե կարելի է, որ քեզ ճանաչող որևէ մարդ չսիրի քեզ։

— Ահա Օլենեյն ատում է ինձ,—ուժգին բացագանչեց Ռութը։— Ես էլ իմ կողմից ատում եմ Օլենեյին։ Երբ նա մոտենում է ինձ, ես զզվանք եմ զգում, չգիտեմ ինչո՛ւ. մինչև անգամ եթե այդ զգացումն էլ չեմ ունենում նրա նկատմամբ, նա համենայն դեպս ատելի է ինձ համար։ Իսկ Մարտին Իդենի հետ ես լավ եմ զգում ինձ։ Դեռ ոչ ոք չի սիրել ինձ— «այնպես» չի սիրել։ Բայց չէ՞ որ հաճելի է «այդպես» սիրվել։ Հասկանո՞ւմ ես, սիրելի մայր, թե ի՛նչ եմ ուզում ասել։ Հաճելի է զգալ, որ իսկական կին ես...— Ռութը թաքցրեց իր դեմքը մոր կրծքում։— Դու իհարկե կմտածես, որ ես սարսափելի հիմարություններ եմ ասում, բայց ես համենայն դեպս անկեղծորեն ասում եմ, ինչ զգում եմ։

Միսիս Մորզը և վշտացավ, և ուրախացավ։ Դուստրը՝ գեղեցիկ արվեստների բակալավրն անհետացավ. հիմա նրա առաջ նստած է կին-դուստրը։ Փորձը հաջողվել էր։ Ռութի բնավորության մեջ նկատվող տարօրինակ պակասությունը վերացել էր առանց վտանգի, առանց հիվանդագին հետևանքների։ Այդ անշնորհք նավաստին կատարել է իր դերը, և թեպետ Ռութը նրան չի սիրում, բայց Մարտինը զարթեցրել է նրա մեջ կանացիությունը։

— Մարտինի ձեռքերը դողում են,— ասում էր Ռութը՝ ամոթից ծածկելով երեսը,— դա ծիծաղելի ու անմիտ է, բայց ես խղճում եմ նրան։ Իսկ երբ նրա՝ ձեռքերը չափազանց ուժեղ են դողում, իսկ նրա աչքերը փայլում են չա-

փաղանց վառ, ես խրատում եմ նրան և նշում նրա բոլոր սխալները։ Նա պաշտում է ինձ, այդ ես գիտեմ։ Նրա ձեռքերն ու աչքերը չեն ասում։ Իսկ այդ միտքը ինձ կարծես չափահաս կին է, զարձնում՝ հենց միայն այդ միտքը։ Ես սկսում եմ զգալ, որ ունեմ մի բան, որ իրավացիորեն ինձ է պատկանում, և ես նմանվում եմ այլ աղջիկներին... և ... և երիտասարդ կանանց։ Գիտեմ, որ ես անցյալում նրանց նման չեմ եղել, և դա մոտահոգում էր քեզ։ Այսինքն, դու ինձ չէիր ցույց տալիս քո մտահոգությունը, բայց ես նկատում էի... և ուզում էի, ինչպես Մարտին Իդենն է ասում, «ավելի լավ լինել»։

Դրանք սրբազան բոլեներ էին մոր և դստեր համար, և երեկոյան աղջամղջին նրանց աչքերն արտասվակալում էին։ Ռութն անմեղ, սրտաբաց և անփորձ. մայրը՝ կաթոդին, հասկացող և սովորեցնող։

— Մարտինը քեզանից չորս տարով փոքր է,— ասաց մայրը,— նա դիրք չունի հասարակության մեջ։ Ոչ մի տեղ չի ծառայում և ոռճիկ չի ստանում։ Նա շատ անգործնական է։ Եթե նա քեզ սիրում է, պետք է մտածեր այն բանի մասին, որ նրան հնարավորություն և իրավունք կտար ամուսնանալու քեզ հետ, և ոչ թե զբաղվել ինչ-որ պատմվածքներով և մանկական երգներով։ Վախենում եմ, որ նա երբեք խելահաս մարդ չի դառնա։ Նա ձգտում չունի տղամարդուն վայել իր տեղը գրավելու կյանքում, ինչպիսի ձգտում ունեցել են քո հայրը, միստեր Բեռլերը և առհասարակ մեր շրջանակի բոլոր մարդիկ։ Ինձ թվում է, որ Մարտին Իդենը երբեք դրամ չի շահելու։ Իսկ աշխարհն այնպես է կառուցված, որ դրամն անհրաժեշտ է. առանց դրամի երջանկություն չի լինում, իհարկե, ես խոսում եմ ոչ թե ահագին հարստության մասին, այլ պարզապես որևէ մշտական եկամտի մասին, որը հնարավորություն է տալիս պատշաճ կյանք վարելու։ Նա ոչ մի անգամ չի՞ խոսել իր զգացումների մասին։

— Ոչ մի բառ։ Նա մինչև անգամ չի փորձել. ես չէի էլ

թողնի, որ նա խոսի այդ մասին։ Չէ՞ որ ես նրան բոլորովին չեմ սիրում։

— Ուրախ եմ, որ այդպես է։ Ես չէի ցանկանա, որ իմ դուստրը, իմ անարատ դուստրը սիրի այդպիսի մի մարդու։ Չէ՞ որ աշխարհում շատ կան ազնիվ, կարգին և անբասիր մարդիկ։ Սպասիր մի քիչ։ Մի վեղեցիկ օր դու կհանդիպես այդպիսի մի մարդու և կսիրես նրան, և նա էլ քեզ կսիրի։ Դու երջանիկ կլինես նրա հետ այնպես, ինչպես ես երջանիկ եմ եղել քո հոր հետ։ Դու երբեք չպիտի մոռանաս մի բան...

— Ի՞նչ, մամա։

Միսիս Մորդի ձայնը դարձավ մեղմ և քնքուշ.

— Երեխաներին։

— Ես մոռացել եմ այդ մասին,— խոստովանվեց Ռութը՝ հիշելով այն անկոչ երազանքը, որը երբեմն համակում էր նրան, և դարձյալ կարմրեց ամոթից։

— Միստեր Իդենը չի կարող քո ամուսինը դառնալ հենց երեխաների պատճառով,— բաղմանշանակ շեշտով ասաց միսիս Մորդը։— Երեխաները պետք է ժառանգեն մաքուր արյուն, իսկ Մարտինը հպիվ թե կարողանա տալ նրանց այդ արյունը։ Հայրդ պատմել է ինձ նավաստիների կյանքի մասին, և... հասկանում ես։

Ռութը հուզմունքով սեղմեց մոր ձեռքը՝ զգալով, որ հասկանում է ամեն բան, թեև իր պատկերացրած սարսափելի և տարտամ բանը չէր ձևակերպվում որպես պարզորոշ միտք։

— Գիտես, մամա, ես ոչինչ չեմ անի՝ առանց քեզ ասելու,—սկսեց Ռութը։—Միայն երբեմն դու ինքդ պետք է հարցնես ինձ ինչպես ահա այսօր։ Ես դեռ վաղուց ուզում էի ասել քեզ այդ մասին, բայց չէի իմանում՝ ինչպես սկսել։ Դա, իհարկե, կեղծ ամոթխածություն է, բայց քեզ համար շատ հեշտ է օգնել ինձ։ Դու երբեմն պետք է հարցնես ինձ. հնարավորություն տաս ինձ արտահայտվելու։ Չէ՞ որ դու էլ կին ես, մամա,—հանկարծ ճչաց Ռութը՝ բռնելով մոր ձեռքերը և ուրախ գիտակցելով այդ նոր, մինչ այժմ չգիտակցված

հավասարությունը իր և մոր միջև։— Ես երբեք չէի մտածի այդպես, եթե դու չսկսեիր այդ խոսակցությունը։ Նախ պետք էր, որ ես ինքս զգայի ինձ որպես կին, որպեսզի հասկանայի, որ դու էլ կին ես։

— Մենք երկուսս էլ կին ենք,— ասաց մայրը՝ գրկելով ու համբուրելով նրան։— Երկուսս էլ կին ենք,— կրկնեց նա, երբ դուրս էին գալիս սենյակից, իրար գրկած և հուզված՝ իրենց միջև նոր ծագած ընկերական մտերմության զգացումով։

— Մեր փոքրիկ դուստրը վերջապես կին դարձավ,— մի ժամ անց հպարտությամբ հայտարարեց միսիս Մորզն իր ամուսնուն։

— Այսինքն, դու ուզում ես ասել, որ նա սիրահարվա՞ծ է,— հարցրեց ամուսինը՝ հետաքրքրությամբ նայելով կնոջը։

— Ոչ, ուզում եմ ասել, որ նրան սիրում են,— պատասխանեց կինը ժպտալով։— Փորձը հաջողվեց։ Նրանում չարթնեց կինը։

— Այդ դեպքում պետք է հեռացնել Իդենին,— կարճ, գործնական տոնով եզրափակեց միստեր Մորզը։

Բայց նրա կինը գլուխը շարժեց։

— Կարիք չկա, մի քանի օրից նա գնում է նավարկության։ Իսկ երբ նա կվերադառնա, Ռութը այստեղ չի լինի։ Մենք նրան կուղարկենք Կլարա մորաքույրի մոտ։ Ռութի համար շատ օգտակար կլինի մի տարի անցկացնել արևելքում, տեսնել այլ մարդկանց, այլ կյանք, փոխել կլիման, իրադրությունը։

ԳԼՈՒԽ XX

Մարտինը նորից բռնվեց գրելու մարմաջով։ Անընդհատ պատմվածքների, բանաստեղծությունների գաղափարներ էին հղանում նրա ուղեղում, և նա կաղմում էր կարճառոտ

ուրվագծել, որպեսզի ապագայում, որևէ ժամանակ, օգտագործի դրանք։ Բայց չէր գրում։ Դա նրա արձակուրդն էր, և նա վճռեց հատկացնել այն սիրո և հանգստի, և դա միանգամայն հաջողվեց։ Կյանքի էներգիան վերադարձավ նրան, և Ռութը ամեն անգամ նրա հետ հանդիպելիս ենթարկվում էր նրա առողջության և ուժի հզոր ազդեցությանը։

— Զգույշ եղիր,— նախազգուշացրեց նրան մայրը մի անգամ,— ինձ թվում է, որ դու չափազանց հաճախ ես տեսակցում Մարտին Իդենի հետ։

Բայց Ռութը, իբր պատասխան, միայն ժպտաց։ Նա չափազանց ինքնավստահ էր, մանավանդ, որ մի քանի օրից Մարտինը նավագնացության էր մեկնելու։ Իսկ երբ նա կվերադառնա, ինքն արդեն կլինի հեռու, արևելքում։ Այնուամենայնիվ անսովոր հրապուրանք կար Մարտինի ուժի և առողջության մեջ։

Մարտինը գիտեր, որ Ռութը, ենթադրաբար, գնալու է արևելք, և հասկանում էր, որ պետք է շտապել։ Բայց նա բոլորովին չէր պատկերացնում իրեն, թե ինչպիսի՛ մոտեցում պիտի ունենալ Ռութի պես աղջկա նկատմամբ։ Մարտինի նախկին ողջ փորձառությունը միայն դժվարացնում էր կացությունը։ Այն կանայք և աղջիկները, որոնց հետ նա սովոր էր գործ ունենալ, բոլորովին այլ էին։ Նրանք պարզ հայտաբերում էին իրենց սերը, ֆլիրտը, իսկ Ռութն այդ բոլորի մասին ոչինչ չգիտեր։ Ռութի անսովոր անարատությունը շշմեցնում էր Մարտինին, խոսելու շնորհքից զրկում, ակամա ներշնչում էր, թե ինքը անարժան է այդ աղջկան։ Կար և մի այլ հանգամանք, որը բավական շփոթեցնում էր նրան։ Ինքն էլ մինչև այժմ ոչ մի անգամ չէր սիրել։ Պատահում էր, որ կանայք դուր էին գալիս նրան, մի քանիսով նա մինչև անգամ տարվում էր, բայց այդ բոլորն ամենևին չէր կարելի կոչել սեր։ Կբավեր, որ նա անհոգ, տիրականորեն սուլեր, և նրանք անձնատուր էին լինում։ Դա նրա համար բոպեական ժամանց էր, պատահականություն, մի տարբը այն բարդ խաղի, որից բաղկացած է տղամարդու կյանքը, ընդսմին երկրորդական

մի տարբ։ Իսկ այժմ, կյանքում առաջին անգամ, նա երկչոտ էր, շփոթված, ամաչկոտ։ Զգիտեր, ինչպե՞ս սկսել, ի՞նչ ասել՝ իրեն կորցնելով սիրած աղջկա անվրդով անբծության առաջ։

Երփներանգ, անվերջ փոփոխվող աշխարհում իր թափառումների ժամանակ Մարտինը սովորել էր մի իմաստուն կանոն. անծանոթ խաղ խաղալիս երբեք դու ինքդ մի՛ արա առաջին քայլը։ Գործնականում՝ այդ կանոնը հազար անգամ արդարացրել է իր ճշտությունը. միաժամանակ դա զարգացնում էր դիտողականությունը։ Մարտինը սովորեց կողմնորոշվել, չափել իր ուժերը, սպասել՝ մինչև հակառակորդն իր թույլ կողմը կհայտաբերի։ Կռվամարտում նա նույնպես միշտ աշխատում էր շոշափել հակառակորդի թույլ կետը։ Եվ այն ժամանակ արդեն փորձառությունն օգնում էր նրան խփել այդ կետին, խփել անվրեպ։

Հիմա, Ռութի նկատմամբ, նա նույնպես սպասում էր՝ ցանկանալով և չհամարձակվելով խոսք բանալ իր սիրո մասին։ Նա վախենում էր, թե կվիրավորի Ռութին, և վստահ չէր իրեն։ Սակայն նա, առանց իմանալու, ընտրել էր ուղիղ ճամփան։ Սերն աշխարհ է եկել հոգորոշ խոսքից առաջ և իր վաղ պատանեկության ընթացքում յուրացրել է այնպիսի ձևեր ու եղանակներ, որոնք նա երբեք չի մոռացել։ Հենց այդ նախնական եղանակներով էլ Մարտինը ձեռք էր բերում Ռութի բարեհաճությունը։ Սկզբում նա այդ անում էր անգիտակցաբար և միայն հետագայում գիտակցեց իր վարմունքը և հասկացավ ճշմարտությունը։ Մարտինի ձեռքի հրպումը նրա ձեռքին ամեն տեսակ բառերից ավելի պերճախոս էր. նրա ուժի զգացումը ավելի զորեղ էր ազդում աղջկա վրա, քան տողերն ու հանգերը, ավելի ուժեղ, քան սիրահարների հարյուրավոր սերունդների բոցավառ զեղումները։ Բերանացի բացատրությունները կշոշափեին ամեն բանից առաջ Ռութի բանականությունը, մինչդեռ ձեռքի հրպումը, անցողակի մոտիկությունը անմիջականորեն ազդում էին աղջկա մեջ թաքնված կանացի բնազդի վրա։ Ռութի բա-

նականությունը նույնպես մատղաշ էր, ինչպես և ինքը։ Իսկ նրա բնազդը ծեր էր մարդկության չափ, մինչև իսկ ավելի ծեր։ Բնազդը ծնվել է այն վաղեմի ժամանակներում, երբ ծնվել է ինքը՝ սերը, և նրա հինավուրց իմաստության ուժը հաղթահարում էր ավելի ուշ դարերի բոլոր ներքությունները ու խորամանկությունները։ Այդ պատճառով էլ Ռութի բանականությունը լուռ էր։ Ռութն ինքը չէր դիմում բանականությանը՝ առանց իրեն հաշիվ տալու, թե ինչպիսի մոգական ազդեցություն է գործում Մարտինը նրա սիրատենչ հոգու վրա։ Որ Մարտինը սիրում է նրան — դա արևի պես պարզ էր, և Ռութը հրճվում էր նրա սիրո դրսևորումներով՝ աչքերի փայլով, ձեռքերի դողոցով, նրա այտերի վրա հաճախ երևացող կարմրությամբ։ Երբեմն Ռութը կարծես մինչև իսկ հրահրում էր Մարտինին, բայց անում էր այդ այնպես երկչոտ և այնպես պարզամիտ կերպով, որ ոչ ինքը, ոչ Մարտինը չէին նկատում այդ։ Ռութը սարսռում էր իր կանացի ուժի ուրախալի դիտակցությունից ու, Եվայի նման, հրճվում էր, խաղալով նրա հետ և գրգռելով նրան։

Իսկ Մարտինը լռում էր, որովհետև չգիտեր, թե ինչպե՞ս խոսք բաց անի, որովհետև նրան համակած զգացումները չափազանց ուժեղ էին,— լռում էր և շարունակում ելք փնտրել՝ մտերմանալու անհամարձակ և անճարակ փորձեր անելով։ Նրա ձեռքի հպումը բավականություն էր պատճառում Ռութին, մինչև անդամ պարզ բավականությունից ավելի մի բան։ Մարտինը չգիտեր այդ, բայց զգում էր, որ ինքը ատելի չի նրան։ Ճիշտ է, որ նրանք իրար ձեռքն էին ուզում միայն բարևելիս և հրաժեշտ տալիս, բայց նրանց մատները շատ հաճախ դիպչում էին իրար, երբ հեծանիվների հետ գործ ունեին, գիրք էին տալիս իրար և կամ միատեղ թղթատում էին այն։ Մի քանի անդամ պատահել էր, որ աղջկա մազերը շոշափել էին նրա այտերը, և կամ աղջիկը մի պահ սեղմվում էր նրան իր ուսով՝ հակվելով գրքում իրենց հավանած տեղի վրա։ Ռութը մտովին ծիծաղում էր այն տարօրինակ զգացումների վրա, որոնք այդ

պահերին համակում էին նրան. օրինակ, երբեմն նա ցանկանում էր դդղել Մարտինի մազերը. Մարտինը, իր հերթին, բուռն ցանկություն ուներ, հոգնած ընթերցումից, գլուխը դնել նրա ծնկներին և փակ աչքերով երազել ապագայի մասին։ Քանի՞ անգամներ պատահել էր կիրակնօրյա դաշտահանդեսներին, որ Մարտինը դրել էր իր գլուխը որևէ աղջկա ծնկներին և հանգիստ քնել՝ թողնելով, որ նա պաշտպանի իրեն արևից և սիրահարված աչքով նայի նրան՝ զարմանալով սիրո հանդեպ նրա վեհ անտարբերության վրա։ Գլուխը դնել աղջկա ծնկներին — Մարտինի համար միշտ էլ ամենահասարակ բանն էր, իսկ հիմա, նայելով Ռութին, նա հասկանում էր, որ դա անհնարին է, անիրագործելի։ Բայց հենց այդ անկարելիության գիտակցությունը և այդ գիտակցությամբ պայմանավորված զսպվածությունը, Մարտինի համար աննկատելիորեն, առաջնորդեցին նրան դեպի նպատակը։ Շնորհիվ այդ զսպվածության՝ նա ոչ մի անգամ Ռութի մեջ անհանգստություն չառաջացրեց։ Լինելով անփորձ և ամաչկոտ՝ նա չէր նկատում, թե իրենց հանդիպումներն ի՛նչ վտանգավոր ուղղություն են ստանում։ Ռութն անդիտակցորեն տարվեց նրանով, իսկ նա, զգալով աճող մտերմությունը, ուզում էր և չէր կարող վճռվել։

Բայց մի օր Մարտինը վճռվեց։ Գալով Ռութի մոտ՝ նա դտավ աղջկան սենյակում, իջեցրած վարագույրներով. նա գանգատվում էր սաստիկ գլխացավից։

— Ոչինչ չի օգնում,— ասաց աղջիկը՝ պատասխանելով նրա հարցումներին։— Իսկ բժիշկ Հոլլն արգելեց ինձ դեղ ընդունել։

— Ես ձեզ կրուժեմ առանց որևէ դեղի,— պատասխանեց Մարտինը,— իհարկե վստահ չեմ, բայց, եթե ուզենաք, կարելի է փորձել։ Դա ամենասովորական մասաժ է։ Դա սովորեցրին ինձ Ճապոնիայում։ Ճապոնացիներն առաջնակարգ մասաժիստներ են։ Հետո ես տեսել եմ, որ, որոշ փոփոխություններով, միևնույն բանն անում են և մալայացիները։

Այդ մասաժը նրանք անվանում են «լոմի-լոմի»։ Դա երբեմն ամեն տեսակ դեղից առավել լավ է։

Հենց որ Մարտինի ձեռքերը կպան նրա ճակատին՝ Ռութը հառաչելով ասաց.

— Շատ լավ է։

Կես ժամից աղջիկը հարցրեց նրան.

— Դուք չհոգնեցի՞ք։

Այդ հարցումն ավելորդ էր, որովհետև նա գիտեր, թե ի՛նչ է պատասխանելու Մարտինը։ Եվ Ռութը, կես քնած վիճակում, հպատակվեց նրան։ Մարտինի մատներից հոսում էր բուժիչ ուժը՝ վանելով գլխացավը — համենայն դեպս այդպես թվաց աղջկան։ Վերջապես ցավն այնքան մեղմացավ, որ Ռութը հանդիստ քնեց, և Մարտինը հեռացավ։

Երեկոյան աղջիկը նրան հայտնեց հեռախոսով.

— Ես մինչև երեկո քնեցի, դուք բոլորովին բուժեցիք ինձ, միստեր Իդեն. չգիտեմ, ինչպե՛ս շնորհակալություն հայտնեմ ձեզ։

Մարտինը ուրախությունից և շփոթվածությունից հազիվ բառեր էր գտնում պատասխանելու, իսկ նրա ուղեղում շարունակ պար էր գալիս Բրոունինգի և Էլիզաբեթ Բարրեթի հիշողությունը։ Ինչ Բրոունինգն է արել իր սիրուհու համար, կարող է անել և ինքը՝ Մարտին Իդենը Ռութ Մորգի համար։ Վերազառնալով իր խցիկը՝ նա պառկեց անկողնին և սկսեց ընթերցել Սպենսերի «Սոցիոլոգիան»։ Բայց ընթերցումը չէր հաջողվում։ Նրա միտքն ու կամքն ամբողջովին դրավված էին սիրով, և շուտով — ինքն էլ չնկատեց, թե ինչպես — իրեն դատվ թանաքոտված փոքրիկ սեղանի առաջ։ Եվ այդ երեկո նրա գրած սոնետը առաջինն էր՝ հաջորդ երկու ամսվա ընթացքում նրա գրած «Սոնետներ սիրո մասին» հիսուն բանաստեղծությունների սերիայից։ Նա գրում էր վսեմ երկասիրություն ստեղծելու համար ամենանպաստավոր հանգամանքներում՝ գրում էր սիրուց ոգեշնչված։

Այն ժամերը, երբ նա Ռութի հետ չէր տեսակցում, նվիրում էր «Սոնետներին» և ընթերցանության՝ իր մոտ տանը

կամ ընթերցարանում, որ նա ուշադիր ուսումնասիրում էր ժուռնալների օրվա համարները, աշխատելով թափանցել հրատարակիչների գաղտնիքը, թե ի՛նչ ձևի ու բովանդակության գրվածքներ են ընդունում նրանք։ Ռութի հետ անցկացրած ժամերը հավասարապես լի էին հույսերով և անորոշությամբ։ Մի շաբաթ անց այն օրից, երբ Մարտինը բուժեց Ռութի գլխացավը, Նորմանն առաջարկեց լուսնկա գիշերով նավակով շրջագայել Մերրիտ լճի վրա, իսկ Արտուրն ու Օլնեյը ուրախությամբ հավանություն հայտնեցին այդ ծրագրին։ Բացի Մարտինից ոչ ոք չէր կարող վարել նավակը, դրա համար էլ նրան խնդրեցին ստանձնել կապիտանի պարտականությունները։ Ռութը նստեց նրա կողքին՝ նավակի ետևի կողմը, իսկ երեք երիտասարդները, տեղավորվելով մեջտեղի նստարանների վրա, սկսեցին անվերջ վիճել իրենց ինչ-որ գործերի մասին։

Լուսինը դեռ չէր ծագել, և Ռութը, նայելով աստղազարդ երկնքին և ոչ մի խոսք չփոխանակելով Մարտինի հետ, հանկարծ մենակություն զգաց և նայեց նրան։ Քամու թափը թեթևակի թեքեց նավակը, և Մարտինը, մի ձեռքով բռնելով ղեկադարձ լծակը և մյուս ձեռքով կայմի պարանը, թեթևակի փոխեց ուղղությունը՝ աշխատելով շրջանցել ցցուն ափը։ Մարտինը չէր նկատում նրա հայացքը, և Ռութն ուշադիր նայում էր նրան՝ խորհրդածելով այն տարօրինակ քմահաճույքի մասին, որը դրդում է նրան, այդ արտասովոր ընդունակությունների տեր պատանուն — ժամանակ վատնել՝ գրելու համար պատմվածքներ ու բանաստեղծություններ, որոնք միջակության մակարդակից վեր չեն բարձրանում։

Ռութի հայացքը սողաց Մարտինի հզոր վզի վրայով, որը աղոտ ուրվագծվում էր աստղերի լույսի տակ, նրա գեղանիստ գլխի վրայով, և նրա վիզը փաթաթվելու ծանոթ ցանկությունը նորից համակեց Ռութին։ Այդ նույն ուժը, որը աղջկան՝ թվում էր անհաճո, միաժամանակ հրապուրում էր նրան։ Մենակության զգացումը ուժեղացավ, և Ռութը հոգնածություն զգաց։ Նավակի ճոճվելը ջղայնացնում էր նրան,

և նա հիշեց, թե ինչպես Մարտինը բուժեց նրա գլխացավը միայն իր հպումով։ Մարտինը նստած էր նրա կողքին, շատ մոտիկ, և նավակը, ճոճվելով, կարծես հրում էր Ռութին դեպի նա։ Եվ Ռութը հանկարծ ցանկացավ կպչել Մարտինի հզոր կրծքին, նրանում հենություն գտնել իրեն հասար — և, նախքան այդ ցանկությունը կիտակցելը, արդեն հակվեց՝ հպատակվելով դրանու։ Թերևս դա նավակի ճոճվելու հետևանքն էր։ Ռութը չգիտեր։ Նա երբեք էլ չիմացավ այդ։ Նա գիտեր միայն, որ սեղմվեց Մարտինին, և որ այժմ նա լավ ու հանգիստ է զգում իրեն։ Եթե մինչև անգամ դրանում մեղավոր էր նավակի ճոճվելը, Ռութն այնուամենայնիվ չէր ուզում ետ քաշվել Մարտինից։ Նա սեղմվեց Մարտինին և շարունակում էր սեղմվել մինչև իսկ այն ժամանակ, երբ նա փոխեց դիրքը, որպեսզի Ռութն ավելի հանգիստ նստի։

Ռութի կողմից դա անմտություն էր, բայց նա չէր ուզում կշռադատել այդ անմտությունը։ Նա արդեն նախկին Ռութը չէր. նա կին էր, և նրանում խոսում էր հենակետ ունենալու կանացի կարիքը. ճիշտ է, որ նա միայն թեթևակի սեղմվեց Մարտինին, բայց այդ կարիքը բավարարված էր։ Նրա հոգնածությունը միանգամից անցավ։ Մարտինը լռում էր։ Նա վախենում էր ցրել այդ կախարդանքը։ Նրա զսպվածությունն ու երկչոտությունը օգնում էին նրան լռելու, բայց նրա գլուխը պտտվում էր և մտքերը շփոթ էին։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ի՞նչ պատահեց։ Դա չափազանց հրաշալի էր, դա չէր կարող տեղի ունենալ արթուն ժամանակ։ Նա դժվարությամբ էր զսպում իր ցանկությունը բաց թողնել պարանն ու ղեկատարձ լծակը և սեղմել աղջկանն իր գրկում։ Բայց նա բնազդաբար զգում էր, որ դա կփչացներ ամբողջ գործը, և մտովին շնորհակալ էր ճակատագրից, որ իր ձեռքերը զբաղված են։ Սակայն նա գիտակցաբար դանդաղեցրեց նավակի ընթացքը, առանց խղճի խայթի բաց թողնելով առագաստը, որպեսզի ինչքան կարելի է երկար պրկի առագաստապարանը։ Նա գիտեր,

որ հալոի փոփոխման դեպքում ստիպված կլինի այլ տեղ գնալ-նստել, և աղջկա մոտիկությունը կխանգարվի։ Այդ ամենը նա անում էր փորձառու ձեռքով՝ առանց ամենափոքր կասկած առաջացնելու վիճողների մեջ։ Նա օրհնում էր իր ամբողջ դժվարին նավապետական կյանքը, որը տվել էր նրան՝ լիճը, նավակը և քամին իր կամքին հպատակեցնելու ունակությունը և հիմա թույլ էր տալիս երկարաձգել այդ մոտիկությունը իր սիրուհու հետ հիանալի լուսնկա գիշերով։

Երբ լուսնի առաջին ճառագայթը լուսավորեց նրանց իր մարգարտյա շողքով, Ռութը ետ քաշվեց Մարտինից և, ետ քաշվելով, զգաց, որ նա էլ նույն բանն արեց։ Երկուսն էլ ուզում էին թաքցնել այդ ամենը մյուսներից։ Դա պիտի մնար իրար գաղտնիք իրենց մեջ։ Ռութն այժմ նստած էր մի կողմ, այտերը բոցավառ, սոսկումով մտածելով պատահածի մասին։ Նա արեց այնպիսի մի բան, որը չէր կարող խոստովանվել ոչ եղբայրներին, ոչ Օլնեյին։ Ինչպե՞ս կարողացել էր վճռել անելու այդ։ Դեռ երբեք այդպիսի բան տեղի չէր ունեցել նրա հետ, թեև նա շատ անգամ էր լուսնկա գիշերներով նավակով մտնելով երիտասարդների հետ միասին։ Մինչև անգամ այդպիսի ցանկություն չէր առաջացել նրանում։ Նա ամաչում և սոսկում էր այդ զարթնող կանացիությունից։ Նա թաքուն նայեց Մարտինին, որը այդ րոպեին զբաղված էր նավակը դարձնելով, և պատրաստ էր առել այդ պատանուն նրա համար, որ իրեն դրդեց կատարել այդպիսի անմտածված և ամոթալի արարք, հենց ինքը՝ Մարտին Իդենը։ Թերևս իր մայրը իրոք իրավացի է, և իրենք չափազանց հաճախ են տեսակցում։ Ռութն իսկույն հաստատ վճռեց, որ դա այլևս երբեք չի կրկնվի, իսկ հետագայում կաշխատի ավելի քիչ հանդիպել Մարտինի հետ։ Նա մինչև անգամ մի անհեթեթ միտք հղացավ. առել նրան, մի անգամ հարևանցի ասել նրան, երբ առիթը կներկայանա, որ նավակում լուսնի ծագելուց առաջ գլուխը պտույտ եկավ։ Բայց նա միաժամանակ հիշեց, թե ինչպե՞ս իրարից ետ քաշվե-

ցին, հենց որ երևաց մերկացուցիչ լուսինը, և հասկացավ, որ Մարտինը նրան չի հավատա։ Բոլոր հետագա օրերում Ռութը կորցրել էր գլուխը. նա դադարեց իր զգացումները վերլուծելուց, դադարեց մտածել այն մասին, թե ի՛նչ է տեղի ունենում իր հետ և ի՛նչ է սպասում իրեն, կարծես տենդից բռնված լսում էր բնության գազանի՝ մերթ սարսռազդեցիկ, մերթ դյութիչ կոչը։ Բայց նա ուներ հաստատ մի որոշում, որը նրան վստահություն էր ներշնչում. թույլ չտալ, որ Մարտինը խոսի սիրո մասին։ Քանի Մարտինը լռում է, ամեն ինչ բարեհաջող է։ Մի քանի օրից նա կհեռանա ծովագնացության։ Ի միջի այլոց, եթե նա մինչև անգամ խոսք բաց անի սիրո մասին, միևնույն է, ոչինչ չի դուրս գա։ Չէ՞ որ ինքը չի սիրում Մարտինին։ Իհարկե, մի կես ժամ դա բավական տանջանք կպատճառի Մարտինին և բավական դժվարություններ իրեն՝ Ռութին, որովհետև նա առաջին անգամն է լսելու սիրո հայտարարություն։ Բավական էր միայն այդ միտքը, որպեսզի Ռութի սիրտը սկսեր հրճվանքով բաբախել։ Նա իսկական կին է դարձել և տղամարդը նրա ձեռքն է խընդրում։ Նրանում ամեն ինչ, որ կանացի է, պատրաստ էր պատասխանել այդ կոչին։ Սարսուռը պատեց նրա ողջ էությունը. միևնույն միտքը աննահանջ դառնում էր նրա գլխում, ինչպես թիթեռը լույսի շուրջը։ Ռութն այնքան էր առաջ դնացել իր մտքերով, որ արդեն պատկերացնում էր իրեն, թե ինչպես Մարտինը պաշտոնական առաջարկ է անում. նա Մարտինի բերանը խոսք էր դնում, իսկ ինքը մի քանի անգամ կրկնում էր իր մերժումը՝ աշխատելով հնարավոր չափով մեղմացնել այն, օգնության կանչելով Մարտինի բնածին ազնիվ արիությունը։ Ամենից առաջ նա պետք է թողնի ծխելը։ Ռութը առանձնապես կպնդի դրա վրա։ Բայց ո՛չ, ո՛չ, նա բնավ թույլ չի տա Մարտինին խոսել սիրո մասին։ Դա Ռութից է կախված, և նա խոստացել է այդ իր մորը։

Կարմրելով և ամբողջ մարմնով դողալով՝ Ռութը ափսոսանքով վանում էր անթույլատրելի երազները։ Նրան

ԳԼՈՒԽ XXI

Վրա հասան հիանալի օրեր, տաք և հաճելի, որոնք հաճախ լինում են Կալիֆորնիայում ըշ ամռանը, երբ արևը կարծես մշուշով է պատած և մեղմ քամին հպիվ է շարժում նիրհող օդը։ Թեթև, շուշանաթույր մառախուղը, կարծես դույնզգույն թելերից հյուսած, նստել էր ձորերում, իբր մշուշի բիծ տարածվել էր Սան-Ֆրանցիսկոյի բլուրների վրա։ Մեջտեղում պսպղում էր ծոցը, որպես հալած մետաղի մի շերտ, որի վրա տեղ-տեղ երևում էին՝ մերթ անշարժ, մերթ դանդաղորեն հոսանքի ուղղությամբ սահող նավերի առագաստները։ Հեռվում, արծաթագույն մառախուղում, բարձրանում էր Տամալպայսը, Ոսկե Դարբասը նեղ արահետի նման երկարել էր մայր մտնող արևի ճառագայթներում, իսկ նրա ետևում կապույտին էր տալիս Մեծ օվկիանոսը՝ մշուշապատ և անծիր, հորիզոնում պատած հոծ ու սպիտակ ամպերով, որոնք նախագուշակներն էին մոտալուտ ձմեռվա։

Արդեն ժամանակն էր, որ ամառն անցներ։ Բայց նա դեռևս դանդաղում էր այստեղ, բլուրների միջև, խտացնելով ձորերի բոսոր գույները, և հոգնածության ու հափրության մշուշասքող պատանքի տակ հանգիստ ու կամաց մեռնում էր՝ ուրախանալով, որ ապրել է և որ իր կյանքն արդասաբեր է եղել։ Աշնանային այդ բլուրների միջև նստած էին Մարտինն ու Ռութը, իրար շատ մոտիկ՝ ղլուխները խոնարհած գրքի էջերին. Մարտինը կարդում էր բարձրաձայն, իսկ Ռութը լսում էր սիրային բանաստեղծություններ՝ գրված այն կնոջ կողմից, որը սիրում էր Բրոունինգին այնպես, ինչպես կարող են սիրել միայն սակավաթիվ կանայք։

Բայց ընթերցումը դանդաղ էր առաջ գնում։ Ջափազանց

ուժեղ էր բնության մեջ մարող գեղեցկության թովչանքը։ Տարվա ոսկե եղանակը մեռնում էր այնպես, ինչպես ապրել էր—իրր գեղեցիկ և չզղջացող մեղավոր կին, և թվում էր, թե շրջապատի օդն իսկ արբեցած էր քաղցր հիշողությունների խոնջանքով։ Այդ խոնջանքը թափանցեց Մարտինի և Ռութի արյան մեջ և կամազուրկ էր անում նրանց, ծիածանի միգով պատում էր բանականությունը և բարոյական սկզբունքները։ Մարտինն անձնատուր էր լինում հարբեցնող թուլությանը, և մերթ հուր էր հոսում նրա երակներով։ Նրանց գլուխները բոլորովին մոտեցան, և երբ պատահական քամուց Ռութի մազերը կպչում էին նրա այտերին, գրքի տողերը սկսում էին շաղվել նրա աչքի առաջ։

— Իմ կարծիքով, դուք ինքներդ չեք լսում, ինչ կարդում եք,— ասաց Ռութը, երբ նա հանկարծ շփոթվեց և կորցրեց կարդացած տեղը։ Մարտինը նայեց նրան բոցավառ աչքերով, բայց առանց իրեն մատնելու, պատասխանեց.

— Դուք էլ չեք լսում։ Ինչի՞ մասին էր խոսվում վերջին սոնետում։

— Չգիտեմ,— ծիծաղեց Ռութը։— Արդեն մոռացա։ Այլևս չարժե կարդալ։ Շատ է գեղեցիկ օրը։

— Մենք արդեն երկար ժամանակ ման գալ չենք կարող,— ասաց Մարտինը լրջորեն,— այնտեղ, հորիզոնում փոթորիկ է պատրաստվում։

Գիրքն ընկավ Մարտինի ձեռքից, և նրանք լուռ նստած էին՝ նայելով նիրհող ծոցին երազկոտ, չտեսնող աչքերով։ Ռութը գաղտագողի նայեց Մարտինի վզին։ Ինչ-որ ուժ, ավելի տիրական՝ քան ձգողության օրենքը, ճակատագրի պես հզոր, հանկարծ քարշ տվեց նրան։ Աղջկան հարկավոր էր միայն մի մատնաչափ կռանալ՝ ուսով նրա ուսին կպչելու համար, և դա պատահեց Ռութի կամքից անկախ։ Նա կպավ Մարտինին այնքան թեթև, որքան թիթեռը կկպչի ծաղկին, և անմիջապես զգաց փոխադարձ հպում՝ նույնքան թեթև, զգաց, թե ինչպես Մարտինի ուսը սեղմվեց նրան, և ինչպես սարսուռ անցավ պատանու ամբողջ մարմնով։ Ռութին հար-

կավոր էր այդ բոպեին նա քաշվելու։ Բայց նա արդեն չէր հնազանդվում իրեն։ Այն լոլորը, ինչ անում էր նա, կատարվում էր ինքնաբերաբար, առանց նրա կամքի մասնակցության։ Ռութն արդեն ոչնչի մասին չէր մտահոգվում՝ հափշտակված լինելով բերկրալի խելահեղությամբ։

Մարտինի ձեռքն անվճռականորեն երկարեց և գրկեց նրա իրանը։ Ռութը սպասում էր տանջալից հրճվանքով, առանց իմանալու, թե ի՞նչ էր սպասում. նրա շրթունքներն այրվում էին, սիրտը տրոփում էր, արյունն ավելի ու ավելի արագ էր շրջան անում։ Մարտինը քնքուշ ու կամաց ձգում էր աղջկան դեպի իրեն՝ ավելի պինդ գրկելով նրան։ Ռութն այլևս չէր կարող սպասել։ Նա ջղաձգորեն հառաչեց և անգիտակից շարժումով գլուխը դցեց նրա կրծքին։ Մարտինն արագ հակվեց, և նրանց շրթունքներն իրար հանդիպեցին։

Երևում է, դա է սերը, մտածեց Ռութը, երբ մի պահ նրան վերադարձավ գիտակցությունը։ Եթե դա սեր չի, այդ դեպքում չափազանց ամոթալի բան է։ Իհարկե, դա կարող է լինել միայն սեր։ Նա սիրում էր այս մարդուն, որի ձեռքերը գրկել էին նրան, որի շրթունքները սեղմված էին իր շրթունքներին։ Աղջիկն ավելի պինդ կպավ նրան՝ բնազդական, սարքվող ու հարմարվող մի շարժումով, և հանկարծ, համարյա պոկ գալով նրա գրկախառնումից, վճռականորեն և ինքնամոռացությամբ՝ ձեռքերով փաթաթվեց Մարտին Իդենի արևակեզ վզին։ Եվ բավարարված ցանկության ուրախությունն այնքան ուժեղ, այնքան սուր էր, որ հաջորդ ակընթարթում նա մեղմիկ հառաչանքով ձեռքերը բացեց և գրեթե անզգա ընկավ նրա գիրկը։

Արդեն երկար ժամանակ էր անցել, բայց նրանք ոչ մի խոսք չէին փոխանակել։ Երկու անգամ Մարտինը կռացավ և համբուրեց նրան, և ամեն անգամ աղջկա շրթունքները երկչոտությամբ ընդառաջ էին գնում համբույրին, իսկ մարմինը բնազդարար հարմար ու հանգիստ դիրք էր փնտրում։ Ռութը չէր կարողանում պոկ գալ նրանից, և Մարտինը լուռ նստած էր՝ պահելով նրան իր գրկում և չտեսնող

աչքերը հառելով ծովածոցի այն կողմը ձգվող ահագին բաղաքին։ Այս անգամ նրա աչքին ոչ մի տեսիլ չէր պատկերանում։ Նա տեսնում էր միայն դույներն ու վառ ճառագայթները՝ տաք, ինչպես այդ հրաշալի օրը, ջերմ՝ ինչպես նրա սերը։ Նա հակվեց դեպի աղջիկը, և սա սկսեց խոսել.

— Դուք ե՞րբ սիրեցիք ինձ,— հարցրեց նա շշնջյունով։

— Առաջին օրվանից, հենց առաջին անգամ, որ ձեզ տեսա։ Դեռ այն ժամանակ սիրեցի, և դրանից հետո օրից օր ավելի ուժգին եմ սիրել։ Իսկ հիմա առավել ուժգին եմ սիրում, իմ թանկագին։ Ես միանգամայն խելագարվել եմ։ Գլուխս պտտվում է երջանկությունից։

— Մարտին... սիրելիս։ Ես որքա՞ն ուրախ եմ, որ կին եմ,— ասաց նա՝ խոր հառաչանքով։

Մարտինը նորից պինդ սեղմեց նրան իր գրկում, հետո մեղմ հարցրեց.

— Իսկ դու՞ք, ե՞րբ հասկացաք առաջին անգամ։

— Օ՜, ես վաղուց եմ հասկացել այդ, գրեթե իսկույն։

— Նշանակում է, ես կույր եմ եղել, ինչպես չղջիկ,— ճչաց Մարտինը, և նրա ձայնում հնչեց սրդողություն։— Ես դա կռահեցի միայն հիմա, երբ համբուրեցի ձեզ։

— Ես այդ չէի ուզում ասել։

Աղջիկը մի քիչ ետ քաշվեց և նայեց նրան։

— Ես արդեն վաղուց էի հասկացել, որ դուք սիրում եք ինձ։

— Իսկ դու՞ք,— հարցրեց Մարտինը։

— Այդ բանն ինձ պարզվեց գրեթե հանկարծ։— Նա խոսում էր շատ մեղմ, նրա աչքերը մշուշով պատվեցին, այտերը վարդագույն դարձան։— Ես չէի հասկանում՝ մինչև որ դուք գրկեցիք ինձ։ Եվ ես երբեք չէի կարծում, որ կարող եմ ձեզ հետ ամուսնանալ, Մարտին։ Ինչո՞վ դյուրեցիք դուք ինձ։

— Չգիտեմ,— ժպտաց նա։— Թերևս միայն իմ սիրով։ Իմ սերը կարող էր քարը հալեցնել, թող թե կենդանի կնոջ սիրտը։

— Այդ բոլորը դեռ ես նման չի սիրո, ինչպես ես էի պատկերացնում այն,— մտածկոտ ասաց Ռութը։

— Դուք ինչպե՞ս էիք պատկերացնում այն։

— Ես չէի կարծում, որ սերն այսպես է։

Աղջիկը մի վայրկյանում նայեց նրա աչքերին և ապա ասաց՝ աչքերը գետնին հառած.

— Ես բոլորովին ոչինչ չէի հասկանում։

Մարտինը նորից ցանկացավ դեպի իրեն քաշել Ռութին, բայց վարանեց երկյուղ կրելով, որ կվախեցնի նրան, և միայն նրան գրկած ձեռքը ակամա ցնցվեց թեթևակի։ Այն ժամանակ աղջիկն ինքը ձգվեց դեպի նրան, և նրանց շրթունքները դարձյալ ձուլվեցին մի երկար համբույրով։

— Բայց ի՞նչ կասեն իմ ծնողները,—հարցրեց նա հանկարծական հուզմունքով։

— Չգիտեմ։ Բայց դա դժվար չէ հասկանալ, հենց որ մենք ուզենք։

— Իսկ եթե մայրիկս չհամաձայնի՞։ Ես ոչ մի կերպ չեմ համարձակվի ասել այդ նրան։

— Լա՛վ, ես կասեմ,— արիաբար առաջարկեց Մարտինը։— Ինձ այնպես է թվում, որ ձեր մայրն ինձ չի սիրում, բայց դա ոչինչ, ես կկարողանամ նրան նվաճել։ Նա, ով նրվաճեց ձեզ, կարող է նվաճել, ո՛ւմ ուզես։ Իսկ եթե այդ չհաջողվի...

— Այդ դեպքո՞ւմ։

— Միևնույնն է, մենք իրարու կպատկանենք։ Բայց ես վստահ եմ, որ ձեր մայրը կհամաձայնի։ Նա չափազանց ուժեղ է սիրում ձեզ։

— Ես չէի ուզենա կոտրել նրա սիրտը,—մտածկոտ ասաց Ռութը։ Մարտինն ուզում էր ասել, որ մայրական սիրտն այդպես հեշտ չի կոտրվում, բայց դրա փոխարեն ասաց.

— Չէ՞ որ սերն աշխարհում ամենից վեհ է։

— Գիտե՞ք, Մարտին, ես երբեմն վախենում եմ ձեզանից։ Ես հիմա էլ եմ վախենում, երբ մտածում եմ, թե ո՞վ եք դուք և ի՞նչ եք եկել անցյալում։ Դուք շատ, շատ լավ

պետք է լինեք ինձ հետ։ Մտածեցեք, որ ես դեռ միանգամայն երեխա եմ։ Ես դեռ ոչ ոքի չեմ սիրել։

— Ես էլ։ Մենք երկուսս էլ երեխաներ ենք։ Եվ մենք շատ երջանիկ ենք։ Չէ՞ որ մեր առաջին սերը դատանք իրար մեջ։

— Բայց դա չի կարող այդպես լինել,— աղաղակեց հանկարծ աղջիկը՝ արագ և ուժգին մի շարժումով աղատվելով նրա ձեռքից,— չի կարող պատահել, որ դուք... Չէ՞ որ դուք նավաստի եք եղել, իսկ ես գիտեմ, որ նավաստիները...

Ռութի ձայնը կտրվեց։

— Սովոր են կին ունենալ ամեն նավահանգստում,— նախադասությունը լրացրեց Մարտինը նրա փոխարեն — ա՞յդ էիք ուզում ասել։

— Այո,— մեղմաձայն պատասխանեց աղջիկը։

— Բայց այդ հո սեր չէ,— առարկեց նա հեղինակավոր շեշտով։— Ես եղել եմ շատ նավահանգիստներում, բայց երբեք չեմ զգացել սիրո նմանվող որևէ բան՝ մինչև ձեզ հետ հանդիպելս։ Գիտե՞ք, երբ ես առաջին անգամ ձեր տնից վերադառնում էի, քիչ էր մնացել, որ ինձ ձերբակալեին։

— Ինչպե՞ս թե ձերբակալեին։

— Շատ պարզ։ Ոստիկանը կարծեց, թե հարբած եմ։ Ես իրոք որ հարբած էի... սիրուց։

— Բայց մենք շեղվում ենք։ Դուք ասացիք, որ մենք երկուսս էլ երեխաներ ենք, իսկ ես ասացի, որ դա չի կարող լինել։ Ահա թե ինչի՛ մասին էր խոսքը։

— Չէ՞ որ ես ձեզ պատասխանեցի, որ անցյալում ոչ ոքի չեմ սիրել,— առարկեց նա,— դուք իմ առաջին, իսկապես առաջին սերն եք։

— Այնուամենայնիվ դուք նավաստի եք եղել,— պնդում էր աղջիկը։

— Բայց և այնպես ես առաջին անգամ ձեզ եմ սիրել։

— Այո, բայց չէ՞ որ եղել են կանայք... ուրիշ կանայք... Օ՜հ,— Եվ նա հանկարծ սկսեց դառն արտասուք թափել՝ դրանով խիստ զարմացնելով Մարտինին, այնպես որ կարիք

Եղան բավական շատ համբույրներ նրան հանգստացնելու համար։

Ակամա Մարտինը մտաբերեց Կիպլինգի մի տողը. «Բայց գնդապետի տիկինը և Ջուդի Օ' Կրեդին մյուս բոլոր բաներում հավասար են»։

Նա մտածեց, որ էականում դա ճիշտ է, թեև նրա ընթերցած վեպերն այլ կերպ էին մտածել տալիս։ Այդ վեպերի հիման վրա նա այն գաղափարը կազմեց, որ բարձր դասի մեջ դեպի կինը տանող միակ ճամփան՝ նրան պաշտոնապես առաջարկ անելն է։ Այն միջավայրում, որի ծնունդ է ինքը, աղջիկների և տղաների համար դրկախառնումները ու փաղարշանքը սովորական բաներ են։ Իսկ բարձրագույն դասակարգի նրբազգաց ներկայացուցիչների միջև սիրո արտահայտության նմանօրինակ ձևերն անհնար էին թվում նրան։ Դա նշանակում է, որ վեպերը ստում են։ Նա հենց այս բոպեին տեսավ դրա ապացույցը։ Միևնույն անձայն փաղաքշանքը նույն տպավորությունն է առաջացնում և խեղճ բանվորուհիների, և բարձրագույն հասարակության պատկանող աղջիկների մեջ։ Չնայած արտաքին տարբերության՝ նրանք «մյուս բոլոր բաներում հավասար են»։ Նա ինքն էլ կարող էր այդ եզրակացության հանդել, եթե հիշեր Հերբերտ Սպենսերին։ Եվ մխիթարելով Ռութին փայփայանքով և համբույրներով՝ Մարտինը բավականությամբ կանգ էր առնում այն մտքի վրա, որ «Գնդապետի տիկինը և Ջուդի Օ' Կրեդին մյուս բոլոր բաներում հավասար են»։ Այդ միտքը Ռութին մոտեցնում էր նրան, ավելի մատչելի էր դարձնում աղջկան։ Ռութի գեղեցիկ մարմինը, միևնույնն է, մարմին է, ինչպես այլ որևէ մարմին։ Նրա ամուսնությունը Ռութի հետ իսկի էլ անկարելի չի։ Նրանց միջև միակ տարբերությունը մնում էր դասակարգերի խտրությունը, բայց դա էլ վերջ ի վերջո զուտ արտաքին զանազանություն է։ Կարելի է նկատի չառնել այդ։ Չէ՞ որ Մարտինը կարդացել է հռոմեական մի ստրկի մասին, որը բարձրացել է մինչև կայսերական ծիրանի ալատմուճանը։ Եթե դա պատահել է, ինչու՞ ինքն էլ չի կա-

բող բարձրանալ մինչև Ռութը Անարատության, անբծության, կուլտուրայի և հոգեկան գեղեցկության կեղևի տակ՝ Ռութի մեջ թաքնված է կանացի սովորական բնությունն, հիշա այնպիսին, ինչ գոյություն ունի Լիզզի Կոնոլլիի և աշխարհի երեսին գտնվող նման բոլոր աղջիկների մեջ։ Այն ամենը, ինչ հնարավոր էր նրանց համար, հնարավոր է և Ռութի համար։ Նա կարող է սիրել, ատել. հավանական է, Ռութն էլ է ունեցել հիստերիա. վերջապես՝ նա կարող է խանդել, և արդեն խանդում է՝ մտածելով Մարտինի մոտ անցյալում ունեցած նավահանգստային սիրուհիների մասին։

— Եվ բացի այդ, ես ձեզանից մեծ եմ տարիքով,— հանկարծ ասաց Ռութը՝ նայելով նրա աչքերին,— ես ձեզանից չորս տարով մեծ եմ։

— Բայց և այնպես դուք երեխա եք։ Իսկ կենցաղային փորձառությամբ ես ձեզանից քսանչորս տարով մեծ եմ,— առարկեց Մարտինը։

Իրականում, իհարկե, երկուսն էլ երեխաներ էին ամեն բանում, որ վերաբերում էր սիրո, և նրանք երեխայաբար, անճարակ ու միամիտ, արտահայտում էին իրենց զգացումները,— չնայած Ռութի համալսարանական դիպլոմին և գիտական աստիճանին, չնայած Մարտինի փիլիսոփայական գիտելիքներին և կյանքի դժնդակ փորձառությանը։

Նրանք նստել էին՝ մայր մտնող արևի ցոլքով լուսավորված, խոսակցելով այնպես, ինչպես սովորաբար զրուցում են սիրահարները. նրանք հիանում էին սիրո հզոր հրաշքով և ճակատագրով, որը մոտեցրեց նրանց, և հաստատ համոզված էին, որ իրար սիրում են այնպես, ինչպես աշխարհում դեռ ոչ ոք չի սիրել։ Նրանք անդադար վերհիշում էին իրենց առաջին հանդիպումը՝ աշխատելով վերակենդանացնել իրարից ստացած տպավորությունները, չանալով ճշգրիտ որոշել, թե ի՞նչ էին մտածում և զգում այն ժամանակ։

Արևմուտքում ամպերը ծածկեցին մայր մտնող արևին։ Հորիզոնում երկինքը շառագունեց, չորս կողմն ամեն բան խորասուզվեց այդ գույնի մեջ, և Ռութը ասաց. «Մնաս

բարո՞վ, երջանիկ օրո՝ Նա երգում էր՝ գլուխը դրած Մարտինի ուսին, իսկ ձեռքերը՝ նրա ձեռքերի մեջ, և նրանցից յուրաքանչյուրն այդ պահին իր ձեռքին ուներ մյուսի սիրտը։

ԳԼՈՒԽ XXII

Եթե միսիս Մորդը մինչև անգամ չունենար մայրական նրբազգացություն, այդ դեպքումն էլ հեշտությամբ կկռահեր ամեն բան՝ հենց որ նայեց Ռութին։ Ամեն բանից ավելի պերճախոս էին նրա այտերն ողողած կարմրությունը և ուրախություն ու հաղթական ցնծություն արտացոլող-փայլուն աչքերը։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց միսիս Մորդը՝ այնքան սպասելուց հետո, մինչև որ Ռութը անկողին մտավ։

— Դու գուշակեցի՞ր,— իր հերթին հարցրեց Ռութը դողդոջուն ձայնով։

Փոխանակ պատասխանելու՝ մայրը քնքշորեն գրկեց նրան և ձեռքով շոյեց նրա մազերը։

— Նա ոչինչ չասաց,— բացագանչեց Ռութը։— Ես բոլորովին չէի ուզում, որ դա պատահի, և ես ոչ մի կերպ նրան թույլ չէի տա խոսելու, բայց նա ոչինչ չասաց։

— Բայց եթե նա ոչինչ չի ասել, ոչինչ էլ չէր կարող պատահել։

— Այնուամենայնիվ պատահեց։

— Աստծու սիրուն, ղավակս, ի՞նչ ես շաղակրատում,— բացագանչեց միսիս Մորդը։— Ի՞նչ է պատահել։ Բանն ինչո՞ւմն է։

Ռութը զարմացած նայեց մորը։

— Ես կարծում էի, որ դու արդեն գուշակեցիր,— ասաց նա։— Մարտինն ու ես նշանածներ ենք։

Միսիս Մորդը հռհռաց այնպիսի մի ծիծաղով, որը արտահայտում էր երկմտություն և սրտնեղություն։

— Բայց նա ոչինչ չասաց,— շարունակեց Ռութը։— Նա պարզապես սիրում է ինձ, ուրիշ ոչինչ։ Ինձ համար էլ դա նույնքան անսպասելի էր, ինչպես և քեզ համար։ Նա ոչ մի բառ չասաց։ Պարզապես դրկեց ինձ, և ես... և ես միանգամայն գլուխս կորցրի։ Նա համբուրեց ինձ, ես էլ նրան..։ Այլ կերպ չէի կարող։ Ես պիտի համբուրեի նրան։ Եվ ես հասկացա, որ սիրում եմ նրան։

Ռութը լռեց՝ սպասելով, որ մայրը կհամբուրի նրան, բայց միսիս Մորզը չարադուշակ լռություն էր պահպանում։

— Իհարկե, դա սոսկալի է, ես հասկանում եմ,— սկսեց Ռութը ընկճված ձայնով։— Չգիտեմ, թե դու կարո՞ղ ես ինձ ներել։ Բայց ես այլ կերպ վարվել չէի կարող։ Մինչև այդ բոպեն ես չէի կասկածում, որ սիրում եմ նրան։ Դու ինքդ ասա այդ մասին իմ հորը։

— Թերևս ավելի լավ է ոչինչ չասե՛լ հորդ։ Ես ինքս կխոսեմ Մարտին Իդենի հետ և կբացատրեմ նրան ամեն բան։ Նա կհասկանա և կազատի քեզ տված խոսքիցդ։

— Ո՛չ, ո՛չ,— աղաղակեց Ռութը եռանդագին։— Ես չեմ ուզում, որ նա ինձ ազատի։ Ես սիրում եմ նրան, իսկ սիրելը այնքան հաճելի է։ Ես կամուսնանամ նրա հետ, իհարկե, եթե դուք ինձ թույլ տաք։

— Քո հայրն ու ես այլ ծրագիրներ ունենք, Ռութ, սիրելիս... ո՛չ, ո՛չ, ո՛չ, մ՛ի կարծի, որ մենք որևէ մեկին փաթաթում ենք քո վզին։ Մենք պարզապես ուզում ենք, որ դու մեր շրջանակից մեկի հետ ամուսնանաս, իսկական ջենտրլմենի հետ, որին բոլորը հարգում են, որին դու ինքդ կընտրես, երբ կսիրես։

— Բայց չէ՞ որ ես արդեն սիրում եմ Մարտինին,— ազիոզորմ շեշտով առարկեց Ռութը.

— Մենք ոչ մի կերպ չենք ուզում ազդել քո ընտրության վրա։ Բայց դու մեր աղջիկն ես, և մենք չենք կարող հանգիստ խղճով թույլ տալ քեզ ամուսնանալու այդպիսի մարդու հետ։ Քո ամբողջ ընթշությանն ու փափկանկատությանը նա կարող է պատասխանել միայն կոպտությամբ և անկրթությամբ։ Նա

ոչ մի տեսակետից հարմար չէ քեզ։ Նա մինչև իսկ չի կարող ապահովել քեզ։ Մենք հարստության հնաոամուտ չենք, բայց ամուսինը պարտական է հանգստավետություն և որոշ չափով բարեկեցություն տալ կնոջը։ Մեր աղջիկը պետք է ամուսնանա ապագա ունեցող մի մարդու հետ, և ոչ թե չքավոր ավանտյուրիստի, նավաստու, կովբոյի, մաքսանենգի և աստված գիտի, թե ում հետ։ Բացի այդ, նա արտասովոր թեթևաբարո մարդ է, և պատասխանատվության ոչ մի զգացում չունի։

Ռութը լռեց՝ գիտակցելով, որ մայրը ճիշտ է ասում։

— Նա ժամանակ է վատնում իր գրվածքների վրա՝ աշխատելով ձեռք բերել այն, ինչին հաղվադեպ հասնում են առանձնապես տաղանդավոր և բարձրագույն կրթության տեր մարդիկ։ Ճմուսնության մասին մտածող մարդը այսպես թե այնպես պետք է պատրաստվի այդ բանին։ Իսկ դա նրա մտքովն էլ չի անցնում։ Ես արդեն ասացի—և գիտեմ, որ դու կհամաձայնես ինձ հետ,—որ նրանում պատասխանատվության զգացում չկա։ Եվ ինչո՞ւ պետք է ունենա այդ զգացումը։ Բոլոր նավաստիներն էլ այդպես են։ Նա երբեք չի աշխատել խնայասեր և ժուժկալ լինելու։ Նա սովոր է ծախսելու առանց հաշվի, և դա նրանում արդեն միս ու արյուն է դարձել։ Իհարկե, դրանում նա մեղավոր չի, բայց դրանով նրա բնավորությունը չի փոխվի։ Իսկ դու մտածե՞լ ես նրա առաջվա սանձարձակ կյանքի մասին, այլ կերպ չէր կարող լինել։ Իսկ դու գիտե՞ս, աղջիկս, թե ի՞նչ բան է ամուսնությունը։

Ռութը ցնցվեց և սեղմվեց մորը։

— Ես մտածել եմ...—Ռութը երկար լռեց՝ ձևակերպելու համար ասելիքը։— Դա իհարկե սոսկալի է։ Ինձ համար շատ ծանր է մտածել դրա մասին։ Ես գիտակցում եմ, որ իմ սերը մեծ դժբախտություն է, բայց այլ կերպ վարվել չեմ կարող։ Դու կարո՞ղ էիր չսիրել իմ հայրիկին։ Նույն բանն է և իմ նկատմամբ։ Նրանում և ինձանում կա մի բան, և մինչև այսօր ես չէի հասկանում այդ, որ ստի-

պում է ինձ սիրել նրան։ Ես երբեք չէի կարծում, որ կսիրեմ նրան, բայց տես սիրեցի,—եզրափակեց նա՝ ձայնի մեջ դնելով որոշ չափով հաղթական շեշտ։

Այդ ասպարդյուն խոսակցությունը դեռ երկար շարունակվեց. ի վերջո նրանք որոշեցին միաժամանակ ոչ մի քայլ չանել։

Մի ժամ անց այդ որոշման հետ համաձայնեց և միստեր Մորդը, երբ կինը խոստովանվեց նրան, թե ի՛նչ անբսպասելի արդյունք տվեց իր խորամանկությունը։

— Այլ կերպ չէր էլ կարող լինել,—հայտարարեց միստեր Մորդը,—չէ՞ որ նա, բացի այդ կոպիտ նավաստուց, մոտիկ ծանոթ չի եղել ոչ մի տղամարդու հետ։ Վաղ թե ուշ նրա մեջ պետք է զարթներ կինը։ Նա զարթնեց և, աչքերդ լույս, նրա կողքին այդ բոպեին միակ մատչելի մարդն այդ տղան էր... Պարզ է, որ Ռութն իսկույն սիրահարվեց նրան, կամ կարծեց, որ սիրահարվեց, ինչ-որ վերջին հաշվով միևնույնն է։

Միսիս Մորդն ասաց, որ կփորձի ազդել Ռութի վրա կողմնակի կերպով՝ փոխանակ ուղղակի հակառակվելու նրա ցանկության։ Դրա համար բավական ժամանակ կա, որովհետև Մարտինն այս բոպեին չի կարող մինչև անգամ մտածել ամուսնության մասին։

— Թող նրա հետ տեսակցի, ինչքան ուզում է,—վճռեց միստեր Մորդը։—Ինչքան մոտիկ ծանոթանա նրա հետ, այնքան ստույգ կերպով կզգալի նրան սիրելուց։ Պետք է հնարավորություն տալ Ռութին՝ բաղդատելու նրան մի ուրիշի հետ։ Պետք է հրավիրել մեր տունը ավելի շատ երիտասարդների և աղջիկների մեր շրջանակից՝ կուլտուրական ու կրթված, իսկական ջենտլմեններ։ Նրանց կողքին Մարտինն այլ կերպ կերևա։ Ռութը կտեսնի նրան իսկական գույներով։ Հետո, վերջ ի վերջո, նա պարզապես տղա է։ Չէ՞ որ նա ընդամենը քսանմեկ տարեկան է։ Ռութը նույնպես

կատարյալ երևույթ է։ Դա պարզապես երևույթական սիրահարություն է, և ժամանակի ընթացքում դա կանհետանա։

Այդպես էլ վճռեցին։ Ընտանեկան շրջանակում ընդունեցին, որ Մարտինն ու Ռութը նշանվել են, բայց չեն հայտարարել այդ։ Ծնողները թաքուն կերպով հույս էին տածում, որ կարիք էլ չի լինի հայտարարելու։ Հասկանալի էր, որ նրանք շատ երկար նշանված կմնան։ Մարտինին ոչինչ չէին ասում, որ անհրաժեշտ է փոխել իր ապրելակերպը և ձեռնարկել լուրջ աշխատանքի. նրան ոչ ոք խորհուրդ չըտվեց, որ նա դադարի գրականությամբ զբաղվելուց։ Ընտանիքի պլանների մեջ չէր մտնում սատարել նրա կենցաղային հաջողություններին։ Իսկ ինքը՝ Մարտինը միայն իր անբարյացակամների ջրաղացին ջուր էր ածում, որովհետև ամեն բանից քիչ մտածում էր հաստատուն զբաղմունք որոնելու մասին։

— Չգիտեմ, թե դուք հավանություն կտա՞ք իմ ձեռնարկներին,— ասաց Մարտինը Ռութին մի քանի օր անց։— Ես վճռեցի, որ քրոջս մոտ ապրելը ձեռնտու չի իմ գրպանի համար, և ուզում եմ ինքնուրույն ապրել։ Ես արդեն սենյակ եմ վարձել Հյուսիսային Օկլենդում, շատ խաղաղ մի տան մեջ, և գնեցի կերոսինկա—ինքս կպատրաստեմ կերակուր։

Ռութը հիացավ։ Առանձնապես նրան դուր եկավ կերոսինկան։

— Միստեր Բեռլերն էլ դրանից է սկսել,— ասաց նա։

Մարտինը թեթևակի կիտեց հոնքերը, երբ աղջիկը հիշեց այդ պատվարժան ջենտլմենի անունը, և շարունակեց.

— Ես նամականիշեր կպցրի իմ բոլոր գրվածքների վրա և նորից ուղարկեցի դրանք խմբագրություններին։ Այսօր կտեղափոխվեմ նոր բնակարան, իսկ վաղվանից կըսկսեմ աշխատել։

— Դուք մտել եք ծառայությա՞ն,—բացագանչեց աղջիկը՝ իր ողջ էությամբ արձագանքելով այդ ուրախալի լուրին, ավելի մոտիկ դալով Մարտինին, ժպտալով, սեղմելով

նրա ձեռքը։—Ինչո՞ւ դուք ինձ ոչինչ չասացիք։ Այդ ի՞նչ ծառայություն է։

Բայց Մարտինը բացասաբար շարժեց գլուխը։

— Ուզում էի ասել, որ վաղվանից դարձյալ կսկսեմ գրել։— Աղջկա դեմքը ձգվեց, և Մարտինը շտապեց շարունակել։— Ճիշտ հասկացեք ինձ։ Այս անգամ ես անձնասուր չեմ լինելու լավատես երազների։ Ես զեկավարվում եմ սառը, պրոպայիկ, զուտ գործնական հաշիվներով։ Դա ավելի լավ է, քան նորից դնալ նավարկության, և վստահ եմ, որ ավելի կշահեմ, քան Օկլենդի շարքային ծառայողը։ Վերջին ամիսներում ես ժամանակ ունեցել եմ շատ բան կշռադատելու։ Ես չէի աշխատում դրաստի պես, համարյա ոչինչ չեմ գրել, և եթե գրել եմ, դա տպելու համար չի։ Իմ ամբողջ ժամանակը հատկացրել եմ ձեր նկատմամբ ունեցածս սիրո և զանազան բաների մասին խորհրդածության։ Ճիշտ է, մի քանի բան կարդացել եմ, բայց դա էլ առնչություն ունի իմ խորհրդածությունների հետ,—ես մեծ մասամբ ժուռնալներ եմ կարդացել։ Ես խորհել եմ իմ մասին, աշխարհի մասին, աշխարհում իմ տեղի մասին, ի՞նչ շանսեր ունեմ տեր դառնալու այնպիսի դիրքի, որը կարող էի առաջարկել ձեզ։ Բացի այդ, ընթերցեցի Սպենսերի «Ոճի փիլիսոփայությունը» և այնտեղ գտա անմիջականորեն ինձ վերաբերվող շատ հետաքրքրական բաներ,— ավելի ճիշտը՝ իմ գրվածքներին վերաբերյալ, նույնպես և այն գրականության, որը ամեն ամիս տպվում է ժուռնալներում։ Այդ բոլորի—խորհրդածությունների, ընթերցման և ձեր նկատմամբ տածած սիրո հիման վրա եկա հետևյալ եզրակացության. ես վճռեցի գրական արհեստավոր դառնալ։ Առայժմ կմոռանամ գլուխգործոցների մասին և կգրեմ ամեն տեսակ անմիտ բաներ՝ ֆելիետոններ, անեկդոտներ, առօրյա թեմաների շուրջը բանաստեղծություններ, զավեշտ,— առհասարակ ամեն բան, որի նկատմամբ պահանջ կա գրական շուկայում։ Չէ՞ որ գոյություն ունեն գրական գործակալություններ, որոնք նյութեր են հայթայթում թերթերի, զավեշտի էջերի,

կիրակնօրյա հավելվածների համար։ Ես կպատրաստեմ այն, ինչ պահանջում են, և հավատացնում եմ ձեզ, որ վատ չեմ շահի։ Կան անկախ ժուռնալիստներ, որոնք վաստակում են ամսական չորս հարյուր, երբեմն հինգ հարյուր գոլլար։ Ես չեմ պատրաստվում նմանվել նրանց. բայց, ամեն պարագայում, ես կվաստակեմ ապրուստ հայթայթելու չափ, և դեռ ժամանակ կունենամ իմ աշխատանքով ըզբաղվելու և սովորելու, իսկ ոչ մի ծառայություն այդ բանը չի տա։ Կամաց-կամաց կսկսեմ ուժերս փորձել լուրջ բաներ գրելու և կսովորեմ ու կպատրաստվեմ իսկական աշխատանքի։ Գիտե՞ք, ես ինքս եմ զարմանում, թե ինչքան առաջ եմ գնացել։ Երբ ես առաջին անգամ փորձեցի գրել, պարզապես նկարագրում էի զանազան պատահարներ, բայց ոչ մի զաղափար, ոչ մի միտք չկար իմ մեջ։ Մինչև անգամ չկային բառեր, որոնցով ես կարողանայի մտածել։ Իմ բոլոր ապրումները պատկերանում էին ինձ, որպես որևէ նշանակությունից զուրկ մի շարք նկարներ։ Բայց երբ ըսկըսեցի սովորել և շատացրի իմ բառապաշարը, բոլոր այդ նկարներում սկսեցի տեսնել շատ բան, որը նախապես չէի նկատում։ Ահա այն ժամանակ էլ սկսեցի գրել իսկական բաներ. գրեցի «Արկած», «Ուրախություն», «Կաթսա», «Կյանքի գինին»։ Այդպիսի բաներ ես դեռ շատ կգրեմ, մինչև իսկ ավելի լավ կգրեմ, բայց գրանով կզբաղվեմ միայն ազատ ժամանակ։ Հիմա ես արդեն չեմ ճախրում երկընքում։ Սկզբում՝ սև աշխատանք գրամ շահելու համար, իսկ գրանից հետո գլուխգործոցներ։ Որպեսզի ապացուցեմ, ձեզ, որ ես իրավացի եմ, երեկ երեկո հատկապես գրեցի վեց մանր բաներ գավեշատական շարաթաթերթերի համար, և երբ արդեն պատրաստվում էի անկոգին մտնել, մտքովս անցավ փորձել ուժերս ծիծաղաշարժ կուպլետների վրա, և ընդամենը մի ժամում լրիվ չորս հատ գրեցի։ Կարելի է ամեն մեկի համար ստանալ մի գոլլար։ Չորս գոլլար շահել հենց այնպես, քնելու պատրաստվելիս,—կարծում եմ, այնքան էլ վատ չի։ Իհարկե, այդ աշխատանքն բատին

քյան ոչ մի արժեք չունի։ Դա ձանձրալի ու միօրինակ է, բայց ոչ ավելի ձանձրալի, քան դրասենյակային հաշվեմատյանների հետ գործ ունենալը և անվերջ թվերի գումարումով զբաղվելը՝ ամսական վաթսուն դոլլար ստանալու համար։ Ընդամենը այդ աշխատանքն ամեն պարագայում առնչություն ունի գրականության հետ և ինձ հնարավորություն կտա գրելու արժեքավոր բաներ։

— Բայց ի՞նչ միտք կա գրելու այդ արժեքավոր բաները, այդ գլուխգործոցները,—հարցրեց Ռութը։— Չէ՞ որ դուք չեք կարող վաճառել նրանք։

— Մի՛ ասեք...—սկսեց Մարտինը։

Աղջիկն ընդհատեց նրան.

— Այն բոլորից, որոնք դուք թվարկեցիք և այնքան հավանում եք ինքներդ, մինչև այժմ չեք վաճառել ոչ մի տող։ Մենք չենք կարող ամուսնանալ՝ հույսներս դրած գլուխգործոցների վրա, որոնք ոչ ոք չի գնում։

— Լա՛վ, մենք կամուսնանանք՝ հույս դնելով կուպլետների վրա, որոնք կգնեն բոլորը,— համառորեն ասաց նա և գրկեց Ռութին։ Բայց Ռութն այս անգամ տրամադիր չէր փայփայանքի։

— Ահա՛, լսեցեք,— արհեստական ուրախ շեշտով ասաց Մարտինը,— սա գեղարվեստ չէ, բայց դոլլար է.

Ես տանը չէի,
Երբ իմ ծանոթը եկավ
Մի քիչ անագ փոխ ուզելու
Նա գնաց առանց անագի։
Հիմա ես տանն եմ,
Բայց ծանոթս արդեն գնացել է։

Այդ ուտանավորի ուրախ, կաքավուն ռիթմը չէր կապակցվում այն վհատ արտահայտության հետ, որը աստիճանաբար դրսևորվում էր Մարտինի դեմքին։ Ռութը չժպտաց, այլ մռայլ նայում էր նրան։

— Թերևս մի դոլլար կտան դրա համար,— ասաց աղջիկը,— բայց այդ դոլլարը կրկեսում ծաղրածուին տրվող

դոլլարն է. Ինչպե՞ս չեք հասկանում, Մարտին, որ դա ստորացուցիչ է ձեզ համար։ Ինձ ցանկալի է, որ իմ սիրած ու հարգած մարդը զբաղվի ավելի լուրջ և պատշաճ գործով և ոչ թե հանգավոր անիմաստ բաներ գրի։

— Դուք կուզենայիք, որ նա նմանվի միստեր Բեթլերի՞ն,— հարցրեց Մարտինը։

— Ես գիտեմ,—ասաց աղջիկը,—որ միստեր Բեթլերը ձեր սրտովը չէ...

— Միստեր Բեթլերը հրաշալի մարդ է,—ընդհատեց նրան Մարտինը,— նրանում ամեն ինչ լավ է, բացի ստամոքսի անմարսողությունից։ Բայց, ճիշտն ասած, ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ կուպլետներ գրելն ավելի վատ է, քան գրամեքենայի վրա թխթխկացնելը կամ գրասենյակի մատյանների վրա քրտնելը։ Եվ այս, և այն միայն միջոց են նպատակին հասնելու համար։ Դուք ուզում եք, որ ես ուկսեմ մատյանների վրա ճգնելուց և ի վերջո դառնամ ինչ-որ փաստաբան կամ վաճառական։ Իսկ ես ուզում եմ ազատվել լրագրական մանր աշխատանքից և վերջը դառնալ մեծ գրող։

— Այստեղ տարբերություն կա,—պնդեց Ռութը։

— Ինչո՞ւմ։

— Թեկուզ նրանում, որ դուք ոչ մի կերպ չեք կարողանում վաճառել ձեր այն գրվածքները, որոնք հաջող եր համարում։ Չէ՞ որ մի քանի անգամ փորձել եք, բայց խմբագիրները ձեղանից ոչինչ չեն գնում։

— Ժամանակ տվեք ինձ, սիրելիս,—ասաց Մարտինը պաղատագին։— Այս աշխատանքը միայն պալիատիվ է։ Ինձ մի երկու տարի ժամկետ տվեք։ Այդ երկու տարում ես հաջողություն ձեռք կբերեմ, և իմ բոլոր գրվածքները իրար ձեռքից կխլեն։ Ես գիտեմ, թե ի՞նչ եմ ասում։ Ես հավատում եմ ինձ և շատ լավ գիտեմ, թե ինչի՞ եմ ընդունակ։ Այժմ գիտեմ, թե ինչ է գրականությունը. գիտեմ նաև, թե աննշան գրչակներն ինչ անպետք բաներով ողողում են թերթերն ու ժուռնալները։ Ես վստահ եմ, որ երկու տարուց

գուրս կգամ հաջողության պողոտան։ Իսկ գործի ասպարեզում ես երբեք հաջողություն չեմ ունենա։ Դա իմ սրտով չի։ Դա ինձ թվում է ձանձրալի, անմիտ, չնչին, բութ գործ։ Ամեն պարագայում ես հարմար չեմ այդ գործին։ Ես երբեք հասարակ դրագրի աստիճանից ավելի չեմ բարձրանա, և մի՞թե դուք և ես կարող ենք երջանիկ լինել՝ ապրելով գրասենյակային չնչին առճիկով։ Ես ուզում եմ ձեզ համար ձեռք բերել աշխարհում լավագույն բաները և ձեռք կբերեմ, ինչ գնով էլ լինի, միշտ առավել լավը։ Ես ձեռք կբերեմ, կնվաճեմ այդ բոլորը։ Նշանավոր գրողն իր վաստակով միստեր բեսլերներին ջուրը կտանի, ծարավ ետ կբերի։ Դուք գիտե՞ք, որ «գնայուն» գիրքը հեղինակին կարող է եկամուտ բերել հիսուն հազար, մինչև անգամ հարյուր հազար դոլլար։ Երբեմն մի քիչ ավելի, երբեմն մի քիչ պակաս, բայց միջին հաշվով մոտավորապես այդքան։

Ռութը լռում էր։ Նա շատ էր դառնացած և չէր թաքցնում այդ։

— Վա՞տ է,—հարցրեց Մարտինը։

— Ես այլ հույսեր և պլաններ ունեի,—պատասխանեց աղջիկը։—Ես համարում էի և հիմա էլ համարում եմ, որ ձեզ համար լավագույնը կլիներ այն, որ դուք սղագրություն սովորեիք — մեքենայի վրա դրել դուք գիտեք—և ծառայության մտնեիք հայրիկիս գրասենյակը։ Դուք մեծ ընդունակություններ ունեք, և ես վստահ եմ, որ դուք կարող էիք լավ իրավաբան դառնալ։

ԳԼՈՒԽ XXIII

Որ Ռութը շատ հավատք չուներ Մարտինի գրական ընդունակությունների վրա, դա չփոխեց և չպակասեցրեց նրա սերն ու հարգանքը աղջկա նկատմամբ։ Իր «արձակուրդի» միջոցին Մարտինը խիստ շատ էր մտածել իր մասին և

վերլուծել էր իր զգացումները։ Նա վերջնականապես համոզվեց, որ իր աչքում գեղեցկությունը փառքից ավելի արժի, և որ ինքը ուզում է փառքի տիրանալ միայն Ռութի համար։ Նրա սիրուն Մարտինն այնքան համառորեն ձգտում էր փառքի։ Նա երազում էր վսեմանալ աշխարհի աչքում, որպեսզի իր սիրած կինը կարողանա իրենով հպարտանալ և արժանավոր համարել նրան։

Իսկ ինքը՝ Մարտինը այնքան էր սիրում գեղեցկությունը, որ նրան ծառայելու մեջ բավարար վարձատրություն էր գտնում իրեն համար։ Բայց Ռութին նա ավելի էր սիրում։ Սերը նրան թվում էր աշխարհում ամենագեղեցիկ բանը։ Մի՞թե Ռութը չէր, որը նրա հոգում առաջացրեց այդ մեծ հեղաշրջումը՝ անտաշ նավաստուց վերածելով նրան ուսանողի և արվեստագետի։ Էլ ինչո՞ւ զարմանալ, որ նրա աչքում սերն ավելի բարձր էր, քան գիտություններն ու արվեստները։ Մարտինն արդեն սկսել էր գիտակցել, որ մտքի մարզում նա ուժեղ է և՛ Ռութից, և՛ նրա եղբայրներից, և՛ նրա հորից։ Չնայած համալսարանական կրթության բոլոր առավելություններին, չնայած, գեղեցիկ արվեստների բակալավրի իր կոչմանը, Ռութը չէր էլ կարող երազել աշխարհի, գեղարվեստի, կյանքի այնպիսի հասկացողության մասին, որն ուներ Մարտինը մի տարվա ինքնուսման պարապմունքներից հետո։

Այդ բոլորը նա գիտեր, բայց դա ամենևին չէր ազդում նրա սիրո վրա դեպի Ռութը, ոչ էլ Ռութի սիրո վրա դեպի նա։ Սերը չափազանց գեղեցիկ, չափազանց ազնիվ մի զգացում է, և Մարտինը, որպես իսկական սիրահար, անհնար էր համարում վիրավորել այդ զգացումը քննադատությամբ։ Ի՞նչ առնչություն ունի սերը՝ գեղարվեստի, ֆրանսիական հեղափոխության կամ ընդհանուր քվեարկության մասին Ռութի հայացքների հետ։ Այդ բոլորը բանականության հետ է կապված, իսկ սերը բանականությունից բարձր է։ Մարտինը չէր կարող ստորացնել սերը, որովհետև պաշտում էր այն։ Նա պատկերացնում էր, որ սերը բնակ-

վում է լեռնային անհասանելի բարձունքներում, բանականության դաշտավայրերից շատ վերև։ Սերը գոյության գերագույն պայմանն է, կյանքի բարձրագույն գագաթը, և ամենն մարդու չի վիճակվում։ Շնորհիվ իր սիրած փիլիսոփաների ուսումնասիրության՝ Մարտինը գիտեր սիրո կենսաբանական նշանակությունը. սակայն, շարունակելով զարգացնել իրեն համար այդ փիլիսոփաների հիմնական դրույթը, նա եկավ այն եզրակացության, որ հենց սիրո մեջ էլ մարդկային օրգանիզմը կատարում է իր բարձրագույն նպատակը, այդ պատճառով էլ սերը պիտի ընդունել առանց հարցաքննության, որպես կյանքի ամենամեծ վարձատրությունը։ Մարտինը սիրահարվածին պատկերացնում էր իրեն իբր բարձրագույն շնորհքով օժտված մի արարածի, և նրան հաճելի էր այն «սիրատոչոր պատանու» կերպարը, որի համար արդեն անարժեք են երկրային բոլոր բարիքները— հարստություն, գիտելիքներ, հաջողություն,—արժեք չունի և կյանքը, քանի որ նա «պատրաստ է համբուրելիս մեռնել»։

Այսպիսի խոհեր Մարտինի մտքովն անցնում էին նաև առաջներում, բայց շատ բաներ նա ըմբռնեց միայն հիմա։ Սակայն այդ ամբողջ ժամանակում նա չէր դադարում աշխատելուց վարելով սպարտական կյանք և իրեն թույլատրելով աշխատանքից կտրվել միայն Ռութի հետ տեսակցելու համար։ Պորտուգալացի Մարիա Սիլվա անունով մի կնոջ մոտ իր վարձած սենյակի համար Մարտինը վճարում էր ամսական երկուսուկես դոլլար։ Բավական կովասեր բնավորության տեր այդ այրի պորտուգալուհին անխոնջ աշխատում էր՝ իր բազմաթիվ երեխաներին կերակրելու համար, երբեմն իր վիշտը «թրջելով» մի շիշ թթված գինով, որը գընում էր հարևան գինեվաճառանոցում տասնհինգ ցենտով։ Սկզբում Մարտինը ատեց նրան, առանձնապես զայրացնում էր նրա լեզուն, բայց հետո նա սկսեց հիանալ այն համառությամբ, որով նա դժնդակ պայքար էր մղում գոյության համար։ Այդ տնակում միայն չորս փոքր սենյակ

ներ կային, որոնցից մեկը գրավեց Մարտինը։ Մյուսը հյուրասենյակի տեղ էր ծառայում. նրան զվարթ տեսք էր տալիս հատակը ծածկող գույնզգույն դորգը, բայց վախճանված երեխաներից մեկի զագաղում նկարված պատկերը տխուր մի շեշտ էր մտցնում։ Այդ սենյակը միայն հյուրերի համար էր, նրա փեղկերը միշտ փակ էին և ոտաբոբիկ երեխաների զորախմբին թույլ էր տրվում մտնել այնտեղ միայն առանձնապես հանդիսավոր դեպքերում։ Պորտուգալուհին կերակուր էր եփում խոհանոցում. այնտեղ էլ ամբողջ ընտանիքն ուտում էր, այնտեղ էլ տանտիրուհին լվացք էր անում, արդուկում, առանց ձեռքերը ծալելու աշխատում էր օրից օր՝ բացի կիրակիից։ Նա լվացք էր անում հարևանների համար, և դա նրա եկամտի գլխավոր աղբյուրն էր։ Ննջասենյակը նույնքան փոքր էր, ինչքան Մարտինի գրաված սենյակը, և այնտեղ պատսպարվել էր այդ կինը յոթ երեխաների հետ միատեղ։ Մարտինին անբացատրելի էր թվում, թե նրանք բոլորն ինչպես են տեղավորվում այնտեղ. երեկոները Մարտինը լսում էր բարակ միջնորմի ետևից նրանց աղմուկը, ճչոցն ու ճվճվոցը, որը հիշեցնում էր թռչունների ծլվլոցը։ Մարիայի եկամտի մի այլ աղբյուրն էին կաղմում երկու կովեր, որոնց նա կթում էր առավոտ և երեկո, և որոնք արածում էին ամայի վայրում և կամ, մաքսանենդորեն, ճամփի փոսերում աճող խոտն էին ճարակում։ Ցնցոտիներ հագած երկու տղա, տանտիկնոջ երեխաները, արածացնում էին կովերին,— այսինքն ուշադիր նայում էին, որ նրանք ոստիկանների աչքովը չընկնեն։

Իր նեղլիկ սենյակում Մարտինը քնում էր, սովորում, գրում, մտածում, տնտեսությամբ զբաղվում։ Սանդուղքներին նայող միակ պատուհանի առաջ դրած էր մի խոհանոցային սեղան, որը ծառայում էր միաժամանակ և իբր դրասեղան, և գրադարան, և գրամեքենայի սեղանիկ։ Ետևի պատին կպած մահճակալը գրավում էր սենյակի երկու երրորդը։ Սեղանի կողքին դրած էր զգեստարանը, որը,

ինչպես երևում է, պատրաստել էին՝ ավելի շուտ եկա-մրտի սիրուն, քան գործածողի հարմարության համար-նրա վրայի բարակ գրվագաթերթը բոլորովին կորացած էր։ Այդ պահարանը գրած էր մի անկյունում, իսկ մյուս անկյունում խոհանոցն էր — օճասի մի արկղ, որի վրա կար մի կերոսինկա, իսկ մեջը պահվում էին ամանեղեն և խոհանոցային առարկաներ. պատի վրա—դարակ կենսա-մթերքի համար, դրա կողքին ջրի մի դույլ. սենյակում ջրմուղի ծորակ չկար, և Մարտինը ստիպված էր խոհանոց գնալ ջրի համար։ Մարտինը մահճակալից վերև կախել էր հեծանիվը։ Սկզբում նա փորձեց պահել այն ներքևում, բայց երեխաները անմիջապես փչացրին կաուչուկե ան-վապատը, և կարիք եղավ, հեծանվի անվտանգության հա-մար, այն բերել սենյակ և առաստաղից կախել։

Պատի փոքր պահարանում կախած էր զգեստը և դարս-ված էին այն գրքերը, որոնք արդեն չէին տեղավորվում ոչ սեղանի վրա, ոչ էլ սեղանի տակ։ Մարտինը սովորություն ուներ անել նոթագրություններ, որոնք այնքան շատ էին դիզվել, որ կարիք եղավ ամբողջ սենյակի երկայնքով թոկեր անցկացնել և նրանց վրա կախել տետրակները՝ չորացող սպիտակեղենի նման։ Այդ պատճառով սենյակում շարժվելը բավական դժվարացավ։ Նա չէր կարող դուռը բանալ, մինչև որ նախօրոք պահարանի դուռը չփակեր, և ընդհակառակը։ Սենյակում ուղիղ գծով անցնելու ճամփա չկար։ Դռնից մինչև մահճակալը հասնելու համար կարիք էր լինում բարդ. զիգզագ ճամփա կարել, մթության մեջ Մարտինը շարու-նակ կպչում էր ինչ-որ բանի։ Բարեհաջող անցնելով մուտքի դռնով և պահարանի դռնակի առաջով՝ կարիք էր լինում միանգամից ծռվել դեպի աջ, որպեսզի խոհանոցին չկպչի. հետո դառնալ դեպի ձախ՝ շրջանցելով մահճակալը, ընդ-սմին ուղղությունից ամենափոքր թեքումի հետևանքով կարող էր ընդհարվել սեղանի հետ։ Այդ մանևրը վերջաց-նելուց հետո կարելի էր մտնել մի ջրանցք, որի մի ափն էր սեղանը, իսկ մյուսը՝ մահճակալը։ Բայց երբ միակ աթոռը

գրած էր լինում իր տեղում, սեղանի առաջ, ջրանցքը գառնում էր անանցանելի։ Երբ սթոորը գործածության մեջ չէր, դրված էր լինում մահճակալին. բայց Մարտինը հաճախ կերակուր էր եփում նստած, որովհետև մինչև ջրի եփ գալը կամ մսի տապակվելը՝ նրան հաջողվում էր կարդալ երկուերեք էջ։ Խոհանոցին հատկացված անկյունն այնքան փոքր էր, որ Մարտինը կարող էր, տուանց աթոռից վեր կենալու, ձեռքով վերցնել ամեն անհրաժեշտ բան։ Կերակուր եփել նստած՝ մինչև անգամ ավելի հարմար էր, իսկ երբ Մարտինը կանգնում էր, շարունակ խափանում էր լույսը։

Մարտինը գիտեր շատ կերակուրներ, որոնք միաժամանակ և՛ սննդարար էին, և՛ էժան, իսկ նրա հզոր ստամոքսը մարսում էր ամեն բան։ Նրա հիմնական սնունդը բաղկացած էր սիսեռի ապուրից, կարտոֆիլից և դարչնագույն բակլայից՝ մեքսիկական եղանակով պատրաստված։ Օրական առնվազն մի անգամ նրա սեղանին լինում էր խաշած բրինձ — այնպես, ինչպես չէր կարող պատրաստել ոչ մի ամերիկացի տանտիկին։ Կարագի փոխարեն Մարտինն ուտում էր հաց և չորացած մրգեր, որոնք թարմ մրգերից ավելի էժան էին։ Երբեմն նա այլազանություն էր մուծում իր ճաշի մեջ մի կտոր մսով կամ ոսկորներից պատրաստած ապուրով։ Օրական երկու անգամ նա սուրճ էր խմում առանց սերի կամ կաթի, իսկ երեկոյան թեյ էր խմում. բայց այդ երկու ըմպելիքներն էլ նա պատրաստում էր հիանալի։

Մարտինը ստիպված էր ակամա խնայասեր լինել։ Նրա արձակուրդը համարյա կլանեց այն ամենը, ինչ նա վաստակել էր լվացքատանը, իսկ իր «շահարեր» գրվածքները նա ուղարկեց այնքան հեռու, որ միայն մի քանի շաբաթ անց կարող էր պատասխան ստացվել։ Նա ճղնավորի կյանք էր վարում և իր միայնակությունը խախտում էր միայն Ռութի հետ տեսակցելու և իր քրոջ Գերտրուդին այցելելու համար։ Մի օրում կատարում էր ամենադժվար երեք մարդու գործ։ Առաջվա նման ընում էր միայն հինգ ժամ, և միայն նրա երկաթյա առողջությունը հնարավորություն էր տալիս նրան

տանել օրական տասնիննժամյա լարված աշխատանք։ Մարտինը ոչ մի բոպե չէր կորցնում։ Նա հայելու վրա կախեց թերթիկներ մի շարք բառերի բացատրություններով և նշելով նրանց արտասանությունը. ածվելու կամ սանրվելու ժամանակ նա կրկնում էր այդ բառերը։ Այդպիսի թերթիկներ կախված էին և կերոսինկայի վերև, և նա բերանացի սովորում էր դրանք, երբ մի բան էր եփում կամ ման էր լվանում։ Այդ թերթիկները միշտ փոխվում էին։ Երբ ընթերցման ժամանակ մի անծանոթ բառ էր պատահում, նա անմիջապես նայում էր բառարանը և այդ բառը գրում թերթիկում, որը կախում էր պատից կամ հայելու առաջ։ Անծանոթ բառերի թերթիկները Մարտինը կրում էր գրպանում և նրանք աչքի էր անցկացնում փողոցում և կամ խանութում հերթի կանգնելիս։

Այդ աշխատանքում Մարտինը կանգ չառավ կես ճամփին։ Ընթերցելով հաջողություն ձեռք բերած հեղինակների գործերը՝ նա նշում էր նրանց ոճի բոլոր առանձնահատկությունները, արտահայտությունները, համեմատությունները. էպիգրամները—մի խոսքով այն ամենը, ինչ կարող էր նպաստել նրանց հաջողության։ Այդ բոլորը նա ընդօրինակում և ուսումնասիրում էր։ Նա չէր ձգտում մեքենայական նմանողության, այլ փնտրում էր ինչ-որ ընդհանուր սկզբունքներ։ Նա կազմում էր գրականության մեջ արվեստական ձևերի զանազան գրողներից վերցրած օրինակների երկար ցուցակներ, որոնք նրան հնարավորություն էին տալիս ընդհանուր եզրակացություններ հանել և, հենվելով նրանց վրա, մշակում էր իր սեփական, նոր և ինքնատիպ ձևերը և սովորեց կիրառել դրանք տակտով և չափավոր։ Նա նույնպես հավաքում և նշանակում էր առօրյա խոսակցության հաջող և պատկերավոր արտահայտություններ, որոնք կրակի պես վառում էին, և կամ, ընդհակառակը, շոյում էին լսելիքը՝ վառ բծերի նման ջոկվելով քաղաքների շաղակրատության տխուր անապատից։ Մարտինը միշտ և ամենուր որոնում էր տվյալ երևույթի հիմքը կազմող սկզբունք-

ները։ Նա աշխատում էր հասկանալ, թե ինչպե՞ս է գոյանում երևույթը, որպեսզի հնարավորություն ունենա ինքը երևույթ ստեղծել։ Նա չէր բավականանում գեղեցկության հրաշալի տեսքը դիտելով. խոհանոցի մխով և տանտիկնոջ երեխաների աղաղակներով լցված իր նեղ խցիկում նա, որպես քիմիկոսը լաբորատորիայում, աշխատում էր վերլուծել գեղեցկության բաղկացուցիչ մասերը, հասկանալ նրա կառուցվածքը։ Դա պետք է օգներ նրան գեղեցկություն ստեղծելու գործում։

Մարտինն իր բնությամբ կարող էր աշխատել միայն գիտակցաբար։ Նա չէր կարող աշխատել, ինչպես կույրը՝ սթության մեջ, առանց իմանալու, թե ի՞նչ է արտադրում, հույսը դնելով միայն պատահականության և տաղանդի փայլի վրա։ Պատահական հաջողությունները չէին բավարարում նրան։ Նա ուզում էր իմանալ «ինչպե՞ս» և «ինչո՞ւ»։ Նրա հանճարը լրջմիտ էր և, ձեռնարկելով պատմվածքի կամ բանաստեղծության, Մարտինն արդեն պարզ պատկերացնում էր նրա վերջավորությունը և միտն էր պահում ամբողջ գրվածքի պլանը։ Առանց դրան՝ նրա փորձերը դատապարտված էին անհաջողության։ Մյուս կողմից՝ նա անուշադիր չէր թողնում և այն պատահական բառերն ու նախադասությունները, որոնք հանկարծ վառ բռնկվում էին նրա ուղեղում և հետագայում պատվով էին դուրս գալիս քննությունից՝ ոչ միայն չխանգարելով, այլ մինչև անգամ նպաստելով գրվածքի գեղեցկությանը և ամբողջականությանը։ Այդպիսի դյուտերի առաջ Մարտինը, հիացած, խոնարհվում էր՝ կռահելով, որ դրանք ստեղծված են մարդկային հասկացողության սահմաններից դուրս գտնվող ինչ-որ բարձրագույն ստեղծագործ ուժով։ Եվ, հետազննելով գեղեցկությունը և ջանալով հասնել մինչև նրա կազմող հիմքերը, Մարտինը հասկանում էր, որ գեղեցկության մեջ կա ինչ-որ խորհրդավոր բան, որի մեջ մինչև այժմ չի թափանցել ոչ մի մարդ, ինչքան էլ որ մեծ լինի։ Թեկուզ Սպենսերից նա դիտեր, որ մարդ արարածը չի կարող սպա-

ռիչ կերպով ըմբռնել իրերի էությունը, և գեղեցկության գաղտնիքը նույնքան անիմանալի է, որքան կյանքի գաղտնիքը,— թերևս ավելի անիմանալի, որ գեղեցկությունն ու կյանքը զարմանալիորեն միախառնվում են, իսկ մարդն ինքը արևի ճառագայթների, աստղերի փոշու և էլի ինչ-որ անհայտ բանի այդ հրաշալի միախառնումի մի մասնիկն է։

Այդ մտքերի ազդեցության տակ Մարտինը մի անգամ գրեց «Աստղերի փոշին» վերնագրով մի հոդված, որի մեջ նա հարձակվում էր ոչ թե ընդհանրապես քննադատության սկզբունքների, այլ զանազան քննադատների կիրառած ձևերի վրա։ Դա փայլուն, խորիմաստ, նրբությամբ և զավեշտով համեմված մի գրվածք էր։ Այնուամենայնիվ դա էլ մերժվեց ժուռնալների կողմից նույնքան արագ, ինչքան արագ գրել էր ինքը։ Բայց Մարտինը, ազատվելով իրեն անհանգստացնող մտքերից, շարունակում էր ընթանալ իր ճամփով։ Նա արդեն վաղուց ընտելացել էր՝ ամեն բանից առաջ բազմակողմանի և հիմնական կերպով կշռադատել գրվածքի գաղափարը և միայն դրանից հետո նստել գրամեքենայի առաջ։ Նա առանձնապես չէր վշտանում, որ մինչև այժմ իր գրվածքներից ոչ մի տող չի տպված։ Գրելը նրա համար մտավոր բարդ պրոցեսի եզրափակիչ օղակն էր, վերջին հանդույցը, որով կապակցվում էին առանձին ցիրուցան մտքեր, կուտակված փաստերի և դրույթների հանրագումարը։ Գրելով հոդված՝ նա իր ուղեղում տեղ էր ազատում նոր գաղափարների և առեղծվածների համար։ Վերջին հաշվով դա շատ մարդկանց հատուկ մի տեսակ սովորույթ էր՝ պարբերարար «թեթևացնել իր հոգին խոսքերով»— սովորույթ, որը երբեմն օգնում է մարդկանց ազատել և մոռանալ իսկական կամ մտացածին տառապանքներ։

ԳԼՈՒԽ XXIV

Շաբաթներ անցան։ Մարտինի վերջին գրամները հատնում էին, իսկ հրատարակչություններից դեռևս չեկեր չէին ստացվում։ Մեծ պատմվածքները վերադարձվում էին. նույնպիսի բախտ էր վիճակվում և «եկամտաբեր» գրվածքներին։ Փոքրիկ խոհանոցում արդեն չէին պատրաստվում այլևայլ կերակուրներ, որովհետև Մարտինի մոտ մնացել էր միայն կես պարկ բրինձ և չոր ծիրան, որոնցով և սնվում էր նա վերջին հինգ օրվա ընթացքում։ Հետո նա վճռեց ապառիկ գնումներ անել։ Սակայն պորտուգալացի խանութպանը զագարեց մթերքներ բաց թողնել նրան, երբ Մարտինի պարտքը հասավ երեք գոլլար ութսունհինգ ցենտի պես մի պատկառելի գումարի։

— Որովհետև,— առաց խանութպանը,— դուք աշխատանք չկա։ Դուք ինչպե՞ս վճարել ինձ։

Մարտինը չէր կարող ոչինչ առարկել դրան։ Խանութպանը միանգամայն տրամաբանորեն էր մտածում։ Մի՞թե կարելի էր վարկ բանալ առողջ և երիտասարդ մի բանվորի, որը ծուլության պատճառով աշխատանք չէր փնտրում։

— Աշխատանք ճարի, ուտելիք կտամ քեզ,— ասում էր խանութպանը,—չկա դրամ, չկա կերակուր։ Բանը դրանումն է։

Եվ որպեսզի Մարտինին ապացուցի, որ հարցն անձնական նախապաշարմունքը չի, պորտուգալացին ավելացրեց.

— Խմիր։ Մի բաժակ։ Ես հյուրասիրեմ։ Ես ու դու լավ բարեկամներ։

Եվ Մարտինը, բարեկամությունը հաստատելու համար, խմեց մի բաժակ և առանց ընթրելու պառկեց քնելու։

Մարտինը բանջարեղեն գնում էր մի այլ խանութում, որի տերը, ամերիկացին, նվազ հաստատամիտ լինելով իր առևտրական սկզբունքներում, Մարտինին բացած վարկը հասցրեց մինչև հինգ գոլլարի, որից հետո նույնպես դադա-

բեցրեց ապառիկ ապրանք բաց թողնելը։ Հացավաճառը կանգ առավ երկու դոլլարի վրա, իսկ մսավաճառը՝ չորս դոլլարի վրա։ Գումարելով բոլոր իր պարտքերը՝ Մարտինը գտավ, որ պարտական է մնում տասնչորս դոլլար և ութսունհինգ ցենտ։ Հասավ և դրամեքենայի համար վճարելու ժամկետը, բայց Մարտինը վճռեց, որ միանգամայն կարող է երկու ամիս օգտագործել այն առանց վճարի, այսինքն ևս ութ դոլլար ստանալու։ Երբ այդ ժամկետն էլ անցնի, այլևս վարկի ոչ մի հնարավորություն չի մնա։

Բանջարեղենի խանութից Մարտինը վերջին անգամ վերցրեց մի սարկ կարտոֆիլ, և ամբողջ մի շաբաթ միայն կարտոֆիլ էր ուտում օրական երեք անգամ։ Ժամանակ առ ժամանակ նա ճաշում էր Մորզերի տանը և դրանով որոշ չափով պահպանում էր իր ուժերը, թեև նայելով սեղանի վրա դրված բազմաթիվ համեղ ուտելիքներին և քաղաքավարության համար հրաժարվելով ուտել այնքան, ինչքան տանում էր ախորժակը, նա տանտալոսյան տանջանք էր զգում։ Երբեմն, հաղթահարելով ամոթի զգացումը, Մարտինը ճաշի ժամանակ գնում էր իր քրոջ մոտ և այնտեղ ուտում էր այնքան, ինչքան համարձակվում էր,— այնուամենայնիվ ավելի շատ, քան Մորզերի տանը։

Օրեցօր նա նույնպիսի համառությամբ շարունակում էր աշխատել և ամեն օր ցրիչը ետ էր բերում նրա մերժված գրվածքները։ Նա սրդեն դրամ չուներ փոստանիշներ գնելու համար, և վերադարձված գրվածքները մնում էին սեղանի տակ թափված։ Հասավ այն օրը, երբ նա սրդեն քառասուն ժամ ոչինչ չէր դրել բերանը։ Նա չէր կարող հույս ունենալ Մորզերի տանը ճաշելու վրա, որովհետև Ռութը երկու շաբաթով հյուր էր գնացել Սան-Ռաֆայել, իսկ քրոջ մոտ գնալու ամաչում էր։ Ի լրումն դժբախտության, այդ օրը ցրիչը միանգամից հինգ ծրար վերադարձրեց նրան։ Այն ժամանակ Մարտինը վերցրեց իր վերարկուն, գնաց Օկլենդ և վերադարձավ առանց նրան, բայց դրպանում ունենալով հինգ դոլլար։ Խանութպաններից յուրաքանչյուրին նա տվեց

մի-մի դոլլար, և նրա խոհանոցում նորից սկսեց թշշալ սոխով տապակած միսը, եռաց սուրճը, և երևաց մի մեծ պուտուկ շոր սալոր։ Ճաշելուց հետո Մարտինը նստեց սեղանի առաջ, և կես-գիշերին արդեն պատրաստ էր մի նոր հոդված՝ «Վաշխառուության ուժը» խորագրով։ Վերջացնելով գրելը՝ նա հոդվածը շպրտեց սեղանի տակ, որովհետև հինգ դոլլարից ոչինչ չէր մնացել. դրամ չկար նամականիշ գնելու համար։

Մարտինը դրավ դրեց ժամացույցը, մի քանի օր հետո նաև հեծանիվը. խնայելով մթերքից՝ նա նամականիշեր գնեց և ուղարկեց իր բոլոր գրվածքները։ «Եկամտավոր» գրվածքները չարդարացրին Մարտինի ակնկալությունները։ Ոչ ոք չէր գնում նրանք։ Բաղդատելով դրանք թերթերում և շաբաթաթերթերում տպվածների հետ՝ նա առաջվա պես գտնում էր, որ ինքն ավելի լավ է գրում։ Բայց և այնպես նա չէր կարողանում վաճառել ոչ մի տող։ Վճռելով զբաղվել այսպես կոչված «խրոնիկայով»՝ նա մի քանի գրվածք ուղարկեց մի ընկերության, որը այդպիսի նյութեր էր հայթայթում թերթերին, բայց ետ ստացավ նրանք մի տպագիր բլանկի հետ, որի մեջ ասված էր, որ ընկերությունը կազմում է իր նյութերը հաստիքային աշխատակիցների ուժերով։

Պատանեկական մի ժուռնալում նա տեսավ ամբողջ սյունակներ լցրած անեկդոտներ ու փոքրիկ պատմվածքներ։ Ահա դրամ շահելու մի միջոց ևս։ Բայց այս բանում ևս նա լիակատար անհաջողության հանդիպեց, սովորականի պես այդ ամենը վերադարձվեց իրեն։ Հետագայում, երբ Մարտինն արդեն կարիք չէր զգում դրան, նա իմացավ, որ սովորաբար խմբագրատան աշխատակիցներն իրենք են մատակարարում այդպիսի նյութեր՝ իրենց շահույթն ավելացնելու համար։ Զավեշտաթերթերը վերադարձնում էին նրա բոլոր կվարճալիքներն ու ուռանավորները. չէին վաճառվում և նրա շափածո ֆելիետոնները, որոնք Մարտինը ուղարկում էր խոշոր ժուռնալներին։ Մնում էր դեռ թերթի ֆելիետոնը։ Մարտինը շատ լավ գիտեր, որ կարող է ավելի լավ գրել,

քան այն, ինչ տալվում է, և իմանալով երկու գրական գործակալների հասցեները՝ հեղեղեց նրանց իր փոքրիկ պատմվածքներով։ Բայց, գրելով քսան պատմվածք, որոնցից ոչ մեկը չտպվեց, Մարտինը դադարեց գրելուց։ Բայց և այնպես նա օրական կարդում էր տասնյակ պատմվածքներ ու ֆելիետոններ, որոնք չէին կարող մրցել այս ժանրում նրա փորձերի հետ։ Հասնելով հուսահատության՝ վերջապես նա վճռեց, որ, իր գրվածքներից հիպնոսացած, կորցրել է քննադատական ամեն զգացում և իր ստեղծագործությունն ստողջ դատելու ունակությունը։

Անգութ «հրատարակչական մեքենան» շարունակում էր իր աշխատանքը։ Մարտինը փոստանիշեր էր փակցնում իր գրվածքները պարունակող ծրարների վրա, գցում էր նրանք փոստարկղը, իսկ երեք-չորս շաբաթ հետո ցրիչը կանգահարում էր նրա դռանը և վերադարձնում այդ գրվածքները։ Ակներև էր, որ իրականում այդ հասցեներով ոչ մի կենդանի մարդ չկար, այլ կային միայն լավ սարքված, յուղած ավտոմատներ։ Բոլորովին հուսահատված՝ Մարտինը սկսեց ընդհանրապես կասկածել խմբագիրների գոյության մասին։ Նրանցից ոչ մեկը մինչև այժմ կյանքի նշան ցույց չի տվել, իսկ այն հանգամանքը, որ նրա ամեն գրվածքը անպայման մերժվում է՝ առանց բացատրությունների, կարծես հաստատում էր այն միտքը, թե խմբագիրը մի տասպել է, որը ստեղծվել ու պաշտպանվում է գրաշարների, մետրանպաժների և թերթավաճառների ճիգերով։

Մարտինի կյանքում միակ երջանիկ ժամանակն էին այն ժամերը, որոնք նա անց էր կացնում Ռութի մոտ, այն էլ ոչ միշտ։ Նրա վրա մշտապես իշխող խորվքը ավելի տանջալից դարձավ այն բանից հետո, երբ Ռութը նրա առաջ բացեց իր սերը, որովհետև ինքը՝ Ռութը առաջվա պես մնում էր անհասանելի։ Մարտինը խնդրեց նրան սպասել երկու տարի, սակայն ժամանակն անցնում էր, և նա դեռ ոչինչ ձեռք չէր բերել, և, բացի այդ, Ռութը, ինչպես երևում է, չէր հավանում նրա պարապմունքները։ Ճիշտ է, որ Ռութը

ուղղակի չէր ասում այդ, բայց կողմնակի կերպով բավական որոշակի աշխատում էր զգացնել այդ։ Աղջիկը չէր վրդովվում. նա հենց հավանություն չէր տալիս, թեև նվազ երկչոտ մի կին անկասկած կվրդովվեր այն բանով, որը միայն դառնացնում էր նրան։ Նրան դառնություն էր պատճառում, որ այն մարդը, որին նա վճռել է վերադաստիարակել, չի ենթարկվում դրան։ Սկզբում Ռութին թվաց, թե նա բավական ճկուն մատերիալ էր, բայց հետո միանգամից համառեց և չցանկացավ նմանվել ոչ միստեր Մորդին, ոչ միստեր Բեսլերին։

Մարտինի մեջ ամենամեծ արժանիքն ու նշանակելի բանը Ռութը չէր նկատում, կամ — և դա ավելի վատ էր — չէր հասկանում։ Այդ մարդուն,— այնքան ճկուն, որ կարող էր հարմարվել մարդկային գոյության բոլոր ձևերին,— Ռութը համարում էր պարզապես պնդագլուխ և կամակոր, որովհետև չկարողացավ վերաձևել նրան իր չափոցով՝ միակ չափոցը, որը գիտեր նա։ Ռութը չէր կարողանում հետևել նրա մտքի թռիչքին, և երբ Մարտինը հասնում էր նրա համար անմատչելի բարձունքների, նա պարզապես համարում էր, որ Մարտինը մոլորվում է։ Նրա հոր, մոր, եղբայրների, մինչև անդամ Օլենեյի մտքերը միշտ էլ հասկանալի էին նրան. դրա համար էլ Ռութը, չհասկանալով Մարտինին, կարծում էր, որ նա է մեղավոր այդ բանում։ Կրկնվում էր աշխարհին ճշմարտություն ներշնչել փորձող միայնակ մարդու վաղեմի տրագեդիան։

— Դուք սովոր եք երկրպագել ամեն բանի, որ ճանաչված է պաշտամունքի արժանի,— ասաց մի անդամ Մարտինը՝ Ռութի հետ վիճելով Պրատսի և Վանդերուոտերի մասին։— Ես համաձայն եմ, որ նրանք վստահելի և կայուն հեղինակություններ են. նրանց համարում են Միացյալ Նահանգների լավագույն գրական քննադատները։ Ամեն մի դպրոցական ուսուցիչ նայում է Վանդերուոտերի վրա, որպես ամերիկյան քննադատության առաջնորդի վրա։ Բայց ես նրան կարդացել եմ, և նա ինձ երևաց փայլուն դա-

տարկաբանության մի դեղեցիկ նմուշ։ Պրապսն էլ ավելի լավը չէ։ Իհարկե «Հեմլոկ Մոսեսը» գերազանց է գրված։ Ոչ մի ստորակետ չի կարելի դեն գցել, իսկ ընդհանուր տոնը—ա՜հ, ի՜նչ հանդիսավոր տոն։ Դրա համար էլ նրան վճարում են բոլորից լավ։ Բայց,— թող տեր աստվածը ների ինձ այս հանդգնությունը,— նա, ըստ էության, առհասարակ քննադատ չի։ Անգլիայում գիտեն ավելի լավ քննադատել։ Ամբողջ բանը նրանումն է, որ մեր քննադատները շարունակ ժողովրդական ճաշակին են հարմարվում, և դա նրանց մոտ ստացվում է և՛ ազնիվ, և՛ բարոյական, և՛ վեհ։ Նրանց քննադատական հոդվածները հիշեցնում են ինձ կիրակնօրյա քարոզները։ Նրանք ամեն կերպ պաշտպանում են անգլիական բանասիրության մեր պրոֆեսորներին, իսկ սրբանք էլ դրա համար պաշտպանում են նրանց։ Եվ նրանց գանգում ոչ մի ինքնատիպ միտք բույն չի դրել։ Նրանք գիտեն միայն այն, ինչ ճանաչված է հանրության կողմից. դրա վրա ավելացրեք և այն, որ իրենք էլ են ճանաչված հանրության կողմից։ Բոլոր արմատացած դաղափարները կպչում են նրանց նույնքան հեշտ, ինչքան պիտակները դարեջրի շշերին։ Եվ նրանց գլխավոր պարտականությունը կայանում և նրանում, որ համալսարանական երիտասարդության գլխից դուրս պոկեն խորհելակերպի ամեն ինքնատիպություն և ստիպեն մտածել որոշ արաֆարետով։

— Ինձ թվում է,— առարկեց Ռութը,— որ ես ավելի մոտ եմ ճշմարտության՝ հետևելով հանրության կողմից ընդունվածին, քան թե դուք՝ հարձակվելով հեղինակությունների վրա, ինչպես վայրենին նվիրական պատկերների վրա։

— Իրենք՝ միսիոներները տապալեցին վայրենիների նվիրական պատկերները,— ծիծաղեց Մարտինը,— բայց, դժբախտաբար, բոլոր միսիոներները ցրվեցին, գնացին հեթանոսական երկրներ և մեզ մոտ չմնաց ոչ մեկը, որը օգներ տապալել միստեր Վանդերուստերին և միստեր Պրապսին։

— Միաժամանակ և համալսարանների բոլոր պրոֆեսորներին,— ավելացրեց Ռութը։

Մարտինը բացասական շարժում արեց։

— Ո՛չ։ Գիտնականները պետք է մնան։ Նրանք իրոք գործ են անում։ Բայց վնասակար չէր լինի վանդել անդլիական բանասիրության պրոֆեսորներից — մանրադիտական ուղեղ ունեցող այդ թութակներից — ինը տասներորդը։

Պրոֆեսորների նկատմամբ այդքան խիստ վերաբերմունքը Ռութին թվում էր պարզապես սրբապղծություն։ Նա ակամա բաղդատում էր՝ հարգարժան, շքեղ հագած, չափված ձայնով խոսող, նուրբ կուլտուրայով համակված պրոֆեսորներին այս անտանելի մարդու հետ, որին, չգիտես ինչո՛ւ, սիրում է, անշնորհք նստող կոստյում հագին, ֆիզիկական կոպիտ աշխատանքը հիշեցնող պողպատյա մրկաններ ունեցող երեկվա նավաստու հետ։ Ռութին ջղայնացնում էր այն անսովոր գրգռվածությունը, որով Մարտինը խոսում էր վիճաբանությունների ժամանակ, երբեմն միանգամայն կորցնելով ինքնազսպությունը։ Ամեն պարագայում պրոֆեսորները լավ ռոճիկ են ստանում և — այո՛, դա անկարելի է չընդունել — իսկական ջենտլմեններ են, մինչդեռ Մարտինը չի կարող շահել ոչ մի ցենտ և մինչև իսկ հիմա քիչ է նմանվում ջենտլմենի։

Ռութը մինչև անդամ ավելորդ էր համարում կշռադատել Մարտինի փաստարկությունները։ Որ դրանք սխալ էին — դա պարզ էր ըստինքյան, արտաքին մի քանի նշանների զուգադրությունից։ Անկասկած, պրոֆեսորներն իրավացի էին իրենց դատողություններում, քանի որ նրանք հաջողություն են ձեռք բերել կյանքում, իսկ Մարտինը սխալ է դատում գրականության մասին թեկուզ այն պատճառով, որ իր գրվածքներից ոչ մեկը չի կարողացել վաճառել։ Նրա լեզվով խոսելով՝ նրանց «հաջողվել է», իսկ իրեն չի հաջողվում։ Եվ մի՞թե նա կարող է ուղիղ դատել գրականության մասին,— նա, որը դեռ շատ ժամանակ չի անցել, որ կանգնած էր հենց այս սենյակի մեջտեղ՝ շփոթմունքից

կարմրած, անշնորհք, երկյուղով չորս կողմ նայելով, որ չի-նի թե վայր դդի որևէ առարկա, հարցնելով, թե վաղո՞ւց է մեռել «Սվինրե՛ռնը» և անմտորեն պարծենալով, որ կարդացել է «Excelsior»-ը և «Կյանքի սաղմոսը»։

Այդպիսով Ռութն ինքը հաստատում էր, որ խոնարհվում էր հեղինակությունների առաջ։ Մարտինը շատ լավ էր հասկանում նրա մտքերը, բայց չէր ցանկանում շատ խոր թափանցել նրանց մեջ։ Մարտինը սիրում էր նրան՝ անկախ Պրասլի, Վանդերուոտերի և անգլիական բանաստիրության պրոֆեսորների հանդեպ նրա վերաբերմունքից. սակայն Մարտինն աստիճանաբար ավելի ու ավելի էր համոզվում, որ կան մտածողության այնպիսի մարզեր, որոնք միանգամայն անմատչելի են Ռութին, որը մինչև անգամ գաղափար չունի դրանց գոյության մասին։

Ռութն իր հերթին գտնում էր, որ Մարտինը ոչ մի հասկացողություն չունի երաժշտության մասին, իսկ նրա դատողություններն օպերաների մասին համարում էր ոչ միայն անճիշտ, այլև դիտավորյալ կերպով պարադոքսային։

— Դուք հավանեցի՞ք,— հարցրեց մի անգամ Ռութը, երբ նրանք վերադառնում էին օպերայից։

Այդ երեկո նա իրեն թույլ տվեց Ռութի հետ միասին թատրոն գնալ՝ մի ողջ ամիս կերակուրից խիստ խնայողություն անելուց հետո։ Իզուր սպասելուց հետո, որ Մարտինն ինքը խոսք բանա ներկայացման մասին, որը ուժեղ տպավորություն գործեց Ռութի վրա, աղջիկը վերջապես վճռեց հարցնել նրան։

— Ինձ շատ դուր եկավ նախերգանքը,— պատասխանեց Մարտինը,— դա հիանալի էր։

— Այո, բայց ինքը օպերա՞ն։

— Օպերան նույնպես, այսինքն, հասկանալի է, օրկեստրը։ Բայց ավելի լավ կլիներ, եթե այդ խեղկատակները տեղներումը կանգնած մնային կամ բոլորովին հեռանային բեմից։

Ռութն ապշեց։

— Դուք Տեարալանիի և Բարիլյոյի մասի՞ն եք խոսում, — հարցրեց նա։

— Նրանց մասին էլ... և առհասարակ այդ ամբողջ ոհմակի մասին։

— Բայց չէ՞ որ նրանք մեծ արտիստներ են։

— Միևնույնն է։ Նրանք իրենց անմիտ ծամածռություններով երաժշտությունն էին փչացնում միայն։

— Մի՞թե ձեզ դուր չի գալիս Բարիլյոյի ձայնը, — բացագանչեց Ռութը, — չէ՞ որ նա համարվում է Կարուզոյից հետո երկրորդը։

— Ինչո՞ւ չէ, դուր է գալիս, իսկ Տեարալանին առավել ես դուր է գալիս։ Նա բացառիկ ձայն ունի՝ որքան ես կարող եմ դատել։

— Բայց... բայց... — Ռութը բառեր չէր գտնում։ — Այդ դեպքում ես ոչինչ չեմ հասկանում։ Դուք հիանում եք նրանց ձայներով, իսկ ասում եք, որ նրանք փչացրին երաժշտությունը։

— Ճիշտ այդպես։ Ես շատ բան կտայի, որպեսզի լսեի նրանց նվազահանդեսում, և ավելի շատ բան կտայի, որպեսզի չլսեմ նրանց, երբ նվազում է օրկեստրը։ Երևում է, որ ես անուղղելի ռեալիստ եմ։ Մեծ երգիչները ոչ միշտ մեծ դերասաններ են։ Իհարկե շատ լավ է, երբ Բարիլյոն հրեշտակային ձայնով սիրային մեղեդի է երգում, իսկ Տեարալանին ձայնակցում է նրան առավել ես հրեշտակային ձայնով, և այդ բոլորը պայծառ, բոլոր գույներով փայլող օրկեստրային երաժշտության ֆոնի վրա։ Չեմ վիճում, որ դա վիթխարի վայելք է։ Բայց ամբողջ ապավորությունը վայրկենապես ջախջախվում է, հենց որ նայում եմ բեմին և տեսնում եմ Տեարալանիին՝ համարյա վեց ոտնաչափ հասակով և հարյուր իննսուն ֆունտ քաշով, և նրա կողքին Բարիլյոյին — կարճահասակ և բառակուսի մարդուկին՝ զարբնի կրծքավանդակով, որոնք կոտրատվում են, իրենց կուրծքն են բռնում և ձեռքերն են շարժում՝ ինչպես գժանոցի բնակիչներ։ Իսկ ես ինձ պետք է պատկերացնեմ, որ դա սիրա-

ին տեսարան է երիտասարդ իշխանի և գրավիչ իշխանուհու միջև։ Ո՛չ, ես բողոքում եմ։ Դա անհեթեթ բան է։ Դա անմիտ է։ Դա անբնական է։ Ահա՛ թե ինչումն է բանը. դա միանգամայն անբնական է։ Մի՞թե որևէ մարդ այդպես է բացատրում իր սերը։ Եթե ես վճռեի այդպես բացատրվել, դուք ինձ կապտակեիք։

— Դուք չեք հասկանում,— գայրանում էր Ռութը,— գեղարվեստի ամեն մի ձևը սահմանափակ է։ (Նա հիշեց վերջերս համալսարանում իր լսած դասախոսությունը գեղարվեստի պայմանականության մասին)։ Ահա նկարչության մեջ մենք ունենք պաստառի ընդամենը երկու չափ։ Սակայն դուք ընդունում եք երեք չափերի պատրանքը, որը ստեղծում է նկարիչն իր արվեստի ուժով։ Գրականության մեջ հեղինակը ամենազոր և ամենազետ է։ Չէ՞ որ դուք ընդունում եք, որ հեղինակն իրավունք ունի հաղորդել հերոսուհու թաքուն մտքերը, թեև, երբ այդ հերոսուհին մտածում էր, ոչ ոք չէր կարող ծածկաբար լսել նրա մտքերը։ Միենույնն է թատրոնում, քանդակագործության մեջ, օպերայում՝ ամեն տեղ։ Հարկավոր է լինում հաշտվել մի քանի հակասությունների հետ։

— Այո՛, ես հասկանում եմ,— պատասխանեց Մարտինը,— ամեն գեղարվեստ պայմանական է։ (Ռութը զարմացավ, թե նա ինչպես ճիշտ արտահայտվեց. կարծես Մարտինը համալսարանական դասընթացներ է ավարտել և ոչ թե ինքնուս է, որ գրադարանում ընթերցել է ամեն բան, ինչ անցել է ձեռքը)։ Բայց պայմանականության մեջ էլ ռեալություն պետք է լինի։ Սավարաթդթի վրա նկարված և բեմի երկու կողքերին դրած ծառերը մենք համարում ենք անտառ։ Դա պայմանականություն է, բայց բավական ռեալ։ Բայց չէ՞ որ ծովի պատկերը մենք անտառ չենք համարի։ Չենք կարող։ Դա կնշանակեր բռնադատել մեր բոլոր զգացումները։ Այդ պատճառով էլ մեր նոր տեսած երկու գժերի ծամածռությունները, կոտրտվուքները և ջղաձգությունները ոչ

մի կերպ չի կարելի ընդունել իրը սիրային դգացումների և տրամադրությունների արտահայտություն։

— Մի՞թե դուք երաժշտության մեջ էլ բոլոր քննադատներից բարձր եք համարում ձեզ,— վրդովված ասաց Ռութը։

— Ո՛չ, ո՛չ։ Ես պարզապես թույլ եմ տալիս ինձ ունենալ սեփական կարծիք։ Ես այդ բոլորն ասում եմ նրա համար, որ բացատրեմ ձեզ, թե ինչո՛ւ տիկին Տետրալանիի փղային նազանքը ինձ համար փչացրեց օրկեստրի ամբողջ հրապույրը։ Թերևս երաժշտական նշանավոր քննադատները միանդամայն իրավացի են։ Բայց ես ունեմ իմ սեփական կարծիքը, որը ես չեմ ենթարկի քննադատների, բոլորին միասին վերցրած, վճռին։ Ինչ որ ինձ դուր չի գալիս, կնշանակի դուր չի գալիս, և ինչո՞ւ համար ես պետք է ձևանամ, որ դուր է եկել ինձ։ Լոկ նրա համար, որ դա դուր է գալիս ուրիշների՞ն։ Ես չեմ ցանկանում իմ ճաշակը ենթարկել մոդային։

— Բայց երաժշտությունը պատրաստություն պահանջող բան է,— առարկեց Ռութը,— իսկ օպերան պահանջում է հատուկ պատրաստություն։ Թերևս...

— ... Ես դեռևս բավական պատրաստված չեմ օպերա լսելու համար,— լրացրեց Մարտինը նրա միտքը։

Ռութը զլխով հաստատական նշան արեց։

— Կարող է պատահել,— համաձայնեց նա,— բայց ես մինչև անգամ ուրախ եմ, որ այդպես է։ Եթե ինձ փոքր տարիքից վարժեցնեին օպերայի, հավանական է, որ ես այսօր խանդաղատանքի արցունքներ թափեի՝ այդ ծաղրածուների ծամածռություններին նայելով, և չէի նկատի ոչ նրանց ձայները, ոչ օրկեստրի հնչյունները։ Բայց դուք իրավացի եք։ Դա, իհարկե, ձեռք է բերվում դաստիարակությամբ, իսկ ես արդեն չափազանց ծեր եմ։ Ինձ հարկավոր է կամ ինչ-որ իրական բան, և կամ, ավելի լավ է, ոչինչ։ Այն պատրանքը, որի մեջ ճշմարտության նշույլն էլ չկա, չի հուզում ինձ, և օպերան ինձ թվում է համատարած մի կեղծիք. մանավանդ երբ տեսնում եմ, թե ինչպես կարճահասակ Բարիլյոն ջղաձ-

գորեն գրկում է ահագին Տեսրալանիին և ասում է, թե ինչպես է սիրում նրան։

Բայց Ռութը, ինչպես միշտ, Մարտինի հայացքները դատում էր՝ ելնելով արտաքին նշաններից և հանրության կողմից ճանաչվածի առաջ իր խոնարհվելուց։ Վերջ ի վերջո ո՞վ է Մարտինը, որը միայն իրեն է համարում իրավացի և ամբողջ կուլտուրական աշխարհը մեղադրում է անհասկացողության մեջ։ Մարտինի խոսքերն ու մտքերը նրա վրա ոչ մի ազդեցություն չգործեցին։ Ռութը չափազանց սովոր էր հասարակության կողմից ընդունված ամեն բանի և չէր համակրում ըմբոստ մտքերի. բացի այդ, նա մանկությունից պարապում էր երաժշտությամբ, մանկությունից սիրել էր օպերան, ինչպես և նրա շրջանակի բոլոր մարդիկ։ Ի՞նչ իրավունքով այդ Մարտին Իդենը, որը նոր է դուրս գրծել ռեստորանների և փողոցային երգերի թագավորությունից, համարձակվում է դատել ամբողջ աշխարհը հիացնող երաժշտության մասին։ Ռութի ինքնասիրությունը խոցված էր և, Մարտինի կողքից քայլելիս, աղոտ կերպով զգում էր վիրավորանք։ Լավագույն դեպքում՝ Մարտինի հայացքներն ու դատողությունները կարելի էր ընդունել իբր քմահաճույք կամ արտառոց կատակ։ Բայց երբ, ընկերակցելով Ռութին մինչև նրա տան դուռը, Մարտինը գրկեց նրան և քնքշաբար համբուրեց, Ռութը, նորից համակված սիրով, մոռացավ ամեն ինչ։ Հետո, անկողնում պառկած, անքուն, Ռութը շարունակ մտածում էր, թե ինչպե՞ս կարող էր պատահել, որ նա սիրեց այդպիսի տարօրինակ մարդու, և այն էլ հակառակ իր ամբողջ ընտանիքի ցանկության։

Հաջորդ օրը Մարտին Իդենը, օպերայի և Ռութի հետ ունեցած խոսակցության թարմ տպավորության տակ, մի հոդված գրեց «Պատրանքների փիլիսոփայությունը» վերնագրով։ Փոստանշով զարդարված ծրարում այդ հոդվածը ճամփորդության ելավ, բայց խեղճ «Պատրանքների փիլիսոփայությանը» վիճակված էր փոխել դեռ շատ նամականիշներ և կատարել շատ ու շատ երկարատև ճամփորդություններ։

ԳԼՈՒԽ XXV

Մարիա Սիլվան չքավոր էր և գիտեր, թե ի՛նչ է չքավորությունը։ Ռութի համար «չքավորություն» բառը նշանակում էր պարզապես գոյության վատ պայմաններ։ Դրանով էլ վերջանում էր նրա հասկացողությունը չքավորության մասին։ Նա գիտեր, որ Մարտին Իդենը աղքատ էր, և մտովին բաղդատում էր նրա կյանքը պատանի Աբրահամ Լինկոլնի կամ միստեր Բեյլերի կյանքի հետ, առհասարակ այն բոլորի, որոնք չքավորությունից սկսելով վերջ ի վերջո հասել են հաջողության ու բարեկեցության։ Ընդունելով, որ աղքատությունն անհաճո բան է շատ տեսակետներից, Ռութը միաժամանակ, ինչպես և նրա շրջանակի մարդկանց մեծամասնությունը, աղքատության մեջ տեսնում էր փրկարար ու սուր մի խթան կարիերայի և աշխատանքի համար՝ իհարկե այն պայմանով, որ աղքատության մեջ ապրող մարդը որևէ ընդունակություններ ունենա։ Այդ պատճառով Ռութն առանձնապես չցավեց՝ իմանալով, որ Մարտինը ստիպվել է դրամ դնել իր ժամացույցն ու վերարկուն։ Ընդհակառակը, նա մինչև անգամ գոհ էր՝ հուսալով, որ նա ավելի շուտ խելքի կգա և կթողնի իր գրական ձեռնարկները։

Մարտինի նիհար ու փոս ընկած երեսը Ռութի մեջ չէր էլ առաջացնում այն կասկածը, թե նա սոված է։ Աղջիկը նկատում էր նրանում այդ փոփոխությունը և ուրախանում էր, որովհետև Մարտինի կերպարն ավելի ոգեշնչված, նուրբ է դարձել՝ կորցնելով առողջ կենդանու այն ուժը, որը միաժամանակ և՛ հրապուրում, և՛ վանում էր Ռութին։ Երբեմն Ռութը հիանում էր նրա աչքերի անսովոր փայլով, որը նրան նմանեցնում էր բանաստեղծի կամ գիտնականի, ինչպես ուզում էր դառնալ ինքը՝ Մարտինը, և ինչպես ուզում էր տեսնել նրան Ռութը։ Բայց Մարիա Սիլվային նրա ներս ընկած այտերն ու վառվող աչքերը բոլորովին այլ բան էին ասում, և այդ նշաններով նա օրեցօր նշում էր նրա բարեկեցության մեջ տեղի ունեցող փոփոխությունները։ Նա տեսավ, թե ինչ-

պես Մարտինը տնից դուրս եկավ վերարկուով և վերադարձավ առանց վերարկուի, թեպետ ցուրտ և անձրևային օր էր։ Հետո նրա այտերը միաժամանակ թեթևակի կլորացան և աչքերում քաղցի կրակը հանդարտվեց։ Մարիան նույնպես նկատեց ժամացույցի և հեծանիվի անհայտանալը, որի հետևանքով նրա կենսական ուժերը որոշ չափով կենդանացան։

Բացի այդ, Մարիան դիտեր, թե նա ի՛նչպես է աշխատում, որովհետև ճշգրիտ կերպով տեղյակ էր, թե նա ինչքա՛ն նավթ է վառում մի գիշերվա ընթացքում։

Աշխատա՞նք։ Մարիան հրաշալի հասկանում էր, որ Մարտինն աշխատում է, թեպետ նրա աշխատանքը այլ բնույթ է կրում։ Մարիան շատ էր զարմանում, որ Մարտինը քանի քիչ է ուտում, այնքան ավելի եռանդով է աշխատում։ Երբեմն, երբ նրան թվում էր, որ Մարտինն առանձնապես շատ է սոված, երեխաներից մեկի միջոցով նրան ուղարկում էր մի հացիկ՝ այն պարզամիտ պատրվակով, որ Մարտինն ինքը չի կարող այդպես լավ թխել։ Երբեմն նա Մարտինին ուղարկում էր մի ամբողջ տաք ապուր՝ միաժամանակ տանջվելով այն կասկածից, թե իրավունք ունի՞ այդ ապուրը խլելու իր երեխաների բերանից, այսպես ասած՝ իր միս ու արյունից։ Մարտինը ամենաջերմ երախտագիտությամբ էր համակված, որովհետև փորձով դիտեր, որ եթե աշխարհում կա իսկական գութ, դա գտնվում է միայն այստեղ, աղքատների միջև։

Մի օր, երեխաներին կերակրելով մթերքի մնացորդներով, Մարիան իր վերջին տասնհինգ ցենտը ծախսեց՝ գնելու համար մի գալլոն էժան գինի, որով հյուրասիրեց ջուր վերցնելու համար խոհանոց մտած Մարտինին։ Նա խմեց Մարիայի կենացը, իսկ Մարիան՝ նրա կենացը։ Հետո Մարիան խմեց նրա ձեռնարկների հաջողության համար, իսկ Մարտինը խմեց՝ մաղթելով, որ Ջեմս Գրանտը շուտով գա և վճարի լվացքի համար։ Ջեմս Գրանտը օրավարձով աշխատող ատաղձագործ էր, որը անճշտապահ էր պարտքը վճարելու հարցում և Մարիին պարտական էր ամբողջ երեք դոլլար։

Մարտինն ու Մարիան խմում էին սոված փորին, և թթու նոր գինին շուտով նրանց երկուսի էլ գլխին խփեց։ Եվ նրանք բոլորովին նմանություն չունեին, բայց երկուսն էլ աղքատ և միայնակ էին, և այդ չքավորությունը, որի մասին երբեք չէին խոսում, ամուր կապ էր հաստատել նրանց միջև։ Մարիան ուրախացավ, երբ իմացավ, որ Մարտինը եղել է Ազորյան կղզիներում, ուր նա ապրել է մինչև տասնմեկ տարեկան հասակը։ Նա ավելի շատ ուրախացավ՝ իմանալով, որ Մարտինն եղել է Հավայան կղզիներում, ուր Մարիայի ընտանիքը տեղափոխվել է Ազորյան կղզիներից։ Բայց նրա ուրախությունն ամեն չափ ու սահմանն անցավ։ երբ Մարտինն ասաց, որ եղել է Մաուի կղզում, ուր նա ամուսնացել է։ Կագուլուի կղզում, ուր նա առաջին անգամ ծանոթացել է իր ամուսնու հետ, Մարտինն եղել է երկու անգամ։ Ինչպե՞ս թե նա չի հիշում շաքար բարձած նավերը։ Մարտինը նավարկել է նրանց վրա։ Ասացե՛ք խնդրեմ, ինչ-ա՞ն նեղ է աշխարհը։ Իսկ Վայլուկո՞ում։ Մարտինը եղել է և այնտեղ։ Մարտինը դիտի՞ տնկարանի գլխավոր վերակացուին։ Ինչպե՞ս չէ, Մարտինը մինչև անգամ մի բաժակ խրմեց նրա կենացը։

Այդպես, անձնատուր լինելով հիշողություններին, նրանք իրենց քաղցը խեղդում էին թթու գինու մեջ։ Սակայն Մարտինի համար ապագան շափուղանց մռայլ չէր թվում։ Վաղ թե ուշ նա ձեռք կբերի հաջողություն և փառք։ Նա արդեն մոտիկից զգում է նրանց շունչը։ Մի քիչ ժամանակ էլ— և նա կարող է իր ձեռքերով բռնել դրանք։ Ընդամենը նա հետաքրքրությամբ նայեց՝ իր առաջ նստած կնոջ հյուծված դեմքին, հիշեց, որ նա հայր և ապուր է ուղարկել իրեն, և համակվեց նրա հանդեպ մեծ երախտագիտության զգացումով և նրան բարերարելու ցանկությամբ։

— Մարի՛ա,— դոչեց նա հանկարծ,— դուք ի՞նչ կցանկանայիք ունենալ։

Մարիան ապշած նայեց նրան։

— Այս բոպեին ի՞նչ կուզենայիք ունենալ։

— Յոթը զույգեր մաշիկներ երեխաների համար։

— Դուք կստանաք այդ,— հայտարարեց նա, և Մարիան հանդիսավոր կերպով շարժեց գլուխը։— Հետո, ավելի լավ մի բա՞ն։

Մարիայի աչքերում նշմարվեց բարեհոգի ուրախություն։ Մարտինը կատակ է անում նրա հետ — Մարիայի որի հետ արդեն վաղուց է, որ ոչ ոք չի կատակել։

— Մտածեցեք, մի՛ շտապեք,— ասաց Մարտինը նախազգուշացնելով, երբ Մարիան բացեց բերանը, որ խոսի։

— Լավ,— ասաց նա,— ես մտածել։ Ինձ տուն հարկավոր, սեփական տուն, ձրի ապրել։ Ամիս յոթ դոլլար չվճարել։

— Դուք կստանաք այն,— հայտարարեց Մարտինը,— և շատ շուտ։ Իսկ ձեր ամենամեծ ցանկությո՞ւնը։ Երևակայեցեք, որ ես ասուված եմ և կարող եմ ամեն բան անել։ Ուրեմն, խոսեցեք, ես լսում եմ։

Մարիան մի բոպե լռեց։

— Դուք վախենալ։

— Ո՛չ, ո՛չ,— ծիծաղեց Մարտինը,— ես չեմ վախենա։ Հապա, ասեք։

— Մե՞ծ բան, ա՞յ, մեծ բան,— նախազգուշացրեց Մարիան։

— Բարի, բարի։ Խոսեցեք։

— Լավ։— Մարիան խորը շունչ քաշեց ինչպես մի երեխա, որը ուզում է և վախենում է խնդրել։— Ինձ ուզում եմ ագարակ — լավ ագարակ։ Շատ կով, շատ մարգագետին, շատ խոտ։ Սան-Լիանայի մոտ։ Սան-Լիանայում ապրում է իմ ախպերը։ Կաթ կվաճառեմ Օկլենդում։ Շատ փող։ Ջոն և Նիկը չպիտի կովեր արածեն։ Նրանք կգնան լավ դպրոց։ Կլինի մեծ ինժեներ, ճամփա կշինի։ Այո, ուզում եմ լավ ագարակ։

Մարիան լռեց և փայլող աչքերով նայեց Մարտինին։

— Դուք կստանաք այն,— արագ պատասխանեց Մարտինը։

Մարիան գլխով արեց և խմեց վեհանձն Նվիրոզի կենա-

ցը, թեպետ շատ լավ գիտեր, որ խոստացված նվերները երբեք չի ստանա։ Բայց նա շնորհակալ էր Մարտինին՝ նրա բարի կամեցողության համար և սրտանց գնահատում էր այդ խոստումը, ինչպես կգնահատեր նույն ինքը՝ նվերը։

— Այո՛, այո՛, Մարիա,— ասաց Մարտինը։— Նիկն ու Ջոն չպետք է կով արածեն։ Բոլոր երեխաները կգնան դրպրոց՝ ողջ տարին լավ, դիմացկուն մաշիկներ հագնելով։ Դա կլինի առաջնակարգ մի ագարակ ամեն հարմարություններով. դուք կունենաք տուն, ախոռ, գոմ։ Դուք կունենաք հավեր, խոզեր, բանջարանոցներ, մրգաուստ պարտեզ,— մի խոսքով՝ ամեն ինչ, որ հարկավոր է։ Դուք այնքան դրամ կունենաք, որ կկարողանաք պահել մի աշխատավոր, մինչև անգամ երկու աշխատավոր։ Իսկ դուք աշխատելու կարիք չեք ունենա։ Դուք երեխաներին կդաստիարակեք։ Եվ եթե լավ մարդ պատահեց, դուք կամուսնանաք նրա հետ, և նա տիրություն կանի ագարակին, իսկ դուք կհանգստանաք։

Եվ Մարտինը, առատաձեռն բաժին հանելով Մարիային իր ապագա ակնկալություններից, վեր կացավ և գնաց գրավ դնելու իր միակ վայելուչ կոստյումը։ Նրա համար հեշտ չէր այդ հուսահատ քայլն անել, որովհետև դրանով նա իրեն զրկում էր Ռութի հետ տեսակցելու հնարավորությունից։ Մարտինը ուրիշ հարմար հագուստ չուներ. նավաստիական կարկատած կուրտիկով նա կարող էր գնալ հացավաճառի և մսավաճառի մոտ, կարող էր այցելել քրոջը, իսկ այդպիսի կերպարանքով մտնել Մորղերի տունը — այդ մասին ավելորդ էր մտածելն իսկ։

Մարտինը շարունակում էր աշխատել՝ լիակատար հուսահատության մոտեցող սրտնեղությամբ։ Ավելի ու ավելի հաճախ էր անցնում նրա մտքովը, որ երկրորդ ճակատամարտն էլ է տանուլ տվել, և որ իրոք հարկավոր է գնալ աշխատել։ Դրանից գոհ կլինեին բոլորը՝ խանութպանները, քույրը, Ռութը, մինչև անգամ Մարիան, որին նա պարտք մնաց մի ամբողջ ամսվա համար։ Արդեն երկու ամիս է, ինչ նա չէր վճարում գրամեքենայի վարձը, վաճառատունը պա-

հանջում էր կամ վճարել, կամ վերադարձնել մեքենան։ Պատրաստ լինելով համակերպվել և հետաձգել պայքարն ավելի պատեհ ժամանակի, Մարտինը գնաց քննություն տալու երկաթուղային ցրիչի պաշտոնի համար։ Նա զարմացավ, որ առաջին տեղը բռնեց քննության մեջ, թեև հայտնի չէր, թե երբ ազատ տեղ կբացվի այդ պաշտոնի համար։

Եվ ահա ամենամեծ հուսահատության այդ պահին հրատարակչական մեքենան հանկարծ խախտեց իր սովորական ընթացքը։ Կամ այն է, որ այդ մեքենայում մի անվակ սայթաքել-ընկել էր, և կամ նա պարզապես վատ էր յուղած. բանը նրանումն է, որ մի առավոտ փոստի ցրիչը բերեց կնքված մի փոքրիկ ծրար։ Ծրարի անկյունում Մարտինը տեսավ «Անդրցամաքային ամսաթերթի» կնիքը։ Մարտինի սիրտը պրկվեց ու պատռվեց, նա ողջ մարմնում թուլություն զգաց, ծնկները տարօրինակ կերպով դողացին։ Մտնելով իր սենյակը և դեռևս առանց ծրարը բանալու, նա նստեց մահճակալին և այդ ակնթարթին հասկացավ, որ չափազանց ուրախալի լուրը կարող է սպանել մարդուն։

Իհարկե, դա ուրախալի լուր էր։ Գրվածքը չէր կարող զետեղվել այդ փոքր ծրարում։ Մարտինը հիշում էր, որ «Անդրցամաքային ամսաթերթին» ուղարկել է «Զանգերի ղողանջը»—սոսկալի մի պատմվածք՝ հինգ հազար բառից բաղկացած։ Եվ որովհետև լավագույն ժուռնալները վճարում են հենց որ ընդունում են գրվածքը—ուրեմն ծրարում չեկ կա դրած։ Բառին երկու ցենտ,—հետևաբար հազար բառին՝ քսան դոլլար. ուրեմն չեկը պիտի լինի հարյուր դոլլարի։ Հարյո՞ւր դոլլար։ Ծրարը պատռելիս՝ նա մտովին հաշվեց բոլոր իր պարտքերը. 3դոլլար 85 ցենտ նպարեղենի խանութին, 4—մսավաճառին, 2—հացավաճառին, 5—բանջարեղենին։ Ընդամենը 14,85։ Հետո՝ սենյակի համար 2,50. մի ամսվա կանխավճար—2,50. գրամեքենայի երկու ամսվա վարձ—8, մի ամսվա կանխավճար—4, գումար 31,85։ Բացի այդ, լոմբարդից պետք է դուրս գրել զանազան իրեր՝ ժամացույցը—5,50, վերարկուն—5,50. հեծանիվը—7,75, կոստյումը—5,50

(60 տոկոսի հաշվով—միևնույն չի՞), ընդամենը 56,10 դոլլար։ Կարծես, այդ գումարը նրա աչքի առաջ գրած էր օդում փայլ արձակող թվանշաններով։ Մնացած գումարը—43 դոլլար և 90 ցենտ—հանդիսանում էր ալտակարգ մի հարստություն՝ նկատի ունենալով, որ վաղորոք կվճարի և՛ սենյակի, և՛ դրամեքենայի համար։

Վերջապես Մարտինը բացեց ծրարը և նրա միջից հանեց մեքենայի վրա տպված մի նամակ։ Չեկ չկար։

Նա թափ տվեց ծրարը, լույսին բռնեց այն և չհավատալով իր աչքերին՝ պատռեց։ Չեկ չկար։ Մարտինը սկսեց կարդալ նամակը՝ աշխատելով խմբագրի գովասանքների միջով հասնել մինչև խնդրի էությունը, գտնել չեկի չուղարկվելու պատճառի բացատրությունը։ Նշանակում է, այդ բոլորը ստախոսություն է — և այն, որ նվազագույն հոնորարը երկու ցենտ է ամեն մի բառին, և այն, որ վճարում են զբրվածքն ընդունելուց։ Այդ ամենը սուտ էր, և նա պարզապես խաբեության զոհ է դարձել։ Եթե առաջուց իմանար այդ բանը, չէր գրի։ Նա կգնար աշխատելու, աշխատելու Ռութի համար։ Մարտինը հիշեց, թե ինչքա՛ն ժամանակ է կորցրել այն օրից, երբ սկսեց գրել և այդ բոլորը նրա համար, որ յուրաքանչյուր տասը բառի համար մի ցենտ ստանա։ Այն հոնորարները, որ, թերթերի ասելով, ստանում էին մեծ գրողները, հավանական է, նույնպես գոյություն ունեն միայն ժուռնալիստների երևակայության մեջ։ Գրողների կարիերայի մասին երկրորդական աղբյուրներից քաղած նրա բոլոր հասկացողություններն անճիշտ դուրս եկան. ապացույցը մեջտեղն է։ «Անդրցամաքային ամսաթերթի» մի համարն արժե 25 ցենտ, և նրա գեղարվեստորեն ձևակերպված շապիկը ցույց է տալիս, որ նա առաջնակարգ ժուռնալներից է։ Դա վաղեմի, պատվարժան մի ժուռնալ է, որը սկսել է հրատարակվել Մարտին Իդենի ծնվելուց շատ առաջ։ Նրա շապիկի վրա անպայման տպվում է համաշխարհային հայտնի մի գրողից վերցրած նշանաբան, որը նշում է «Անդրցամաքային ամսաթերթի» պատվավոր կոչումը — մի ժուռնալի,

որի էջերիցն է սկսել այդ դրական լուսատուն իր կարիերան։ Ահա այդ մեծապես գեղարվեստական ու բարձր բարոյականության տեր ժուռնալը հինգ դոլլար է վճարում հինգ հազար բառի համար։ Այս պահին Մարտինը հիշեց, որ այդ մեծ գրողը վերջերս մեռավ օտար երկրում սոսկալի չքավորության մեջ, և վճռեց, որ դրանում ոչինչ չկա զարմանալի։

Այո։ Նա խաբվել է։ Թերթերը պատմել են նրան ամեն տեսակ սուտ բան գրողների հոնորարների մասին, և նա դրա համար կորցրել է ամբողջ երկու տարի։ Իսկ հիմա արդեն բավական է։ Նա այլևս ոչ մի տող չի գրի։ Նա կանի այն, ինչ ուզում է Ռութը, ինչ ուզում են նրա շրջապատի բոլոր մարդիկ, նա կմտնի ծառայության։ Այս վերջին միտքը հանկարծ Մարտինին հիշեցրեց Ջոյին, որը ինչ-որ տեղ, անգործության աշխարհի ճամփաներն է չափում։ Մարտինը հառաչեց նախանձից։ Ամենօրյա տասնինը ժամ տևող աշխատանքն հանկարծ իրեն զղացնել տվեց։ Բայց Ջոն սիրահարված չէր, սիրո բարձած պատասխանատվությունը չդիտեր, այդ պատճառով էլ իրավունք ուներ անգործ թափառել աշխարհի երեսին։ Մարտինն ուներ որոշ նպատակ, որին հասնելու համար արժեր աշխատել։ Վաղը առավոտ նա կսկսի աշխատանք փնտրել և վաղն ևեթ կիմացնի Ռութին, որ մտադիր է փոխել իր ապրելակերպը և պատրաստ է մտնել ծառայության նրա հոր գրասենյակում։

Հինգ դոլլար հինգ հազար բառի համար, տասը բառը մի ցենտ՝ ահա՛ արվեստի շուկայի գինը։ Այդ թվանշանում թաքնված անարդարությունը, սուտը, ստորությունը հանդիստ չէին տալիս նրան։ Իսկ փակված արտանունքի ֆոնի վրա վառվում էր մի այլ թվանշան—3,85 դոլլար իր պարտքը նպարավաճառին։ Մարտինի վրա դող էր գալիս, նրա բոլոր ոսկորները ցավում էին։ Առանձնապես կտրատվում էր մեջքը։ Ցավում էր գլուխը—ցավում էր գաղաթը, ցավում էր ծոծրակը, կարծես ցավում էր մինչև իսկ գանգոսկրի տակ գտնվող ուղեղը. ցավը հատկապես անտանելի էր հոնքերից վերև։ Իսկ հոնքերից ցած, փակ կոպերի ֆոնի վրա,

շարունակում էր փայլել 3,85 թվանշանը։ Այդ աներես տեսիլքից ազատվելու համար՝ Մարտինը բացեց իրար կպած կոպերը. բայց ցերեկվա սպիտակ լույսը անհանդուրժելիորեն այրում էր նրա աչքերը. ստիպված եղավ նորից փակել կոպերը, և 3,85 թվանշանը բռնկվեց նախկին ուժով։

Հի՜նգ դոլլար հինգ հազար բառի համար. տա՜սը բառը մի ցենտ — այս միտքը ծակում էր նրա ուղեղը, և նա չէր կարողանում ազատվել դրանից, ինչպես չէր կարող ազատվել և 3,85 թվանշանից։ Վերջապես թվանշանում ինչ-որ փոփոխություններ սկսվեցին, որոնց Մարտինը հետևում էր հետաքրքրությամբ, և աստիճանաբար նրանք վերածվեցին 2-ի։ Հա՜,— կռահեց նա,— դա հացավաճառին տրվելիք պարտքն է։ Հետևյալ թվանշանը 2,50 էր։ Այդ թիվը այնքան շահագրգռեց նրան՝ կարծես թե դրանով վճռվում էր իր կյանքի ու մահվան հարցը։ Իրոք նա որևէ մեկին պարտք է երկու և կես դոլլար, բայց ո՞ւմ։ Նրան անհրաժեշտ էր լուծել այդ խնդիրը։ Վճռել, ինչ էլ որ լինի, և նա դեգերում էր իր հիշողության երկար և մութ միջանցքներում՝ իզուր ջանալով պատասխան գտնել։ Թվում էր, թե ամբողջ հարյուրամյակներ անցան՝ մինչև որ նա միանգամից հիշեց, որ այդ գրամը պարտական է Մարիային։ Մարտինը ահագին թեթևացման զգացումով մտածեց, որ այդ բարդ խնդիրը լուծելուց հետո հիմա կարող է հանգստանալ։ Բայց, ո՛չ, այդպես չեղավ։ Անհետացավ 2,50 թիվը, իսկ նրա փոխարեն վառվեց մի ուրիշը՝ 8։ Ո՞ւմ է նա պարտք 8 դոլլար։ Դարձյալ հարկ եղավ ձեռնարկել հողնեցուցիչ դեկերումների ուղեղի մութ խորշերում։ Ինչքա՞ն տևեցին այդ դեկերումները՝ Մարտինը չգիտեր (նրան թվում էր, որ անվերջ երկարատև էին), բայց նա հանկարծ սթափվեց՝ լսելով դռան թակոցը և Մարիայի ձայնը, որը հարցնում էր, թե հիվանդ չէ՞ նա։ Մարտինը խուլ, անծանոթ ձայնով պատասխանեց, որ պարզապես նիրհում էր։ Նրան գարմացրեց սենյակում խառնված մթությունը։ Նամակը ստացվել է մայր երկուսին, իսկ հիմա արդեն երեկո է։ Անկասկած, նա հիվանդացել է։

Այդ պահին նրա աչքի առաջ նորից երևաց 8 թվանշանը, և նա դարձյալ սկսեց լարված մտածել։ Սակայն հիմա նա ավելի խորամանկ էր դարձել։ Իսկի միտք չունի թափառել հիշողությունների քաոսում։ Ինչքա՞ն հիմար է եղել նա։ Հարկավոր է պարզապես շուռ տալ, ինչպես պատահեց, հիշողության ահագին անիվը. դա շուռ եկավ — և հանկարծ, գառնալով անսովոր արագությամբ, Մարտինին առավ իր ուղեծիրի մեջ և տարավ դեպի սև դատարկությունը։

Մարտինն իսկի էլ չզարմացավ, երբ տեսավ իրեն լվացքատանը, ուր նա օսլայած մանժետները գլանակի տակ էր դնում։ Բայց մանժետների վրա տպված էր ինչ-որ բան։ Անկասկած, դա սպիտակեղենը նշելու մի նոր ձև է,— մտածեց Մարտինը և նայեց նիշին. մանժետի վրա նշված էր 3,85 թիվը։ Նա հիշեց, որ դա նպարավաճառի հաշիվն է, և որ այդ հաշիվը պետք է գլանակով անցկացնել։ Նրա մտքովն անցավ մի նենգ ծրագիր. նա բոլոր հաշիվները կգցի գետնին և չի վճարի դրանք։ Ասաց և արեց։ Եվ ահա նա շարացած շպրտում է չափազանց կեղտոտ, գետնին բոլոր հաշիվները։ Հաշիվների կույտը սկսեց անհավատալիորեն աճել. ամեն մի հաշիվ կրկնապատկվեց, տասնապատկվեց, հազարապատկվեց, միայն Մարիայի երկուսուկես դոլլարի հաշիվը չէր բազմապատկվում։ Դա նշանակում էր, որ Մարիան չի նեզի նրան, և Մարտինը վեհանձնորեն վճռեց, որ կվճարի միայն նրա հաշիվը։ Այդպես վճռելով՝ նա սկսեց փնտրել գետնին ընկած կույտի մեջ այդ հաշիվը. նա փնտրում էր այն շատ հարյուրամյակներ, մինչև որ սենյակի դուռը բացվեց ու ներս մտավ հյուրանոցի տերը — գերուկ հոլանդացին։ Նրա դեմքը ցասումից վառվում էր և նա որոտընդոստ ձայնով գոռաց ամբողջ աշխարհին. «Մանժետների արժեքը կգեղչեմ ձեր ռոճիկից»։ Այդ կույտը միանգամից վերածվեց ամբողջ մի լեռան, և Մարտինը հասկացավ, որ կարիք կլինի աշխատել հազար տարի՝ վճարելու համար այդ մանժետների արժեքը։

Այլ ելք չէր մնում, եթե ոչ սպանել հյուրանոցի տիրոջը

և հրկիզել լվացքատունը։ Բայց գիրուկ հոլանդացին բռնեց նրա ծիրից և սկսեց վեր-վեր գցել նրան։ Նա գցեց Մարտինին արդուկների սեղանից դենը, սալօջախից, գլանակից, լվացքի մեքենայից և քամիչ մեքենայից այն կողմը։ Մարտինը պարում էր օդում և թռչում այնպես, որ նրա ատամները կատկատում էին և գլուխը ցավում էր, և զարմանում էր հոլանդացու ուժին։

Հետո նա դարձյալ հայտնվեց գլանակի առաջ՝ այս անգամ ընդունելով լվացված ու գլանակով անցկացված մանժետները, որոնց մյուս կողմից գլանակի տակ գնում էր ամսաթերթի հրատարակիչը։ Ամեն մի մանժետ վերածվում էր չեկի, և Մարտինը վրդովված հետաքրքրությամբ զննում էր նրանք, բայց չեկերը դատարկ էին։ Նա գլանակի առաջ կանգնած էր միլիոնավոր տարիներ և շարունակ դուրս էր հանում չեկեր՝ վախենալով բաց թողնել թեկուզ նրանցից մեկը, որ գրված լիներ նրա անվանը։ Վերջապես այդպիսի մի չեկ երևաց։ Դողդոջուն ձեռքով Մարտինը վերցրեց այն և մոտեցրեց լույսին։ Չեկը հինգ դոլլարի էր։ «Հա՜, հա՜» — հռհռաց հրատարակիչը՝ թաքնվելով գլանակի ետևը։ «Լա՛վ, ես ձեզ հիմա կսպանեմ»,— ասաց Մարտինը։ Նա գնաց հարևան սենյակը կացինը բերելու և այնտեղ տեսավ Ջոյին, որը օսլայում էր գրվածքները, շպրտեց կացինը Ջոյին, բայց կացինը կախված մնաց օդում։ Մարտինը ետ վազեց դեպի գլանակը և տեսավ, որ այնտեղ մոլեգնում էր ձյունախառն մրրիկը։ Ո՛չ, դա ձյուն չէր, այլ չեկերի անվերջ քանակություն, ամեն մեկը հազար դոլլարից ոչ պակաս գումարի։ Նա սկսեց հավաքել նրանք և նրանցից կազմեց կապոցներ՝ ամեն մեկը հարյուրական չեկ, և կապոցները խնամքով կապեց ժապավենով։

Հանկարծ Մարտինի առաջ հայտնվեց Ջոն։ Ջոն կանգնած էր և աճպարարություն էր անում արդուկներով, շապիկներով, գրվածքներով։ Երբեմն նա վերցնում էր և չեկերի կապոցներ, վեր էր գցում այնպես, որ նրանք երդիկը ծակելով, անհետանում էին տարածության մեջ։ Մարտինը

նետվեց Ջոյի վրա, բայց վերջինս խլեց նրանից կացինը և նույնպես դցեց վերև։ Կացինից հետո նա վերև դցեց նաև Մարտինին։ Մարտինը ճեղքեց երդիկն ու թռավ, և կարողացավ բռնել շատ դրվածքներ, այնպես, որ բնկավ գետնին, ձեռքին ունենալով մի դիրկ դրվածքներ։ Բայց նա նորից քշվեց-տարվեց դեպի վերև, և սուրաց օդում՝ անվերջ բոլորակներ գծելով։ Իսկ հեռվում մի երեխայական ձայն երգում էր.

«Պարի՛ր ինձ հետ, Վիլլի, պարի՞ր մի անգամ էլ»։

Կացինը ցցվել էր չնկերի, օսլայած շապիկների և գրվածքների ծիր կաթինի միջև, և Մարտինը, վերցնելով այն, վճռեց սպանել Ջոյին՝ հենց որ կվերադառնա երկիր։ Սակայն Մարտինն այնպես էլ չվերադարձավ երկիր։ Գիշերվա ժամը երկուսին Մարիան, լսելով Մարտինի հառաչանքը, մտավ նրա սենյակը, նրա շուրջը շարեց տաք արդուկներ, իսկ նրա բորբոքված աչքերը ծածկեց թաց երեսսրբիչով։

ԳԼՈՒԽ XXVI

Հետևյալ առավոտ Մարտին Իդենը չգնաց գործ փընտրելու։ Կեսօրից անց էր, երբ նա սթափվեց իր զառանցանքից և սենյակի չորս կողմը նայեց։ Ութամյա Մերին — Սիլվայի դուստրերից մեկը — օրապահություն էր անում նրա մոտ և, հենց որ նա աչքերը բացեց, ճղճղոցով վազեց մորը կանչելու։ Մարիան եկավ խոհանոցից, ուր կերակուր էր եփում։ Նա իր կոշտերով լի ձեռքերով շոշափեց նրա այրվող ճակատը ու բռնեց նրա զարկերակը։

— Ուտել ուզո՞ւմ եք։

Մարտինը բացասական շարժեց գլուխը։ Նա բոլորովին ցանկություն չուներ ուտելու և մինչև անգամ զարմացավ, որ մի ժամանակ քաղց էր զգում։

— Ես հիվանդ եմ, Մարիա,—ասաց նա տկար ձայնով։ —Ի՞նչ պատահեց ինձ հետ։ Գիտե՞ք։

— Գրիպ,— պատասխանեց նա,— երեք օր է, լավ կլինի։ Ավելի լավ է առանց ուտելու։ Հետո ուտել։ Վաղը։

Մարտինը հիվանդանալու սովորություն չուներ, և երբ Մարիան ու նրա դուստրը դուրս եկան, նա փորձեց հագնվել։ Նրա աչքերն այնպես ցավում էին, որ նա դժվարությամբ էր բաց պահում նրանք։ Կամքի ծայրահեղ լարումով նա իրեն ստիպեց վեր կենալ մահճակալից և նստեց սեղանի առաջ, բայց ուժերը դավաճանեցին նրան, նա գլուխը վայր գցեց սեղանին և երկար ժամանակ չէր կարողանում վեր կենալ։ Կես ժամից նա դարձյալ մի կերպ հասավ անկողնին և պառկեց անշարժ՝ փակելով աչքերը և փորձելով հասկանալ իր ցավերն ու հիվանդությունը։ Մարիան մի քանի անգամ մտավ նրա մոտ և փոխեց ճակատի սառը կոմպրեսը։ Առհասարակ նա հանդիստ թողեց Մարտինին՝ իմաստությամբ վճռելով նրան չձանձրացնել շաղակրատությամբ։ Շնորհակալությամբ համակված Մարտինը մրմնջաց.

— Մարիա, դուք կունենաք ազարակ և շատ դրամ։

Հետո նա հիշեց երեկվա օրը։ Թվում էր, թե մի ամբողջ դար է անցել այն ժամանակից, երբ նա նամակ ստացավ «Անդրցամաքային ամսաթերթից»,— այն ժամանակից, երբ նա հասկացավ իր մոլորությունը և վճռեց վերջ դնել այդ գործին և շուտ տվեց իր կյանքի գրքի էջը։ Իր հիվանդության համար ինքն է մեղավոր, որովհետև նա չափազանց հյուծեց իրեն քաղցով և զրկանքներով։ Նա ուժ չունեցավ կռվելու իր օրգանիզմը թափանցած միկրոբի դեմ։ Եվ ահա նա պառկած է և չի կարող վեր կենալ։

— Արժի՞ գրել մինչև անգամ մի ամբողջ գրադարան, երբ դրա համար պետք է կորցնել կյանքը,— հարցնում էր նա ինքն իրեն։— Չէ՛, դա ինձ համար չի։ Սատանա՛ն տանի գրականությունը։ Իմ ճակատագիրն է պահել գրասենյակային մատյաններ, ստանալ ամեն ամիս ռոճիկ և Ռութի հետ երկուսով ապրել մի տնակում։

Երկու օր հետո Մարտինը կերավ մի ձու երկու փոքր պատառ հացով և խմեց մի բաժակ թեյ։ Նա խնդրեց այդ

ժամանակամիջոցում ստացված փոստը, բայց աչքերը դեռ չափազանց տկար էին, և նա դժվարանում էր կարդալ։

— Կարդացե՛ք ինձ նամակները, Մարիա,— ասաց նա։ — Մեծ, հաստ ծրարները մի բանաք։ Նրանք շպրտեցեք սեղանի տակ։ Կարդացեք փոքրիկ նամակները։

— Չդիտեմ կարդալ,— պատասխանեց նա։— Թերեզան կարող է. նա դպրոց է գնում։

Թերեզա Սիլվան — ինը տարեկան մի աղջիկ — բացեց ծրարները և սկսեց կարդալ։ Մարտինը մտացրիվ լսում էր համառ պահանջներ դրամեքենայի վարձը վճարելու մասին, — նրա միտքն այն ժամանակ զբաղված էր գործ փնտրելու հարցով։ Հանկարծ նրա ականջին հասան հետևյալ բառերը.

— «Առաջարկում ենք ձեզ քառասուն դոլլար ձեր պատմվածքի համար,— կարդում էր Թերեզան վանկ-վանկ,— եթե դուք թույլ կտաք մեզ անել հետևյալ կրճատումներն ու փոփոխությունները...»

— Որտեղի՞ց է դա, ո՞ր ժուռնալից.— գոչեց Մարտինը։ — Դես տուր նամակը։

Նա միանգամից մոռացավ աչքի ցավը և սկսեց ագահորեն կարդալ։ «Սպիտակ Մուկն» էր առաջարկում նրան քառասուն դոլլար իր «Ջրապտույտի» — վաղուցվա «սարսափելի» պատմվածքներից մեկի համար։ Մարտինը մի քանի անգամ աչքի անցկացրեց նամակը։ Խմբագիրը ուղղակի և բացահայտ ասում էր նրան, որ հեղինակը պատմվածքի հիմնական գաղափարը ոչ բոլորովին պարզ կերպով է հայտաբերել, բայց այդ գաղափարն այնքան ինքնատիպ է, որ նրանք վճռեցին տպել պատմվածքը։ Եթե նա թույլ կտա կրճատել պատմվածքի մի երրորդը, նա անմիջապես կստանա քառասուն դոլլարի չեկ։

Մարտինը վերցրեց գրիչն ու խմբագրին պատասխանեց, որ թույլ է տալիս կրճատել պատմվածքի թեկուզ երեք քառորդը, միայն թե չեկը կարելի եղածին չափ շուտ ուղարկեն։

Թերեզան վազեց նամակը գցելու փոստարկղը, իսկ Մարտինը հենվեց բարձին և խորասուզվեց մտածումների մեջ։ Ու-

ռեմն, դա այնուամենայնիվ սուտ չէ։ «Սպիտակ Մուկը» պատրաստ է վճարելու՝ գրվածքը ընդունելիս։ «Ջրապտույտ» պատմվածքը բաղկացած է երեք հազար բառից։ Եթե մի երրորդը դեն գցենք, կմնա երկու հազար։ Դուրս է գալիս ամեն մի բառին երկու ցենտ։ Գրվածքն ընդունելուց վճարվում է՝ բառին երկու ցենտ,— ուրեմն թերթերը ճիշտ էին ասում։ Իսկ ինքը համարում էր «Սպիտակ Մուկը» փոքրիկ, երրորդական մի ժուռնալ։ Երևում է, որ նա ժուռնալների մասին ոչ մի գաղափար չունի։ Նա առաջնակարգ էր համարում «Անդրցամաքային ամսաթերթը», իսկ այնտեղ մի ցենտ են վճարում տասը բառի համար։ Նա արհամարհանքով էր վերաբերվում «Սպիտակ Մուկ»-ին, իսկ այնտեղ վճարում են քսան անգամ ավելի, այն էլ առանց սպասելու տպվելուն։

Պարզ էր մի բան. երբ նա կլավանա, կարիք չկա գործ գտնելու համար դես ու դեն վազելու։ Նրա գլխում հարյուր պատմվածք կա՝ «Ջրապտույտից» ոչ վատ, և եթե ամեն մեկը հաշվենք քառասնական դոլլար, նա դրանցով կարող է շահել շատ ավելին, քան որևէ ծառայության մեջ։ Նա շահեց ճակատամարտը հենց այն պահին, երբ նրան թվում էր, թե կորցրեց այն։ Նրա ընտրած ասպարեզն արդարացրեց իրեն։ Նրա առաջ հիմա արդեն ճամփան բաց է։ Հաղթահարելով «Սպիտակ Մուկ» ժուռնալը՝ նա աստիճանաբար կսկսի իրեն հովանավորողների ցուցակում ներդրել և ուրիշ ժուռնալների անուններ։ Եկամտավոր մանր դրվածքներից կարելի է հրաժարվել։ Միևնույնն է, դրանք մի դոլլար իսկ չբերեցին նրան։ Նա կզբաղվի աշխատանքով, իսկական աշխատանքով, կներդնի դրա մեջ իրոք արժեքավոր ամեն բան, ինչ ունի ինքը։ Մարտինը ցանկացավ, որ Ռութն այստեղ լիներ և մասնակցեր իր ուրախությանը։ Հանկարծ անկողնի վրա ցրիվ տված նամակների միջև նա գտավ Ռութի նամակը։ Ռութը քնքշարար հանդիմանում էր նրան, որ միանգամից անհետացավ և ահա քանի օր է չի այցելում նրան։ Մարտինը հիացումով քանիցս կարդաց այդ նամակը և, հետազննելով

ձեռագիրը և սրանչանալով ամեն մի տառով, գգվանքով համբուրում էր նրա ստորագրությունը։

Մարիին անկեղծորեն գրեց նրան, որ իր միակ լավ կոստյումը դրավ է դրել և այդ պատճառով չկարողացավ գալ։ Նա հաղորդեց իր հիվանդության մասին, որը սակայն արդեն համարյա անցել է, և ավելացրեց, որ երկու շաբաթից (այդքան ժամանակում նա կստանա չեկը Նյու-Յորքից) դուրս կգրի իր կոստյումը և նույն օրն իսկ կայցելի նրան։

Բայց Ռութը երկու շաբաթ չուզեց սպասել։ Նրա սիրածը հիվանդ է։ Հետևյալ օրն իսկ նա եկավ կառքով, Արտուրի ընկերակցությամբ, մեծ ուրախություն պատճառելով Սիլվայի երեխաներին, զարմացնելով բոլոր դրացիներին և միանգամայն սարսափեցնելով Մարիային։ Մարիան այդ անսովոր այցելուներին շրջապատած երեխաների ականջները քաշեց և, անողորմաբար աղճատելով անգլերեն լեզուն, սկսեց ներողություն խնդրել իր թափթփած արտաքինի համար։ Նրա ձեռքին չորացան օճառի պղպջակները, թաց ռադժան, որը նա հագել էր իբր գոգնոց, պարզ հասկացնում էր հյուրերին, թե նա ի՛նչ աշխատանքով էր զբաղված, երբ նրանք եկան։ Շքեղ հագած երիտասարդների կառքով գալը իր կենվորի մոտ այնպես ցնցեց Մարիային, որ նա մինչև անգամ մոռացավ հրավիրել նրանց հյուրասենյակը։ Մարտինի սենյակը հասնելու համար նրանք ստիպվեցին անցնել՝ մեծ լվացքի կապակցությամբ տաքացած և շոգիով լցված խոհանոցով։ Մարիան հուզմունքից չկարողացավ ծածկել դուռը, և հիվանդի սենյակը ներխուժեցին շոգու ամպեր. օճապաջրի և կեղտոտ սպիտակեղենի հոտը։

Ռութը ճարպկորեն թեքվեց դեպի աջ, հետո դեպի ձախ, հետո նորից դեպի աջ և անցավ Մարտինի սեղանի և նրա մահճակալի արանքով։ Իսկ Արտուրը բավականաչափ զգուշություն չհայտաբերեց և թրխկոցով դիպավ խոհանոցի անկյունում դրված պտուկներին ու թավաներին։ Բայց Արտուրը երկար չմնաց սենյակում։ Միակ աթոռին նստեց Ռութը, իսկ նրա եղբայրը, իր պարտականությունները կատարած համա-

թելով, դուրս եկավ սանդուղքի դլուխը, ուր նրան անմիջապես շրջապատեց Սիլվայի բազմաթիվ սերունդը, որը չավաղանց հետաքրքրվում էր նրա անձնավորությամբ։ Կառքի շուրջը խոնվեցին ամբողջ թաղից եկած երեխաներ՝ սպասելով ինչ-որ սարսափելի, դրամատիկ լուծումի։ Այս կողմերում կառքեր երևում էին միայն հարսանիքների կամ հուղարկավորությունների օրերին. բայց այս դեպքում ոչ ոք չէր ամուսնանում և չի մեռել — հետևաբար, պետք է պատահեր ինչ-որ խորհրդավոր, աղքատիկ տնակների բնակիչների երևակայության համար անմատչելի բան։

Բոլոր այդ օրերը Մարտինը հալումաշ էր լինում Ռութին տեսնելու ցանկությունից։ Ունենալով ջերմորեն սիրող սիրտ՝ նա, ավելի քան որևէ մեկը, կարիք ուներ համակրության, և ոչ միայն պարզ համակրության, այլ խորը սիրո՝ հիմնված նրբին հասկացողության վրա. բայց նա արդեն համոզվեց, որ Ռութի համակրությունը հիմնված է ոչ թե նրա — Մարտին Իդենի ձգտումների հասկացողության վրա, այլ պարզապես բնական, որոշ չափով սենտիմենտալ քնքշության վրա։ Երբ Մարտինը խոսում էր նրա հետ, նրա ձեռքը բռնած, Ռութը, մղվելով սիրուց, գուրգուրանքով սեղմում էր նրա ձեռքը, արտասվակալած աչքերով նայում էր նրա նիհարած դեմքին և մտածում էր, թե նա ինչքա՞ն դժբախտ և անօգնական է։

Բայց երբ Մարտինը պատմեց Ռութին, թե ինչ հուսահատության մեջ ընկավ՝ ստանալով «Անդրցամաքային ամսաթերթի» նամակը, և ինչպես ուրախացավ «Սպիտակ Մուկ» ժուռնալի առաջարկին, Ռութն անտարբեր մնաց։ Նա լսում էր Մարտինի արտասանած բառերը, հասկանում էր նրանց իմաստը, բայց չէր բաժանում ոչ նրա ուրախությունը, ոչ նրա հուսահատությունը։ Ռութի համար այդ ամենը միայն մի իմաստ ուներ։ Նրան շատ քիչ էին հետաքրքրում պատմվածքները, ժուռնալներն ու խմբագիրները։ Նա մտածում էր միայն մի բանի մասին. ե՞րբ կարելի կլինի ամուսնանալ Մարտինի հետ։ Ճիշտ է, նա ինքը չէր հասկանում այդ, չէր հասկանում և այն, որ Մարտինին «սարքվել» ստիպելու նրա

ցանկությունն առաջ էր գալիս մայրական ենթագիտակցական բնազդից։ Իհարկե, եթե Ռութին ուղղակի ասեին այդ մասին, նա առաջին հերթին կշփոթվեր, հետո կդայրանար և կժխտեր՝ հավատացնելով, որ նա զեկավարվում է միայն իր սիրած մարդու մասին հոգածությամբ։ Բայց, այսպես թե այնպես, մինչ Մարտինը, իր ընտրած ճամփին առաջին հաջողությունից հուզված, Ռութի առաջ զեղում էր իր հոգին, աղջիկը, ուշադրություն դարձնելով նրա առանձին բառերին՝ առանց ըմբռնելու դրանք, նայում էր սենյակի չորս կողմը՝ ապշելով իր տեսածի վրա։

Ռութն առաջին անգամն էր երես առ երես հանդիպում չքավորության հետ։ Նրան միշտ էլ թվում էր, որ սերն ու քաղցը — շատ ռոմանտիկ զուգակցություն են, սակայն նա բոլորովին չէր պատկերացնում իրեն, թե սոված սիրողներն ինչպե՞ս են ապրում։ Ռութը համենայն դեպս այսպիսի բան չէր սպասում։ Խոհանոցից այստեղ թափանցող կեղտոտ սպիտակեղենի հոտը նրա սիրտն էր խառնում։ Երևի, Մարտինն ամբողջովին ծծված էր այդ հոտով—եզրակացրեց Ռութը, եթե այդ սոսկալի կինը հաճախ է լվացք անում։ Չքավորությունը վարակիչ է։ Ռութին սկսեց թվալ, որ շրջապատի իրադրության կեղտը կպած կլինի Մարտինին։ Նրա չածիլված երեսը (Ռութը առաջին անգամ էր տեսնում Մարտինին չածիլված) զզվանք էր առաջացնում աղջկա մեջ։ Նրա մազոտ կզակն ու երեսը թվում էին նույնպես մռայլ և կեղտոտ, ինչպես Սիլվայի ամբողջ բնակարանը,—ներսում և դրսում, և նրանում ավելի էր ուժեղանում անասնական ուժի այն արտահայտությունը, որն ատելի էր Ռութին։ Հակառակի պես Մարտինի երկու պատմվածքներն ընդունել են տպագրության, որի մասին նա հպարտորեն պատմում էր։ Հիմա նա ավելի ևս կհամառի իր խելահեղ պլաններում։ Մի քիչ էլ— և նա անձնատուր կլիներ և կմտներ ծառայության։ Իսկ հիմա նա շատ եռանդով կձեռնարկի գրելու՝ շարունակելով սոված մնալ և ապրել այդ սոսկալի տանը։

— Այդ ի՞նչ հոտ է,—հանկարծ հարցրեց Ռութը։

— Հավանական է՝ սոլիտակիդենի։ Մարիան լվացք է անում,— պատասխանեց նա։— Ես արդեն սովոր եմ այդ հոտին։

— Ո՛չ, ո՛չ։ Ինչ-որ գարշելի և ծանր հոտ։

Նախքան պատասխանելը՝ Մարտինը հոտոտեց օդը։

— Ես ոչինչ չեմ զգում՝ բացի ծխախոտի հոտից,— հայտարարեց նա։

— Ճիշտ է։ Ի՞նչ զզվելի է։ Ինչո՞ւ դուք այդքան շատ եք ծխում, Մարտին։

— Ինքս էլ չգիտեմ։ Հավանական է, ես ձանձրանում եմ, երբ մենակ եմ, դրա համար էլ շատ եմ ծխում։ Առհասարակ դա հին սովորություն է։ Դեռ երեխա հասակից եմ ըսկըսել ծխել։

— Դա լավ սովորություն չի,— ասաց Ռութը։— Այստեղ պարզապես անկարելի է շնչել։

— Դրանում արդեն ծխախոտն է մեղավոր։ Ես ծխում եմ ամենաէժանը։ Սպասե՛ք, կստանամ քառասուն դոլլարի չեկ, այն ժամանակ ես կգնեմ այնպիսի ծխախոտ, որ կարելի է ծխել մինչև անգամ հրեշտակների մոտ։ Բայց այնքան էլ վատ չի — երեք օրում ընդունվել են իմ երկու գրվածքները։ Այդ քառասունհինգ դոլլարով ես կվճարեմ գրեթե իմ բոլոր պարտքերը։

— Դա երկու տարվա աշխատանքի փոխարե՞ն,— հարցրեց Ռութը։

— Ո՛չ, մի շաբաթից էլ պակաս ժամանակում։ Խնդրեմ, տվեք ինձ այդ գրքույկը, ա՛յ այն, որը դրած է սեղանի անկյունում, գորշ կազմով։

Մարտինը բացեց գրքույկը և արագ թերթեց այն։

— Այո՛, միանգամայն ճիշտ է։ Չորս օրում գրել եմ «Զանգերի զողանջը», իսկ երկու օրում «Ջրապտույտը»։ Քառասունհինգ դոլլար մի շաբաթվա աշխատանքի համար։ Ամիսը հարյուր ութսուն դոլլար։ Ես որտե՞ղ կարող էի ստանալ այդպիսի ռոճիկ։ Ընդսմին դա միայն սկիզբն է։ Ինձ հազար դոլլարն էլ քիչ է ձեր կյանքը սարքելու համար, ինչ-

պես հարկավոր է։ Հինգ հարյուր դոլլար ռոճիկն ինձ չի բավարարի։ Բայց, իբր սկզբնավորություն, քառասունհինգ դոլլարն էլ լավ է։ Թույլ տվեք ինձ դուրս գալ այդ ճամփան։ Այն ժամանակ կտեսնենք, թե ինչպե՞ս կծխան մեր բոլոր ծխնելույզները։

Ռութը չհասկացավ նրա նավաստիական այդ ժարգոնը. նրա այդ արտահայտությունը Ռութին հիշեցրեց նախկին թեման։

— Դուք հիմա էլ չափազանց շատ եք ծուխ հանում,— ասաց Ռութը։—Բանը ծխախոտի որակի մեջ չէ։ Ըստինքյան՝ ծխելը վատ սովորություն է՝ անկախ նրանից, թե ի՞նչ եք ծխում։ Դուք իսկական շրջիկ ծխան եք, և կամ գործող հրաբուխ։ Դա սոսկալի է։ Սիրելի Մարտին, դուք գիտեք, որ դա սոսկալի է։

Ռութը կռացավ դեպի նա, և Մարտինը, նայելով նրա մաքուր ծավի աչքերին ու քնքուշ դեմքին, նորից զգաց, որ արժանի չէ նրան։

— Ես ուզում եմ, որ դուք թողնեք ծխելը,— շշնջաց նա,—արեք այդ իմ սիրուն։

— Լա՛վ,— դուշեց նա,— ես կթողնեմ ծխելը։ Ես ձեզ համար կանեմ ամեն բան, որ դուք ցանկանում եք, սիրելիս, անուշիկս։

Հանկարծ Ռութին տիրեց մի գայթակղություն։ Տեսնելով, թե ինչպես հեշտ ու հնազանդ զիջումներ է անում Մարտինը, նա մտածեց. եթե հիմա պահանջի, որ Մարտինը թողնի գրելը, նա չի մերժի։ Բայց բառերը սառած մնացին Ռութի շրթունքներին։ Նա չկարողացավ արտասանել դրանք։ Զվճռվեց։ Դրա փոխարեն Ռութն ավելի ցած կռացավ և իր գլուխը դնելով նրա կրծքին՝ շշնջաց.

— Մարտին, սիրելիս, դա ինձ համար չեմ ասում, այլ ձեր օգտին։ Անկասկած, ձեզ համար վնասակար է ծխելը, հետո՝ լավ բան չի ստրուկ լինել, մինչև անգամ սովորության ստրուկ։

— Ես կլինեմ ձե՛ր ստրուկը,—ժպտաց նա։

— Լավ, այդ դեպքում ես կսկսեմ արձակել իմ հրամանները։

Ռութը նենգությամբ նայեց նրան՝ հոդու խորքում ափոսալով, որ չարտահայտեց իր գլխավոր ցանկությունը։

— Պատրաստ եմ հնազանդվելու ձերդ մեծության։

— Լա՛վ։ Ահա ձեզ իմ առաջին պատվերը. մի մոռանաք ածիլվել ամեն օր։ Նայեցեք, ինչպես ճանկռոտեցիք իմ այտերը։

Այդպիսով, ամեն ինչ վերջացավ փաղաքշանքով և ուրախ ծիծաղով։ Այսուամենայնիվ նա մի բան ձեռք բերեց, իսկ միանգամից չի կարելի սպասել ավելի շատ բան։ Ռութը գուտ կանացիորեն հպարտանում էր, որ ստիպեց Մարտինին հրաժարվել ծխելուց։ Հետևյալ անգամ կհամոզի նրան ծառայության մտնել. չէ՞ որ խոստացել է կատարել նրա բոլոր ցանկությունները։

Ռութը վեր կացավ և զբաղվեց սենյակը դիտելով։ Նա ուշադրություն դարձրեց լվացքի չվանների վրա փռած ծանոթագրություններին, ծանոթացավ այն խորհրդավոր հարմարանքի հետ, որի վրա կախված էր հեծանիվը, տխրությամբ տեսավ սեղանի տակ թափված գրվածքների կույտը. ինչքա՞ն ժամանակ վատնված է իզուր։ Կերոսինկան հիացրեց Ռութին, բայց հետո պարզվեց, որ մթերքների դարակները դատարկ են։

— Դուք այստեղ ոչ մի ուտելիք չունե՞ք։ Ահ, խեղճ մարդ,— բացագանչեց նա կարեկցաբար,— դուք, անկասկած քաղցած եք։

— Ես իմ մթերքները պահում եմ Մարիայի մոտ,— ասեց Մարտինը,— այնտեղ ավելի հարմար է։ Մի՛ վախենաք, ես սոված չեմ։ Նայեցե՛ք։

Ռութը մոտեցավ նրան և տեսավ, թե ինչպես Մարտինն արմունկը ծալեց, և շապիկի տակ ուռեցին երկաթի պես պինդ մկանները։ Այդ տեսարանը նրանում զզվանք առաջացրեց։ Ռութի զգայնությունը վիրավորվեց դրանով։ Սակայն սիրտը, արյունը, նրա էության ամեն մի նյարդը

ձգտում էին այդ հզոր մկաններին, և հպատակվելով ծանոթ, անհասկանալի ուժին, փոխանակ Մարտինից ետ քաշվելու, փարվեց նրան։ Եվ երբ Մարտինը նրան սեղմեց իր գրկում, Ռութի բանականությունը, որը դիտեր կյանքի միայն արտաքին արտահայտությունները, զայրանում և վրդովվում էր. իսկ սիրտը, կանացի սիրտը, որը դիտեր կյանքը, հաղթականորեն բերկրում էր։ Այդպիսի պահերին Ռութը սկսում էր զղալ՝ Մարտինի հանդեպ իր սիրո ամբողջ ուժը, որովհետև Մարտինի հզոր կրքոտ զրկախառնումները նրան տալիս էին անասելի վայելք։ Այդպիսի պահերին նրան ներելի էր թվում ամեն ինչ — իրեն սովորական իդեալներին դավաճանությունը, բոլոր հիմնական սկզբունքների խախտումը, մինչև անգամ լռելյայն անհնազանդությունն իր հորն ու մորը։ Նրանք չէին ուզում, որ Ռութն ամուսնանա այդ մարդու հետ։ Նրա սերը դեպի Մարտինը ինչ-որ ամոթալի բան էր թվում նրանց։ Այդ սերը երբեմն ամոթալի էր թվում նաև իրեն՝ Ռութին, երբ նա Մարտինից հեռու էր, և նորից դառնում էր սառը և լրջմիտ Ռութը։ Բայց երբ Մարտինը նրա կողքին էր, Ռութը սիրում էր նրան. ճիշտ է, որ երբեմն այդ սերը լի էր դառնություններով, բայց և այնպես դա սեր էր՝ տիրական ու անհաղթելի։

— Այս գրիպը դատարկ բան է,— ասում էր Մարտինը, —ճիշտ է, որ մի քիչ գլուխս ցավում է և դողացնում եմ, բայց արևադարձային տենդի համեմատությամբ դա չնչին բան է։

— Իսկ դուք հիվանդացե՞լ եք արևադարձային տենդով, — հարցրեց Ռութը մտացրիվ, ջանալով երկարաձգել ինքնամոռացության երջանկավետ զգացումը, որը նա ապրում էր Մարտինի գրկում։ Ռութը համարյա չէր լսում, թե ի՛նչ էր պատասխանում նա, բայց հանկարծ մի նախադասություն գրավեց նրա ուշադրությունը։ Մարտինը հիվանդացել է արևադարձային տենդով բորոտների գաղտնի գաղութում, Հավանայի կղզիներից մեկում։

— Դուք ինչպե՞ս ընկաք այնտեղ,— հարցրեց Ռութը։

Մարտինի այդպիսի արքայական անտարբերությունը դեպի իր անձը Ռութին թվում էր սճրապարտ մի բան։

— Պատահաբար,— պատասխանեց Մարտինը,— ոչ մի բորոտ իմ մտքովն էլ չէր անցնում։ Մի անգամ ես դասալիք եղա երկկայմանավից, լողալով հասա մինչև ծովափը և դնացի կղզու խորքերը, որպեսզի ինձ համար ապահով ապաստարան գտնեմ։ Երեք օր սնվեցի դուավայի մրգերով, վայրի խնձորներով և բանաններով — առհասարակ ամեն ինչով, որ բուսնում է ջունգլիներում։ Չորրորդ օրը ես դուրս եկա մի կածանի վրա, որը տանում էր դեպի լեռը, և այդտեղ ես նկատեցի մարդկային ոտքերի թարմ հետքեր։ Մի տեղում կածանն անցնում էր լեռան գագաթով՝ այնպես սուր, ինչպես դանակի բերանը։ Այնտեղ լայնքը երեք ոտնաչափից ավելի չէր, իսկ երկու կողմից իրենց երեսները բացել էին մի քանի հարյուր ոտնաչափ խորությամբ անդունդներ։ Այստեղ մի լավ զինված մարդ կարող էր ետ մղել հարյուր հազարանոց մի բանակի հարձակումը։ Դա միակ ճամփան էր, որը տանում էր կղզու խորքը։ Երեք ժամից ես հասա մի փոքր հովիտ՝ սառած լավայի կուտակումների միջև։ Այնտեղ աճում էին պտղատու ծառեր և գտնվում էին եղեգից շինած յոթ կամ ութ հյուղակներ։ Հենց որ տեսա նրա բնակիչներին, հասկացա, թե ուր եմ ընկել։ Բավական էր մի հայացք գցել նրանց վրա։

— Այդ դեպքում դուք ի՞նչ արիք,— հարցրեց Ռութը՝ լսելով, որպես Դեզդեմոնա, վախեցած, բայց կախարդված։

— Ի՞նչ կարող էին անել։ Նրանց ավագն էր մի բարեհոգի ծերուկ, որն իշխում էր իբր լիազոր արքա։ Նա էր գտել այդ հովիտը և հիմնել այնտեղ գաղութ, ինչ-որ, հասկանալի է, հակաօրինական էր։ Բայց նրանք ունեին հրացաններ և մարտական արկեր, իսկ բոլոր կանակները շատ ճարպիկ նշանաձիգներ են։ Նրանք սովոր են որսալ վարազներ և վայրի կատուներ։ Այնպես որ փախչելու մասին չէր էլ կարելի մտածել։ Մարտին Իդենը հարկադրվեց մնալ ու ապրել այնտեղ երեք ամիս։

— Բայց ինչպե՞ս հաջողվեց ձեզ փրկվել։

— Ես հիմա էլ այնտեղ նստած կլինեի, եթե չլիներ մի աղջիկ՝ ազգությամբ կես-չինացի, քառորդ-սպիտակ և քառորդ հավանացի։ Նա, խեղճը, շատ սիրուն էր, մինչև անգամ զարգացած։ Հոնոլուլուում նրա մայրը առնվազն մի միլիոնի կարողություն ուներ։ Ահա այդ աղջիկը վերջ ի վերջո ապատեց ինձ։ Հասկանո՞ւմ եք, նրա մայրը դրամ էր տալիս գաղութի ապրուստը հոգալու համար, այդ պատճառով էլ աղջիկը չէր վախենում, որ նրան կպատժեն։ Բայց նա ինձանից երդում վերցրեց, որ ապաստարանի տեղը ոչ ոքի չեմ հայտնի։ Եվ ես այդ երդումը պահեցի։ Հիմա առաջին անգամը խոսում եմ այդ մասին։ Եվ խեղճ աղջկա մոտ այն ժամանակ նոր էին սկսել բորոտության առաջին նշանները։ Նրա աջ ձեռքի մատները կուչ էին եկել և արմունկից վերև կար մի փոքր բիծ։ Ուրիշ ոչինչ։ Հիմա նա, հավանական է, արդեն մեռած կլինի։

— Բայց դուք ինչպե՞ս չէիք վախենում։ Եվ ի՞նչ բախտավորություն, որ ձեզ հաջողվել է չվարակվել այդ սոսկալի հիվանդությամբ։

— Սկզբում ես բավական վախենում էի,— խոստովանվեց նա։— Բայց հետո վարժվեցի։ Բացի այդ, ես շատ էի խղճում այդ դժբախտ աղջկան, այնպես որ մոռացա իմ վախը։ Նա այնքան լավն էր հոգով ու մարմնով, իսկ հիվանդությունը դեռ նոր էր կպել նրան։ Եվ նա գիտեր, որ դատապարտված է այլևս չտեսնելու մարդկանց, նախնադարյան վայրենու կյանք վարելու և ողջ-ողջ աստիճանաբար քայքայվելու։ Դուք չեք էլ կարող երևակայել, թե բորոտությունն ինչքա՞ն սարսափելի բան է։

— Խե՞ղճ աղջիկ,— շշնջաց Ռութը։— Այնուամենայնիվ տարօրինակ է, որ նա ձեզ այնպես բաց է թողել։

— Ինչո՞ւ տարօրինակ է,— հարցրեց Մարտինը՝ չհասկանալով Ռութի ակնարկությունը։

— Նրա համար, որ այդ աղջիկը, անկասկած, սիրում էր

ձեզ,— շարունակեց Ռութը նույնպես մեղմ։— Անկեղծ ասացեք, նա սիրո՞ւմ էր ձեզ։

Արևկիզուկը վաղուց էր անցել Մարտինի երեսից՝ շնորհիվ մշտական աշխատանքի և միայնակեցության, իսկ վերջերս շատ էր գունատվել քաղցից ու հիվանդությունից. հիմա այդ գունատության միջից սկսեց կամաց-կամաց կարմրություն երևալ։ Նա բացեց բերանը, որ խոսի, բայց Ռութը կանգնեցրեց նրան.

— Օ՜, մի պատասխանեք, խնդրեմ։ Դա անհրաժեշտ չէ. — բացագանչեց նա ծիծաղելով։

Բայց Մարտինին թվաց, որ նրա ծիծաղում հնչեցին ինչոր մետաղային շեշտեր, իսկ աչքերը սառը ցոլքով փայլատակեցին։ Մարտինը հիշեց այն փոթորիկը, որին բռնվել էր նա մի անգամ խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում։ Մի ակնթարթ նրա աչքին երևացին մրրիկը պարզկա գիշերով և լիալուսնի սառը լույսի տակ լեռնացող կոհակները։ Դրանից անմիջապես հետո նա տեսավ բորոտների գաղութի աղջիկան և հիշեց, որ նա հնարավորություն տվեց իրեն փախչելու միայն նրա համար, որ սիրում էր նրան։

— Նա ազնվասիրտ էր,— ասաց Մարտինը պարզապես, — նա փրկեց իմ կյանքը։

Թվում էր, թե դրանով միջադեպը փակվել էր, բայց Մարտինը հանկարծ լսեց զսպված հեկեկանք և տեսավ, որ Ռութը, կռնակը դարձրած նրան, նայում է պատուհանին։ Հաջորդ պահին Ռութը դարձյալ նայեց Մարտինի աչքերին, և նրա դեմքին փոթորկի հետքն անգամ չկար։

— Ես այնքան հիմարն եմ,— սրտաճմլիկ ասաց Ռութը, — բայց չեմ կարող հաղթահարել այդ։ Ես շատ եմ սիրում ձեզ, Մարտին, շատ եմ սիրում։ Թերևս աստիճանաբար վարժվեմ, բայց հիմա ես շատ եմ խանդում ձեր անցյալի բոլոր ուրվականներին։ Իսկ ձեր անցյալը լի է ուրվականներով։ Այո՛, այո՛, այլ կերպ չի էլ կարող լինել,— արագ շարունակեց նա՝ չթողնելով, որ Մարտինն առարկի։— Իսկ խեղճ Արտուրն ինձ նշաններ է անում։ Նա ձանձրացավ

սպասելով։ Մնաք բարով, սիրելիս։ Դեղավաճառի մոտ կա մի տեսակ փոշի, որը օգնում է ետ վարժվելու ծխելուց,— ասաց Ռութն արդեն դռնից,— ես կուղարկեմ այն ձեզ։

Ռութն իր ետևից փակեց դուռը, հետո նորից կիսով չափ բանալով այն՝

— Սիրո՞ւմ եմ, սիրո՞ւմ եմ,— շշնջաց նա և միայն դրանից հետո հեռացավ։

Մարիան հարդանքով ուղեկցեց Ռութին մինչև կառքը՝ աշխատելով ճամփին հետաքննել նրա զգեստի բոլոր մանրամասնությունները։ Մարիան երբեք չէր տեսել այդպիսի տարապ, որը նրան անսովոր գեղեցիկ թվաց։ Հիասթափված երեխաների բազմությունը նայում էր կառքի ետևից՝ մինչև որ սա անհետացավ շրջադարձում։ Հետևյալ պահին բոլորի ուշադրության առարկան դարձավ Մարիան, որը միանգամից դարձավ թաղի ամենակարևոր անձնավորությունը։ Բայց նրա սեփական երեխաներից մեկը փչացրեց ամբողջ գործը՝ հայտարարելով, որ այդ նշանավոր հյուրերն իսկի էլ Մարիայի մոտ չէին եկել, այլ նրա կենվորի մոտ։ Դրանից հետո Մարիան առաջվա պես նորից ոչնչություն դարձավ, իսկ Մարտինը սկսեց նկատել բոլոր դրացիների կողմից չափազանցված հարգանք իր անձի հանդեպ։ Մարիայի աչքին նա հարյուր տոկոսով բարձրացավ, և եթե խանութպանը նույնպես տեսած լիներ հիանալի կառքը, նա, անկասկած, Մարտինին էլի վարկ կբանար երեք դոլլար ութսունհինգ ցենտի։

ԳԼՈՒԽ XXVII

Երջանկության արևը ծագեց Մարտինի համար։ Ռութի այցելության հաջորդող օրն իսկ նա երեք դոլլարի չեկ ստացավ Նյու-Յորքի բուլվարային մի փոքր ժուռնալից՝ իր գրած երեք տրիոլետի համար։ Երկու օր անց Չիկագոյի մի թերթ ընդունեց նրա «Գանձ որոնողները», խոստանալով վճարել տասը դոլլար՝ հենց որ կտպվի։ Այդ գինը բարձր չէր, բայց

չէ՞ որ դա նրա առաջին գրվածքն է,— նրան հուզող մտքերը թղթի վրա արտահայտելու առաջին փորձը։ Վերջապես պատանիների համար գրած նրա արկածային վիպակն ընդունվեց «Պատանեկություն և չափահասություն» անունով մի ամսաթերթի կողմից։ Ճիշտ է, վիպակը քսանմեկ հազար բառից է բաղկացած, իսկ նրան ընդամենը տասնվեց գոլլար են առաջարկել դրա համար, այսինքն մոտավորապես յոթանասունհինգ ցենտ հազար բառին, այն էլ տպվելուց հետո—բայց չէ՞ որ դա նրա երկրորդ գրական փորձն է, և Մարտինն ինքը այժմ շատ լավ տեսնում է, թե որքա՛ն թերություններ ունի այդ գրվածքը։

Սակայն մինչև անգամ նրա վաղ գրվածքներում միջակության նշաններ չկային։ Ավելի շուտ՝նրանց մեջ չափազանց շատ ուժ կար—սկսնակի ավելորդ ուժ, որով նա պատրաստ է հրանոթներից կրակել ճնճղուկներին։ Մարտինն ուրախ էր, որ իրեն հաջողվեց թեկուզ էժան գնով վաճառել իր վաղ շրջանի գրվածքները։ Նա գիտեր նրանց իսկական արժեքը, և այդ բանը հասկանալու համար առանձնապես շատ ժամանակի կարիք չունեցավ։ Բոլոր հույսերը դրել էր իր վերջին գրվածքների վրա։ Նա ուզում էր լինել ոչ թե պարզապես ժուռնալների դրող։ Ուզում էր զինվել իսկական գեղարվեստական ստեղծագործության բոլոր եղանակներով։ Բայց նա չէր ուզում զոհաբերել իր ուժը։ Ընդհակառակը, նրա գիտակցական նպատակն էր ավելի շատացնել այն՝ սանձահարելով նրա չափազանցությունը։ Նա չկորցրեց և ռեալիզմի նկատմամբ իր սերը։ Իր բոլոր գրվածքներում նա ձգտում էր զուգակցել ռեալիզմը՝ երևակայության ստեղծած հնարանքներով ու գեղեցկություններով։ Նա աշխատում էր ձեռք բերել՝ մարդու և նրա ձգտումների նկատմամբ հավատքով համակված, ոգեշնչված մի ռեալիզմ։ Նա ուզում էր ցույց տալ կյանքն այնպես, ինչպես նա կա, խռովահույզ ոգու բոլոր որոնումներով։

Ընթերցելով գրքեր՝ Մարտինն եզրակացրեց, որ գոյություն ունեն գրական երկու դպրոցներ։ Մեկը պատկերաց-

նում է մարդուն, որպես ինչ-որ աստվածություն՝ միանգամայն անդիտանալով նրա մարդկային բնությունը. իսկ մյուսը, ընդհակառակը, մարդու մեջ տեսնում էր միայն գազանին և չէր ուզում ճանաչել նրա հոգեկան ձգտումներն ու մեծ հնարավորությունները։ Մարտինը չէր կարող հարել այդ դպրոցներից ոչ մեկին՝ համարելով նրանք չափազանց միակողմանի։ Նրա կարծիքով, հնարավոր էր ճշմարտության առավել մոտեցող մի կոմպրոմիս, որը, առանց հետևելու «աստվածության» դպրոցին, միաժամանակ չէր հարում և «անասունի» դպրոցի կենդանական կոպտությանը։

Իր «Արկած» պատմվածքում, որը ժամանակին կարդացել է Ռուբին, Մարտինը փորձեց իրագործել գեղարվեստական ճշմարտության իր իդեալը, իսկ «Աստված ու գազան» հոդվածում նա պարզել է իր տեսական հայացքներն այդ մասին։

Սակայն «Արկածն» ու մյուս բոլոր պատմվածքները, որոնք նա համարում էր լավագույնները, շարունակում էին թափառել մի խմբագրությունից մյուսը, իսկ իր վաղ գրվածքներին Մարտինը ոչ մի նշանակություն չէր տալիս՝ միայն ուրախանալով նրանց համար ստացվող հոնորարի վրա. նա առանձնապես բարձր չէր գնահատում և իր «սարսափելի» պատմվածքները, որոնցից երկուսը վերջերս ընդունվեցին ժուռնալների կողմից։ Այդ պատմվածքները զուտ մտացածին բաներ էին, որոնց տրված էր իրականության տեսք, և գրականումն էլ կայանում էր նրանց ուժը։ Ցնորականի ու անհավանականի ճշմարտանման պատկերացումը Մարտինը համարում էր մի ճարպիկ տրյուկ, ուրիշ ոչինչ։ Այդպիսի գրվածքները չի կարելի դասել մեծ գրականության շարքը։ Նրանց գեղարվեստական արտահայտչությունը կարող էր մեծ լինել, բայց Մարտինը բարձր չէր գնահատում գեղարվեստական արտահայտչությունը, եթե նա չէր համապատասխանում կյանքի ճշմարտությանը։ Տրյուկը կայանում էր՝ արհեստական մտացածինին կենդանի կյանքի դիմակ հագցնելու մեջ, և Մարտինը դիմել է այդ տրյուկին իր կես դյուժին

«տարսափելի» պատմվածքներում, որոնք նա գրել է՝ նախքան «Արկածի», «Ուրախության», «Կաթսայի» և «Կյանքի գինու» բարձրությանը հասնելը։

Տրիոլետների համար ստացված երեք դոլլարով կարելի էր մի կերպ ապրել մինչև «Սպիտակ Մկան» չեկի ստացվելը։ Նա մանրեց այդ երեք դոլլարանոց չեկը կասկածոտ պորտուգալացու մոտ՝ վճարելով նրան իր պարտքի հաշվին մի դոլլար և մնացած երկու դոլլարը բաժանելով հացավաճառի և բանջարավաճառի միջև։ Մարտինը դեռ այնքան հարուստ չէր, որ միս ուտեր, և սնվում էր բավական աղքատիկ, երբ հանկարծ ստացվեց «Սպիտակ Մկան» անհամբեր սպասվող չեկը։ Մարտինը չէր իմանում՝ ինչ անել։ Նա կյանքումը ոչ մի անգամ չէր մտել բանկ, մանավանդ դրամական գործերով, և հիմա նա համակվեց երեխայական ցանկությամբ՝ մանրել այդ քառասուն դոլլարանոց չեկը Օկլենդի մեծ բանկերից մեկում։ Բայց գործնական առողջ բանականությունը խորհուրդ էր տալիս նրան մանրել այդ չեկը նպարավաճառի մոտ և այդ կերպով պահպանել ու ավելացնել իր վարկը։ Մարտինը մեծ դժկամությամբ գնաց նպարավաճառի մոտ և, չեկը մանրելով, ամբողջովին հատուցեց իր պարտքը։ Նա դուրս եկավ նրա մոտից՝ գրպանը դրամով լի, և գնաց հաշիվները մաքրելու իր մյուս պարտատերերի հետ. հաշիվ տեսավ հացավաճառի և մսավաճառի հետ, վճարեց Մարիային անցած ամսվա և այս ամսվա համար նախօրոք, դուրս գրեց հեծանիվը, կոստյումը, վճարեց գրամհեքենայի համար։ Բոլոր այդ վճարումներից հետո նրա գրպանում մընաց միայն երեք դոլլար։

Բայց այդ փոքր գումարն էլ Մարտինին թվաց մի ամբողջ կարողություն։ Դուրս գրելով կոստյումը՝ նա անմիջապես գնաց Ռութի մոտ։ Ճանապարհին նա չէր կարողանում իրեն զսպել մերթ ընդ մերթ գրպանի արծաթ դրամները զրնգացնելուց։ Ինչպես որ սոված մարդը չի կարող հեռացնել իր հայացքը կերակուրից, այնպես էլ Մարտինը, որի գրպանում վաղուց ոչ մի ցենտ չկար, չէր կարողանում իր ձեռքից բաց

թողնել դրամները։ Նա ոչ ագահ էր, ոչ էլ կծծի, բայց դրամը նրա համար ավելի մեծ նշանակություն ուներ, քան դոլլարների և ցենտերի որոշ քանակությունն։ Նա նշանակում էր կյանքում հաջողություն, և դրամների վրա դրոշմված արծիվները Մարտինին թվում էին հաղթանակի թևավոր ավետաբերներ։

Աննկատելիորեն Մարտինին վերադարձավ իր այն համոզումը, թե աշխարհը հիանալի է։ Աշխարհը սկսեց թվալ նրան մինչև անգամ ավելի գեղեցիկ։ Երկար շաբաթների ընթացքում դա մռայլ և տխուր աշխարհ էր. բայց հիմա, երբ բոլոր պարտքերը վճարված են, գրպանում դեռ զնգզնգում է երեք դոլլար, իսկ սրտում ամրապնդվում է հաջողության հավատը, արևը Մարտինին նորից թվաց պայծառ ու կիզիչ, և մինչև անգամ հանկարծ սկսված տեղատարափ անձրևը միայն զվարթ ժպիտ առաջացրեց նրա մեջ։ Իր սովածության շրջանում Մարտինը շարունակ մտածում էր՝ ամբողջ աշխարհում ցիրուցան հազարավոր սովածների մասին. իսկ հիմա, երբ կուշտ էր, նրանց մասին մտածելն արդեն չէր վրդովում նրա միտքը. հիմա համակված իր սիրով, նա սկսեց մտածել աշխարհում ապրող անհամար սիրահարների մասին։ Նրա ուղեղում աղոտ կերպով ծագեցին սիրո լիրիկայի մոտիվներ և, ստեղծագործական ավյունով տարված, նա տրամվայով երկու թաղ ավելի ճանապարհ գնաց։

Մորզերի տանը Մարտինը հանդիպեց շատ մարդկանց։ Սան-Ռաֆայելից Ռութի մոտ հյուր էին եկել նրա մորաքրոջ երկու դուստրերը և, այդ պատրվակից օգտվելով, միսիս Մորզը վճռեց իրագործել իր պլանը — շրջապատել Ռութին երիտասարդներով։ Այդ նենդ պլանի կենսագործումը սկսվեց Մարտինի հարկադրված բացակայության ժամանակ, և հիմա ռազմական գործողությունների արդեն ամենաթեժ ժամանակն էր։ Միսիս Մորզը նպատակ էր դրել իր տունը հրավիրել կարիերա անող կամ սրած մարդկանց։ Այդպիսով հյուրասենյակում գտնվում էին — բացի Դորոտիից և Ֆլորենսից — համալսարանի երկու պրոֆեսորներ, մեկը լատինա-

գետ, իսկ մյուսը՝ անգլիական բանասիրության մասնագետ, բանակի երիտասարդ մի սպա—Ռութի դպրոցական ընկերը, որը նոր էր վերադարձել Ֆիլիպինյան կղզիներից, Մելվիլ ազգանունով մի երիտասարդ — Սան-Ֆրանցիսկոյի միացյալ տրեստների պետ Ջոզեֆ Պերկինսի անձնական բարտուղարը, վերջապես բանկի գանձապահ Չարլի Հեպգոուդը — երիտասարդ տեսքով, երեսունհինգ տարեկան, Ստենֆորդի համալսարանի սան, Նեղոսի և Միացյալ ակումբների անդամ, ռեսպուբլիկական պարտիայի լիդեր, որ առաջ է քաշվել վերջին ընտրություններին,— մի խոսքով ամեն տեսակետից շատ խոստմնալից։ Տիկիններից մեկը նրկարիչ-պորտրետիստ էր, մյուսը՝ պրոֆեսիոնալ երաժիշտ, իսկ երրորդն ուներ սոցիոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան, որը անուն էր հանել Սան-Ֆրանցիսկոյի խրլանկյուններում իր կազմակերպչական գործունեությամբ։ Սակայն միսիս Մորզի պլանում կանայք առանձին դեր չէին խաղում։ Նրանք ինչ-որ անհրաժեշտ լրացումներ էին։ Չէ՞ որ ինչ-որ բանով պետք էր զբաղվել և տուն բերել կարիերա անող տղամարդկանց։

— Խոսակցության ժամանակ մի՛ տաքանաք,— շշնջաց Ռութը Մարտինին՝ նախքան նրան ծանոթացնելը ներկաների հետ։ Սկզբում Մարտինը զգում էր իրեն շատ անհարմար. նրան վերադարձավ իր նախկին սարսափը, որ իր շարժվելու ժամանակ կարող է վնասել ինչ-որ կարասի կամ առարկա։ Բացի այդ, այդ հասարակությունը նրան ճնշում էր։ Նա մինչ այդ երբեք չէր հանդիպել այդքան ընտիր մարդկանց։ Նրա վրա առանձնապես ուժեղ տպավորություն թողեց բանկի գանձապահ Հեպգոուդը, և Մարտինը որոշեց նրա հետ ավելի մոտիկ ծանոթանալ, եթե առիթը ներկայանա։ Արտաքին ամաչկոտության տակ, Մարտինի մեջ առաջվա պես ուժեղ էր նրա հղոր «ես»ը, և նա անպայման ուզում էր չափել իր ուժերն այդ տղամարդկանց հետ և իմանալ, ի՛նչ են սովորել նրանք գրքերում և կյանքում, և ի՛նչ կարող է սովորել ինքը նրանցից։

Ռութը հաճախ նայում էր Մարտինին և շատ էր զարմացած և ուրախացած, որ նա համարձակ խոսակցում է նրա մորաքրոջ դուստրերի հետ։ Նա իրոք որ համարձակ էր դարձել իրեն, բայց միայն քանի դեռ նստած էր, որովհետև կարող էր չվախենալ իր ուսերից։ Ռութը գիտեր, որ նրա մորաքրոջ երկու դուստրերն էլ խելացի և փայլուն խոսակիցներ են, և զարմանում էր, թե ինչպես նրանք, անկողին մտնելիս զրվում էին Մարտինին։ Մարտինն ինքը, իր շրջանակում վարժված լինելով արտասանի և ընկերության սիրուն ու հոգին ներկայացնողի դերին, բոլոր երեկույթներում և կիրակնօրյա դաշտահանդեսներում, դատավ, որ այստեղ էլ կարելի է լինել ուրախ և արտասանություններ անել։ Իսկ հաջողություններ կանգնած էր իր թիկունքին, խրախուսիչ կերպով խփում էր իր ուսերին և խոստանում էր հաջողություն. այդ պատճառով էլ Մարտինը, բոլորովին առանց շփոթվելու, ծիծաղում էր ինքը և ծիծաղեցնում էր ուրիշներին։

Այնուամենայնիվ երեկույթի վերջում Ռութի երկյուղն արդարացավ։ Մարտինը խոսակցության բռնվեց պրոֆեսոր Կոլդուելի հետ և թեկուզ դեռ չէր շարժում ձեռքերը, բայց Ռութն արդեն նկատեց նրա աչքերում մի առանձնահատուկ փայլ, նկատեց, որ ձայնն ասես ճանապարհ բարձրանում է և այտերը շառագունում են։ Չկարողանալով պահել իրեն և գսպել իր տաքարյունությունը, Մարտինը խիստ հակասատկերն էր երիտասարդ ինքնագոհ պրոֆեսորի։

Սակայն Մարտինը մեծ կարևորություն չէր տալիս արտաքին տեսքին։ Նա միանգամից տեսավ, թե ինչպե՛ս կրթված է և ինչպիսի՛ բազմակողմանի դարդացում ունի իր երիտասարդ խոսակիցը։ Բացի այդ, պրոֆեսոր Կոլդուելն այնպիսին չէր, ինչպես Մարտինը պատկերացնում էր անգլիական բանասիրության ամեն մի պրոֆեսորի։ Մարտինն անպայման ուզում էր ստիպել պրոֆեսորին խոսել նրա մասնագիտության նկատմամբ, և թեպետ վերջինս սկզբում խուսափում էր այդ բանից, բայց Մարտինը վերջ ի վերջո իր նպատակին հասավ։ Մարտինը չէր հասկանում, թե ինչո՞ւ

հասարակության մեջ ընդունված չէ խոսել պրոֆեսիոնալ նյութերի մասին։

— Չէ՞ որ դա արտասովոր բան է,— ասում էր նա Ռութին այդ երեկույթից դեռ շատ առաջ,— ինչո՞ւ չի կարելի խոսել պրոֆեսիոնալ նյութերի մասին։ Էլ ի՞նչ կարիք կա մարդկանց հավաքել մի տեղ, եթե ոչ նրա համար, որ նրանք հայտարարեն իրենց լավագույն կողմը։ Իսկ մարդու մոտ լավագույնը միշտ նա է, ինչ նա ամենալավն է հասկանում, որի մեջ նա մասնագիտացել է, որին հատկացրել է իր ողջ կյանքը, որի մասին մտածում է, մինչև անդամ երազում է դիշեր ու ցերեկ։ Երևակայեցեք, որ միստեր Բեթլերը, ենթարկվելով ընդհանուրի կողմից ընդունված կանոններին հանկարծ ասկսեր պարզել իր հայացքները Պոլ Վեռլենի, գերմանական դրամայի կամ դ'Աննունցիոյի վեպերի մասին։ Բոլորը ձանձրույթից կմեռնեին։ Օրինակի համար, ես, եթե լսեի միստեր Բեթլերին, կգերադասեի, որ նա խոսեր իր իրավագիտության մասին։ Վերջ ի վերջո այդ ասպարեզում նա ամենից լավն է։ Կյանքը շատ կարճ է, և ես ուզում եմ միշտ վերցնել մարդուց լավագույնը, որ կա նրանում։

— Սակայն,— առարկել էր Ռութը,— կան այնպիսի հարցեր, որոնք հետաքրքրական են հավասարապես բոլորին։

— Ո՛չ, դրանում դուք սխալվում եք,— առարկել էր Մարտինն իր հերթին,— ընկերության մեջ ամեն մի մարդ և ամեն մի խմբակ միշտ օրինակ են վերցնում նրանցից, որոնք դիրքով իրենցից բարձր են։—Իսկ ընկերության մեջ ո՞վ է դրավում ամենաբարձր դիրքը։— Դատարկապորտները։ Հարուստ դատարկապորտները։ Նրանք սովորաբար գաղափար էլ չունեն այն բաների մասին, որոնք ծանոթ են որևէ գործով զբաղվող մարդկանց։ Իհարկե, նրանց համար ձանձրալի է խոսել այդպիսի բաների մասին, և դրա համար էլ նրանք հայտարարում են, որ դա պրոֆեսիոնալ խոսակցություն է, որի շուրջն անհարմար է զրույց անել հասարակության մեջ։ Եվ նրանք էլ որոշում են, թե ինչի՛ մասին կարելի է խոսակցել հասարակության մեջ։ Կարելի է խոսակցել նոր օպերա-

յի, նոր վեպերի, խաղաքարտի, բիլիարդի, կոկտեյլների, ավտոմոբիլի, զբոսանավերի, ձիերի ցուցահանդեսների, Կարմրախայտ որսալու և այլնի մասին, այսինքն այն բոլորի մասին,— նկատի ունեցեք,— ինչի մասին դատարկապորտներն առհասարակ գաղափար ունեն։ Ըստ էության, դա դատարկապորտների պրոֆեսիոնալ խոսակցություն է։ Ամենից ծիծաղելին այն է, որ գիտնական կամ գիտնական աստիճանի հավակնող մարդիկ այս դեպքում ենթարկվում են հիմարների և դատարկապորտների կարծիքին։ Ինչ վերաբերում է ինձ, ես ուզում եմ մարդկանցից անպայման վերցնել այն, ինչ լավագույնն է նրանց մեջ։ Անվանեցեք այդ պրոֆեսիոնալ խոսակցություն, գռեհկություն և կամ ի՛նչ որ ուզում եք։

Սակայն Ռութը չէր հասկանում Մարտինին։ Նրա հարձակումները հանրության կողմից ընդունված բաների վրա Ռութը միշտ էլ համարում էր պարզապես կամակորություն և համառություն։

Այսպես թե այնպես, Մարտինը վարակեց պրոֆեսոր Կոլդուելին իր լրջությամբ և ստիպեց խոսել նրան ավելի մատչելի նյութերի մասին։ Ռութը, մոտենալով նրանց, լսեց, որ Մարտինը ասում էր.

— Բայց Կալիֆորնիայի համալսարանում դուք, հավանական է, չեք վճռվում արտահայտել այդպիսի ըմբոստ մտքեր։

Պրոֆեսոր Կուլդուելը ուսերը թոթվեց։

— Ես ազնիվ հարկատու եմ և օրինապահ քաղաքական գործիչ։ Մեզ նշանակում է Սակրամենտոն[1], և մենք պարտավոր ենք հաշվի առնել Սակրամենտոն, հաշվի առնել նահանգի կառավարությունը, պարտիական մամուլը և մինչև անգամ երկու պարտիաների մամուլը։

— Դա պարզ է, բայց դուք պիտի զգաք ձեզ ինչպես ջրից հանված ձուկ,— բացագանչեց Մարտինը։

---

1 Կալիֆորնիա նահանգի մայրաքաղաքը։

- Մեզ մոտ, համալսարանի ավագանում ինձպեսները քիչ են։ Երբեմն ինձ թվում է, որ ես իրոք ցամաքը դուրս գցված ձուկ եմ, և սկսում եմ մտածել, որ ինձ համար ավելի լավ և ազատ կլիներ ինչ-որ տեղ Փարիզում, Լատինական թաղի գինետանը, ուր հավաքվում է բոհեման ու կլտրետ խմում։ Ես կճաշեի Լժանագին ճաշարանում և կարտահայտեի ծայրահեղ համարձակ հայացքներ ողջ աշխարհաստեղծության մասին։ Երբեմն ինձ թվում է, որ ես ի բնե ռադիկալ եմ։ Բայց, ավա՞ղ, կան այնքան շատ հարցեր, որոնց մեջ ես ոչ մի կերպ վստահ չեմ։ Ես երկչոտ եմ զառնում, երբ երես առ երես ընդհարվում եմ կյանքի հիմնական առեղծվածների՝ մարդկային կյանքի հետ։

Եվ, նրան լսելով, Մարտինն ակամա հիշեց «Պասատային քամու երգը».

Տաք կեսօրին ես ամենադիմացկունն եմ,
Բայց մառախուղում լուսնի լույսով
Ես պատրաստ եմ ուռեցնել առագաստները.

Եվ երգի բառերը կրկնելով, Մարտինը նայում էր պրոֆեսորին և նրա մեջ դտնում էր ինչ-որ ընդհանուր բան անփոփոխ, ցուրտ և ուժեղ հյուսիս-արևելյան պասատի հետ։ Պրոֆեսորը նույնպես հավասարակշռված էր ու հուսալի, ռակայն նրանում կար ինչ-որ խռովիչ բան։ Մարտինը մտածում էր, որ պրոֆեսորը, հավանական է, երբեք չի արտահայտվում մինչև վերջ ճիշտ այնպես, ինչպես հյուսիս-արևելյան պասատը երբեք չի փչում ամբողջ թափով, այլ միշտ ունենում է պահեստի ուժ, որը երբեք չի կիրառում։ Մարտինի երևակայությունն առաջվա պես վառ էր։ Նրա ուղեղը կարծես փասաերի հիշողության և երևակայության ահագին շտեմարան էր, որի մուտքը բաց էր։ Ինչ էլ որ պատահելիս լիներ, Մարտինն իր այդ շտեմարանից մի ակնթարթում հանում էր ինչ-որ նման, կամ հակադիր բան և մարմնավորում էր այդ վառ տեսիլքներում։ Դա կատարվում էր միանդա-

մայն ինքնաբերաբար, և իրական կյանքի ամեն մի դեպքին անվրեպ ուղեկցում էին ֆանտազիայով ստեղծված պատկերներ։ Ինչպես այն ժամանակ Ռուֆի աչքերի փայլը նրան հիշեցրեց լուսնկա գիշերվա փոթորիկը, այնպես էլ հիմա պրոֆեսոր Կոլդուելը ողեկոչեց օվկիանոսի պատկերը. սպիտակ կատարներով կոհակները, մայր մանող արևից ծիրանագույն ներկված, քշվում-տարվում են հյուսիս-արևելյան պասատով։ Այդպես ամեն բոպե նրա աչքի առաջ ներկայանում էին զանազան տեսիլքներ և ոչ միայն չէին խանգարում նրա մտքերի ընթացքը, այլ՝ ընդհակառակը, ավելի հասկանալի էին դարձնում նրանք։ Այդ տեսիլքները արձագանքն էին այն ամենի, ինչ ասրել է Մարտինը ժամանակին, ինչ նա տեսել է և կարդացել գրքերում, և դրանք միշտ, նրա պարթուն թե քնած ժամանակ, կուտակվում էին նրա ուղեղում։

Եվ հիմա, լսելով պրոֆեսոր Կոլդուելի — խելացի և զարգացած մարդու — սահուն խոսքերը, Մարտինն ակամա հիշեց իր անցյալը։ Նա տեսավ իրեն իր պատանեկության արշալույսին իբր իսկական խուլիգան, խիզախորեն ծռած ստետսոնական գլխարկը և երկու շարք կոճակներով կուրտիկ հագին, երբ նրա իդեալն էին կոպտություն ու ամեն տեսակի անկարգություններ՝ այն չափով, որ թույլատրում էր ոստիկանությունը։ Մարտինը չէր փորձում որևէ բան մեղմացնել կամ կոկել այդ հիշողություններում։ Այո, իր կյանքի որոշ ժամանակաշրջանում նա ամենասովորական խուլիգաններից էր, ոստիկանության դեմ մարտնչող և բանվորական թաղի հարգելի տերերին ահաբեկող շայկայի պարագլուխը։ Հիմա նրա իդեալը փոխվել է։ Նա նայում էր իր շուրջը, բարեկիրթ և լավ հագնված տղամարդկանց ու կանանց, շնչելով նրբին կուլտուրայի մթնոլորտը, և նրա պատանեկության ուրվականը, լայնեզր գլխարկով և երկլանջ կուրտիկով, հյուրասենյակի գորգի վրայով ուղղակի դալիս էր դեպի նա։ Չէ՞ որ նա, փողոցային շայկայի կովարար պարագլուխը, վերածվել է այն Մարտին Իդենին, որը հիմա

նստած է փափուկ բազկաթոռին և խաղաղ զրուցում է համալսարանի պրոֆեսորի հետ։

Եվ, ճիշտ ասած, Մարտինն երբեք և ոչ մի տեղ չէր կգում իրեն, իր իսկական տեղում։ Նա պարզապես լավ է հարմարվել հանգամանքներին, միշտ եղել է ընդհանուրի սիրելին, որովհետև ետ չէր մնում ոչ աշխատանքում, ոչ խաղում և ամենուրեք կարողանում էր պաշտպանել իրեն և հարգանք ներշնչել դեպի իր անձը։ Բայց երբեք և ոչ մի տեղ նա արմատ չէր գցում։ Լիովին բավարարելով իր ընկերակիցներին, ինքը՝ Մարտինը երբեք բավարարված չէր լինում։ Նա շարունակ տանջվում էր ինչ-որ անհանգստությամբ. նա շարունակ լսում էր մի ձայն, որը կանչում էր նրան ինչ-որ տեղ, և նա թափառում էր աշխարհում որոնելով, մինչև որ գտավ, վերջապես, գիրքը, գեղարվեստն ու սերը։ Եվ ահա նա հիմա գտնվում է այդ բոլորի միջև,— իր նախկին ընկերներից միակը, որը կարող էր առանց այլևայլի հյուր գալ Մորզերի մոտ։

Բայց բոլոր այդ մտքերը չէին խանգարում Մարտինին ուշադիր լսելու պրոֆեսորին։ Նա տեսնում էր, թե խոսակիցն ինչքան լայն զարգացում ունի, և մերթ ընդ մերթ զգում էր իր զարգացման թերությունները ու բացերը, թեև շնորհիվ Սպենսերի, նրան ծանոթ էին գիտելիքների ընդհանուր հիմունքները։ Հարկավոր է միայն ժամանակ՝ այդ բացերը լրացնելու համար։ «Այն ժամանակ կտեսնենք», մտածեց նա։ Իսկ առայժմ նա նստած էր կարծես պրոֆեսորի ոտքերի մոտ՝ ակնածանքով և ուշադրությամբ լսելով այն ամենը, ինչ ասում էր նա։ Սակայն Մարտինը աստիճանաբար սկսեց նկատել և իր խոսակցի թույլ կողմը, որը կարող էր աչքի չընկնել, եթե շարունակ չկրկնվեր։ Եվ երբ Մարտինը հասկացավ, վերջապես, թե ինչումն է կայանում այդ թույլ կողմը, նրանում միանգամից անհետացավ պրոֆեսորի հետ անհավասարության զգացումը։

Ռութն երկրորդ անգամ մոտեցավ նրանց՝ հենց այն րոպեին, երբ Մարտինը սկսեց խոսել.

— Ես կասեմ ձեզ, թե դուք ինչումն եք սխալվում կամ, ավելի ճիշտ, ինչո՞ւմն է ձեր դատողությունների թուլությունը, — ասաց նա։ — Դուք անտեսում եք բիոլոգիան։ Ձեր կենսահայեցողության մեջ նա բացակայում է։ Այսինքն ես նկատի ունեմ իսկական գիտական բիոլոգիան՝ սկսած անօրգանական բջիջը լաբորատորիական փորձերով կենդանացնելուց մինչև սոցիալիստական և էսթետիկական ամենալայն ընդհանրացումները։

Ռութը բոլորովին ապշեց։ Նա երկու տարի շարունակ լսել էր պրոֆեսոր Կոլդուելի դասախոսությունները, և նա թվում էր նրան իմաստության մարմնացում։

— Ես ոչ բոլորովին հասկանում եմ ձեզ, — անվճռականորեն ասաց պրոֆեսորը։

— Ես կփորձեմ բացատրել, — ասաց Մարտինը։ — Հիշում եմ, որ Եգիպտոսի պատմության մեջ կարդացել եմ, որ չի կարելի հասկանալ եգիպտական արվեստը՝ առանց նախապես ուսումնասիրելու երկրի բնույթը։

— Շատ ճիշտ է, — համաձայնեց պրոֆեսորը։

— Եվ ահա ինձ թվում է, — շարունակեց Մարտինը, — որ, իր հերթին չի կարելի ուսումնասիրել երկրի բնույթը՝ առանց նախօրոք իմանալու այն նյութը, որից ստեղծվել է կյանքը, նույնպես և այն, թե նա ինչպես է կազմվել։ Ինչպես կարող ենք մենք հասկանալ օրենքները, հաստատությունները, բարքերն ու կրոնը՝ առանց ճանաչելու նրանց ստեղծած մարդկանց, և առանց գիտենալու, թե այդ մարդիկ իրենք առհասարակ ինչից են ստեղծված։ Վերջ ի վերջո գրականությունն էլ մարդու կողմից ստեղծված բան է, ինչպես եգիպտական արվեստը։ Մի՞թե տիեզերքում կա մի բան, որ չի ենթարկվում էվոլուցիայի համաշխարհային օրենքին։ Գիտեմ, որ առանձին արվեստների էվոլուցիայի պատմությունը մշակված է, բայց ինձ թվում է, որ նա մշակված է զուտ մեքենայաբար։ Այդ բանում մարդը մի կողմ է մնում։ Հրաշալիորեն մշակված է նվագարանների էվոլուցիան՝ տավիղի, ջութակի, երաժշտության, պարի, երգի էվոլուցիան։ Բայց

Ի՞նչ կարելի է ասել իրեն՝ մարդու էվոլուցիայի մասին, այն օրգանների մասին, որոնք զարգացել են նրանում՝ նախքան նրա կողմից առաջին նվագարանի շինվելը կամ առաջին երգի երգվելը։ Ահա այդ է, որ դուք մոռանում եք, իսկ ես հենց այդ էլ անվանում եմ բիոլոգիա։ Դա բիոլոգիա է բառի ամենալայն առումով։ Գիտեմ, որ մի քիչ անկապ եմ արտահայտվում, բայց ես, կարելի է ասել, ինքս եմ փորձում կոփել իմ գաղափարը։ Նա ծագեց իմ գլխում, երբ դուք խոսում էիք, և ինձ համար դժվար է միանգամից պարզ ձևակերպել այն։ Դուք ասացիք մարդկային սահմանափակվածության մասին, որը մարդուն հնարավորություն չի տալիս ընդգրկել բոլոր գործոնները։ Ահա հենց դուք,—գոնե այդպես է թվում ինձ,— անտեսում եք բիոլոգիական գործոնը, այսինքն բոլոր արվեստների հենց հիմքը, գլխավոր մատերիալը, որից կառուցված է վերջ ի վերջո ամբողջ մարդկային կուլտուրան։

Ռութը զարմացավ, որ Մարտինը մի ակնթարթում չոչընչացվեց, պրոֆեսորը մինչև անգամ նայեց Մարտինին, ինչպես թվաց Ռութին, ներողամտաբար՝ ըստ երևույթին հաշվի առնելով նրա երիտասարդությունը։ Վերջապես կարճ լռությունից հետո, պրոֆեսորը սկսեց խոսել՝ իր ոսկե շղթայիկի հետ խաղալով։

— Գիտե՞ք,— ասաց նա,— ինձ մի օր նույնպիսի կշտամբանքներ արեց մի մեծ մարդ՝ էվոլուցիոնիստ գիտնական Ժոզեֆ Լեկոնտը։ Բայց նա մեռավ, և ես կարծում էի, որ այլևս ոչ ոք չի մերկացնի ինձ, իսկ հիմա հանձին ձեր տեսնում եմ մի նոր մեղադրողի։ Հավանականաբար — ես չեմ կարող չընդունել այդ — ձեր մեղադրանքներում կա ճշմարտության բաժին, մինչև անգամ շատ մեծ բաժին։ Ես չափազանց տարվել եմ կլասիկայով և բավարար չափով չեմ հետևել բնական գիտությունների զարգացմանը։ Թերևս դա բացատրվում է եռանդի և աշխատունակության պակասով։ Հավանական է, դուք շատ կզարմանաք, եթե իմանաք, որ ես երբեք չեմ եղել ոչ մի լաբորատորիայում։ Սակայն փաստ է,

որ Լեկոնտն իրավացի էր, ինչպես և դուք, միստեր Իդեն, թեև չգիտեմ, թե ինչ չափով։

Ինչ-որ պատրվակով Ռութը մի կողմ տարավ Մարտինին և փսփսաց նրան։

— Դուք բոլորովին ձեր մենաշնորհը դարձրիք պրոֆեսոր Կոլդուելին։ Թերևս մի ուրիշն էլ է ուզում խոսել նրա հետ։

— Ներեցեք,—շփոթված մրմնջաց Մարտինը,—ես ստիպեցի նրան զրուցել, և նա այնքան հետաքրքիր էր, որ ես մոռացա ուրիշների մասին։ Պարզապես, ես մինչև այժմ առիթ չէի ունեցել հանդիպելու այդպիսի խելոք ու զարգացած մարդու։ Եվ, ի միջի այլոց, գիտե՞ք ինչ։ Ես առաջ մտածում էի, թե բոլոր համալսարան հաճախող կամ հասարակական կարևոր դիրքի տեր մարդիկ նույնպես խելացի և զարգացած են...

— Նա բացառություն է,— ընդհատեց նրան Ռութը։

— Ակներև է։ Հիմա ո՞ւմ հետ եք ուզում, որ ես խոսեմ։ Հա, ինձ տարեք այդ գանձապահի մոտ։

Մարտինը տասնհինգ րոպե խոսեց նրա հետ, և Ռութը անչափ ուրախացավ իր սիրածի վարմունքի վրա. նրա աչքերը ոչ մի անգամ չփայլատակեցին, այտերը ոչ մի անգամ չբոնկվեցին, և Ռութը հիացած էր այն հանգստությամբ, որով խոսակցում էր Մարտինը։ Դրա փոխարեն Մարտինի աչքում բանկային գործիչների ամբողջ դասը կորցրեց իր ողջ հմայքը, և երեկույթի վերջում նա եկավ այն համոզման, որ բանկային գործիչը հոմանիշ է դռեհիկ մարդու։ Բանակային սպային նա գտավ շատ բարեհոգի, պարզ, առողջ, հավասարակշռված և դոհ՝ կյանքում իր դրաված դիրքով, որը տվել են իրեն իր ծագումն ու բախտը։ Իմանալով, որ նա էլ է համալսարանում սովորել ամբողջ երկու տարի, Մարտինը շատ էր կարմացել և ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ո՞ւր կորան նրա բոլոր դիտելիքները։ Այնուամենայնիվ այս ապան ավելի դուր եկավ Մարտինին, քան Չարլի Հեպգուդը։

— Ինձ վրդովեցնում են ոչ թե այդ դռեհկությունները,— ասում էր հետապայում Մարտինը Ռութին,— ինձ ջղայ-

նացնում է այն ամբարտավան, ինքնագոհ, ներողամիտ շեշտը, որով ճառում են նրանք։ Ես կարող էի ռեֆորմացիայի ամբողջ պատմությունը շարադրել այդ բանիմաց մարդուն այնքան ժամանակում, որը հարկավոր եղավ նրան՝ պատմելու համար ինձ, թե միացյալ բանվորական պարտիան ձուլվել է դեմոկրատական պարտիայի հետ։ Գիտեք, նա այնպես է շպրտում բառերը, ինչպես պրոֆեսիոնալ պոկեր խաղացողը բաժանում է խաղաթղթերը։ Մի անգամ ես այդ ցույց կտամ ձեզ մի օրինակով։

— Ես շատ եմ ափսոսում, որ դուք չհավանեցիք նրան, —պատասխանեց Ռութը։— Նա միստեր Բետլերի սիրելին է։ Միստեր Բետլերն ասում է, որ նա ամենաազնիվ և վստահելի մարդն է, որին նա կոչում է վիմաքար, որի վրա կարելի է կանգնեցնել ուղածդ բանկային հաստատությունը։

— Ես դրանում չեմ կասկածում՝ մինչև անգամ դատելով այն սակավ խոսքերից, որը ես լսեցի նրանից։ Բայց ես հիմա կորցրի բանկիրի հանդեպ ամեն հարգանք։ Դուք չե՞ք չարանում, սիրելիս, որ ես այդպես ուղղակի արտահայտում եմ իմ կարծիքը։

— Ամենևին։ Դա շատ հետաքրքրական է։

— Այո,— հաստատեց Մարտինը,— չէ՞ որ ես մի բարբարոս եմ, որն իր առաջին տպավորություններն է ստանում քաղաքակրթության մասին։ Քաղաքակիրթ մարդու համար ես պետք է հանդիսանամ անկասկած մեծ հետաքրքրության առարկա։

— Իսկ ի՞նչ կասեք իմ մորաքրոջ աղջիկների մասին,— հարցրեց Ռութը։

— Նրանք ուրիշ կանանցից ավելի դուր եկան ինձ։ Նրանք շատ զվարթ են և իրենց պահում են պարզ, առանց հավակնությունների։

— Ուրեմն մյուս կանա՞յք էլ են դուր եկել ձեզ։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը։

— Այդ հասարակական գործիչ կինը պարզապես սոցիալական առեղծվածների մասին շաղակրատող մի թու-

թակ է։ Ես պատրաստ եմ երդվել, որ եթե թափ տանք նրա ուղեղը, այնտեղ ոչ մի ինքնուրույն գաղափար չենք գտնի։ Դիմանկարչուհին անտանելիորեն ձանձրալի է։ Նա և Հեպգուդը շատ հարմար ամուսիններ կլինեին։ Իսկ այդ երաժշտուհի՞ն։ Չգիտեմ, թերես նրա նվագը հիանալի տեխնիկա ունի, սահուն է նրա նվագաղարկը, բայց նա երաժշտությունից ոչինչ չի հասկանում։

— Բայց չէ՞ որ նա սքանչելի է նվագում,— փորձեց բողոքել Ռութը։

— Այո, արտաքնապես նա նվագում է վիրտուոզի պես, բայց երաժշտության ներքին էությունը նրա համար մնում է բոլորովին անմատչելի։ Ես հարցրի, թե ի՞նչ ներքին իմաստ է գտնում նա երաժշտության մեջ,— դուք դիտեք, որ այդ հարցը միշտ էլ հետաքրքրում է ինձ,— և նա չկարողացավ ոչինչ պատասխանել՝ բացի այն, որ նա պաշտում է երաժշտությունը, որ երաժշտությունը, բոլոր արվեստներից ամենամեծն է, և որ երաժշտությունը նրա համար կյանքից էլ թանկ արժե։

— Դուք բոլորին ստիպել եք խոսել պրոֆեսիոնալ թեմաների շուրջը,— ասաց Ռութը կշտամբանքով։

— Չեմ ժխտում։ Բայց եթե դրանք այդ հարցումն էլ խելոք մի բան չկարողացան ասել, երևակայեցեք, թե ես ինչպես կտանջվեի, եթե նրանք սկսեին խոսել ընդհանուր թեմաների շուրջը։ Իսկ ես կարծում էի թե այստեղ, ուր մարդիկ օգտվում են կուլտուրայի բոլոր առավելություններով...

—Մարտինը մի վայրկյան լոեց, և նրա աչքին նորից երևաց իր անցյալի ստվերը՝ ստետսոն հագած մի տղա, որը քայլում է սենյակում։— Հա՛, ես առաջներում այնպես էի կարծում, թե այստեղ բոլոր տղամարդիկ ու կանայք փայլում են իրենց խելքով ու զարգացումով։ Բայց այն քիչ բանից, որ ես տեսա, արդեն կարող եմ եզրակացնել. այդ մարդկանց մեծամասնությունը բոլորովին տգետ է, իսկ մնացածներից իննսուն տոկոսը անտանելիորեն ձանձրալի է։ Իսկ պրոֆեսոր Կոլդուելը՝ դա բոլորովին այլ բան է։ Դա իսկական մարդ է։

Ռութի դեմքը ճառագայթեց բավականությունից։

— Պատմեցեք ինձ նրա մասին,— ասաց նա,— ոչ թե նրա փայլուն հատկությունների մասին,— ինձ առանց այն էլ շատ լավ հայտնի են դրանք,— այլ այն մասին, թե դուք նրանում ինչ պարսավելի բան գտաք։ Դա շատ հետաքրքրական է ինձ համար։

— Իսկ եթե ես հանկարծ խայտառակվե՞մ,— կատակով բողոքեց Մարտինը,— թերևս նախ դուք ասեք։ Թերևս դուք նրանում միայն լա՞վն եք տեսնում։

— Ես նրա մոտ երկու դասընթաց եմ անցել և երկու տարի շարունակ ճանաչել եմ նրան. այդ պատճառով էլ ես հետաքրքրվում եմ իմանալ, թե ինչպիսի տպավորություն թողեց նա ձեզ վրա։

— Այսինքն, ձեզ հետաքրքրում է վա՞տ տպավորությունը։ Լա՛վ։ Ես կարծում եմ, որ նա բոլորովին արժանի է ձեր հիացմանն ու հարգանքին։ Դա ամենախելացի և զարգացած մարդն է մինչև այժմ իմ տեսածների միջև, բայց նրա խիղճը հանդիստ չի։ Օ՜, ոչ մի վատ բան մի՛ մտածեք,— բացագանչեց Մարտինը։— Ուզում եմ ասել, որ նա ինձ վրա թողնում է այն մարդու տպավորությունը, որը նայել է իրերի խորքը և այնպես է վախեցել, որ ինքն իրեն ուզում է հավատացնել, թե ոչինչ չի տեսել։ Թերևս ես իմ միտքը պարզ չարտահայտեցի։ Կփորձեմ այլ կերպ բացատրել։ Պատկերացրեք ձեզ մի մարդու, որը գտել է դեպի թավուտում ծածկված տաճար տանող արահետը, բայց չի գնացել այդ արահետով։ Նա թերևս տեսել է և տաճարը, բայց հետո իրեն հավատացրել է, որ դա պարզապես միրաժ էր։ Ահա և մի այլ բացատրություն։ Մի մարդ, որը կարող էր մի հիանալի գործ կատարել, հարկավոր չհամարեց այն և հիմա շարունակ ափսոսում է, որ չարեց այն, ինչ կարող էր։ Իր հոգու խորքում նա ծիծաղում է այն պարգևի վրա, որը կարող էր ստանալ իր գործերի համար, բայց ավելի ևս խորքում այդ պարգևի և կատարման վսեմ ուրախության կարոտն է քաշում։

— Ես այդ տեսակետից չեմ մոտեցել նրան,— ասաց

Ռութը.—ԵՒ, անկեղծ ասած, այնուամենայնիվ ես լավ չեմ հասկանում, թե ի՛նչ եք ուզում ասել դուք։

— Դա նրանից է, որ ես ինքս շատ աղոտ եմ զգում այդ, — ասաց Մարտինը՝ կարծես արդարանալով,— ես չեմ կարող տրամաբանորեն հիմնավորել այդ։ Դա միայն զգացում է, և շատ հավանական է, որ դա խաբում է ինձ։ Անկասկած դուք ինձանից լավ եք ճանաչում պրոֆեսորին։

Մորզերի տանն այդ երեկույթից Մարտինը ստացավ տարօրինակ ու հակասական տպավորություններ։ Նա որոշ չափով հուսախաբվեց իր ձգտումների մեջ, հուսախաբվեց այն մարդկանց նկատմամբ, որոնց մակարդակին էր ուզում բարձրանալ։ Մյուս կողմից հաջողությունը խրախուսեց նրան։ Բարձրանալ այդ մակարդակին՝ դա ավելի հեշտ տեղի ունեցավ, քան նա կարծում էր։ Մարտինը ոչ միայն հաղթահարել էր վերելքի դժվարությունները, այլև (նա կեղծ համեստության համար չէր թաքցնում այդ իրենից) ավելի է բարձրացել, քան այն մարդիկ, որոնց մակարդակին է ձգտում հասնել, բացառությամբ, իհարկե, պրոֆեսոր Կոլդուելի։ Մարտինն ավելի լավ գիտեր կյանքն ու գրքերը, քան բոլոր այդ մարդիկ, և նա միայն զարմանում էր, թե ո՛ր անկյուններում ու գետնահարկերում են թաքցրել նրանք իրենց կրթությունը։ Նրա մտքովն էլ չէր անցնում, թե ինքը օժտված է բացառիկ խելքով. չգիտեր նաև, որ իսկական և խոր մտածողներին ոչ մի կերպ չպիտի փնտրել Մորզերի հյուրասենյակում, որ այդ մտածողները նման են երկնքի կապույտում, երկրից բարձր, առօրյա կյանքի ունայնությունից և գռեհկությունից հեռու միայնակ ճախրող արծիվներին։

ԳԼՈՒԽ XXVIII

Հաջողությունը կորցրել էր Մարտին Իդենի հասցեն, և նրա դեսպաններն այլևս չէին խփում նրա դուռը։ Քսանհինգ օր առանց հանգստանալու, մինչև անգամ կիրակի և տոն օրերը,

Մարտինն աշխատում էր «Արևի ամոթանքը» մեծ հոդվածի վրա՝ գրեթե երեսուն հազար բառից բաղկացած։ Դա կազմակերպված հարձակում էր Մետերլինկի դպրոցի միստիցիզմի վրա,— մի գրոհ պոզիտիվ գիտելիքների միջնաբերդից, ուղղված հրաշքների մասին երազող ֆանտազյորների դեմ, թեպետ հենց դրանումն էլ կային հրաշքի շատ տարբեր— միայն այնպիսի հրաշքի, որը կապակցվում էր իրականության հետ։ Այդ մեծ հոդվածին Մարտինը մի քիչ հետո կցեց երկու փոքր ակնարկ. «Հրաշալիի քուրմերը» և «Մեր եսի չափանիշը»։ Բոլոր այդ հոդվածները — երկարներն ու կարճերը ճամփորդության ելան դեպի խմբագրատները։

«Արևի ամոթանքը» հոդվածի վրա ծախսված քսանհինգ օրվա ընթացքում Մարտինին հաջողվեց վաճառել իր «եկամտավոր» գրվածքներից վեցուկես դոլլար գումարի։ Մի գրվածքի համար նա ստացավ հիսուն ցենտ, իսկ մի ուրիշի համար, որը ուղարկել էր երգիծական շաբաթաթերթի,— մի ամբողջ դոլլար, մեկը՝ երկու դոլլարի, մյուսը՝ երեք դոլլարի։

Վերջ ի վերջո, սպառելով իր վարկը (թեպետ նպարավաճառը ավելացրեց՝ այն մինչև հինգ դոլլար), Մարտինը նորից ստիպվեց լոմբարդ տանել հեծանիվն ու վերարկուն։ Գրամեքենայի վարձի համար դարձյալ դրամ էին պահանջում՝ հիշեցնելով, որ պայմանի համաձայն նա պարտավոր է նախօրոք վճարել մի ամսվա վարձը։

Քաջալերված մի քանի մանր գրվածքների վաճառվելով՝ Մարտինը նորից վճռեց զբաղվել գրական «արհեստավորությամբ»։ Թերևս հաջողվի մի կերպ ապրել դրանով։ Նրա սենյակում սեղանի տակ թափված էին մոտ քսան փոքր պատմվածքներ, որոնք մերժված էին գրական գործակալություններից։ Մարտինը վերանայեց նրանք, որպեսզի պարզի, թե ինչպես չպիտի գրել լրագրական պատմվածքներ և այդ կերպով մշակել մի իդեալական ֆորմուլա։ Նա եկավ այն եզրակացության, որ լրագրական պատմվածքում ողբերգական լուծում չպետք է լինի, լեզվում չպետք է լինեն ա-

վելորդ գեղեցկություններ, մտքերը պետք է լինեն պարզ. իսկ զգացումները պրիմիտիվ։ Բայց և այնպես պիտի լինեն զգացումներ, այն էլ անպայման վեհ ու ազնիվ՝ այն զգացումների նման, որոնք ժամանակին ստիպում էին նրան ծափահարել վերնասրահից «Թեպետ աղքատ է, բայց ազնիվ է» պիեսի տիպի պիեսներին։

Պարզելով իրեն այդ բոլորը՝ Մարտինը սկսեց գրել մի պատմվածք իր մշակած ֆորմուլայի համաձայն։ Այդ ֆորմուլան եռանդամ էր. 1) երկու սիրահարները պետք է բաժանվեն. 2) ինչ-որ պատահարի շնորհիվ նրանք դարձյալ միանում են. 3) հարսանիքի զանգերի ղողանջ։ Երրորդ անդամը մշտական մեծություն էր, իսկ առաջինն ու երկրորդը կարող էին անվերջ տարբեր ձևեր ստանալ։ Սիրահարներին կարող էին բաժանել ճակատագրական թյուրիմացությունը, հանգամանքների բերումը, խանդոտ մրցակցությունը, դաժան ծնողները, խորամանկ խնամակալները և այլն և այլն. նրանց կարող էր միացնել սիրահար պատանու կամ աղջկա ինչ-որ քաջարի արարքը, խնամակալի, ծնողների կամ ախոյանների հարկադրված կամ ինքնահոժար համաձայնությունը սիրահար պատանու ինքնազոհությունը և այլն, անսահման փոփոխակներով։ Երբեմն կարելի է ստիպել աղջկանն առաջին քայլն անել. Մարտինը գտավ և այլ բազմաթիվ խորամանկ ձևեր ու ճարպիկ տրյուկներ՝ մշակելով այդ թեման։ Միայն մի բան նա չէր կարող տնօրինել իր հայեցողությամբ. ամեն մի պատմվածքի վերջում անպայման պետք է ղողանջեն հարսանեկան զանգերը՝ մինչև անգամ եթե երկինքը փուլ գար կամ գետինը ճեղքվեր։ Պատմվածքի ծավալը նույնպես բոլորովին ճշգրիտ ռահմանված էր — ամենաշատը մեկուկես հազար բառ, իսկ ամենաքիչը հազար երկու հարյուր բառ։

Նախքան նման պատմվածքներ գրելու արվեստին վերջնականապես տիրապետելը՝ Մարտինին հարկ եղավ մշակել հինգ-վեց սխեմա, որոնցով և ղեկավարվում էր գրելու պրոցեսում։ Դրանք կարծես աղյուսակներ լինեին, որոնցով օգտվում են մաթեմատիկոսները, որոնք կարելի է կարդալ վերե-

վից, ներքևից, աջից ձախ, ձախից աջ, և որոնցով կարելի է առանց ուղեղի որևէ լարվածության կազմել ամեն տեսակ՝ միշտ էլ ուղիղ և ճշգրիտ կոմբինացիաներ։ Այդ սխեմաներով Մարտինը կես ժամում ուրվագծեց տասը սյուժե, որոնք նա մի կողմ էր թողնում և ասա մշակում էր ազատ ժամանակ։ Սովորաբար նա անում էր այդ քնից առաջ՝ ամբողջ օրը լուրջ աշխատելուց հետո։ Հետագայում նա խոստովանեց Ռութին, որ այդպիսի պատմվածքներ հղանում էր մինչև անգամ երազում։ Հիմնական աշխատանքն էր սխեմա կազմելը, իսկ բոլոր մնացածը արվում էր մեքենայորեն։

Մարտին Իդենը չէր կասկածում իր ֆորմուլաների ուժի մասին և հլատարակիչների ճաշակն այնքան լավ գիտեր, որ առաջին երկու պատմվածքը ուղարկելիս նա վստահ էր, որ նրանք դրամ կբերեն իրեն։ Եվ իրոք տասը օրից Մարտինը ստացավ երկու չեկ՝ ամեն մեկը չորս դոլլարի։

Այդ ժամանակամիջոցում Մարտինը նոր հայտնություններ արեց ժուռնալների նկատմամբ. «Անդրցամաքային ամսաթերթը» տպեց նրա «Զանգերի զողանջը», բայց չեկ չուղարկեց. Մարտինը դրամի մեծ կարիք ուներ և գրեց խմբագրությանը։ Չեկի փոխարեն նա ստացավ խուսափողական պատասխան և խնդրանք, որ էլի մի բան ուղարկի։ Երկու օր սոված մնալուց հետո նա ստիպվեց նորից գրավ դնել հեծանիվը։ Շաբաթը երկու անգամ նա կանոնավորապես հիշեցնում էր «Ամսաթերթին» իր հինգ դոլլարի մասին, բայց ըստ երևույթին առաջին պատասխանը ստացել էր զուտ պատահականությամբ։ Մարտինը չէր իմանում, որ «Ամսաթերթը» արդեն մի քանի տարի է, ինչ հազիվ ծայրը ծայրին է հասցնում, որ նա չունի ոչ բաժանորդ, ոչ գնորդ և գոյությունը քարշ է տալիս միայն հայտարարություններով, որոնք տրվում են նրանում մարդասիրական նկատառումներով։ Նա չէր իմանում և այն, որ «Ամսաթերթը» հանդիսանում է հրատարակչի և խմբագրի համար եկամուտի միակ աղբյուրը, և որ նրանք կարող են այդ եկամուտը ստանալ միայն իրենց պահանջատերերին պարբերաբար չվճարելով։ Մի՞թե Մարտինը

կարող էր կասկածել, որ իրեն հատանելիք հինգ դոլլարով խմբագիրը ներկել է իր տունը Ալամեդում, և նա ինքն է ներկել, որովհետև ներկարարների միության կողմից սահմանված վճարը շատ բարձր էր նրա համար, և առաջին շտրեյկբրեխերը, որին նա վարձեց, ցած գլորվեց սանդուղքից, որը ինչ-որ մեկը դիտմամբ հրեց, և շտրեյկբրեխերին հիվանդանոց տարան կոտրած ոտքով։

Մարտինը տասը դոլլար էլ չստացավ իր «Գանձ որոնողներ» ակնարկի համար, որն ընդունվեց Չիկագոյի մի թերթի կողմից։ Ակնարկը տպված էր,— դրանում նա համոզվեց՝ աչքի անցկացնելով ժուռնալները քաղաքային ընթերցարանում, բայց հրատարակչից ոչ մի պատասխան չստացավ։ Նրա նամակներին չէին պատասխանում։ Ցանկանալով վրստահ լինել, որ նամակները հասնում են հասցեատիրոջը, Մարտինը ուղարկում էր նրանք ապահովագրյալ։ Դա թանկ էր, վճռեց նա. սառնարյուն թալան օրը ցերեկով,—նա տոված էր, իսկ նրանից դողանում էին նրա ապրանքը, որը վաճառելով նա կարող էր դնել մի պատառ հաց։

«Պատանեկություն և չափահասություն»-ը շաբաթաթերթ էր։ Տալելով վիպակի երկու երրորդը — քսան մեկ հազար բառ — այդ ժուռնալը հանկարծ դադարեց լույս տեսնելուց։ Այդ կերպով տասնվեց դոլլար ստանալու ամեն հույս կորավ։

Ի լրումն այդ բոլորի՝ նրա լավագույն պատմվածքը «Կաթսան» իղուր կորավ։ Հուսահատված, բազմաթիվ ժուռնալների միջև նա ընտրեց «Ալիքս»-ը և ուղարկեց այն Սան-Ֆրանցիսկո։ Նա ընտրեց այդ ժուռնալը միայն նրա համար, որ կարելի էր շուտ պատասխան ստանալ. խմբագրությունը մոտիկ էր, ծովածոցի մյուս ափում։ Երկու շաբաթից նա ուրախությամբ տեսավ, որ իր պատմվածքը տպվել է աչքի ընկնող տեղում, այն էլ պատկերազարդված։ Տուն վերադառնալով ցնծությունից սրտոփող սրտով Մարտինը ջանում էր դուշակել, թե ինչքան կվճարեն նրա այդ լավագույն պատմվածքի համար։ Նրան ուրախացնում էր այն, որ իր

պատմվածքն այնքան շուտ ընդունվել և տպագրվել էր, թեև հրատարակիչը նրան չի էլ հաղորդել, որ գրվածքն ընդունված է։ Սպասելով մի, երկու շաբաթ և մի քանի օր՝ Մարտինը, հաղթահարելով իր կեղծ ամաչկոտությունը, գրեց «Ալիք»-ի խմբագրին՝ արտահայտելով իր ենթադրությունը, որ իր փոքր հաշիվը մոռացվել է բազմաթիվ կարևոր գործերի միջն։

«Եթե մինչև անգամ հինգ դոլլար վճարեն ինձ,— մտածեց Մարտինը, այդ դրամով ես կարող եմ գնել բակլա և սիսեռ և կգրեմ կես դյուժին այդպիսի պատմվածքներ ևս»։ Վերջապես ստացվեց պատասխանը, որն իր շքեղ նրբությամբ հիացրեց Մարտինին։

«Մենք շատ երախտապարտ ենք ձեզ ձեր հիանալի պատմվածքի համար։ Մենք բոլորս խմբագրատանը մեծ հաճույքով կարդացինք այն և, ինչպես տեսնում եք, տպեցինք այն պատվավոր տեղում։ Հույս ունենք, որ պատկերները ձեզ դուր եկան։

Ինչպես երևում է ձեր նամակից, դուք ենթադրում եք, իբր մենք վճարում ենք այն գրվածքների համար, որոնք մեր պատվերով չեն գրված։ Մենք այդ սովորությունը չունենք, իսկ ձեր պատմվածքը մեր կողմից պատվիրված չէր։ Ընդունելով այդ տպագրելու համար, մենք, հասկանալի է, ենթադրում էինք, որ դա հայտնի է ձեզ։ Մեզ մնում է միայն ափսոսալ, որ այդպիսի ցավալի թյուրիմացություն է պատահել։ Նորից շնորհակալություն ենք հայտնում ձեզ և հույս ունենք ստանալ ձեզնից որևէ բան։ Ընդունեցեք...» և այլն։ Հետգրության մեջ ասված էր, որ թեև «Ալիք»-ը ոչ ոքի ձրի չի ուղարկվում, բայց և այնպես խմբագրությունն իրեն համար պատիվ է համարում մուծել նրա անունը հաջորդ տարվա բաժանորդների ցուցակի մեջ։

Այդ տխուր փորձից հետո Մարտինը իր գրվածքների առաջին էջի վրա վերևում նշում էր՝«վճարը ձեր սովորական դրույքի համաձայն»։

«Կգա ժամանակ — մխիթարում էր նա իրեն,— որ նրանք կվճարեն ինձ իմ սովորական դրույքով»։

Այդ ժամանակաշրջանում Մարտինը բռնվեց ինքնակատարելագործման տենդով, և նա անվերջ ուղղում և վերամշակում էր «Ուրախ փողոցը», «Կյանքի դինին», «Ուրախությունը», «Ծովի երգերը» և իր վաղ շրջանի այլ գրվածքները։ Առաջվա նման նրան հերիք չէր տասնհինգ ժամյա աշխատանքային օրը։ Նա եռանդագին գրում և կարդում էր՝ ջանալով աշխատանքով խեղդել՝ ծխելը թողնելուց առաջացած տանջանքը։ Ռութի ուղարկած դեղը նա կոխեց իր գրասեղանի արկղի ամենահեռավոր անկյունը։ Առանձնապես դժվար էր առանց ծխելու յոլա գնալ սոված ժամանակ։ Ինչքան էլ ջանում էր հաղթահարել ծխելու իր ցանկությունը, դա չէր կորչում։ Մարտինն այդ համարում էր իր ամենամեծ քաջագործությունը, իսկ Ռութը գտնում էր, որ նա լավ է անում, ուրիշ ոչինչ։ Նա գնել էր նրա համար ծխելը թողնելու օգնող մի դեղ այն դրամով, որ ստանում էր դնդասեղներ գնելու համար, և մի քանի օրից բոլորովին մոռացավ այն։

Մարտինն ատում էր իր՝ մեքենայորեն գրած պատմվածքները, ծիծաղում էր նրանց վրա, բայց հենց դրանք վաճառվում էին բոլորից ավելի հաջող։ Նրանց շնորհիվ Մարտինը հատուցեց իր պարտքերը և մինչև անգամ գնեց հեծանիվի նոր անվադող։ Այդ պատմվածքները նրան դրամ էին բերում՝ առօրյա ծախսերի համար, ընդամենը նա ժամանակ էլ էր ունենում լուրջ աշխատանքների համար։ Բացի այդ, Մարտինին շարունակ թևավորում էր «Սպիտակ Մուկ»-ի խմբագրատնից ստացած քառասուն դոլլարի հիշողությունը։ Ի՞նչ իմանաս, թերևս ուրիշ առաջնակարգ ժուռնալներ էլ անծանոթ հեղինակների վճարում են նույնքան, գուցե և ավելի։ Խնդիրն այն է, որ պիտի թափանցել այդ առաջնակարգ ժուռնալների մեջ։ Իսկ նրանք հետևողականորեն մերժում էին Մարտինի բոլոր լավագույն պատմվածքներն ու բանաստեղծությունը-

ները, թեև նրանց ամեն մի համարում տասնյակներով տպվում էին անհամ ու զուտհիկ բաներ։

«Երանի՞ այդ պատկառելի հրատարակիչներից մեկը,— մտածում էր երբեմն Մարտինը,—բարեհաճեր գրել ինձ թեկուզ մի քաջալերիչ տող։ Կարող է պատահել, որ իմ ստեղծագործությունը չափազանց անսովոր է, թերևս դա նրանց հարմար չի գանազան նկատառումներով, բայց մի՞թե իմ գրվածքներում չկա ոչ մի բան, որ թեկուզ ցանկություն առաջացնի պատասխանել ինձ»։

Եվ ահա Մարտինը դարձյալ վերցնում էր «Արկածը» կամ համարժեք մի այլ պատմվածք և հարյուրերորդ անգամ վերանայում էր այն՝ ջանալով գուշակել հրատարակիչների լռության պատճառը։

Երբ հասավ Կալիֆորնիայի տաք գարունը, Մարտինի համար բարօրության ժամանակաշրջանը վերջացավ։ Մի քանի շաբաթ շարունակ նրան անհանգստացնում էր գրական գործակալության անհասկանալի լռությունը։ Վերջապես մի օր նրան միանգամից վերադարձրին նրա գրած տասը «մեքենայական» պատմվածքները։ Նրանց ուղեկցված նամակում Մարտինին հաղորդում էին, որ գործակալությունը ծանրաբեռնված է նյութերով, այնպես որ մինչև մի քանի ամիս չարժի ուղարկել նոր գրվածքներ։ Իսկ Մարտինը, հույսը դրած այդ պատմվածքների վրա, վերջին ժամանակներս մինչև անդամ շռայլ էր դարձել։ Գործակալությունը սովորաբար հինգ դոլար էր վճարում նրա յուրաքանչյուր պատմվածքին և մինչև այժմ նրա ոչ մի գրվածքը չէր մերժել. դրա համար էլ Մարտինն այնպես էր վարվում, կարծես ընթացիկ հաշվում մուծած ունի հիսուն դոլար։ Այդպիսով Մարտինի համար միանգամից սկսվեց դժնդակ փորձությունների ժամանակաշրջանը. և նա հուսահատ, սկսեց իր հին պատմվածքներն ուղարկել մանր պարբերական հրատարակչությունների, որոնք դրամ չէին ուղարկում, իսկ նոր պատմվածքներն ուղարկում էր լուրջ ժուռնալների, որոնք շարունակ ետ էին վերադարձնում նրանք։ Նա դարձյալ սկսեց այցելել Օկլենդի լոմբարդը։ Եր-

կու-երեք երգիծական բանաստեղծություններ ընդունվեցին Նյու-Յորքի շաբաթաթերթերում, և նա հնարավորություն ունեցավ մի կերպ ապրել։ Այն ժամանակ նա վճռեց գրել բոլոր խոշոր ժուռնալներին, թե ինչո՛ւ նրանք չեն տպում իր գրվածքները։ Նրան պատասխանեցին, որ ինքնահոսով ստացվող գրվածքները սովորաբար չեն քննարկվում, և որ տպվող նյութի մեծ մասը գրվում է ժուռնալների պատվերով արդեն անուն և փորձառություն ունեցող հեղինակների կողմից։

ԳԼՈՒԽ XXIX

Դա դժնդակ ամառ էր Մարտինի համար։ Խմբագիրներն ու հրատարակիչները գնացել էին հանգստանալու, և առհասարակ երեք շաբաթից վերադարձվող գրվածքներն այժմ խմբագրատներում ընկած էին մնում երեք ամսով։ Միակ մխիթարությունն այն էր, որ փոստանիշների վրա կարիք չէր լինում դրամ ծախսել։ Միայն թալանիչ ժուռնալներն էին ապրում ինտենսիվ կյանքով։ Եվ Մարտինը ուղարկեց նրանց իր բոլոր վաղ գրվածքները. «Մարգարիտ որսացողները», «Նավաստու պրոֆեսիան», «Կրիաների որսը», «Հյուսիս-արևելյան պասատ»։ Այդ ակնարկներից ոչ մեկի համար նրան չվճարեցին։ Ճիշտ է, վեցամսյա նամակագրությունից հետո Մարտինը մի անվտանգ ածելի ստացավ «Կրիաների որսը» գրվածքի համար, իսկ «Ակրոպոլը» նրան խոստացավ հինգ դոլլար և հինգ օրինակ տարեկան բաժանորդագրություն «Հյուսիս-արևելյան պասատի» համար, բայց կատարեց իր խոստման միայն երկրորդ մասը։

Ստիվենսոնի մասին սոնետի համար Մարտինը երկու դոլլար ստացավ՝ Բոստոնի մի հրատարակչից, որը չէր սիրում դրամ վատնել։ «Փերին և մարգարիտը» պոեման, որը նոր էր վերջացրել Մարտինը, շատ դուր եկավ Սան-Ֆրանցիսկոյում երկաթուղային մի խոշոր ընկերության միջոցներով հրա-

տարակվող ժուռնալի խմբագրին։ Այդ պոեմայի փոխարեն խմբագիրն առաջարկեց Մարտինին ձրի ճամփորդություն երկաթգծով։ Մարտինը զրավոր հարցրեց նրան, թե կարո՞ղ է այդ իրավունքը փոխանցել որևէ մեկին։ Իմանալով, որ ձրի ճամփորդության իրավունքներն ուրիշի փոխանցել չի կարելի և հետևաբար հույս չկա շահելու այդ բանում, Մարտինը պահանջեց վերադարձնել զրվածքը։ Շուտով նա ետ ստացավ այն, ընդամենը խմբագիրը նամակում իր խորը ցավակցությունն էր հայտնում, որ հնար չեղավ տպել այդ պոեման։ Մարտինը երկրորդ անգամ ուղարկեց այն Սան-Ֆրանցիսկո՝ «Մոզ» ժուռնալին, որ ժամանակին հիմնել է մի փայլուն ժուռնալիստ, որը կարողացավ կարճ ժամանակում լայն չափով ժողովրդականացնել այն։ Դժբախտաբար «Մոզ»-ի աստղը սկսեց մթագնել՝ Մարտինի ծնվելուց դեռ շատ առաջ։ Խմբագիրը պոեմայի համար Մարտինին առաջարկեց տասնհինգ դոլլար, բայց հենց որ պոեման տպվեց, մոռացավ, ինչպես երևում է, իր խոստումը։ Պատասխան չստանալով իր շատ հարցապնդումներին, Մարտինը վերջապես մի խիստ նամակ գրեց և նոր խմբագրից ստացավ մի սառը գրություն, որ ինքը պատասխանատու չի իր նախորդների սխալների համար, և որ ինքն անձամբ «Փերին և մարգարիտը» պոեման շատ էլ չի հավանում։

Բայց ամենից վատ վարվեց Մարտինի հետ Չիկագոյի «Երկրագունդ» ժուռնալը։ Երկար վարանումներից հետո, քաղցից դրդված, Մարտինը վերջ ի վերջո վճռեց տպել «Մովի երգերը»։ Մի տասնյակ ժուռնալների կողմից մերժում ստանալով՝ այդ բանաստեղծությունները վերջապես խաղաղ նավահանգիստ հասան «Երկրագնդի» խմբագրատանը։ Այդ ցիկլում երեսուն ոտանավոր կար, և Մարտինը ամեն մեկի համար պետք է ստանար մի դոլլար։ Առաջին իսկ ամսում տպվեցին չորս բանաստեղծություններ և Մարտինը ստացավ չորս դոլլարի չեկ, բայց աչքի անցկացնելով ժուռնալը՝ Մարտինը սոսկաց։ Բանաստեղծությունների վերնագրերը փոփոխվել

էին. «Finis»-ի փոխարեն տպվել էր «Ֆինիշ»[1]. «Ծովային ապառաժի երգ»-ի փոխարեն տպվել էր «Բուստերի ապառաժի երգը»։ Մի վերնագիր փոփոխված էր պարզապես մի այլ, բոլորովին անհարմար վերնագրով—փոխանակ գրելու «Ծովամայրի լույսը» խմբագիրը գրել էր «Ետևից հետք»։ Իրենք բանաստեղծություններն ավելի մեծ աղճատումների էին ենթարկվել։ Մարտինը կճռտացնում էր ատամները և մազերն էր պոկում։ Նախադասությունները, տողերը, ամբողջ հանգեր բաց էին թողված, շփոթված, տեղափոխված այնպես, որ երբեմն ոչինչ չէր կարելի հասկանալ։ Մի քանի տողեր պարզապես փոխարինված էին բոլորովին այլ բառերով։ Մարտինը չէր կարող պատկերացնել, որ ողջամիտ մի խմբագիր կարող է մեղավոր լինել այդպիսի չարագործություններում, և վճռեց, որ դա տպարանի մի երեխայի կամ արտագրողի խաղերն են։ Մարտինն անմիջապես պահանջեց դադարեցնել ցիկլի հրատարակումը. նա նամակներ էր տեղում իրար ետևից՝ թախանձելով, սպառնալով, պահանջելով։ Սակայն նրա բոլոր նամակներն էլ ուշադրության չառնվեցին։ Ամեն ամիս հրապարակվում էին այդ աղավաղված բանաստեղծությունները, և Մարտինն ամեն ամիս չեկ էր ստանում տպվածների համար։

Բոլոր այդ անհաջողությունների ժամանակ Մարտինին խրախուսում էր «Սպիտակ Մուկ» ժուռնալի քառասուն գոլլարի հիշողությունը, բայց նա ավելի ու ավելի ժամանակ էր հատկացնում եկամտաբեր մանր գրվածքներին։ Նա անսպասելիորեն «հացի տեղ» գտավ գյուղատնտեսական և առևտրական ժուռնալներում, փորձեց կապվել և կրոնական շաբաթաթերթերի հետ, բայց տեսավ, որ այստեղ միայն կարելի է քաղցից մեռնել։

Ամենակրիտիկական րոպեին, երբ արդեն գրավ էր դրված սև կոստյումը, Մարտինի բախտը հանկարծ բացվեց

---

1 Ֆինիս՝ լատիներեն նշանակում է «վերջ», «ֆինիշ» անգլերեն նշանակում է սպորտ վազքի վերջնակետ։

ռեսպուբլիկական պարտիայի կոմիտեի կողմից հայտարարված մրցության մեջ։ Իրականում դա մինչև անդամ մի մրցություն չէր, այլ երեք, և Մարտինը երեք մրցության մեջ էլ հաղթող հանդիսացավ։ Նա դառնորեն ծիծաղում էր իր վրա և այն բանի վրա, որ հարկադրված է դիմել այդպիսի հնարամտությունների։ Նրա պռեման տրժանացավ առաջին մրցանակի—տասը դոլլարի. նրա ազիտացիոն երգը ստացավ երկրորդ մրցանակը՝ հինգ դոլլար և վերջապես ռեսպուբլիկական պարտիայի անելիքների մասին իր հոդվածը նույնպես ստացավ առաջին մրցանակը՝ քսանհինգ դոլլար։ Այդ բոլորը շատ ուրախացրեց նրան, և նա շարունակում էր ուրախանալ՝ մինչև որ գնաց գրամը ստանալու։ Կոմիտեում, ինչպես երևում է, ինչ-որ բան էր պատահել, և թեպետ նրա անդամների միջև կային մի բանկիր և մի սենատոր, այնուամենայնիվ պարզվեց, որ կոմիտեն դրամ չունի։ Մինչ այդ հարցը շարունակում էր ձգձգվել, Մարտինն ապացուցեց, որ ավելի վատ չի հասկանում դեմոկրատական պարտիայի խնդիրները՝ ստանալով առաջին մրցանակը նույնպիսի մրցության համար գրված հոդվածի համար։ Բացի այդ, այստեղ նա մինչև անդամ ստացավ իր քսանհինգ դոլլարը։ Իսկ այն քառասուն դոլլարի, երևոն էլ երբեք չտեսավ, որը նա պիտի ստանար առաջին մրցության համար։

Ռութի հետ տեսակցելու համար Մարտինը ստիպված էր խորամանկության դիմել։ Հյուսիսային Օկլենդից մինչև Մորդերի տունը գնալն ու վերադառնալը խիստ շատ ժամանակ էր խլում. այդ պատճառով Մարտինը վճռեց դուրս գրել հեծանիվը՝ գրավ դնելով իր սև կոստյումը։ Հեծանիվով կատարած ճամփորդությունները ժամանակ էին խնայում և միաժամանակ ֆիզիկական հրաշալի մարզանք էին։ Բացի այդ, պարուսինեն կարճ տարատար և հին ովիտերը հիանալիորեն կարող էին ընդունվել իբրև հեծանիվի կոստյում, և Մարտինը գրեթե ամեն օր կարող էր Ռութի հետ միասին շրջագայություն կատարել, Նրա հետ տանը տեսակցելն այնքան էլ հարմար չէր, որովհետև միսիս Մորդը շարունակում էր իրականացնել աշ-

խարհիկ ժամանցներ սարքելու իր պլանը։ Ընտիր հասարակությունը, որին Մարտինը հանդիպում էր հյուրասենյակում, և որի ներկայացուցիչների վրա նա դեռ մոտիկ անցյալում ցածրից բարձր էր նայում, հիմա միայն գրգռում էր նրան։ Այդ հասարակությունն արդեն ընտրովի չէր թվում նրան։ Դժնդակ կյանքը, լարված աշխատանքն ու մշտական անհաջողությունները Մարտինին գարձրել էին ջղային ու դյուրագրգիռ, և այդպիսի մարդկանց հետ զրույցը նրան կատաղեցնում էր։ Դա չափազանց մեծամտությունից չէր առաջանում։ Մարդկանց մասին նա դատում էր համեմատելով նրանց ոչ թե իրեն հետ, այլ մեծ մտածողների հետ, որոնց գրքերը նա ընթերցում էր անչափ ակնածությամբ։ Ռութի տանը նա մինչև այժմ չի հանդիպել ոչ մի իսկական խելացի մարդու՝ բացի պրոֆեսոր Կոլդուելից, որը սակայն այլևս չէր գալիս Մորզերի մոտ։ Բոլոր մնացածները խղճուկ դոգմատիկներ էին, ընչին մարդիկ՝ ընչին մտքերով։ Նրանց տգիտությունն ապշեցնում էր Մարտինին։ Ինչո՞ւ նրանք բոլորն այնքան տգետ են։ Ո՞ւր է կորել նրանց զարգացումը։ Չէ՞ որ նրանք էլ են կարդացել նույն գրքերը, ինչ ինքը։ Ինչպե՞ս կարող է պատահել, որ նրանցից ոչինչ չեն սովորել։

Մարտինը գիտեր, որ գոյություն ունեն մեծ մտքեր, իսկական խոր մտածողներ։ Դրա լավագույն ապացույցն էին գրքերը, որոնք նրան օգնեցին բարձրանալ Մորզերի մակարդակից վեր։ Նա գիտեր նաև, որ մինչև անգամ այսպես կոչված «հասարակության» մեջ կարելի է հանդիպել ավելի խելացի և շատ ավելի հետաքրքրական մարդկանց, քան բոլոր նրանք, որոնք լցնում էին Մորզերի հյուրասենյակը։ Մարտինը կարդում էր անգլիական վեպեր, որոնց մեջ աշխարհիկ մարդիկ հյուրասենյակներում վիճում էին քաղաքական ու փիլիսոփայական թեմաների շուրջը։ Նա գիտեր, որ մեծ քաղաքներում—ոչ միայն անգլիական, այլև ամերիկյան—գոյություն ունեն սալոններ, ուր հանդիպում են արվեստի և գիտական մտքի ներկայացուցիչներ։ Անցյալում նա անմտորեն կարծում էր, թե ամեն մի լավ հագնված մարդ, որ բանվորա-

կան դասին չի պատկանում, մտքի ուժ և գեղեցիկ ըմբռնելու նուրբ զգացում ունի։ Օսլայած օձիքը նրան թվում էր կուլտուրայի նշան, և նա դեռ չգիտեր, որ համալսարանական կրթությունը և իսկական զարդացումը բոլորովին տարբեր բաներ են։

Ինչ էլ որ լինի, նա կշարունակի ճանապարհը՝ միշտ դեպի վեր, ավելի բարձր։ Եվ Ռութին էլ կտանի իր ետևից։ Նա սաստիկ սիրում էր Ռութին և վստահ էր, որ նա ամեն տեղ կփայլի։ Նա հիմա հասկանում էր, որ այն միջավայրը, ուր Ռութը մեծացել է, շատ բանում արգելակում է նրան, ինչպես իրեն՝ Սարտինին ժամանակին արգելակել է իր միջավայրը։ Ռութը մինչև այժմ դեռ ոչ մի անգամ առիթ չի ունեցել հայտաբերելու իրեն իր իսկական արժանիքներով։ Նրա հոր առանձնասենյակում գտնվող գրքերը, պատերին կախած նկարները, նրա սեփական նվագը դաշնամուրի վրա—այդ բոլորը միայն գեղեցիկ արտաքին է։ Մորգերն ու նրանց բոլոր ծանոթները կույր ուխտել էին իսկական գրականության, իսկական նկարչության, իսկական երաժշտության հանդեպ։ Իսկ այդ բոլորից ավելի կարևոր էր կյանքը, որի մասին նրանք նույնպես ոչ մի գաղափար չունեին։ Նրանք անվանում էին իրենց միանձնադավաններ, կրում էին պահպանողական ազատամտության դիմակ, սակայն ամենաքիչը երկու դար ետ էին մնացել դրական գիտությունից. նրանց մտածելակերպը միջնադարյան էր, իսկ նրանց հայացքներն աշխարհի ու նրա ծագման մասին հիշեցնում էին մետաֆիզիկ մեթոդը, որը նույնքան երիտասարդ էր, որքան ամենաերիտասարդ ռասան, և նույնքան հին, որքան քարայրաբնակ մարդը, մինչև անգամ ավելի հին։ Դա այն մետաֆիզիկան էր, որը ստիպում էր առաջին կապկանման մարդուն վախենալ խավարից, հրեային ներշնչում էր այն միտքը, թե Եվան ծագում է առել Ադամի կողից, Դեկարտին սովորեցրել էր աշխարհը դիտել որպես իր սեփական շնչին «ես»-ի ստվերագիծը, իսկ անգլիացի նշանավոր մի հոգևորականի դրդել էր ծաղրել էվոլուցիան այնպիսի կծու սատիրայով, որը հիացմունքի փոթո-

թիկ առաջացրեց և նրա անունը թավ խզբզաղրերով դրոշմեց պատմության էջերում։

Որքան շատ էր խորհրդածում Մարտինը ա դ բոլորի մասին, այնքան ավելի էր ուժեղանում նրանում այն համոզումը, թե մի կողմից այդ փաստաբանների, սպաների, առևտրականների, բանկիրների և մյուս կողմից բանվորական դասի միջև գոյություն ունեցող տարբերությունը հիմնված է այն բանի վրա, որ նրանք այլ կերպ են ուտում, ապրում և հագնում։ Նրանց բոլորին էլ պակասում էր այն ամենագ խավորը, որը նա գտնում էր գրքերում և զգում էր իր մեջ։ Մորզերը ցույց տվին Մարտինին իրենց շրջապատի ամենաընտիր մարդկանց, իսկ Մարտինը չհիացավ նրանցով։ Թեև նա չքավոր մի բատրակ էր, բայց և այնպես ամբողջ գլխով բարձր էր այն բոլորից, որոնց նա հանդիպել էր Մորզերի հյուրասենյակում։ Լոմբարդից դուրս գրելով իր կոստյումը, Մարտինը գնում էր այդ մարդկանց մոտ և նրանց միջև զ ում էր իրեն որպես իշխան, որը ստիպված էր ապրել հովիվների միջև։

— Դուք ատում եք սոցիալիստներին և վախենում եք նրանցից,— ասաց նա մի օր ճաշի ժամանակ միստեր Մորզին, —բայց ինչո՞ւ։ Չէ՞ որ դուք չգիտեք ոչ նրանց, ոչ էլ նրանց հայացքները։

Սոցիալիզմի մասին խոսք բացվեց այն բա՞ից հետո, երբ միսիս Մորզն իր հերթական ներբողը հյուսեց միստեր Հեպգուդի նկատմամբ։ Մարտինը չէր հանդուրժում այդ ինքնաբավական դեմքին և նրա համբերությունը հատնում էր ամեն անգամ, երբ նրա մասին էին խոսում։

— Այո,— ասաց Մարտինը,—Չարլի Հեպգուդը ապագա ունեցող մարդ է. այդ մասին խոսում են բոլորը, և դա ճիշտ է։ Կարծում եմ, որ նա իր մահվանից շատ առաջ կբազմի նահանգապետի աթոռին և կամ սենատոր կդառնա։

— Ինչո՞ւ եք այդպես կարծում,— հարցրեց միսիս Մորզը։

— Ես լսեցի նրա ճառը նախընտրական կամպանիայի

ժամանակ։ Այդ ճառն այնքան հիմար-խելոք էր, անհամ և միաժամանակ այնքան համոզիչ, որ լիդերները պիտի հաշվեն նրան բոլորովին վստահելի և անվտանգ մարդ, իսկ նրա ասած գռեհկությունները կատարելապես համապատասխանում են միջին ընտրողի գռեհկությանը։ Ամեն մարդու համար հաճելի է լսել ամբիոնից իր սեփական հայացքները։

— Ինձ իսկապես թվում է, որ դուք նախանձում եք միստեր Հեպգուդին,— ասաց Ռութը։

— Աստված չանի։

Մարտինի աչքերին նշմարված սարսափը միսիս Մորդի մեջ ռազմական տրամադրություն առաջացրեց։

— Դուք իհարկե չեք ուզում ասել, որ միստեր Հեպգուդը հիմար է,— հարցրեց նա սառը տոնով։

— Ոչ ավելի հիմար, քան միջին ռեսպուբլիկականը,— առարկեց Մարտինը,—կամ միջին դեմոկրատը։ Բոլոր նրանք կամ խորամանկ են, կամ հիմար, ընդսմին խորամանկները փոքրամասնություն են կազմում։ Միակ խելացի ռեսպուբլիկականները միլիոնատերերն են և նրանց գիտակից սպասավորները։ Սրանք շատ լավ գիտեն, թե որտեղի՞ց է փչում խորոված ի հոտը, և գիտեն, թե ի՞նչ են անում։

— Ահա ես ռեսպուբլիկական եմ,— ժպիտով ասաց միստեր Մորդը,— հետաքրքրական է, թե ինչպիսի՞ որակում կրտաք ինձ։

— Դուք անգիտակից սպասավոր եք։

— Սպասավո՞ր։

— Հասկանալի է։ Դուք կորպորացիայի անդամ եք։ Դուք գաղափար չունեք բանվոր դասակարգի մասին և քրեական պրակտիկա չունեք։ Ձեր եկամուտը կախված չի ոչ իրենց կանանց ծեծող տղամարդկանցից, ոչ էլ գրպանահատներից։ Դուք սնվում եք՝ հասարակության մեջ գլխավոր դեր կատարող մարդկանց հաշվին, իսկ ամեն մեկն էլ ծառայում է այն մարդուն, ով կերակրում է նրան։ Իհարկե, դուք սպասավոր եք։ Դուք շահագրգռված եք պաշտպանել այն կապիտալիս-

տական կազմակերպությունների շահերը, որոնց դուք ծառայում եք։

Միստեր Մորզը թեթևակի կարմրեց։

— Պետք է նկատեմ, սըր,—ասաց նա,— որ դուք խոսում եք, ինչպես թունդ սոցիալիստ։

Ահա հենց այդ ժամանակ էր, որ Մարտինն արեց իր դիտողությունը սոցիալիզմի վերաբերյալ.

— Դուք ատում եք սոցիալիստներին և վախենում եք նրանցից։ Ինչո՞ւ։ Չէ՞ որ դուք չգիտեք նրանց և նրանց հայացքները։

— Ամեն պարագայում ձեր հայացքները համընկնում են սոցիալիստների հայացքներին,—առարկեց միստեր Մորզը։

Ռութը անհանդիստ նայում էր խոսակիցներին, իսկ միսիս Մորզն ուրախանում էր, որ իր թշնամին ընտանիքի մեծի աչքում շնորհազուրկ է դառնում։

— Եթե ես ռեսպուբլիկաններին հիմար եմ անվանում և ասում եմ, որ ազատությունը, հավասարությունն ու եղբայրությունը—օճառի տրաքված պղպջակներ են, դրանից դեռ ես չի հետևում, որ ես սոցիալիստ եմ,— ասաց Մարտինը ժպտալով։— Եթե ես չեմ հավատում Ջեֆֆերսոնին և այն տգետ ֆրանսիացուն, որը դաստիարակել է նրան, դա նույնպես բավական չի սոցիալիստ կոչվելու համար։ Վստահեցնում եմ ձեզ, միստեր Մորզ, որ դուք ինձանից ավելի մոտ եք սոցիալիզմին. ես, ըստ էության, նրա կատաղի թշնամին եմ։

— Դուք, իհարկե, բարեհաճում եք կատակել,—սառը կերպով հարցրեց միստեր Մորզը։

— Ամենևին։ Ես բոլորովին լուրջ եմ խոսում։ Դուք հավատում եք հավասարությանը, իսկ ինքներդ ծառայում եք կապիտալիստական կորպորացիաներին, որոնք մտածում են լոկ այն մասին, թե ինչպե՞ս թաղեն հավասարությունը։ Իսկ ինձ դուք սոցիալիստ եք անվանում միայն նրա համար, որ ես բացասում եմ հավասարությունն ու հաստատում եմ հենց այն սկզբունքը, որը դուք, ըստ էության ասած, ապացուցում եք ձեր ամբողջ կյանքով։ Ռեսպուբլիկանները հավասա-

ության ամենադաժան թշնամիներն են, թեպետ նրանք քարոզում են այն ամեն տեղ, ուր հնարավոր է։ Հանուն հավասարության նրանք շարունակ խախտում են հավասարությունը։ Դրա համար էլ ես նրանց հիմար եմ անվանում։ Իսկ ես անհատապաշտ եմ։ Ես հավատում եմ, որ վազքում հաղթում է ամենաարագը, իսկ ըմբշամարտում՝ ամենաուժեղը։ Այդ սկզբունքը ես քաղել եմ իմ բիոլոգիայից, և կամ ինձ թվում է, որ քաղել եմ այդտեղից։ Կրկնում եմ, որ ես անհատապաշտ եմ, իսկ անհատապաշտները սոցիալիզմի հավիտենական, վաղուցվա թշնամիներն են։

— Սակայն դուք գնում եք սոցիալիստական միտինգների,—ջղագրգիռ ասաց միստեր Մորզը։

— Իհարկե, ինչպես հետախույզը գնում է թշնամու բանակատեղը։ Այլ կերպ ինչպե՞ս կարելի է ուսումնասիրել հակառակորդին։ Բացի այդ ես շատ եմ զվարճանում այդ միտինգներում։ Սոցիալիստները հիանալի վիճողն՝ը են, և լավ թե վատ ուսումնասիրել են ինչ-որ բան։ Նրանցից ամեն մեկը սոցիոլոգիայի և ամեն տեսակ «լոգիաների» մասին ավելի շատ բան գիտի, քան սովորական կապիտալիստը։ Այո, ես մոտավորապես տասն անգամ եղել եմ սոցիալիստական միտինգներում, բայց դրանով սոցիալիստ չդարձա, ինչպես և Չարլի Հեսգուդի ճամարտակություններից ռեսպուբլիկական չդարձա։

— Չգիտեմ, չգիտեմ,— անվճռական ասաց միստեր Մորզը,— ինձ թվում է, որ դուք այնուամենայնիվ թեքվում եք դեպի սոցիալիզմը։

«Սատանան տանի,—մտածեց Մարտինը,— իմ ասածներից նա ոչ մի բառ չի հասկացել։ Կարծես ես քարե պատի հետ էի խոսում։ Ո՞ւր է կորցրել նա իր ամբողջ կրթությունը»։

Եվ այդ կերպով Մարտինը իր զարդացման ճամփին երես-երեսի ընդհարվեց տնտեսական, դասակարգային բարոյականության հետ և շուտով այդ բարոյականությունը նրա համար դարձավ իսկական խրոմիլակ։ Մարտինն ինքը ինտելեկտուալ բարոյախոս էր և նրան շրջապատող մարդկանց

բարոյականությունը նրան ավելի էր ջղայնացնում, քան նը բանց ամբարտավան գոհկությունը. դա մի դարմանալի խառնուրդ էր էկոնոմիկայի, մետաֆիզիկայի, սենտիմենտալության և նմանողականության։

Այդ հետաքրքրական խառնուրդի մի օրինակը Մարտինը անսպասելիորեն տեսավ իր մերձավորների միջև։ Նրա քույրը Մերիենը ծանոթացել էր աշխատասեր երիտասարդ մի դերմանացու—մեքենագետի հետ, որը, հիմնավորապես ուսումնասիրելով իր արհեստը, բացել էր հեծանիվային արհեստանոց, դարձել էր էժանագին հեծանիվների վաճառման գործակալ և բավական դրամ շահել։ Մերիենը այցելեց Մարտինին ու հաղորդեց նրան իր նշանդրեքի մասին, և հետո կատակի համար, վերցրեց նրա ձեռքը և ափի դծերով սկսեց գուշակել նրա ճակատագիրը։

Հետևյալ անգամ Մերիենն իր հետ բերեց և Հերման Շրմիդտին։ Մարտինը շնորհավորեց նրանց ամենաքնքուշ արտահայտություններով, իսկ այդ, ըստ երևույթին, այնքան էլ դուր չեկավ մի քիչ բթամիտ նշանածին։ Այդ վատ տպավորությունն ավելի ուժեղացավ, երբ Մարտինը կարդաց՝ Մերիենի նախորդ այցելությունից հետո իր գրած բանաստեղծությունը։ Դա մի գեղեցիկ ոտանավոր էր, նվիրված իր քրոջ, «Գուշակուհի» վերնագրով։ Բարձրաձայն կարդալով այն՝ Մարտինը զարմանքով նկատեց, որ իր հյուրերը ոչ մի գոհունակություն չհայտնեցին։ Ընդհակառակը քրոջ աչքերն անհանգիստ սևեռվեցին իր նշանածին, որի կոպիտ դիմագիծը պարզ արտահայտում էր տհաճություն և ջղագրգռություն։ Սակայն միջադեպը դրանով էլ փակվեց, հյուրերը շուտով գընացին, և Մարտինը մոռացավ այն, թեև նրան անհասկանալի էր, թե ինչպե՞ս մի կին, թեկուզ բանվոր դասից, կարող է դժգոհ լինել, որ ի պատիվ իրեն բանաստեղծություն է գրված։

Մի քանի օրից Մերիենը նորից հանդիպեց Մարտինին՝ այս անգամ մենակ։ Հագիվ ներս մտած՝ նա սկսեց դառնորեն կշտամբել նրան անտեղի վարմունքի համար։

— Բանը ինչո՞ւմն է, Մերիին,— հարցրեց Մարտինը զարմանքով— Դու այնպիսի տոնով ես խոսում, որ կարծես ամաչում ես քո հարազատներից և կամ համենայն դեպս քո եղբորից։

— Իհարկե, ամաչում եմ,— ասաց Մերիենը։

Մարտինը վերջնականապես շփոթվեց՝ տեսնելով քրոջ աչքերում վիրավորանքի արտասուքներ։ Ամեն պարագայում վիրավորանքն անկեղծ էր։

— Մի՞թե քո Հերմանը խանդում է, որ եղբայրը բանաստեղծություն է գրել քրոջ մասին։

— Նա բոլորովին չի խանդում,— հեկեկաց Մերիենը,— նա ասում է, որ դա անքաղաքավարի, անվա... անվայել բան է։

Մարտինը սուլեց՝ դրանով արտահայտելով իր ապշությունը. հետո արկղից հանեց «Գուշակուհու» մի օրինակ։

— Չեմ հասկանում,— ասաց նա, այդ թերթիկը տալով իր քրոջը,— ինքդ կարդա և ասա, թե ի՞նչ անվայել բան կա սրանում։ Դու այդպես ասացիր, չէ՞։

— Որ Հերմանն ասում է, ուրեմն կա,— առարկեց Մերիենը՝ զզվանքով հեռացնելով իրենից թերթիկը— Նա պահանջում է, որ դու պատռես այդ։ Նա ասում է, որ չի ուզում ունենալ այնպիսի կին, որի մասին այդպիսի բաներ են գրում, և այնպես, որ ամեն մարդ կարողանա կարդալ։ Նա ասում է, որ դա խայտառակություն է... և նա չի հանդուրժի այդ։

— Դատարկ բան,— ուզում էր աղաղակել Մարտինը, բայց նրա մտքերի ընթացքը հանկարծ փոխվեց։

Նրա առաջ նստած էր մի դժբախտ աղջիկ, որին չէր կարելի տարհամոզել, ինչպես և նրա նշանածին, և այդ պատճառով, դիտակցելով այդ միջադեպի ամբողջ արտառոցությունը, Մարտինը վճռեց հպատակվել։

— Լավ,— ասաց նա և պատառոտելով այդ գրվածքը, դրեց կողովը։

Այդ անելով՝ նա մխիթարվում էր, որ «Գուշակուհու» բը-

նագիրն արդեն գտնվում է Նյու-Յորքի խմբագրատներից մեկում։ Ոչ Մերիենը, ոչ նրա ամուսինը երբեք չեն իմանա այդ, և ոչ մի վատ բան չի պատահի, եթե այդ անմեղ փոքրիկ բանաստեղծությունը տպվի։

Մերիենը ձեռքն երկարեց դեպի կողովը։

— Կարելի՞ է,— հարցրեց նա։

Մարտինը գլխով հավանության նշան արեց և լուռ նայում էր, թե ինչպե՛ս իր քույրը հավաքում է պատառոտված գրքվածքի կտորտանքները,— դրանք հարկավոր էին Մերիենին իր իրեղեն ապացույց՝ իր հաջող գլուխ բերած առաքելության։ Մերիենն ինչ-որ բանով հիշեցնում էր Լիզզի Կոնոլլիին, թեև Մերիենը չուներ այն հուրն ու կյանքի եռանդը, որով անչափ օժտված էր թատրոնում իր հանդիպած դերասատի բանվորուհին։ Բայց ընդհանուր շատ բան կար նրանց միջև— զգեստը, շարժումները, վարք ու բարքը։ Մարտինը չկարողացավ զսպել իր ժպիտը, երբ հանկարծ այդ երկու աղջիկներին պատկերացրեց Մորղերի հյուրասենյակում։ Բայց այդ ծիծաղաշարժ պատկերն անհետացավ, և Մարտինը համակվեց անվերջ մենակության զգացումով։ Ե՛վ իր քույրը, և՛ Մորղերի հյուրասենյակը լոկ վերստացույց սյուներ էին իր անցած ճամփին։ Այդ ամենն արդեն մնացել է ետևում։ Մարտինը քնքշորեն նայեց իր գրքերին։ Դրանք էին նրա միակ, միշտ հավատարիմ ընկերները։

— Ինչպե՞ս։ Դու ի՞նչ ասացիր,— հարցրեց հանկարծ Մարտինը զարմանքով։

Մերիենը կրկնեց իր հարցումները։

— Ինչու՞ ես չեմ աշխատո՞ւմ,— ծիծաղեց Մարտինը, բայց նրա ծիծաղը շատ անկեղծ չէր հնչում։— Քո Հերմա՞նն է պատվիրել քեզ, որ հարցնես ինձ այդ մասին։

Մերիենը բացասական շարժեց գլուխը։

— Մի՛ ասիր,— խստիվ ասաց Մարտինը, և Մերիենը ցփոթված կախեց գլուխը։— Ասա՛ քո Հերմանին, որ նա չբիանանի ուրիշների գործերին։ Երբ ես գրում եմ նրա նշանածին նվիրված բանաստեղծությունս, դա, ընդունում եմ, նրա

գործն է, բայց դրանից դենը թող չկոխի իր քիթը։ Հասկացա՞ր։ Հետևաբար, դու կարծում ես, որ ինձնից դրող չի՞ դուրս գա,— շարունակեց նա։— Դու գտնում ես, որ ես ճամփից մոլորվե՞լ եմ, որ ես խայտառակո՞ւմ եմ ամբողջ ընտանիքը։ Այո՞։

— Ես գտնում եմ, որ ավելի լավ կլիներ զբաղվել որևէ աշխատանքով,— հաստատ շեշտով ասաց Մերիենը, և Մարտինը տեսավ, որ քույրը անկեղծ է խոսում։— Հերմանը զբաղում է...

— Սատանան տանի Հերմանին,— բարեհոգորեն ընդմիջեց նրան Մարտինը։— Ավելի լավ է, որ դու ինձ ասես, թե ե՛րբ է ձեր հարսանիքը։ Եվ հարցրու քո Հերմանին, թե նա ինձանից կբարեհաճի՞ ընդունել հարսանեական նվեր։

Քրոջ գնալուց հետո Մարտինը երկար մտածեց այդ միջադեպի մասին և մի երկու անգամ դառնագին ծիծաղեց։ Այո՛, նրանք բոլորը՝ նրա քույրն ու վերջինիս նշանածը, իր շրջանի մարդիկ, ինչպես և Ռութին շրջապատողները,—նրանք բոլորն էլ իրենց նեղ ու փոքրիկ կյանքը հարմարեցնում են ընդհանուր նեղ ու փոքրիկ ֆորմուլաների, բոլորն էլ իրենց կյանքը սարքում են պատրաստի ու խղճուկ տիպարի համապատասխան։ Եվ շարունակ նայելով իրար, նմանվելով իրար՝ այդ ողորմելի արարածները պատրաստ են ջնջել իրենց անհատական առանձնահատկությունները, հրաժարվել ինքնուրույն կյանքից, միայն թե չխախտեն այդ անհեթեթ կանոնները, որոնք գերել են նրանց հենց մանկությունից։ Նրանք բոլորը շարան-շարան անցան Մարտինի մտավոր աչքի առաջ՝ Բերնարդ Հիգգինբոթամը միստեր Բեալերի հետ թեանցուկ Հերման Շմիդտը Չարլի Հեպգուդի հետ գրկախառնված։ Մարտինը ուշադիր զննեց նրանց բոլորին, չափեց նրանց իր՝ գրքերից վերցրած չափանիշով։ Նա զուր էր հարցնում իրենո՞ւր են մեծ սրտերը, մեծ մտքերը։ Նրանք չէին երևում՝ իր նեղ խցիկը լցրած գսեհիկ, ագետ ուրվականների բազմության միջև, իսկ այդ բազմության նկատմամբ նա զգում էր

նույնպիսի արհամարհանք, որը զգում էր, հավանականաբար, Կիրկեան իր խողերի նկատմամբ։

Երբ ուրվականներից վերջինը անհայտացավ, հանկարծ հայտնվեց ևս մեկը, անսպասելի և անկոչ,— մի թոկից փախած՝ ահագին լայնեզր գլխարկով, երկշարք կոճակներով կուրտիկ հագին, երերուն քայլվածքով, ինչպիսին եղել է ինքը՝ Մարտին Իդենը հեռավոր անցյալում։

— Դու էլ բոլոր մյուսների պես ես եղել, բարեկամ,— հեգնաբար ասաց նրան Մարտինը։— Նույնպիսի բարոյականություն ունեիր և դու, և նրանցից ավելի բան չգիտեիր։ Ոչ մի բանի մասին չէիր մտածում և հոգս չէիր քաշում։ Հանգամանքները ձեռք էիր բերում պատրաստի, ինչպես զգեստը։ Դու անում էիր այն, ինչ ուրիշների հավանությանն էր արժանանում։ Դու քո շայկայի պարագլուխն էիր, որովհետև նա էր ընտրել քեզ։ Դու կռվում էիր և հրամանատարություն անում շայկային ոչ թե նրա համար, որ դա քեզ դուր էր գալիս, այլ այն պատճառով, որ ուրիշները քաջալերում էին՝ քո ուսին խփելով։ Դու ջախջախեցիր Ճարպոտ Մուրթին, որովհետև չէիր ուզում զիջել, իսկ չէիր ուզում զիջել նրա համար, որ դու կոպիտ անասուն էիր, և բացի այդ՝ քո գլուխն էին տանում, թե տղամարդը պիտի լինի կատաղի, արյունարբու և անգութ, թե ծեծելն ու հաշմանդամ դարձնելը՝ արժանավայել է և տղամարդու գործ։ Իսկ ինչո՞ւ համար դու խլում էիր աղջիկներին քո ընկերներից։ Իսկի էլ ո՛չ այն պատճառով, որ նրանք դուր էին գալիս քեզ, այլ պարզապես նրա համար, որ քեզ շրջապատողները հենց կանուխ հասակից զարթեցրել են քո մեջ երիվարի և վայրենի ցուլի բնազդներ։ Հիմա բավական ժամանակ է անցել դրանից։ Ինչո՞ւ ես այժմ մտածում այդ ամենի մասին։

Եվ, կարծես դրան իբր պատասխան, արագ փոխվեցին իր աչքին երևացող տեսիլները։ Կոպիտ կուրտիկը և լայնեզր գլխարկն անհետացան և փոխարինվեցին հասարակ համեստ կոստյումով. դեմքը դադարեց մռայլ ու գազանային լինելուց և, ոգեշնչվելով ճշմարտության և գեղեցկության հետ շփվե-

լուց, փայլեց ներքին լույսով։ Տեսիլքը հիմա շատ նման էր այժմյան Մարտինին. նա կանգնած էր սեղանի առաջ, որից վերև վառվում էր լամպը, կռացած բաց գրքի վրա։ Մարտինը նայեց նրա վերնագրին. դա «Էսթետիկայի հիմքերն» էին։ Հետևյալ ակնթարթում Մարտինը միացավ այդ տեսիլքին, ձուլվեց նրա հետ և, նստելով սեղանի առաջ, խորասուզվեց ընթերցանության մեջ։

ԳԼՈՒԽ XXX

Աշնանամուտի մի արևոտ ջինջ օր, նույնպիսին, ինչպես անցյալ տարի, երբ Մարտինն ու Ռութը առաջին անգամ հասկացան, որ սիրում են իրար, Մարտինը կարդում էր Ռութին իր «Սոնետները սիրո մասին»։ Ինչպես և այն ժամանակ, նրանք նստած էին իրենց սիրած տեղում, բլուրների միջև։ Ռութը մի քանի անգամ ընդհատեց ընթերցումը խանդավառ բացագանչություններով, և Մարտինը վերջացնելով ընթերցումը, հուզմունքով սպասում էր, թե նա ի՞նչ կասի։

Ռութը երկար լուռ մնաց՝ կարծես որոնելով այնպիսի բառեր, որոնք կարող էին մեղմել իր գատողության խստությունը։

— Այդ բանաստեղծությունները հիանալի են,— ասաց նա վերջապես,— իհարկե, նրանք հիանալի են։ Բայց չէ՞ որ դուք նրանց համար գրում չեք կարող ստանալ Այսինքն, հասկանո՞ւմ եք, թե ես ինչ եմ ուզում ասել,— Ռութն ասաց այդ համարյա պապանակով,— այն բոլորը, որ դուք գրում եք, գուցե է գալիս, որ անկիրառելի է կյանքում։ Ես չգիտեմ, թե դրա պատճառն ի՞նչ է,—հավանական է, այստեղ մեղավոր են շուկայի պայմանները,— բայց դուք ձեր գրվածքներով չեք կարող գրում շահել։ Ծիշտ հասկացեք ինձ, սիրելիս։ Ես շատ եմ հպարտանում,— այլապես ես իսկական կին չէի լինի,— ես հպարտանում և ուրախանում եմ, որ այդ հրաշալի բանաստեղծությունները ձոնված են ինձ։ Բայց չէ՞ որ գր-

բանք չեն մոտեցնում մեր հարսանիքի օրը. ճի՞շտ է, Մարտին, Ինձ մի՛ համարեք ընչաքաղց կին։ Բայց ես շարունակ մտածում եմ մեր ապագայի մասին։ Չէ՞ որ մի ամբողջ տարի է անցել այն օրվանից, երբ մենք իրար հայտնեցինք մեր սերը, իսկ հարսանիքը նույնքան հեռու է, ինչքան առաջ։ Թող այս խոսակցությունը անհամեստ չթվա ձեզ. մի մոռանաք, որ հարցն իմ սրտի մասին է, իմ ողջ կյանքի մասին։ Եթե դուք այդքան շատ եք սիրում գրել, գործ ճարեք ձեզ որևէ թերթում։ Ինչո՞ւ ռեպորտյոր չեք դառնում՝ գոնե մի առժամանակ։

— Դա կփչացնի իմ ոճը,— ասաց Մարտինը մեղմ, միապաղաղ ձայնով,— դուք չեք կարող պատկերացնել, թե ինչքա՞ն աշխատանք եմ թափել՝ այդ ոճը մշակելու համար։

— Բայց չէ՞ որ դուք թերթերի համար ֆելիետոններ եք գրել դրամ շահելու համար։ Դրանք չփչացրի՞ն ձեր ոճը։

— Դա բոլորովին այլ բան է։ Ես դրանք գրել եմ ամբողջ օրը լուրջ աշխատելուց հետո։ Իսկ ռեպորտյորի աշխատանքով պիտի զբաղվել առավոտից մինչև երեկո, դրան հատկացնել ամբողջ կյանքը։ Ընդամենը կյանքը վերածվում է ինչ-որ մրրիկի, դա մի բոպեի կյանք է՝ առանց անցյալի և առանց ապագայի։ Ռեպորտյորը ժամանակ էլ չունի մտածելու որևէ այլ ոճի մասին՝ բացի ռեպորտյորական ոճից։ Իսկ դա գրականություն չի։ Ռեպորտյոր դառնալ հենց հիմա, երբ ինձ մոտ նոր է սկսել մշակվել ու որոշվել ոճը,— դա ինձ համար կլիներ գրական ինքնասպանություն։ Մինչև անգամ հիմա ամեն մի ֆելիետոն, ֆելիետոնի ամեն մի բառը ինձ համար միշտ էլ տանջանք է, բռնություն ինձ վրա, գեղեցկության իմ ըմբռնումի վրա։ Դուք չեք պատկերացնում, թե դա ո՛րքան դժվար է։ Պարզապես ես ինձ զգում եմ որպես ոճրագործ։ Ես մինչև անգամ դադտնարար ուրախացել եմ, երբ իմ «արհեստավորական» պատմվածքները այլևս չէին վաճառվում, թեպետ դրա հետևանքով ես հարկադրվել եմ գրավ դնել իմ կոստյումը։ Ի՞նչը կարող է համեմատվել այն վայելքի հետ, որ ես ապրեցի, երբ գրում էի «Սոնետներ սիրո մասին»։ Չէ՞ որ ստեղծագործության ուրախությունը հանդիսանում է աշխար-

հում ամենավեհ ուրախությունը, որը հարյուրապատիկ վարձատրել է ինձ իմ կրած բոլոր զրկանքների փոխարեն։

Մարտինը չգիտեր, թե Ռութի համար «ստեղծագործության ուրախությունը»—դատարկ բառեր են։ Ճիշտ է, Ռութը հաճախ կիրառում էր այդ բառերը խոստկցության ժամանակ, և Մարտինն առաջին անգամ նրա բերանից էր լսել ստեղծագործության ուրախության մասին։ Ռութը կարդացել էր այդ մասին, լսել էր համալսարանում պրոֆեսորների դասախոսություններում, մինչև անգամ հիշատակել էր այդ բառերը, երբ քննություն էր տալիս գեղարվեստի բակալավրի աստիճան ստանալու համար։ Բայց ինքը՝ Ռութն այնքան սովորական աղջիկ էր, ամեն տեսակ ստեղծագործական հույզերից այնքան զուրկ, որ կարող էր միայն կուրորեն կրկնել այն, ինչ ասում էին ուրիշները ստեղծագործության մասին։

— Կարող է պատահել, որ խմբագիրն իրավացիորե՞ն է ուղղել ձեր «Ծովի երգերը»,— հարցրեց Ռութը։— Եթե խմբագիրն ընդունակ չլիներ գնահատել գրական որևէ աշխատություն, նա խմբագիր չէր լինի։

— Դա մի ավելորդ ապացույց է հանրաճանաչ մտքերի կայունության,— ցասկոտ առարկեց Մարտինը՝ ջղագրգռված նրանից, որ հիշատակվեց իր թշնամիների—խմբագիրների անունը։—Ինչ գոյություն ունի, դա համարվում է ոչ միայն ճիշտ, այլև լավագույն։ Որևէ բանի գոյության հենց փաստը դիտվում է նրա արդարացումը, և այն էլ ոչ թե տվյալ պայմաններում, այլ հավերժորեն։ Իհարկե, մարդիկ հավատում են այդ անմտությանը՝ միայն շնորհիվ իրենց փտած տգիտության, շնորհիվ ինքնախաբեության, որն անչափ հիանալի նրկարագրել է Վեյնինգերը։ Տգետ մարդիկ երևակայում են, թե մտածում են և կարգադրում են ճակատագիրն այն մարդկանց, որոնք իրոք մտածում են։

Մարտինը հանկարծ կանգ առավ՝ վախենալով այն ենթադրությունից, որ Ռութի համար այդ ամենը դեռևս անհասկանալի է։

— Ես չգիտեմ, թե ով է Վեյնինգերը,—առարկեց նա,—

դուք միշտ էլ այնքան սարսափելի կերպով ընդհանրացնում եք ամեն բան, որ ես զգաստում եմ ձեր մտքերը հասկանալուց։ Ես ասում եմ, որ եթե խմբագիրը...

— Իսկ ես ձեզ ասում եմ,— ընդմիջեց Մարտինը,— որ բոլոր խմբագիրները, գոնե նրանց իննսուն ինը տոկոսը,— պարզապես ձախողակներ են։ Նրանք անհաջողություն կրած գրողներ են։ Սակայն մի՛ կտրծեք, որ նրանց համար ավելի հաճելի է տաժանելի աշխատանք կատարել խմբագրատանը և գիտակցել, որ ստրկական կախում ունեն ժուռնալի հաջողությունից և հրատարակչի ճարպկությունից, քան անձնատուր լինել ստեղծագործության ուրախություններին։ Նրանք փորձել են գրել, բայց ձախողվել են։ Եվ ահա դրանից էլ առաջանում է ամենաարտառոց մի պարադոքս։ Դեպի գրական հաջողություն տանող բոլոր դռներին հսկում են այդ պահապան շները, գրական ասպարեզում ձախողվածները։ Խմբագիրները, նրանց օգնականները, ռեցենզենտները—առհասարակ այն բոլորը, որոնք կարդում են գրվածքները,—ամենքն էլ այնպիսի մարդիկ են, որոնք ժամանակին ուզեցել են գրող դառնալ, բայց ձախողել են։ Եվ ահա հենց նրանք, որոնք դուրս են եկել ամենաշնորհաղուրկները, հանդիսանում են գրական ճակատագրերի տերերը և վճռում են, թե ի՛նչն է հարկավոր տպել, և ինչը չտպել։ Նրանք՝ ողորմելիներն ու անտաղանդները դատում են հանճարին։ Նրանց օրինակին հետևում են և քննադատները, առհասարակ նույնպիսի ձախողակներ։ Մի՛ ասեք ինձ, թե նրանք երբեք չեն երազել ու չեն փորձել գրել չափածո կամ արձակ,— նրանք փորձել են, բայց դրանից ոչինչ դուրս չի եկել։ Ժուռնալների այդ քննադատական հոդվածներից մարդու սիրտն է խառնում, ինչպես ձկան յուղից։ Հո դուք դիտեք իմ տեսակետը քննադատության նկատմամբ։ Իհարկե, կան մեծ քննադատներ, բայց նրանք հազվադեպ են, ինչպես դիսավոր աստղերը։ Եթե ինձանից գրող դուրս չգա, խմբագիր կդառնամ։ Վերջ ի վերջո դա մի պատառ հաց է։ Մինչև անդամ յուղն էլ հետը։

Սակայն Ռութի ժիր միտքը իսկույն նկատեց իր սիրածի դատողությունների մեջ պարունակվող հակասությունը։

— Լա՛վ, Մարտին, եթե դա այդպես է, և սաղանդավոր մարդկանց համար խմբագրատների բոլոր դռները փակ են, այդ դեպքում ինչպե՞ս են առաջացել մեծ գրողները։

— Նրանք արել են անկարելին,— պատասխանեց նա,— նրանք ստեղծել են այնպիսի բոցավառ, փայլուն երկեր, որ նրանց բոլոր թշնամիները լռեցրել են, ոչնչացել։ Նրանք հաջողություն են ձեռք բերել հրաշքով, որը վիճակվում է հազարից մեկին։ Նրանք նման են Կարլեյլի հսկաներին, որոնց չի կարելի հաղթահարել։ Ես էլ կանեմ նույնը։ Ես ձեռք կբերեմ անկարելին։

— Իսկ եթե ձախողվե՞ք։ Դուք պետք է մտածեք և իմ մասին, Մարտին։

— Եթե ես ձախողվեմ,—Մարտինը նայեց Ռութին մի բոպե՝ կարծես նա անիմաստ մի բան ասած լիներ։ Հետո նրա աչքերը փայլատակեցին։— Այն ժամանակ ես խմբագիր կդառնամ, և դուք կլինեք խմբագրի կին։

Ռութը ընդամենը ծամածռեց իր դեմքը—հմայիչ մի ծամածռություն, որը Մարտինը անմիջապես վանեց համբույրներով։

— Լա՛վ, բավական է,— բողոքում էր Ռութը՝ ջանալով կամքի ճիգով աղատվել Մարտինի ուժի թավշանքից։— Ես խոսել եմ Հայրիկիս ու մայրիկիս հետ։ Ես դեռ երբեք նրանց հետ այդպես չէի պատերազմել։ Ես անպատկառ ու խիզախ վարվեցի նրանց հետ։ Նրանք երկուսն էլ տրամադրված են ձեր դեմ, բայց ես այնքան հաստատակամ խոսեցի նրանց հետ ձեր նկատմամբ իմ սիրո մասին, որ Հայրիկս, վերջապես համաձայնեց ձեզ ընդունել իր գրասենյակը ծառայության։ Նա մինչև անգամ վճռեց միանգամից ձեզ նշանակել վայելուչ ոռճիկ, որպեսզի մենք կարողանանք ամուսնանալ և ինքնուրույն ապրել մի որևէ տեղում մի փոքր կոտեջում։ Դա նրա կողմից մեծ սիրալիրություն է, այնպես չէ՞, Մարտին։

Մարտինը կկաց, թե ինչպես բութ հուսահատությունը ճնշեց իր սիրտը։ Նա մեքենայաբար ձեռքը տարավ դրպանը՝ ծխախոտ և թուղթ հանելու (որոնք նա արդեն երկար ժամանակ էր, որ չէր պահում իր մոտ) և անորոշ մրթմրթաց ինչոր բան։

Ռութը շարունակեց.

— Անկեղծ ասած,— միայն դուք, ի սեր աստծու, մի վիրավորվեք,— հայրիկիս բոլորովին դուր չեն գալիս ձեր ռադիկալ հայացքները, և, բացի այդ, նա ձեզ համարում է ծույլ։ Ես, իհարկե, գիտեմ, որ դուք ծույլ չեք։ Ես գիտեմ, թե դուք ինչքան շատ եք աշխատում։

«Ոչ, այդ բանը մինչև անգամ Ռութը չգիտի», մտածեց Մարտինը, բայց բարձրաձայն հարցրեց.

— Լավ, իսկ դո՞ւք ինչ եք կարծում։ Իմ հայացքները ձե՞զ էլ են չափազանց ռադիկալ թվում։

Նա շեշտակի նայեց նրա աչքերին՝ սպասելով պատասխանի։

— Դրանք ինձ թվում են... տարակուսելի,—պատասխանեց Ռութը վերջապես։

Դրանով ամեն ինչ ասված էր, և հանկարծ կյանքը Մարտինին թվաց այնքան տխուր, որ նա բոլորովին մոռացավ Ռութի կողմից զգուշությամբ արված առաջարկը— ծառայության մտնել նրա հոր դրասենյակը։ Իսկ Ռութին թվում էր, որ ինքն արդեն համարձակվել է բավական առաջ գնալ, դրա համար էլ պատրաստ էր համբերությամբ սպասել հարմար առիթի՝ այդ հարցին վերադառնալու համար։

Բայց երկար սպասելու կարիք չեղավ։ Մարտինն իր կողմից հարցում ուներ տալու Ռութին։ Մարտինն ուզում էր իմանալ, թե ինչրա՛ն է Ռութը հավատում նրան։ Եվ մի շաբաթ հետո երկուսն էլ ստացան իրենց հարցումների պատասխանը։

Մարտինը փութացրեց գործը՝ կարդալով Ռութին իր «Արևի ամոթանքը»։

— Ինչո՞ւ դուք չեք ուզում ռևպորտյոր դառնալ,— բացաղանչեց Ռութը, երբ Մարտինը վերջացրեց կարդալ,— դուք

*

շատ եք սիրում գրել և, անշուշտ, հաջողություն ձեռք կբերեիք, առաջ կգնայիք, անուն կշահեիք։ Չէ՞ որ մի քանի հատուկ թղթակիցներ ահագին գումարներ են շահում և, բացի այդ, ճամփորդում են ամբողջ աշխարհում։ Նրանց ուղարկում են Աֆրիկա,— օրինակ, Ստենլին,— նրանք Վատիկանում ինտերվյու են ունենում պապի հետ, հետազոտում են Տիբեթի խորհրդավոր քնջիկները։

— Նշանակում է, որ իմ հոդվածը ձեզ դուր չի՞ գալիս,— հարցրեց Մարտինը։— Հետևաբար, դուք ենթադրում եք, որ ես կարող եմ լինել միայն ժուռնալիստ, բայց ոչ երբեք գրող։

— Ո՛չ, ո՛չ։ Ես շատ հավանեցի ձեր հոդվածը. նա հիանալի է։ Բայց ես վախենում եմ, որ դա ձեր ընթերցողների գլխից վեր է։ Ամեն պարագայում դա իմ հասկացողությունից վեր է։ Հնչում է շատ լավ, բայց ես ոչինչ չհասկացա։ Նախ՝ չափազանց շատ է գիտական տերմինոլոգիան։ Սիրելիս, դուք սիրում եք ծայրահեղություններ, և ինչ-որ ձեզ հասկանալի է թվում, բոլորովին անհասկանալի է մեզ համար։

— Ճիշտ է, հոդվածում շատ կան փիլիսոփայական տերմիններ,— հաղիվ կարողացավ ասել Մարտինը։

Նա դեռևս հուզված էր, նոր էր կարդացել Ռութին իր ամենահասուն մտքերը,— և աղջկա դատողությունը նրան ապշեցրեց։

— Ասենք, թե դա շատ ողորմելի է ձևով,— փորձեց պնդել Մարտինը,— բայց մի՞թե դուք չեք համակրում և մտքերը։

Ռութը շարժեց գլուխը։

— Ո՛չ։ Դա բոլորովին նման չի այն բոլորին, որ ես կարդացել եմ... ես կարդացել եմ Մետերլինկին, և նա բոլորովին հասկանալի է ինձ։

— Նրա միստիկությունը ձեզ հասկանալի՞ է,—դոռաց Մարտինը։

— Այո՛։ Իսկ ձեր այդ հարձակումը նրա վրա ինձ բոլորովին անհասկանալի է։ Իհարկե, եթե խոսենք ինքնատիպության մասին...

Մարտինն անհամբեր մի շարժում արեց, բայց լուռ մնաց։ Հետո հանկարծ նրա դիտակցությանը հասավ, որ Ռութը շարունակում է խոսել արդեն բավական ժամանակ։

«Վերջ ի վերջո ձեր ստեղծագործությունը ձեզ համար խաղալիք է եղել,— ասում էր նա,—դուք բավական երկար զբաղվարճացել եք դրանով. հիմա արդեն ժամանակն եկավ լրջորեն վերաբերվելու կյանքին, մեր կյանքին, Մարտին։ Մինչև այժմ դուք ապրել եք միայն ձեզ համար»։

— Դուք ուզում եք, որ ես ծառայությա՞ն մտնեմ։

— Այո՛, հայրիկս առաջարկում է ձեզ...

— Գիտեմ, գիտեմ,— ընդմիջեց նա խստորեն,— բայց ես ուզում եմ իմանալ հավատո՞ւմ եք դուք ինձ, թե արդեն կորցրել եք ձեր հավատը։

Ռութը լռելյայն սեղմեց նրա ձեռքը՝ արտասվակալած աչքերով։

— Ոչ թե ձեր... ձեր գրական տաղանդի նկատմամբ, սիրելիս,— գրեթե շշնջյունով ասաց նա։

— Դուք շատ բան եք կարդացել իմ գրվածքներից,— կոպիտ շարունակեց Մարտինը,— ի՞նչ է ձեր կարծիքը նրանց մասին։ Թվո՞ւմ է ձեզ, որ նրանք շատ վատ են։ Ավելի՞ վատ, քան գրում են ուրիշները։

— Ուրիշները դրամ են ստանում իրենց գրվածքների համար։

— Դա իմ հարցումի պատասխանը չի։ Դուք գտնո՞ւմ եք, որ գրականությունն իմ կոչումը չի։

— Լավ, ես կպատասխանեմ ձեզ,— Ռութը ճիգ գործ դրեց իր վրա։— Ես չեմ կարծում, որ դուք գրող կդառնաք։ Մի շարանաք ինձ վրա, սիրելիս։ Դուք ինքներդ հարցրիք ինձ։ Չէ՞ որ դուք գիտեք, որ ես ձեզնից ավելի եմ հասկանում դրականությունը։

— Այո, դուք արվեստների բակալավր եք,—ասաց Մարտինը մոտածկոտ,— դուք պետք է հասկանաք... Բայց դրանով ամեն ինչ չի սպառվում,— շարունակեց նա երկուսի համար էլ տանջալից լռությունից հետո— Ես գիտեմ, թե ինչո՛ւմն է

իմ կոչումը։ Ոչ ոք ինձանից լավ չի կարող գիտենալ այդ։ Ես գիտեմ, որ հաջողություն ձեռք կբերեմ։ Ես կհաղթահարեմ բոլոր արգելքները։ Ինձանում եռում է այն ամենը, որ արտացոլում են իմ բանաստեղծությունները, հոդվածներն ու պատմվածքները։ Բայց ես ձեզ չեմ խնդրում հավատալ դրան։ Մի՛ հավատաք ո՛չ ինձ, ո՛չ էլ իմ գրական տաղանդին։ Միակ բանը, որի մասին խնդրում եմ ձեզ,— հավատալ իմ սերին և առաջվա պես սիրել ինձ։ Հիշո՞ւմ եք, որ ես խնդրեցի ձեզ ըսպասել երկու տարի։ Մի տարին արդեն անցավ, բայց ես պատվովս եմ երդվում, որ ամբողջ հոգով հավատում եմ, որ մի տարի չանցած ես հաջողություն ձեռք կբերեմ։ Հիշո՞ւմ եք, որ ժամանակին ասել եք ինձ. գրող դառնալու համար պետք է անցնել աշակերտական շրջան։ Լա՛վ, ես անցա այդ շրջանը։ Ես շտապեցի, կարճացրի ժամկետը։ Բոլոր իմ ձգտումների վերջնական նպատակը եղել եք դուք, և ձեր մասին մըտածելը շարունակ վառ է պահել իմ եռանդը։ Դուք գիտեք, որ ես վաղուց եմ մոռացել, թե ի՛նչ բան է կուշտ քնելը։ Երբեմն թվում է ինձ, որ միլիոնավոր տարի է անցել այն ժամանակից, երբ ես քնում էի, ինչքան ինձ հարկավոր է, և զարթնում էի քունս անցնելուց հետո։ Այժմ ինձ միշտ էլ զարթուցիչն է ոտքի հանում։ Երբ էլ որ պառկեմ—վաղ թե ուշ—միշտ միևնույն ժամին եմ լարում զարթուցիչը։ Վերջին գիտակցական ճիգը, որ ես անում եմ քնից առաջ, դա այն է, որ լարում եմ ժամացույցը և հանգցնում լամպը։ Երբ զգում եմ, որ քունս գալիս է, դժվարին գիրքը փոխարինում եմ հեշտ գրքով։ Իսկ երբ այդ ավելի հեշտ գրքի վրա էլ սկսում եմ դանթել, բռունցքով խփում եմ գլխիս՝ քունը վանելու համար։ Ես կարդացել եմ մի մարդու մասին, որ վախենում էր քնել,— հիշո՞ւմ եք, Կիպլինգի գրածը։ Նա անկողնի մեջ սարքել էր մի խթան, որ եթե քներ, այդ պողպատե փուչը խրվում էր մարմնի մեջ։ Նույն բանը կիրառել եմ և ես։ Անկողնի մեջ դընում էի մեխ և վճռում էի, որ չեմ քնելու մինչև կես-գիշեր, մինչև ժամը մեկը, երկուսը... և մեխը չէր թողնում, որ քնեմ մինչև սահմանված ժամանակը։ Երկար ամիսներ ես նրա հետ

բաժանում էի իմ անկողինը։ Ես հասա այնտեղ, որ հինգուկես ժամ քնելը ինձ համար անթույլատրելի մի շքեղություն էր դարձել։ Հիմա ես քնում եմ միայն չորս ժամ։ Ես տառապում եմ քնի պակասից։ Երբեմն գլուխս է պտտվում և մրոտքերս շփոթվում են—այնքան եմ ուզում քնել, երբեմն գերեզմանային անդորրը ինձ թվում է երանություն։ Ես հաճախ հիշում եմ Լոնգֆելլոյի բանաստեղծությունը.

Ծովի անհատակ սառը խորունկում
Ողջն ընկղմված է անդորր, մեղմ քնում.
Լոկ մի քայլ արա՝ ջուրը կճղփա,
Եվ ամեն ինչ առմիշտ կանհետանա։

Իհարկե, այդ ամենը դատարկ բան է։ Դա առաջանում է ջղերի սաստիկ հոգնածությունից։ Բայց հարց է ծագում. ի՞նչ բանի սիրուն եմ արել այդ ամենը։ Ձեր սիրուն, Որպեսզի կրճատեմ աշակերտության ժամկետը, որպեսզի փութացնեմ հաջողությունը։ Հիմա իմ աշակերտությունը վերջացել է։ Ի՞նչ բանի եմ ես ընդունակ։ Հավատացնում եմ ձեզ, որ ոչ մի ուսանող մի տարում չի սովորի այն, որ ես սովորում եմ մի ամսում։ Ես գիտեմ։ Հավատացե՛ք ինձ։ Ես չէի սկսի խոսել այդ մասին, եթե այնքան ջերմորեն չցանկանայի, որ դուք հասկանաք ինձ։ Դրանում պարծենկոտություն չկա։ Իմ պարապմունքների արդյունքը չափվում է գրքերով։ Ձեր եղբայրները, ինձ հետ համեմատած, տգետ վայրենիներ են, իսկ իմ ամբողջ զարգացումը ես ձեռք եմ բերել այն ժամանակ, երբ նրանք խաղաղ քնած էին լինում։ Միաժամանակ ես ուզում էի համբավ ձեռք բերել։ Հիմա փառքն ինձ համար ոչինչ չի նշանակում։ Ես երազում եմ միայն ձեզ։ Դուք ինձ համար կերակուրից, հագուստից ավելի կարևոր եք, ավելի հարկավոր, քան աշխարհում ամեն ինչ։ Ես երազում եմ միայն այն մասին, որ վերջապես քնեմ՝ գլուխս դնելով ձեր կրծքին։ Եվ դեռ տարին չանցած այդ երազը կիրականանա։

Մարտինի ուժը նորից ողողեց Ռութին՝ իրար հաջորդող ալիքներով. և ինչքան համառորեն նա դիմադրում էր դրան, այնքան ավելի նա ձգվում էր դեպի Մարտինը։ Այդ ուժը,

որը նվաճել էր Ռութին, հիմա հայտարարվում էր Մարտինի փայլատակող հայացքում, նրա կրքոտ խոսքերում, այն կենսական ահագին եռանդում, որը փոթորկվում ու եփ էր գալիս նրա մեջ։ Եվ ահա մի պահ, միայն մի ակնթարթի համար Ռութի ամուր և կայուն աշխարհը տատանվեց, և նա հանկարծ տեսավ իր սաչի առաջ իսկական, հոյակապ ու անպարտելի Մարտին Իդենին։ Եվ ինչպես դա պատահում է գաղանաղուսպների հետ, որոնց երբեմն պատում է կասկածը,— այնպես էլ Ռութը կասկածեց այդ մարդու ըմբոստ ոգին ճընշելու հնարավորության մասին։

— Մի բան էլ,—շարունակեց նա,—դուք ինձ սիրում եք։ Բայց ինչո՞ւ եք սիրում ինձ։ Չէ՞ որ դա նույն ուժն է, որ ստիպում է ինձ դրել, ստիպում է ձեզ սիրել ինձ։ Դուք սիրում եք ինձ նրա համար, որ ես նման չեմ ձեզ շրջապատող մարդկանց։ Ես չեմ ստեղծվել գրասենյակի, հաշվապահական մատյանների, մանր գործառնության և օրինականացած խաբեբայության համար։ Ստիպեցեք ինձ անել այն, ինչ անում են բոլոր այն մարդիկ, շնչել նրանց հետ միևնույն օդը, բաժանել նրանց հայացքները, և դուք կոչնչացնեք իմ և նրանց միջև տարբերությունը, կոչնչացնեք ինձ, կոչնչացնեք այն, ինչ սիրում եք դուք։ Իմ մեջ ամենակենդանի բանը—դա ստեղծագործության տենչն է։ Եթե ես լինեի սովորական մի տխմար, եթե ես չցանկանայի գրել, դուք չէիք ուզենա ամուսնանալ ինձ հետ։

— Բայց դուք մոռանում եք,— ընդմիջեց նրան Ռութը, որի մակերեսային խելքը շատ էր հակված դեպի բաղդատություններ,— որ անցյալումն էլ եղել են պարզամիտ դյուտարարներ, որոնք իրենց ողջ կյանքում ճգնել են դանել ինչոր հավերժական շարժումի։ Հասկանալի է, որ նրանց կանայք սիրում էին նրանց և հետևելը տանջվում էին նրանց խենթությունների պատճառով։

— Ճիշտ է,— առարկեց Մարտինը։— Բայց եղել են և այլ դյուտարարներ, ոչ խենթեր, որոնք իրենց ամբողջ կյանքում ճգնել են գտնել իրական ու գործնական մի բան և

վերջ ի վերջո գլուխ են բերել իրենց ուղածը։ Չէ՞ որ ես ոչ մի անկարելի բան չեմ ուզում...

— Իսկ դուք ինքներդ ասացիք, որ ուզում եք «ձեռք բերել անկարելին»։

— Ես այլաբերական մտքով արտահայտվեցի։ Ըստ էության խոսելով՝ ես ձգտում եմ հասնել այն բանին, որին հասել են ինձանից առաջ շատ շատերը. գրել և ապրել գրական աշխատանքով։

Ռութի լռությունը ջղազրգռում էր Մարտինին։

— Ուրեմն դուք գտնում եք, որ իմ նպատակը նույնքան ցնորական է, որքան հավերժական շարժիչ ուժ որոնելը,— հարցրեց նա։

Ռութը սեղմեց նրա ձեռքը մայրական քնքշությամբ, կարծես մայրը հանգստացնում էր իր քմահաճ երեխային։ Ռութի համար Մարտինն իսկապես լոկ քմահաճ, խենթավուն մի երեխա էր, որը ցանկանում է ձեռք բերել անկարելին։

Ռութը մեկ անգամ էլ հիշեցրեց Մարտինին, թե ինչպես թշնամաբար են վերաբերվում նրան իր ծնողները։

— Բայց չէ՞ որ դուք սիրում եք ինձ,— հարցրեց նա։

— Սիրո՞ւմ եմ, սիրո՞ւմ,— բացագանչեց Ռութը։

— Ես էլ ձեզ եմ սիրում, և նրանք ոչինչ չեն կարող անել ինձ,— հանդիսավոր հնչեց Մարտինի ձայնը։— Քանի ես հավատում եմ ձեր սիրուն, նրանց ատելության հետ գործ չունեմ։ Աշխարհում ամեն ինչ անհաստատ է՝ բացի սիրուց։ Սերը չի կարող մոլորվել ճանապարհից, եթե միայն իսկական սեր է, և ոչ թե թուլակազմ մի դարձվոր, որը սայթաքում և ընկնում է ամեն մի քայլափոխում։

ԳԼՈՒԽ XXX I

Մարտինը պատահմամբ հանդիպեց Բրոդվեյում իր քրոջը՝ Գերտրուդին։ Այդ հանդիպումը շատ ուրախալի էր և միա-

ժամանակ տխուր։ Անկյունում տրամվայի սպասելիս՝ Գերտրուդն առաջինը տեսավ Մարտինին և նկատեց նրա դեմքի նիհարությունը և աչքերի հուսահատ ու տանջված արտահայտությունը։ Եվ իրոք Մարտինը հուսահատ ու անհանգիստ էր։ Նա նոր էր վերադարձել ապարդյուն խոսակցությունից վաշխառուի հետ, որից ուզում էր լրացուցիչ փոխառություն վերցնել հեծանիվի դիմաց։ Աշնան մռայլ օրերն էին վրա հասել, և Մարտինն արդեն բավական ժամանակ է, ինչ գրավ էր դրել հեծանիվը, իսկ սև կոստյումը պահել իր մոտ։

— Ձեզ մոտ կա և սև կոստյում,— պատասխանել էր վաշխառուն, որը գիտեր Մարտինի ունեցած բոլոր իրերը,— թե՞ դուք արդեն գրավ եք դրել այն հրեայի, Լիպկայի մոտ։ Եթե դուք իրոք...

Նա այնպես սպառնալից նայեց Մարտինին, որ սա շտապեց բացագանչել։

— Ոչ, ոչ։ Կոստյումն ինձ մոտ է։ Բայց ես կուզենայի հագնել այն մի գործի առնչությամբ։

— Շատ բարի,— պատասխանեց փոքր ինչ փափկած վաշխառուն։— Բայց ինձ էլ է հարկավոր գործի համար, և մինչև չբերեք այդ, ես ձեզ չեմ կարող ավելի դրամ տալ։ Մի՛ կարծեք, թե ես այս գործով զբաղվում եմ պարզապես զվարճանալու համար։

— Բայց դա քառասուն դոլլարանոց հեծանիվ է և ոչ մի պակասություն չունի,— առարկեց Մարտինը։— Իսկ դուք նրա դիմաց ինձ տվել եք միայն յոթ դոլլար։ Ո՛չ, մինչև անգամ յոթ դոլլար էլ չի, այլ վեց և մի քառորդ դոլլար, դուք սկզբից եք վերցրել տոկոսը։

—Եթե ուզում եք ավելի դրամ ստանալ, բերեք կոստյումը,— պատասխանեց վաշխառուն, որից հետո Մարտինը հեռացավ խեղդուկ օդով համակված նրա որջից այնպիսի հուսահատությամբ, որն անդրադարձել էր նրա դեմքի վրա և կարեկցություն գարթեցրել նրա քրոջ մեջ։

Նրանք հազիվ էին իրար բարևել, երբ մոտեցավ հեռադրատան պողոտան տանող տրամվայը։ Մարտինը բռնեց Գերտ-

բուղի ձեռքը՝ օգնելով նրան բարձրանալ վագոնը։ Քույրը հասկացավ, որ Մարտինը չի նստելու տրամվայ, շուռ եկավ և վագոնի աստիճանից նայեց նրան։ Մարտինի տանջված դեմքը դարձյալ ճմլեց նրա սիրտը։

— Չե՞ս դա, դնանք,— հարցրեց նա։

Եվ անմիջապես իջավ տրամվայից և սկսեց քայլել նրա կողքին։

— Ես միշտ ոտքով եմ գնում, դիտես, մարմնամարզանքի համար,— բացատրեց նա։

— Այդ դեպքում ես էլ մի քիչ կքայլեմ քեզ հետ,— ասաց Գերտրուդը,—թերևս դա օգտակար լինի ինձ համար։ Վերջին օրերս այնքան էլ լավ չեմ զգում ինձ։

Մարտինը նայեց իր քրոջը և համոզվեց դրանում՝ տեսնելով նրա տնխնամ արտաքինը, անառողջ չաղությունը, թուլացած ուսերը, հոգնած դեմքը՝ կախ ընկած խորշոմներով, ծանր ոտքերի փետացած քայլվածքը, որը նախկինում առողջ և ուրախ աղջկա ճկուն առույգ քայլվածքի ծաղրանկարն էր։

— Ավելի լավ է այստեղ սպասես տրամվայի,— ասաց Մարտինը, երբ նրանք հասան հաջորդ կանգառին։ Նա նկատեց, թե ինչպես Գերտրուդը շնչասպառ է լինում։

— Տեր ողորմյա՜, իսկապես որ հոգնեցի,—ասաց նա։— Բայց վատ չէր լինի, որ դու էլ տրամվայ նստեիր։ Ինչպե՞ս կարելի է, Մարտ, քայլել այնպիսի կոշիկներով, որոնց ներբանն այնքան բարակ է, որ կմաշվի մինչև դու հյուսիսային Օկլենդ կհասնես։

— Ես մի զույգ ավելի լավ կոշիկ ունեմ տանը,— պատասխանեց Մարտինը։

— Վաղը ճաշին արի մեզ մոտ,—հրավիրեց նրան Գերտրուդն անկապ։—Միստեր Հիգգինբոթամը տանը չի լինելու։ Նա Սան Լեանդրո է գնալու գործով։

Մարտինը բացասաբար շարժեց գլուխը, բայց չկարողացավ թաքցնել իր աչքում երևացած ագահ փայլը, երբ տրվեց ճաշի անունը։

— Դու ոչ մի պլանս չունես մտադ, Մարտ, դրա համար էլ ոտով ես գնում։ Մարմնամարզ, ինչպե՞ս չէ։

Գերտրուդը փորձեց արհամարհանքով փնչել, բայց կարողացավ միայն շունչ քաշել։

— Ահա, վերցրո՛ւ։

Եվ Գերտրուդը հանեց իր պայուսակից և Մարտինի ձեռքը դրեց հինգ դոլլարանոց մի դրամ։

— Ես մոռացել էի, որ վերջերս քո ծննդյան տարեդարձն էր,— մրմնջաց նա ոչ համոզիչ շեշտով։

Մարտինը բնազդաբար սեղմեց իր ձեռքում ոսկի դրամը։ Նույն պահին նա զգաց, որ չպետք է ընդունի այդ, բայց վարանեց։ Այդ ոսկին նշանակում էր կերակուր, կյանք, իր մարմնի և ուղեղի լուսավորում, ստեղծագործ ուժի աճ, և, ո՞վ կարող է ասել, թերևս և ուժ՝ գրելու այնպիսի մի բան, որ իրեն կբերի այդպիսի շատ ոսկիներ։ Նրա աչքի առաջ պատկերացան դեռ նոր ավարտած երկու հոդվածներ, որոնք ընկած էին վերադարձված գրվածքների կույտի գլխին, և որոնք նա չէր կարողացել ուղարկել՝ փոստանիշի դրամ չունենալու պատճառով։ Նրա աչքին պատկերացան այդ հոդվածների տպագրված վերնագրերը «Հրաշալու քուրմերը» և «Գեղեցկության օրրանը»։ Նա դեռ ոչ մի տեղ չէր ուղարկել նրանք։ Բայց դիտեր, որ դրանք այդ գրվածքներից ամենալավերն են։ Միայն թե կարողանար փոստանիշներ գնել։ Հաջողության վստահությունը հանկարծ համակեց նրան, և արագ շարժումով նա իր գրպանը դրեց ոսկի դրամը։

— Ես քեզ կվերադարձնեմ դրա հարյուրապատիկը Գերտրուդ,—ասաց նա դժվարությամբ, որովհետև ջղաձգությունը սեղմում էր նրա կոկորդը, իսկ աչքերում փայլեցին արտասուքի շիթեր։— Մի՛ մոռանա իմ խոսքերը,— բացագանչեց նա հանկարծ արտասովոր վստահությամբ։—Մի տարի չանցած ես կբերեմ քեզ հարյուր հատ այդպիսի կլորիկ դրամներ։ Կարող ես ինձ չհավատալ։ Պետք է միայն սպասես։ Այն ժամանակ կտեսնենք։

Գերտրուդը չէր էլ մտածում հավատալու մասին։ Նա ի-

րեն զգաց անհարմար դրության մեջ։ Մի պահ լռությունից հետո նա ասաց.

— Գիտեմ, որ դու սոված ես, Մարտ։ Դա գրած է քո դեմքին։ Ճաշի արի, երբ կուզես։ Երբ միստեր Հիգգինբոթամը գործի գնալու լինի, ես այդ մասին կիմացնեմ քեզ։ Երեխաներից որևէ մեկը միշտ էլ կարող է գալ քեզ մոտ իմացնելու։ Եվ, Մարտ...

Մարտինը սպասեց, թեև նախօրոք գիտեր, թե ի՞նչ է ասելու իր քույրը, որովհետև նրա մտածողության պրոցեսը բավականաչափ պարզ էր։

— Չե՞ս կարծում, որ ժամանակ է քեզ մտնելու աշխատանքի։

— Դու է՞լ ես կարծում, որ ես նպատակիս չեմ հասնի,— հարցրեց նա։ Գերտրուդը շարժեց իր գլուխը։

— Ո՛չ ոք չի հավատում, Գերտրուդ, բացի ինձանից։— Նա ասաց այդ ինչ-որ կրքոտ ցասումով։— Բայց ես արդեն շատ եմ գրել լավ բաներ, որոնց համար վաղ թե ուշ դրամ կստանամ։

— Իսկ դու ինչի՞ց գիտես, որ դրանք լավ են։

— Նրա համար, որ...— գրականության և գրականության պատմության մասին նրա բոլոր գիտելիքները հանկարծ կենդանացան նրա ուղեղում, բայց նա հասկացավ, որ զուր է փորձել բացատրել քրոջը, թե ինչի՛ վրա է հիմնվում իր ինքնավստահությունը։— Նրա համար, որ իմ պատմվածքներն ավելի լավ են, քան ժուռնալներում տպվածների իննսուն ինը տոկոսը։

— Այնուամենայնիվ լսիր խելացի խորհուրդը,— ասաց Գերտրուդը, որը հաստատ համոզված էր, որ ճիշտ է հասկանում նրա հիվանդությունը։— Այո՛, լսիր, այդ խելացի խորհուրդը,— կրկնեց նա,— իսկ վաղը եկ ճաշի։

Մարտինը նրան նստացրեց տրամվայ և, վազելով փոստատունը, երեք դոլլարի փոստանիշներ գնեց։ Քիչ հետո, Մորզերի տունը գնալիս, նա հանդիպեց փոստի բաժանման-

քը և ուղարկեց բազմաթիվ հաստ ծրարներ՝ վատնելով բոլոր փոստանիշները, բացի երեք հատ երկու պենսանոցներից։

Դա նշանակելի երեկո էր Մարտինի համար, որովհետև այդ երեկո նա ծանոթացավ Ռեսս Բրիսսենդենի հետ։ Թե ինչպե՞ս Բրիսսենդենը եկել էր Մորդերի մոտ և ո՞վ էր բերել նրան այնտեղ, Մարտինն այնպես էլ չիմացավ։ Նա մինչև անգամ չհետաքրքրվեց հարցնել Ռութին այդ մասին, որովհետև Բրիսսենդենը նրան թվաց դժգույն և անհետաքրքիր անձնավորություն։ Մի ժամ հետո Մարտինը վճռեց, որ նա, բացի այդ, նաև տգեղ է. նա, բոլորովին առանց քաշվելու, շրջում էր մի սենյակից մյուսը, դիտում էր նկարները և քիթը կոխում սեղանների վրա և դարակներում դարսված գրքերի և ժուռնալների մեջ։ Վերջում նա, ուշադրություն չդարձնելով ներկաների վրա, ձգվեց բազկաթոռին, կարծես իր տանը լիներ, հանեց գրպանից ինչ-որ գրքույկ և սկսեց կարդալ։ Ընթերցելիս նա շարունակ ձեռքի արագ շարժումով խառնում էր մազերը։ Դրանից հետո Մարտինը մոռացավ նրա մասին և հիշեց նրան միայն երեկույթի վերջին, երբ տեսավ նրան երիտասարդ կանանց շրջանում՝ ըստ երևույթին մեծ հաջողությամբ խոսակցելով նրանց հետ։

Տուն գնալիս Մարտինը փողոցում, ճամփի կեսին հասավ Բրիսսենդենին։

— Հելլո՞, այդ դո՞ւք եք,— հարցրեց Մարտինը։

Բրիսսենդենը մրթմրթաց ոչ շատ սիրալիր մի բան, բայց և այնպես քայլեց նրա կողքին։ Մարտինն այլևս չփորձեց զրուցել նրա հետ, և այդպես նրանք լուռ անցան մի քանի թաղ։

— Ինքնաբավական պառավ է՛շ։

Այդ բացագանչության անսպասելիությունը և ուժգնությունն ապշեցրին Մարտինին։ Նրա ծիծաղն եկավ, բայց միաժամանակ զգաց Բրիսսենդենի նկատմամբ ավելի մեծ տհաճություն։

— Ինչո՞ւ եք այդպիսի տեղում քարշ գալիս,— լսեց Մարտինը հանկարծ՝ մի թաղ ևս լուռ քայլելով նրա հետ։

— Իսկ դո՞ւք,— հարցրեց Մարտինն իր հերթին։

— Մեռնեմ, եթե գիտեմ, թե ինչո՛ւ,— պատասխանեց Բրիսսենդենը։— Ես առաջին անգամն եմ լինում այնտեղ։ Վերջ ի վերջո օրը քսանչորս ժամ է։ Պետք է մի կերպ անցկացնել ժամանակը։ Գնա՛նք, խմե՛նք։

— Գնա՛նք,— պատասխանեց Մարտինը։

Հաջորդ րոպեին նա կշտամբեց իրեն, որ պատրաստակամությամբ ընդունեց նրա առաջարկը։ Տանը նրան սպասում էր մի քանի ժամվա «արհեստավորական» աշխատանք. բացի այդ, նա վճռեց կարդալ անկողնում Վեյսմանի գրքույկը, ինչպես և Հերբերտ Սպենսերի ինքնակենսագրությունը, որը նա կարդում էր ավելի հետաքրքրությամբ, քան որևէ վեպ։

«Ինչո՞ւ ես պետք է ժամանակ վատնեմ այս մարդու հետ, որին չեմ հավանում», մտածեց Մարտինը։ Սակայն նրան գրավեցին ոչ այնքան այդ մարդն ու խմիչքը, այլ խմիչքի հետ կապված բաները—վառ լույսերը, հայելիները, զավաթների զնգոցն ու փայլը, տաքացած գնմքերն ու բարձր ձայները։ Այո՛, ուրախ և անհոգ մարդկանց ձայները—այն մարդկանց, որոնք կյանքում հաջողություն են ձեռք բերել և կարող են թեթև սրտով դրամ ծախսել խմիչքի վրա։ Մարտինը մենակ էր—հենց դրանում էլ կայանում էր նրա դժբախտությունը։ Այս պատճառով էլ նա ուրախությամբ ընդունեց Միստեր Բրիսսենդենի առաջարկը։ Այն ժամանակ, երբ Մարտինը հեռացել էր «Տաք ազբյուրներից» և բաժանվել Ջոյից, ոչ մի անգամ չէր եղել գինետանը՝ բացի այն դեպքից, երբ նրան հյուրասիրեց պորտուգալացի խանութպանը։ Մտավոր հոգնությունն այնքան չի պահանջում ալկոհոլով կազդուրվել, որքան ֆիզիկական հոգնությունը, և Մարտինը չէր տարվում ոգելից խմիչքներով։ Բայց հիմա նա ցանկացավ խմել—ավելի ճիշտը՝ գտնվել ադմկոտ մթնոլորտում, ուր խմում են, լղավում և քրջում։ Հենց այդպիսի գինետուն էր «Գրոտտոնը»։ Բրիսսենդենն ու Մարտինը, ընկողմանած կաշվե հանգստավետ բազկաթոռներում, սկսեցին ծծել ջոտլանդական վիսկի սոդայաջրով։

Նրանք խոսակցության բռնվեցին. խոսում էին զանազան բաների մասին և զրույցն ընդհատում էին միայն նրա համար, որ հերթով նոր պորցիա պատվիրեն։ Մարտինը, որը արտասովոր տոկունություն ուներ խմիչքի գործածության մեջ, չէր կարողանում չզարմանալ իր բաժակակցի դիմացկունությանը։ Սակայն նա ավելի էր զարմանում նրա արտահայտած մտքերին։ Շուտով Մարտինն եկավ այն համոզման, որ Բրիսսենդենը գիտի ամեն բան, և որ նա երկրորդ իսկական ինտելիգենտն է, որ պատահում է նրա ճանապարհին։

Սակայն Մարտինը նկատեց, որ Բրիսսենդենը ունի նաև այնպիսի հատկություններ, որոնք պակասում են պրոֆեսոր Կոլդուելին—այն է՝ հուր, անսովոր խորաթափանց միտք, ուրագ ըմբռնողություն և մտքի թռիչքի առանձնահատուկ ազատություն։ Նա խոսում էր հիանալի։ Նրա բարակ շրթունքներից երբեմն դուրս էին գալիս հատու, կարծես մեքենայով ձևած—դրվագված նախադասություններ, որոնք ծակում ու կտրում էին։ Իսկ անմիջապես հետո հաջորդում էին թավշային քնքուշ բառեր, պատկերավոր, ներդաշնակ և հյութեղ արտահայտություններ, որոնք արտացոլում էին կյանքի անհասկանալի խորհուրդն ու գեղեցկությունը։ Մերթ նրա խոսքը հնչում էր որպես մարտական շեփոր, որ հրավիրում է տիեզերական պայքարի փոթորկին ու որոտին. արտասանում էր արծաթի նման ջինջ նախադասություններ, որոնք փայլում էին աստղային տարածությունների շողի պես՝ կարճառոտ ու հստակ ձևակերպելով գիտության նվաճումների ճշմարտությունները. միաժամանակ ասում էր և ավելին—բանաստեղծի խոսքը՝ համակված այն վեհ ու անըմբռնելի բանով, որը չի կարելի արտահայտել բառերով, բայց կարելի է զգացնել այդ բառերի առաջացրած նուրբ ու բարդ ասոցիացիաներով։ Նրա մտահայացքը թափանցում էր հեռավոր, մարդկային փորձին անմատչելի մարդեր, որոնց մասին, թվում էր, չի կարելի պատմել սովորական լեզվով։ Բայց խոսելու իրոք մոգական արվեստն օգնում էր նրան ներդրել սովորական բառերի մեջ անսովոր նշանակություններ, որոնք չէին հասկանա միջակ

մտքերը, բայց որոնք մոտ ու հասկանալի էին Մարտինին։

Մարտինը միանգամից մոռացավ իր սկզբնական տհաճությունը Բրիսսենդենի նկատմամբ։ Նրա առաջ նստած էր լավագույն մարմնացումն այն ճշմարտության, որի մասին գրում էին գրքերը։ Ահա կենդանի տիպարն այն մաուծող մարդու, որի իդեալը հղացել էր Մարտինը։ Նա կրկին ու կրկին ասում էր իր մտքում՝ հիացած լսելով իր խոսակցին. «ես քո ոտի ցեխը չարժեմ»։

— Ակներև է, որ դուք ուսումնասիրել եք բիոլոգիան,— բացագանչեց Մարտինը՝ նկատելիորեն ակնարկելով, որ ինքը ծանոթ է այդ գիտությանը։

Մարտինը զարմացավ, երբ նա բացատրեց պուիրը։

— Բայց դուք ասում եք այնպիսի ճշմարտություններ, որոնք կարող են հիմնավորվել միայն բիոլոգիայով,— ասաց Մարտինը՝ արժանանալով Բրիսսենդենի ապշահար նայվածքին։— Ձեր եզրակացությունները համընկնում են այն գրքերի կարծիքների հետ, որոնք դուք կարդացած կլինեք։

— Շատ ուրախ եմ՝ լսելով այդ,— պատասխանեց Բրիսսենդենը,— որ իմ հարևանցի գիտելիքներն ինձ հնարավորություն են տալու կրճատելու իմ ճամփան դեպի ճշմարտությունը. դա շատ հուսադրիչ է։ Բայց ես բնավ հետամուտ չեմ իմանալու՝ իրավացի՞ եմ, թե ոչ։ Ամեն պարագայում դա նշանակություն չունի։ Մարդ երբեք չի կարող իմանալ բացարձակ ճշմարտությունը։

— Դուք Սպենսերի աշակերտն եք,— բացագանչեց Մարտինը հանդիսավորապես։

— Իմ պատանեկությունից հետո ես չեմ կարդացել Սպենսերին, իսկ այն ժամանակ կարդացել եմ միայն նրա «Դաստիարակությունը»։

— Ես կուզենայի նույնպիսի հեշտությամբ ձեռք բերել գիտելիքներ,— ասաց Մարտինը կես ժամ հետո, երբ նա մանրամասնորեն վերլուծել էր Բրիսսենդենի մտավոր սմբողջ բագաժը։— Դուք իսկական դոգմատիկ եք, և դա է ամե-

նազարմանալին։ Դուք դավանաբանորեն սահմանում եք ամենավերջին փաստերը, որոնք դիտությունը կարող է սահմանել միայն a posteriori* խորհրդածություններով։ Դուք ուղղակի տեղնուտեղը հանում եք ուղիղ եզրակացություններ։ Իհարկե, ձեր կրթությունն իրոք բավական մակերեսային է, բայց դուք լույսի արագությամբ եք անցնում դեպի գիտելիքները տանող ճանապարհը և ինչ-որ գերբնական միջոցով եք հասնում ճշմարտությանը։

— Այո՛, հենց դա էլ շարունակ շվարեցնում էր իմ ուսուցիչներին՝ հայր Ջոզեֆին և եղբայր Դեստոնին,— պատասխանեց Բրիսսենդենը և ավելացրեց.— «Օ՜, ո՛չ։ Ես ինձանից ոչինչ չեմ ներկայացնում։ Պարզապես, շնորհիվ բարեբաստիկ դիպվածի, վաղ հասակից ընկել եմ կաթոլիկների կոլեջը։ Իսկ դո՞ւք որտեղ եք կրթություն ստացել»։

Պատմելով նրան իր մասին՝ Մարտինը միաժամանակ ուշադիր զննում էր Բրիսսենդենի արտաքինը, նրա երկար ու նիհար դեմքի արիստոկրատական նուրբ գծերից սկսած մինչև կախ ուսերն ու կողքի աթոռին դրած նրա վերարկուն՝ գրքերով լի գրպաններով։ Բրիսսենդենի դեմքն ու բարակ ձեռքերը արևից կիզված էին, ծայրահեղորեն կիզված, ինչպես թվաց Մարտինին։ Այդ արևկիզուկն ապշեցրեց Մարտինին։ Դժվար թե Բրիսսենդենը լիներ դուրսը, ազատ օդում ապրող մարդ։ Հապա ինչի՞ց է առաջացել այդ արևայրուկը։ Դա, որպես հիվանդագին ու նշանակալից մի երևույթ, հանդիստ չէր տալիս Մարտինին և այն ժամանակ, երբ նա նորից սկսեց ուսումնասիրել նրա դեմքը—նեղ ու վտիտ երեսը՝ ցցված այտոսկրներով և այնպիսի քնքուշ ու բարակ քթով, որի նմանը Մարտինը դեռ չէր տեսել։ Նրա աչքերի ճեղքվածքը նշանակելի ոչինչ չուներ։ Նրանք ոչ մեծ էին, ոչ էլ փոքր, ինչ-որ շագանակագույն, բայց նրանց մեջ վառվում էր մի զարմանալի հուր, ավելի շուտ՝ նրանց մեջ թաքնված էր երկակի տարօրինակորեն հակասական արտահայտություն։ Լինելով գրգռիչ,

* A posteriori (լատիներեն) փորձից հետո, փորձից ելնելով։

անզուսպ, մինչև անգամ անհաճո, այդ նայվածքը միաժամանակ կարեկցություն էր առաջացնում։ Մարտինն անչափ խղճում էր Բրիսսենդենին՝ չգիտես ինչո՛ւ։ Նա շուտով հասկացավ, թե որտեղից է առաջանում այդ զգացումը։

— Չէ՞ որ ես թոքախտավոր եմ,— հայտարարեց Բրիսսենդենը՝ պատմելով այն մասին, որ նոր է եկել Արիզոնայից։ —Ես մի երկու տարի եղել եմ այնտեղ, կլիմայական բուժման կուրս եմ անցել։

— Հիմա չի՞ք վախենում ապրել մեր կլիմայում։

— Վախենո՞ւմ եմ։

Նա պարզապես կրկնեց Մարտինի արտասանած բառը՝ առանց առանձին նշանակության։ Բայց Մարտինը նրա ճրագնավորական դեմքին կարդաց, որ նա աշխարհում ոչնչից չի վախենում։ Նրա աչքերը նեղացան՝ նմանվելով ասծվի աչքերին, քթածակերը փքվեցին, դեմքը ստացավ զրգռիչ, վճռական, ագրեսիվ արտահայտություն։ Մարտինի սիրտը տրոփեց՝ այդ մարդու նկատմամբ զգացած հիացումից։ «Որքա՜ն լավն է նա», մտածեց նա և ապա բարձրաձայն արտասանեց.

Մոլեգին բախտի հարվածների տակ
Չե՛մ թեքի ճակատն իմ արյունլվա։

— Դուք սիրո՞ւմ եք Հենլիին,— հարցրեց Բրիսսենդենը, և նրա աչքերի արտահայտությունը միանգամից դարձավ քնքուշ ու փաղաքշական։—Իհարկե, կարո՞ղ է պատահել, որ դուք նրան չսիրեք։ Ա՜խ, Հենլի, ազնիվ հոգի։ Նա կանգնած է ժամանակակից հանգաստեղծների—ժուռնալների հանգաստեղծների միջև այնքան բարձր, որքան սուպերամարտիկները ներքինիների միջև։

— Իսկ դուք չե՞ք սիրում ժուռնալները,— զգուշությամբ հարցրեց Մարտինը։

— Իսկ դուք սիրո՞ւմ եք,— գոռաց Բրիսսենդենն այնպիսի կատաղությամբ, որ Մարտինը մինչև անգամ ցնցվեց։

— Ես... ես գրում եմ, կամ ավելի շուտ՝ փորձում եմ գրել ժուռնալների համար,— մրմնջաց Մարտինը։

— Դա արդեն ավելի լավ է,— ավելի հաշտ ասաց Բրիսսենդենը,—դուք փորձում եք գրել, բայց դա ձեզ չի հաջողվի։ Ես գնահատում և հարգում եմ ձեր անհաջողությունը։ Պատկերացնում եմ ինձ, թե դուք ի՛նչ եք գրում։ Ես կիսախուփ աչքերով կարող եմ տեսնել այդ. դրանց մեջ կա մի թերություն, որի առաջ փակվում են ժուռնալների դռները։ Դրանց մեջ կա ներքին բովանդակություն, իսկ ժուռնալների համար դա չի պահանջվում։ Ժուռնալներին հարկավոր է ամեն տեսակ թափթփուկ, և նրանք առատորեն են ստանում այդ, բայց իհարկե ոչ ձեզանից։

— Ես չեմ արհամարհում և «արհեստավորական» աշխատանքը,—առարկեց Մարտինը։

— Ընդհակառակը,— Բրիսսենդենը կանգ առավ մի պահ և լպիրշ ակնարկով չափեց Մարտինի չքավորությունը—նրա հին փողկապը, պլպլան թևերը, մաշած մանժետները. հետո երկար դիտեց նրա նիհար, փոս ընկած այտերը։— Ընդհակառակը «արհեստավորական» աշխատանքը արհամարհում է ձեզ, և այնքան համառ, որ դուք ոչ մի կերպ հաջողություն չեք գտնի այդ ասպարեզում։ Լսե՛ք, սիրելիս, դուք երևի կըվիրավորվեք, եթե ձեզ առաջարկեմ, որ մի բան ուտենք։

Մարտինն ակամա կարմրեց, իսկ Բրիսսենդենը հաղթականորեն ծիծաղեց։

— Փորը կուշտ մարդը չի վիրավորվում այդպիսի հրավերից,— եզրակացրեց նա։

— Դուք հրեշ եք,— բարկացած գոռաց Մարտինը։

— Ամեն պարագայում ես հո ձեզ չեմ առաջարկել։

— Հապա՛, համարձակվեիք փորձել։

— Ա՛յ թե ինչ։ Այդ դեպքում ես ձեզ հրավիրում եմ հիմա։

Այդ ասելով՝ Բրիսսենդենը կիսովի վեր կացավ իր աթոռից, ըստ երևույթին մտադրվելով անմիջապես գնալ ռեստորան։

Մարտինը սեղմեց իր բոունցքները. արյունը խփեց նրա քունքերին։

— Ուշադրությո՛ւն։ Նա ողջ-ողջ կուտի նրանց. ողջ-ողջ կուտի,— բացագանչեց Բրիսսենդենը՝ կրկնելով օձ կլանող տեղական նշանավոր մի սնոպարարի խոսքերը։

— Ես կարող էի իրոք ողջ-ողջ կուլ տալ ձեզ,— ասաց Մարտինը՝ իր հերթին հանդուգն հայացք ուղղելով հիվանդությունից հյուծված Բրիսսենդենին։

— Մնայն թե ես չարժեմ այդ։

— Ոչ թե դուք, այլ միջադեպը չարժի,— արտասանեց Մարտինը և իսկույն ծիծաղեց արտարուխ ծիծաղով։—Խոստովանվում եմ, Բրիսսենդեն, որ դուք հիմար դրություն ստեղծեցիք ինձ համար։ Որ ես սոված եմ—դա բնական երևույթ է, և դրանում ինձ համար ամոթալի ոչինչ չկա։ Տեսնում եք, մանր պայմանագրությունները ու նախապաշարումները ծիծաղելի են ինձ համար, բայց հենց որ դուք բացահայտ ասացիք ճշմարիտ խոսքեր, իրերը կոչեցիք իրենց անուններով, ես իսկույն այդ միևնույն նախապաշարումների ստրուկը դարձա։

— Այո, դուք վիրավորվեցիք,— հաստատեց Բրիսսենդենը։

— Ճիշտ է, վիրավորվեցի մի քիչ առաջ։ Գիտե՞ք, դա վաղ պատանեկության նախապաշարումն է։ Ես այդ ժամանակից ի վեր բավական բան եմ սովորել, բայց երբեմն սայթաքում եմ։ Դրանք այդ նախապաշարումների կմախքներն են իմ պահարանում մնացած։

— Բայց հիմա հո փակել եք պահարանի դուռը, այնպես չէ՞։

— Իհարկե։

— Հաստա՞տ։

— Հաստատ։

— Այդ դեպքում դնանք, մի բան ուտենք։

— Գնանք։

Մարտինը փորձեց վճարել վիսկիի և սոդայաջրի հա-

մար՝ իր մոտ մնացած վերջին երկու դոլլարը, բայց Բրիսսենդենը հրամայեց մատուցողին ետ դնել այդ դրամը սեղանի վրա և վճարեց ինքը։

Մարտինը դժկամությամբ դրեց դրամն իր գրպանը, բայց իսկույն հանգստացավ՝ զգալով իր ուսի վրա Բրիսսենդենի ձեռքի փափուկ ու սիրալիր ճնշումը։

ԳԼՈՒԽ XXXII

Հաջորդ օրը ճաշից հետո Մարիան իրար անցավ։ Մարտինի մոտ էլի մի անսովոր հյուր եկավ։ Բայց այս անգամ նա այնքան ինքնազսպություն ունեցավ, որ հյուրին հրավիրեց սպասել հյուրասենյակում։

— Հուսով եմ, որ դուք չեք առարկում իմ գալու դեմ,— ասաց Բրիսսենդենը։

— Ո՛չ, ո՛չ, ամենևին,— բացագանչեց Մարտինը՝ ուժեղ սեղմելով նրա ձեռքը և, հյուրին մոտեցնելով միակ աթոռը, ինքը նստեց մահճակալին։

— Բայց ինչպե՞ս իմացաք իմ հասցեն։

— Ես զանգահարեցի Մորզերին։ Միսիս Մորզն ինքը մոտեցավ հեռախոսին։ Եվ ահա եկա։

Բրիսսենդենը վերարկուի գրպանից հանեց մի փոքրիկ հատոր և դրեց սեղանին։

— Ահա ձեզ մի բանաստեղծի ոտանավորի գրքույկ,— ասաց նա,— կարդացեք և պահեցեք ձեզ։ Վերցրեք,— գոռաց նա՝ պատասխանելով Մարտինի բողոքին,— ի՞նչ են հարկավոր ինձ գրքեր։ Այս առավոտ ես էլի արյուն թքեցի։ Դուք վիսկի ունե՞ք։ Իհարկե, ո՛չ։ Սպասե՛ք մի րոպե։

Նա արագ վեր կացավ ու դուրս եկավ։ Մարտինը նայեց նրա ետևից և ցավով տեսավ, թե ինչպես նրա փոս ընկած կրծքի վրա կուչ են եկել ուսերը, որոնք ժամանակին հուժկու պետք է լիներին։ Բերելով երկու բաժակ՝ Մարտինը սկսեց

կարդալ գրքույկը։ Դա Հենրի Վոգան Մարլոուի բանաստեղծությունների վերջին ժողովածուն էր։

— Շոտլանդական վիսկի չկար,— հայտարարեց Բրիսսենդենը վերադառնալով։- Սրիկան միայն ամերիկյան վիսկի է վաճառում։ Ահա մի կվարտ նրանից։

— Ես երեխաներից մեկին կուղարկեմ, որ կիտրոն բերի, և մենք գրոգ կպատրաստենք,— առաջարկեց Մարտինը։— Հետաքրքիր է, ինչքա՛ն դրամ է ստացել Մարլոուն այդ գրքի համար։

— Հավանական է՝ հիսուն դոլլար,—պատասխանեց Բրիսսենդենը,—եթե, իհարկե, նրան հաջողվել է գտնել այդ ռիսկն անել ուզող մի հրատարակչի։

— Ուրեմն չի՞ կարելի ապրել բանաստեղծություններ գրելով։

Մարտինի ձայնն ու դեմքը արտահայտում էին ընկճված տրամադրություն։

— Իհարկե, ո՛չ։ Ո՞ր հիմարն է հույս դնում դրա վրա։ Այլ բան են հանգաստեղծները՝ ինչպես Բրյուսը, Վիրջինյա Սպրինգը կամ Սիջվիկը։ Նրանք լավ են շահում։ Իսկ իսկական բանաստեղծները... Գիտե՞ք, թե ինչով է ապրում Մարլոուն։ Դասավանդում է Պենսիլվանիայում տղաների մի դպրոցում, իսկ դա աշխարհի երեսին դժոխքի բոլոր բաժանմունքներից անկասկած ամենամռայլն է։ Ես չէի ցանկանա նրա հետ փոխանակել իմ տեղը, եթե նա մինչև անգամ առաջարկի ինձ դրա համար հիսուն տարվա կյանք։ Իսկ նրա բանաստեղծությունները փայլում են ժամանակակից անպետք ոտանավորների ամբողջ աղբակույտի մեջ, ինչպես սուտակն ապակու կտորտանքի արանքում։ Իսկ ի՞նչ են գրում նրա մասին քննադատները, սատանան տանի այդ քննադատներին։

— Առհասարակ այն մարդիկ, որոնք անընդունակ են գրող դառնալու, չափազանց շատ են դատում իսկական գրողների մասին,— բացագանչեց Մարտինը։— Օրինակ՝ ինչեր չհերյուրեցին Ստիվենսոնի և նրա աշխատության մասին։

— Վամպիրներ, դիշատիչներ,— ասաց Բրիսսենդենը՝

արհամարհանքով սեղմելով ատամները։— Հա, ես ճանաչում եմ մեկին, որն ամբողջ կյանքում մեծ բավականությամբ փետում էր Սաիվենսոնին՝ հայր Դամիենին գրած նրա նամակի համար, վերլուծում, կշռադատում էր նրան և...

— Եվ, իհարկե, չափում էր նրան իր սեփական ողորմելի կյանքի չափոցով,— ընդմիջեց Մարտինը։

— Իսկակա՛ն, ճիշտ ասացիք։ Իհարկե։ Նրանք բոլորը գզգզում ու կեղտոտում են ամեն ինչ, որ գեղեցիկ է, ճշմարիտ ու բարի, և հետո խրախուսանքով խփում են ձեր ուսին և ասում. «Լավորա՛կ շուն, ֆի՛դո»։ Թո՛ւ։ Նրանց մասին Ռիչարդ Ռիլֆը մահվան անկողնում ասել է. «Մարդկային խղճո՞ւկ կաչաղակներ»։

— Նրանք ուզում են գզգզել աստղային փոշին,— ջերմորեն միջամտեց Մարտինը,— ուզում են կասեցնել հանճարի՝ մետեորի նման թռչող միտքը։ Ես ժամանակին մի հոդված եմ գրել քննադատների մասին։

— Տվեք, տեսնենք,— արագ ասաց Բրիսսենդենը։

Մարտինը սեղանի տակից վերցրեց «Աստղային փոշուց» մի օրինակ, և Բրիսսենդենը իսկույն սկսեց կարդալ՝ մերթ ընդ մերթ փնչացնելով, ձեռքերը շփելով և մոռանալով մինչև անգամ իր գրոգը։

— Դուք ինքներդ այդ աստղային փոշու մի մասնիկն եք, որ թռել ընկել եք կույր թզուկների աշխարհը,— աղաղակեց Բրիսսենդենը՝ հոդվածը մինչև վերջ կարդալուց հետո։— Իհարկե, առաջին ժուռնալը մերժեց այն։

Մարտինը թերթեց իր հուշատետրը.

— Այս հոդվածը մերժել են քսանյոթ ժուռնալներ։

Բրիսսենդենը պատրաստվում էր երկար ու սրտանց քրքջալ, բայց այդ միջոցին բռնվեց խեղդող հազով։

— Ասացեք,— վերջապես հարցրեց նա խռպոտ ձայնով,— դուք անպայման գրած կլինեք և ոտանավորներ։ Տվեք ինձ մի քանիսը կարդալու։

— Միայն թե այստեղ մի՛ կարդաք,— խնդրեց Մարտինը։— Ուզում եմ խոսակցել ձեզ հետ։ Իսկ ոտանավորները

ես կփաթաթեմ մի ծրարում, և դուք կարող եք տուն տանել այն։

Բրիսսենդենը մեկնեց՝ իր հետ վերցնելով «Սոնետներ սիրո մասին» և «Փերին ու մարգարիտը»։ Հաջորդ օրը նա նորից եկավ, ողջունեց Մարտինին և ասաց։

— Էլի եմ ուզում։

Ոչ միայն Բրիսսենդենը հավաստիացրեց Մարտինին, որ նա բանաստեղծ է, այլև Մարտինը հասկացավ, որ Բրիսսենդենը նույնպես բանաստեղծ է։ Նա աչքի անցկացրեց Բրիսսենդենի գրվածքները և ապշեց, որ նա ոչ մի փորձ չի արել հրատարակելու նրանք։

— Սատանան տանի նրանց բոլորին էլ,— ասաց Բրիսսենդենը, երբ Մարտինն առաջարկեց ուղարկել նրա բանաստեղծությունները որևէ ժուռնալի։— Սիրեցեք գեղեցկությունը հենց գեղեցկության սիրուն և վաղ անցեք ժուռնալներից,—խորհուրդ տվեց նա։—Ա՜խ, Մարտին Իդեն, վերադարձեք ձեր նավերին ու ձեր ծովին։ Ի՞նչ գործ ունեք մարդկանց այս հիվանդոտ ու փտած քաղաքներում։ Դուք խողխողում եք ձեզ ամեն օր, որը վատնում եք դրանց մեջ՝ այլանդակելով գեղեցկությունը, որպեսզի հարմարվեք ժուռնալների ճաշակին։ Ինչպե՞ս ասացիք դուք ինձ վերջերս։ Հա... «Մարդը աստղաբաշխական օրագրության մեջ վերջի՛ն է». լավ, ի՞նչ գործ ունեք դուք, օրագրության վերջինը, համբավի հետ։ Եթե դուք հասնեք համբավին, դա թույն կլինի ձեզ համար։ Իմ կարծիքով, դուք չափազանց ինքնօրինակ եք, անմիջական և շատ խելացի՝ այդպիսի երեխայական շիլայով սնվելու համար։ Հուսամ, որ դուք ոչ մի տող չեք վաճառի ժուռնալներին։ Գեղեցկությունն է այն միակ տերը, որին պետք է ծառայել։ Ծառայել նրան, իսկ ամբոխին թող սատանան տանի։ Հաջողությո՞ւն։ Էլ ի՞նչ հաջողություն է հարկավոր ձեզ, երբ դուք արդեն հասել եք դրան և՛ Ստիվենսոնին ձոնված ձեր սոնետում,— որը, ասենք ի դեպ, գերազանցում է Հենլիի «Տեսիլքը»,— և՛ «Սոնետներում սիրո մասին», և՛ ծովային ոտանավորներում։ Դուք ուրախա-

ցում եք ոչ թե ձեր աշխատանքի հաջողություն գտնելովը, այլ նրանով, որ դուք ստեղծագործում եք։ Դուք կարող եք չասել այդ, բայց ես էլ, դուք էլ գիտենք այդ։ Գեղեցկությունը խոցել է ձեզ։ Դա ձեզանում անբուժելի մի հիվանդություն է, չապաքինվող մի վերք, հրաշեկ մի դանակ ձեր սրտում։ Ի՞նչ ունեք խարդավանելու ժուռնալների հետ։ Թող գեղեցկությունը լինի ձեր նպատակը։ Ինչո՞ւ պետք է գեղեցկությունը վերածեք ոսկու։ Միևնույն է, դա ձեզ չի հաջողվի, այնպես որ դրա մասին անհանգստանալու կարիք չունեմ։ Դուք կարող եք հազար տարի կարդալ ժուռնալներ, բայց չեք գտնի ոչինչ արժեքավոր բան, որ հավասարվի Կիտսի մի տողին։ Մոռացեք հոչակի և դրամի մասին և հենց գնացեք նավարկության։

— Ես հետամուտ եմ ոչ թե հոչակին, այլ սիրո,— ծիծաղեց Մարտինը։— Թվում է, որ ձեզ համար սերը գոյություն չունի. իսկ ինձ համար գեղեցկությունը սիրո սպասուհին է։

Բրիսսենդենը նայեց նրան կարեկցաբար, միաժամանակ հիացած։

— Դուք դեռ շատ երիտասարդ եք, Մարտին, շա՜տ երիտասարդ։ Դուք բարձր կթռչեք, բայց ձեր թևերը արդեն շատ նուրբ են։ Մի՛ այրեք նրանք։ Սակայն դուք արդեն այրել եք նրանք։ Եվ այս «Սոնետները սիրո մասին» գովերգել են ինչոր շրջագիստ—հենց դա էլ կազմում է այդ բանաստեղծության ամոթանքը։

— Նրանք գովերգում են սերը,— ծիծաղեց Մարտինը։

— Դա խենթության փիլիսոփայություն է,— առարկեց Բրիսսենդենը։—Ես համոզվեցի դրանում, երբ, հաշիշ ընդունելուց հետո, անձնատուր եղա երազանքի։ Բայց զգույշ եղեք։ Այս բուրժուական քաղաքները կսպանեն ձեզ։ Օրինակի համար, վերցրեք չարչիների այդ որջը, ուր ես հանդիպեցի ձեզ։ Աստված վկա, դա աղբանոցից էլ վատ է։ Այդպիսի մթնոլորտում չի կարելի առողջ մնալ. ուզես-չուզես այնտեղ կըսնորանաս։ Չկա նրանցից ոչ մեկը—տղամարդ թե կին, որ

բարձրանա այդ ամբողջ դարշանքից վերև։ Նրանք բոլորը շրջիկ սատամոններ են, որոնք իրար առաջնորդվում են մտավոր ու գեղարվեստական բարձր ներշնչումներով...

Նա միանգամից ընդհատեց իր խոսքը և նայեց Մարտինին։ Հետո հանկարծական մի միտք շանթահարեց նրան։ Նրա դեմքը արտահայտում էր սոսկում և զարմանք։

— Եվ դուք ձեր հիանալի սիրային երգերի այդ ցիկլը գրել եք այդ դժգույն և ցամաքած էգի սիրո՞ւն։

Հաջորդ րոպեին Մարտինն աջ ձեռքով սեղմեց նրա կոկորդը և այնպես ցնցեց նրան, որ Բրիսսենդենի ատամներն իրար բախվեցին։ Բայց ընդամենը Մարտինը նրա աչքում նկատեց ոչ թե սարսափի արտահայտություն, այլ հետաքրքրություն և դիվային հեգնանք։ Մարտինն ուշքի եկավ, թողեց նրա կոկորդը և վզակոթին տալով շպրտեց նրան անկողնու վրա։

Բրիսսենդենը երկար ժամանակ չէր կարողանում շունչ քաշել։ Հանգստանալուց հետո նա հռհռաց։

— Դուք ինձ ձեր հավիտենական պարտապանը կանեիք, եթե վերջ տայիք իմ կյանքի մնացորդին,— ասաց նա։

—Վերջերս իմ ջղերը խանգարվել են,— արդարացավ Մարտինը,— հուսով եմ, որ չվնասեցի ձեզ։ Հիմա կպատրաստեմ թարմ գրոգ։

— Ա՜հ, դուք, երիտասարդ հելլեն,— բացագանչեց Բրիսսենդենը։— Դուք բավականաչափ չեք գնահատում ձեր ֆիզիկական ուժը։ Ձեր մեջ դիվային ուժ կա։ Դուք երիտասարդ հովազ եք, կորյուն։ Դե՛, դե՛, դուք ինքներդ եք տուժելու ձեր այդ ուժի երեսից։

— Ինչպե՞ս թե,— հետաքրքրությամբ հարցրեց Մարտինը՝ տալով նրան բաժակը։— Խմեցեք և մի՛ չարանաք։

— Շատ պարզ։— Բրիսսենդենը խմեց ու ժպտաց,— միայն կանանց պատճառով։ Նրանք հանգիստ չեն տա ձեզ մինչև մահ, ինչպես հանգիստ չեն տալիս և հիմա։ Չէ՞ որ ես երեկ չեմ ծնվել։ Ինձ խեղդելուց ի՞նչ օգուտ։ Միևնույն է, ես մինչև վերջը կասեմ իմ խոսքը։ Անկասկած, դա ձեր առաջին

սերն է, բայց, ի սեր գեղեցկության, հաջորդ անգամ ավելի ճաշակավոր եղեք։ Ձեզ ի՞նչ են հարկավոր բուրժուական միջավայրից աղջիկներ։ Ձեզ քաշեք նրանցից։ Գտեք ձեզ համար իսկական կին,— կրակոտ, կրքոտ,— այնպիսին, որը ծիծաղեր կյանքի բոլոր վտանգների վրա, խաղ աներ և՛ սիրո, և՛ մահվան հետ։ Աշխարհի երեսին կան այդպիսի կանայք, և հավատացե՛ք, որ նրանք էլ կհոժարեն սիրել ձեզ այնպես, ինչպես ամեն մի փոքրոգի կին բուրժուական միջավայրից։

— Փոքրոգի՞,— բացագանչեց Մարտինը վրդովված։

— Հենց այդպես, փոքրոգի՛։ Նրանք թոթովելու են ձեզ մանրիկ, իրենց միջավայրում ծամծմված բարոյախոսություններ, և վախենալու են ապրել իսկական կյանքով։ Նրանք իրենց հասկացած ձևով են սիրելու ձեզ, Մարտին, բայց շատ ավելի սիրելու են իրենց ողորմելի բարոյականությունը։ Դուք ուզում եք շքեղ ու անկաշկանդ, մեծ ու ազատ հոգիների, փայլուն թիթեռնիկի, ոչ թե գորշ ցեցի կյանք։ Եվ սակայն ի վերջո դա էլ, բոլոր կանացի բաներն էլ կձանձրացնեն ձեզ, եթե դուք միայն դժբախտություն կունենաք ողջ մնալու։ Բայց դուք երկար չեք ապրի։ Դուք, չէ՞ որ չեք վերադառնա ձեր նավերին ու ծովին. դուք քարշ կդաք այդ փտած քաղաքներում՝ մինչև որ ձեր ոսկորներն էլ կփտեն և կմեռնեք։

— Դուք կարող եք դասախոսել, բայց չեք կարող իմ համոզմունքներից ետ կանգնեցնել ինձ,— ասաց Մարտինը։— Վերջ ի վերջո դուք ունեք ձեր խառնվածքի իմաստությունը, իսկ իմ խառնվածքի իմաստությունը նույնքան անմեղանշական է, ինչքան ձերը։

Նրանք տարակարծիք էին սիրո, ժուռնալների և այլ շատ հարցերի մեջ, բայց համակրում էին իրար, իսկ Մարտինը ավելի խոր սեր էր տածում դեպի Բրիսսենդենը։ Նրանք սկսեցին տեսակցել ամեն օր, թեև Բրիսսենդենը չէր կարողանում մի ժամից ավել։ Նստել Մարտինի տոթ սենյակում։ Բրիսսենդենը ոչ մի անգամ չէր գալիս առանց հետը բերելու մի կվարտ վիսկի. իսկ երբ նրանք ճաշում էին քաղաքում որևէ տեղ, նա միշտ պատվիրում էր շոտլանդական վիսկի և

սողայաջուր։ Նա միշտ էլ վճարում էր երկուսի համար, և նրա շնորհիվ Մարտինը ծանոթացավ մի շարք համեղ կերակուրների հետ և առաջին անգամ խմեց շամպայն և հռենոսյան գինի։

Սակայն Բրիսսենդենը միշտ էլ հանելուկային էր մնում։ Արտաքուստ ճգնավոր, նա միաժամանակ, չնայած իր ամբողջ սակավարյունությանը, բացահայտորեն հեշտասեր էր։ Նա չէր վախենում մահից, ցինիկ արհամարհանքով էր վերաբերվում մարդկային կյանքի բոլոր ձևերին. այնուամենայնիվ նա սիրում էր կյանքը՝ մինչև նրա ամենափոքր արտահայտությունը։ Նա տոչորվում էր ապրելու պապակով և հիմա, որ պատրաստվում էր մեռնել, փափագում էր մինչև կյանքի վերջին ատոմը «շարժվել իմ պստիկ տարածության վրա տիեզերական փոշու միջև, որից գոյացել եմ ես»,— ինչպես մի օր ասել էր նա ինքը։ Նա չարաչար էր գործածում թմրեցուցիչ դեղեր և անում էր շատ տարօրինակ բաներ՝ միայն նոր զգացողություններ և ապրումներ ունենալու նպատակով։ Նա պատմեց Մարտինին, թե մի անգամ երեք օր շարունակ ջուր չի խմել, որպեսզի վայելի ծարավը հագեցնելու բավականությունը։ Մարտինն այնպես էլ չիմացավ, թե ո՛վ և ի՛նչ է նա։ Նա անցյալ չունեցող մարդ էր, նրան սպասում էր անմիջական ապագայում շիրիմը, իսկ ներկայումս նրան այրում էր ապրելու տենդը։

ԳԼՈՒԽ XXXIII

Մարտինը շարունակում էր տանուլ տալ ճակատամարտը։ Ինչքան էլ որ ջանում էր խնայողություն անել, բայց և այնպես գրվածքներից ստացված շահը չէր բավարարում մինչև անգամ առօրյա ծախսը։ Նա ի վերջո ստիպվեց գրավ դնել և սև կոստյումը, դրանով զրկելով իրեն՝ Մորզերին այցելելու հնարավորությունից, երբ նրանք Գոհության տոնի

առթիվ ճաշի էին հրավիրել նրան։ Ռութը շատ վշտացավ՝ իմանալով նրա մերժումի պատճառը— նա պարզապես վհատվել էր։ Մարտինը նրան խոստացավ դալ՝ ասելով, որ անձամբ կգնա «Անդրցամաքային ամսաթերթի» խմբագրատունը՝ իրեն հասանելիք հինգ դոլլարը ստանալու և այդ դրամով դուրս կգրի իր կոստյումը։

Այդ առավոտ նա Մարիից փոխ վերցրեց տասը ցենտ։ Նրան ավելի հեշտ էր այդ դումարը խնդրել Բրիսսենդենից, բայց այդ թափառականը հանկարծ անհետացավ հորիզոնից. արդեն երկու շաբաթ էր, որ նա չէր գալիս Մարտինի սենյակը, իսկ Մարտինը զուր էր գլուխ կոտրում զուշակելու համար, թե նա ո՛րտեղ կարող է լինել։ Մարտինին տասը ցենտ հարկավոր էր լաստանավով ծովածոցն անցնելու համար. հասնելով Սան-Ֆրանցիսկո, նա սկսեց ոտով գնալ Մարկետ փողոցով և մտածել, թե ի՛նչ պետք է անի, եթե չհաջողվի դրամ ստանալ։ Մինչև անգամ Օկլենդ վերադարձը սպառնում էր մի առեղծված դառնալ այդ դեպքում, որովհետև Սան-Ֆրանցիսկոյում նա չուներ ոչ ոք, որից կարողանար փոխ առնել տասը ցենտ։

«Անդրցամաքային ամսաթերթի» խմբագրատան դուռը կիսաբաց էր, և Մարտինը, ակամա, կանգնելով դռան առաջ, լսեց հետևյալ խոսակցությունը.

— Բանը դրանում չի, միստեր Ֆորդ (Մարտինը գիտեր, որ խմբագրի ազգանունը Ֆորդ էր). հարցն այն է, թե դուք կարո՞ղ եք վճարել ինձ։ Այսինքն, հասկանալի է, կանխիկ դրամով։ Ինձ հետաքրքիր չի, թե ի՛նչ հեռանկարներ ունի «Անդրցամաքայինը» և դուք ի՛նչ եք անելու առաջիկա տարում։ Ես պահանջում եմ, որ դուք վճարեք ինձ իմ աշխատանքի համար, ուրիշ ոչինչ։ Եվ ես ասում եմ ձեզ, որ մինչև դուք չվճարեք ինձ ձեր պարտքը մինչև վերջին ցենտը, ծննդյան համարը տպագրական մեքենային չի հանձնվելու։ Ցտեսություն։ Երբ դրամ կունենաք, անցե՛ք ինձ մոտ։

Դուռը բացվեց և Մարտինի կողքից արագ անցավ մի մարդ՝ բռունցքները սեղմած և հայհոյանքներ քրթմնջելով։

Մարտինը ավելի հարմար նկատեց սպասել տասնհինգ րոպե։ Մի քիչ փողոցում թափառելուց հետո՝ նա վերադարձավ, հրեց դուռը և կյանքումն առաջին անգամ ոտք դրեց մի խմբագրատան շեմքը։ Երևում էր, որ այստեղ ընդունված չէր այցետոմս ներկայացնել, որովհետև մի տղա պարզապես անցավ միջնորմի ետևը և ասաց, որ ինչ-որ մեկը հարցնում է միստեր Ֆորդին։ Վերադառնալով՝ նա առաջնորդեց Մարտինին խմբագրի առանձնասենյակը— խմբագրության սրբություն սրբոցը։ Մարտինին ամենից առաջ զարմացրեց սենյակում տիրող արտասովոր խառնակությունը։ Հետո նա տեսավ սեղանի առաջ նստած երիտասարդ տեսքով մի պարոնի, որն ակնհայտ հետաքրքրությամբ նայում էր նրան։ Մարտինը զարմացավ նրա դեմքի հանդարտ արտահայտության վրա։ Տպարանապետի հետ կռիվը, անկասկած, նրա տրամադրության վրա ամենևին չէր ազդել։

— Ես... ես Մարտին Իդենն եմ,— սկսեց Մարտինը («և եկել եմ ստանալու իմ հինգ դոլլարը»,—ուզում էր ասել նա)։

Բայց դա առաջին խմբագիրն էր, որի հետ երես երեսի էր հանդիպում, և Մարտինը չէր ուզում հենց սկզբից խիստ խոսել նրա հետ։ Նա զարմացավ, որ միստեր Ֆորդը ոտքի կանգնեց ու բացագանչեց.

— Ի՞նչ եք ասում,— և հաջորդ րոպեին հանդիսավորապես սեղմեց նրա ձեռքը։— Եթե իմանայիք, թե ես ինչքա՞ն ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալով, միստեր Իդեն։ Ես շատ հաճախ մտածել եմ ձեր մասին, ջանացել պատկերել ինձ, թե ի՛նչ տեսք ունեք։

Մի քիչ ետ քաշվելով՝ միստեր Ֆորդը հիացած զննեց Մարտինին, որի կարկատած կոստյումն այնքան էլ արժանի չէր ուշադիր ուսումնասիրության, թեև Մարիա Սիլվան խնամքով արդուկել էր նրա տաբատի ծալքը։

— Ես ենթադրում էի, թե դուք շատ ավելի տարիքավոր եք։ Ձեր պատմվածքը լի է հասուն մտքերով և գրված է շատ ուժեղ։ Դուք իսկական վարպետ եք, ես հասկացա այդ՝

կարդալով առաջին երեք-չորս տողերը։ Ուզո՞ւմ եք պատմեմ, թե ինչպես առաջին անգամ կարդացի ձեր պատմվածքը։ Ո՛չ։ Ես ուզում եմ նախ ծանոթացնել ձեզ մեր աշխատակիցների հետ։

Շարունակելով խոսել՝ միստեր Ֆորդն ուսումնասիրեց նրան ընդհանուր սենյակը, ուր ներկայացրեց նրան իր տեղակալին, միստեր Ռայտին— փոքրիկ նիհար մի մարդու՝ սառած ձեռքերով, ջերմախտով տառապողի դեմքով և ցանցառ մեսաբանման մորուքով։

— Իսկ սա միստեր Էնդոն է— մեր գործերի կառավարիչը։

Մարտինը սեղմեց այդ ուրախ, ճաղատ պարոնի ձեռքը։ Նա դեմքով դեռևս բավական երիտասարդ էր, թեև զարդարված էր երկար ու սպիտակ մորուքով՝ խնամքով խուզված նրա կնոջ կողմից, որը կիրակի օրերը զբաղվում էր այդ գործով, միաժամանակ և ուծիլում էր նրա ծոծրակը։

Նրանք երեքով շրջապատեցին Մարտինին և խոսում էին՝ միաժամանակ գովեստներ շռայլելով նրան, մինչև որ Մարտինին վերջ ի վերջո թվաց, որ նրանք պարզապես ջանում են նրա գլուխը յուղել։

— Մենք հաճախ զարմանում էինք, թե դուք ինչո՞ւ ոչ մի անգամ չեք այցելում,— բացականչեց միստեր Ռայտը։

— Ես դրամ չունեի ծովածոցն անցնելու համար,— պատասխանեց Մարտինը՝ վճռելով ցույց տալ նրանց դրանով, որ դրամի կարիք ունի։

«Ամեն պարագայում իմ հագի փալասը պերճախոս կերպով վկայում է իմ կարիքի մասին»,— մտածեց նա ինքն իրեն։

Հետագա խոսակցության ընթացքում Մարտինն ամեն անգամ, երբ առիթ էր ներկայանում, ակնարկում էր իր այցելության նպատակի մասին։ Բայց նրա տաղանդի երկրպագուները խուլ էին մնում այդ հարցում։ Նրանք շարունակում էին գովերգել նրան, պատմում էին, թե ինչպես հիացել են նրա պատմվածքով իրենք, իրենց կանայք և աղջիկները։

բայց ոչ ոք չակնարկեց, թե մտադիր են վճարել նրա պատմվածքի համար։

— Ես պատմեցի՞ ձեզ, թե ինչպե՞ս առաջին անգամ կարդացի ձեր պատմվածքը,— հարցրեց միստեր Ֆորդը։ —Իհարկե՝ ո՛չ։ Ես գալիս էի Նյու-Յորքից, և երբ գնացքը կանգ առավ Օգդենում, թերթավաճառը վագոն մտավ՝ բերելով «Անդրցամաքային» վերջին համարը։

«Աստված իմ,— մտածեց Մարտինը,— դուք կարող եք ճամփորդել պուլմանյան վագոնով, իսկ ես սոված եմ և չեմ կարող պոկել ձեզանից իմ հալալ շահած հինգ դոլլարը»։ Կատաղությունը բռնեց նրան։ «Անդրցամաքային ամսաթերթի» նրա հանդեպ գործած ոճիրը հրեշավոր էր թվում նրան. նա հիշեց զրկանքների ու քաղցի ամիսները, հիշեց, որ երեկվանից ոչինչ չի կերել, իսկ մինչ այդ շատ քիչ բանով է սնվել։ Զայրույթը խփեց նրա գլուխը, և նա կատաղությունից կարմրեց։ Այս արարածները մինչև անգամ ավազակներ չեն. նրանք պարզապես մանր խաբեբաներ ու գողեր են։ Նրանք կորզել են իրենից պատմվածքը սուտ խոստումով ու խաբեությամբ։ Լա՜վ, նա ցույց կտա նրանց։

Եվ Մարտինը մտովին երդվեց չհեռանալ խմբագրատնից մինչև լրիվ չստանա իրեն հասանելիք դրամը։ Մանավանդ, որ դրամ չունի մինչև անգամ Օկլենդ վերադառնալու համար։ Մարտինը դեռ ևս զսպում էր իրեն, բայց նրա դեմքին երևաց այնպիսի մի արտահայտություն, որը շփոթեցրեց և մինչև անգամ վախեցրեց խոսակիցներին։

Նրանք սկսեցին գովեստներ շռայլել ավելի մեծ եռանդով։ Միստեր Ֆորդը դարձյալ սկսեց պատմել, թե ինչպես առաջին անգամ կարդաց «Զանգերի զողանջը», և միստեր Էնդսը հայտնեց, որ իր եղբոր դուստրը բարձր է գնահատում այդ պատմվածքը, իսկ այդ եղբոր դուստրը ուսուցչուհի է Ալամեդայի դպրոցում։

— Ես եկել եմ ձեզանից դրամ ստանալու,— հայտարարեց հանկարծ Մարտինը,— դուք պետք է վճարեիք ինձ հինգ

դոլլար՝ ձեր բոլորի այնքան հավանած այդ պատմվածքի տպվելուց անմիջապես հետո։

Միստեր Ֆորդի դեմքն այնպիսի արտահայտություն ստացավ, որ իբր պատրաստ է անմիջապես վճարել. նա շոշափեց իր գրպանը և, հանկարծ դառնալով դեպի միստեր Էնդսը, հայտարարեց որ դրամը մոռացել է տանը։ Միստեր Էնդսը տխուր նայեց նրան և բնազդաբար ձեռքով պահպանեց իր տաբատի գրպանը։ Դրանից Մարտինը հասկացավ, որ նրա մոտ դրամ կա։

— Ցավում եմ,— ասաց միստեր Էնդսը,— բայց ես հենց նոր հաշիվներս մաքրեցի տպարանի հետ, և ամբողջ կանխիկ դրամը տվեցի։ Իհարկե, իմ կողմից շատ անմտածված բան էր այդքան քիչ դրամ վերցնել ինձ հետ, բայց... հասկանո՞ւմ եք, վճարման ժամկետը դեռ չի հասել, իսկ տպարանապետն եկավ և սկսեց խնդրել, որ մենք սիրալիրության համար կանխավճար տանք նրան. իսկ դա բոլորովին անսպասելի էր։

Նրանք երկուսն էլ նայեցին միստեր Ուայտին, բայց նա ծիծաղեց ու թոթվեց ուսերը։ Ամեն պարագայում նրա խիղճը հանգիստ էր։ Նա աշխատանքի էր մտել «Անդրցամաքային ամսաթերթը», որպեսզի ուսումնասիրի ժուռնալային գործը, բայց դրա փոխարեն ստիպված էր եղել ուսումնասիրել ֆինանսական քաղաքականությունը։ «Ամսաթերթը» արդեն չորս ամիս է, որ ռոճիկ չի տվել նրան, բայց նա արդեն հասկանում էր, որ ավելի կարևոր է բավարարել տպարանը, քան վճարել խմբագրի տեղակալի աշխատավարձը։

— Շատ անճոռնի բան ստացվեց, միստեր Իդեն,— ասաց միստեր Ֆորդը շնորհալի ձևով։— Դուք հանկարծակի բերեցիք մեզ։ Ահա թե մենք ի՛նչ կանենք։ Մենք ձեզ չեկ կուղարկենք վաղը առավոտյան։ Միստեր Էնդս, միստեր Իդենի հասցեն գրա՞ծ է ձեզ մոտ։

Այո, միստեր Էնդսի մոտ կա նրա հասցեն և վաղը առավոտ առաջին գործը կլինի ուղարկել այդ չեկը։ Մարտինը այնքան էլ չէր հասկանում ֆինանսական և բանկային գոր-

ծերը, բայց և այնպես նա վճռեց, որ եթե նրանք չեկ են տալու վաղը, կարող են տալ և այսօր։

— Այդպես ուրեմն, միստեր Իդեն, որոշված է. վաղը չեկ կուղարկվի ձեզ։

— Ինձ դրամ է հարկավոր այսօր, ոչ թե վաղը,— հաստատ ասաց Մարտինը։

— Հանգամանքների դժբախտ դասավորություն ստացվեց։ Եթե մի այլ օր հանդիպեիք մեզ մոտ...— սկսեց միստեր Ֆորդը, բայց միստեր Էնդսը, որը, ինչպես երևում է ավելի դյուրադրգիռ խառնվածքի տեր էր, ընդմիջեց նրան.

— Միստեր Ֆորդն արդեն բացատրեց ձեզ, թե բանը ինչո՞ւմն է,— ասաց նա կոպտորեն,— նույնպես ես։ Չեկը կուղարկվի ձեզ վաղը։

— Ես էլ բացատրեցի ձեզ,— կտրականապես ասաց Մարտինը,— որ դրամն ինձ հարկավոր է այսօր։

Նա զգաց, որ իր զարկերակն սկսեց ավելի արագ խփել գործերի կառավարչի կոպիտ հայտարարությունից հետո. բացի այդ, վերջինիս մի քանի շարժումներից Մարտինը եզրակացրեց, որ «Ամսաթերթի» կանխիկ դրամը գտնվում է անկասկած նրա գրպանում։

— Շատ վատ դուրս եկավ...— ուզում էր նորից սկսել միստեր Ֆորդը։

Բայց այդ րոպեին միստեր Էնդսը անհամբեր մի շարժումով շուռ եկավ, ինչպես երևում է սենյակից դուրս գնալու մտադրությամբ։ Նույն պահին Մարտինը խոյացավ նրա վրա և բռնեց նրա բկից այնպես, որ նրա ձյունասպիտակ մորուքը ուղղվեց դեպի առաստաղը՝ քառասունհինգ աստիճանի անկյուն կազմելով։ Միստեր Ֆորդն ու միստեր Ուայտը, սարսափից պապանձված, նայում էին, թե Մարտինն ինչպե՞ս թափ է տալիս իրենց գործերի կառավարչին, կարծես պարսկական գորգ լիներ։

— Դե՛, դո՛ւք, երիտասարդ տաղանդների պատվարժան շահագործող,— գոռաց Մարտինը,— քսակը բաց արեք, ապա

թե ոչ ես կթոթափեմ ձեր կրպանը, թեկուզ միայն նիկելի դրամներ լինեն այնտեղ։

Հետո նա երեսը շուռ տալով դեպի վախեցած երկու դիտողները, ավելացրեց.

— Իսկ դուք հեռու կացեք, հակառակ դեպքում ձեղանից մեկն ու մեկը կտուժի։

Միստեր Էնդսը գրեթե շնչահեղձ էր լինում, այդ պատճառով Մարտինը թեթևակի թուլացրեց նրա կոկորդը սեղմող մատները, որպեսզի նրան հնարավորություն տա համաձայնություն հայտնելու իր առաջարկած պայմանին։ Գործերի կառավարիչը մի քանի անգամ տաբատի գրպանը խառնելուց հետո, վերջապես հանեց չորս դոլլար և տասնհինգ ցենտ։

— Շուռ տվեք գրպանը,— հրամայեց նրան Մարտինը։ Տասը ցենտանոց մի դրամ էլ դուրս եկավ։ Ավելի վստահ լինելու համար՝ Մարտինը երկու անգամ հաշվեց իր ավարը։

— Այժմ հերթը ձերն է,— բղավեց նա միստեր Ֆորդին։— Յոթանասունհինգ ցենտ էլի ունեմ ստանալու։

Միստեր Ֆորդը չառարկեց, բայց նրա գրպանում ճարվեց միայն վաթսուն ցենտ։

— Էլ չկա՞,— հարցրեց Մարտինը սպառնալից՝ վերցնելով դրամը։— Ի՞նչ կա ձեր ժիլետի գրպաններում։

Իր ազնվությունն ապացուցելու համար՝ միստեր Ֆորդը շուռ տվեց իր երկու գրպանները։ Դրանց մեկից գետնին ընկավ քառակուսի մի կարտոն։ Միստեր Ֆորդը վերցրեց այն և ուզում էր ետ դնել իր գրպանը, բայց Մարտինը բացագանչեց.

— Ի՞նչ է դա։ Լաստանավի տո՞մս։ Դե՛ս տվեք։ Դա տասը ցենտ արժի։ Ուրեմն հիմա, այդ տոմսն էլ հաշվելով ստացվեց չորս դոլլար իննսունհինգ ցենտ։ Դե՛, էլի հինգ ցենտ։

Նա այնպես վայրագ նայեց միստեր Ուայտին, որ այդ ճղճիմ արարածը իսկույն տվեց նրան մի նիկելե դրամ։

— Շնորհակալ եմ,— արտասանեց Մարտինը՝ դիմելով նրանց բոլորին,— մնաք բարով։

— Ավազա՛կ,— շշնջաց նրա ետևից միստեր Էնդսը։

— Խաբեբա՛, գրպանահա՛ս,— պատասխանեց Մարտինը՝ իր ետևից փակելով դուռը։

Մարտինը ոգևորված էր իր հաղթանակով— այնքան ոգևորված, որ հիշելով տասնհինգ դոլլարի մասին, որը պարտական էր նրան «Մոզ» ժուռնալը «Փերին ու մարգարիտը» պատմվածքի համար, նա վճռեց անհապաղ դանձել նաև այդ պարտքը։ Բայց «Մոզի» խմբագրատանը նստած էին մաքուր հագնված ինչ-որ երիտասարդներ, պարզապես ավազակներ, որոնք սովոր են կողոպտել և ամեն ինչ և բոլորին, առանց բացառելու և իրար։ Մարտինը կոտրատեց կահույքի մի մասը, բայց խմբագիրը, որն ուսանողության տարիներին աթլետիզմի մրցանակ էր ստացել, գործերի կառավարչի, հայտարարություններ հավաքող գործակալի և դռնապանի օգնությամբ, դռնից դուրս հանեց Մարտինին և մինչև անգամ օգնեց նրան չափազանց արագ իջնելու սանդուղքներից։

— Դարձյալ եկեք, միստեր Իդեն, միշտ ուրախ կլինենք ձեզ տեսնելով,— ծիծաղելով բղավում էին նրա ետևից։

Մարտինը, գետնից վեր կենալով, նույնպես ժպտաց։

— Թո՛ւ,—մրթմրթաց նա նայելով նրանց,—«Անդրըցամաքայինի» խուժանը վախլիկ այծեր դուրս եկան, իսկ դուք մրցանակի արժանի ըմբշամարտիկներ։

Դրան իբրև պատասխան՝ մյուսները նորից հոհոացին։

— Ես պետք է ասեմ ձեզ, Մարտին Իդեն,— ասաց «Մոզի» խմբագիրը,— որ դուք, որպես բանաստեղծ, վատ չեք պաշտպանվում։ Թույլ տվեք հարցնել. որտե՞ղ եք սովորել այդ բրա ռուլեն։

— Այնտեղ, որտեղ դուք սովորել եք այս կրկնակի նելսոնը,— պատասխանեց Մարտինը,— ամեն պարագայում ձեր աչքի տակ կապույտ հետք կմնա։

— Հուսով եմ, որ ձեր էլ վիզը քոր կգա,— սիրալիր առարկեց խմբագիրը։— Ի՞նչ եք ասում, չկա՞նք խմելու մենք բոլորս ի պատիվ դրա, իհարկե ոչ վզի, այլ ի պատիվ մեր ծանոթության։

— Ես հաղթված եմ, հետևաբար պետք է համաձայնեմ,— պատասխանեց Մարտինը։

Եվ բոլորը միասին— կոդոպտողներն ու կոդոպավածը խմեցին՝ բարեկամաբար համաձայնելով, որ ճակատամարտը շահել են ուժեղները, այդ պատճառով էլ «Փերի և մարգարիտ» պատմվածքի համար հասանելիք տասնհինգ գոլլարը իրավացիորեն պատկանում է «Մոդին»։

ԳԼՈՒԽ XXXIV

Արտուրը սպասեց դռնակի մոտ, իսկ Ռութն արագ բարձրացավ սանդուղքներով Մարիա Սիլվայի բնակարանը։ Նա լսեց գրամեքենայի հապճեպ թխթխկոց, և երբ Մարտինը ներս հրավիրեց նրան, Ռութը տեսավ, որ Մարտինը տրպում է ինչ-որ ձեռագրի վերջին էջը։ Ռութը հատկապես եկել էր իմանալու, թե Մարտինը ճաշի կգա՞ Գոհունակության տոնին, բայց Մարտինը, իր մտքերով տարված, չթողեց, որ նա բերանը բանա։

— Թույլ տվեք կարդալ ձեզ այս,— բացագանչեց նա՝ մեքենայից հանելով էջը և մի կողմ թողնելով պատճենները։— Սա իմ վերջին պատմվածքն է։ Նա այնքան տարբեր է մյուս բոլորից, որ ես մինչև անգամ մի քիչ սարսափում եմ, բայց անգիտակցորեն համոզված եմ, որ լավն է։ Ահա, ինքներդ դատեցեք։ Սա հավանական պատմվածք է։ Ես վերնագրել եմ այն «Վիկի-Վիկի»։

Մարտինի դեմքը բոցավառված էր ստեղծագործական ջերմությամբ, թեև Ռութը նրա ցուրտ խցիկում դողում էր, և Մարտինի ձեռքերն էլ սառն էին, ինչպես աղջիկը նկատեց նրան ձեռք տալիս։

Ռութն ուշադրությամբ լսում էր, թեպետ նրա դեմքին Մարտինը շարունակ կարդում էր միայն չհավանելու նշաններ։ Վերջացնելով ընթերցումը՝ Մարտինը հարցրեց.

— Ասացեք անկեղծ, հավանո՞ւմ եք, թե ոչ։

— Չգիտեմ,— պատասխանեց Ռութը։— Ձեր կարծիքով կարելի՞ է դեռեղել այդ պատմվածքը։

— Կարծում եմ, որ ոչ,— համաձայնեց նա։— Դա ժուռնալների ուժերից վեր է։ Բայց դա իրական կյանքից է, երդվում եմ, որ ճշմարիտ է։

— Բայց ինչո՞ւ դուք համառորեն գրում եք այնպիսի բաներ, որոնք անհնար է վաճառել,— անխնա պնդում էր Ռութը։— Չէ՞ որ դուք գրում եք, որպեսզի գրամ շահեք ապրելու համար։

— Այո՛, իհարկե։ Բայց իմ հերոսն ինձանից ավելի ուժեղ դուրս եկավ։ Նա պահանջում էր, որ պատմվածքը գրվի հենց այդպես, և ոչ թե այլ կերպ։

— Բայց ձեր այդ Վիկի-Վիկի՞ն։ Ինչո՞ւ նրան խոսեցնում եք այդպես կոպիտ։ Անկասկած, ձեր ընթերցողները կվիրավորվեն նրա արտահայտություններից և, անկասկած, հրատարակիչներն իրավացի են՝ մերժելով ձեր աշխատությունը։

— Որովհետև իսկական Վիկի-Վիկին հենց այդպես էլ կխոսեր։

— Դա վատ ճաշակ է,— պատասխանեց նա կարուկ։

— Դա իրական է։ Դա ճշմարիտ է։ Եվ ես պետք է գրեմ կյանքի մասին այնպես, ինչպես տեսնում եմ։

Ռութը ոչինչ չպատասխանեց, և մի պահ անհարմար լռություն տիրեց։ Մարտինը չափազանց սիրում էր նրան և այդ պատճառով չէր հասկանում Ռութին, իսկ աղջիկը նրան չէր հասկանում այն պատճառով, որ Մարտինը չէր պարփակվում նրա պատկերացումների նեղ շրջանակում։

— Գիտե՞ք, որ ես «Անդրցամաքային ամսաթերթից» ստացա ինձ հասանելիք գումարը,— ասաց Մարտինը՝ ցանկանալով խոսակցության նյութը փոխել և հիշելով, թե ինչպե՛ս հաշիվ մաքրեց իմբրաղրական եռյակի հետ, ակամա քրքջաց։

— Հրաշալի՞։ Նշանակում է, որ դուք կդաք, այնպես չէ՞,— ուրախ բացականչեց Ռութը։— Ես ուզում էի այդ իմանալ։

— Կդա՞մ,— հարցրեց Մարտինը զարմացած։— Ո՞ւր։

— Մեզ մոտ վաղը ճաշի։ Չէ՞ որ դուք ասացիք, թե դուրս կգրեք կոստյումը, հենց որ դրամը կստանաք։

— Ես բոլորովին մոռացա այդ,— շվարած ասաց Մարտինը։— Բանը նրանումն է, որ... այս առավոտ ոստիկանը վերցրեց Մարիայի երկու կովն ու հորթուկը՝ ապօրինի արածացման համար, իսկ նրա մոտ տուգանքը վճարելու դրամ չկար։ Ես վճարեցի նրա փոխարեն։ Այնպես որ «Զանգերի զողանջի» ամբողջ հոնորարը հատկացվեց Մարիայի կովերի փրկանքին։

— Ուրեմն դուք չե՞ք գա։

Մարտինը նայեց իր հագուստին։

— Չեմ կարող։

Ռութի կապույտ աչքերը արտասվակալեցին. նա կշտամբանքով նայեց Մարտինին, բայց ոչինչ չասաց։

— Հաջորդ տարին մենք ձեզ հետ միասին կտոնենք Գոհունակության օրը Դելմոնիկոյի մոտ, կամ Լոնդոնում, կամ Փարիզում, և կամ ո՛ւր ուզեք։ Ես ապահով եմ այդ մասին։

— Վերջերս ես թերթերում կարդացի,— պատասխանեց Ռութը,— որ փոստի վարչության մեջ թափուր պաշտոններ կան։ Դուք նրանց մոտ առաջինն եք նշանակվել հերթում, այնպես չէ՞։

Մարտինը ստիպված եղավ խոստովանել, որ ծանուցագիր ստացավ, բայց չգնաց։

— Ես այնքան վստահ եմ ինձ վրա,— արդարանում էր նա։— Մի տարուց ես կշահեմ տասնապատիկ ավելին, քան փոստի որևէ պաշտոնյա։ Կտեսնեք։

— Ա՜հ,— կարողացավ միայն ասել Ռութը։ Նա ոտքի կանգնեց և սկսեց ձեռնոցներն անցկացնել։— Ես պետք է գնամ. Արտուրը սպասում է ինձ։

Մարտինը պինդ գրկեց նրան և համբուրեց, բայց Ռութն անտարբեր ընդունեց նրա փաղաքշանքը։ Ռութի մարմինը չդողդողաց սովորականի պես. նա ձեռքերով չփաթաթվեց նրա վզին և շրթունքը չսեղմեց նրա շրթունքին։

«Զարացավ,— մտածեց Մարտինը, երբ նրան ճանապարհ գցելուց հետո վերադարձավ իր սենյակը։— Բայց ինչո՞ւ։ Իհարկե, ցավալի է, որ ոստիկանը հենց այսօր բռնեց կովերին, բայց դա միայն հանգամանքների դժբախտ դասավորություն է, որի համար ոչ ոք մեղավոր չի»։ Մարտինի մտքովն էլ չանցավ, որ այդ դեպքում նա կարող էր վարվել այլ կերպ։ «Իհարկե,— վճռեց նա վերջապես,— նրա աչքում ես մի քիչ մեղավոր եմ նրա համար, որ հրաժարվեցի փոստում ծառայելուց։ Եվ հետո՝ «Վիկի-Վիկին» դուր չեկավ նրան»։

Հանկարծ սանդուղքների վրա քայլեր լսվեցին։ Մարտինը շուռ եկավ և տեսավ ներս մտնող ցրիչին։ Սովորական հուզմունքով Մարտինը նրանից ընդունեց մեծ ու երկարավուն ծրարների մի ամբողջ կույտ։ Նրանց մեջ կար մի փոքր ծրար «Նյու-Յորքի տեսությունից»։ Նախքան բանալը՝ Մարտինը մի քիչ դանդաղեց։ Դա դժվար թե պատմվածքի ընդունելության մասին հաղորդագրություն է։ Վերջերս նա ոչ մի գրվածք չի ուղարկել ժուռնալին։ «Թերևս նրանք ուզում են մի հոդված պատվիրել ինձ»— նա գրեթե ուշագնաց եղավ այդ մտքից։ Բայց իսկույն վանեց իրենից այդ հախուռն, անիրականալի հույսը։

Այդ ծրարում կար խմբագրից մի կարճառոտ պաշտոնական նամակ, որի մեջ հաղորդվում էր առկա անանուն նամակի ստացման մասին, ընդ որում խմբագիրը խնդրում էր Մարտինին չանհանգստանալ, որովհետև խմբագրությունը ոչ մի նշանակություն չի տալիս անանուն նամակների։

Այդ գրության կցված անանուն նամակը գրված էր անգրագետ, ձեռքով նկարած տպագիր տառերով։ Դա մի անհեթեթ մատնություն էր այն մասին, որ «այսպես կոչված Մարտին Իդենը», որը ժուռնալներին ուղարկում է իր պատմվածքներն ու բանաստեղծությունները, իսկի էլ գրող չի, այլ պարզապես գողանում է հին ժուռնալներից պատմվածքներ, որոնք արտատպում է գրամեքենայի վրա և ուղարկում իր անունից։ Մրարի վրա կար Սան-Լեանդրոյի փոստի

յաժանմունքի կնիքը։ Մարտինը միանգամից դուշակեց անանուն նամակի հեղինակին։ Դա Հիգգինբոթամի քերականությունն է, Հեգգինբոթամի մտքերը, որոնք հայտաբերվում էին ամեն մի տողում։ Մարտինը շատ լավ հասկանում էր, որ այդ նամակը սարքված է իր փեսայի ձեռքով։

Բայց ինչո՞ւ է նա այդ արել,— հարցնում էր նա իրեն՝ առանց պատասխան գտնելու։ Ի՞նչ վատ բան է արել նա Բեռնարդ Հիգգինբոթամին։ Դա այնքա՞ն անհեթեթ, այնքա՞ն անմիտ բան էր։ Ոչ մի բացատրություն չկար դրա համար։ Մի շաբաթվա ընթացքում մի տասնյակ այդպիսի նամակներ ստացվեցին և արևելյան նահանգների զանազան ժուռնալներից։ Մարտինին շատ դուր եկավ խմբագիրների այդ վարմունքը։ Չնայած, որ նա բոլորովին անծանոթ է նրանց, շատերը մինչև անգամ համակրություն էին հայտնել նրան։ Ակներև էր, որ նրանք զզվանքով էին վերաբերվում մատնությունների։ Նրան վնասելու հիմար փորձը բացահայտորեն անհաջողության մատնվեց։ Ընդհակառակը, դա կարող է մինչև անգամ օգտակար լինել, որովհետև խմբագիրների ուշադրությունն է հրավիրել դեպի իր անձնավորությունը։ Նրանցից մի քանիսը այսուհետև կարդալով նրա որևէ պատմվածքը կհիշեն, որ դրա հեղինակն է այն Մարտին Իդենը, որը հիշված է անանուն նամակում։ Եվ թերևս դա նպաստավոր ազդեցություն կգործի նրա գրվածքների ճակատագրի վրա։

Մոտավորապես այդ ժամանակ էլ պատահեց մի դեպք, որից հետո Մարտինը զգալիորեն ընկավ Մարիա Սիլվայի աչքում։ Մի օր Մարտինը տեսավ նրան խոհանոցում՝ արտասվալից աչքերով և ցավից տնքալիս. նա չէր կարողանում տեղից շարժել ծանր արդուկները։ Մարտինն իսկույն վճռեց, որ Մարիան դրիպ ունի, տվեց նրան մի ումպ վիսկի, որը մնացել էր Բրիսսենդենի բերած շշերից մեկի հատակին, և պատվիրեց նրան պառկել։ Բայց Մարիան ոչ մի կերպ չէր համաձայնում։ Մարիան համառորեն բղավում էր, որ անպաժեշտ է վերջացնել սպիտակեղենը արդուկել և հանձ-

նել այս երեկո, հակառակ դեպքում վաղը իր յոթ երեխաները ոչինչ չեն ունենա ուտելու։

Մարիան չափազանց զարմացավ (նա չէր դադարում պատմել այդ մասին մինչև իր մահը), երբ տեսավ, որ Մարտինը վերցրեց արդուկը և արդուկելու տախտակի վրա գցեց բատիստից մի նուրբ կոֆտա։ Դա Քեթ Ֆլեննեգենի— թաղում ամենամեծ պճնամոլուհու լավագույն առնական կոֆտան էր։ Միսս Ֆլեննեգենը պահանջել էր, որ կոֆտան անպայման պատրաստ լինի երեկոյան։ Բոլորը դիտեին, որ նա մտերմական կապ է պահպանում երկաթագործ Ջոն Կոլլինսի հետ և, Մարիայի ստացած մասնավոր տեղեկություններով, վաղը երկուսով գնում են Ոսկե Դարբասի պարկը։ Մարիան իզուր էր աշխատում ազատել կոֆտան։ Մարտինը բռնի ուժով նստացրեց նրան աթոռին, և Մարիան, աչքերը չոած, սարսափից իրեն կորցրած, տեսավ, որ Մարտինը սկսեց մոլեգին աշխատել արդուկով։ Տասը րոպեից Մարտինը Մարիային տվեց կոֆտան այնպես լավ արդուկած, որ Մարիան ինքը երբեք այդքան լավ չէր արդուկել։ Մարտինը ստիպեց նրան խոստովանվել դրանում։

— Ես կարող էի ավելի արագ արդուկել, եթե արդուկներն ավելի տաք լինեին,— բացատրեց նա։

Բայց, Մարիայի կարծիքով, Մարտինն առանց այն էլ տաքացրել էր արդուկները մինչև վերջին հնարավորությունը։

— Դուք լավ չեք խոնավացնում,— ասաց Մարտինը Մարիային՝ ծայրաստիճան ապշեցնելով նրան,— հիմա ես ցույց կտամ ձեզ թե ինչպես պիտի անել այդ։ Եթե ուզում եք արագ արդուկել, խոնավացրած սպիտակեղենը պիտի պահել որոշ ճնշման տակ։

Մարտինը մառանից դուրս բերեց մի արկղ, մի կափարիչ հարմարցրեց նրան և նրա վրա դրեց երեխաների հավաքած երկաթի հին կտորներ։ Սպիտակեղենը խոնավացվում էր, դրվում արկղը և ծածկվում կափարիչով՝ երկաթի ճնշման տակ։ Դա իսկի էլ դժվար գործ չէր։

— Իսկ հիմա նայեցեք,— բացագանչեց Մարտինը, որը մերկացավ մինչև մեջքը և վերցրեց գրեթե շիկացած արդուկը։

Հետագայում Մարիան բոլորին պատմեց, թե ինչպես Մարտինը, արդուկելը վերջացնելուց հետո, սովորեցրեց նրան բրդե գործվածքների լվանալու եղանակը։

— Նա ասում է. «Մարիա, մեծ հիմար, ես պետք է սովորեցնել ձեզ»։ Եվ նա սովորեցնել արեց։ Տասը րոպե նա մի մեքենա շինել։ Տակառ, երկու գավազան և անիվ կունդ։ Ահա՛։

Այդ գիտությունը Մարտինը սովորել էր Ջոյի մոտ, «Տաք աղբյուրների» լվացքատանը։ Հին անիվի կունդը, հարմարեցրած փայտին, մխոցի դեր էր կատարում։ Մյուս ծայրին ամրացրած էր մի պարան, որը անց էր կացվել խոհանոցի ձեղունակալից. դա հնարավորություն էր տալիս մի ձեռքով շարժման մեջ դնելու մխոցը. տակառի մեջ դրված բրդե իրերը այդ սարքավորման օգնությամբ շատ լավ էին թափ տրվում։ Մարիան մինչև անգամ տղաներից մեկին ընտելացրեց ձգել պարանը և շատ էր զարմանում Մարտին Իդենի հնարագիտությանը։

Բայց և այնպես Մարտինի վարքը շատ ընկավ Մարիայի աչքին։ Նրան շրջապատող ռոմանտիկ լուսապսակը ցրիվ եկավ, որպես ծուխ, երբ պարզվեց, որ նա պարզապես նախկին լվացարար է։ Նրա բոլոր գրքերը, պատկառելի այցելուները, վիսկիի դատարկ շշերը— Մարիայի աչքին այդ բոլորը կորցրեց իր թովչանքը։ Ուրեմն այդ խորհրդավոր Իդենը ամենահասարակ բանվոր է եղել, նույնպիսի բանվոր, ինչպես ինքը, և երկուսն էլ միևնույն դասակարգին են պատկանում։ Դրանից Մարտինը ավելի մոտ, ավելի հասկանալի դարձավ նրան, բայց խորհրդավորության թովչանքն անհետացավ։

Մարտինն իր հարազատներից ավելի ու ավելի էր հեռանում։ Միստեր Հիգգինբոթամի անհաջող ելույթից հետո՝ իրեն հայտաբերեց և ապագա փեսան— Հերման Շմիդտը։ Մի

անգամ Մարտինին հաջողվեց գտնել մի քանի փոքրիկ ոտանավորներ ու պատմվածքներ և մասամբ վերականգնել իր բարեկեցությունը։ Նա հաշիվները մաքրեց իր պարտատերերի հետ, գուրս գրեց կոստյումն ու հեծանիվը։ Զննելով հեծանիվն ու համոզվելով, որ նորոգման կարիք ունի, Մարտինը վճռեց վերանորոգել այն և, ապագա ազդականի նկատմամբ իր ընկերասիրությունը ցույց տալու համար, հեծանիվն ուղարկեց Հերման Շմիդտի արհեստանոցը։

Նույն օրը երեկոյան Մարտինը զարմացավ ու գոհունակություն զգաց՝ ետ ստանալով հեծանիվը։ Ակներև էր, որ Շմիդտը վճռել էր դրսևորել նույնպիսի ընկերական համակրանք և հերթից դուրս է վերանորոգել հեծանիվը, բացի այդ տուն է ուղարկել այն, թեև ոչ մի արհեստանոց սովորություն չունի այդ անելու։ Սակայն հեծանիվը զննելով, Մարտինը համոզվեց, որ ոչ մի վերանորոգում չի կատարվել։ Նա հեռախոսեց արհեստանոցը և պատասխան ստացավ, որ Հերման Շմիդտը «չի ցանկանում ոչ մի գործ ունենալ» նրա հետ։

— Պարոն Հերման Շմիդտ,— հանգիստ ասաց Մարտինը,— ես կհանդիպեմ ձեզ մոտ և մի լավ կշարդեմ ձեր այդ հոլանդական քիթը։

— Եթե դուք գաք ինձ մոտ արհեստանոցը,— լսվեց պատասխանը,— ես կկանչեմ ոստիկանների։ Ես ցույց կըտամ ձեզ։ Մի անհանգստանաք, ձեզ չի հաջողվի կռվի բռնվել ինձ հետ։ Դուք դատարկապորտ եք — ահա թե ի՛նչ, իսկ ես քնած չեմ։ Եթե ես ամուսնանում եմ ձեր քրոջ հետ, դա դեռ չի նշանակում, որ դուք կարող եք պլոկել ինձ։ Ինչո՞ւ չեք ուզում գործ անել և ազնվորեն շահել ձեր առօրյա ապրուստը։ Հապա՛, պատասխանեք։

Մարտինը, որպես ճշմարիտ փիլիսոփա, զսպեց իր զայրույթը, պատասխանեց միայն սուլոցով և լսափողակը կախեց։ Սկզբում նրա համար ծիծաղելի էր այդ, բայց անմիջապես հետո մենակության գիտակցությունը սկսեց ճնշել նրան։ Ոչ ոք չէր հասկանում նրան, նա հարկավոր չէր ոչ

ոքի՝ բացի Բրիսսենդենից, որը անհետացել է՝ ասված գիտի ո՛ւր։

Մթնելու վրա էր, երբ Մարտինը դուրս եկավ բանջարավաճառի խանութից՝ ձեռքին ունենալով այդտեղ գնած ապրանքը։ Տրամվայը կանգնեց փողոցի անկյունում, և վագոնից ցած իջավ նրան ծանոթ մի կերպարանք։ Մարտինի սիրտը թռավ ուրախությունից։ Դա նույն ինքը Բրիսսենդենն էր, և Մարտինը էլեկտրական լապտերի լույսով նկատեց նրա ուռած գրպանները — մի գրպանում կային գրքեր, իսկ մյուսում՝ շշեր։

ԳԼՈՒԽ XXXV

Բրիսսենդենը ոչ մի բացատրություն չտվեց Մարտինին իր երկարատև բացակայության մասին. Մարտինն իր կողմից հարց ու փորձ չարեց այդ ուղղությամբ։ Նա գոհ էր տեսնելով, գրոգի բաժակներից բարձրացող գոլորշու միջով, իր բարեկամի դժգույն և նիհար դեմքը։

— Ես էլ ձեռքերս ծալած չէի նստել,— հայտարարեց Բրիսսենդենը, երբ Մարտինը պատմեց նրան իր վերջին աշխատությունների մասին։

Նա իր վերարկուի ներսի գրպանից հանեց մի ձեռագիր և տվեց այն Մարտինին, որը կարդալով վերնագիրը, հետաքրքրությամբ նայեց նրան.

— Այո՛, այո՛,— ծիծաղեց Բրիսսենդենը,— վատ վերնագիր չէ, ճի՞շտ է։ «Աստղաբաշխական օրագրություն» ... Սրանից լավը չէիր գտնի։ Իսկ դա ձեր բառն է, հիշո՞ւմ եք, որ խոսում էիք մարդու մասին, ինչպես այդ «օրագրության վերջինի» մասին, վերակենդանացած մատերիայի մասին, որը ծնվել է ջերմությունից և պայքարում է ջերմաչափի սանդղակի վրա իր փոքրիկ տեղի համար։ Դա իմ մտքում

խրվեց-մնաց, և ինձ կարիք եղավ դրել մի ամբողջ պոեմա, որպեսզի վերջապես ազատվեմ նրանից։ Ասացեք, ի՞նչ է ձեր կարծիքը դրա մասին։

Սկսելով կարդալ՝ Մարտինը նախ կարմրեց, ապա գու նատվեց հուզմունքից։ Դա գեղարվեստական ամենակատարյալ մի երկասիրություն էր։ Այստեղ ձևը հաղթանակում էր բովանդակության վրա, եթե հնարավոր էր հաղթանակ համարել՝ մտքի ու բանավոր արտահայտության այդ իդեալական համաձուլումը — այնքան կատարյալ, որ Մարտինի աչքերը հիացումից արտասվակալեցին, իսկ նրա սիրտը սկսեց ավելի ուժգին բաբախել։ Դա երկար, վեց կամ յոթ հարյուր տողանի պոեմա էր—տարօրինակ, ֆանտաստիկ, ահարկու պոեմա։ Դա թվում էր անհնարին, անիրական, բայց և այնպես դա գոյություն ուներ և գրված էր սպիտակ թղթի վրա սև թանաքով։ Այդ պոեմում պատկերվում էր մարդն իր բոլոր որոնումներով, անսահման տարածություն հաղթահարելու, ամենահեռավոր արևների ոլորտներին մոտենալու անխոնջ ձգտումով։ Դա խելացնոր գինարբուք էր մահամերձի, որի սիրտը տրոփում էր վերջին, տկարացող բաբախումներով։ Պոեմայի հաղթական ռիթմում լսվում էր մոլորակների թնդյունը, իրար բախվող գիսաստղերի որոտը, հրեղեն ամպերի լույսով փայլող մռայլ տարածություններ ի միջև երկնային ուժերի կռվի աղմուկը, իսկ այդ բոլորի արանքում լսվում էր մարդկային ձայնը,— մեղմ ու խղճալի, որպես ողբ կործանվող աշխարհների ահեղ դղրդոցի միջև։

— Մինչև այժմ ոչ մի նման բան չի եղել գրականության մեջ,—մրմնջաց Մարտինը, երբ վերջապես կարողացավ խոսել։— Դա սքանչելի՞ է, ապշեցուցի՞չ։ Ես հարբել եմ դրանով։ Այդ վեհ հավերժական հարցը իմ մտքիցը չի դուրս գալիս։ Իմ ականջին միշտ հնչելու է՝ անհասանելիին հասնել փորձող այդ մարդու խղճալի ձայնը, որը իսկ և իսկ նման է փղերի ուժեղ դոնչյունի ու առյուծների մռնչյունի միջև մոծակի ճղճիմ տզզոցին։ Բայց այդ տզզոցում լսվում են անհաղ տեսչեր։ Հավանական է, որ հիմար բաներ եմ

ասում, բայց այդ գրվածքն ամբողջովին նվաճեց ինձ։ Դուք... չգիտեմ ի՞նչ ասեմ, պարզապես հանճարեղ եք։ Բայց ինչպե՞ս կարողացաք ստեղծագործել։

Մարտինն ընդհատեց իր ներբողը լոկ նրա համար, որ պոռթկա նոր թափով։

— Ես այլևս երբեք չեմ գրի։ Ես պարզապես ողորմելի, կավից շինած մի դրչակ եմ։ Դուք ցույց տվեցիք ինձ, թե ի՞նչ բան է իսկական վարպետությունը։ Դուք հանճար եք։ Ո՞չ, դուք հանճարից էլ բարձր եք։ Դա գերազանցում է հանճարը։ Դա խելացնորության հասնող ճշմարտություն է։ Դա՝ ինքը ճշմարտությունն է, դա մարդն է՝ նրա բոլոր հատկանշական գծերով։ Գիտակցո՞ւմ եք, թե ոչ, որ դուք դավանաբան եք։ Մինչև անգամ գիտությունը չի կարող հերքել ձեզ։ Դա մարգարեական ճշմարտություն է՝ տիեզերքի երկաթից կոփված և գեղեցկության ու վեհության հնոցներում կուռ ձուլված։ Այլևս ոչինչ չեմ ասի։ Ես ընկճված եմ, ոչընչացա՛ծ։ Ո՞չ, ես կասեմ էլի մի բան. թույլ տվեք ինձ վաճառելու այդ պոեմը։

Բրիսսենդենը հոհոաց։

— Մի՞թե ամբողջ քրիստոնեական աշխարհում կա թեկուզ մի ժուռնալ, որը համարձակվի տպել այդպիսի մի բան։ Դուք ինքներդ շատ լավ գիտեք այդ։

— Ո՞չ, չգիտեմ։ Ես համոզված եմ, որ ամբողջ աշխարհում չկա մի ժուռնալ, որն ուրախությամբ չընդունի այդ։ Այդպիսի գործ ստեղծվում է հարյուր տարին մի անգամ։ Դա այսօրվա պոեմ չի, դա նոր դարաշրջանի պոեմ է։

— Ես պատրաստ եմ բռնել ձեզ ձեր իսկ խոսքերով։

— Ցինիկ մի՛ ձևանաք,— առարկեց Մարտինը։— Խմբագիրներն այնքան էլ ապուշ չեն։ Ես գիտեմ այդ։ Գրազ կգա՞ք, որ եթե ոչ առաջին անգամից, երկրորդ անգամից կընդունեն «Աստղաբաշխական օրագրությունը»։

— Կա մի հանգամանք, որ խանգարում է ինձ օգտվել ձեր առաջարկից,— ասաց Բրիսսենդենը և, մի պահ լռելուց հետո, ավելացրեց.— Դա մեծ երկասիրություն է, ամե-

նամեծը այն բոլորից, որ ես երբևէ գրել եմ։ Ես շատ լավ գիտեմ, որ դա իմ կարապի երգն է։ Ես չափազանց հպարտանում եմ այդ պոեմով։ Պաշտում եմ այն։ Դա ինձ վիսկիից ավելի հաճելի է։ Դա այն կատարյալ ստեղծագործությունն է, որի մասին ես երազել եմ վաղ պատանեկության շրջանում, երբ մարդ դեռևս ձգտում է իդեալների և հավատում է պատրանքների։ Եվ ահա ես հասել եմ իդեալին, հասել եմ ջիրիմի եղերքին կանգնած ... Մի՞թե ես տալու եմ այն, որպեսզի խողերն անարգեն։ Ես գրազ չեմ դա ձեզ հետ։ Դա իմն է։ Ես ստեղծագործեցի այդ և դա կբաժանեմ միայն ձեզ հետ։

— Բայց մտածեցեք մնացած աշխարհի մասին,— բացագանչեց Մարտինը։— Չէ՞ որ գեղեցիկի նպատակն է ուրախացնել։

— Լավ, թող դա ուրախացնի ինձ։

— Մի՛ լինեք եսասեր։

— Ես ամենևին եսասեր չեմ։

Բրիսսենդենը ծիծաղեց սառը և շարախինդ, կարծես նախօրոք ճաշակելով այն, ինչ պատրաստվում էին ասել նրա բարակ շրթունքները.

— Ես նույնքան այլասեր եմ, որքան սոված խոզը։

Մարտինն ապարդյուն կերպով փորձում էր նրան ետ կանգնեցնել նրա ընդունած որոշումից։ Մարտինը հավաստում էր Բրիսսենդենին, որ ժուռնալների նկատմամբ նրա ատելությունն անիմաստ ու ֆանատիկոսություն է և որ նրա վարմունքը հազարապատիկ ավելի է ամոթալի, քան Եփեսոսի Դիանայի տաճարն այրող պատանի Հերոստրատինը։ Բրիսսենդենը լսում էր մեղադրանքների այդ տարափը, գլխով հավանության նշաններ տնելով և ումպ-ումպ խմելով իր գրոգը, հաստատում էր, որ խոսակիցն իրավացի է ամեն բանում՝ բացի ժուռնալների մասին ասածից։ Նրա ատելությունը խմբագիրների նկատմամբ անսահման էր, և նա Մարտինից ավելի մոլեգին էր անարգում նրանց։

— Ես ցանկանում եմ, որ տպեք այս ինձ համար,— ա-

սաց նա,— դուք հազար անգամ ավելի լավ կանեք այդ, քան որևէ մեքենագրուհի։ Իսկ հիմա ես ձեզ կտամ մի օգտակար խորհուրդ։— Բրիսսենդենը գրպանից հանեց մի մեծածավալ գրվածք։— Ահա ձեր «Արևի ամոթանքը»։ Ես ոչ թե մի կամ երկու, այլ երեք անգամ եմ կարդացել այդ։ Դա ամենամեծ գովեստն է, որ ես կարող եմ շռայլել ձեզ։ «Աստղաբաշխական օրագրության» մասին ձեր ասածներից հետո ես, իհարկե, պետք է լռեմ։ Բայց ահա, թե ի՛նչ կասեմ ձեզ. եթե «Արևի ամոթանքը» տպագրվի, նա անհավատալիորեն մեծ աղմուկ կհարուցի։ Նրա շուրջը անհավատալի գրավեճ կսկսվի, և դա ձեզ համար ամեն տեսակի ռեկլամից ավելի լավ է։

Մարտինը քրքջաց։

— Ենթադրում եմ, որ ձեր երկրորդ խորհուրդը կլինի ուղարկել այն որևէ ժուռնալի։

— Ո՛չ մի դեպքում, եթե ուզում եք, որ դա տպագրվի։ Առաջարկեցեք այն խոշոր հրատարակչություններից մեկին։ Թերևս այնտեղ մի որևէ գիժ կամ հիմնականապես հարբած քննադատ կարդա այն և բարենպաստ գնահատական տա։ Այո՛, երևում է, որ դուք շատ գրքեր եք կարդացել։ Այդ բոլորը մարսվել է Մարտին Իդենի ուղեղում և արտահոսել է «Արևի ամոթանքում»... Մարտին Իդենը մի օր շատ նշանավոր կդառնա, և նրա փառքի զգալի մասը կստեղծվի այդ գրվածքով։ Փնտրեցեք մի հրատարակչի, և ինչքան շուտ գտնեք, այնքան լավ։

Այդ երեկո Բրիսսենդենը երկար նստեց Մարտինի մոտ։ Մարտինն ընկերակցեց նրան մինչև տրամվայը, և երբ Բրիսսենդենը վագոն էր նստում, անսպասելիորեն իր բարեկամի ձեռքը դրեց մի ճմռթած թուղթ։

— Վերցրեք այդ,— ասաց նա,— ես այսօր շահել եմ ձիարշավում։

Զանգը հնչեց, և տրամվայը շարժվեց՝ թողնելով Մարտինին կատարյալ տարակուսանքի մեջ, ճմռթած թուղթը

ձեռքին։ Վերադառնալով իր սենյակը՝ նա պարզեց թուղթը և տեսավ, որ դա հարյուր դոլլարանոց թղթադրամ է։

Մարտինն օգտագործեց այն առանց քաշվելու։ Նա լավ գիտեր, որ կարող է պարտքը վճարել շատ շուտով։ Հաջորդ առավոտ նա հատուցեց իր բոլոր պարտքերը, Մարիին նախօրոք վճարեց երեք ամսվա համար և լոմբարդից դուրս գրեց իր բոլոր իրերը։ Նա հարսանեկան նվեր գնեց իր քրոջ՝ Մերիենի համար, ծննդյան տոնի առթիվ նվերներ գընեց Ռութին ու Գերտրուդին։ Բացի այդ բոլորից, Մարիայի բոլոր երեխաներին տարավ Օկլենդ և, կատարելով իր խոստումը (ճիշտ է՝ մի տարի անց), կոշիկներ գնեց Մարիային և նրա բոլոր երեխաներին։ Նա գնեց նրանց համար նաև խաղալիքներ ու շաքարեղեն, այնպես որ ծրարները դժվարությամբ էին տեղավորվել մանկական պստիկ ձեռքերում։

Այդ անսովոր թափորի գլխին մտնելով հրուշակարանը՝ Մարտինը պատահմամբ հանդիպեց Ռութին և միսիս Մորգին։ Վերջինս չափազանց վիրավորված զգաց իրեն, մինչև անգամ Ռութը շփոթվեց։ Նա մեծ նշանակություն էր տալիս մարդկանց արտաքինին, և նրան այնքան էլ հաճելի չէր տեսնել իր սիրածին՝ ցնցոտիներ հագած պորտուգալացի երեխաների մի ամբողջ բազմության ընկերակցությամբ։ Մարտինի մոտ հպարտության և ինքնահարգանքի այդ պակասը վշտացրեց նրան։ Այդ միջոցով Ռութը մի ավելորդ անգամ ապացուցված համարեց այն, որ Մարտինը չի կարող բարձրանալ իր շրջապատից վեր։ Դա արդեն ըստինքյան բավական անհաճո էր և ոչ մի հիմք չկար պարծենալու դրանով ամբողջ աշխարհի՝ իր աշխարհի առաջ։ Թեև Ռութի և Մարտինի նշանդրեքը մինչ այժմ էլ գաղտնի էր պահվում, բայց նրանց հարաբերությունները գաղտնիք չէին կազմում ոչ ոքի համար, իսկ հրուշակարանում, հակառակի պես, խիստ շատ էին ծանոթներ, և նրանք բոլորը հետաքրքրությամբ նայում էին միսս Մորգի սիրածի զարմանալի շրջապատին։ Ռութը չէր կարող բարձրանալ մարդկային բամբասանքներից վերև և Մարտինի վարմունքը նրա համար պարզապես անհասկա-

նալի էր։ Նրա տպավորվող բնավորությունը ամոթալի էր համարում այդ։ Այդ օրը գնալով Մորզերի տունը՝ Մարտինը գտավ Ռութին այնքան հուզված վիճակում, որ մինչև անգամ չվճռվեց իր գրպանից հանել նրա համար գնած նվերը։ Մարտինը նրան առաջին անգամ տեսավ արտասվելիս՝ ցասումի և վիրավորանքի արցունքներով, և այդ տեսարանն այնքան ցնցեց նրան, որ նա մտովին կոչեց իրեն կոպիտ անասուն, թեպետ ոչ բոլորովին պարզ էր հասկանում իր հանցանքը։ Մարտինի մտքովն էլ չանցավ ամաչել իր շրջանակի մարդկանց համար, և նա Ռութի համար ոչ մի վիրավորական բան չտեսավ նրանում, որ դնացել էր ծննդյան նվերներ գնելու Մարիայի երեխաների համար։ Բայց նա պատրաստ էր հասկանալ Ռութի վիրավորանքը՝ լսելով նրա բացագանչությունները, և այդ ամբողջ միջադեպը մեկնաբանեց կանացի տկարությամբ, որը, ինչպես երևում է, հատուկ է և ամենալավ կանանց։

ԳԼՈՒԽ XXXVI

— Գնանք, ես ձեզ ցույց կտամ «իսկական մարդկանց», — ասաց Բրիսսենդենը Մարտինին հունվար ամսին մի երեկո։

Նրանք ճաշեցին Սան-Ֆրանցիսկոյում և պատրաստվում էին արդեն նստել Օկլենդ տանող լաստանավը, երբ հանկարծ Բրիսսենդենի խելքին փչեց ցույց տալ Մարտինին «իսկական մարդկանց»։ Նա շուռ եկավ և սկսեց քայլել նավամատույցի երկայնքով՝ կարծես մի ստվեր, քամուց ծածանվող պատմուճան հագին։ Մարտինը հազիվ էր հասնում նրա ետևից։ Ճանապարհին Բրիսսենդենը գնեց երկու շիշ հին պորտվեյն և ձեռքին բռնած դրանք՝ թռավ-մտավ տրամվայը, որը գնում էր Միշեն-ստրիտով. նույնն արեց Մարտինը՝ բեռնավորված լինելով չորս շիշ խմիչքով։

«Ի՞նչ կասեր Ռութը, եթե այս բոպեին տեսներ ինձ»,—

անցավ Մարտինի մտքով, բայց միայն մի ակնթարթ. նրա միտքը զբաղված էր այն հարցով, թե այդ ի՞նչ «իսկական մարդիկ» են։

— Թերևս այսօր այնտեղ ոչ ոք չլինի,— ասաց Բրիսսենդենը, երբ նրանք իջան տրամվայից և խորասուզվեցին բանվորական թաղի մութ նրբափողոցը՝ Մարկետ-ստրիտից հարավ։— Այդ դեպքում դուք չեք տեսնի այն, ինչ վաղուց եք որոնում։

— Վերջ ի վերջո, սատանան տանի, ովքե՞ր են նրանք,— հարցրեց Մարտինը։

— Մարդիկ, իսկական իսելացի մարդիկ, և ոչ թե շաղակրատներ, ինչպիսիները քարշ են գալիս չարչիների այն որջում, ուր ես հանդիպեցի ձեզ։ Դուք կարդացել եք գրքեր և տանջվել եք մենակությունից։ Հիմա ես ձեզ կծանոթացնեմ մարդկանց հետ, որոնք նույնպես կարդացել են որևէ բան, և դուք այլևս այնքան մենակ չեք լինի։

— Ես շատ չեմ հետաքրքրվում նրանց սնվերջ բանավեճերով,—ավելացրեց Բրիսսենդենը՝ անցնելով մի թաղ,— ես առհասարակ սանել չեմ կարող գրքերի փիլիսոփայությունը, սակայն դրանք անկասկած, իսկական խելացի մարդիկ են, և ոչ թե բուրժուա խոզեր։ Բայց զգույշ կացեք, նրանց հետ։— Հույս ունեմ, որ այնտեղ կլինի Նորտոնը,— շարունակեց նա մի քիչ հետո շնչահեղձ, բայց թույլ չտալով, որ Մարտինն իր ձեռքից վերցնի պորտֆեյնի շղերը։— Նորտոնն իդեալիստ է։ Նա սվարտել է Հարվարդի համալսարանը։ Հրաշալի հիշողություն ունի։ Իդեալիզմը հանգեցրել է նրան անարխիստական փիլիսոփայության, և նրա ընտանիքը բաժանվել է նրանից։ Նրա հայրը երկաթգծի ընկերության պրեզիդենտ է և շատ միլիոնների տեր, իսկ նրա որդին «Ֆրիսկոյում» կիսաքաղց է քարշ գալիս՝ խմբագրելով անարխիստական մի փոքր ժուռնալ՝ ամիսը քսանհինգ դոլլար ռոճիկով։

Մարտինը լավ չէր ճանաչում Սան-Ֆրանցիսկոն, ա-

ոանձնապես քաղաքի այս մասը, դրա համար էլ չէր պատկերացնում, թե ո՞ւր են տանում նրան։

— Շարունակեցեք,— ասաց նա,— էլի պատմեցեք ինձ նրանց մասին. ուզում եմ նախօրոք ծանոթանալ նրանց հետ։ Ինչո՞վ են ապրում նրանք։ Ինչպե՞ս են ընկել այստեղ։

— Հուսով եմ, որ Համիլտոնն այսօր կկա,— ասաց Բրիսենդենը, կանգ առնելով, որպեսզի շունչ քաշի։— Ստրաուն-Համիլտոնը հին ազգանուն է. նա լավ ընտանիքից է, բայց ինքը բնավորությամբ իսկական թափառաշրջիկ է և ծույլ, որպիսին դեռ գոյություն չի ունեցել աշխարհում. թեպետ ծառայում է — ավելի ճիշտը՝ փորձում է ծառայել սոցիալիստական մի կոոպերատիվում, շաբաթական վեց դոլլար աշխատավարձով։ Նա անուղղելի թափառաշրջիկ է։ Հենց թափառաշրջիկությամբ էլ եկել է Սան-Ֆրանցիսկո։ Քանիցս պատահել է, որ ամբողջ օրը նստած է եղել պարկում՝ նստարանին ընդ որում առավոտից ոչինչ չէր առնում բերանը, և երբ առաջարկում ես նրան գնալ մի բան ուտել երկու թաղ դենը գտնվող ճաշարանում, գիտե՞ք, ի՞նչ է պատասխանում. «Դա չափազանց մեծ անհանգստություն է, բարեկամ. ավելի լավ է ինձ համար մի տուփ դլանակ գնեք»։ Նա սպենսերական էր՝ ձեղ սես, մինչև որ Կրեյգը նրան դարձրեց դեպի մատերիալիստական մոնիզմի ճանապարհը։ Եթե հաջողվի, ես կստիպեմ նրան խոսել մոնիզմի մասին։ Նորտոնը նույնպես մոնիստ է, բայց ոչինչ չի ճանաչում՝ բացի ոգուց։ Նա շարունակ ընդհարվում է և՛ Համիլտոնի, և՛ Կրեյգի հետ։

— Իսկ ո՞վ է Կրեյգը,— հարցրեց Մարտինը։

— Մենք հենց նրա մոտն ենք գնում։ Նախկին պրոֆեսոր, համալսարանից արտաքսված,— ամենասովորական պատմություն։ Ածելու նման սուր խելք։ Ապրուստը հանելու չափ շահում է դանապան միջոցներով։ Մի անգամ նա դարձավ մինչև անգամ ֆակիր։ Բացարձակապես ոչ մի նախապաշարում չունի։ Առանց խղճահարության կվերցնի մեռած մարդու պատանքը։ Նրա և բուրժուայի միջև տարբերությունն

այն է, որ Կրեյգը զողանում է առանց որևէ խարեության։ Նա կարող է խոսել Նիցշեի, Շոպենհաուերի, Կանտի և ինչի մասին որ ուզեք, բայց, ըստ էության, հետաքրքրվում է միայն մոնիզմով։ Մինչև անգամ իր Մերիի մասին նա ավելի քիչ է մտածում, քան մոնիզմի մասին։ Հեկկելը նրա կուռքն է։ Նրան վիրավորելու միակ միջոցն է կպչել Հեկկելին։ Մենք արդեն հասանք։

Բրիսսենդենը դրեց շշերը սանդուղքի վրա՝ նախքան վերև բարձրանալը։ Դա ամենասովորական երկհարկանի տուն էր փողոցի անկյունում, առաջին հարկում նախաճաշարանով և մթերավաճառի խանութով։

— Այդ շայկան ապրում է այստեղ և գրավում ամբողջ երկրորդ հարկը,— ասաց Բրիսսենդենը,— բայց երկու սենյակից բնակարան ունի միայն Կրեյգը։ Գնանք։

Վերևում լամպ չէր վառվում, բայց Բրիսսենդենը մթության մեջ կողմնորոշվում էր, ինչպես տնական ոգի։ Նա կանգնելով, ասաց Մարտինին։

— Այստեղ կա մեկը՝ Ստիվենսը, թեոսոֆ։ Հենց որ տաքացավ, շատ հիմարություններ է դուրս տալիս։ Ճաշարանում ամանեղեն է լվանում։ Սիրում է լավ սիգարներ։ Մի օր տեսա, որ նա, տասը ցենտանոց ճաշ ուտելուց հետո, հիսուն ցենտանոց սիգար գնեց։ Գրպանումս երկու սիգար ունեմ նրա համար, եթե գա այստեղ։ Կա և մի ուրիշը, Պարրի ազգանունով,— ավստրալիացի. նա վիճակագիր է և սպորտի շրջիկ հանրագիտարան։ Հարցրեք նրան, թե Պարագվայից 1903 թվին որքա՞ն հացահատիկ է արտահանվել, կամ 1890 թվին որքա՞ն անգլիական քաթան է ներմուծվել Չինաստան, կամ ի՞նչ քաշ ուներ Ջիմմի Բրիտտը, երբ հաղթեց Բատլինգ-Նելսոնին, կամ ո՞վ էր 1868 թվականի Միացյալ Նահանգներում միջակ քաշի չեմպիոնը,— նա ձեզ կպատասխանի բոլոր հարցերին ավտոմատի ճշտությամբ։ Կա և մի ամն էնդի, որմնադիր, որն ամեն բանի նկատմամբ իր հայացքներն ունի և հրաշալի է խաղում շախմատ. ապա և հացթուխ Հարրին, թունդ սոցիալիստ և արհեստակցական

միության գործիչ։ Ի դեպ, հիշո՞ւմ եք խոհարարների և մատուցողների գործադուլը։ Դրա կազմակերպողն էր Համիլտոնը։ Նա կազմակերպեց միությունն և մշակեց գործադուլի պլանը այստեղ, Կրեյգի սենյակում։ Նա արեց միայն ժամանցի համար և հետո այլևս ոչ մի մասնակցություն չունեցավ միության գործերում՝ իր ծուլության պատճառով։ Սթն ուզենար, նա վաղուց լավ գիրքի կհասներ։ Այդ մարդու մեջ անսահման հնարավորություններ կան, բայց նրա ծուլությունը միանգամայն արտակարգ է։

Բրիսսենդենը շարունակում էր առաջ գնալ մթության մեջ՝ մինչև որ լույսի մի շող ցույց տվեց դռան շեմքը։ Նա բախեց դուռը և պատասխան ստացավ «մտե՛ք»։ Մարտինը սեղմեց Կրեյգի ձեռքը — գեղեցիկ թխադեմ մի մարդու՝ սպիտակ ատամներով, սև բեղերով, խոշոր ու արտահայտիչ սև աչքերով։ Մերին՝ լուրջ, երիտասարդ խարտյաշ մի կին ամանեղեն էր լվանում փոքր սենյակում, որը ծառայում էր որպես խոհանոց ու ճաշասենյակ։ Առաջին սենյակը ննջարան ու ընդունարան էր։ Ամբողջ սենյակում, կարծես ծաղկաշղթաներ լինեին, կախած էր սպիտակեղեն, այնպես որ Մարտինն առաջին րոպեին չնկատեց երկու հոգու, որոնք անկյունում նստած խոսակցում էին։ Նրանք ուրախ բացագանչություններով ընդունեցին Բրիսսենդենին ու նրա շշերը, և Մարտինը, ծանոթանալով նրանց հետ, իմացավ, որ դրանք Էնդին ու Պարրին են։ Մարտինը հետաքրքրությամբ սկսեց լսել Պարրիին, որը պատմում էր՝ երեկ իր տեսած բոքսի մասին։ Իսկ Բրիսսենդենը եռանդագին զբաղվեց շշերը բանալով և պատրաստելով։ Նրա տված հրամանով՝ «այստեղ հավաքել բոլորին» — Էնդին իսկույն գնաց սենյակներից կանչելու կենվորներին։

— Մեր քախտը բանեց, համարյա բոլորը ներկա են,— շշնջաց Բրիսսենդենը Մարտինին։— Ահա Նորտոնն ու Համիլտոնը։ Գնանք նրանց մոտ։ Դժբախտաբար։ Ստիվենսն առայժմ չկա։ Գնանք։ Ես կսկսեմ մոնիզմի մասին խոսակ-

ցություն և շատ չանցած կտեսնեք, թե ինչպե՛ս կտաքանան նրանք։

Սկզբում խոսակցությունն ընթանում էր անկապ, բայց Մարտինն անմիջապես հասկացավ այս մարդկանց մտքի ինքնատիպությունն ու աշխուժությունը։ Նրանցից ամեն մեկն ուներ իր որոշ հայացքները, երբեմն հակասական և, չնայած նրանց հումորին ու տրամադրության, այդ մարդիկ իսկի էլ մակերևութային չէին։ Մարտինը նկատեց, որ նրանցից յուրաքանչյուրը (անկախ խոսակցության նյութից) հայտարերում էր գիտական մեծ հմտություն և հաստատուն ու պարզ մշակված հայացքներ աշխարհի և հասարակության մասին։ Նրանք իրենց կարծիքները ոչ մեկից փոխ չէին առել. նրանք մտքի իսկական ըմբոստներ էին, և նրանցից ոչ մի տափակություն չէր կարելի լսել։ Մորզերի մոտ Մարտինը ոչ մի անգամ չէր լսել այդպիսի հետաքրքրական խոսակցություններ և այդպիսի տաք վիճաբանություններ։ Թվում էր, թե աշխարհում չկա մի բան, որը նրանց մեջ հետաքրքրություն չառաջացներ։ Զրույցը թռչկոտում էր միտիս Հեմֆրի Ուորդի վերջին գրքից դեպի Շոուի նոր կոմեդիան, թատերգության ապագայից դեպի Մենսֆիլդի մասին հիշողությունները։ Նրանք քննարկում էին, գովում կամ ծաղրում էին առավոտյան թերթերի առաջնորդողները, խոսում էին նոր-Զելանդիայում բանվորների կացության, Հենրի Ջեմսի և Բրանդեսի Մեթյուսի մասին, խորհրդածում էին հեռավոր Արևելքում Գերմանիայի քաղաքականության և դեղին վտանգի տնտեսական հետևանքների կապակցությամբ, վիճում էին Գերմանիայում ընտրությունների և Բեբելի վերջին ճառի շուրջ, խոսում էին միացյալ բանվորական պարտիայի վերջին ձեռնարկումների և սխալների առթիվ և այն մասին, թե ինչպե՛ս լավագույն կերպով կազմակերպել նավահանգստային բեռնակիրների ընդհանուր գործադուլը։

Մարտինն ապշեց բոլոր այս հարցերում նրանց արտասովոր գիտելիքների վրա։ Նրանց հայտնի էր այն,ինչի մասին երբեք չէր տպվել թերթերում։ Նրանք գիտեին բոլոր այն

ֆաղտնի զսպանակները, բոլոր թելերը, որոնցով շարժման մեջ էին դրվում մարիոնետները։ Մարտինը զարմացավ, որ Մերին էլ է մասնակցում այդ զրույցներին և հայտաբերում է այնպիսի խելք և գիտելիքներ, որոնք Մարտինը չէր հանդիպել իրեն ծանոթ ոչ մի կնոջ մոտ։

Նրանք խոսեցին Սուինբեռնի և Լոսսետտիի մասին, որից հետո անցան ֆրանսիական գրականության. այդ հարցում Մերին իր հմտությամբ գերազանցեց Մարտինին։ Դրա փոխարեն, երբ Մերին պաշտպանում էր Մետերլինկին, Մարտինը նրան առարկեց իր լավ մշակված թեզիսով, որը հիմք էր ծառայել «Արևի ամոթանք» աշխատության։

Եկան մի քանի այլ մարդիկ, և սենյակն արդեն մթագնել էր ծխախոտի ծխից, երբ Բրիսսենդենը վերջապես վճռեց սկսել ճակատամարտը։

— Այստեղ ձեզ համար թարմ նյութ կա մշակելու, Կրեյգ,— ասաց նա,— մի խակ պատանի վարդագույն դեմքով, Հերբերտ Սպենսերի երկրպագուն։ Հապա, փորձե՛ք հեկկելական դարձնել նրան։

Կրեյգը հանկարծ ցնցվեց, կարծես էլեկտրական հոսանք անցկացրին նրա միջով, իսկ Նորտոնը համակրալից նայեց Մարտինին և ժպտաց նրան՝ դրանով խոստանալով նրան իր պաշտպանությունը։

Կրեյգը միանգամից հարձակվեց Մարտինի վրա, բայց Նորտոնը սկսեց աստիճանաբար միջամտել խոսակցությանը, որը վերջապես վերածվեց իսկական մենամարտի նրա և Կրեյգի միջև։ Մարտինը լսում էր՝ առանց հավատալու իր ականջներին. նրան պարզապես անհավանական էր թվում, որ նա իրոք լսում է այդ ամենը, այն էլ որտե՞ղ—բանվորական թաղում, Մարկետ-ստրիտից հարավ։ Կարծես այդ մարդկանց մեջ կենդանացել են նրա կարդացած բոլոր գրքերը։ Նրանք խոսում էին տաքացած, հափշտակված, մտքերը գրգռում էին նրանց այնպես, ինչպես ուրիշներին գրգռում են ցասումը կամ ոգելից խմիչքները։ Դա տպագիր խոսքի, Կանտի և Սպենսերի պես առասպելական կիսաստվածների ստեղծած

չոր փիլիսոփայությունը չէր։ Դա վիհողների կենդանի փիլիսոփայությունն էր, մսի ու արյան մեջ թափանցած, որը եռում ու ալեկոծվում է նրանց խոսքերում։ Մեկ առ մեկ ուրիշներն էլ միջամտեցին վիճաբանությանը, և բոլորը հետևում էին դրան լարված ուշադրությամբ, ծխախոտի ծխում խեղդվելով։

Մարտինը երբեք չէր տարվել իդեալիզմով, բայց Նորտոնի շարադրությամբ դա մի հայտնություն դարձավ նրա համար, Կրեյգն ու Համիլտոնը իդեալիզմը չէին համարում տրամաբանական անհրաժեշտություն. նրանք ծիծաղում էին Նորտոնի վրա՝ անվանելով նրան մետաֆիզիկ, իսկ նա իր կողմից մետաֆիզիկ էր անվանում նրանց։

Շարունակ լսվում էին «ֆենոմեն» ու «նումեն» տերմինները։ Կրեյգն ու Համիլտոնը մեղադրում էին Նորտոնին, որ նա փորձում է գիտակցությունը բացատրել հենց գիտակցությամբ։ Իսկ Նորտոնն իր կողմից մեղադրում էր նրանց այն բանում, որ նրանք բառերից ելնելով հասնում են թեորիային, և ոչ թե փաստերից՝ թեորիային։ Դա խարազանում էր նրանց։ Նրանց խորհելակերպի հիմնական դոգման կայանում էր նրանում, որ պիտի սկսել փաստերից և սահմանում տալ փաստերին։

Երբ Նորտոնը սկսեց մեջբերումներ անել Կանտից, Կրեյգն ասաց, որ ամեն մի սովորական գերմանացի մանր փիլիսոփա իր մահից հետո միանգամից ընկնում է Օքսֆորդ։ Երբ քիչ անց Նորտոնը հիշատակեց Համիլտոնի պայմանականության օրենքը, հակառակորդներն իսկույն հայտարարեցին, որ իրենք էլ են հիմնվում այդ օրենքի վրա։ Իսկ Մարտինը լսում էր՝ ամբողջովին սարսռելով հիացումից։ Սակայն Նորտոնը իսկական սպենսերական չէր, այդ պատճառով էլ նա հաճախ հակաճառության մեջ էր մտնում Մարտինի, ինչպես և մյուս հակառակորդների հետ։

— Դուք գիտեք, որ դեռ ոչ ոք չի պատասխանել Բերկլիին,— ասում էր նա՝ արդեն ուղղակի Մարտինին ուղղելով իր խոսքը։—Հերբերտ Սպենսերն ուրիշներից ավելի մոտեցավ

հարցին, բայց նա էլ, ըստ էության ոչպատիշ պատասխան չտվեց։ Նրա հետևորդներից ամենահամարձակները չեն կարող ավելի հեռուն գնալ։ Ես կարդացել եմ Սալիերիի հոդվածը Սպենսերի մասին։ Ահա նա էլ է ասում, որ Սպենսերը «գրեթե» պատասխանեց Բերկլիին։

— Իսկ դուք հիշո՞ւմ եք, թե ինչ է ասել Յումը,— բացագանչեց Համիլտոնը։

Նորտոնը գլխով հաստատական նշան արեց, բայց Համիլտոնը հարկ համարեց բացատրել մյուսներին։

— Յումն ասել է, որ Բերկլիի փաստարկությունները պատասխան չեն ենթադրում և միանգամայն անհամոզիչ են։

— Անհամոզիչ՝ Յումի համար,— առարկեց Նորտոնը,— Յումի խելքն էլ այնպես է կառուցված, ինչպես ձերը, միայն այն տարբերությամբ, որ նա բավական իմաստուն էր և ընդունում էր Բերկլիին պատասխանելու ամբողջ անկարելիությունը։

Նորտոնը տաքարյուն էր և դյուրագրգիռ, թեև երբեք չէր կորցնում իրեն, իսկ Կրեյգն ու Համիլտոնը հիշեցնում էին սառնարյուն վայրենիների, որոնք հանդիստ և առանց շտապելու զննում են հակառակորդի տկար կողմերը։ Զրույցի վերջում Նորտոնը չարացած նրանից, որ շարունակ ամբաստանում էին նրան, որպես մետաֆիզիկի, երկու ձեռքով կառչեց սթոուին, որպեսզի նստած մնա տեղում, և բոցավառ դեմքով ու փայլատակող աչքերով վճռական դրոհ տվեց իր հակառակորդների վրա։

— Լա՞վ, հեկկելականներ,— գոռաց նա,— կարող է պատահել, որ ես դատում եմ որպես կախարդ և վհուկ, բայց կուզենայի իմանալ, թե դո՞ւք ինչպես եք դատում։ Դուք ոչ մի բաղա չունեք, թեև աղաղակում եք ամեն տեսակ դրական գիտելիքների մասին։ Դուք ուղեղ դոգմատիկներ եք։ Չէ՞ որ դեռ մատերիալիստական մոնիզմի շկոլայի ծագումից շատ առաջ ամբողջ հոգը այնպես էր փոքրած-քրքրած, որ արդեն ոչ մի հիմք չէր կարելի կառուցել։ Լոկը — ահա՛ թե ով կառուցեց այդ, Ջոն Լոկը։ Երկու հարյուր, մինչև անգամ ավելի

տարիներ առաջ նա իր «Մարդկային գիտակցության մասին փորձերում» ապացուցեց բնածին գաղափարի հասկացողության անհիմնությունը։ Իսկ դուք մինչև այժմ էլ զբաղվում եք դրանով։ Այսօր ամբողջ երեկո ապացուցում եք ինձ, որ ոչ մի բնածին գաղափար գոյություն չունի։ Ի՞նչ է նշանակում այդ։ Դա նշանակում է, որ մարդը չի կարող հասնել բարձրագույն ռեալականության։ Երբ դուք ծնվում եք, ձեր ուղեղում ոչինչ չկա։ Հետագա բոլոր գիտելիքներն առաջանում են միայն ֆենոմենների, հինգ զգայարանների օգնությամբ ստացվող ըմբռնումների հիման վրա։ Նոումենները, որոնք ձեր ծնված ժամանակ չկային ձեր ուղեղում, ոչ մի կերպ չեն կարող այնտեղ ընկնել նաև հետագայում։

— Դա ճիշտ չի,— ընդմիջեց նրան Կրեյզը։

— Թույլ տվեք, վերջացնեմ,— բացագանչեց Նորտոնը։— Ձեր գիտակցությանը մատչելի են միայն ուժի և մատերիայի այն գործողություններն ու փոխազդեցությունները, որոնք այսպես թե այնպես ազդում են ձեր զգայարանների վրա։ Տեսնո՞ւմ եք, ես պատրաստ եմ մինչև անգամ ընդունել, որ մատերիան գոյություն ունի։ Թող այդպես լինի։ Բայց ես հիմա կոչնչացնեմ ձեզ ձեր իսկ փաստարկությամբ։ Այլ ճամփա չկա ինձ համար, քանի որ, դժբախտաբար, վերացական մտածողությունն անմատչելի է երկուսիդ համար էլ։ Ուրեմն, ասե՛ք, ի՞նչ գիտեք դուք մատերիայի մասին՝ հիմնվելով դրական գիտելիքների վրա։ Դուք գիտեք միայն այն, ինչ ըմբռնում եք, այսինքն դարձյալ միայն ֆենոմենները։ Ձեզ մատչելի են միայն մատերիայի փոփոխությունները, ավելի ճիշտ՝ մինչև անգամ միայն այն, ինչ ըմբռնում եք դուք իբրև փոփոխություն։ Պոզիտիվ գիտելիքը գործ ունի միայն ֆենոմենների հետ իսկ դուք, անմիտներդ, երևակայում եք, որ գործ ունեք նոումենների հետ, և համարում եք ձեզ զոյաբաններ։ Այո՛, ինչպես հենց պոզիտիվ գիտությունն ինքն է սահմանում, գիտությունը գործ ունի միայն երևույթների հետ։ Ինչ-որ մեկն արդեն ասել է, որ ֆենոմենների մասին գիտությունը չի կարող ֆենոմենների սահմանից դուրս գալ։ Դուք

չեք կարող պատասխանել Բերկլիին, եթե նույնիսկ կարողանաք հերքել Կանտին. սակայն դուք հավատում եք, որ Բերկլին սխալվում է, որովհետև ձեր գիտությունը, բացասելով աստծու գոյությունը, չի տարակուսում մատերիայի գոյության մասին։ Ես քիչ առաջ ընդունեցի մատերիայի գոյությունը միայն նրա համար, որ դուք հասկանաք իմ մտքերի շարահարությունը։ Եթե կուզեք, եղեք պոզիտիվիստներ, բայց գոյաբանությունը տեղ չունի պոզիտիվ գիտությունների միջև։ Հետևաբար, հանգիստ թողեք այն։ Սպենսերն իրավացի է իր ագնոստիցիզմում, բայց եթե Սպենսերը...

Սակայն մոտենում էր Օկլենդ գնացող վերջին լաստանավի ժամանակը, և Բրիսսենդենն ու Մարտինը ստիպված էին հեռանալ։ Նրանք աննկատելիորեն դուրս սլկվեցին, երբ Նորտոնը շարունակում էր խոսել, իսկ Կրեյգն ու Համիլտոնը սպասում էին հարմար առիթի՝ նրա վրա հարձակվելու համար որպես գազազած շներ։

— Դուք իմ առաջ բաց արիք մի կախարդական աշխարհ,— ասաց Մարտինը Բրիսսենդենին, երբ նրանք երկուսով նստեցին լաստը։

— Այդպիսի մարդկանց հետ հանդիպելիս զգում ես, որ արժե ապրել։ Ես ուղղակի ցնցված եմ։ Մինչև հիմա չէի հասկանում, թե ի՛նչ է իդեալիզմը։ Ես այժմ էլ չեմ կարող ընդունել այն։ Գիտեմ, որ միշտ էլ ռեալիստ կմնամ,—երևի այդպես էլ ստեղծվել եմ։ Բայց ես կարող էի վիճել Կրեյգի և Համիլտոնի հետ և երկու-երեք հարցումներ տալ Նորտոնին։ Ես չեմ գտնում, որ Սպենսերի դեմ լուրջ առարկություններ արվեցին։ Ես այնպես եմ հուզված, ինչպես հուզվում է առաջին անգամ կրկես գնացած երեխան։ Հիմա տեսնում եմ, որ ես դեռ շատ բան պիտի կարդամ։ Պետք է ճարել Սալիբիի գիրքը։ Ես համոզված եմ, որ Սպենսերն անխոցելի է։ Հաջորդ անգամ ես ինքս կմասնակցեմ վիճաբանությանը։...

Բայց Բրիսսենդենը նիրհում էր՝ ծանր շնչելով, նիհար դունչը տաք շարֆով ծածկած. նրա ամբողջ վտիտ մարմինը ցնցվում էր լաստանավի պտուտակի ամեն դարձին։

ԳԼՈՒԽ XXXVII

Հաջորդ առավոտ Մարտինը, հակառակ Բրիսսենդենի նախազգուշացումներին, «Ակրոպոլի» խմբագրությանն ուղարկեց «Արևի ամոթանքը»։ Նա վստահ էր, որ կկարողանա որևէ ժուռնալում հրատարակել այն, և երբ նա ժուռնալների կողմից ճանաչվի որպես կրող, դրանով իսկ հրատարակչությունները ուշադրություն կդարձնեն նրա վրա։ Նա ընդօրինակեց և ուղարկեց նաև մի ժուռնալի «Աստղաբաշխական օրագրությունը»։ Չնայած Բրիսսենդենի մոլեգնության հասնող ատելության ժուռնալների նկատմամբ, Մարտինը հաստատ վճռեց, որ այդ պոեմը պետք է լույս տեսնի։ Իհարկե, նա չէր ուզում տպագրել այն առանց Բրիսսենդենի համաձայնության։ Նա ուզում էր, որ մի խոշոր ժուռնալ ընդուներ պոեմը, և այն ժամանակ, մտածում էր Մարտինը, կարելի կլինի ձեռք բերել Բրիսսենդենի համաձայնությունը։

Նույն առավոտյան Մարտինը սկսեց գրել մի վիպակ, որի միտքը նա հղացել էր դեռ երեք շաբաթ առաջ, և որն այն ժամանակից նրան հանգիստ չէր տալիս՝ պահանջելով, որ նա գրի առնի այն։ Դա պետք է լինի ծովային կյանքից վերցրած մի վիպակ, քսաներորդ դարու ռոմանտիկայի տիպար՝ հափշտակիչ սյուժեով, իրական նկարագիրներով և ռեալ իրադրությամբ։ Բայց հետաքրքրական ֆաբուլայի տակ թաքնված պետք է լինի այնպիսի մի բան, որը՝ մակերևույթային ընթերցողը չկարողանա նկատել, և որը, սակայն, նրան չխանգարի բավականությամբ կարդալ այն։ Հենց այդ «մի բանը», և ոչ թե պարզապես պատմությունը, դրդեց Մարտինին գրել վիպակը։ Գրվածքում նրան միշտ էլ գրավում էր հիմնական իդեան, իսկ սյուժեն կախում ուներ դրանից։ Որոշելով այդ իդեան՝ նա գտնում էր այնպիսի կերպարներ ու կացություններ, որոնց մեջ իդեան կարողանար ստանալ ամենավառ արտահայտությունը։ Վիպակի անունն էր լինելու «Ուշացածը» և ծավալով պետք է լիներ վաթսուն հազար բառից ոչ ավել, իսկ գրելը, նկատի ունենալով Մարտինի,

աշխատունակությունն ու ստեղծագործական թափը, հասկանալի է, որ իսկի էլ դժվար չէր։ Գրել սկսելու առաջին օրն իսկ նա զգաց վարպետներին հատուկ իսոր վայելք։ Նա այժմ չէր վախենում, որ ապիկարությունը, գրական ձևի անզորությունը կաղքատացնեն նրա միտքը։ Երկար ամիսների համառ, լարված աշխատանքը վերջապես տվեց ցանկալի արդյունքը։ Հիմա նա կարող էր հաստատաքայլ ու անշեղ գնալ դեպի առաջադրած նպատակը, և դեռ երբեք նրանում չէր եղել այն խոր վստահությունը, թե ճիշտ է հասկանում կյանքը և կարող է ցույց տալ այն։ «Ուշացածում» Մարտինն ուզում էր պատկերել իրական պատահարներ և ռեալ մտածումներ ու զգացումներ ունեցող իրական մարդկանց։ Սակայն, բացի այդ, վիպակը պետք է ունենա և մի մեծ թաքուն միտք— մի իդեա, որը հավասարապես իրավացի է բոլոր ծովերի, բոլոր ժամանակների ու ժողովուրդների համար։ «Եվ այդ բոլորը շնորհիվ Հերբերտ Սպենսերի,— մտածեց նա, հանկարծ հենվելով աթոռի մեջքին։— Այո՛, շնորհիվ Հերբերտ Սպենսերի և աշխարհաստեղծության այն մեծ բանալուն, որը նա տվեց իմ ձեռքը, և որի անունն է էվոլուցիա»։

Մարտինը որոշակի գիտակցում էր այժմ իր ստեղծագործության խորությունն ու մեծությունը։ «Գործն առաջ կգնա, առաջ կգնա», մտովին հավաստում էր նա։ Այո՛, գործը առաջ գնաց։ Վերջապես նա կգրի այնպիսի բան, որն անմիջապես կիսի որևէ ժուռնալ։ Ամբողջ վիպակը կարծես հրեղեն տառերով վառվում էր նրա աչքի առաջ։ Մարտինը հանկարծ ընդհատեց աշխատանքը և հուշատետրում գրեց մի հատված, որը վիպակի վերջավորությունն էր կազմելու։ Վիպակի ամբողջ կոմպոզիցիան այնքան պարզ էր նրան, որ լիովին կարող էր գրել վերջավորությունը՝ ժամանակից շատ առաջ։ Դեռ չվերջացրած իր վիպակը, նա համեմատում էր այն այլ գրողների «ծովային» պատմվածքների հետ և գալիս այն եզրակացության, որ իր գրվածքն անհամեմատ բարձր է։

— Միայն մի մարդ կարող էր այդպիսի մի բան գրել,— մրմնջաց Մարտինը — դա Կոնրադն է։ Բայց Կոնրադն էլ

կարող էր իրավամբ իմ ձեռքը սեղմել այս վիպակի համար և ասել. «Լավ է մշակված, Մարտին, բարեկամ»։

Աշխատելով դրեթե ամբողջ օրը՝ Մարտինը հանկարծ հիշեց, որ ճաշի է հրավիրված Մորզերի տունը։ Շնորհիվ Բրիսսենդենի՝ նրա սև կոստյումը դուրս էր գրված լոմբարդից, և Մարտինը հիմա կարող էր նորից երևալ հասարակության մեջ։ Ճանապարհին նա հանդիպեց գրադարան և վերցրեց Սալիբիի գիրքը։ Նա վճռեց տրամվայում կարդալ «Կյանքի ցիկլը»— այն հոդվածը, որի մասին հիշել էր Նորտոնը վիճաբանության ժամանակ։ Կարդալով այն՝ Մարտինը կատաղեց։ Նրա դեմքը բոցավառվում էր, աչքերը փայլում էին, շարունակ անգիտակցաբար սեղմում էր բռունցքները՝ կարծես սպառնալով որևէ մեկին։ Տրամվայից իջնելով՝ նա սկսեց քայլել փողոցում այն մարդու վճռականությամբ, որը պատրաստվում է հարձակվել մի ուրիշի վրա, և Մորզերի դռան զանգն այնպես ուժեղ սեղմեց, որ ուշքի եկավ և բարեմտորեն քրքջաց։ Բայց մտնելով այդ տունը, նա իսկույն խոր թախիծ զգաց։ Կարծես նրա թևերը կոտրվեցին, և նա միանգամից ցած ընկավ այն բարձունքներից, ուր ներշնչումը տարել էր նրան։

«Բուրժուանե՛ր, չարչինե՛ր», հիշեց նա Բրիսսենդենի սիրած արտահայտությունները։ «Հետո՞ ինչ,— բարկությամբ կտրեց նա իր խոսքը,— ես ամուսնանում եմ Ռութի հետ, և ոչ թե նրա ընտանիքի»։

Մարտինին թվաց, որ Ռութը դեռ երբեք այդքան գեղեցիկ, այդքան ոգեշնչված և միաժամանակ այդքան առողջ ու թարմ չի եղել։ Ռութի այտերը թեթևակի կարմրեցին, և Մարտինը չէր կարող հեռացնել իր հայացքը նրա աչքերից— կապույտ աչքերից, որոնց մեջ նա տեսել էր առաջին անգամ անմահության ցոլքը։ Ճիշտ է, հետագայում նա մոռացավ անմահության մասին և տարվեց դրական գիտություններով. բայց հիմա նա Ռութի աչքերում կարդաց այնպիսի բան, որն անհնար է արտահայտել մարդկային լեզվով։ Մարտինը նրանց մեջ կարդաց սեր։ Նույն սերը ճառագայթում էր և

Մարտինի աչքերից, իսկ սերը բոլոր վիճակներից բարձր է։ Այդպես էր նրա ամենաթանկ բոցավառ համոզումը։

Այն կես ժամը, որ նա ճաշից առաջ անցկացրեց Ռութի հետ, նրան նորից երջանկացրեց և կյանքից գոհ դարձրեց։ Բայց ճաշի ժամանակ Մարտինը հանկարծ զգաց արտասովոր մի հոգնածություն,— դա աշխատանքային օրից հետո բնական ռեակցիա էր։ Նա զգում էր, որ աչքերը հոգնել են, շատ է ջղագրգռված ու չի կարողանում իրեն պահել։ Նա հիշեց, թե ինչպես այդ նույն սեղանի շուրջը, որը նրան հիմա հաճախ ծիծաղելի ու ձանձրալի է լինում, նա մի ժամանակ նստել էր՝ առաջին անգամ այնպիսի մարդկանց հասարակության մեջ, որոնց նա համարում էր իրենից անչափ բարձր։ Մինչև անգամ այդ տան օդն այն ժամանակ նրան թվում էր նուրբ կուլտուրայով տոգորված։ Պիտի ենթադրել, որ նա այն ժամանակ շատ դվարճալի և հուզիչ տեսարան էր ներկայացնում իրենից։ Կիսավայրենի, հուզմունքից քրտնաթոր, մատուցվող կերակուրների շատությունից շվարած, մեծավայելուչ լակեյից ճնշված, ջանալով չկորցնել իրեն բարձր շրջանակներում, ուր տարել էր նրան պատահականությունը և վերջ ի վերջո հանգել էր հուսահատ մի որոշման — հարազատ մնալ իրեն՝ առանց փորձելու ցուցադրել խոր գիտելիքներ ու մանկրների նրբություն, որոնք բացակայում էին նրա մոտ։

Մարտինը հարևանցի մի հայացք գցեց Ռութի վրա, այնպիսի հայացք, որով ուղևորը նավարեկության վտանգի մասին լուր տարածվելիս ստուգում է, թե իր տեղո՞ւմն է ազատարար գոտին։ Այդ բոլոր փորձություններից հետո հիմա մնում է միայն սերն ու Ռութը։ Մյուս բոլոր բաները հաղթահարված են դրքերով։ Իսկ Ռութը և սերը դիմացան բոլոր փորձություններին. դրա համար Մարտինը գտավ բիոլոգիական արդարացում։ Սերը կյանքի ամենաուժեղ հայտարերումն է։ Բնությունը նախասահմանել է նրան սիրել և պատրաստել է նրան այդ բանի համար, ինչպես և ամեն մի նորմալ մարդու։ Տասնյակ հազարավոր, հարյուր հազարա-

վոր—ո՛չ, միլիոնավոր տարիներով բնությունը ճգնել է կատարելագործել մարդկային սեռն այդ նպատակի համար, և ինքը, Մարտինը, անկասկած դարձել է բնության նվաճումների պսակը։ Նա սեր է ներշնչել Մարտինին, նրանում ամենաուժեղ բանն է դարձել սերը, իր ֆանտազիայով բյուրապատիկ ավելացրել սիրո ուժը, և Մարտինին ուղարկել աշխարհ, որպեսզի նա ճաշակի հույզն ու թրթիռը և զուգակցության ուրախությունը։ Նրա ձեռքը սեղանի տակ գտավ Ռութի ձեռքը և սեղմեց այն։ Դրա պատասխանն էր նույնպիսի ջերմ սեղմում։ Նրանք իրար նայեցին արագ, և Ռութի աչքերը փայլեցին սիրո ու փաղաքշանքի շողով։ Մարտինի աչքերը նույնպես փայլեցին, և նա մինչև անգամ չէր կասկածում, որ Ռութի աչքերի փայլը, ըստ էության, լոկ նրա հայացքում վառվող կրակի արտացոլումն էր։

Մարտինի դիմաց, միստեր Մորզի աջ կողմը նստած էր դատավոր Բլոունտը— Սան-Ֆրանցիսկո քաղաքի գլխավոր դատավորը։ Մարտինն արդեն քանիցս հանդիպել էր նրա հետ և, ճիշտն ասած, առանձնապես չէր համակրում նրան։ Դատավորը խոսում էր Ռութի հոր հետ բանվորական միությունների, քաղաքական կացության ու սոցիալիզմի մասին. ընդամենը միստեր Մորզը նրան նշեց Մարտինին, որպես սոցիալիստական վարդապետության կողմնակցի։ Դատավորը նայեց երիտասարդին հայրական կարեկցությամբ։ Մարտինը ժպտաց. ինքնիրեն։

— Ժամանակի ընթացքում դուք կհասկանաք ձեր մոլորությունները,—ասաց դատավորը սիրալիր,— այդ երեխայական հիվանդություններն ամենից լավ բուժում է ժամանակը։ (Այդ ասելով՝ դատավորը երեսը շուռ տվեց դեպի միստեր Մորզը)։ Այդպիսի դեպքերում ես երբեք չեմ վիճում։ Դա հիվանդի մեջ միայն համառություն է առաջացնում։

— Բոլորովին իրավացի եք,— ծանրակշիռ պատասխանեց միստեր Մորզը,— բայց և այնպես երբեմն օգտակար է լինում նախազգուշացնել հիվանդին կամակորության հնարավոր հետևանքների մասին։

Մարտինը ծիծաղեց՝ թեև ոչ առանց ճիգի։ Օրն այնքան երկար էր, ամբողջ օրվա ընթացքում աշխատանքն այնքան լարված, որ ռեակցիան զգացնում էր իրեն։

— Անկասկած, դուք գերազանց բժիշկներ եք,— ասաց նա,— բայց եթե դուք մի քիչ հետաքրքրվում եք բուժվողի կարծիքով, նրան թույլ տվեք ասել ձեզ, որ դուք դիագնոզում սխալվեցիք։ Իրականության մեջ դուք ինքներդ եք տառապում այն հիվանդությամբ, որը վերագրում եք ինձ։ Իսկ ես բոլորովին անզգայունակ եմ դրան։ Սոցիալիստական փիլիսոփայությունը, որը այնքան հուզում է ձեզ, ոչ մի կերպ չի շոշափել ինձ։

— Ա՜յ, ի՜նչ ճարպիկն է,— մրմնջաց դատավորը,— մեղադրանքը շուռ տալ մեղադրողի դեմ— դա խորամանկ միջոց է վիճաբանության ժամանակ։

— Ես դա ասում եմ՝ հիմնվելով ձեր խոսքերի վրա,— ասաց Մարտինը։ Նրա աչքերը փայլատակեցին, բայց նա դեռևս զսպում էր իրեն։

— Բանը նրանումն է, պարոն դատավոր, որ ես լսել եմ ձեր նախընտրական ճառերը։ Շնորհիվ մտքի առանձին խարդախման,— դա իմ նախասիրած արտահայտությունն է, որը հասկանալի է ոչ բոլորին,— դուք համարում եք ձեզ «ուժեղագույնն է ապրում» սկզբունքի կողմնակից, և միաժամանակ դիմում եք ամեն միջոցների՝ ուժեղին տկարացնելու համար։

— Ծրիտասա՛րդ...

— Մի՛ մոռանաք, որ ես լսել եմ ձեր ճառերը,— ընդմիջեց Մարտինը։— Նահանգների միջև առևտրական փոխհարաբերությունների հարցում, երկաթուղային և նավթային տրեստների գործունեությունը կանոնավորելու, անտառների պլանային շահագործման և այլ հարցերում ձեր դիրքն այն է, որ պահանջում եք սահմանափակող միջոցառումներ, այսինքն ձեր դիրքը համընկնում է սոցիալիստների դիրքի հետ։

— Ձեր կարծիքով, մի՞թե հարկավոր չի սանձահարել իշխանավորների անչափ կամայականությունը։

— Խոսքը դրա մասին չէ։ Ես ուզում եմ միայն ապացուցել ձեզ, որ դուք սխալվեցիք դիագնոզում, և ես բնավ չեմ վարակվել սոցիալիզմի բակտերիայով։ Ես ուզում եմ ապացուցել ձեզ, որ դուք, հենց դուք եք վարակվել այդ բակտերիայով։ Ինչ վերաբերում է ինձ, ես սոցիալիզմի վաղեմի թշնամին եմ, ինչպես և ձեր խառնածին դեմոկրատիայի, որն ըստ էության հանդիսանում է կեղծ սոցիալիզմ, միայն չի ուզում իրերին տալ նրանց անունները։ Ես ռեակցիոներ եմ, այնքան համոզված ռեակցիոներ, որ դուք հասարակական կեղծ հարաբերությունների գդակի տակ ապրողներդ երբեք չեք հասկանա իմ հայացքները, որովհետև դուք չափազանց կարճատես եք՝ այդ գդակի միջով որևէ բան տեսնել կարենալու համար։ Դուք այնպես եք ձևացնում, իբր հավատում եք ուժեղագույնի հաղթանակին, իսկ ես իրոք հավատում եմ դրան։ Ահա, թե ինչո՛ւմն է տարբերությունը։ Երբ ես ավելի երիտասարդ էի,— միայն մի քանի ամիս առաջ,— ես էլ մտածում էի այնպես, ինչպես դուք, և ձեր խոսքերը մինչև անգամ որոշ տպավորություն էին գործում ինձ վրա։ Բայց շարշիներն ու խանութպանները վատ կառավարողներ են. նրանք զբաղված են լոկ դրամ վաստակելով, և ես գերադասեցի դիմել հնադարյան արիստոկրատիզմին։ Այս սենյակում ես միակ անհատապաշտն եմ։ Ես ոչ մի գործ չունեմ պետության հետ։ Ես սպասում եմ միայն ուժեղ մարդուն, որը կգա երիվարին նստած և կփրկի պետությունն անխուսափելի քայքայումից։ Նիցշեն կատարելապես իրավացի էր։ Ես ժամանակ չեմ կորցնելու՝ բացատրելու համար ձեզ, թե ո՛վ է Նիցշեն, բայց նա իրավացի էր։ Աշխարհը պատկանում է ուժեղներին, որոնք նույնքան մաքուր են, որքան հզոր, և որոնք իրենց ամբողջ կյանքում չեն թափառում գնման ու վաճառման ճահճուտում։ Աշխարհը պատկանում է իսկական արիստոկրատներին, խարտյաշ գազաններին, նրանց, որոնք ոչ մի կոմպրոմիս չեն անում և միշտ ասում են միայն «այո՛»։ Եվ նրանք կուլ կտան ձեզ— սոցիալիստներիդ, սոցիալիզմից վախեցողներիդ և իրենց անհատապաշտ երևակայողներին։ Ձեր

ոտրկական բորոյականությունը — ոսկե միջին ճանապարհը ձեզ չի փրկի։ Իհարկե, այդ բոլորը ձեզ համար անհասկանալի է, ես գիտեմ այդ, և չեմ ուզում այլևս ձանձրացնել ձեզ դրանով։ Բայց մի՛ մոռանաք մի բան. Օկլենդում չեք ճարի և կես դյուժին անհատապաշտ, բայց նրանցից մեկն է ձեր խոնարհ ծառան— Մարտին Իդենը։

Այդ ասելով՝ Մարտինը շուռ եկավ դեպի Ռութը, դրանով հասկացնելով, որ վեճը համարում է վերջացած։

— Ես այսօր հոգնեցի,— ասաց նա,— ուզում եմ սիրել, և ոչ թե խոսակցել։

Նա անպատասխան թողեց միստեր Մորզի հետևյալ դիտողությունը.

— Դուք ինձ չհամոզեցիք։ Բոլոր սոցիալիստները ճիզվիտներ են։ Նրանց անհրաժեշտ է դիմել զանազան հնարքների։

— Ոչինչ, մենք ձեզ լավ ռեսպուբլիկական կդարձնենք,— ասաց դատավոր Բլոունտը։

— Ձիավորն ավելի առաջ կգա, քան ձեր ասածը տեղի կունենա,— բարեմտորեն ասաց Մարտինը և շուռ եկավ դեպի Ռութը։

Բայց Միստեր Մորզը դժգոհ էր։ Նրան դուր չէին գալիս իր ապագա փեսայի ծուլությունն ու արհամարհանքը դեպի գործունեության նորմալ, խելոք ձևերը։ Նրա խորհելակերպն օտարոտի էր միստեր Մորզին, իսկ բնավորությունն անհասկանալի։ Միստեր Մորզը վճռեց խոսակցություն բանալ Հերբերտ Սպենսերի մասին։ Միստեր Բլոունտը մասնակցեց այդ զրույցին, և Մարտինն ականջները սրած, հենց որ փիլիսոփայի անունը արտասանվեց, լսեց, որ դատավորը զգուշավոր, բայց իր արժանապատվության գիտակցությամբ սկսեց քննադատել Սպենսերի գաղափարները։ Միստեր Մորզը երբեմն նայում էր Մարտինին, կարծես ուզենալով ասել «լսո՞ւմ եք, զավակս»։

— Ի՞նչ անմտություն,— շշնջաց Մարտինը՝ շարունակելով խոսակցել Ռութի և Արտուրի հետ։

Բայց ցերեկվա հոգնությունն և երեկվա վիճաբանությունները «իսկական մարդկանց» հետ իրենց ազդեցությունը գործել էին. միաժամանակ նա դեռ բոլորովին չէր հագեցրել իր զայրույթը, որն առաջացրել էր նրանում՝ տրամվայում կարդացած հոդվածը։

— Բանն ինչո՞ւմն է,— հանկարծ հարցրեց Ռութը՝ վախենալով այն բացահայտ ճիգից, որով Մարտինը զսպում էր իրեն։

— «Չկա աստված, բացի Անիմանալիից, և Հերբերտ Սպենսերը՝ նրա մարգարեն է»,— հանկարծ արտասանեց դատավորը։

Մարտինն անմիջապես գլուխը դարձրեց դեպի դատավորը։

— Էժանագին սրախոսություն է,— նկատեց նա հանգիստ,— առաջին անգամ ես այդ լսել եմ Սիտի-Հոլլ պարկում մի բանվորի բերանից, որը կարծես ավելի լավ գիտեր այդ նյութը։ Դրանից հետո ես հաճախ լսել եմ այդ բառերը, և ամեն անգամ դրանց գռեհիկությունը իմ սիրտն է խառնել։ Ամոթ չի՞ ձեզ։ Մեծ ու պատվավոր մարդու անունը ձեր անմտությունների մեջ — միևնույն է, ինչ ցողի կաթիլը կանգնած ջրափոսում։ Դուք զզվանք եք առաջացնում իմ մեջ։

Թվում էր, թե հանկարծ լսվեց կայծակի շաչյուն։ Դատավոր Բլոունտը շառագունեց, և չարագուշակ լռություն տիրեց։ Միստեր Մորդը ներքուստ ուրախանում էր։ Նա տեսավ, որ իր դուստրը խոցվել է Մարտինի վարմունքից։ Նա իր նպատակին հասել էր. իրեն ատելի այդ մարդու մեջ բնածին կոպտության սլոթիկում էր առաջացել։

Ռութը դողտուկ, սեղանի տակ, թախանձագին սեղմեց Մարտինի ձեռքը, բայց երիտասարդի արյունն արդեն եփ էր գալիս։ Բարձր դիրք գրավող մարդկանց սնապարծությունն ու բթամտությունը զայրացրին նրան։ Գերադույն դատարանի դատավո՞ր։ Երևակայե՞լ միայն, որ դեռ մի քանի տարի ա-

ռաջ նա ինքը թավալվում էր ցեխերի մեջ, և այդպիսի մարդիկ— նրան թվում էին աստվածներ։

Դատավոր Բլոունտը ուշքի եկավ և մինչև անգամ փորձեց շարունակել զրույցը՝ դիտումնավոր քաղաքավարությամբ խոսքն ուղղելով Մարտինին, բայց վերջինն իսկույն հասկացավ, որ դա արվում է բացառապես ներկա գտնվող կանանց սիրուն։ Դա վերջնականապես կատաղեցրեց Մարտինին։ Մի՞թե աշխարհում բոլորովին չկա ազնվություն ասված բանը։

— Դուք չեք կարող վիճաբանել ինձ հետ Սպենսերի մասին,— բղավեց նա։— Դուք նույնքան քիչ բան գիտեք Սպենսերի մասին, որքան նրա սեփական հայրենակիցները։ Գիտեմ, որ դրանում մեղավորը դուք չեք։ Դրանում մեղավոր է ժամանակակից ընդհանուր տգիտությունը։ Այդ տգիտության մի փոքր նմուշի հետ ես առիթ ունեցա ծանոթանալու հենց նոր, այստեղ գալու ժամանակ։ Կարդում էի Սալիբիի ակնարկը Հերբերտ Սպենսերի մասին։ Լավ կլիներ, որ դուք էլ կարդայիք։ Այդ գիրքը մատչելի է բոլորին։ Կարող եք ճարել այն ամեն մի գրախանութում և գրադարանում։ Երբ դուք կկարդաք այն, ինչ գրել է Սալիբին այդ մեծ մարդու մասին, վստահ եմ, որ մինչև անգամ դուք կամաչեք։ Դա գռեհկության այնպիսի ռեկորդ է, որի առաջ նսեմանում է ձեր գռեհկությունը։ Սալիբին—ակադեմիկոս փիլիսոփան, որը անարժան է Սպենսերի հետ միևնույն օդը շնչելու, նրան անվանում է «կիսագրագետների փիլիսոփա»։ Ես վստահ եմ, որ դուք տասը էջ էլ չեք կարդացել Սպենսերի երկասիրություններից, բայց եղել են և ավելի ինտելիգենտ քննադատներ, որոնք ձեզանից շատ չեն կարդացել, և սակայն հանդգնել են նշել Սպենսերի հետևորդներին, որ նրա գաղափարները սխալ են։ Հասկանում եք։ Նրա՛ գաղափարները—մի մարդու, որի մեծ հանճարն ընդգրկել է գիտությունն բոլոր կողմերը. նա եղել է հոգեբանության հայրը. մանկավարժության բնագավառում նա մի ամբողջ հեղաշրջում է առաջացրել, այնպես որ այժմ Ֆրանսիայում գյուղացի երեխա-

ները սովորում են չորս կանոնները Սպենսերի առաջարկած մեթոդներով։ Նրա հիշատակն անարգող ողորմելի մարդուկներն իրենց առօրյա հացը վաստակում են նրա գաղափարների գործնական կիրառումով։ Եթե նրանց ուղեղում առհասարակ որևէ գաղափարներ կան, դրանով մեծապես պարտական են նրան։ Եթե նա չլիներ, նրանք չէին ունենա նաև այն չնչին գիտելիքները, որոնք նրանք կրկնում են թութակի պես։ Իսկ ինչ-որ պարոն, օրինակ Ֆերրենկսը Օքսֆորդում, որն ավելի բարձր դիրքի տեր է, քան դուք, դատավոր Բլոունտ, հանդգնում է ասել, որ հետագա սերունդները Սպենսերին կանվանեն ավելի շուտ բանաստեղծ ու երազող, քան մտածող։ Հաջող քոթոթների ոհմակ — ահա՛, թե ինչ են նրանք։ Մի ոմն պատգամել է, թե «Հիմնական սկզբունքները» զուրկ է գրական գեղեցկություններից։ Ուրիշներն աղաղակում են, որ Սպենսերը մտքի մշակ է, բայց ոչ ինքնատիպ խորհող։ Քոթոթնե՛ր։ Ոռնացող քոթոթների ոհմա՛կ։

Մարտինը միանգամից դադարեց խոսելուց մեռելային լռության մեջ։ Ռութի ընտանիքում բոլորը հարգում էին դատավոր Բլոունտին, որպես պատվարժան ու վաստակավոր մարդու, և Մարտինի ելույթը սոսկումի մատնեց նրանց։ Ճաշի վերջավորությունն անցավ հուղարկավորական տրամադրության մեջ։ Դատավորն ու միստեր Մորդը կիսաձայն խոսակցում էին։ Մյուսների մոտ զրույցի փորձերը չէին հաջողվում։

Ճաշից հետո, երբ Մարտինը և Ռութը մենակ մնացին, տեղի ունեցավ փոթորկալի մի տեսարան։

— Դուք անտանելի եք,— ասում էր Ռութը արտասվակալած աչքերով։

Բայց Մարտինի ցասումը դեռ չէր խաղաղվել, և նա ահարկու շեշտով քրթմնջաց։

— Անասունն է՛ր, ա՜հ, անասունն է՛ր...

Երբ Ռութն ասաց, որ նա անպատվեց դատավորին, Մարտինն առարկեց.

— Ձեր կարծիքով, ինչո՞վ եմ անպատվել ես նրանց Ծրանով, որ ճշմարտությո՞ւնն եմ ասել։

— Իմ բանը չի, թե դա ճիշտ էր, թե ոչ,— շարունակեց Ռութը,— կան պատշաճության որոշ սահմաններ, և ոչ ոք ձեզ իրավունք չի տվել մարդկանց անպատվելու։

— Իսկ դատավոր Բլոունտին ո՞վ է իրավունք տվել անպատվել ճշմարտությունը,— բացագանչեց Մարտինը։— Անպատվել ճշմարտությունը՝ դա ավելի վատ է, քան անպատվել մի ողորմելի մարդու։ Բայց նա ավելի վատթար բան արեց։ Նա սևացրեց այն մեծագույն և ազնվագույն մտածողի անունը, որը մեռած է։ Ա՜հ, անասունն է՛ր, անասունն է՛ր։

Մարտինի կատաղությունը վախեցնում էր Ռութին։ Նա առաջին անգամն էր տեսնում Մարտինին այդպիսի մոլեգնության մեջ և չէր կարողանում հասկանալ այդպիսի, նրա տեսակետից անխոհեմ ցասման պատճառը։ Միաժամանակ Ռութն անդիմադրելիորեն տարվեց նրանով, այնպես որ նա ի վերջո չկարողացավ զսպել իրեն և, մոտենալով Մարտինին, իր ձեռքերով պարփակեց նրա վիզը։ Ռութը վիրավորված ու վրդովված էր այն ամենով, ինչ տեղի ունեցավ, բայց և այնպես նրա գլուխը հանգչում էր Մարտինի կրծքին և, փարվելով նրան, լսում էր, թե Մարտինն ինչպես քրթմնջում էր.

— Անասունն է՛ր, անասունն է՛ր։

Եվ չբարձրացրեց իր գլուխը մինչև անգամ այն ժամանակ, երբ Մարտինն ասաց.

— Ես այլևս չեմ փչացնելու ձեր հրավիրաճաշերը, սիրելիս։ Ձեր հարազատներն ինձ չեն սիրում, և ես չեմ ուզում պնդերեսությամբ կպչել նրանց։ Նրանք նույնքան ատելի են ինձ, ինչպես ես նրանց։ Թո՛ւ։ Նրանք սարդապես զզվելի են։ Երևակայել, որ մի ժամանակ ես ցածրից բարձր էի նայում այն մարդկանց վրա, որոնք բարձր դիրքեր են գրավում, ապրում են շքեղ տներում, ունեն համալսարանական դիպլոմ և բանկում ընթացիկ հաշիվ։ Ես միամտորեն ենթադրում էի, որ նրանք իրոք արժանի են հարգանքի։

— Գնանք սոցիալիստական ակումբը,— ասաց Բրիսսենդենը՝ կես ժամ առաջ իրեն հետ պատահած արյունարբությունից թուլացած։ Դա վերջին երեք օրվա ընթացքում երկրորդ արյունարբությունն էր. նա դողդողջ ձեռքերով բռնել էր իր անբաժան ընկեր վիսկիի բաժակը։

— Ես ի՞նչ գործ ունեմ սոցիալիզմի հետ,— հարցրեց Մարտինը։

— Կողմնակի մարդկանց թույլատրվում է այնտեղ խոսք վերցնել՝ միայն հինգ րոպեից ոչ ավելի,— ասաց հիվանդը,— դուք էլ ելույթ կունենաք։ Ասացեք նրանց, թե ինչո՞ւ դուք սոցիալիստ չեք։ Ասացեք նրանց, թե ի՞նչ է ձեր կարծիքը նրանց և նրանց էտիկայի, հետաոյի էտիկայի մասին։ Նրանց երեսին գցեք Նիցշեին և, իբր վարձատրություն, թողեք, որ ձեզ բզկտեն։ Այդպիսի վիճաբանությունները օգտակար են նրանց, նույնպես ձեզ։ Ես շատ կուզենայի, որ դուք սոցիալիստ դառնաք իմ մահից առաջ։ Միայն դա կարող է փրկել ձեզ՝ ձեր կյանքի հիասթափության ժամին, որը կհասնի անկասկած։

— Չեմ հասկանում, թե դուք, հենց դուք ինչպե՞ս կարող եք սոցիալիստ լինել,— նկատեց Մարտինը,— չէ՞ որ դուք ատում եք ամբոխը։ Եվ իրոք, ի՞նչ կապ ունեք, գեղագետ մարդ, խուժանի շահերի հետ։

Այդ ասելով Մարտինը կշտամբանքով նշեց Բրիսսենդենին վիսկին։

— Երևում է, որ սոցիալիզմը չի փրկում ձեզ։

— Ես շատ հիվանդ եմ,— պատասխանեց Բրիսսենդենը։ — Իսկ դուք—դա այլ բան է։ Դուք առողջ եք, ձեր առաջ դեռ կա ամբողջ մի կյանք, և ձեզ հարկավոր է որևէ նպատակ ունենալ կյանքում։ Դուք զարմանում եք, թե ինչո՞ւ ես սոցիալիստ եմ։ Կասեմ ձեզ։ Որովհետև սոցիալիզմն անխուսափելի է, որովհետև ժամանակակից հասարակարգը փտած է և չի կարող երկար ժամանակ կանգուն մնալ. որովհետև ձեր

«ձիավոր մարդու» ժամանակն անցել է։ Ստրուկները չեն գնա նրա ետևից։ Ստրուկները խիստ շատ են և չեն թողնի, որ նա երիվար նստի։ Միևնույն է, դուք նրանցից չեք ազատվի և ստիպված կլինեք կուլ տալ նրանց ստրկական բարոյականությունը։ Իհարկե դա այնքան էլ քաղցր բան չի։ Բայց ճար չկա։ Դուք ձեր նիցշեական գաղափարներով պարզապես տրոգլոդիտ եք, Մարտին։ Ինչ-որ անցել է— անցել է, և ով որ ասում է, թե պատմության մեջ ամեն ինչ կրկնվում է— ստում է։ Դուք իրավացի եք. ես չեմ սիրում ամբոխին, բայց ի՞նչ կարելի է անել։ Ձիավոր մարդուն մենք չենք կարող ունենալ, իսկ այժմ իշխանության գլխին գտնվող բուրժուական վախկոտ խոզերից ես գերադասում եմ ինչ-որ կուզեք։ Գնանք։ Եթե ես մի քիչ էլ նստած մնամ այստեղ, բոլորովին կհարբեմ։ Գիտե՞ք, թե ինչ է ասում բժիշկը։ Բայց սատանան տանի բժշկին։ Ես շատ եմ ուզում հիմարի տեղ դնել նրան։

Կիրակի երեկո էր, և Օկլենդի սոցիալիստական ակումբի փոքր սրահը լի էր բազմությամբ, գլխավորապես բանվորներով։ Հռետորը— խելացի մի հրեա— դուր եկավ Մարտինին, թեև նրա բոլոր ասածները միանգամայն անընդունելի էին Մարտինի համար։ Հռետորի նեղ ուսերն ու ներս ընկած կուրծքը միանգամից ցույց էին տալիս, թե նա իսկական հետտոյի զավակ է, և նայելով նրան, Մարտինը պարզ պատկերացրեց իրեն՝ խղճուկ և տկար ստրուկների հավերժական պատերազմը այս աշխարհի մի բուռն ուժեղների դեմ, որոնք շատ վաղուց իշխել են նրանց վրա և միշտ էլ պիտի իշխեն։ Մարտինի աչքում այդ նիհար մարդը ներկայանում էր մի մեծ սիմբոլ։ Դա մարմնացումն էր՝ բիոլոգիական անխուսափելի օրենքի համաձայն կյանքի փշոտ ճամփաներին ոչնչացող թույլերի և անճարակների դժբախտ մասսայի։ Նրանք դատապարտվածներ են։ Չնայած նրանց ճարտարամիտ փիլիսոփայությանը և դեպի կոլեկտիվացումը նրանց ունեցած մրջնային հակմանը՝ բնությունը մերժել է նրանց՝ գերադասելով բացառիկ ուժեղ մարդկանց։ Բնությունն ընտրում է իր լավագույն ստեղծագործությունները, և մարդիկ

հետևում են նրա օրինակին՝ բուծելով ազնվացեղ ձիեր և հազվագյուտ բույսեր։ Իհարկե, աշխարհաշենքի ստեղծողը կարող էր հնարել լավագույն մեթոդ, բայց այս աշխարհի մարդիկ ստիպված են հաշվի առնել գոյություն ունեցող մեթոդը։ Հասկանալի է, որ իրենց ոչնչացումից առաջ նրանք կարող են գալարվել և կուչ գալ, ինչպես այդ անում են սոցիալիստները, կարող են հավաքվել ու խոսել այն մասին, թե ինչպե՛ս պակասեցնել երկրային գոյության դժվարությունները ու հաղթել տիեզերքը։

Այդպես էր մտածում Մարտինը և նույնն արտահայտեց նա, երբ Բրիսսենդենը վերջապես համոզեց նրան ելույթ ունենալ և մի լավ «կերցնել» նրանց։ Նա բարձրացավ սմբիոնը և, ինչպես ընդունված էր անել, դիմեց նախագահին։ Սկզբում նա խոսում էր շատ հանդարտ, մի քիչ կմկմալով, ջանալով կարգի բերել այն բոլոր մտքերը, որոնք հեղեղել էին նրան հրեայի ճառի ժամանակ։ Այսպիսի միտինգներում ամեն մի հռետորի տրվում էր հինգ րոպե։ Բայց երբ սահմանված հինգ րոպեն անցավ, Մարտինը նոր էր սկսել ոգևորվել իր ճառով. նրա հարձակումը սոցիալիստական դոկտրինայի վրա նոր էր ծավալվել, և որովհետև նա մեծ հետաքրքրություն առաջացրեց, նրանք միաձայն պահանջեցին նախագահից երկարացնել ժամկետը։ Մարտինի մեջ նրանք տեսան արժանավոր հակառակորդի և լարված ուշադրությամբ հետևում էին նրա ամեն մի բառին։ Մարտինը խոսում էր արտասովոր հավշտակությամբ, առանց դես ու դեն ընկնելու և հարձակվելով ստրկական բարոյականության վրա, ուղղակի նշելով, որ ստրուկ ասելով նա նկատի ունի հենց իր ունկնդիրներին։ Նա մեջ բերեց Սպենսերին ու Մալտուսին և գովաբանեց աշխարհի զարգացման բիոլոգիական օրենքը։

— Այսպիսով,— եզրափակեց նա իր ճառը,— պետությունը չի կարող գոյություն ունենալ, եթե նա բաղկացած է միայն ստրուկներից։ Էվոլուցիայի հիմնական օրենքը գործում է այստեղ։ Գոյության պայքարում, ինչպես ես արդեն նշեցի, կապրեն ուժեղն և ուժեղի սերունդը, իսկ թույլը և

նրա սերունդը դատապարտված են ոչնչացման։ Այդ պրոցեսի հետևանքով ուժեղների ուժը ավելանում է սերունդե սերունդ։ Ահա, թե ինչ է էվոլուցիան։ Իսկ դուք, ստրուկներդ— ես համաձայն եմ, որ անհաճո բան է իրեն ստրուկ ճանաչել— դուք, ստրուկներդ, երազում եք էվոլուցիայի մեծ օրենքին չենթարկվող մի հասարակության մասին։ Դուք ուզում եք, որ վտիտներն ու անճարակները ոչնչանան։ Դուք ուզում եք, որ տկարներն էլ ուտեն այնպես, ինչպես ուժեղները, և այնքան, ինչքան կուզենան։ Դուք ուզում եք, որ թույլերն ուժեղների հետ ամուսնանան և սերունդ արտադրեն։ Իսկ ի՞նչ կլինի այդ բոլորի հետևանքը։ Մարդկության ուժն ու կենսունակությունը չեն աճի սերունդե սերունդ։ Ընդհակառակը։ Նրանք կնվազեն։ Ահա ձեր ստրկական փիլիսոփայության նեմեզիդան։ Միայն ստրուկների համար գոյություն ունեցող ձեր ստրկական հասարակությունը կսկսի աստիճանաբար թուլանալ և քանդվել՝ մինչև որ վերջ ի վերջո բոլորովին կկորչի։ Մի՛ մոռանաք, որ ես ելակետ ունեմ բիոլոգիական օրենքները, և ոչ թե սենտիմենտալ բարոյականությունը։ Ստրուկների պետությունը չի կարող գոյություն ունենալ։

— Իսկ Միացյալ Նահանգնե՞րը,— բղավեց ունկնդիրներից մեկը։

— Միացյալ Նահանգնե՞ր,— առարկեց Մարտինը.— Տասներեք գաղութներ վոնդեցին իրենց իշխողներին և կազմեցին այսպես կոչված ռեսպուբլիկան։ Ստրուկներն իրենք դարձան իրենց տերերը։ Այլևս չկային տերեր, որոնք սրի ուժով էին կառավարում։ Բայց ստրուկները չեն կարող մնալ առանց տերերի, և ահա գոյացավ իշխողների մի նոր տեսակ— ոչ թե համարձակ ազնիվ և ուժեղ մարդիկ, այլ ողորմելի սարդեր, վաշխառու շարլիներ։ Եվ նրանք դարձյալ ստրկացրին ձեզ, բայց ոչ բացահայտ, ուժեղի իրավունքով, այլ աննկատելիորեն, զանազան մեքենայություններով, խորամանկությամբ, խաբեությամբ ու ստերով։ Նրանք կաշառեցին ձեր դատավորներին, այլանդակեցին ձեր օրենքները և

ձեր որդիներին ու դուստրերին ենթարկեցին այնպիսի հրնշման, որի առաջ նսեմացան ուղղակի ստրկության բոլոր սարսափները։ Ձեր երեխաներից երկու միլիոն հոգի այժմ աշխատում են Միացյալ Նահանգների արդյունաբերական օլիգարխիայի լծի տակ։ Տասը միլիոն ստրուկներ սպրում են՝ առանց ապաստան ու հաց ունենալու։ Ո՛չ, ստրուկների պետությունը չի կարող գոյություն ունենալ, որովհետև դա հակասում է էվոլուցիայի բիոլոգիական օրենքին։ Հենց որ ստրուկների պետություն է կազմակերպվում, անմիջապես վրա են հասնում անկումն ու այլասերումը։ Դուք ժխտո՞ւմ եք էվոլուցիայի օրենքները։ Լա՛վ։ Ո՞ւր է այն նոր, մյուս օրենքը, որի վրա հույս ունեք հենվել։ Ձևակերպեցեք այն։ Թերևս դա արդեն արվա՞ծ է։ Այդ դեպքում ասացեք ինձ այն։

Մարտինը նստեց իր տեղը՝ ամբողջ աուդիտորիայի խլացուցիչ աղմուկի տակ։ Շատերը տեղներից վեր թռան և խոսք ուղեցին։ Իրար ետևից տաքացած ու ոգևորված, ուժեղ շարժուձևեր անելով և ծափահարություններ խլելով, նրանք ետ էին մղում Մարտինի հարձակումը։ Դա իսկական ճակատամարտ էր, դաղափարների կատաղի ընդհարում։ Հռետորներից շատերը խոսում էին և ընդհանուր թեմաների շուրջը, բայց մեծամասնությունը անմիջականորեն Մարտինին էր ուղղում խոսքը։ Նրանք Մարտինի համար նոր մտքեր էին արտահայտում. նրա առաջ պարզում էին ոչ թե բիոլոգիական նոր օրենքներ, այլ հին օրենքների կիրառման նոր կարելիություններ։ Նրանք չափազանց հափշտակված էին վիճաբանությամբ, որպեսզի հարգեին էտիկան, և նախագահը ստիպվեց մի քանի անգամ կասեցնել նրանց։

Այնպես պատահեց, որ այդ ժողովում ներկա էր երիտասարդ, սենսացիաների սիրահար մի ռեպորտյոր, որը ոչ խելք ուներ, ոչ էլ փորձառություն։ Նա օժտված էր միայն լրագրողի հախուռն համարձակությամբ։ Նա չափազանց տգետ էր, որպեսզի կարողանար հետևել վիճաբանության իմաստին։ Բայց նա բոլորովին վստահ էր, որ ինքը բանվոր դասակարգին պատկանող այդ շատախոս մանիակներից շատ ավելի

բարձր է կանգնած։ Բացի այդ, նա շատ էր հարգում այս աշխարհի ուժեղներին, որոնք բարձր դիրքեր էին գրավում և որոշում էին ազգերի ու թերթերի քաղաքականությունը։ Նա մինչև անգամ ուներ իր իդեալը. երազում էր դառնալ առաջնակարգ ռեպորտյոր, որը գիտի ոչնչից խիստ շատ բան ստեղծել։

Նա այնպես էլ չհասկացավ, թե ըստ էության ինչի՛ մասին է խոսակցությունը։ Նրան հարկավոր էլ չէր գիտենալ այդ։ Նա զբաղվում էր առանձին բառերով, «ռևոլուցիա»։ Ինչպես հնեախոսը երևան հանված մի ոսկրից իր երևակայության մեջ վերականգնում է մի ամբողջ կմախք, այնպես էլ այս ռեպորտյորը կարող էր վերարտադրել մի ամբողջ ճառ իր մտքում մնացած միայն մի «ռևոլուցիա» բառի հիման վրա։ Նա դրանով զբաղվեց հենց նույն զիշերը և շատ հաջող կերպով, և որովհետև Մարտինի ելույթն ամենից շատ աղմուկ առաջացրեց, ռեպորտյորը վճռեց նրա բերանը դնել այդ ճառը՝ պատկերացնելով նրան որպես անարխիստ, իսկ Մարտինի ռեակցիոն անհատապաշտությունը վերածելով ամենածայրահեղ կարմիր սոցիալիզմի։ Երիտասարդ ռեպորտյորը զուրկ չէր գրական ձիրքից և շատ գեղարվեստորեն պատկերացրեց վայրագ, երկարամազ մարդկանց— ջղադարների և այլասերվածների, որոնք բռունցքները թափահարում էին, կատաղի բացագանչություններ էին արձակում մոլեգնած ամբոխի աննկարագրելի դղրդյունի ուղեկցությամբ։

ԳԼՈՒԽ XXXIV

Հաջորդ օրը, առավոտյան սուրճ խմելիս, Մարտինը սովորականի պես թերթ էր կարդում։ Նա կյանքումն առաջին անգամ տեսավ իր անունը տպված թերթի առաջին էջում խոշոր տառերով։ Նա մեծ զարմանքով կարդաց այնտեղ, որ ինքը հանդիսանում է Օկլենդի ամենանշանավոր սոցիալիստներից մեկը։ Նա աչքի անցկացրեց այն բոցավառ ճառը, որը

նրա փոխարեն դրել էր երիտասարդ ռեպորտյորը, և սկզբում վրդովվեց այդ անամոթ հերյուրանքով, բայց ի վերջո ծիծաղելով դեն շպրտեց թերթը։

— Կամ դա գրել է մի հարբած մարդ, և կամ դրա ետևում թաքնված է ինչ-որ ոճրապարտ չարամտություն,— ասաց Մարտինը Բրիսսենդենին, որը ճաշից հետո եկավ նրա մոտ և հոգնած ընկավ միակ աթոռի վրա։ Մարտինն ըստ սովորության նստած էր մահճակալին։

— Միևնույն չի՞ ձեզ համար,— ասաց Բրիսսենդենը։ —Մի՞թե դուք նշանակություն եք տալիս թերթ կարդացող բուրժուա խոզերի կարծիքին։

Մարտինը մի բոպե մտածմունքի մեջ ընկավ։

— Իհարկե, ես ոչ մի գործ չունեմ նրանց հետ։ Միայն վախենում եմ, որ դա փչացնի իմ հարաբերությունները Ռութի ընտանիքի հետ։ Նրա հայրը շարունակ պնդում է, որ ես սոցիալիստ եմ, իսկ այդ թշվառական գրությունը կհաստատի նրա կարծիքը։ Հոր կարծիքը նշանակություն չունի ինձ համար, բայց դա կարող է անհաճո հետևանքներ ունենալ։ Ես ուզում եմ կարդալ ձեզ իմ այսօրվա գրածը... իհարկե, դարձյալ նույն «Ուշացածից»։ Մոտավորապես կեսն արդեն պատրաստ է։

Մարտինը նոր էր սկսել կարդալ, երբ Մարիան բացեց դուռը և ներս թողեց վայելուչ հագնված մի երիտասարդի, որը արագ նայեց չորս կողմը, աչքերը հառեց կերոսինկային ու խոհանոցին և, վերջապես, Մարտինին։

— Նստեք,— ասաց Բրիսսենդենը։

Մարտինը տեղ տվեց հյուրին նստելու և հարցական հայացք ուղղեց նրան։

— Ես լսեցի ձեր երեկվա ճառը, միստեր Իդեն,— սկսեց երիտասարդը կարճատև լռությունից հետո։— Ես կուզենայի ինտերվյու անել ձեզ։

Բրիսսենդենը բարձրաձայն և սրտանց հռհռաց։

— Եղբայր-սոցիալի՞ստ,— հարցրեց ռեպորտյորը՝ արագ հայացք գցելով Բրիսսենդենի վրա, և կարծես մտովին հաշ-

վելով այն էֆեկտը, որը կստացվի, եթե նկարագրի այդ կենդանի մեռածին։

— Եվ սա՞ է գրել այդ հաշվետվությունը,— բացագանչեց Մարտինը,— այս երեխա՞ն։

— Ինչո՞ւ դուք չեք թակում նրան,— հարցրեց Բրիսսենդենը։— Ես հիմա հազար դոլար կտայի, որպեսզի առողջ թոքեր ունենայի միայն հինգ րոպեի համար։

Պատանի ժուռնալիստը բավական շփոթվեց նրանց այդ խոսակցությունից, որը վերաբերում էր իր անձին, և տեղի ունեցավ իր դլխի վրայով։ Բայց նա հենց նոր էր արժանացել խմբագրի դովեստին՝ սոցիալիստական միտինգի մասին իր փայլուն հաշվետվության համար և հանձնարարություն էր ստացել ինտերվյու անել Մարտին Իդենին— գոյություն ունեցող իրավակարգի կազմակերպված թշնամիների լիդերին։

— Դուք չե՞ք առարկի, եթե մենք լուսանկարենք ձեզ, միստեր Իդեն,— հարցրեց նա։— Ես ինձ հետ բերել եմ լուսանկարչին, բայց նա ասում է, որ անհարմար է սենյակում նկարել։ Ավելի լավ է դուրս գալ արևին։ Իսկ հետո մենք ձեզ հետ կարող ենք զրուցել։

— Լուսանկարի՞չ,— մտածկոտ ասաց Բրիսսենդենը։— Թակեցե՛ք նրան, Մարտին, թակեցե՛ք։

— Երևի ես ծերանում եմ,— պատասխանեց Մարտինը։—Գիտեմ, որ հարկավոր է թակել նրան, բայց դրա համար պահանջվող էներգիան չկա ինձանում։ Բացի այդ, արժե՞։

— Նրա խեղճ մոր սիրուն,— առարկեց Բրիսսենդենը։

— Դա ծանրակշիռ նկատառում է,— համաձայնեց Մարտինը,— բայց այդքան թափ չկա ինձանում։ Չէ՞ որ մեկին թակելու համար անհրաժեշտ է էներգիա վատնել։ Արժե՞ արդյոք։

— Հենց չարժե,— ուրախ տոնով միջամտեց ռեպորտյորը, բայց միաժամանակ սկսեց անհանգիստ նայել դեպի դուռը։

— Բայց նրա գրության մեջ ոչ մի բառ չկար ճշմա-

բիտ,— շարունակեց Մարտինը՝ խոսքն ուղղելով Բրիսսենդենին։

— Հասկանո՞ւմ եք, դա միայն ընդհանուր գծերով նկարագրություն էր...— ուզեց արեց բացատրել պատանին։— Վերջ ի վերջո դա ձեզ համար հիանալի ռեկլամ է... ինքներդ կհամաձայնեք, որ դա այդպես է։

— Դա լավ ռեկլամ է ձեզ համար, Մարտին,— հանդիսավորապես հայտարարեց Բրիսսենդենը։

— Այո՛, այո՛, ես էլ պետք է համաձայնեմ, որ դա ռեկլամ էր ինձ համար։

— Թույլ տվեք իմանալ, միստեր Իդեն, որտե՞ղ եք ծնվել,— հարցրեց ռեպորտյորը՝ իր դեմքին տալով լարված ուշադրության արտահայտություն։

— Նկատո՞ւմ եք, որ նա ոչինչ չի նոտագրում,— ասաց Բրիսսենդենը,— նա հիշողության մեջ է պահում այդ ամենը։

— Դա բավական է ինձ համար,— պատանին ամեն կերպ ջանում էր թաքցնել իր անհանգստությունը։— Փորձառու ռեպորտյորն երբեք չի նոտագրում։

— Երևի դուք երե՞կ էլ չեք նոտագրել։

Բայց Բրիսսենդենը քվիետիստների շկոլայի հետևորդ չէր, այդ պատճառով էլ նա հանկարծ բղավեց՝ փոխելով տոնը.

— Մարտին, եթե դուք չծեծեք նրան, ես կծեծեմ՝ թեկուզ տեղն ու տեղն ընկնեմ դետին ու մեռնեմ։

— Ասացեք, բավակա՞ն է մի անգամ հասցնել,— հարցրեց Մարտինը։

Բրիսսենդենը մտածեց և, վճռելով, հավանություն հայտնեց գլխի շարժումով։

Հաջորդ վայրկյանին ռեպորտյորի գլուխը ուժեղ սեղմված էր Մարտինի ծնկների արանքում։

— Միայն թե մի՛ կծեք,— նախազգուշացրեց Մարտինը,— ապա թե ոչ ես կստիպվեմ ջարդել ձեր համակրելի ռեխը, իսկ դա ափսոս կլինի։

Մարտինի աջ ձեռքը սկսեց համաչափ բարձրանալ ու

իջնել։ Պատանին ճչում էր, աշխատում էր դուրս պրծնել, հայհոյում էր, բայց չէր համարձակվում կծել։ Բրիսսենդենը հանդիստ դիտում էր այդ տեսարանը։ Միայն մի անգամ նա չզսպեց իրեն, վերցրեց դատարկ շիշն ու բացագանչեց։

— Թույլ տվեք մի անգամ էլ ես խփեմ։

— Դժբախտաբար, ես այլևս չեմ կարող,— ասաց վերջապես Մարտինը,— ձեռքս բոլորովին թմրեց։

Նա բռնեց ռեպորտյորի օձիքից և շպրտեց նրան մահճակալին։

— Ես կհայտնեմ ոստիկանության։ Ձեզ կձերբակալեն,— բղավում էր ռեպորտյորը։ Նրա այրվող այտերի վրայով զայրույթի արտասուքներ էին թափվում։

— Դուք պատասխանատու կլինեք։ Զդուշացե՛ք։

— Զարմանալի է,— ասաց Մարտինը,— նա ոչ մի կերպ չի հասկանում, թե սայթաքուն ճանապարհով է գնացել։ Անազնիվ, անվայել, անարժան է տղամարդու համար ստել իր մերձավորի նկատմամբ, ինչպես արել է նա, բայց նա դեռ չի հասկանում։

— Նա եկել է մեղ մոտ, որպեսզի բացատրենք նրան,— ասաց Բրիսսենդենը։

— Այո, նա ինձ մոտ եկավ՝ նախապես զրպարտելով և խայտառակելով ինձ։ Հիմա իմ խանութպանը, հավանական է, կմերժի ապառիկ ապրանք բաց թողնել ինձ։ Բայց ամենավատն այն է, որ այս խեղճ տղան արդեն երբեք չի հեռանա այս ճանապարհից՝ մինչև որ նրանից չստացվի առաջնակարդ ժուռնալիստ և առաջնակարդ սրիկա։

— Դուք դեռ ժամանակ ունեք նրան ուղիղ ճամփի բերելու,— առարկեց Բրիսսենդենը։— Ա՜հ, ինչո՛ւ դուք ինձ թույլ չտվիք գեթ մի անգամ խփել նրան։ Ես կուզենայի մասնակցել այդ բարի գործին։

— Երկուսիդ էլ բանտ կնստեցնեն,— հեծկլտում էր այդ մոլորված հոգին։— Կոպի՛տ գազաններ։

— Նրա ռեխը շատ սիրուն և շատ տկար է,— ասաց Մարտինը՝ գլուխը շարժելով,— ինձ թվում է, որ ես իզուր

Բ.բեցրի ձեռքս։ Այս երիտասարդն անուղղելի է։ Անկասկած, նա առաջնակարգ ժուռնալիստ կդառնա։ Նա ամենևին խիղճ չունի։ Դա էլ բավական է, որպեսզի նա առաջ գնա այդ ասպարեզում։

Դրանից հետո երիտասարդը սրընթաց դուրս թռավ սենյակից՝ սարսափով անցնելով Բրիսսենդենի մոտով, որը շարունակում էր շարժել ձեռքում շիշը։

Հաջորդ օրը Մարտինն իր մասին դեռ շատ նոր ու հետաքրքրական բաներ իմացավ։ «Այո, բանից դուրս է գալիս, որ մենք հասարակության թշնամիներն ենք,— ասել էր նա մամուլի ներկայացուցչի հետ զրուցելիս,—բայց մենք անարխիստ չենք։ Մենք սոցիալիստ ենք»։ Երբ ռեպորտյորը նկատել է, որ այդ երկու շկոլաների միջև առանձին տարբերություն չկա, Մարտինն իր ուսերն էր թոթվել՝ իբր լռելյայն համաձայնության նշան։ Մարտինի դեմքը, ինչպես պարզվել է, անհամաչափ է և ունի այլասերման բոլոր հատկանիշները։ Առանձնապես բնորոշ են եղել կոշտաշատ ձեռքերն ու փայլատակող աչքերը։

Մարտինը կարդաց նաև, որ գրեթե ամեն երեկո նա իբր ելույթ է ունենում Սիտի-Հոլլ պարկում բանվորական միտինգներին և բոլոր անարխիստներից ու ադիտատորներից, որոնք այնտեղ թունավորում են ժողովրդի միտքը, ամենահաջողն է, որովհետև առավել ռեալուցիոն ճառեր է արտասանում։ Ռեպորտյորը մանրամասն նկարագրել էր նրա խցիկը, առանց մոռանալու հիշել էր կերոսինկան ու միակ աթոռը, և վառ գույներով նկարագրել էր նրա բարեկամին՝ մեռելի դեմքով թափառաշրջիկին, այնքան գունատ, որ կարծես քսան տարվա բանտարկությունից հետո նոր է ազատ արձակվել։

Երիտասարդ ռեպորտյորը մեծ ճարպկություն էր հայտաբերել։ Նա հոտառությամբ պարզել էր Մարտին Իդենի կենսագրությունը, ձեռք էր բերել միստեր Հիգգինբոթամի խանութի լուսանկարը, ինչպես և նրա՝ Բեռնարդ Հիգգինբոթամի լուսանկարը՝ կանգնած խանութի դռանը։ Այդ ջենտլմենը

նկարագրված էր որպես պատվավոր ու ողջամիտ վաճառական, որը ոչ միայն չէր բաժանում իր աներձագի սոցիալիստական հայացքները, այլև խզել էր ամեն հարաբերություն նրա հետ։ Նրա ասելով՝ Մարտին Իդենը պարզապես ծույլ է և գործից փախչող, չնայած, որ քանիցս նրան արված են նպաստավոր առաջարկներ, և, անկասկած, վաղ թե ուշ բանտ է նստելու։ Ինտերվյու է արել նաև Հերման Ֆոն Շմիդտը։ Նա անվանել է Մարտինին «Ընտանիքի հրեշը» և ինչպես պարզվել է, նույնպես կապ չի պահպանում նրա հետ։ «Նա ուզում էր ինձ շահագործել,— ասել է Հերման Ֆոն Շմիդտը ի միջի այլոց,— բայց ես չընկա նրա ծուղակը։ Ես այնպես արեցի, որ նա այլևս չթափառի այս կողմերը։ Այդպիսի անզգամից չի կարելի լավ բան սպասել»։

Այս անգամ Մարտինը լրջորեն զայրացավ։ Բրիսսենդենն այդ բոլորը նկատում էր զվարճալի մի կատակ, բայց չէր կարողանում հանգստացնել Մարտինին։ Մարտինը գիտեր, որ հեշտ չի լինելու Ռութի հետ բացատրվելը. բացի այդ, նրա հայրը, հավանական է, կջանա օգտվել այս ամբողջ անմիտ հերյուրանքից, որպեսզի քանդի նրանց նշանդրեքը։ Մարտինի մռայլ ենթադրությունները շուտով հաստատվեցին։ Հաջորդ օրն իսկ ցրիչը նամակ բերեց Ռութից։ Նախազգալով կատաստրոֆը, նա անմիջապես բացեց ծրարը և սկսեց կարդալ՝ կանգնելով բաց դռան առաջ, հենց այնտեղ, ուր ցրիչը հանձնել էր նամակը։

Կարդալիս Մարտինը մեքենայաբար ձեռքով խառնում էր գրպանը՝ այնտեղ փնտրելով ծխախոտ և թուղթ, որոնք առաջներում միշտ էլ պահում էր գրպանում։ Նա չէր գիտակցում, որ իր գրպանը վաղուց դատարկ էր, մինչև անգամ հաշիվ չէր տալիս, թե ինչ է որոնում այստեղ։

Նամակը գրած էր հանգիստ տոնով։ Ցասումի ոչ մի հետք չկար նրանում, բայց ամբողջ նամակը, առաջին տողից սկսած մինչև վերջինը համակված էր վիրավորանքով ու հիասթափությամբ։ Ռութը դրում էր, որ Մարտինը չարզարացրեց նրա հույսերը։ Նա կարծում էր, որ Մարտինը

վերջ է տվել իր սոսկալի սովորություններին, որ, հանուն նրա նկատմամբ ունեցած սիրո, իրոք պատրաստ է համեստ ու պարկեշտ կյանք վարել։ Իսկ հիմա հայրիկն ու մայրիկը վճռականապես պահանջեցին, որ նշանդրեքը քանդվի։ Եվ Ռուբը չէր կարող չընդունել, որ նրանց պատճառաբանությունները հիմնավոր են։ Երկուսի հարաբերությունների մեջ ոչ մի լավ բան չի կարող ստացվել։ Դա հենց սկզբից սխալ բան էր։ Նամակում կար միայն մի կշտամբանք, որն առանձնապես դառը թվաց Մարտինին. «Երանի, թե դուք ուզենայիք ծառայության մտնել, ջանայիք գրավել կյանքում որևէ տեղ,— գրում էր Ռուբը։— Բայց դա անհնար է, դուք անցյալում ապրել եք չափազանց անառակ ու անկարգ։ Ես հասկանում եմ, որ դուք կշտամբելի չեք այդ բանում։ Դուք վարվում էիք ձեր բնության համաձայն և ձեր նախկին սովորություններին համապատասխան։ Եվ ես չեմ կշտամբում ձեզ, Մարտին, մի՛ մոռանաք այդ։ Պարզվեց, որ իմ հայրիկն ու մայրիկը իրավացի էին. մենք իրար չենք սազում, և պիտի ուրախ լինենք որ դա պարզվեց ոչ չափազանց ուշ... Մի՛ փորձեք տեսակցել ինձ հետ,— եզրափակում է Ռուբը,— այդ տեսակցությունը հավասարապես դժնդակ կլիներ և մեր երկուսի, և իմ մայրիկի համար։ Առանց այն էլ ես զգում եմ, որ շատ վիշտ եմ պատճառել նրան և բավական ժամանակ է հարկավոր ինձ փարատելու համար այն»։

Մարտինն ուշադիր կարդաց նամակը կրկին ու կրկին։ Հետո նա նստեց և սկսեց գրել պատասխանը. նա շարադրեց նրան այն ամենը, ինչ ասել էր սոցիալիստական միտինգում՝ մեղադրելով թերթն ամենաանխիղճ զրպարտության մեջ։ Նամակի վերջում նա խոսեց իր ջերմ ու անփոփոխ սիրո մասին։ «Անպայման պատասխանեցեք ինձ,— գրեց նա,— գրեք միայն մի բան — սիրո՞ւմ եք ինձ, թե ոչ։ Դա ամենագլխավորն է»։

Բայց անցավ մի օր, երկու օր, և պատասխան չկար։ «Ուշացածը» մնում էր բաց, շարունակ նույն էջի վրա, իսկ սեղանի տակ գրվածքների կույտը շարունակում էր աճել։

Նա կանքումն առաջին անգամ զգում էր անքնության տանջանքը։ Նա երեք անգամ գնաց Մորզերի մոտ, բայց երեք անգամ էլ լակեյը հրաժարվեց ներս թողնել նրան։ Բրիսսենդենը պառկել էր անկողնում, և Մարտինը հաճախ գնալով նրա մոտ, չէր վճռվում հայտնել նրան իր դառնությունները։

Իսկ Մարտինը շատ դառնություններ ուներ։ Ռեպորտյորի անարդ արարմունքի հետևանքները գերազանցեցին այն ամենը, ինչ սպասում էր նա։ Նպարավաճառ պորտուգալացին իրոք մերժեց ապառիկ մթերք տալ նրան, իսկ կանաչավաճառ ամերիկացին հայտարարեց, որ Մարտինը հայրենիքի դավաճան ու թշնամի է և, հայրենասիրության նոպայից բռնված, մինչև անգամ ջնջեց Մարտինի հաշիվը՝ արգելելով նրան գալ իր խանութը պարտք վճարելու համար։ Բոլոր հարևան բնակիչները թշնամաբար էին տրամադրված Մարտինի նկատմամբ, և նրանց վրդովմունքն օրեցօր աճում էր։ Ոչ ոք չէր ցանկանում հարաբերություն պահպանել դավաճան սոցիալիստի հետ։ Խեղճ Մարիան տանջվում էր սարսափով ու տարակույսներով, բայց շարունակում էր լոյալ մնալ։ Դրացի երեխաները, որոնք արդեն մոռացել էին ժամանակին Մարտինին այցելած շքեղ կառքի մասին, հիմա հեռվից բղավում էին. «խուլիդան» և «թափառաշրջիկ»։ Միայն Մարիայի երեխաներն էին մնում անհողդողդ, պաշտպանում էին նրան, մինչև անգամ քանիցս ճակատամարտ էին մղել նրա պատճառով և Մարիան, տեսնելով իր երեխաների երեսին կապտած տեղեր ու նրանց ջարդված քթերը, էլ ավելի էր հուսահատվում։

Մի օր փողոցում պատահելով Գերտրուդին՝ Մարտինը նրանից իմացավ այն, ինչ նա ենթադրում էր և դրանից առաջ,— այն, որ Բեռնարդ Հիգգինբոթամը սարսափելի չարացել է Մարտինի վրա, գտնում է, որ նա խայտառակել և հասարակական անարդանքի նշավակ է դարձրել ամբողջ ընտանիքը։ Նա պահանջել է, որ Մարտինը չհամարձակվի ոտ դնել նրանց տունը։

— Հեռացի՛ր որևէ տեղ, Մարտին,— խնդրում էր Գերտրուդը։ Մեկնի՛ր և մտիր որևէ աշխատանքի։ Երբ այս բոլորը կանցնի, կարող ես նորից վերադառնալ։

Մարտինը գլուխը շարժեց և ոչ մի բավարար բացատրություն չտվեց։ Եվ ինչպե՞ս կարող էր բացատրել։ Նրա և իր ընտանիքի անդամների միջև անդունդ էր բացվել։ Նա արդեն չէր կարող անցնել այդ անդունդից։ Միծաղելի է Գերտրուդին բացատրել նիցշեականության և սոցիալիզմի միջև եղած տարբերությունը։ Ոչ մի լեզվում չկան այնպիսի բառեր, որոնցով նա կարողանար բացատրել այդ մարդկանց իր հայացքներն ու արարքները։ Նրանց բոլոր դատողությունները հանգում էին մի բանի. գո՛րծ գտիր։ Դա էր միշտ առաջին և վերջին խոսքը։ Դրանով էլ սպառվում էր նրանց հասկացողությունների ամբողջ շրջանակը։ Գո՛րծ գտիր։ Ծառայությա՛ն մտիր։ «Ողորմելի, բթամիտ ստրուկներ,— մտածում էր Մարտինը՝ լսելով Գերտրուդին։— Զարմանալի չէ, որ ուժեղները տիրացել են աշխարհին։ Ստրուկներին կործանել է հենց նրանց սեփական ստրկամտությունը։ «Ծառայությունը» նրանց համար ոսկե կուռք է, որին նրանք խոնարհ երկրպագում են»։

Երբ Գերտրուդը դրամ առաջարկեց նրան, Մարտինը նորից բացասաբար շարժեց գլուխը, թեև գիտեր, որ մի քանի օրից դարձյալ կստիպվի գրավ դնել իր կոստյումը։

— Դու առայժմ մի՛ գնա Բեռնարդի մոտ,— պաղատում էր Գերտրուդը նրան։— Կանցնի մի երկու ամիս, նա կխաղաղվի, այն ժամանակ դու կարող ես մինչև անգամ խնդրել նրան, որ քեզ ծառայության վերցնի որպես սայլապան, եթե ուզես։ Իսկ եթե ես հարկավոր լինեմ քեզ, մեկին ուղարկիր իմ ետևից, երբ կուզես, և ես կգամ քեզ մոտ։ Լսո՞ւմ ես։

Գերտրուդը լացեց և գնաց իր գործին, իսկ Մարտինը նայելով նրա ծանր, հոգնած քայլվածքին, զգաց որ իր սիրտը ճմլվում է անտանելի թախիծից։ Եվ երբ նա նայում էր քրոջ ետևից, նիցշեականության շենքը հանկարծ սկսեց երերալ ու քանդվել։ Շատ հեշտ էր վերացականորեն խոսել ըստ-

բուկների դասակարգի մասին, բայց այնքան էլ հեշտ չի թեորիաները կիրառել իր մեթոդների նկատմամբ։ Իսկ եթե հարկավոր է ուժեղի կողմից ճնշվող տկարի օրինակ, գրա ամենալավը հենց Գերտրուդն է։ Մարտինը մինչև անգամ ծիծաղեց այդ պարադոքսի վրա։ Ի՞նչ նիցշեական է ինքը, եթե անձնատուր է լինում սենտիմենտների և իրականության հետ առաջին իսկ ընդհարման ժամանակ իր հայացքները սկսում են տատանվել. և վերջ ի վերջո այս բոպեին նույն այդ ստրկական բարոյականությունը չէ՞ որ հայտաբերվում է նրանում. մի՞թե քրոջը խղճալը ստրկական զգացում չի։ Իսկական ուժեղ մարդը պիտի բարձր մնա խղճահարությունից և կարեկցությունից։ Այդ զգացումները ծնունդ են առնում նկուղներում և հանդիսանում են լոկ թույլերի ու դժբախտների հոգևարքն ու մահամերձ ջղաձգությունները։

ԳԼՈՒԽ XL

«Ուշացածի» վրա աշխատանքն առաջ չէր գնում։ Խմբագրություններին ուղարկված բոլոր գրվածքները վաղուց հանգստավետ տեղ էին գտել սեղանի տակ։ Միայն մի գրվածք դեռ շարունակում էր դեգերել։ Դա Բրիսսենդենի «Աստղաբաշխական օրագրությունն» էր։

Մարտինի հեծանիվն ու սև կոստյումը նորից գրավ դրվեցին, իսկ գրամեքենայի վճարը սովորականի պես հետաձգվել էր։ Բայց այդ բոլորն արդեն բնավ չէր անհանգստացնում Մարտինին։ Նա պետք է ընտելանա իր նոր գրության հետ, իսկ առայժմ թող կյանքն ընթանա իր հերթին։

Մի քանի շաբաթ անց պատահեց այն, ինչ նա վաղուց էր սպասում։ Նա փողոցում հանդիպեց Ռութին։ Ճիշտ է, որ նա մենակ չէր, այլ իր եղբայր Նորմանի ընկերակցությամբ։

երկուսն էլ այնպես ձևացրին, որ իբր Մարտինին չճանաչեցին, իսկ երբ նա ուզում էր մոտենալ, Նորմանը փորձեց արգելք հանդիսանալ։

— Եթե դուք համարձակվեք մոտենալ իմ քրոջը,— ասաց նա,— ես կկանչեմ ոստիկանին. իմ քույրը չի ցանկանում խոսել ձեզ հետ, և ձեր անհարգությունը վիրավորական է։

— Հետո՞ ինչ,— մռայլ պատասխանեց Մարտինը,— կանչե՛ք ոստիկանին։ Այդ դեպքում ձեր անունը կերևա թերթերում։ Իսկ հիմա մի քիչ դենը գնացեք։ Ես պետք է խոսեմ Ռութի հետ։

— Ես ուզում եմ ձեր բերանից լսել այդ,— ասաց Մարտինը Ռութին։

Ռութը գունատվեց ու սարսռաց, բայց կանգ առավ և հարցական հայացքով նայեց նրան։

— Պատասխանեցե՛ք իմ այն հարցին, որը ես տվել եմ ձեզ իմ նամակում,— ասաց նա։

Նորմանը պատրաստվում էր մի անհամբեր շարժում անել, բայց Մարտինն իր հայացքով զսպեց նրան։

Ռութը շարժեց գլուխը։

— Դուք ձեր սեփական կամքո՞վ գործեցիք,— հարցրեց նա։

— Այո՛,— ասաց Ռութը հանդարտ, բայց հաստատ,— ես գործել եմ իմ սեփական կամքով։ Դուք այնքան խայտառակեցիք ինձ, որ հիմա ամաչում եմ հանդիպել իմ ծանոթների հետ։ Այժմ բոլորը խոսում են իմ մասին։ Ահա այն ամենը, որ ես կարող եմ ձեզ ասել։ Դուք ինձ դժբախտացրիք, ես այլևս չեմ ուզում տեսնել ձեզ։

— Ծանոթնե՞ր, բամբասա՞նք, թերթերի ստե՞ր։ Այդպիսի բաներ չեն կարող սիրուց ավելի ուժեղ լինել։ Նշանակում է, որ պարզապես դուք ինձ երբեք չեք սիրել։

Ռութի դժգույն դեմքը հանկարծ կարմրատակեց։

— Այն բոլորից հետո, ինչ պատահել է,— ասաց նա,—

Մարտին, դուք ինքներդ չեք գիտակցում, թե ի՞նչ եք ասում։ Ո՞ւմ տեղ եք դնում ինձ։

— Տեսնո՞ւմ եք, որ Ռուբը չի ուզում խոսել ձեզ հետ,— բացագանչեց Նորմանը, և քույր ու եղբայր թևանցուկ հեռացան։

Մարտինը նայեց նրանց ետևից և նորից մեքենայաբար ձեռքը կոխեց գրպանը՝ հանելու համար թուղթ և ծխախոտ, որոնք չկային այնտեղ։

Մինչև հյուսիսային Օկլենդ ճանապարհը կարճ չէր, բայց միայն գալով իր սենյակը՝ Մարտինը հասկացավ, որ անցել է այդ ճանապարհը։ Սթափվելով՝ նա տեսավ, որ նստել է մահճակալին. նա նայեց չորս կողմը՝ ցրված, ինչպես նայում է զարթնած լուսնոտը։ Սեղանին տեսնելով «Ուշացածը», Մարտինը մոտիկ քաշեց աթոռը և վերցրեց գրիչը։ Նրա բնավորության հատկանշական գիծն էր՝ մինչև վերջը հասցնել սկսած գործը։ Իսկ նրա առաջ դրած էր չավարտած աշխատություն։ Նա մի կողմ էր դրել այն մի այլ գործով զբաղվելու համար։ Հիմա այդ գործը վերջացել էր, և հարկավոր էր դարձյալ վերադառնալ «Ուշացածին»։ Հետո՞ ինչ է անելու — Մարտինը չգիտեր այդ։ Նա գիտեր միայն այն, որ նրա կյանքում բեկում է առաջացել։ Նա վերջացրեց հատվածը, և մնում էր ավարտել նախադասությունը՝ նախքան վերջակետ դնելը։ Ապագան չէր հետաքրքրում նրան։ Իր ժամանակին նա կիմանա, թե ինչ է սպասում նրան ապագայում։ Նրան այլևս ոչինչ չէր հետաքրքրում։ Նա անտարբեր էր ամեն ինչի նկատմամբ։

Մարտինը հինգ օր աշխատեց «Ուշացածի» վրա՝ առանց գնալու ոչ մի տեղ, առանց տեսակցելու ոչ մեկի հետ և գրեթե առանց ոչինչ ուտելու։ Վեցերորդ օրը առավոտյան ցրիչը նրան բերեց «Պարթենոնի» հրատարակչից մի նամակ։ Բանալով ծրարը՝ նա միանգամից տեսավ, որ «Աստղաբաշխական օրագրությունը» ընդունվել է։

«Այդ պոեմը մենք տվեցինք կարդալու միստեր Կարտրայտ Բրյուսին,— գրում էր հրատարակիչը,— և նա այնքան

նպաստավոր արտահայտվեց, որ հաճույքով կոպեկ այն մեր ժուռնալում։ Եթե մենք հեռաձգում ենք պոեմի հրատարակությունը օդոստոս ամսվան, դա լոկ նրա համար, որ Հուլիսի համարն արդեն շարված է։ Միստեր Բրիսսենդենին հաղորդեցեք մեր ամենախորին երախտագիտությունն ու հիացմունքը։ Խնդրում ենք ուղարկել նրա դիմանկարն ու կենսագրական տվյալները։ Եթե մեր առաջարկած հոնորարն անբավարար լինի, հաճեցեք հեռագրել, թե ինչպիսի՞ պայմաններ ընդունելի կհամարեք»։

Քանի որ առաջարկված հոնորարը կազմում էր երեք հարյուր հիսուն դոլար, Մարտինը վճռեց, որ չարժե հեռագրել։ Մնում է միայն Բրիսսենդենի համաձայնությունն առնել։ Վերջ ի վերջո իրավացի դուրս եկավ Մարտինը։ Գտնվեց մի խմբագիր, որը որոշ չափով հասկանում է իսկական պոեզիան։ Հոնորարն էլ հրաշալի էր՝ մինչև անգամ «դարաշրջանի պոեմի» համար։ Բացի այդ, Մարտինը գիտեր, որ Բրիսսենդենը համարում էր Կարտրայտ Բրյուսին բոլոր քննադատներից միակը, որն արժանի էր հարգանքի։

Մարտինը դուրս եկավ տնից, նստեց տրամվայ և նայելով ճանապարհին երևացող ու անհայտացող տներին ու խաչփողոցներին՝ ցավով մտածում էր այն մասին, որ նրան արդեն չի հուզում ոչ իր բարեկամի հաջողությունը, ոչ իր սեփական հաղթանակը։ Միացյալ Նահանգների լավագույն քննադատը արժանավորապես դնահատել է պոեմը և, հետևաբար, Մարտինը չէր սխալվում՝ պնդելով՝ որ իսկական գեղարվեստական աշխատությունը կարող է իրեն ուղի հարթել մամուլում լույս տեսնելու համար։ Բայց Մարտինն արդեն լուներ նախկին խանդավառությունը և շատ լավ էր հասկանում, որ ուզում է ավելի շուտ պարզապես տեսնել Բրիսսենդենին, քան հաղորդել նրան ուրախալի նորությունը։ Միայն հիմա Մարտինի մտքովն անցավ, որ «Ուշացածի» վրա աշխատանքի հինգ օրվա ընթացքում ոչ մի անգամ չի հիշել Բրիսսենդենին և նրանից ոչ մի տեղեկություն չունի։ Մարտինն առաջին անգամ լինելով հասկացավ, որ գտնվում է

հոգեկան ինչ-որ անկայության վիճակում, և նա ամոթ զգաց իր բարեկամի առաջ։ Բայց և ամոթը զգում էր թույլ կերպով։ Ոչ մի հույզ չէր ալեկոծում նրան, բայի ստեղծագործական հույզերից, որոնք առաջանում էին նրանում «Ուրջացածի» վրա աշխատելիս։ Մյուս բաների նկատմամբ նա անտարբեր էր։

Նա կարծես ինչ-որ մոռացության մեջ էր գտնվում։ Մարգաշատ փողոցները, որոնցով անցնում էր տրամվայը, նրան թվում էին հեռավոր ու անիրական, և նա շատ չիր զարմանա, եթե եկեղեցու մեծ զանգակատունը քանդվեր ու փոշի դառնար իր գլխի վերև։

Մտնելով հյուրանոց՝ նա ուղղակի գնաց Բրիսսենդենի սենյակը և ապշած կանգ առավ։ Սենյակը դատարկ էր և բոլոր առարկաներն այնտեղից դուրս էին բերել։

— Մի՞թե միստեր Բրիսսենդենը մեկնել է այլ տեղ,— հարցրեց Մարտինը դռնապանին։— Նա չի՞ թողել իր հասցեն։

— Դուք ոչինչ չե՞ք լսել,— հարցրեց մյուսն իր հերթին։

Մարտինը բացասաբար շարժեց իր գլուխը։

— Բոլոր թերթերը գրեցին դրա մասին։ Նրան գտան մեռած իր մահճում։ Ինքնասպանություն։ Կրակել էր գլխին։

— Նրան թաղե՞լ են արդեն։

Մարտինին թվաց, որ օտար, անծանոթ մի ձայն տվեց այդ հարցը։

— Ո՛չ։ Հետաքննությունից հետո դիակն ուղարկվեց արևելք։ Նրա հարազատների կողմից հրավիրված փաստաբանները կարգադրեցին ամբողջ այդ գործը։

— Ինչո՞ւ նրանք այդպես շտապեցին,— հարցրեց Մարտինը։

— Ինչպե՞ս թե շտապեցին։ Դա պատահեց հինգ օր առաջ։

— Հինգ օր առա՞ջ։

— Այո՛, հինգ օր։

— Ա՜,— ասաց միայն Մարտինը և հյուրանոցից դուրս եկավ։ Ճանապարհին նա հանդիպեց հեռագրատուն և հաղորդեց «Պարթենոնի» հրատարակչին, որ կարող է տպել պոեմը։ Հեռագիրն ուղարկեց վերադիր վճարով, որովհետև գրպանում մնում էր միայն հինգ ցենտ վերադարձի ծախսի համար։

Վերադառնալով տուն՝ Մարտինը նորից աշխատանքի անցավ։ Անցնում էին օրեր ու գիշերներ, և նա սեղանի առաջ նստած գրում էր։ Նա գնում էր միայն լոմբարդ, ուտում էր անտարբեր, եթե լինում էր որևէ բան, և նույնպես անտարբեր յոլա էր գնում առանց ուտելու, երբ բոլոր մթերքները սպառված էին լինում։ Թեև ամբողջ վիպակը նախապես հիմնականորեն մշակված էր գլուխ առ գլուխ և բոլոր մանրամասնություններով, բայց նա հանկարծ վճռեց այլ կերպ կառուցել կոմպոզիցիան, որի հետևանքով վիպակն երկարեց քսան հազար բառով։ Ոչ մի անհրաժեշտություն չկար այդքան մանրակրկիտ հարդարելու այդ վիպակը, բայց նա այլ կերպ աշխատել չէր կարող։ Նա գրում էր կարծես անզգայացած՝ դադարելով զգալ իրեն շրջապատող ամբողջ աշխարհը. նա դիմում էր իր անցյալ կյանքի ստեղծագործական ունակություններին, ինչպես ուրվականը մեռած է գալիս իրեն ծանոթ տեղերում։ Նա հիշեց, որ մեկը ինչոր տեղում ասել է, թե ուրվականը—դա մեռած մարդու ոգին է, բայց չի գիտակցում, որ ինքը մեռել է։ Եվ ահա Մարտինը մի պահ մտածեց, թե իր հետ էլ տեղի չի՞ ունենում այդպիսի բան։

Վերջապես հասավ այն օրը, երբ «Ուշացածը» ավարտվեց։ Գրամեքենաների խանութի գործակալն եկավ և, մահճակալին նստած, սպասեց, որ Մարտինը վերջացնի գրելը։ Մարտինը մեքենագրեց՝ «վերջ», և դա նրա համար իսկապես վերջ էր։ Որոշ թեթևացման զգացումով նա տեսավ, թե ինչպես գործակալը վերցրեց ու տարավ գրամեքենան։ Դրանից հետո նա ընկավ մահճակալին։ Նա բոլորովին թուլացել էր։ Աղցից։ Արդեն երեսունվեց ժամ էր, նա ոչինչ չէր կերել

և մինչև անգամ մոռացել էր ուտելը։ Նա անշարժ պառկած էր մահճակալին, և ինչ որ մշուշ աստիճանաբար պատում էր նրա գիտակցությունը։ Կիսաքուն վիճակում նա մրթմրթում էր անծանոթ մի հեղինակի ոտանավորը, որը հաճախ կարդացել էր Բրիսսենդենը։ Մարիան դռան ետևում կանգնած, անհանգիստ լսում էր նրա միօրինակ մրմունջը։ Բառերը ոչ մի նշանակություն չունեին Մարիայի համար. նրան վախեցնում էր այն, որ Մարտինը ինքնիրեն խոսում էր։

Հեռո՛ւ, քնա՛ր,
Երգին՝ վերջ...
Երգերը մեզմ թրթռացին,
Հանց տրտմության տեսիլներ սին,
Լուսե հեռվում խոր սուզվեցին...
Հեռո՛ւ, քնա՛ր,
Երգին՝ վերջ...
Երբեմն ես էլ էի երգում
Կանաչավառ այս անտառում,
Ուրախ էի ես անվերջ։
Իսկ հիմա չեմ կարող երգել,
Արցունքներն են ձայնս խեղդել,
Շիրմիս ճամփան եմ լուռ բռնել...
Հեռո՛ւ, քնա՛ր,
Երգին՝ վերջ...

Մարիան այլևս չկարողացավ զսպել իրեն. նա վազեց դեպի վառարանը, վերցրեց մի ման ապուր, նրա մեջ ածեց մի ու բանջարեղեն և փութաց Մարտինի մոտ։ Հենվելով դաստակին՝ Մարտինը սկսեց ուտել և հավաստիացնել Մարիային, որ իսկի էլ չի զառանցում և բոլորովին առողջ է։

Երբ Մարիան դուրս եկավ, Մարտինը նստեց մահճակալին և երկար մնաց այդ վիճակում՝ կուչ եկած և անմիտ նայելով մի կետի։ Հանկարծ նրա աչքով ընկավ առավոտյան փոստով ստացված մի ժուռնալ։ Դա «Պարթենոնն» է, մտածեց նա, օգոստոսի համարը, որի մեջ տպված պետք է լինի

«Աստղաբաշխական օրագրությունը»։ Ա՜հ, երանի Բրիսսենդենը ողջ լիներ։

Նա թերթեց ժուռնալը և հանկարծ ապշությունից քարացավ «Աստղաբաշխական օրագրությունը» զարդարված էր շրեղ վերնագրով և լուսանցքներում զետեղված՝ Բերդսլիի ոճով նկարված զարդանկարներով։ Վերնագրի կողքին տպված էր Բրիսսենդենի դիմանկարը, իսկ մյուս կողմում՝ բրիտանական դեսպանորդ սըր Ջոն Վելյուի դիմանկարը։ Խմբագրական ծանոթության մեջ ասվում էր, որ վերջերս սըր Ջոն Վելյուն ասել է, թե Ամերիկայում բանաստեղծներ չկան, և «Պարթենոնը», տպելով «Օրագրությունը», ուզում է պատասխանել նրան. «Ահա սըր Ջոն Վելյու, ծանոթացե՛ք»։ Դրված էր և Կարտրայտ Բրյուսի նկարը, որպես ամերիկյան մեծագույն քննադատի, և մեջբերվել էին նրա խոսքերը. «Մեկանում դեռ չի տպվել «Օրագրության» նման ոչ մի բան»։ Մանոթությունը վերջանում է այսպես.

«Մենք այժմ չենք կարող գնահատել «Օրագրության» բոլոր գեղեցկությունները. թերևս մենք երբեք չկարողանանք էլ լրիվ գնահատել դրանք։ Բայց կարդալով և վերընթերցելով այդ պոեմը՝ մենք հիացել ենք միստեր Բրիսսենդենի բառապաշարի հարստությամբ և քանիցս հարցրել ենք մեզ, թե ինչպե՛ս և ո՛րտեղից միստեր Բրիսսենդենը կարող էր քաղել բառերի այսպիսի պաշար և այդքան ճարտարությամբ շարահյուսել դրանք»։

Դրան հետևում էր ինքը՝ պոեմը։

«Լավ է, որ դու մեռար, խեղճ Բրիս»,— մտածեց Մարտինը՝ գետնին գցելով ժուռնալը։

Այդ բոլորն անարդ ու զզվելի էր՝ սիրտ խառնելու չափ, բայց իսկական զզվանք Մարտինը չէր զգում։ Նա ուզում էր բարկանալ, բայց պակասում էր էներգիան այդ անելու համար։ Մարտինը կարծես բթացել էր։ Արյունը սառել էր նրա երակներում և չէր ուզում այլևս ո՛չ եռալ, ո՛չ էլ պղտորվել։ Վերջ ի վերջո ի՞նչ առանձին բան է պատահել։ Այդ բոլորը կատարելապես համապատասխանում է բուրժուական հա-

սարակության սովորություններին, որի հանդեպ Բրիսսեն-դենն անչափ խոր ատելություն էր տածում։

— Խե՞ղճ Բրիս,— մրմնջաց Մարտինը։— Նա երբեք ինձ չէր նեղի այդ բանը։

Մեծ ճիգով վեր կենալով՝ Մարտինը դուրս քաշեց արկղը, ուր առաջներում դրամեքենայի համար թուղթ էր պահում։ Քրքրելով արկղը՝ նա այնտեղից հանեց իր բարեկամի գրած տասնյակ ոտանավորները։ Նա դանդաղորեն մի առ մի պատռեց նրանք և գցեց զամբյուղը։ Վերջացնելով այդ գործը՝ նա նորից նստեց մահճակալին և իր տրտում հայացքն ուղղեց դեպի դատարկ տարածությունը։

Ո՛րքան ժամանակ նստած մնաց այդպես—ինքն էլ չէր իմանում. վերջապես մշուշապատ տարածությունից նրա առաջ կանգնեց պայծառ, սպիտակ, երկար մի շերտ։ Դա շատ տարօրինակ էր։ Բայց ուշադիր նայելով, Մարտինը տեսավ, որ դա մակընթացության գիծն է խաղաղ օվկիանոսում մարջանների խութերի մի շարքում։ Մի ակնթարթ հետո Մարտինը սպիտակ փրփուրում տեսավ փոքր, խարխուլ մի մակույկ։ Բրոնզագույն, երիտասարդ մի աստված, ծիրանագույն կերպասով գոտևորված, նստած էր մակույկի ետևի մասում, մխրճելով թիերը շողշողուն ալիքների մեջ։ Մարտինը ճանաչեց նրան։ Դա Մոտին էր—բնիկների պարագլուխ Տամիի կրտսեր որդին։ Հետևաբար, դա տեղի էր ունենում Թաիթիի ափերին, և մարջանների խութի ետևում տարածվում էր Պապարայի հիասքանչ երկիրը, ուր հենց գետարերանի մոտ գտնվում էր պարագլխի եղեգնյա հյուղակը։

Երեկոյան դեմ էր, և Մոտին վերադառնում էր ձկնորսությունից։ Նա սպասում էր մեծ կոհակին, որը խութի վրայով կանցկացներ նրան։ Մարտինը տեսավ և ինքնիրեն՝ նստած մակույկում, ինչպես նա նստել էր շատ անգամ, սպասելով Մոտիի ազդանշանին, որպեսզի մոլեգին աշխատի թիերով, հենց որ նրանց վրա կհասնի փիրուզագույն հսկայական կոհակը։ Հետևյալ պահին նա արդեն հանդիսատես չէր։ Իրոք նա նստել էր մակույկում և մոլեգին թիավարում

էր՝ Մոտիի վայրենի աղաղակների ուղեկցությամբ։ Նրանք արագ սուրացին դեպի առաջ, գոռոցի ու շաչյունի միջև, թրջվելով ցայտող կաթիլներով, և հանկարծ հասան խաղաղ, անշարժ մի լճակ։ Մոտին ծիծաղելով սրբում էր իր աչքերին ցայտած աղի ջուրը, իսկ մակույկը հանդարտ սահում էր դեպի մարջանի ափը, ուր բարձրաբերձ հնդընկույզների միջև գտնվում էր Տամիի հյուղակը՝ մայր մտնող արևի ճառագայթներից ոսկեզօծված։

Սակայն այդ տեսիլը հանկարծ մշուշով պատվեց, և Մարտինի աչքերի առաջ նորից պարզվեց իր նեղլիկ խցի անկարգ վիճակը։ Նա զուր էր ճգնում դարձյալ տեսնել Թաիթին։ Նա գիտեր, որ հիմա արմավենիների պուրակում հնչում են երգեր, իսկ աղջիկները լուսնկա գիշերով պարում են։ Բայց նա ոչինչ չէր կարող տեսնել՝ բացի թղթերով ծածկված սեղանից, դատարկ տեղից, ուր առաջ գրամեքենան էր դրած և վաղուց չվացված պատուհանից։ Նա մի հառաչ արձակելով փակեց աչքերն ու քնեց։

ԳԼՈՒԽ XLI

Ամբողջ գիշերը Մարտինը քնեց ծանր քնով, իսկ առավոտյան նրան զարթեցրեց ցրիչը։ Մարտինն անտարբեր բացեց ծրարները։ Նրանցից մեկում մի չեկ կար քսաներկու դոլլարի, որը ուղարկել էր «ծովահենների» ժուռնալներից մեկը։ Գրեթե մեկուկես տարի էր, որ նա աշխատում էր ստանալ այդ դրամը։ Բայց հիմա նա բոլորովին սառնասիրտ վերաբերվեց նրա ստացվելուն։ Նա արդեն չէր խանդավառվում, ինչպես առաջ, հրատարակչական չեկեր ստանալիս։ Անցյալում այդ չեկերը թվում էին նրա ապագա մեծ հաջողությունների գրավականը, իսկ հիմա նրա առաջ կար պարզապես քսաներկու դոլլար, որոնցով կարելի էր ուտելու բան գնել։ Ուրիշ ոչինչ։

Մի այլ չեկ ստացվել էր Նյու-Յորքի մի ժուռնալից՝ հոնորար վաղուց ընդունված զավեշտական ոտանավորների համար։ Այդ չեկը տասը դոլլարի էր։ Մարտինի գլխովն անցավ մի միտք, որը նա սառնարյուն քննարկեց։ Նա չգիտեր, թե ի՞նչ է անելու հետագայում և առհասարակ ոչ մի անհրաժեշտություն չէր տեսնում մի բան անելու։ Այնուամենայնիվ պետք է ապրել, վճարել պարտքերը։ Ավելի ձեռնտու չէ՞ր լինի ծախսել այդ տասը դոլլարը փոստանիշների վրա և նորից ուղարկել ճամփորդության՝ սեղանի տակ թաքված գրվածքների ամբողջ կույտը։ Կարող է պատահել, որ նրանցից մեկը կամ երկուսը ընդունվեն որևէ խմբագրության կողմից։ Իսկ դա նրան հնարավորություն կտա ապրելու։ Մարտինն այդպես էլ արեց։ Չեկերը մանրելով Օկլենդի բանկում՝ նա գնեց նամականիշներ։ Բայց վերադառնալ իր խցիկը և ճաշ եփել դա անտանելի թվաց նրան։ Կյանքումն առաջին անգամը նա վճռեց ուշադրություն չդարձնել պարտքերի վրա։ Նա շատ լավ գիտեր, որ կարելի է համեստ ճաշ պատրաստել տանը տասնհինգ-քսան ցենտով։ Սակայն նա գնաց «Ֆորում» սրճարանը և այնտեղ պատվիրեց ճաշ, որը նրա վրա նստեց երկու դոլլար։ Նա մատուցողին պարգև տվեց հիսուն ցենտ և նույնքան էլ հատկացրեց եգիպտական ծխախոտների։ Ռումի արգելելուց հետո նա դեռ չէր ծխել։ Իսկ հիմա ոչ մի պատճառ չկար, որ նա զրկի իրեն այդ բավականությունից։ Նա մեծ ցանկություն ուներ ծխելու։ Եվ արժի՞ դրամ խնայել։ Իհարկե, նա կարող էր հինգ ցենտով գնել ծխախոտ և թուղթ, որը բավական էր քառասուն գլանակ փաթաթելու համար, բայց ի՞նչ միտք ունի դա։ Դրամն արդեն ոչ մի նշանակություն չուներ նրա համար՝ բացի այն, որ նրանով կարելի է այժմ, այսօր, որևէ բան գնել։ Նա ձեռքից բաց էր թողել ղեկը, ուղեցույց քարտեզ չուներ և չէր ձգտում հասնել ոչ մի նավահանգիստ։ Լողալով հոսանքի ուղղությամբ՝ նա ավելի քիչ էր զգում կյանքը, իսկ կյանքի զգացողությունը ցավ էր պատճառում։

Օրերն անցնում էին իրար ետևից, միօրինակ, և Մար-

տինն այժմ քնում էր օրական ութ ժամ։ Թեպետ, սպասելով չեկերի, նա ուտում էր ճապոնական փոքրիկ ճաշարաններում, ուր ճաշն արժեր տասը ցենտ, բայց և այնպես մինչև անգամ չաղացավ։ Նրա այտերը լցվեցին, որովհետև նա հիմա չէր մաշում իրեն անքնությամբ և լարված աշխատանքով։ Նա ոչինչ չէր գրում, իսկ գրքերը դարակում խաղաղ հանգրոտանում էին։ Նա հաճախ գնում էր քաղաքից՝ դրսի բլուրները, ամբողջ ժամեր անց էր կացնում պուրակում։ Նա չուներ ոչ բարեկամներ, ոչ էլ ծանոթներ և չէր էլ ուզում ունենալ։ Ինչի՞ն էին հարկավոր նրանք։ Մարտինը սպասում էր մի նոր գրգիռ—ինքն էլ չէր իմանում՝ ո՛րտեղից—որը մղի նրան վերսկսելու իր կանգ առած կյանքը։ Իսկ առայժմ նրա գոյությունը մնում էր տաժանելի, միօրինակ, գատարկ և բոլորովին անիմաստ։

Մի օր նա գնաց Սան-Ֆրանցիսկո՝ «իսկական մարդկանց» հետ տեսակցելու համար։ Բայց հասնելով նրանց տան շեմքը, նա շուռ եկավ և արագ հեռացավ՝ հետտոների մութ անկյուններով։ Այն միտքը, թե հիմա կլսի փիլիսոփայական վեճեր, այնքան վախեցրեց նրան, որ նա գրեթե վազեց՝ երկյուղ կրելով, որ «իսկական մարդկանցից» որևէ մեկը կարող է հանդիպել և ճանաչել նրան։

Երբեմն նա աչքի էր անցկացնում ժուռնալներն ու թերթերը՝ հետաքրքրվելով, թե ի՞նչ են գրում «Օրագրության» մասին։ Այդ պոեմը մեծ աղմուկ հանեց։ Բայց ի՞նչ աղմուկ։ Բոլորն էլ կարդացել են և բոլորն էլ վիճում են. պոե՞մ է դա, թե ոչ։ Տեղական թերթերը լի են գիտական հոդվածներով, հեղնական նկատողություններով, ընթերցողների նամակներով—բոլորն էլ այդ պոեմի մասին։ Էլեն Դելլա Դելմարը (որին թմբկահարությամբ հռչակել էին Միացյալ Նահանգների մեծագույն բանաստեղծուհի) չցանկացավ իր կողքին տեղ տալ Բրիսսենդենին Պեգասի վրա և երկարաբան նամակներ էր գրում ընթերցող հասարակությանը՝ ապացուցելով, որ նա իսկի էլ բանաստեղծ չի։

«Պարթենոնը» իր հաջորդ համարում շնորհավորում էր

իրեն այն մեծ շարժման համար, որ ստեղծեց գրական աշխարհում, ծաղրում էր սըր Վիլյուին և անխղճորեն օգտագործում էր Բրիսսենդենի մահը՝ ռեկլամի համար։ Մի թերթ, որը իրը կես միլիոնից ավելի բաժանորդներ ունի, տպել էր Էլեն Դելլա Դելմարի պոեմը, որի մեջ նշավակվում էր Բրիսսենդենը։ Չհանգստանալով դրանով՝ բանաստեղծուհին գրել էր և մի պարոդիա «Օրագրության» մասին։

Մարտինը հաճախ ուրախանում էր, որ նրա բարեկամը մեռավ՝ առանց այս բոլորը տեսնելու։ Նա անչափ ատում էր ամբոխը, իսկ հիմա նրա համար ամենանվիրական ու ամենասուրբ բանը շպրտված է ամբոխի անարգանքին։ Նրա ստեղծած գեղեցկությունն ամեն օր կենդանահերձության էր ենթարկվում։ Ամեն մի չնչին ժուռնալիստ ուրախանում էր, որ առիթ ներկայացավ մի ավելորդ անգամ փայլել Բրիսսենդենի մեծության ճաճանչներում։ Մի թերթ գրում էր. «Ինչպես հաղորդում է մի ջենտլմեն, նա դեռ մի քանի տարի առաջ գրել է բոլորովին համանման, միայն թե նրանից ավելի լավ մի պոեմ»։ Մի այլ թերթ, լրջության տենդից բռնված կշտամբում էր Էլեն Դելլա Դելմարին նրա պարոդիայի համար. «Միսս Դելմարը, գրելով այդ պատասխանը, ակներև կերպով մոռացել է, որ մեծ բանաստեղծը միշտ պետք է հարգի մյուսին, թերևս ավելի մեծին։ Կարող է պատահել, որ միսս Դելլա Դելմարը պարզապես նախանձում է «Օրագրության» հեղինակին։ Բայց կգա այն օրը, երբ նա, ինչպես և բոլորը, կհասկանան այդ աշխատության ամբողջ գեղեցկությունը և, թերևս, կփորձի գրել նման մի բան»։

Քարոզիչներն «Օրագրությունը» դարձրին իրենց քարոզների բնարանը, և նրանցից մեկը, որը փորձել էր պաշտպանել այդ պոեմը, մեղադրվեց հերետիկոսության մեջ։ Վեհ պոեմը պատվարժան հասարակության զվարճության առարկա դարձավ։ Կոմիկ ոտանավորներ գրողներն ու ծաղրանկարիչները մրցում էին իրար հետ ծիծաղեցնելով ընթերցողներին, ֆելիետոն գրողները նույնպես մարդվում էին սրամտության մեջ պատմելով, թե ինչպե՛ս Չարլի Ֆրենչեմը

մտերմորեն հայտնել է Ակրչի Ջեննինգսին, որ «Օրագրություն»-ից հինգ տող կարող է դրդել մարդուն ծեծել մի հաշմանդամի, իսկ տասը տողը՝ գլխիվայր գետը գցել իրեն։

Մարտինը չէր ծիծաղում, բայց չէր էլ կրճտում ատամները կատաղությունից։ Նա միայն չափազանց տխուր էր։ Այն բանից հետո, երբ սիրուց ստեղծված նրա ամբողջ աշխարհը փուլ եկավ, մամուլի և պատվարժան հասարակության ծամածռություններն այլևս չէին կարող խոցել նրան։ Բրիսսենդենի դիտողությունը ժուռնալների մասին բոլորովին իրավացի էր, բայց Մարտինը միայն տարիներ անց համոզվեց նրա իրավացիության մեջ։ Ժուռնալներն արդարացրին այն ամենը, ինչ ասել էր Բրիսսենդենը նրանց մասին, մինչև անգամ ղերադանցեցին նրա ասածները։ Լա՛վ, դա արդեն վախճանն է, մռայլ կերպով մխիթարում էր իրեն Մարտինը։ Նա լծել է իր սայլակը մի աստղի, իսկ աստղը շուռ տվեց նրան գարշահոտ ճահճի մեջ։

Եվ նրա աչքին դարձյալ երևացին հեռավոր Թահիթիի հիանալի, պայծառ ու ջինջ տեսիլքները։ Ահա հարթ Պոումոտուն, ահա բլրաշատ Մարկիզյան կղզիները։ Նրան հաճախ թվում էր, որ կանգնած է առևտրական երկկայմանավի տախտակամածին, կամ փոքր, դյուրաբեկ միակայմ առագաստանավի վրա, որն ընթանում է Պապետեի խութերի մոտով կամ Նուկա-Խիվայի մարգարտյա ծանծաղուտների երկայնքով դեպի Տայոխեի ծովախորշը, ուր—Մարտինը գիտեր այդ — Տամարին մի խոզ կմորթի ի պատիվ նրա ժամանելուն, իսկ Տամարիի աղջիկները կշրջապատեն նրան ծիծաղելով ու երգելով և կզարդարեն նրան ծաղկեպսակներով։ Խաղաղական օվկիանոսը համառորեն կանչում էր նրան, և Մարտինը գիտեր, որ վաղ թե ուշ նա կպատասխանի այդ կոչին։ Իսկ այժմ նա գնում էր հոսանքով և հանգըստանում՝ գիտության մեծ թագավորության մեջ երկարատև ու հոգնեցուցիչ ճամփորդությունից հետո։

Ստանալով «Պարթենոնից» եռեք հարյուր հիսուն դոլլարի չեկ Մարտինը ստացական վերցնելով տվեց այն Բրիսսեն-

դենի կտակակատարին, և ինքն էլ իր հերթին ստացական տվեց նրան, թե պարտական է Բրիսսենդենին հարյուր դոլլար։

Սակայն ճապոնական փոքր ճաշարաններ հաճախելու հնարավորությունն արդեն վերջանում էր Մարտինի համար։ Հենց այն պահին, երբ նա դադարեցրեց պայքարը, բախտի անիվը շուռ եկավ։ Բայց նա շուռ եկավ չափազանց ուշ։ Առանց որևէ հուզմունքի բանալով «Միլլենիումից» ստացված նամակի ծրարը Մարտինը գտավ այնտեղ մի չեկ երեք հարյուր դոլլարի։ Դա «Արկածի» համար ուղարկած հոնորարն էր։ Մարտինի բոլոր պարտքերը, ներառյալ վաշխառուի պարտքերը բոլոր տոկոսներով, հարյուր դոլլարից պակաս էին։ Վճարելով բոլոր դրանք և ուղարկելով հարյուր դոլլար Բրիսսենդենի կտակակատարին, Մարտինն ուներ իր համար ահագին մի գումար — հարյուր դոլլար։ Նա պատվիրեց իրեն համար մի լավ կոստյում և սկսեց ճաշել քաղաքի լավագույն կաֆեներում։ Նա շարունակում էր բնակվել Մարիայի մոտ նույն խցիկում, բայց նրա նոր կոստյումն այնքան ուժեղ տպավորություն թողեց բոլոր հարևանների վրա, որ երեխաներն արդեն չէին համարձակվում անվանել նրան ոչ թափառաշրջիկ, ոչ խուլիգան, և հարգանքով էին նայում նրան՝ կտուրներին ու վանդակապատներին նստած։

Նրա հավայական պատմվածքը՝ «Վիկի-Վիկին» գնեց «Ուորրենի ամսաթերթը» երկու հարյուր հիսուն դոլլարի։ «Հյուսիսային տեսությունը» տպեց «Գեղեցկության օրրանը», իսկ «Մակինտոշի ժուռնալն» ընդունեց «Գուշակուհին» — Մերիենի պատվին նրա գրած ոտանավորը։ Հրատարակիչներն ու ընթերցողները վերադարձան ամառվա արձակուրդից հետո, և գրվածքներն անսովոր կերպով արագ շրջանառություն էին անում։

Մարտինը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ այն բոլորը, որ երկու տարվա ընթացքում այնքան համառորեն մերժվում էր, հիմա ընդունվում է դրեթե ամբողջովին։ Առաջ նրա գրվածքներից ոչ մեկը լույս չէր

տեսնում։ Առաջվա պես Օկլենդի սահմաններից դուրս նա ծանոթ չէր ոչ որի, իսկ Օկլենդի սակավաթիվ բնակիչները, որոնց թվում էր, թե ճանաչում են նրան, նա հայտնի էր որպես թունդ սոցիալիստ՝ «կարմիրներից»։ Այդ հանկարծական փոփոխությունը չէր կարելի բացատրել ոչնչով։ Դա լոկ ճակատագրի խաղ էր։

Այն բանից հետո, երբ մի քանի ժուռնալներ մերժեցին «Արևի ամոթանքը», Մարտինը, հիշելով իր բարեկամի խորհուրդը, վճռեց առաջարկել այն գրքերի որևէ հրատարակչության։ Մի քանի անհաջողություններից հետո այդ գրվածքն ընդունվեց ամենախոշոր ֆիրմաներից մեկի՝ Սինգլտրի, Դարնլեյ և Ընկերության կողմից։ Պատասխանելով Մարտինի խնդրանքին, որ կանխավճար ուղարկեն նրան, հրատարակիչը գրեց, որ դա ընդունված չի նրանց մոտ, և որ այդպիսի գրքեր հազիվ թե վաճառվեն հազար օրինակից ավելի։ Մարտինը հաշվեց, որ եթե գիրքը վաճառվի հատը մի դոլլարի նա կստանա, տասնհինգ տոկոսի հաշվով, հարյուր հիսուն դոլլար։ Դրանից հետո նա որոշեց, որ հետագայում կգրի միայն գեղեցիկ գրականության երկեր։ «Արկածը» «Արևի ամոթանքից» չորս անգամ կարճառոտ էր, բայց երկու անգամ ավելի դրամ բերեց նրան։ Ժամանակին թերթերում իր կարդացած տեղեկությունները գրողների հոնորարների մասին վերջ ի վերջո ուղիղ դուրս եկան։ Առաջնակարգ ժուռնալներն իրոք վճարում էին՝ հենց որ գրվածքն ընդունվում է, և վճարում էին շատ լավ։ «Միլլենիումը» վճարեց նրան մինչև անգամ ոչ թե երկու, այլ չորս ցենտ ամեն մի բառին։ Բացի այդ, երևում է, որ նրանք գնում էին և լավ բաներ,— օրինակ՝ նրանք գնեցին իր գործերը։ Այդ միտքն ակամա ծիծաղ առաջացրեց Մարտինի մոտ։

Նա գրեց Սինգլտրի, Դարնլեյ և Ընկերության, որ համաձայն է վաճառել «Արևի ամոթանքը» այդ ֆիրմային, որպես նրա լրիվ սեփականությունը հարյուր դոլլարի, բայց հրատարակչությունը չուզեց ռիսկ անել։ Ընդամենը Մարտինը

կարիք չուներ դրամի, որովհետև նրա գրեթե բոլոր դրվածքները, միաժամանակ դեգերելուց հետո, ընդունվել էին և դրանց վճարը ստացվել։ Մարտինը մինչև անգամ ընթացիկ հաշիվ բացեց բանկում մի քանի հարյուր դոլլար գումարի։ «Ուշացածը» կարճատև ուղևորությունից հետո ապաստան գտավ Մերեդիտ-Լոուել հրատարակչության մոտ։ Հիշելով իր խոստումը Գերտրուդին, թե հարյուրապատիկ ավելիով կվերադարձնի նրա տված հինգ դոլլարը, Մարտինը դրավոր խնդրեց հրատարակչությանը հինգ հարյուր դոլլար ուղարկել որպես կանխավճար։ Նա զարմացավ, որ անմիջապես այդ գումարի չեկ ուղարկվեց իրեն։ Մարտինը մանրեց չեկը ոսկի դրամի և հեռախոսեց Գերտրուդին, որ ուզում է տեսակցել նրա հետ։

Գերտրուդը եկավ շնչասպառ, որովհետև շատ էր շտապել։ Նախադգալով ինչ-որ վատ բան, նա իր պայուսակը դրեց իր մոտ գտնված ամբողջ կանխիկ դրամը. նա այնքան վստահ էր, որ Մարտինի հետ ինչ-որ դժբախտություն է պատահել, որ դրկելով նրան իսկույն լացեց և հետը բերած դրամը սկսեց կոխել նրա ձեռքը։

— Ես կգայի քեզ մոտ,— ասաց Մարտինը,— բայց չէի ուզում կռվել միստեր Հիգգինբոթամի հետ. իսկ դա, հավանական է, տեղի կունենար։

— Ոչինչ, նա շուտով կհանգստանա,— վստահեցնում էր նրան քույրը՝ ջանալով գուշակել, թե ի՞նչ է պատահել Մարտինին,— միայն դու շտապիր գործի մոնել։ Բեռնարդը սիրում է, որ մարդիկ պարապեն ազնիվ աշխատանքով։ Թերթում երևացած այդ հոդվածը բոլորովին կատաղեցրել էր նրան։ Ես նրան երբեք չէի տեսել այդպիսի մոլեգնության մեջ։

— Ես չեմ ուզում ծառայության մտնել,— ժպտալով ասաց նրան Մարտինը,— դու կարող ես իմ կողմից հաղորդել այդ նրան։ Ինձ ոչ մի ծառայություն հարկավոր չի։ Ահա քեզ դրա ապացույցը։ Եվ նա քրոջ փեշին պարպեց հարյուր հատ փայլուն և հնչեղ ոսկի դրամ։

— Հիշո՞ւմ ես, դու ինձ հինգ դոլլար ավեցիր, երբ ես տրամվայի դրամ չունեի։ Ահա քեզ այս հինգ դոլլարը և իննսունինը հատ նրա եղբայրները տարբեր տարիքի, բայց նույն արժողությամբ։

Եթե Գերտրուդը եկավ Մարտինի մոտ անհանդիստ վիճակում, հիմա նրան պատել էր խուճապային սոսկում։ Այդ սոսկումն ամեն տարակույսից վեր էր։ Նա չէր կասկածում, այլ վստահ էր։ Նա սարսափած նայում էր Մարտինին՝ դողալով ամբողջ մարմնով, վախենալով դիպչել այդ կլոր ոսկիներին, կարծես նրանք դժոխային կրակով այրելիս լինեին նրան։

— Այդ բոլորը քոնն է,— ասաց Մարտինը ծիծաղելով։

Գերտրուդը բարձրաձայն հեծկլտաց։

— Խե՞ղճ տղա, խե՞ղճ տղա,— կոծում էր նա։

Առաջին պահին Մարտինը զարմանքից քար կտրվեց, բայց իսկույն հասկացավ իր քրոջ հուզմունքի պատճառը և ցույց տվեց նրան դրքերի հրատարակչության նամակը։ Գերտրուդը դժվարությամբ կարդաց այն, սրբեց աչքերը և վերջապես անվստահ հարցրեց.

— Նշանակում է, դու այդ դրամն աղնվորե՞ն ես ստացել։

— Իհարկե, ես մինչև անգամ չեմ շահել դա, այլ վաստակել եմ։

Գերտրուդի աչքերում հույսը շողաց, և նա ուշադիր կարդաց նամակը։ Մարտինը բավական դժվարությամբ բացատրեց նրան, թե ինչի՛ համար է ստացել այդպիսի մեծ գումար։ Ավելի դժվար էր բացատրել, որ այդ դրամները պատկանում են Գերտրուդին, և որ ինքը Մարտինը կարիք չունի նրանց։

— Ես այդ դրամները ավանդ կդնեմ բանկը քո անվան, —վճռեց Գերտրուդը։

— Ո՛չ, եթե դու չվերցնես, ես դրանք կտամ Մարիային։ Նա կկարողանա օգտագործել այն։ Ես պահանջում

եմ, որ դու աղախին վարձես, և ինքդ հանգստանաս, ինչպես հարկն է։

— Բայց և այնպես ես կպատմեմ Բեռնարդին,— ասաց Գերտրուդը հրաժեշտ տալիս։

Մարտինը թեթևակի կիտեց հոնքերը։

— Լա՛վ,— ասաց նա վերջապես,— կարող է պատահել, որ նա հիմա ճաշի կհրավիրի ինձ։

— Իհարկե, կհրավիրի։ Այսինքն ես պարզապես վստահ եմ այդ մասին,—եռանդագին բացագանչեց քույրը, և պինդ գրկելով նրան, համբուրեց։

ԳԼՈՒԽ XLII

Հասավ մի օր, երբ Մարտինը զգաց իրեն բոլորովին միայնակ։ Նա առողջ էր և ուժեղ, իսկ ոչ մի գործ չուներ անելու։ Դադարելով սովորելուց ու գրելուց, կորցնելով Բրիսսենդենին, զրկվելով Ռութի սիրուց՝ նա անսովոր դատարկություն էր զգում իր կյանքում։ Նա զուր էր փորձում այդ դատարկությունը լցնել ճաշարաններով ու եգիպտական գլանակներով։ Ճիշտ է, որ Հարավային ծովերն անդիմադրելիորեն ձգում էին նրան, բայց նրան թվում էր, որ Միացյալ Նահանգներում իր անելիքները դեռ չի ավարտել։ Շուտով կտպվեն նրա երկու գրքերը. թերևս նրա այլ գրվածքներն էլ կգտնեն հրատարակիչներ։ Իսկ դա նշանակում է՝ դրամ։ Արժե սպասել, որպեսզի ոսկով լի մի տոպրակ գնա օվկիանոսը։ Մարկիզյան կղզիներում նա գիտեր մի հիանալի հովիտ, որը կարելի է գնել չիլիական հազար դոլլարով։ Այդ հովիտը մոտ տասը հազար ակր տարածությամբ, ձգվում էր պայտանման փոքր ծովածոցից մինչև բարձրաբերձ, իրենց գագաթներով ամպերի մեջ խրված լեռները։ Նա ամբողջովին ծածկված էր արևադարձային բուսականությամբ, որի մեջ քիչ չկային կաքավներ ու վարազներ։ Իսկ լեռներում արածում էին վայրենի շների ոհմակներից հալածական վայրենի

այծերի հոտեր։ Այդ վայրը բոլորովին անբնակ ու անմշակ էր։ Եվ այդ բոլորը—հովիտը ծովածոցի հետ միասին—կարելի էր գնել չիլիական հազար դոլլարի։

Որքան հիշում էր Մարտինը, այդ ծովածոցն արտակարգ գեղեցիկ և խոր էր. այնտեղ կարող էին կանգնել օվկիանոսային մեծ նավեր, և խաղաղ օվկիանոսի մարշրուտային տեղեկատուն հանձնարարում էր այն՝ որպես օվկիանոսի այդ մասում լավագույն նավամատույց։ Մարտինը կգնի մի երկկայմանավ, զբոսանավի տիպի արագընթաց մի նավակ և կպարապի առևտրով ու մարգարտի որսով։ Նրա բազան կլինի հովտում։ Այնտեղ նա կկառուցի իրեն համար նախնադարյան եղեգնյա հյուղակ—այնպիսին, որի մեջ ապրում է ցեղապետ Տամին, և իր մոտ ծառայության համար կվարձի սևամորթ բնիկներին։ Նա կընդունի իր մոտ Տայոխեից եկող ֆակտորներին, առևտրական նավերի կապիտաններին, մաքսանենգներին և ծովային ազնիվ թափառաշրջիկներին։ Նրա տունը բաց կլինի բոլորի համար, և նա արքայավայել կընդունի իր հյուրերին։ Թերևս այնտեղ նա կմոռանա ժամանակին իր կարդացած գրքերն ու աշխարհը, որն իրականության մեջ միայն պատրանք դուրս եկավ։

Բայց դրա համար հարկավոր է նստել Կալիֆորնիայում և սպասել, մինչև որ տոպրակը լցվի ոսկով։ Դրամներն արդեն սկսեցին հոսել դեպի նա։ Եթե իր գրքերից թեկուզ մեկը վաճառվի, նա հեշտությամբ կսաղացնի բոլոր գրվածքները։ Կարելի է ժողովածուներ կազմել մանր պատմվածքներից և ոտանավորներից, որպեսզի ավելի շուտ իրականանան և հովիտը և ծովածոցը, և երկկայմ նավը։ Նա այլևս երբեք չի գրի։ Դա վճռել է հաստատ և անդարձ։ Բայց հիմա, երբ գրքերը տպվում են, հարկավոր է մի բան անել։ Այսպիսի անզգայության և ամբողջ աշխարհի նկատմամբ անտարբերության մեջ ապրել չի կարելի։

Մի անգամ իմանալով, որ կիրակի օրը Շելլ-Մաունդի պարկում տեղի է ունենալու որմնադիրների զբոսանք, Մարտինը գնաց այնտեղ։ Անցյալներում նա հաճախ էր լինում

այդպիսի զբոսանքներին, շատ լավ գիտեր, թե ի՛նչ են ներկայացնում դրանք իրենցից, և հիմա, մանելով պարկ. զգաց, թե ինչպե՛ս վազուց մոռացված զգացմունքները գարթնեցին իր մեջ։ Վերջ ի վերջո այդ բանվորներն իր շրջանակի մարդիկ են։ Նա ծնվել ու մեծացել է նրանց միջև. հիմա նա ուրախ էր, որ երկարատև ընդմիջումից հետո տեսնվում է նրանց հետ։

— Ա՜, դա Մարտն է,— լսեց նա հանկարծ։ Իսկույն մեկը բարեկամարար իր ձեռքը դրեց նրա ուսին։— Ո՞ւր էիր, հին բարեկամ։ Նավադնացությա՞ն էիր ելել։ Նստի՛ր, խմենք մի շիշ։

Դրանք իր նույն հին ծանոթներն էին, միայն ինչ-որ նոր դեմքեր էին երևում, իսկ հներից մի քանիսը չկային։ Շատերը որմնադիրներ չէին, բայց ամեն մարդ ուզում էր մասնակցել կիրակնօրյա զբոսանքին, մի կուշտ պարել, ճվճվալ և իր ուժերը չափել։ Մարտինը խմեց նրանց հետ և միանգամից կենդանացավ։ «Ի՜նչ հիմարություն,— մտածեց նա,— որ ես կտրվեցի նրանցից»։ Նա իսկույն հաստատ համոզվեց, որ շատ ավելի երջանիկ կլիներ, եթե չհեռանար իր շրջանակից, չվազեր գրքային գիտելիքների ետևից և չձգտեր իրենից բարձր կանգնած մարդկանց հետ շփվելու։ Սակայն գարեջուրն այնքան համեղ չէր, ինչպես անցյալ տարիներին։ Հիմա բոլորովին այլ համ էր տալիս։ Ակներև է, որ Բրիսսենդենը ետ է սովորեցրել նրան պարզ գարեջրից. թերևս գրքերը ետ են վարժեցրել նրան՝ պատանեկության իր նախկին ընկերների հետ բարեկամությունից։ Վճռելով ապացուցել ինքնիրեն, որ այնքան էլ ետ չի մնացել այդ բոլորից, նա դնաց տազավարը պարելու։ Այստեղ նա հանդիպեց իր քրոջ կենվորի՝ Ջիմմիի հետ, որն իրեն հետ բերել էր մի բարձրահասակ խարտյաշ կնոջ, որը անմիջապես հասկացրեց, որ գերադասում է Մարտինին։

— Նրա հետ միշտ էլ այդպես է պատահում,— ասաց Ջիմը իր բարեկամներին, որոնք անազ էին գալիս նրան՝ տեսնելով, թե ինչպես Մարտինն ու խարտյաշը վալս են

պարում։— Ես մինչև անգամ չեմ բարկանում։ Այնք՜ան ուրախ եմ նրան նորից տեսնելով։ Ի՞նչ լավ է պարում։ Սատանան տանի։ Ի՞նչ կա զարմանալու, որ աղջիկը նրան ցանկացավ։

Սակայն Մարտինն ազնվորեն վերադարձրեց խարտյաշին Ջիմմիին։ Նրանք երեքով ուրախ իրար խփեցին բաժակները և կես գյուժին այլ բարեկամների հետ միասին շարունակեցին հռհռալ և հրճվել։ Բոլորն էլ ուրախ էին, որ Մարտինը վերադարձավ։ Նրա գրքերից ոչ մեկը դեռ լույս չէր տեսել, հետևաբար նրանց աչքում նա դեռ ոչ մի կեղծ արժեք չէր հանդիսանում։ Նրանք Մարտինին սիրում էին հենց որպես Մարտինի։ Նա զգում էր իրեն որպես աքսորից վերադարձած իշխան, և նրա միայնակ սիրտը ջերմանում էր այդ անկեղծ ու անմիջական զվարթության միջև։ Մարտինը լավ տրամադրության մեջ էր։ Բացի այդ, նրա գրպանում հնչում էին դոլլարները, և նա առատ ծախսում էր նրանք,— ճիշտ և ճիշտ ինչպես նախկին ժամանակներում՝ նավարկությունից վերադարձին։

Հանկարծ պարողների միջև Մարտինը տեսավ Լիզզի Կոնոլլիին, որը ինչ-որ բանվորի հետ գրկված պարում էր։ Մի քիչ ուշ Մարտինը, տաղավարում մաս գալիս, տեսավ, որ Լիզզին նստեց սեղանին, ուր զովարար ըմպելիքներ էին խմում, և մոտեցավ նրան։ Լիզզի Կոնոլլին շատ զարմացավ և ուրախացավ այդ հանդիպմանը և հաճույքով նրա հետ գնաց պարկը, ուր կարելի էր խոսակցել հանգիստ՝ առանց խանգարվելու երաժշտությունից։ Առաջին իսկ խոսքերից պարզվեց, որ Լիզզին պատկանում է Մարտինին, և վերջինը հասկացավ այդ և՛ նրա աչքերի խոնավ փայլից, և՛ նրա ճկուն մարմնի շարժումներից, և՛ այն բանից, որ նա ագահորեն որսում էր Մարտինի ամեն մի բառը։ Նա արդեն այն մատղաշ աղջիկը չէր, որին նա ժամանակին հանդիպել էր թատրոնում։ Լիզզի Կոնոլլին կին էր դարձել, և Մարտինը միանգամից նկատեց, թե ինչպես ծաղկել է նրա վառ տաքարյուն գեղեցկությունը. նրա աշխուժությունը մնացել

ՀՐ նախկինը, իսկ տաքությունը, ինչպես երևում է չափավորվել էր։

— Գեղեցկուհի է, իսկական գեղեցկուհի,—մրմնջաց Մարտինն ակամա հիացումով։ Եվ նա գիտեր, որ բավական է նրան ասել «գնանք» և Լիզին կգնա նրա հետ մինչև աշխարհի ծայրը։

Այդ պահին նա հանկարծ այնպիսի հարված ստացավ գլխին, որ հազիվ կարողացավ կանգուն մնալ տեղում։ Հարվածն իջեցվել էր բռունցքով, և հարված հասցնող մարդը, ինչպես երևում է ուղղել էր այն Մարտինի ծնոտին, բայց շտապելուց ու կատաղությունից վրիպել էր։ Մարտինը չուռ եկավ այն ակնթարթում, երբ հարձակվողը պատրաստ էր մի անգամ էլ խփել։ Նա ճարպկորեն թեքվեց մի կողմ, և հարվածը նպատակին չհասավ։ Մարտինը հակահարվածով վայր գցեց իր հակառակորդին։ Բայց վերջինն իսկույն ոտի կանգնեց՝ կատաղությունից իրեն կորցրած։ Մարտինը նայեց նրա երիտասարդ, մոլեգնությունից այլանդակված երեսին՝ զարմանալով, թե ինչո՞վ կարող էր այդքան չարացնել նրան։ Սակայն զարմանքը չխանգարեց նրան նորից ետ մղելու հարձակումը և մի ուժեղ հարվածով գետնին տապալելու հարձակվողին։ Ջիմը և այլ բարեկամներ շրջապատեցին նրանց և բաժանեցին իրարից։

Մարտինն ամբողջ մարմնով դողում էր։ Ահա՝ և նախկին երջանիկ օրերը—պարեր, զվարճություն, ծեծկվուք։ Աչքի առաջից չհեռացնելով իր անակնկալ հակառակորդին՝ նա արագ նայեց Լիզի Կոնոլլիին։ Սովորաբար աղջիկները ճչում էին, երբ տեղի էին ունենում նման ընդհարումներ, բայց Լիզին չճչաց, այլ նայում էր, շունչը բռնած, ամբողջ մարմնով դեպի առաջ կքած, ձեռքերը կրծքին սեղմած. նրա այտերն այրվում էին, իսկ աչքերը փայլում էին հիացումից։

Մարտինի վրա հարձակվող մարդն այդ միջոցին ոտքի թռավ և աշխատում էր պոկվել նրան զսպող բանվորների ձեռքից։

— Աղջիկը ինձ հետ էր ուզում գնալ,—բղավում էր նա

ցանկում,—նա ուզում էր գնալ ինձ հետ, իսկ այս լիրբը տարավ նրան։ Թողե՛ք, ես նրան ցույց կտամ։

— Գժվե՞լ ես, ի՞նչ է,—ասում էր Ջիմմին՝ զսպելով պատանուն։— Իմացիր, դա Մարտին Իդենն է։ Ավելի լավ է, որ դու նրա հետ գործ չունենաս։ Նա քեզ հում-հում կուտի։

— Բայց ինչու՞ տարավ իմ աղջկան,—գոռում էր նա։

— Նա հաղթել է Թռուցիկ Հոլանդացուն, իսկ դու հիշո՞ւմ ես, թե նա ինչ տղա էր։ Եվ Մարտինը խփեց նրան հինգերորդ ռաունդում։ Դու մի բոպե էլ չես դիմանա նրան։ Հասկացա՞ր։

Այդ հաղորդումն, ըստ երևույթին, մի փոքր խաղաղեցրեց երիտասարդին, որովհետև նա ուշադիր հայացքով չափեց Մարտինին և արդեն նվազ եռանդուն եղանակով ասաց.

— Այնքան էլ նման չէ։

— Այդպես էր կարծում նաև Թռուցիկ Հոլանդացին,— հավատացնում էր նրան Ջիմմին։— Գնանք։ Վազն անցիր այդ գործից։ Ի՞նչ, ուրիշ աղջիկներ չկա՞ն այստեղ։

Վերջապես պատանին համակերպվեց, և նրանք բոլորն ուղղվեցին դեպի տաղավարը։

— Դա ո՞վ է,— հարցրեց Մարտինը Լիզզիին։— Եվ առհասարակ բանը ինչո՞ւմն է այս հարցում։

Նա տխրությամբ զգում էր, որ մինչև անգամ կռիվն այնքան չի գրգռում նրան, ինչքան առաջ։ Վարժվելով ինքնավերլուծման՝ նա արդեն չէր կարող մտածել ու զգալ, ինչպես նախնադարյան մարդը։

Լիզզին թափ տվեց գլուխը։

— Հենց այնպես, տղա է,— ասաց նա,— վերջերս ես նրա հետ էի ման գալիս։

Մի քիչ լռելուց հետո նա ավելացրեց։

— Պարզապես ձանձրանում էի... Բայց ես երբեք չէի մոռանում...— նա ցածրացրեց ձայնը և հայացքն ուղղեց դեպի անորոշ տարածություն։— Ի՞նչ է նա ինձ համար,— այնպես, թո՛ւ...

Մարտինն ուշադիր նայեց նրան՝ գիտենալով, որ հիմա, բոլոր կանոնների համաձայն, պետք է բռնել և սեղմել նրա ձեռքը, բայց լսելով նրա պարզ խոսքերը՝ նա սկսեց մտածել այն հարցի մասին, թե իրոք արժեք ունի՞ նուրբ, քերականորեն ճիշտ լեզուն և... մոռացավ պատասխանել Լիզզիին։

— Դուք լավ հաշիվ տեսաք նրա հետ,— ծիծաղելով ասաց աղջիկը նրան փորձելով։

— Նա ուժեղ տղա է,— վեհանձնորեն առարկեց Մարտինը։— Եթե նրան չհեռացնեին, ինձ հարկավոր կլիներ երկար զբաղվել նրա հետ։

— Ո՞վ էր այն երիտասարդ կինը, որի հետ ես տեսա ձեզ մի անգամ,— հարցրեց Լիզզին։

— Հենց այնպես, ծանոթ կին,— պատասխանեց նա։

— Դա վաղուց էր,— մտածկոտ ասաց աղջիկը,— կարծես հազար տարի առաջ։

Մարտինը ոչինչ չասաց և փոխեց խոսակցության նյութը։ Նրանք գնացին ճաշարան, պատվիրեցին գինի և թանկարժեք աղանդեր, հետո Մարտինը պարեց նրա հետ, միայն նրա հետ, մինչև որ նա հոգնեց։ Մարտինը հրաշալի պարող էր, և աղջիկը պտույտ էր գալիս նրա հետ՝ երանությունից ոտքերը գետնից կտրած, գլուխը դրած նրա ուսին, կարծես ուզելով, որ դա այդպես շարունակվի հավիտենապես։ Հետո նրանք նորից գնացին պարկ, ուր աղջիկը, վաղեմի բարի սովորությամբ, նստեց խոտի վրա, իսկ Մարտինը պառկեց և գլուխը դրեց նրա ծնկին։ Նա շուտով նիրհեց, իսկ աղջիկը քնքշարար շոյում էր նրա մազերը և նայում նրան, առանց թաքցնելու իր սերը։

Մարտինը հանկարծ բացեց աչքերը և նրա հայացքում կարդաց սիրո խոստովանությունը։ Լիզզին պատրաստվում էր աչքերը խոնարհել, բայց իսկույն լարեց իր կամքը և վճռական ու համարձակ նայեց նրան։

— Ես բոլոր այդ տարիները սպասում էի,— ասաց աղջիկը հազիվ լսելի ձայնով։

Մարտինը զգաց, որ իրոք դա այդպես է, թեև կարող

էր անհավանական թվալ։ Մի մեծ փորձություն պատեց նրա սիրտը։ Նրանից էր կախված երջանկացնել այդ աղջկան։ Եթե իրեն վիճակված չէ երջանկություն, ինչո՞ւ չերջանկացնել նրան։ Նա կարող էր ամուսնանալ այդ աղջկա հետ և տանել նրան իրեն հետ Մարկիզյան կղզիները՝ բնակվելու համար եղեգնաշեն դղյակում։ Նա շատ էր ուզում ենթարկվել այդ փորձությանը, բայց մի ներքին ձայն հրամայում էր չանել այդ։ Հակառակ ինքն իրեն՝ նա հավատարիմ էր մնում իր սերին։ Աղատությունների և թեթևամտության նախկին օրերն անցան։ Անկարելի էր վերադարձնել այդ օրերը։ Նա փոխվել էր, և միայն այժմ էր հասկանում, թե ինչքան է փոխվել։

— Ես ամուսնանալու հարմար մարդ չեմ, Լիզզի,— ասաց նա ժպտալով։

Աղջկա ձեռքը մի ակնթարթում կանգ առավ, բայց հետո նորից սկսեց խառնել նրա մազերը։ Մարտինը նկատեց, որ նրա դեմքը հանկարծ ընդունեց խիստ, վճռական արտահայտություն, որը սակայն արագ անհետացավ, և նրա այտերը դարձյալ քնքշորեն շառագունեցին, իսկ աչքերը նայում էին քնքուշ ու փաղաքշորեն։

— Այդ չէի ուզում ասել ես,— ասաց նա,— ամեն պարագայում դա քիչ է մտահոգում ինձ։ Այո՛,—կրկնեց նա մի փոքր ընդմիջումից հետո,— դա քիչ է մտահոգում ինձ։ Ես պարծենում եմ ձեր բարեկամությամբ։ Ես պատրաստ եմ ամեն բան անել ձեզ համար։ Երևի, ես այդպիսին եմ։

Մարտինը նստեց։ Նա վերցրեց աղջկա ձեռքը և ջերմորեն սեղմեց այն, բայց առանց կրքի։ Այդ ջերմությունից ցուրտ փչեց Լիզզիի վրա։

— Չխոսենք այդ մասին,— ասաց նա։

— Դուք լավ, ազնիվ աղջիկ եք,— հայտարարեց Մարտինը,—ես ինքս պետք է հպարտանամ ձեր բարեկամությամբ։ Եվ ես հպարտանում եմ, այո՛, այո՛։ Դուք ինձ համար լույսի ճաճանչ եք խավար ու մռայլ աշխարհում, և ես էլ ձեզ հետ կլինեմ այնպես ազնիվ, ինչպես դուք ինձ հետ։

— Ինձ համար նույնն է, թե դուք ազնիվ եք ինձ հետ, թե ոչ։ Դուք կարող եք ինձ հետ անել այն ամենը, ինչ ուզում եք։ Դուք կարող եք ցեխը շպրտել ինձ և կոխոտել, եթե ուզում եք։ Բայց դա կարող եք միայն դուք,— ասաց նա, հպարտորեն բարձրացնելով գլուխը,— զուր չէ, որ ես մանկությունից սովորում եմ ինքս հոգալ իմ մասին։

— Ահա դրա համար էլ պետք է ազնիվ լինեմ ձեզ հետ,— սիրալիր ասաց Մարտինը։— Դուք այնքան հիանալի և ազնիվ եք, որ ես էլ պետք է ազնիվ վարվեմ ձեզ հետ։ Ես չեմ կարող ամուսնանալ և չեմ կարող... այո՛ չեմ կարող սիրել՝ առանց ամուսնանալու, թեպետ դա անցյալում պատահում էր ինձ հետ։ Ես շատ եմ ցավում, որ այսօր պատահեցի ձեզ։ Բայց հիմա արդեն ոչինչ չի կարելի անել։ Լիզզի ես մինչև անգամ անկարող եմ պատմել, թե ի՛նչքան հավանում եմ ձեզ։ Ավելին, ես հիանում և խոնարհվում եմ ձեր առաջ։ Դուք սքանչելի, իսկապես սքանչելի աղջիկ եք։ Բայց ի՞նչ օգուտ այդ բանը ձեզ ասելուց։ Ես կուզենայի միայն մի բան ասել։ Ձեր կյանքը դժնդակ է եղել։ Թույլ տվեք ինձ հեշտացնել այն։— Աղջկա աչքերում ուրախություն փայլեց և իսկույն հանգավ։— Շուտով ես կստանամ շատ դրամ, խիստ շատ դրամ։

Եվ այդ պահին նա մոռացավ և՛ հովիտը, և՛ ծովածոցը, և՛ եղեգնյա հյուղակը, և՛ սպիտակ դրոսանավը։ Վերջ ի վերջո ինչի՞ համար է այդ բոլորը։ Չէ՞ որ նա ամենայն հեշտությամբ կարող է նավարկության գնալ ուղած ծովում և ուզած տեղը։

— Ես կուզենայի ձեզ տալ այդ դրամը։ Դուք կարող եք դասընթացներ հաճախել, սովորել որևէ պրոֆեսիա։ Կարող եր սղաղրիչ դառնալ։ Ես կօգնեմ ձեզ։ Եվ կամ, թերևս ձեր ծնողները ողջ են։ Ես կարող եմ գնել նրանց համար, օրի նակ՝ նպարեղենի խանութ։ Ասացեք միայն, թե ի՛նչ եք ուզում և ես ձեզ համար կանեմ ամեն բան։

Լիզզին նստած էր անշարժ, իր առաջը նայելով չոր աչքերով, և ոչինչ չէր պատասխանում։ Մարտինը հանկարծ

պարկ հասկացավ այն բոլորը, ինչ գգում էր աղջիկն այդ բոպեին, և սիրտը հիվանդագին ճմլվեց։ Նա չպետք է ասեր այդ։ Այն, ինչ Մարտինն առաջարկում էր նրան, այնքան չնչին էր այն բանի համեմատությամբ, որ աղջիկը պատրաստ էր տալ նրան։ Դրա՞մ — սիրտ փոխարեն։ Նա առաջարկում էր աղջկան այն, ինչ ավելորդ էր իրեն համար, առանց որի ինքը կարող էր յոլա գնալ,— իսկ աղջիկը տալիս էր նրան իր անձը ամբողջությամբ՝ առանց վախենալու ոչ խայտառակությունից, ոչ մեղքից, ոչ հավիտենական տանջանքներից։

— Չխոսենք դրա մասին,— ասաց նա և հանկարծ հագաց, կարծես կոկորդն էր բռնվել։— Ժամանակ է գնալու։ Ես հոգնել եմ։

Զբոսանքը վերջացել էր, և գրեթե ամբողջ հասարակությունը գնացել էր։ Բայց երբ Մարտինն ու Լիզին դուրս եկան ծառերի ետևից, նրանք տեսան իրենց սպասող ընկերներին։ Մարտինը միանգամից հասկացավ, թե բանն ինչո՞ւմն է։ Պատրաստվում էր կռիվ։ Սրանք կռվողների թիկնապահներն էին և ուղեկցում էին մինչև պարկի դռնակը։ Նրանց դեմ շարժվում էր մի այլ խումբ,—այն տղի բարեկամները, որից Մարտինը «խլեց» աղջկան։ Մի քանի ոստիկաններ, նախատեսելով անկարգությունը, մոտեցան, որպեսզի ընդհարման առաջն առնեն, և երկու խմբերին էլ ուղեկցում էին մինչև Սան-Ֆրանցիսկո մեկնող գնացքը։ Մարտինը նախադասություններ Ջիմմիին, որ Տասնվեցերորդ փողոցի կանգառում կիջնի և կնստի Օկլենդ տանող տրամվայը։ Լիզին անտարբեր էր վերաբերվում ամբողջ այդ անցուդարձին։

Գնացքը կանգ առավ Տասնվեցերորդ փողոցի մոտ։ Կանգառում սպասող տրամվայի կոնդուկտորը անհամբեր խփում էր գոնգին։

— Վերցրո՛ւ այդկան և գնա,— բղավեց Ջիմմին։— Ճո՛ւտ։ Գնա՛։ Իսկ մենք նրանց այստեղ ետ կպահենք։

Հակառակորդ խումբն առաջին հերթին շփոթված էր այդ

մաններով, բայց անմիջապես դուրս թռչելով վագոնից՝ սկսեց հետապնդել փախչողներին։

Արդեն տրամվայում նստող ուղևորները տեսան մի երիտասարդի ու աղջկա, որոնք արագ վազեցին դեպի տրամվայը և գրավեցին առջևի երկու ազատ տեղերը։ Ոչ ոք չէր կասկածում, որ այս զույգը որևէ կապակցություն ունի Ջիմմիի հետ, որը թռչելով վագոնի աստիճանին՝ բղավեց։

— Քշի՛ր ամենայն արագությամբ. ո՛չ մեկին մի թողնի։

Դրանից անմիջապես հետո Ջիմմին արդեն ցած թռավ տրամվայից և սկսեց բռունցքներով ետ մղել տրամվայ նստել փորձող մարդկանց։ Տրամվայի ամբողջ երկայնքով կռվամարտը սկսվեց։ Ջիմմիի ընկերները գրավեցին բաց վագոնի աստիճանը և հերոսաբար վանում էին գրոհները։ Տրամվայը շարժվեց գոնգի ուժեղ հարվածների տակ, և Ջիմմիի բարեկամները աստիճանից ցած թռան։ Ճակատամարտի դաշտը մնաց շատ ետևում, և ուղևորների մտքովն էլ չանցավ, թե այդ շքեղ հագնված երիտասարդն ու գեղեցիկ բարեկամուհին էին տեղի ունեցող սկանդալի պատճառը։

Այդ ճակատամարտը հուզեց Մարտինին, և նրանում զարթնեց առաջվա մարտական ավյունը։ Բայց մի պահ անց սովորական թախիծը նորից պատեց նրան։ Նա ծեր էր, ամբողջ դարերով ավելի տարիքոտ, քան նրա պատանեկության այդ անհոգ ու ազատ բարեկամները։ Նրա անցած ճամփան չափազանց երկար էր, և ետ դառնալու մասին չէր կարելի մտածել,—նրան այլևս չէր հրապուրում այն ապրելակերպը, որը նա վարել էր անցյալում։ Նա հեռացել էր բարեկամներից։ Նրանց կյանքը Մարտինի համար զզվելի էր, որպես էժան գարեջրի համը, որից նա հրաժարվել էր։ Նա չափազանց առաջ էր գնացել։ Հազարավոր գրքեր, որպես պատ, բաժանում էին նրանց։ Նա ինքն է դատապարտել իրեն՝ նրանց շարքերից վտարման։ Նա հրապուրվեց ճամփորդել խոհականության անսահման տարածություններում, որտեղից դարձ չկա։ Սակայն նա չդադարեց մարդ լինելուց։ Եվ նա առաջվա նման ձգտում էր մարդկային ընկերության։ Բայց

նա դեռ չի գտել նոր հայրենիք։ Ոչ բարեկամներ, ոչ մերձավորներ, ոչ նոր բուրժուական ծանոթներ, ոչ էլ մինչև անգամ այս աղջիկը, որին նա բարձր էր գնահատում և հարգում, չէին կարող նրան հասկանալ։ Նա տխրությամբ ու դառնությամբ էր մտածում այդ մասին։

— Հաշտվեցե՛ք նրա հետ,— խորհուրդ տվեց Մարտինը Լիզզիին, որին ուղեկցեց մինչև բանվորական թաղը, ուր ապրում էր աղջիկը՝ Վեցերորդ փողոցի ու շուկայի միջև։

Նա նկատի ուներ այն պատանուն, որի տեղը նա այսօր ակամա գրավել էր։

— Չեմ կարող... հիմա,— պատասխանեց Լիզզին։

— Դատ՞արկ բան է,— զվարթ գոչեց նա։— Ձեզ բավական է սուլել, և նա վազելով կգա։

— Բանը դրանում չի,— ասաց աղջիկը պարզապես։

Եվ Մարտինը շատ լավ հասկացավ, թե նա, ինչ է ուզում ասել։ Լիզզին հանկարծ ձգվեց դեպի Մարտինը։ Այդ շարժման մեջ ոչինչ չկար տիրական և գրգռիչ. դա երկչոտ ու հեզ էր։ Մարտինը հուզված էր մինչև հոգու խորքը։ Նա խոր կարեկցություն զգաց—և, նրան գրկելով, պինդ համբուրեց։

— Աստված իմ,— հեկեկաց աղջիկը։— Ես կարող եմ մեռնե՛լ ձեզ համար... մեռնե՛լ ձեզ համար։

Նա հանկարծ պոկվեց Մարտինից և անհայտացավ զուան ետևում։ Մարտինի աչքերից արտասուքներ ցայտեցին։

— Մարտին Իդեն,— մրմնջաց նա ինքնիրեն,— դու գազան չես, դու անպետք նիցշեական ես։ Դու պետք է ամուսնանայիր նրա հետ և տայիր նրան այն երջանկությունը, որին նա անչափ ձգտում է։ Բայց դու չես կարող։ Եվ դա ամոթ ու խայտառակություն է։ «Մեր թափառաշրջիկը դառնորեն տրտնջում է»— քրթմնջաց նա՝ հիշելով Հենլիին. «Ամբողջ մեր կյանքը սխալ է ու ամոթանք։ Այո՛, մեր կյանքը սխալ ու ամոթանք է։

«Արևի ամոթանքը» լույս տեսավ հոկտեմբերին։ Երբ Մարտինը բաց էր անում փոստի ծրարը այդ գրքի հեղինակային վեց օրինակներով, գրկված հրատարակչի կողմից, նա ճնշված էր ու տխուր։ Նա մտածում էր, թե ի՞նչ ահագին ուրախություն կլիներ այդ իրեն համար մի քանի ամիս առաջ, և որքա՞ն հեռու է ուրախությունից նրա այժմյան սառնասրտությունը։ Նրա գիրքը, նրա առաջին գիրքն էր դրված նրա առաջ սեղանի վրա, և նա ոչինչ չէր զգում, բացի թախիծից։ Հիմա նրա համար դա ո՛չ մի նշանակություն չուներ։ Իհարկե, նա կստանա որոշ քանակությամբ դրամ, բայց հիմա ինչի՞ է պետք դրամը։

Վերցնելով գրքից մի օրինակ՝ նա դուրս եկավ և խոհանոցում նվիրեց այն Մարիային։

— Այդ գիրքը ես եմ գրել,—բացատրեց նա՝ տեսնելով նրա զարմանքը։— Գրել եմ այն իմ խցիկում, և կարծում եմ, որ ձեր ասլուրը քիչ դեր չի խաղացել դրանում։ Վերցրեք այն և պահեցեք։ Այդ գրքին նայելով հիշեք ինձ։

Մարտինն իսկի էլ չէր ուզում պարծենալ Մարիայի առաջ։ Նա ուզում էր միայն բավականություն պատճառել նրան, արդարացնել Մարիայի երկարամյա վստահությունը նրա նկատմամբ։ Մարիան դրեց գիրքը հյուրասենյակում ընտանեկան աստվածաշունչի կողքին։ Իր կենվորի գրած գիրքը իրեն համար սուրբ նշխար էր, բարեկամության ֆետիշ։ Հիմա Մարիան մինչև անդամ հաշտվեց այն բանի հետ, որ Մարտինն անցյալում եղել է լվացքատան հասարակ բանվոր։ Թեև Մարիան այդ գրքից անգամ մի տող չէր կարող հասկանար, բայց հաստատ համոզված էր, որ դրա ամեն մի տողը սքանչելի է։ Այդ պարզ, աղքատ, ծանր աշխատանքից հյուծված կինն ուներ մի թանկարժեք ընդունակություն— հավատալ։

Նույնքան անտարբեր, որքան դեպի հեղինակային օրինակները, վերաբերվեց Մարտինը նաև մամուլի բյուրոյի ու-

ղարկած կարոններին։ Ակներև էր, որ գիրքն աղմուկ է բարձրացրել։ Իսկ դա իր հերթին, կնշանակի, որ նրա ոսկու տոպրակը ավելի ևս կլցվի։ Կարելի կլինի ապահովել Լիզզիին, կատարել իր բոլոր խոստումներն ու, վերջապես, տեղավորվել եղեգնյա պալատում։

Դարնլեյ և Ընկերություն ֆիրման զգուշության համար տպեց միայն հազար հինգ հարյուր օրինակ, բայց առաջին իսկ ռեցենզիաները նրան դրդեցին թողարկել երկրորդ հրատարակություն՝ երեք հազար օրինակ. շուտով տպվեց և երրորդ հրատարակությունը՝ արդեն հինգ հազար օրինակ։ Լոնդոնից մի ֆիրմա բանակցություններ սկսեց այդ գրքի անգլիական հրատարակության մասին, իսկ Ֆրանսիայից, Գերմանիայից ու Սկանդինավիայից հարցապնդումներ էին ըստացվում գրքի թարգմանության պայմանների մասին։ Մետերլինկի շկոլայի վրա հարձակումը ճիշտ պատեհ ժամանակին էր կատարվում։ Սկսվեց կատաղի գրավեճ։ Սալիբին ու Հեկկելը պաշտպանում էին «Արևի ամոթանքը», որովհետև համամիտ էին Մարտինի հիմնական տեսակետին։ Կրուկսն և Ուոլլեսը ելույթ ունեցան նրա դեմ, իսկ սըր Օլիվեր Լոջը փորձեց գտնել մի կոմպրոմիս, որը հաշտեցնում էր Իդենի հայացքներն իր սեփական կոսմիկ փիլիսոփայության հետ։ Մետերլինկի կողմնակիցները միացան միստիցիզմի գրոշի տակ։ Չեստերտոնը ծիծաղեցրեց ամբողջ աշխարհն իր սրամիտ ակնարկներով, որոնք իբրև անկողմնապահորեն էին քննարկում մոդա դարձած այդ թեման։ Բայց այդ բոլորին խեղդեց Բեռնարդ Շոուի ամպրոպային ձայնը։ Ավելորդ է ասել, որ բացի այդ մեծ լուսատու դեմքերից, ասպարեզ եկան նաև ավելի փոքր աստղեր,—մի խոսքով՝ այդ աղմուկը հսկայական չափեր ընդունեց։

«Դա բոլորովին աննախրնթաց դեպք է,—գրում էր Մարտինին Դարնլեյ և Ընկերության ֆիրման,— փիլիսոփայական-քննադատական գիրքը վաճառվում է վեպի հավասար։ Դուք չէիք կարող դրանից լավ թեմա ընտրել։ Բացի այդ, գրքի երևալու հետ կապված բոլոր պայմանները չափազանց

նպաստավոր են։ Կարող եք վստահ լինել, որ մենք ջանում ենք լավագույն կերպով օգտագործել մոմենտը։ Միացյալ Նահանգներում ձեր գիրքն արդեն վաճառվել է քառասուն հազար օրինակ, և ներկայումս մենք պատրաստվում ենք ևս մի նոր հրատարակության՝ քսան հազար օրինակ։ Մենք հազիվ ենք հասցնում՝ բավարարելու համար պահանջը։ Մյուս կողմից, մենք քիչ չենք նպաստել այդ պահանջի բատացմանը։ Ռեկլամի համար մենք արդեն ծախսել ենք ավելի քան հինգ հազար դոլլար։ Այդ գիրքը կխփի բոլոր ռեկորդները։

Սրանով պատիվ ունենք ներկայացնելու ձեր նոր գրքի վերաբերմամբ պայմանագրի նախագիծը։ Նկատի ունեցեք, որ ձեր հոնորարը բարձրացրել ենք քսան տոկոսի,— դա մեծագույն դրույքն է, որ հնարավորություն ունի տալ այնպիսի խոշոր մի ֆիրմա, որպիսին է մերը։ Եթե դուք հարմար կգտնեք պայմանները, հաճեցեք պայմանագրի բլանկում նշանակել ձեր գրքի վերտառությունը։ Մենք ոչ մի պայման չենք դնում նրա բովանդակության նկատմամբ։ Ի՞նչ գիրք ուզում եք, ի՞նչ թեմայով, որ ուզում եք։ Եթե պատրաստ ունեք որևէ բան, ավելի լավ։ Հարկավոր չի հետաձգել։ «Երկաթը տաք-տաք են ծեծում»։

Ձեր կողմից ստորագրված պայմանագիրը հենց որ ստացվի, մենք անմիջապես կուղարկենք ձեզ որպես կանխավճար հինգ հազար դոլլար։ Ինչպես տեսնում եք, մենք ծախսեր չենք խնայում՝ արտահայտելու համար ձեզ մեր խորին վստահությունը։ Թերևս մենք համաձայնության գանք ձեզ հետ՝ ձեր բոլոր գրվածքների հրատարակության իրավունքի մասին որոշ ժամկետով,— ասենք տասը տարով։ Սակայն դրա մասին հետո»։

Մի կողմ դնելով նամակը, Մարտինը զբաղվեց մաթեմատիկայով։ Բազմապատկելով վաթսուն հազարը տասնհինգ ցենտով՝ ստացվեց ընդամենը ինն հազար դոլլար։ Նա ստորագրեց պայմանագիրը՝ նշելով նոր գրքի վերնագիրը— «Ուրախության ծուխը»,—և այն ուղարկեց հրատարակչին՝

քան նոր պատմվածքների հետ միասին, որոնք նա գրել էր դեռ ֆելիետոններ գրելու։ Ֆորմուլան գտնելուց առաջ։ Եվ ամենայն արագությամբ, որին ընդունակ է ամերիկյան փոստը, ստացվեց հինգ հազար դոլլարի մի չեկ։

— Ես կուզենայի, որ դուք այսօր ինձ հետ քաղաք գնաք, ժամը երկուսին,— ասաց Մարտինը Մարիային՝ ստանալով չեկը,—և կամ ավելի լավ է այսպես. մենք կհանդիպենք ձեզ հետ ճիշտ ժամը երկուսին՝ Տասնչորսերորդ փողոցի և Բրոդվեյի անկյունում։

Մարիան եկավ նշանակված ժամին. նա շատ էր հետաքրքրվել, բայց նրա գուշակությունները մի զույգ նոր մաշիկից դենը չանցան։ Այդ պատճառով էլ նա որոշ չափով հիասթափվեց, երբ Մարտինը անցնելով կոշկեղենի խանութի առաջով, տարավ նրան ինչ-որ գրասենյակ։

Այն, ինչ տեղի ունեցավ հետո, ընդմիշտ մնաց Մարիայի հիշողության մեջ, որպես հրաշալի երազ։ Շքեղ հագած ջենտլմեններ ժպտալով զրուցում էին Մարտինի և իրար հետ։ Գրամեքենան թխթխկում էր։ Ստորագրվեց կարևոր տեսք ունեցող մի թուղթ։ Այստեղ էր և Մարիայի տանտերը, որը նույնպես ստորագրեց այդ թուղթը։

Երբ նրանք փողոց դուրս եկան, տանտերն ասաց Մարիային.

— Դե, Մարիա, այս ամիս արդեն դուք ինձ չեք վճարի յոթուկես դոլլար։

Մարիան պապանձվեց զարմանքից։

— Հաջորդ ամիսներում նույնպես,—շարունակեց տանտերը։

Մարիան սկսեց շնորհակալություն հայտնել նրան այդ բարեսրտության համար։ Միայն տուն վերադարձին, հարևանների, առաջին հերթին պորտուգալացի խանութպանի հետ խոսելուց հետո նա հասկացավ, որ այդ տնակը, ուր նա ապրել է այնքան տարի, այսուհետև նրա սեփականությունն է դառնում։

— Դուք հիմա ինչո՞ւ ինձանից ոչինչ չեք գնում,—

Հարցրեց պորտուգալացին Մարտինին, երբ նա ուղղվում էր դեպի տրամվայը։

Մարտինը բացատրեց, որ նա այլևս ճաշ չի պատրաստում տանը. խանութպանը հրավիրեց նրան մի շիշ գինի խմելու միատեղ։ Նա Մարտինին հյուրասիրեց կրպակում գտնվող ամենալավ գինիով։

— Մարիա,— հայտարարեց Մարտինն այդ երեկո,— ես հեռանում եմ ձեզանից։ Դուք էլ շուտով այստեղից կգնաք։ Կարող եք այս տունը վարձու տալ որևէ մեկին և ամսեամիս ստանալ վճարը։ Կարծեմ, դուք եղբայր ունեք Սան-Լեանդրոյում կամ Հեյուորդսում, որը պարապում է կաթնատնտեսությամբ։ Սպիտակեղենը վերադարձրեք հաճախորդներին առանց լվանալու,—հասկանո՞ւմ եք,— առանց լվանալու, և գնացեք Սան-Լեանդրո կամ Հեյուորդս—մի խոսքով ձեր եղբոր մոտ... Ասացեք նրան, որ ես ուզում եմ խոսել նրա հետ։ Ես պիտի ապրեմ Օկլենդում, «Մետրոպոլ» հյուրանոցում։ Հավանական է, որ նա նկատի ունի հարմար մի կաթնաֆերմա։

Եվ ահա Մարիան դարձավ սեփականատեր տան և ֆերմայի. նա ուներ երկու աշխատավոր, որոնք կատարում էին ծանր աշխատանքը, իսկ բանկում նրա ընթացիկ հաշիվը շարունակ աճում էր՝ չնայած, որ նրա բոլոր երեխաներն այժմ կոշիկ ունեին և դպրոց էին գնում։ Կյանքում հազվադեպ է որևէ մեկին պատահել հեքիաթային իշխան։ Բայց Մարիան, որը բթացել էր դժնդակ աշխատանքից և երբեք չէր երազել ոչ մի իշխանի մասին, պատահեց այդպիսի իշխանի՝ հանձին լվացքատան նախկին բանվորի։

Այդ միջոցին ամեն տեղ սկսեցին հետաքրքրվել, թե ո՞վ է այդ Մարտին Իդենը։ Նա հրաժարվեց հրատարակիչներին տալ կենսագրական տեղեկություններ իր մասին, բայց թերթերից պակ դալն այնքան էլ հեշտ չէր։ Նա բնիկ Օկլենդցի էր, ռեպորտյորները գտան բավականաչափ մարդիկ, որոնք Մարտինին ճանաչում էին մանկությունից։ Այդպիսով թերթերում երևացին մանրամասն նկարագրություններ,

թե ո՛վ էր նա և ինչո՛վ էր զբաղվում։ Սկսեցին վաճառել նրա լուսանկարները՝ թողարկված մի ճարպիկ լուսանկարչի կողմից, որի մոտ Մարտին Իդենը ժամանակին նկարվել էր։ Սկզբում Մարտինը պայքարում էր հրապարակական այդ աղմկարարության դեմ, որովհետև նրանում դեռ ուժեղ էր տհաճությունը ժուռնալների ու բուրժուական հասարակության հանդեպ։ Բայց վերջ ի վերջո նա հաշտվեց, որովհետև դա ավելի քիչ գլխացավանք էր պատճառում նրան։ Նա անհարմար էր զգում մերժել ինտերվյու տալ հեռվից հատկապես եկած թղթակիցներին։ Բացի այդ, այն ժամանակից, երբ նա թողեց գրելն ու սովորելը, օրերն անտանելիորեն դանդաղ էին անցնում, և պետք էր մի բանով լցնել ազատ ժամերը։ Այդ պատճառով նա իրեն թույլ տվեց այդ փոքրիկ քմահաճույքը—խոսակցել ժուռնալիստների հետ, պարզել իր գրական ու փիլիսոփայական հայացքներն և ընդունել հարուստ բուրժուական ընտանիքների նրան արված հրավերները։ Նա միանգամից անսովոր հանգստություն ձեռք բերեց։ Ոչինչ չէր հուզում նրան։ Նա ներեց բոլորին ամեն բան,—ներեց մինչև անգամ երիտասարդ ռեպորտյորին, որը ժամանակին խայտառակել էր նրան, և մինչև անգամ թույլատրեց նրան մի ամբողջ սյունակ գրել Մարտին Իդենի մասին՝ զետեղելով և վերջինի լուսանկարը։

Ժամանակ առ ժամանակ Մարտինը տեսակցում էր Լիզիի հետ, և պարզ էր, որ նա ցավում է, որ Մարտինը մեծ մարդ է դառել։ Դա ավելի ևս խորացրեց երկուսի միջև գոյություն ունեցող անդունդը։ Լիզին համաձայնեց նրա խորհուրդներին, սկսեց այցելել երեկոյան դպրոց և սղագրության դասընթաց, և զգեստ կարել տվեց լավագույն դերձակուհու մոտ, որը ահագին դրամ գցեց դրա համար։ Վերջապես Լիզիի արագ հաջողությունները ստիպեցին Մարտինին խորհրդածել այն մասին, թե ճի՞շտ է վարվում աղջկա հանդեպ։ Մարտինը գիտեր, որ Լիզին ամեն ինչ անում է նրա սիրուն։ Լիզին ուզում էր բարձրանալ նրա աչքում, ձեռք բերել այն հատկությունները, որոնք իր

կարծիքով առանձնապես գնահատում է Մարտինը, իսկ Մարտինը նրան ոչ մի հույս չէր տալիս, հաղվադեպ էր տեսնվում նրա հետ և միշտ էլ վարվում էր նրա հետ, ինչպես եղբայրը քրոջ հետ։

«Ուշացածը» լույս էր տեսել հրատարակչության կողմից այն ժամանակ, երբ Մարտինը հասել էր փառքի գագաթնակետին, և որովհետև դա դեղեցիկ գրականության գործ էր, «Արևի ամոթանքից» ավելի հաջողություն գտավ։ Գրական շուկայում Մարտինի երկու գրքերն էլ առաջին տեղն էին գրավում—գրեթե աննախընթաց մի փաստ։ Եվ շարքային ընթերցողները, և «Արևի ամոթանքի» երկրպագուները ագահությամբ էին կարդում այդ վիպակը, հիանում էին նրա թափով ու հեղինակի արտասովոր վարպետությամբ։ Մարտին Իդենը դեռ նոր էր հաջողապես հարձակվել միստիցիզմի վրա, տեսականորեն. հիմա նա գործնականապես էլ ապացուցեց, թե ի՛նչ բան է իսկական գրականությունը։ Այդպիսով նրանում բարեհաջող կերպով զուգակցում էր քննադատական հանճարը գեղարվեստական հանճարի հետ։

Դրամը գետի պես հոսում էր դեպի Մարտինը. նրա փառքն աճում էր անչափ, բայց այդ բոլորն ավելի շուտ զվարճացնում էր նրան, քան ուրախացնում։ Մի չնչին փաստ բոլորովին ապշեցրեց նրան. այդ փաստը, հավանական է, քիչ չէր զարմացնի ամբողջ աշխարհը։ Սակայն աշխարհը կզարմանար ոչ թե փաստին, այլ այն բանին, որ դա ապշեցրել է Մարտինին... դատավոր Բլոունտը Մարտինին ճաշի հրավիրեց։ Այդ, ըստինքյան չնչին դեպքը մեծ նշանակություն ուներ և հղի էր կարևոր հետևանքներով։ Մարտին Իդենն անարգեց դատավոր Բլոունտին, անթուլատրելի տոնով խոսեց նրա հետ, իսկ դատավոր Բլոունտը, փողոցում հանդիպելով նրան, ճաշի հրավիրեց։ Մարտինը հիշեց, թե հաճախ հանդիպում էր դատավորի հետ Մորկերի տանը, և դատավորի մտքովը երբեք էլ չէր անցնում ճաշի հրավիրել նրան։ Ինչո՞ւ նա այն ժամանակ չէր հրավիրում ինձ,— հարցնում էր իրեն Մարտինը։ Չէ՞ որ ինքը ոչնչով չի փոխ-

վել։ Նա նույն Մարտին Իդենն է։ Ինչո՞ւմն է տարբերությունը։ Միայն նրանում, որ նրա գրվածքները հիմա տպվել են։ Նա գրել է դրանք դեռ այն ժամանակ։ Այդ ժամանակից հետո նա ոչինչ չի գրել։ Նրա գրվածքներից ամենալավը ստեղծված է հենց այն ժամանակ, երբ դատավոր Բլոունտը, բաժանելով ընդհանրության կողմից ընդունված տեսակետը, ծաղրում էր և նրան և Սպենսերին։ Ուրեմն, դատավոր Բլոունտը հրավիրեց նրան ոչ թե նրա իսկական արժանիքների համար, այլ այն բանի, որ ըստ էության այդ արժանիքների լոկ արտացոլումն է։

Մարտինը ժպիտով ընդունեց հրավերը՝ ինքն էլ զարմանալով իր զիջողությանը։ Ճաշին, բացի տիկիններից, ներկա էին և վեց-յոթ կարևոր անձնավորություններ, որոնց միջև Մարտինն իրեն զգում էր անկասկած, որպես «առյուծ»։ Դատավոր Բլոունտը, որին ջերմորեն պաշտպանեց դատավոր Հենուելլը, Մարտինից թույլատվություն խնդրեց արձանագրել նրան որպես իր «Ստիկս» ակումբի անդամ, ուր կարող էին հաճախել միայն ոչ թե պարզապես հարուստ, այլ մի որևէ բանով հայտնի մարդիկ։ Մարտինը ևս ավելի զարմացավ, բայց մերժեց այդ առաջարկը։

Նա առաջվա պես զբաղված էր իր գրվածքների բաշխումով։ Հրատարակիչներն ուղղակի հանգիստ չէին տալիս նրան իրենց նամակներով։ Նրանք բոլորը վճռեցին, որ նա հիանալի ոճաբան է, և որ նրա գրվածքների ձևի գեղեցկության տակ թաղված է ճոխ բովանդակություն։ «Հյուսիսային տեսությունը», տպելով «Գեղեցկության օրրանը», նրան դիմեց խնդրելով ուղարկել մի վեցյակ նույնպիսի հոդվածներ, և Մարտինը պատրաստվում էր արդեն կատարել այդ խնդիրքը՝ մինչև վերջը սպառելով իր հին գրվածքների պաշարը, երբ հանկարծ «Բերտոնի ժուռնալը» պատվիրեց նրան հինգ հոդված՝ ամեն մեկի համար առաջարկելով հինգ հարյուր դոլլար։

Մարտինը գրեց, որ համաձայն է, բայց ոչ թե հինգ հարյուրական դոլլարով, այլ հազարական։ Նա շատ լավ էր

հիշում, որ ժամանակին բոլոր այդ գրվածքները մերժվել էին նույն այդ ժուռնալների կողմից, որոնք հիմա իրար միջև մրցում էին դրանց համար։ Նա հիշում էր նրանց անտարբերությունը, միօրինակ մերժումները։ Նրանք քիչ չեն ծաղրի նշավակ դարձրել նրան. հիմա նա էլ ուզեց ծիծաղել նրանց վրա։ «Բերտոնի ժուռնալը» վճարեց նրան նշանակված գինը հինգ հոդվածի համար, իսկ մնացած չորս հոդվածները իլեց մի այլ խոշոր ամսաթերթ նույն պայմաններով։ «Հյուսիսային տեսությունը» չափազանց աղքատ էր և չէր կարող մրցել նրանց հետ։ Այդպիսով լույս տեսան «Հրաշալիի քուրմը», «Երազողներ», «Մեր Եսի չափոցը», «Պատրանքների փիլիսոփայությունը», «Աստվածն ու գաղանը», «Գեղարվեստն ու բիոլոգիան», «Քննադատությունն ու անոթները», «Աստղային փոշին», «Վաշխառության ուժը»։ Բոլոր այդ գրվածքները հարուցին այնպիսի աղմուկ, որը երկար ժամանակ չէր հանդարտվում։

Հրատարակիչները խնդրում էին Մարտինին, որ ինքը նշանակի պայմանները, և նա սիրով անում էր այդ։ Բայց նա ուղարկում էր տպելու այն, ինչ արել էր առաջ։ Ամեն տեսակ նոր աշխատանքից նա վճռականապես հրաժարվում էր։ Նորից գրիչը ձեռք վերցնելը նրան անտանելի էր թվում։ Նա շատ լավ էր հիշում, թե նողկալի ամբոխն ինչպե՛ս բզկտեց Բրիսսենդենին. նա առաջվա պես արհամարհում էր ամբոխին, թեև վերջինը ծափահարում էր նրան։ Մարտինն իր ժողովրդականությունը համարում էր անարգանք Բրիսսենդենի հիշատակի նկատմամբ։ Նա խոժոռում էր դեմքը, բայց չէր նահանջում՝ հաստատ որոշած լինելով լցնել իր տոպրակը ոսկով։

Մարտինը քանիցս ստանում էր հրատարակիչներից հետևյալ բովանդակությամբ նամակներ.

«Շատ ենք ցավում, որ մոտ մի տարի առաջ ստիպված էինք հրաժարվել ձեր լիրիկական ոտանավորների ցիկլից։ Գրանք այն ժամանակ էլ ահագին տպավորություն թողեցին մեզ վրա, բայց զանազան հանգամանքներ մեզ խանգարե-

ցին օգտագործել դրանք այն ժամանակ։ Եթե այդ ոտանավորները չեն հրատարակված և դուք այնքան բարի կլինեք, որ կհամաձայնեք ուղարկել դրանք մեզ, մենք անմիջապես կտպենք այդ ամբողջ ցիկլը՝ վճարելով ձեզ այնպիսի հոնորար, որ դուք ինքներդ կհաճեիք սահմանել։ Մենք կհամաձայնենք և հրատարակել դրանք առանձին գրքով՝ ձեզ համար ամենաձեռնտու պայմաններով»։

Մարտինը հիշեց, որ մի ժամանակ գրել էր մի ողբերգություն անհանգ ոտանավորով. նա ուղարկեց այն որպես բանաստեղծություն։ Աչքի անցկացնելով այն ուղարկելուց առաջ՝ նա ինքն ապշեց այդ գրվածքի թուլության ու փքունության վրա։ Եվ սակայն նա ուղարկեց այդ ողբերգությունը, իսկ ժուռնալը տպեց այն՝ անջնջելի ամոթով ծածկելով իրեն։ Հասարակությունը վրդովվեց և հրաժարվում էր հավատալ, որ հռչակավոր Մարտին Իդենը այդպիսի դատարկ բան գրած կլինի։ Բայց ինչո՞ւմն է բանը — խաբեությո՞ւն, թե Մարտին Իդենը, հետևելով Դյումա-հոր օրինակին, ուրիշներին է հանձնարարում գրել իր փոխարեն։ Բայց երբ պարզվեց, որ այդ աշխատությունն այսպես կոչված «պատանեկության փորձ է», իսկ ժուռնալը տպեց այն լոկ շլացած լինելով Իդենի փառքով, ընդհանուր հոհոց բարձրացավ, և խմբագրական կոլեգիան փոխվեց։ Այդ ողբերգությունն այնպես էլ լույս չտեսավ առանձին հրատարակությամբ, իսկ Մարտին Իդենը, առանց խղճահարվելու, չվերադարձրեց հրատարակչի ուղարկած կանխավճարը։

Մի շաբաթաթերթ ուղարկեց Մարտինին շատ երկար մի հեռագիր, որի համար առաքման ծախս վճարված կլիներ ամենաքիչը երեք հարյուր դոլլար, առաջարկելով նրան գրել քսան ակնարկ՝ ամեն մեկը հազար դոլլար հոնորարով։ Դրա համար Մարտին Իդենը հրատարակչության հաշվին պետք է ուղևորություն կատարեր Միացյալ Նահանգներում և ընտրեր թեմաներ, որոնք հետաքրքրական կթվան նրան։ Հեռագրում հիշատակված էին որպես նմուշ մի քանի թեմաներ, պարզ ու հասկանալի ցույց տալու համար, որքա՛ն ընդարձակ են

հրատարակչության պլանները և ո՛րքան ազատ է Մարտինը թեմաների ընտրության հարցում։ Միակ պայմանը, որը դրվում էր նրա առաջ—դա այն էր, որ նա Միացյալ Նահանգների սահմաններից դուրս չպետք է գնար։

Վերադիր վճարով ուղարկված իր հեռագրում Մարտինը խորին ցավ հայտնեց, որ չի կարող ընդունել այդ հրապուրիչ առաջարկը։

«Վիկի-Վիկի» վիպակը, որը տպվեց «Ուորրենի ամսաթերթում» արտասովոր հաջողություն գտավ։ Շուտով շքեղ տպագրությամբ լույս տեսնելով որպես գիրք՝ նա գրեթե մի քանի օրում սպառվեց։ Բոլոր քննադատները միաձայն ընդունեցին այդ որպես կլասիկ գործ։ Սակայն «Ուրախության ծուխը» ժողովածուն դիմավորվեց որոշ տարակուսանքով և մինչև անգամ սառնորեն։ Բուրժուական հասարակությունն իրեն վիրավորված զգաց նրա չափազանց համարձակ բարոյականությամբ և նախապաշարմունքների նկատմամբ լիակատար արհամարհանքով։ Բայց երբ Փարիզում հրատարակվեց ֆրանսերեն թարգմանությունը և աննախընթաց հաջողություն գտավ, Անգլիան ու Ամերիկան նույնպես այդ ժողովածուի վրա ընկան, և Մարտինը Դարնլեյ և Ընկերություն ֆիրմայից պահանջեց՝ երրորդ գրքի համար քսանհինգ տոկոս, իսկ չորրորդ գրքի համար երեսուն տոկոս։ Այդ երկու գրքերով հրատարակվեցին Մարտինի բոլոր պատմվածքները, որոնք լույս էին տեսել զանազան ժուռնալներում։ «Զանգերի զողանջը» և բոլոր «սոսկալի» պատմվածքները տպվեցին առաջին հատորում։ Երկրորդ հատորում լույս տեսան «Արկած», «Կաթսա», «Կյանքի գինին», «Ջրապտույտ», «Ջվարթ փողոց» և մի քանի այլ պատմվածքներ։ Բացի այդ, հրատարակվեց և նրա բոլոր հոդվածների ժողովածուն, նույնպես և ոտանավորների հատորը, որի մեջ մտան «Ծովի երգեր» և «Սոնետներ սիրո մասին»—այս վերջինները նախապես տպվել էին «Կանանց ուղեկից» ժուռնալում, որը Մարտինին վճարեց չլսված հոնորար։

Մարտինը թեթև շունչ քաշեց, երբ նրա վերջին գրվածքն

էլ վերջապես հրատարակվեց։ Ե՛վ եղեգնյա պալատը, և՛ սպիտակ երկկայմ նավը հիմա բոլորովին մոտ էին։ Վերջ ի վերջո նա հերքեց Բրիսսենդենի կարծիքն այն մասին, թե ոչ մի իսկապես գեղարվեստական աշխատություն չի տպվում ժուռնալում։ Իր անձնական օրինակով նա փայլուն կերպով ապացուցեց, որ Բրիսսենդենը սխալվում էր։ Բայց և այնպես Մարտինն իր սրտի խորքում զգում էր, որ իր բարեկամը իրավացի էր։ Չէ՞ որ նրա բոլոր հաջողությունների գլխավոր պատճառն եղել է «Արևի ամոթանքը», իսկ բոլոր մնացածները միանգամայն պատահականորեն քշվեցին։ Այդ նույն գրվածքները տարիներ շարունակ մերժվում էին բոլոր ժուռնալների կողմից։ Սակայն «Արևի ամոթանքի» հրատարակումը ուժեղագույն աղմուկ է եռանդուն գրավեճ առաջացրեց, որի հետևանքով էլ Մարտինի անունը հռչակվեց։ Եթե «Արևի ամոթանքը» լույս չտեսներ, գրական բանավեճ չէր առաջանա, իսկ «Արևի ամոթանքի» հաջողությունը, խոսելով ըստ էության, լոկ հրաշք էր, ինչպես ընդունում էր այդ և Դարնլեյ և Ընկերության ֆիրման։ Այս ֆիրման առաջին անգամ չվճռվեց հրատարակել հաղար հինգ հարյուր օրինակից ավելի. նա փորձառու հրատարակիչ էր, բայց և այնպես շատ զարմացավ այդ գրքի հաջողությանը։ Նրա հաջողությունն իրոք հրաշք էր թվում այդ ֆիրմային։ Վերջինը հետագայումն էլ չէր կարողանում ազատվել այդ զգացումից, և նրա ամեն մի նամակում զգացվում էր ակնածանքով լի զարմանք՝ խորհրդավոր, միանգամայն անբացատրելի հաջողության նկատմամբ։ Ֆիրման չէր էլ փորձում բացատրել այն։ Այս հարցում չէր կարող բացատրություն լինել։ Այդպես պատահեց, ուրիշ ոչինչ։ Դա պատահեց՝ հակառակ բոլոր հավանականություններին ու հաշիվներին։

Մտածելով այդ բոլորի մասին՝ Մարտինն առանձնապես բարձր չէր դնահատում իր ժողովրդականությունը։ Բուրժուազիան կարդում էր նրա գրքերը և նրա տոպրակը լցնում ոսկով, բայց այդ նույն բուրժուազիան (դրանում Մարտինը հաստատ համոզված էր),—ոչինչ չի կարող հասկանալ նրա

գրվածքներից։ Այն հարյուրավոր ու հազարավոր մարդկանց համար, որոնք խլխլելով դնում էին նրա գրքերը, վերջինների գեղեցկությունն ու միտքը ոչ մի արժեք չունեին։ Նա պարզապես ճակատագրից փայփայված մարդ էր, մի նորելուկ, որը խուժել էր Պառնաս՝ օգտվելով աստվածների բարեհոգի տրամադրությամբ։ Հարյուր հազարավոր մարդիկ կարդում են նրան և հիանում նրանով նույն անանձնական անհասկացողությամբ, որով նրանք հարձակվեցին Բրիսսենդենի «Օրագրության» վրա և բզկտեցին նրան,—գայլերի անարգ ոհմակ, որը մեկի առաջ պոչ է խաղացնում, իսկ մի ուրիշի կոկորդին իր ժանիքներն է խրում։ Ամեն ինչ կախված է պատահականությունից։ Մարտինն առաջվա պես հաստատ համոզված էր, որ «Օրագրությունը» անչափ բարձր է այն բոլորից, ինչ ստեղծել է ինքը՝ Մարտինը։ «Օրագրությունը» բարձր է այն բոլորից, որ կարող է ստեղծել նա,—դա մի պոեմ է, որ դարագլուխ է բաց անում։ Ի՞նչ արժեք կարող էր ունենալ նրա աչքում ամբոխի խոնարհվելը,—այն ամբոխի, որը դեռ վեբջերս ցեխն է կոխել «Օրագրությունը»։ Մարտինը թեթև սրտով ու գոհունակությամբ շունչ քաշեց։ Վերջին գրվածքը վաճառված է, և շուտով կարելի կլինի վերջ տալ այդ բոլորին։

ԳԼՈՒԽ XLIV

Միստեր Մորդը հանդիպեց Մարտինին «Մետրոպոլ» հյուրանոցի նախասրահում։ Պատահաբար էր եկել այնտեղ իր գործերով, թե՞ եկել էր ուղղակի ճաշի հրավիրելու նրան,—Մարտինը չկարողացավ վերջնականապես որոշել, թեև հակված էր ընդունելու երկրորդ ենթադրությունը, ամեն պարագայում միստեր Մորդը նրան հրավիրեց ճաշի,—միստեր Մորդը, Ռութի հայրը, որը արդելել է Մարտինի ճուտքն իր տունը, և որը քանդել է նրա նշանդրեքը։

Մարտինը չչարացավ նրա վրա, մինչև անգամ չցուցաբերեց իր ինքնասիրությունը։ Նա ներողամտությամբ լսեց միստեր Մորլին՝ մտածելով, թե նա ի՛նչ է զգում այդ րոպեին, երբ ստիպված է խոնարհվել Մարտինի առաջ։ Մարտինը չբմերժեց հրավերը, այլ միայն շնորհակալություն հայտնեց և հարցրեց ամբողջ ընտանիքի առողջության մասին, մանավանդ միսիս Մորլի և Ռութի։ Մարտինն ազատ արտասանեց այդ անունը, առանց կմկմալու, և ինքնիրեն զարմացավ, որ արյունը չխփեց գլխին և սիրտն ավելի արագ չբաբախեց։ Մարտինի վրա ամեն կողմից տեղում էին ճաշի հրավերներ, որոնցից մի քանիսը նա ընդունում էր։ Մարդիկ ուզում էին փնտրում ծանոթանալու Մարտինի հետ, որպեսզի ճաշի հրավիրեն նրան։ Մարտինը շարունակում էր զարմանալ, թե ինչպես այնպիսի մի չնչին բան, ինչպիսին է ճաշը, դարձնում են խոշոր երևույթ։ Մինչև անգամ Բեռնարդ Հիդգինբոթամը ճաշի հրավիրեց նրան։ Դա ավ՛լի շատ ապշեցրեց նրան։ Մարտինը հիշեց, որ այն օրերին, երբ նա գրեթե սովամահ էր լինում ո՛չ ոքի մտքովն էլ չէր անցնում ճաշի հրավիրել նրան։ Ինչքա՜ն կարիք ուներ նա դրան այն ժամանակ, երբ անչափ թուլացել էր քաղցից։ Այս խնդրում ամենահիմար մի պարադոքս կար։ Երբ նա ամբողջ շաբաթներով մնում էր առանց ճաշի, ոչ ոք չէր հրավիրում նրան, իսկ հիմա, որ հարյուր հազար ճաշի բավելու չափ դրամ ունի և ախորժակը բոլորովին կորել է,—ամեն կողմից ճաշի են կանչում։ Ինչո՞ւ։ Ո՛չ մի առանձին արժանիքներ չեն ավելացել նրանում. նա նույն մարդն է։ Նրա բոլոր աշխատությունները գրված են վաղուց, նույն այն քաղցի օրերին, երբ պարոնայք Մորլերն անվանում էին նրան ծույլ և առաջարկում էին նրան գրագիր դառնալ գրասենյակում։ Բայց չէ՞ որ նրանք այն ժամանակ էլ գիտեին, որ նա աշխատում է։ Ռութը ցույց էր տալիս նրանց ամեն մի գրվածք, որ Մարտինը տալիս էր նրան կարդալու։ Նրանք էլ էին կարդում այդ գրվածքները։ Իսկ հիմա, շնորհիվ նույն այդ աշխատությունների, նրա անունն ընկել է թեր-

թերի մեջ, հենց շնորհիվ դրան էլ նա դարձել է նրանց համար ցանկալի հյուր։

Ակներև էր մի բան. Մորզերը ոչ մի գործ չունեին ոչ նրա՝ Մարտին Իդենի հետ, ոչ էլ նրա ստեղծագործությունների հետ։ Եթե հիմա նրանք ուզում են նրան, դա ոչ թե անձամբ նրա սիրուն, ոչ թե նրա գործերի սիրուն, այլ այն անվան սիրուն, որը հիմա փառապսակով պատել է Մարտինին. թերևս նրանց հարգանք էր ներշնչում և այն հարյուր հազար դոլլարը, որն այժմ գանվում էր բանկում նրա ընթացիկ հաշվին։ Դա սովորական երևույթ էր բուրժուական հասարակության մեջ, և տարօրինակ կլիներ այլ բան սպասել այդ մարդկանցից։ Բայց Մարտինը հպարտ էր։ Այդպիսի գնահատություն հարկավոր չէր նրան։ Նա ուզում էր, որ գնահատեն հենց իրեն կամ իր աշխատությունները,— դա ըստ էության միևնույն է։ Հենց այդպես էլ գնահատում էր նրան Լիզզին։ Մինչև անգամ նրա գործերն առանձին արժեք չունեին Լիզզիի աչքին ամենաէականը նա ինքն էր։ Այսպես էր վարվում նրան և Ջիմմին, ինչպես և նրա բոլոր հին ընկերները։ Անցյալում նրանք քանիցս ապացուցել են իրենց անշահագրգիռ նվիրվածությունը,— ապացուցեցին այդ և հիմա, Շելլ-Մաունդ պարկի կիրակնօրյա զբոսանքին։ Նրանց տեսակետից, թքա՛ծ Մարտինի բոլոր գրվածքների վրա։ Նրանք սիրում էին նրան, Մարտ Իդենին—իրենց խմբին պատկանող հիանալի տղին—և պատրաստ էին նրա համար ենթարկվելու ամեն վտանգի։

Այլ է Ռութի նկատմամբ։ Ամեն կասկածից վեր է, որ Ռութը նրան սիրել է հենց նրա՝ Մարտինի համար։ Բայց նա ի՛նչքան էլ շատ սիրելիս լիներ Մարտինին, պարզվեց որ նրա համար ավելի թանկ են բուրժուական նախապաշարումները։ Ռութը չէր համակրում նրա ստեղծագործությունը գլխավորապես նրա համար, որ դա եկամուտ չի բերում Մարտինին։ Հենց այդ տեսակետից էլ Ռութը գնահատեց նրա «Սոնետներ սիրո մասին» գրվածքը։ Նա նույնպես պահանջում էր, որ նա ծառայության մտնի։ Ճիշտ է, որ

Ռութի արտահայտությամբ, դա նշանակում էր «դիրք գրավել», բայց դա միևնույնն է, և Մարտինը մինչև անգամ գերադասում էր «ծառայություն» տերմինը։ Մարտինը Ռութին կարդում էր իր բոլոր գրվածքները, պոեմները, վիպակները, հոդվածները, «Վիկի-Վիկի», «Արևի ամոթանքը» —մի խոսքով բոլորը։ Իսկ նա անփոփոխ համառությամբ խորհուրդ էր տալիս նրան ծառայության մտնել,— ասում՝ ած իմ, կարծես թե առանց այն էլ չի աշխատում եղան պես, զրկելով իրեն քնից, չափազանց լարելով իր ուժերը լոկ նրա համար, որպեսզի վերջ ի վերջո արժանի լինի Ռութին։

Այդպիսով, մի չնչին հանգամանք մեծանում, նշանակալից էր դառնում։ Մարտինը զգում էր իրեն առողջ և առույգ, ուտում էր նորմալ չափով, քնում էր՝ ինչքան ուզեր, բայց այդ չնչին հանգամանքը նրան հանգիստ չէր տալիս։ «Շա՛տ վաղուց»—այս խոսքը ծակում էր նրա ուղեղը։ Կիրակնօրյա ճաշերից մեկի ժամանակ, Բեռնարդ Հիգգինբոթամի դիմացը նստած, Մարտինը հազիվ էր զսպում իրեն, որ չբղավի.

«Չէ՞ որ այդ բոլորն արված է շատ վաղուց։ Եվ ահա դուք մրցության եք դուրս եկել ինձ կերակրելու համար, իսկ մի ժամանակ դուք ինձ թողնում էիք, որ սովից մեռնեմ, մերժում էիք ինձ ընդունել ձեր տունը, չէիք ուզում ինձ ճանաչել լոկ նրա համար, որ ես ծառայության չէի գնում։ Բայց իմ բոլոր գործերը դեռ այն ժամանակ գրված պատրաստ էին։ Հիմա, երբ ես խոսում եմ, դուք ձեր ակնածանքով լի հայացքը չեք հեռացնում ինձանից, որսում եք իմ արտասանած ամեն մի բառը։ Ես ասում եմ ձեզ, որ դուք խեղճ ողորմելիներ եք, իսկ դուք, փոխանակ վիրավորվելու, հավանության նշան եք տալիս գլխով և քիչ մնա, որ շնորհակալություն հայտնեք։ Ինչո՞ւ—Որովհետև ես նշանավոր մարդ եմ։ Որովհետև շատ դրամ ունեմ, և ոչ թե նրա համար, որ ես Մարտին Իդենն եմ— հիանալի տղա և ոչ թե կատարյալ հիմար։ Եթե ասեի, որ լուսինը կանաչ պանրից է շինված, դուք անմիջապես կհամաձայնեիք դրան, ամեն

պարագայում չէիք հակաճառի ինձ, որովհետև շատ ոսկի ունեմ։ Իսկ այն աշխատանքը, որի համար ես ստացել եմ այդ դրամները, կատարված է շատ վաղուց, այն օրերին, երբ դուք թքում էիք իմ երեսին և ցեխն էիք կոխում ինձ»։

Սակայն Մարտինը չբղավեց իր այդ մտքերը։ Հոգու խորքում նա տխրում և վիրավորվում էր, բայց համբերատար ժպիտը չէր անհետանում նրա շրթներից։ Հիգգինբոթամը սկսեց խոսել։ Նա—Բեռնարդ Հիգգինբոթամը ամեն ինչ նվաճել է իր սեփական ձեռքով, և պարծենում է դրանով։ Նրան ոչ որ չի օգնել, և ոչ ոքի ոչնչով պարտական չի։ Նա օրինապահ քաղաքացի է, կերակրում է մեծ ընտանիք։ Իսկ այդ խանութը, որը հիմա կարգին եկամուտ է բերում, ծաղկում է շնորհիվ նրա—Բեռնարդ Հիգգինբոթամի ջանքերին։ Նա սիրում է իր խանութն այնպես, ինչպես սիրող ամուսինները սիրում են իրենց կանանց։ Նա սիրտը բացեց Մարտինին և սկսեց պատմել, թե ի՛նչ դժվարությամբ է սարքավորել խանութը և կարգի բերել իր գործը։ Բացի այդ, նա ունի պլաններ, մեծ պլաններ։ Թաղի ազգաբնակչությունն աճում է։ Խանութը չի կարող սպասարկել բոլորին։ Եթե լրացուցիչ շենք ունենար, կարող էր մուծել մի քանի նորություններ և ավելացնել իր եկամուտը։ Եվ նա այդ կանի, միայն թե ամեն բանից առաջ նրան անհրաժեշտ է գնել հարևան հողամասն ու կառուցել երկհարկանի մի տուն ևս։ Վերևի հարկը նա վարձու կտա, իսկ ներքևի հարկը կմիացնի խանութին։ Մինչև անգամ նրա աչքերը պլստացին, երբ նա խոսեց իր նոր ցուցանակի մասին, որ կձգվի երկու տան ֆասադով մեկ։

Մարտինը գրեթե չէր լսում։ Նրա ականջներում շարունակում էր հնչել «շ՛ատ վաղուց» հանգերդը։ Այդ հանգերգը գժվեցնում էր նրան՝ բառի իսկական իմաստով, բայց ո՛չ մի կերպ չէր կարող պոկ գալ նրանից։

— Դա ինչքա՞ն պետք է արժենա՝ ասացիր դու,— հարցրեց նա հանկարծ։

Նրա փեսան կտրեց իր խոսքը և աչքերը չռեց նրա վրա։

Նա իսկի չի էլ ասել, թե դա ի՞նչ կարժենա. բայց եթե դա հետաքրքրում է Մարտինին, կարող է ասել մոտավորապես։

— Այժմյան գներով,—ասաց նա,—դա կարող է չորս հազար դոլլար արժենալ։

— Ցուցանակն էլ հե՞տը։

— Ցուցանակը չեմ հաշվել։ Տունը որ լինի, ցուցանակն էլ կլինի։

— Իսկ հողամա՞սը։

— Դրա համար պետք է երեք հազար դոլլար ևս։

Լեղուն քսելով չորացած շրթունքներին և մատները ջղայնորեն շարժելով՝ Բեռնարդ Հիգգինբոթամը նայում էր թե ինչպե՛ս է Մարտինը չեկ գրում։ Գրելով չեկը՝ նա տվեց այն Հիգգինբոթամին։ Չեկը գրված էր յոթ հազար դոլլարի։

— Ես... կարող եմ առաջարկել քեզ վեց տոկոսից ոչ ավելի,—մրմնջաց Հիգգինբոթամը՝ հուզմունքից խոպոտ ձայնով։

Մարտինը ուզում էր ծիծաղել, բայց դրա փոխարեն հարցրեց.

— Դա ինչքա՞ն կանի։

— Հիմա կհաշվենք։ Վեց տոկոս... վեց անդամ յոթ՝ չորս հարյուր քսան։

— Նշանակում է՝ ամիսը երեսունհինգ դոլլար։

— Հիգգինբոթամը գլխով հաստատական նշան արեց։

— Լավ, եթե դու չես առարկում, այսպես կանենք։— Մարտինն այդ ասելով նայեց Գերտրուդին։—Կարող ես ամբողջ հիմնական կապիտալը պահել քեզ անվերադարձ՝ պայմանով, որ ամսական երեսունհինգ դոլլար ծախսես տնտեսության վրա։ Այդ դրամով կարելի է վարձել խոհարարուհի և լվացարարուհի։ Մի խոսքով՝ յոթ հազարը քոնն է, եթե դու ինձ երաշխավորություն տաս, որ Գերտրուդն այլևս կեղտոտ աշխատանք չի անելու։ Համաձա՞յն ես։

Միսաեր Հիգգինբոթամը վիրավորվեց։ Այն պահանջը, որ նրա կինը չպետք է կեղտոտ գործ անի, նախատական թվաց նրան։ Այդ փառավոր նվերը լոկ ոսկեզօծած դեղա-

հատ է, դառը դեղահատ։ Կ սը տնային գործ չանի՞, Դա կատաղեցրեց նրան։

— Ինչպես կուզես,—ասաց Մարտինը։—Այդ դեպքում ամսական այդ երեսունհինգ դոլլարը ես կվճարեմ, բայց...

Նա երկարեց ձեռքը դեպի չեկը, բայց Բեռնարդ Հիգգինբոթամը շտապով ծածկեց այն իր ձեռքով և բացագանչեց։

— Համաձայն եմ, համաձայն եմ։

Նստելով տրամվայ՝ Մարտինը հոգնածություն և զզվանք զգաց։ Նա ետ դարձավ և նայեց ճղճղան ցուցանակին։

«Խո՛զ,—քրթմնջաց նա,—ինչ խո՞զն է»։

Երբ ժուռնալներից մեկում լույս տեսավ Մարտինի «Գուշակուհի» բանաստեղծությունը, զարդարված առաջնակարգ նկարիչների գծագրություններով, Հերման Շմիդտը հանկարծ մոռացավ, որ ժամանակին այդ ոտանավորն անվանել էր անպատշաճ։ Նա պատմում էր բոլորին, որ այդ ոտանավորը գրած է ի պատիվ իր կնոջ, և ջանք թափեց, որ այդ լուրը հասնի և թերթի ռեպորտյորի ականջը։ Ռեպորտյորը շուտով եկավ լուսանկարչի և գծագրիչի հետ միասին։ Դրա հետևանքով կիրակնօրյա համարներից մեկում երևաց Մերիենի գգալիորեն գեղեցկացված դիմանկարը՝ Մարտին Իդենի և նրա կյանքի վերաբերյալ մի շարք ինտիմ մանրամասնություններով և «Գուշակուհու» նոր տեքստով՝ արտատպված ժուռնալի հատուկ թույլտվությամբ։ Դա ֆուռոր առաջացրեց ամբողջ գավառում, և բոլոր շրջակա տանտիկինները պարծենում էին մեծ գրողի քրոջ հետ իրենց ծանոթությամբ, իսկ նրանք, որ այդ պատիվը չունեին, շտապում էին ուղղել իրենց այդ սխալը։ Հերման Շմիդտը բավականությունից շըփում էր իր ձեռքերը և մինչև անգամ նոր դազգահ պատվիրեց առհեստանոցի համար։

— Դա ամեն մի ռեկլամից լավ է,—ասում էր նա,—և առանց դրամ ծախսելու։

— Լավ կլինի ճաշի հրավիրել նրան,—առաջարկեց Մերիենը։ Եվ Մարտինն եկավ ճաշի և աշխատում էր սիրալիր լինել մսի մեծաքանակ վաճառական գիրուկ հյուրի և նրա

ավելի չաղ կնոջ հետ. դրանք կարևոր մարդիկ էին և կարող էին շատ օգտակար լինել այնպիսի երիտասարդի, ինչպիսին էր, օրինակ, Հերման Շմիդտը, որը ճամփա էր հարթում իրեն համար։ Իհարկե, նրանք երբեք իրենց այցելությանը չէին արժանացնի Հերմանին, եթե նա խոստացած չլիներ, որ ճաշին ներկա է լինելու իր աներձագը— նշանավոր զրողը։ Նույն խայծով հրապուրվեց Խաղաղ-օվկիանոսյան հեծանիվային ընկերության գործակալությունների գլխավոր կառավարիչը։ Հերման Շմիդտը քծնում էր նրան՝ հուսալով, որ նրանից կստանա Օկլենդի ներկայացուցչությունը։ Մի խոսքով՝ Հերմանը պատրաստ էր Մարտին Իդենի հետ իր ազգակցությունը մուծել իր կյանքի ակտիվը, բայց իր հոգու խորքում նա միանգամայն չէր հասկանում, թե ինչպես պատահեց այդ բոլորը։ Շատ հաճախ նա վեր էր կենում լուռ գիշերին և, աշխատելով չզարթնացնել իր կնոջը, կարդում էր Մարտին Իդենի երկերը, և ամեն անգամ էլ որոշակի համոզում էր գոյացնում, թե միայն հիմարները կարող են դրամ վճարել այդ գրվածքների համար։

Մարտինը շատ լավ էր հասկանում կացությունը. հենվելով աթոռի կռնակին՝ նա դիտում էր պարոն Հերման Շմիդտի գանգը, մտովին հարվածներ էր հասցնում նրա ծոծրակին— ո՞ւֆ, ինքնաբավական գերմանական ռեխ։ Բայց նրանում մի քանի գծեր դուր էին գալիս Մարտինին։ Թեպետ աղքատ էր և ուզում էր շուտ հարստանալ, բայց և այնպես աղախին էր վարձել, որպեսզի թեթևացնի Մերիենի տնային աշխատանքը։ Ճաշից հետո խոսելով հեծանիվային ընկերության կառավարիչի հետ, Մարտինը մի կողմ քաշեց Հերմանին և առաջարկեց նրան դրամական աջակցություն՝ Օկլենդում հեծանիվների լավագույն խանութ սարքավորելու համար։ Նա այնքան առատաձեռնություն հայտաբերեց, որ Հերմանին պատվիրեց միաժամանակ փնտրել գարաժ և ավտոմորիլային արհեստանոց, քանի որ Հերմանը, անկասկած, շատ լավ կվարի միաժամանակ երկու ձեռնարկություն։

Մերիենը արտասվակալած աչքերով գրկելով Մարտի-

նին՝ գողտուկ փսփսաց նրան, թե շատ է սիրում նրան և միշտ էլ սիրել է։ Ճիշտ է, որ այդ վերջին բառերն արտասանելիս նա թեթևակի կարկամեց, և Մարտինը հասկացավ, որ նա խնդրում է ներել նրան այն բանի համար, որ ժամանակին կշտամբել է նրան և համոզել ծառայության մտնել։

— Դե՛, նրա մոտ դրամները երկար չեն մնա,—ասաց երեկոյան Հերման Շմիդտը իր կնոջը։—Նա զայրացավ, երբ ես տոկոսների մասին խոսեցի։ Գիտե՞ս ի՞նչ ասաց նա ինձ։ Նրան հարկավոր չի մինչև իսկ կապիտալը, և ոչ թե միայն տոկոսները։ Եվ եթե ես մի անգամ էլ բերան բանամ այդ հարցերի շուրջը, նա կփշրի իմ գերմանական կոնդը։ Այդպես էլ ասաց «գերմանական կոնդ»։ Բայց և այնպես՝ կեցցե՛ նա, թեև գործի մարդ չի։ Գլխավորն այն է, որ նա ուղղակի վրկեց ինձ։

Ճաշի հրավերները չէին դադարում, և ինչքան շատ էին լինում նրանք, Մարտինն այնքան ապշում էր։ Նա պատվավոր հյուր եղավ ակումբի ավագներից մեկի ճաշկերույթում, նստել էր շրջապատված այնպիսի մարդկանցով, որոնց մասին լսել ու կարդացել էր իր ամբողջ կյանքում։ Այդ մարդիկ ասում էին նրան, որ կարդալով «Անդրցամաքային ամսաթերթում» նրա գրվածքներից «Զանգերի զողանջը», իսկ «Մոզում»՝ «Փերին ու մարգարիտը», միանգամից հասկացան, որ հայտնվել է մի մեծ գրող։ «Աստված իմ,— մտածում էր Մարտինը,— իսկ ես այն ժամանակ սոված էի և ցնցոտիներ էի հագնում։ Ինչո՞ւ այն ժամանակ չհրավիրեցին ինձ ճաշի։ Այն ժամանակ դա ի դեպ կլիներ։ Չէ՞ որ դրանք շատ վաղուց գրված բաներ են։ Եթե դուք ինձ հիմա կերակրում եք իմ վաղուց կատարած աշխատանքի համար, ինչո՞ւ այն ժամանակ չէիք կերակրում ինձ, երբ ես իրոք կարիք ունեի դրան։ Չէ՞ որ ոչ «Զանգերի զողանջում», ոչ «Փերին և մարգարիտը» պատմվածքում ես ոչ մի բառ չեմ փոխել։ Ո՛չ, դուք ինձ իսկի էլ չեք հյուրասիրում իմ աշխատության համար, այլ նրա համար, որ ինձ հյուրասիրում են բոլորը, և նրա համար, որ հյուրասիրելը պատվի գործ է համարվում։

Ինձ հյուրասիրում եք նրա համար, որ դուք տխմար անհասուններ եք, նրա համար, որ ենթարկվում եք կենդանիների հոտի կույր ու բութ զգացմունքին, իսկ այդ զգացմունքն այժմ թելադրում է մի բան. Մարտին Իդենին պիտի հյուրասիրել ճաշով։ Բայց ձեզանից ոչ մեկը չի հետաքրքրվում Մարտին Իդենի անձով ու նրա աշխատանքով»,—ասում էր նա ինքնիրեն և ոտի էր կանգնում, որպեսզի սրամիտ ու փայլուն պատասխան տա սրամիտ ու փայլուն բաժակաճառին։

Եվ այդպես էր ամեն տեղ։ Ուր էլ որ գնար—ակումբները, գրական երեկույթները,—ամենուր ասում էին նրան, որ երբ լույս տեսավ «Զանգերի զողանջը» և «Փերին ու մարգարիտը»,— միանգամից բոլորի համար պարզվեց, որ հրապարակ է եկել մի մեծ գրող։ Եվ միշտ էլ Մարտինի հոդու խորքում վխտում էր նույն տագնապալի հարցումը. «Ինչո՞ւ այն ժամանակ չկերակրեցիք ինձ։ Չէ՞ որ բոլոր այդ բաները շատ վաղուց են գրված։ «Զանգերի զողանջը» և «Փերին ու մարգարիտը» մատաչափ անգամ չէին փոխվել։ Դրանք այն ժամանակ էլ լավ էին և վարպետորեն գրված, ինչպես այժմ։ Բայց դուք հյուրասիրում եք ինձ ոչ թե այդ, և ոչ թե իմ այլ գրվածքների համար։ Դուք հյուրասիրում եք ինձ նրա համար, որ դա հիմա մոդա է, որ ամբողջ հոտը գժվել է մի բանում—հյուրասիրել Մարտին Իդենին»։

Եվ հաճախ փայլուն հյուրասիրության միջև նրա աչքին հանկարծ երևում էր մի երիտասարդ խուլիգան՝ երկլանջ կուրտիկով և հոնքերին իջեցրած ստետսոն գլխարկով։ Այդպես պատահեց մի օր Օկլենդում, մի մեծ գրական ցերեկույթում։ Աթոռից վեր կենալով և բարձրանալով էստրադը՝ Մարտինը հանկարծ տեսավ հեռում, սրահի խորքում. երիտասարդ խուլիգանին, նույն կուրտիկով և նույն գլխարկով։ Շքեղ հագնված հինգ հարյուր կանայք միանգամից նա նայեցին՝ տեսնելու համար, թե ի՞նչ է նշմարել հանկարծ Մարտին Իդենը։ Բայց նրանք սրահի դատարկ անցքում ոչինչ չտեսան։ Իսկ Մարտինը շարունակ նայում էր ու մտածում, թե երիտասարդ թափառաշրջիկը կհանի՞ իր գլխարկը։

որը կարծես կպած լիներ նրա գլխին։ Ուրվականը ուղղվեց դեպի էստրադը և բարձրացավ այնտեղ։ Մարտինը մաղ էր մնացել, որ լաց լիներ թախիծից՝ նայելով իր պատանեկության այդ ստվերին, մտածելով, թե ի՞նչ կարող էր դառնալ և ինչ դարձավ։ Ուրվականն անցավ էստրադայով, ընդհուպ մոտեցավ Մարտինին և անհետացավ, կարծես լուծվելով Մարտինի մեջ։ Հինգ հարյուր շքեղազարդ կանայք ծափահարեցին իրենց քնքուշ ձեռնոցավոր փոքրիկ ձեռքերով։ Նրանք ուզում էին խրախուսել նշանավոր հյուրին, որը հանկարծ այդպես ամաչկոտություն էր հայտաբերում։ Մարտինը կամքի ուժով իրենից վանեց ուրվականին, ժպտաց և սկսեց խոսել։

Դպրոցի դիրեկտորը, պատվարժան ու բարեհոգի մի մարդ, մի օր փողոցում հանդիպելով Մարտինին՝ հիշեցրեց նրան, թե ի՞նչ տեսարաններ էին տեղի ունենում նրա դրասենյակում, երբ Մարտինին արտաքսեցին դպրոցից ըմբոստության ու ծեծկվուքի համար։

— Ես կարդացի ձեր «Զանգերի զողանջը»,— ասաց նա,—երբ դա առաջին անգամ տպվեց։ Հիանալի է։ Դա էդգար Պոյի գրվածքներից ետ չի մնում։ Ես այն ժամանակ էլ կարդալով այդ, ասացի. հիանալի՛ է։

«Այո՛։ Իսկ դուք այն ժամանակ մի երկու անգամ պատահել եք փողոցում և մինչև անգամ չեք ճանաչել ինձ,— քիչ մնաց ասեր Մարտինը,—երկու անգամից էլ ես սովածվազում էի գրավ դնելու իմ միակ կոստյումը։ Դուք ինձ չէիք ճանաչում։ Իսկ այն ժամանակ իմ բոլոր աշխատությունները արդեն գրված էին։ Ինչո՞ւ միայն հիմա ճանաչեցիք ինձ»։

— Այս օրերս ես ասացի կնոջս, որ շատ լավ կլիներ, եթե դուք հանդիպեիք մեզ մոտ ճաշելու,— շարունակեց դիրեկտորը,— և նա շատ խնդրեց, որ հրավիրեմ ձեզ։ Այո՛, շատ, շատ խնդրեց։

— Ճաշե՞լ,— անսպասելիորեն խիստ ձայնեց Մարտինը։

— Այո՛... Այո՛... ճաշել,— մրմնջաց դիրեկտորը՝ իրեն կորցնելով,— առանց այլևայլության... գիտե՞ք... հին ուսուցչի հետ... Ա՛խ, դուք չարաճճի։— Նա անհամարձակ թափահարեց Մարտինի ուսը՝ ջանալով բարեկամական կատակի վերածել նրա այդ ելույթը։

Մարտինը մի քանի քայլ առաջացավ, հետո կանգ առավ և նայեց ծերունու ետևից։

— Սատանա՛ն տանի,—քրթմնջաց նա։— Կարծես թե ես շատ վախեցրի նրան։

ԳԼՈՒԽ XLV

Մի օր Մարտինի մոտ եկավ Կրեյզը— նույն այն Կրեյզը «իսկական մարդկանցից»։ Մարտինն անկեղծ ուրախությամբ ընդունեց նրան և լսեց իր ֆանտաստիկությամբ արտասովոր մի ձեռնարկի նախագծի մասին, որը կարող էր շահագրգռել նրան, որպես գրողի, բայց ոչ ֆինանսիստի։ Այդ ծրագիրը բացատրելիս՝ Կրեյզը հանկարծ հիշատակեց «Արևի ամռթանքը» և ասաց, որ դա միանգամայն անիմաստ բան է։

— Սակայն ես այստեղ եկել եմ ո՛չ թե փիլիսոփայություն անելու,— ընդմիջեց նա ինքնիրեն։— Ես ուզում եմ միայն իմանալ, թե դուք հազար դոլլար կմուծե՞ք իմ ձեռնարկության մեջ։

— Ո՛չ, դրա համար ես այնքան էլ հիմար չեմ,— ասաց Մարտինը,— բայց ես կանեմ մի այլ բան։ Դուք ինձ հնարավորություն տվեցիք անցկացնել իմ կյանքում ամենահետաքրքրական երեկոն։ Դուք ինձ տվեցիք այն, որ ոչ մի դրամով չի կարելի գնել։ Հիմա դրամն ինձ համար ոչինչ չարժի։ Ես սիրով հենց այնպես կտամ հազար դոլլար, որպեսզի շնորհակալություն հայտնեմ այն անմոռանալի երեկույթի համար։ Ձեզ դրամ է հարկավոր, իսկ ես չափազանց

չատ դրամ ունեմ։ Ուզում եք դրա՞մ ստանալ։ Ո՛չ մի խորամանկության կարիք չկա։ Ստացեք։

Կրեյգը ոչ մի զարմանք չարտահայտեց։ Նա գրպանը կոխեց չեկը։

— Այս պայմաններով պատրաստ եմ ամեն շաբաթ այդպիսի երեկույթներ սարքել ձեզ համար։

— Չափազանց ուշ է,— գլուխը թոթափեց Մարտինը,— դա ինձ համար առաջին ու վերջին այդպիսի երեկոն էր։ Կարծես դրախտումն էի գտնվում։ Գիտեմ, որ ձեզ համար դրանում ոչ մի առանձին բան չկար։ Իսկ ինձ համար ամեն ինչ առանձնահատուկ էր։ Դա արդեն չի կրկնվի։ Ես վերջ տվեցի փիլիսոփայության։ Այլևս չեմ ուզում լսել դրա մասին։

— Կյանքումս առաջին անգամն է, որ ես դրամ ստացա փիլիսոփայության համար,— նկատեց Կրեյգը՝ ուղղվելով դեպի դուռը,— բայց այդ շուկան միանգամից էլ փակվեց։

Մի օր փողոցով Մարտինի առաջով կառքի մեջ նստած անցավ միսս Մորզը և ժպտալով բարևեց նրան։ Նա նույնպես ժպտաց և հանեց գլխարկը։ Այդ դեպքը ոչ մի տպավորություն չթողեց նրա վրա։ Մի ամիս առաջ այդ դեպքը նրան անհաճո կթվար, թերևս զվարճալի, և նա կչանար պատկերացնել իրեն, թե միսս Մորզն ինչպես կզգար իրեն այդ պահին։ Բայց հիմա այդ հանդիպումը չհասավ նրա գիտակցությանը։ Նա իսկույն մոռացավ այն, ինչպես կմոռանար, օրինակ, այն, որ անցել է կենտրոնական բանկի կամ քաղաքային խորհրդարանի առաջով։ Եվ սակայն նրա ուղեղում անընդհատ, չափազանց լարված աշխատանք էր կատարվում։ Շարունակ նույն աննահանջ միտքը հանգիստ չէր տալիս նրան՝ «շա՛տ վաղուց»։ Առավոտները Մարտինը զարթնում էր այդ մտքով. նույն միտքը հալածում էր նրան քնի մեջ։ Ինչո՛վ էլ որ սկսեր պարապել, նա իսկույն ասում էր իրեն «Ամեն ինչ արված էր շատ վաղուց»։ Տրամաբանորեն խորհրդածելով՝ Մարտինը հանգեց այն տխուր եզրակացության, որ հիմա նա ոչ ոք է, ոչինչ է։ Խուլիգան Մարտ

Իդենը և նավաստի Մարտ Իդենը իրական անձնավորություններ էին. նրանք իրոք գոյություն ունեին։ Բայց մեծ գրող Մարտին Իդենը երբեք գոյություն չի ունեցել։ Մեծ գրող Մարտին Իդենը բազմագլուխ ամբոխի հերյուրած մտացածին մի անձնավորություն է, որին ամբոխը մարմնացրել է խուլիգան և նավաստի Մարտ Իդենի ֆիզիկական պատյանի մեջ։ Սակայն ինքը Հո գիտի, որ այդ ամենը խաբեություն է։ Նա իսկի էլ արևորդի չի, որի առաջ ամբոխը խոնարհվում և նրանից ակնածում է։ Հասկանալի է, որ ինքն ավելի լավ գիտեր այդ։

Մարտինը ժուռնալներում կարդում էր իր մասին՝ նայելով իր դիմանկարներին, որոնք տպվում էին ահագին քանակությամբ, և չէր ճանաչում իրեն։ Նա այն պատանին է, որ աճել է, ապրել, սիրել և ուրախացել կյանքին բանվորական արվարձանում։ Նա ինքն է, որ լավ է վերաբերվել մարդկանց և թեթև սրտով ընդունել ձախորդությունները. Ինքն է, որ թափառել է օտար երկրներում, շրջել է խաղաղ օվկիանոսը երկայնքին ու լայնքին և գլխավորել իրեն պես թոկից փախածների շայկան։ Ինքն է, որ առաջին անգամ գրադարան մտնելով ապշել է գրքերի անվերջ շարքերից, իսկ հետո կարդացել է այդ գրքերն ու սովորել հասկանալ նրանք։ Ինքն է, որ մինչև ուշ գիշեր չէր հանգցնում լամպը, ընում էր անկողնի մեջ մեխ դնելով և իր հերթին գրել է գրքեր։ Իսկ այն անկուշտ շատակերը, որին մարդիկ հիմա մրցում էին կերակրել,— ինքը չի։

Այնուամենայնիվ մի քանի բաներ զվարճացնում էին նրան։ Բոլոր ժուռնալիստները վիճում էին, որ Մարտին Իդենին հայտարարելու պատիվն իրենց է պատկանում։ «Ուորրենի ամսաթերթը» երկար ու բարակ հայտարարեց իր բաժանորդներին, որ նոր տաղանդներ որոնելիս նա առաջինը հանդիպել է Մարտին Իդենին։ «Սպիտակ Մուկը» իրեն էր հասցեագրում այդ արժանիքը. նույնն էր անում «Հյուսիսային տեսությունը», մինչև որ «Երկրագունդը» հանդիսավորապես նշեց, որ աղավաղած «Ծովի երգերը» առաջին

անգամ ինքն է տպել։ «Պատանեկություն և արբունք» ժուռնալը, որը խորամանկորեն աղատվել էր իր պահանջատերերից, ներկայացրեց Մարտին Իդենի վրա իր իրավունքները։ Իսկ այդ ժուռնալը ոչ ոք չէր կարդում, բացի ֆերմերների երեխաներից։ «Անդրցամաքային ամսաթերթն» ու «Մոդը» նույնպես առաջնություն էին պահանջում այդ հարցում։ Սինգլտրի, Դարնլեյ և Ընկերության համեստ ձայնը չէր լսվում աղմուկից։ Հրատարակչությունը չուներ իր օրգանը, որի մեջ նա կարողանար բարձրաձայն հրատարակել իր իրավունքների մասին։

Բոլոր թերթերը հաշվում էին Մարտինի հոնորարները։ Չգիտես ինչպես՝ մի քանի ժուռնալների կողմից նրան առաջարկված պայմանները հասարակության սեփականություն դարձան. Օկլենդի քարոզիչները, ինչպես և մասնավոր խնդրատուները անվերջ նեղացնում էին նրան բերանացի ու գրավոր խնդիրքներով։ Սակայն բոլորից վատ պահում էին իրենց կանայք։ Նրա լուսանկարները տարածվել էին ահագին քանակությամբ, իսկ ռեպորտյորները ջանք չխնայեցին ամենավառ գույներով նկարելու նրա «բրոնզե դեմքը», «հուժկու ուսերը», «հստակ, հանգիստ հայացքը», «ժուժկալ մարդու փոս ընկած այտերը»։ Այդ «ժուժկալ մարդու այտերը» առանձնապես ծիծաղեցրին Մարտինին, երբ նա հիշեց իր պատանեկության փոթորկալի տարիները։ Շատ հաճախ հասարակության մեջ այս կամ այն կինը այնպես էր նայում նրան, որ կարծես գնահատում ու ջոկում էր նրան։ Մարտինը ծիծաղում էր՝ հիշելով Բրիսսենդենի նախազգուշացումները։ Ո՛չ, կանայք երբեք չեն փչացնելու նրան։ Դա անկասկած է։ Դրան վերջ է տվել նա։

Մի օր, երբ Մարտինն ուղեկցում էր Լիզզիին երեկոյան դպրոցը, Լիզզին նկատեց, որ մոտից անցնող գեղեցիկ, լավ հագնված և, ինչպես երևում է, հարուստ մի կին նայեց Մարտինին։ Այդ հայացքում անպատշաճ կամ երկիմաստ ոչինչ չկար, բայց Լիզզին սարսռեց բարկությունից, որովհետև իսկույն հասկացավ, թե ի՛նչ է նշանակում այդ

նայվածքը։ Մարտինն իմանալով նրա բարկության պատճառը, ասաց նրան, որ արդեն վաղուց է սովոր այդպիսի նայվածքներին և սառնասիրտ է դրանց վերաբերմամբ։

— Դա չի կարող պատահել,— աղաղակեց նա փայլատակող աչքերով։— Նշանակում է՝ դուք հիվանդ եք։

— Ես դեռ երբեք այսքան առողջ չեմ եղել։ Հինգ ֆունտ ավելացել է իմ քաշը։

— Ես չեմ ասում, թե դուք ֆիզիկապես հիվանդ եք. ես խոսում եմ ձեր ուղեղի մասին։ Ձեր գլխում ինչ-որ բան կարգին չի։ Մինչև անգամ ես տեսնում եմ այդ։ Մի՞թե ես մարդ չեմ և չեմ հասկանում։

Մարտինը մտածկոտ քայլում էր նրա կողքից։

— Ես շատ կուզենայի, որ դուք շուտով հաղթահարեք այդ,— բացագանչեց հանկարծ Լիզին։— Դուք չեք կարող անտարբեր վերաբերվել կանանց... մանավանդ, երբ նրանք այդպես են նայում ձեզ։ Դա բնական է։ Հո դուք փոքր տղա չեք։ Ազնիվ խոսք, որ ես ուրախ կլինեի եթե վերջապես հայտնվի մի կին, որը սթափեցնի ձեզ։

Լիզին ճանապարհ գցելուց հետո Մարտինը վերադարձավ «Մետրոպոլ»։

Նա նստեց թիկնաթոռին և հայացքն ուղղեց դեպի տարածությունը՝ առանց շարժվելու և առանց մտածելու որևէ բանի մասին։ Միայն ժամանակ առ ժամանակ երևում և անհետանում էին հեռավոր անցյալի ուրվականները։ Նա անտարբեր դիտում էր տեսիլքները, որոնք նրան թվում էին որպես աղոտ երազներ։ Բայց Մարտինը քնած չէր։ Հանկարծ բացեց աչքերը և նայեց ժամացույցին։ Ժամը ճիշտ ութն էր։ Եվ նա նորից ընկղմվեց երազկոտ, կիսաքուն վիճակի մեջ, և տեսիլքները նորից անցան նրա աչքի առաջ երկար շարանով։ Այդ տեսիլքներում նշանակելի ոչինչ չկար։ Շարունակ կրկնվում էր մի տեսարան— խիտ սաղարթ՝ արևի ճառագայթներով շողշողուն։

Դուռը խփեցին, և նա ստիպված եղավ ուշքի գալ։ Նա քնած չէր և դռան թխթխկոցը նրա ուղեղում առաջաց-

րեց հեռագրի, նամակի, լվացքատունից սպիտակեղեն բերող սպասավորի պատկերացում։ Նա հիշեց Ջոյին, և ինքնիրեն հարց տալով, թե ո՛ւր կարող է գտնվել Ջոն, Մարտինը բղավեց.

— Մտե՛ք։

Շարունակելով մտածել Ջոյի մասին՝ նա մինչև անգամ չուզեց չեկավ դռան կողմը նայելու։ Դուռը մեղմ բացվեց, բայց Մարտինն արդեն մոռացել էր դռան բախյունը, և նրա աչքին նորից սկսեցին տեսիլքներ երևալ։ Հանկարծ ետևից որոշակի լսվեց կանացի լաց։ Այդ լացը ճնշված ու դուսպ էր։ Մարտինը մի ակնթարթում տեղիցը վեր թռավ։

— Ռո՛ւթ,—բացագանչեց նա զարմացած և գրեթե վախեցած։

Ռութի դեմքը գժգույն և տխուր էր։ Նա կանգնած էր դռան մոտ, մի ձեռքով բռնել էր այն, իսկ մյուս ձեռքը սեղմում էր կրծքին։ Հանկարծ նա աղերսագին երկարեց Մարտինին իր երկու ձեռքերը և քայլեց դեպի առաջ։ Նրա տեսնելով նրան բազկաթոռին՝ Մարտինը նկատեց, որ նրա մատները շատ սառն են։ Նա մոտեցրեց մի այլ բազկաթոռ և նստեց նրա արմունկին։ Շփոթությունից նա չէր կարողանում խոսել։ Ռութի հետ իր ունեցած սիրային ռոմանը վաղուց թաղված էր նրա սրտում։ Նա այնպես էր զգում՝ կարծես «Մետրոպոլ» հյուրանոցի տեղում կանգնած լիներ «Տաք աղբյուրների» լվացքատունը և նրան առաջարկած լիներ զբաղվել ամբողջ շաբաթվա լվացքով։ Նա մի քանի անգամ փորձեց խոսակցություն սկսել, բայց ամեն անգամ էլ չէր վճռվում։

— Ոչ ոք չգիտի, որ ես այստեղ եմ,— ասաց Ռութը ցածր ձայնով և թախանձագին ժպտալով։

— Ի՞նչ ասացիք,— հարցրեց Մարտինը։

Նրա ձայնի հնչյունը զարմացրեց հենց իրեն։

Ռութը կրկնեց իր խոսքերը։

— Օ՜,— բացագանչեց Մարտինը,— ասելու ուրիշ բան չգտնելով։

— Ես տեսա, որ դուք մտաք հյուրանոց և, մի քիչ սպասելով, ձեր ետևից եկա։

— Օ՜,— կրկնեց Մարտինը։

Դեռ երբեք նրա լեզուն այսքան կաշկանդված չէր եղել։ Անկասկած, նրա բոլոր մտքերը գլխից դուրս էին թռել։ Նա զգում էր, որ լռությունն անհարմար է դառնում, սակայն մահվան սպառնալիքի տակ էլ չէր կարող գտնել, թե ինչի՞ց սկսի խոսակցությունը։ Իրոք ավելի լավ կլիներ, եթե նա այժմ գտնվեր «Տաք աղբյուրների» լվացքատանը,— նա լուռ վեր կքաշեր թևքերը և կսկսեր աշխատանքը։

— Ուրեմն, դուք ինձ հետևե՞լ եք,— ասաց նա վերջապես։

Ռութը խորամանկորեն գլխով արեց և քանդեց իր կրծքի շարֆը։

— Ես նախ տեսա ձեզ փողոցում այն աղջկա հետ...

— Այո՛,— ասաց նա պարզապես,— ես ուղեկցում էի նրան մինչև երեկոյան դպրոցը։

— Մի՞թե դուք ուրախ չեք ինձ տեսնելով,— հարցրեց Ռութը մի նոր ընդմիջումից հետո։

— Այո, այո,— պատասխանեց նա հապճեպ,— բայց խոհեմությո՞ւն է, որ դուք մենակ եք եկել այստեղ։

— Ես աննկատելիորեն արագ անցա։ Ոչ ոք չգիտի, որ, ես այստեղ եմ։ Ես շատ էի ուզում տեսնել ձեզ։ Ես եկա ասելու ձեզ, որ հասկանում եմ, թե ինչ հիմարն էի։ Ես եկա, որովհետև այլևս չէի կարող, որովհետև սիրտս հրամայում էր ինձ գալ... որովհետև ուզում էի գալ։

Ռութը վեր կացավ և մոտեցավ Մարտինին։ Նա իր ձեռքը դրեց Մարտինի ուսին և մի պահ կանգնած էր այդպես՝ խոր և հաճախակի շունչ քաշելով, հետո մի արագ շարժումով ընկավ նրա գիրկը։ Բնությունից բարի և զգայուն, Մարտինը հասկացավ, որ ինքն էլ պետք է գրկի նրան, հակառակ դեպքում այնքան խոր կվիրավորի նրան, որքան

տղամարդը կարող է վիրավորել կնոջը։ Բայց նրա գրկախառնման մեջ չկար ո՛չ ջերմություն, ո՛չ փաղաքշանք։ Նա պարզապես ձեռքերով գրկեց նրան, բայց իր մարմինը չէր սարսռում, ինչպես լինում էր անցյալում, և նա զգում էր միայն այն, որ դա անհարմար ու ամոթ է։

— Դուք ինչ՞ու եք դողում այդպես,— հարցրեց նա։— Մրսո՞ւմ եք։ Ջուաքացնե՞մ բուխարին։

Մարտինը մի շարժում արեց՝ ցանկանալով ազատվել, բայց Ռութն ավելի պինդ կպավ նրան։

— Դա ջղերիցն է,—պատասխանեց աղջիկը՝ ատամները կափկափելով,— ես հիմա ինձ կհավաքեմ։ Արդեն լավ եմ զգում ինձ։

Ռութի դողը աստիճանաբար դադարեց։ Մարտինը շարունակում էր պահել նրան իր գրկում, բայց այլևս չէր զարմանում։ Նա հիմա արդեն գիտե, թե ինչո՛ւ է եկել Ռութը։

— Մայրիկս ուզում էր, որ ես ամուսնանամ Չարլի Հեպգուդի հետ,— հայտարարեց նա։

— Չարլի Հեպգուդի՞։ Դա այն երիտասարդը չէ՞, որը միշտ գռեհկություններ էր ասում,— քրթմնջաց Մարտինը։ Մի քիչ լռելուց հետո ավելացրեց.—Իսկ հիմա ձեր մայրիկը ուզում է, որ դուք ինձ հետ ամուսնանաք...

Նա ասաց այդ առանց հարցական շեշտի։ Նա այդ ասաց բոլորովին վստահ, և նրա աչքի առաջով անցան իր ստացած հոնորարների թվանշանների երկար սյունակները։

— Մայրիկս հիմա չի հակառակվի,— ասաց Ռութը։

— Նա հարմա՞ր ամուսին է համարում ինձ ձեզ համար։

Ռութը խոնարհեց գլուխը։

— Բայց չէ՞ որ ես ավելի լավ չդարձա այն օրից, երբ նա քանդեց մեր նշանադրությունը,—մտածկոտ ասաց Մարտինը։— Ես չեմ փոխվել։ Նույն Մարտին Իդենն եմ։ Ես մինչև անգամ վատթարացել եմ. հիմա ծխում եմ։ Չգո՞ւմ եք ծխախոտի հոտը։

Պատասխանի փոխարեն՝ Ռութը ուրախ և կոկետությամբ իր ձեռքը տարավ նրա շրթունքներին՝ սպասելով սովորական

համբույրը։ Բայց Մարտինի շրթունքներն անշարժ մնացին։ Նա սպասեց, մինչև որ Ռութն իջեցրեց իր ձեռքը, հետո շարունակեց։

— Ես չեմ փոխվել։ Ես չեմ մտել ծառայության։ Մտադիր էլ չեմ ծառայության մտնելու։ Եվ ես առաջվա պես պնդում եմ, որ Հերբերտ Սպենսերը մեծ ու ազնիվ մարդ է, իսկ դատավոր Բլոունտը՝ գռեհիկ էշ։ Ես երեկ ճաշել եմ նրա մոտ և հաստատ գիտեմ այդ։

— Իսկ ինչո՞ւ չընդունեցիք իմ հայրիկի հրավերը,— հարցրեց Ռութը։

— Որտեղի՞ց գիտեք այդ։ Ո՞վ ուղարկեց նրան ինձ մոտ։ Ձեր մա՞յրը։

Ռութը լուռ մնաց։

— Իհարկե, նա՛։ Ես այդպես էլ կարծում էի։ Պիտի ենթադրել, որ դուք էլ եկել եք հիմա ձեր մոր պնդումով։

— Ոչ ոք չգիտի, որ ես այստեղ եմ,—եռանդագին առարկեց Ռութը։—Մի՞թե կարծում եք, որ մայրս թույլ կտար ինձ այդ։

— Որ նա կթույլատրեր ձեզ ամուսնանալ ինձ հետ, ես դրանում չեմ կասկածում։

Ռութը աղեկտուր ձայնով ճչաց.

— Ա՜հ, Մարտին, դաժան մի՛ լինեք։ Դուք մինչև իսկ չհամբուրեցիք ինձ ոչ մի անգամ։ Դուք իսկական քար եք։ Բայց մտածեցեք, թե ես համարձակվել եմ ինչպիսի՞ քայլ անելու։

Նա չորս կողմը նայեց երկյուղով, միաժամանակ և հետաքրքրությամբ։

— Մտածեցեք, թե ո՛ւր եմ եկել ես։

«Ես կարող էի մեռնել ձեզ համար»,—Մարտինը հիշեց Լիզզիի խոսքերը։

— Իսկ ինչո՞ւ դուք չվճռվեցիք այդ անել ավելի առաջ,— հարցրեց Մարտինը խիստ տոնով,— երբ ես ապրում էի խցիկում, երբ ես սոված էի։ Չէ՞ որ այն ժամանակ էլ ես նույն Մարտին Իդենն էի—և որպես մարդ, և որպես գրող։

Վերջերս ես շատ հաճախ տվել եմ ինձ այդ հարցը, և ոչ միայն ձեր վերաբերմամբ, այլև բոլորի։ Տեսնո՞ւմ եք, ես չեմ փոխվել, թեպետ հանկարծ իմ արժեքի երևութապես բարձրանալը կարող է այդ միտքն առաջացնել։ Ինքս աշխատում եմ ինձ համոզել, որ ես փոխվել եմ։ Բայց ես նույնն եմ։ Ո՛չ մի նոր տաղանդ, ո՛չ մի նոր առաքինություն չունեմ։ Իմ ուղեղը մնաց այն, ինչպես որ էր։ Մինչև անգամ գրականության և փիլիսոփայության նկատմամբ նոր հայացքներ չունեմ։ Իմ անձնավորության արժեքը չի ավելացել այն ժամանակից, երբ ես սպրում էի անհայտ ու միայնակ։ Միայն զարմանում եմ, թե ինչո՞ւ ես հանկարծ ամեն տեղ ցանկալի հյուր դարձա։ Անկասկած, մարդկանց հարկավոր եմ ոչ թե ես ինքս, որովհետև ես նույն Մարտին Իդենն եմ, որին նրանք սրանից առաջ չէին ուզում ճանաչել։ Նշանակում է, որ նրանք իմ մեջ գնահատում են մի այլ բան, այնպիսի բան, որը ոչ մի կապ չունի իմ հատկությունների հետ, որը ինձ հետ ընդհանուր ոչինչ չունի։ Ասե՞մ ձեզ, թե ի՛նչն է գնահատվում իմ մեջ։ Այն, որ ես բոլորի կողմից ճանաչվել եմ։ Բայց չէ՞ որ այս ճանաչումն ինձանից դուրս է գտնվում։ Դա գոյություն ունի ուրիշների մտքում։ Բացի այդ, ինձ հարգում են հիմա այն դրամի համար, որը ես շահել եմ ու շահում եմ։ Բայց այդ դրամը հո իմ անձնավորությունը չի։ Դրամը մնում է բանկում և Տոմի, Դիկի և Հարրիի գրպաններում։ Այդ ճանաչման ու դրամի սիրո՞ւն է, որ դուք այժմ ուզում եք ինձ։

— Դուք ճմլում եք իմ սիրտը,— հառաչեց Ռութը— Դուք գիտեք, որ ես սիրում եմ ձեզ, որ ես այստեղ եկել եմ միայն նրա համար, որ սիրում եմ ձեզ։

— Վախենում եմ, որ դուք ոչ բոլորովին հասկացաք ինձ,— մեղմորեն նկատեց Մարտինը— Ասացեք ինձ ահա թե ինչ. ինչո՞ւ դուք հիմա ավելի ուժեղ եք սիրում ինձ, քան այն օրերին, երբ դուք այնքան վճռականություն ունեցաք, որ հրաժարվեցիք ինձանից։

— Ներեցե՛ք և մոռացե՛ք,—կրակոտ տոնով ճչաց Ռու-

թը։—Ես միշտ էլ սիրել եմ ձեզ, լսո՞ւմ եք, միշտ։ Ահա թե ինչո՞ւ այստեղ եմ և գրկում եմ ձեզ։

— Ես հիմա շատ կասկածամիտ եմ դարձել. ամեն ինչ դնում եմ կշեռքին։ Ձեր սերն էլ ուզում եմ կշռել և տեսնել, թե դա ի՞նչ բան է։

Ռութը հանկարծ ազատվեց նրա գրկախառնումից, ուղղվեց և ուշադիր նայեց նրան։ Նա կարծես ուզում էր մի բան ասել, բայց լուռ մնաց։

— Ուզո՞ւմ եք իմանալ, թե ես ինչ եմ մտածում այդ մասին,— շարունակեց նա։— Երբ ես այնպիսին էի, ինչպիսին մնացել եմ մինչև այժմ, ինձ ոչ ոք չէր ուզում ճանաչել՝ բացի իմ դասակարգի մարդկանցից։ Երբ իմ գրքերն արդեն գրված էին այդ աշխատությունները կարդացողներից ոչ մեկը խրախուսական մի խոսք չասաց։ Ընդհակառակը, ինձ կշտամբում էին, որ ես առհասարակ գրում եմ՝ գտնելով, որ ես զբաղվում եմ ինչ-որ ամոթապարտ և դատապարտելի գործերով։ Բոլորն ասում էին ինձ լոկ մի բան. գնա՛, աշխատի՛ր։

Ռութը բողոքի շարժում արեց։

— Այո՛, այո՛,—շարունակեց Մարտինը,— ճիշտ է, դուք խոսում էիք ոչ թե աշխատանքի, այլ «կարիերայի» մասին։ «Աշխատանք» բառը, ինչպես և իմ գրվածքներից շատերը ձեզ դուր չեն գալիս, կոպիտ են։ Բայց հավատացնում եմ ձեզ, որ իմ տեսակետից ավելի կոպիտ էր այն, որ բոլորը համոզում էին ինձ գործի անցնել, կարծես ուզում էին ուղիղ ճամփի բերել ինչ-որ անբարոյական արարածի։ Սակայն, դառնանք բուն հարցին։ Իմ գրվածքների հրատարակումն ու հասարակության կողմից գնահատումը փոփոխություն առաջացրին ձեր զգացումների մեջ։ Դուք մերժեցիք ամուսնանալ Մարտին Իդենի հետ, թեպետ այն բոլորը, ինչ լույս է տեսել հիմա, գրված էր դեռ այն ժամանակ։ Ձեր սերը նրա հանդեպ բավականաչափ ուժեղ չէր, որպեսզի դուք այն ժամանակ ամուսնանայիք նրա հետ։ Իսկ հիմա ձեր սերը բավականաչափ ուժեղ դուրս եկավ և, անտարա-

կույս, այդ զարմանալի փաստի բացատրությունը պիտի փնտրել հենց այն բանում, որ ես նշանավոր եմ դարձել։ Այս դեպքում ես չեմ խոսում իմ եկամուտների մասին. թերևս դուք չեք մտածել դրանց մասին, թեև ձեր ծնողների համար, հավանական է, դա էլ շատ մեծ նշանակություն ունի։ Այդ ամենն ինձ համար այնքան էլ հաճելի չէ։ Իսկ ամենավատն այն է, որ դա ստիպում է ինձ կասկած ունենալ սիրո, սրբազան սիրո նկատմամբ։ Մի՞թե և սերը պետք է սնվի փառքով ու ամբոխի գնահատականով։ Ակներև է, որ դա այդպես է։ Ես այնքան շատ եմ մտածել դրա մասին, որ ի վերջո գլուխս պտույտ է գալիս։

— Խ՞եղճ գլուխ,— Ռութը ձեռքով քնքշորեն շոյեց նրա մազերը։—Թող նա այլևս պտույտ չգա։ Թող նա վերջապես հանգստանա։ Մարտին, սկսենք սկզբից։ Ես գիտեմ, որ թույլ գտնվեցի՝ զիջելով մայրիկիս համառ պահանջներին։ Ես չպետք է անեի այդ։ Չէ՞ որ դուք շատ հաճախ խոսել եք ամենաթողության և մարդկային թուլությունների հանդեպ ներողամտության մասին։ Ներողամիտ եղեք իմ նկատմամբ, ներեցե՛ք ինձ։

— Ա՜հ, ներում եմ,—բացագանչեց նա անհամբեր։ —Հեշտ է ներել, երբ ներելու բան չկա։ Ձեր վարմունքը կարիք չունի ներման։ Դուք վարվեցիք ձեր հայացքների համաձայն։ Ես էլ կարող եմ ներողություն խնդրել ձեզանից, որ ֆր ժամանակին չընտրեցի ծառայության մի ասպարեզ։

— Ես ձեր լավն էի ցանկանում,—առարկեց Ռութը եռանդագին։— Ես չէի կարող ձեր լավը չցանկանալ, քանի որ սիրում էի ձեզ։

— Ճիշտ է, բայց դուք իմ լավը ցանկանալով, քիչ էր մնացել, որ կործանեիք ինձ։ Այո՛, այո՛։ Քիչ էր մնացել, որ ոչնչացնեիք իմ ստեղծագործությունը, իմ ապագան։ Ես բնությամբ ռեալիստ եմ, իսկ բուրժուական կուլտուրան չի հանդուրժում ռեալիզմը։ Բուրժուազիան երկչոտ է։ Նա վախենում է կյանքից։ Եվ դուք ինձ ուզում էիք ստիպել վախենալ կյանքից։ Դուք ձգտում էիք արգելափակել ինձ նեղ

վանդակում։ Դուք ուզում էիք ինձ ստիպել, որ ես խոնարհվեմ կեղծ արժեքների առաջ, ուզում էիք իմ վզին փաթաթել անիրական, գռեհիկ բարոյականությունը։

Տեսնելով, որ Ռութն ուզում է առարկել, Մարտինը շարունակեց։

— Ես ընդունում եմ, որ այդ գռեհկությունը միանգամայն անկեղծ է, բայց և այնպես նա կազմում է բուրժուական նրբակենցաղի, կուլտուրայի հիմքը։ Ինչպես ասում էի, դուք ուզում էիք կաղապարել ինձ ձեր ձևի, վերածել ինձ ձեր դասակարգին պատկանող մարդու՝ տոգորված ձեր դասակարգի բարոյականությամբ և ձեր դասակարգի նախապաշարումներով։

Մարտինը տխրությամբ շարժեց գլուխը։

— Դուք հիմա էլ չեք հասկանում ինձ։ Դուք իմ խոսքերին բոլորովին չեք տալիս այն միտքը, որը ես ներդրում եմ նրանց մեջ։ Ձեզ համար զուտ ֆանտազիա է այն ամենը, որ ասում եմ ես։ Իսկ ինձ համար դա իսկական իրականություն է։ Լավագույն դեպքում դուք զվարճանում եք ու զարմանում, որ ահա մի անտաշ տղա, որը դուրս գալով ցեխից՝ հանկարծ հասել է այնտեղ, որ մինչև անգամ համարձակվում է քննադատել ձեր դասակարգը և նրան գռեհիկ անվանել։

Ռութը հոգնած գլխով հենվեց նրա ուսին և ջղային դողը նորից բռնեց նրան։ Մարտինը կանգ առավ մի բոպե՝ սպասելով, որ աղջիկը թերևս կխոսի, և շարունակեց։

— Իսկ հիմա դուք ուզում եք վերածնել մեր սերը։ Դուք ուզում եք ամուսնանալ ինձ հետ։ Դուք ուզում եք ինձ։ Բայց չէ՞ որ կարող է պատահել այսպես— ջանացե՛ք ինձ հասկանալ— որ իմ գրքերը լույս չտեսնեին և գնահատականի չարժանանային, բայց և այնպես ես կլինեի այն, ինչ ես եմ։ Իսկ դուք երբեք չէիք գա ինձ մոտ։ Միայն այդ գրքերը... նրանց թող սատանան...

— Մի՛ հայհոյեք,— ընդհատեց նրան Ռութը։

Մարտինը ծիծաղեց չարախինդ։

— Այո՛, այո՛,— ասաց նա։— Այն պահին, երբ հարց

է դրված ձեր կյանքի ամբողջ երջանկության մասին, դուք վախենում եք կոպիտ խոսք լսելուց։ Դուք առաջվա պես վախենում եք կյանքից։

Ռութը ցնցվեց այդ խոսքերից, որոնք կարծես արժեքից դրկում էին նրա այժմյան քայլի էությունը. բայց և այնպես նրան թվաց, որ Մարտինն անիրավացի է նրա նկատմամբ, և վշտացավ։

Մի որոշ ժամանակ նրանք նստած էին լուռ— Ռութը՝ անձնատուր իր տխուր խորհրդածություններին և չմտածելով, թե ի՞նչ անի. իսկ Մարտինը՝ հիշելով անցյալի իր սերը։ Նա հիմա պարզ հասկացավ, որ ինքը երբեք չի սիրել Ռութին։ Նա սիրել է մի ոմն իդեալական Ռութի, երկնային էակի՝ ստեղծված նրա երևակայությամբ, պայծառ ու լուսաճաճանչ ոգուն, որին նա զոհերգել է իր սիրային պոեմներում։ Իսկական Ռութին, բուրժուա աղջկանը՝ բուրժուական հոդերանությամբ ու սահմանափակ մտահորիզոնով, նա երբեք չի սիրել։

Հանկարծ Ռութը սկսեց խոսել.

— Ես ընդունում եմ, որ ձեր ասածներից շատ բան իրավացի է։ Ես իրոք վախենում էի կյանքից։ Ես բավական ուժեղ չէի սիրում ձեզ։ Բայց հիմա սովորեցի ավելի ուժեղ սիրել։ Ես սիրում եմ ձեզ, ինչպես դուք կաք, ինչպես էիք առաջ։ Ես ձեզ սիրում եմ այն բոլորի համար, որոնք ձեզ տարբերում են իմ դասակարգի մարդկանցից։ Թող ձեր հայացքներն երբեմն անհասկանալի լինեն ինձ։ Ես կսովորեմ հասկանալ դրանք։ Ես պետք է սովորեմ հասկանալ նրանք։ Ձեր ծիծաղը, ձեր հայհոյելը— այդ բոլորը ձեր էության մասն են կազմում, և ես սիրում եմ ձեզ նաև դրանց համար։ Ես շատ բան կսովորեմ։ Վերջին տասը բոպեում արդեն ես շատ բան սովորեցի։ Մի՞թե նախկինում ես երբեք կվճռեի գալ այստեղ ձեզ մոտ։ Ա՜հ, Մարտին...

Ռութը լացեց, իր գլուխը ծածկեց Մարտինի կրծքին։ Հանկարծ նա զգաց, որ Մարտինը, իրենից բաժանվելուց հետո առաջին անգամը, քնքշորեն ու խանդաղատանքով գրը-

կեց նրան։ Ռութը զգալով այդ, նրան նայեց ցոլացող աչքերով։

— Չափազանց ուշ է,— ասաց Մարտինը։ Նա հիշեց Լիզզիի խոսքերը։— Ես հիվանդ եմ, Ռութ... ո՛չ, ֆիզիկապես չէ։ Իմ հոգին, ուղեղն է հիվանդ։ Ինձ համար ամեն ինչ կորցրել է իր արժեքը։ Ես ոչինչ չեմ ուզում։ Եթե դուք դայիք վեց ամիս առաջ, ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել։ Իսկ հիմա արդեն ուշ է, չափազանց ուշ։

— Ո՛չ ուշ չի,— աղաղակեց Ռութը։— Ես ձեզ կապացուցեմ այդ։ Ես ձեզ կապացուցեմ, որ իմ սերը դասակարգային նախապաշարումներից ուժեղ է։ Ես պատրաստ եմ հրաժարվել այն ամենից, ինչ այնքան թանկ է բուրժուազիային։ Ես այլևս չեմ վախենում կյանքից։ Ես կհեռանամ հորից ու մորից, կխայտառակեմ իմ անունը։ Ես հիմա պատրաստ եմ ընդմիշտ մնալ ձեզ հետ, եթե դուք ուզում եք և ես կկարողանամ դրանում պարծանք և ուրախություն գտնել ինձ համար։ Եթե ժամանակին ես դավաճանել եմ սիրուն, այժմ պատրաստ եմ զոհաբերել նրան այն ամենը, ինչ այդ ժամանակ մղեց ինձ դավաճանության։

Ռութը կանգնել էր Մարտինի առաջ փայլատակող աչքերով։

— Սպասում եմ,— ասաց նա։— Սպասում եմ, Մարտին, որ դուք «այո՛» ասեք։ Նայե՛ք ինձ։

«Ի՞նչ հրաշալի է,— մտածեց Մարտինը՝ նայելով նրան,— նա քավել է բոլոր իր նախկին սխալները, իսկական կին է դարձել, վերջապես պրկել, դեն է գցել բուրժուական պայմանականությունների երկաթ շղթաները։ Այդ բոլորը հիանալի է, փառահեղ, անհավատալի արիություն... Բայց ի՞նչ է կատարվում ինձ հետ»։

Ռութի այդ հայտարարությունը բոլորովին չհուզեց Մարտինին։ Նա միայն խելքով էր գնահատում աղջկա այդ վարմունքը։— Դա հրդեհ պիտի առաջացներ նրա մեջ, իսկ նա բավականացավ սառնորեն գնահատելով այդ։ Նրա սիրտը

չմորմոքվեց։ Ո՛չ մի ցանկություն աղջկա նկատմամբ չզարթնեց նրա մեջ։ Նա նորից հիշեց Լիզզիի խոսքերը։

— Ես հիվանդ եմ, շատ հիվանդ եմ,— ասաց Մարտինը՝ ձեռքի հուսահատ մի շարժումով։— Ես մինչ այժմ չէի էլ կասկածում, որ այդքան հիվանդ եմ։ Ինչ-որ բան է պատահել ինձ։ Ես երբեք չեմ վախեցել կյանքից, և երբեք չէի կարող պատկերացնել, որ հաղեցել եմ կյանքից։ Կյանքն այնքան է լիացրել ինձ, որ ես այլևս ցանկություն չունեմ ոչ մի բանի։ Եթե տեղ մնացած լիներ, ես հիմա կուզեի ունենալ ձեզ։ Տեսնո՞ւմ եք, թե ես ինչքա՞ն հիվանդ եմ։

Նա դցեց գլուխը թիկնաթոռի հենակին և փակեց աչքերը. և ինչպես լացող երեխան միանգամից մոռանում է իր բոլոր դառնությունները, երբ արցունքների միջով նայում է արևի ճառագայթների խաղին, այնպես էլ Մարտինը մոռացավ և հիվանդությունը, և Ռութի ներկայությունը, և ամեն բան աշխարհում՝ դիտելով հանկարծ իր աչքին երևացած տեսիլքը— արևի ճառագայթներով շողշողուն խիտ սաղարթը։ Այդ սաղարթը չափազանց կանաչ էր, շլացնում էր աչքերը, բայց նա շարունակում էր նայել՝ ինքն էլ չիմանալով, թե ինչո՛ւ։

Մարտինը սթափվեց՝ լսելով դռան բռնակի ճռճռոցը։ Ռութը կանգնած էր դռան մոտ։

— Ինչպե՞ս դուրս գամ այստեղից,— աղիողորմ հարցրեց նա։— վախենում եմ։

— Ա՜հ, ներեցե՛ք ինձ,— բղավեց նա՝ տեղից վեր թռչելով։— Ինքս էլ չգիտեմ, թե ի՛նչ է կատարվում ինձ հետ։ Ես մոռացա, որ դուք այստեղ եք։

Նա ձեռքով շփեց ճակատը։

— Տեսնո՞ւմ եք, որ ես բոլորովին վատառողջ եմ։ Ես կուղեկցեմ ձեզ մինչև ձեր տունը։ Կարող ենք դուրս գալ ետևի դռնով։ Մեզ ոչ ոք չի նկատի։ Միայն իջեցրեք ձեր քողը։

Ռութը պինդ բռնել էր նրա ձեռքը. նրանք գնում էին նեղ միջանցքներով ու կիսամութ սանդուղքներով։

— Դե՛, հիմա ես վտանգից ազատ եմ,— ասաց նա զուրս գալով փողոցը, և ուզեց թողնել Մարտինի ձեռքը։

— Ես կուղեկցեմ ձեզ մինչև տուն,—ասաց նա։

— Ո՛չ, ո՛չ,— առարկեց Ռութը,— պետք չկա։

Ռութը նորից փորձեց ազատել իր ձեռքը։ Մի պահ դա հետաքրքրություն առաջացրեց Մարտինի մեջ։ Թվում էր, թե Ռութը հենց հիմա է վախենում որևէ բանից, երբ նրա համար ոչ մի վտանգ չէր մնացել։ Կարծես Ռութը ուզում էր շուտով պոկ գալ նրանից, և Մարտինը վերագրում էր այդ պարզապես ջղային հակազդեցության։ Այդ պատճառով Մարտինը բռնած պահեց նրա ձեռքը և տարավ նրան դեպի տուն։ Երբ նրանք մոտենում էին անկյունին, Մարտինը հանկարծ տեսավ երկար վերարկու հագած մի մարդու, որը հապճեպ անհետացավ՝ մտնելով մի տան դարբասը։ Դռան առջևով անցնելիս՝ Մարտինը նայեց ներս և չնայած որ անծանոթն իր օձիքը բարձրացրել էր, նա վստահ էր, որ դա Ռութի եղբայրը՝ Նորմանն էր։

Ճանապարհին Ռութն ու Մարտինը գրեթե չէին խոսում։ Ռութը տխուր էր, իսկ Մարտինը սառնասիրտ։ Նա ասաց Ռութին, թե շուտով գնալու է Խաղաղ օվկիանոսի կղզիները, իսկ Ռութն իր կողմից ներողություն խնդրեց նրանից իր անակնկալ այցելության համար։ Դրանով էլ վերջացավ։ Նրանք բաժանվեցին Ռութի տան դռանը։ Նրանք սեղմեցին իրար ձեռք, բարի գիշեր մաղթեցին, ընդսմին Մարտինը հանդիսավորապես բարձրացրեց գլխարկը։ Դուռը փակվեց։ Մարտինը մի գլանակ վառեց և ետ դարձավ՝ հյուրանոց գնալու համար։ Հիմա անցնելով դատարկ դռան առաջով, ուր թաքնվեց Նորմանը, Մարտինը կանգ առավ և մի բոպե մտքերով տարվեց։

— Ռութը ստեց,—ասաց նա բարձրաձայն։— Նա ուզում էր ինձ հավատացնել, որ վճռական ու համարձակ քայլ է արել, մինչդեռ նրա եղբայրն այդ ամբողջ ժամանակ սպասում էր նրան, որպեսզի նրան ետ տանի տուն։

Նա քրքջաց։

— Ա՜հ, այդ բուրժուանե՞րը։ Երբ ես աղքատ էի, մինչև անգամ չէի համարձակվում մոտենալ նրա քրոջը։ Իսկ երբ բանկում ընթացիկ հաշիվ ունեցա, նա ինքն է բերում ինձ մոտ իր քրոջը։

Մարտինն ուզում էր շարունակել իր ճամփան, երբ հանկարծ ինչ-որ թափառաշրջիկ մոտենալով նրան, դիպավ նրա արմունկին։

— Կար՞ող եք մի քսանհինգ ցենտանոց տալ ինձ, միստեր, գիշերվա օթևանի համար։

Այդ ձայնը ստիպեց Մարտինին իսկույն ետ նայել։ Հաջորդ ակնթարթին նա արդեն պինդ սեղմում էր Ջոյի ձեռքը։

— Հիշո՞ւմ ես, ես ասում էի քեզ, որ մենք կհանդիպենք,— ասում էր Ջոն։— Ես նախազգում էի այդ։ Ահա և մենք հանդիպեցինք։

— Երևում է, որ դու շատ լավ ես,—ասաց Մարտինը հիացած։— Մինչև անգամ, կարծես, չաղացել ես։

— Հենց այդպես է,— հաստատեց Ջոն, ուրախ ժպտալով։—Այն օրվանից, երբ ես թափառաշրջիկ դարձա, հասկացա, թե ի՛նչ է նշանակում կյանքը։ Ես երեսուն ֆունտ ավելացրի իմ քաշը և հրաշալի եմ զգում ինձ։ Առաջներում աշխատանքն այնքան էր հյուծել ինձ, որ միայն ոսկոր ու կաշի էր մնացել ինձանից։ Իսկ այսպիսի կյանքն իսկական իմ ուզածն է։

— Սակայն դու ողորմություն ես խնդրում գիշերային օթևանի համար,—տնաղ արեց Մարտինը նրան,—իսկ գիշերը ցուրտ է։

— Հը՞, գիշերային օթևանի համար ողորմությո՞ւն եմ խնդրում։— Ջոն գրպանից հանեց մի բուռ դրամ։— Ինձ բավական էր և սա,— խոստովանվեց նա,— դու բարի մարդ երևացիր աչքիս, դրա համար էլ ես ուզեցի ճանկել քեզ։

Մարտինը հոհոաց։

— Քո մոտի դրամը կբավե նաև խմելու,—նկատեց նա։

Ջոն դրամները ետ դրեց գրպանը։

— Ես հիմա չեմ խմում,—հայտարարեց նա։— Խմելու ցանկություն չունեմ։ Քեզնից բաժանվելուց հետո միայն մի անգամ եմ խմել, այն էլ հիմարացա և խմեցի դատարկ ստամոքսով։ Երբ ես անասունի նման աշխատում էի, անասունի նման էլ խմում էի։ Հիմա, որ ապրում եմ մարդավարի, մարդավարի էլ խմում եմ։ Երբեմն կոնծում եմ մի փոքր բաժակ, և դրանով էլ բանը վերջանում է։

Մարտինը պայմանավորվեց հանդիպել նրա հետ հաջորդ ...ը և մտավ հյուրանոց։ Նախասրահում նա նայեց շոգեսավերի չվացուցակը։ Հինգ օրից Թաիթի էր մեկնում «Մ...ի...ոզա» շոգենավը։

— Հեռախոսով մի կայուտ պատվիրեցեք ինձ,— ասաց նա հյուրանոցի գրագրին,— բայց ոչ վերևում, այլ ներքևում քա...ու փչած կողմից, չմոռանա՛ք։

Իր սենյակը մտնելով՝ Մարտինը անկողին մտավ և անվրդով քնեց։ Նրա ուղեղն արդեն չէր ընդունում տպավորություններ։ Մինչև անգամ Ջոյի հետ հանդիպման մեծ ուրախությունը վաղանցիկ եղավ։ Դա շարունակվեց մի պահ, իսկ հաջորդ պահին Մարտինն արդեն ափսոսաց, որ հանդիպել է լվացքատան նախկին ընկերոջը, որովհետև նա մինչև անգամ չէր ուզում խոսակցել։ Որ հինգ օրից հետո կմեկնի իր սիրելի օվկիանոսը,—դա էլ չէր ուրախացնում նրան։ Նա փակեց աչքերը և խաղաղ քնեց ութ ժամ շարունակ։ Նա դես ու դեն չէր շուռ գալիս անկողնում, երազ չէր տեսնում։ Նա հանգստանում էր գիշերային ինքնամոռացության մեջ և ամեն անգամ էլ անպայման ափսոսում էր, որ զարթնեց։ Կյանքը հոգնեցնում ու տանջում էր նրան, իսկ ժամանակը նրա համար իսկական չարչարանք էր։

ԳԼՈՒԽ XLVI

— Գիտե՞ս, բանը ինչո՛ւմն է՝ Ջո,— սկսեց Մարտինը՝ հաջորդ առավոտ ողջունելով աշխատանքի իր հին ընկերոջը,

— այստեղ Քսանութերորդ փողոցում կա մի ֆրանսիացի։ Նա դրամ է հավաքել և պատրաստվում է վերադառնալ Ֆրանսիա։ Նա ունի շատ լավ, հիանալի սարքավորված լվացքատուն։ Քեզ համար դա ուղղակի գյուտ է, եթե միայն դու ուզում ես վերադառնալ նստակյաց կյանքի։ Ահա քեզ դրամ. գնիր քեզ վայելուչ մի կոստյում և գնա, խոսիր նրա հետ։ Տուր իմ անունը, և նրանք քեզ ցույց կտան ամեն բան։ Եթե լվացքատունը կհավանես և կգտնես, որ դա արժի նրա ուզած գինը—տասներկու հազար դոլլար — ասա ինձ, և լվացքատունը կլինի քոնը։ Իսկ հիմա կորի՛ր։ Ես զբաղված եմ։ Մենք քեզ հետ կխոսենք հետո։

— Ահա, թե ի՛նչ, Մարտ,—դանդաղ ասաց Ջոն՝ զսպելով իր մեջ եփ եկող ցասումը.—Ես այստեղ եկա, որ տեսակցեմ քեզ հետ։ Հասկացա՞ր։ Ոչ թե նրա համար, որ քեզանից նվեր ստանամ մի լվացքատուն։ Ես եկա քեզ մոտ, որպես հին բարեկամի մոտ, իսկ դու ինձ խցկում ես լվացքատուն։ Ահա, թե ես ի՛նչ կասեմ քեզ այդ մասին. գրո՛ղը տանի քո լվացքատունը, քեզ էլ հետը։

Նա վեր կացավ և ուզում էր դուրս գալ, բայց Մարտինը բռնեց նրա ուսերից և նրան դարձրեց՝ երեսը դեպի իրեն։

— Լսի՛ր, Ջո,—ասաց նա,—եթե դու այդպիսի հիմարություններ դուրս տաս, ես քեզ մի լավ կտրորեմ՝ մեր հին բարեկամության սիրուն։ Հասկացա՞ր։ Ուզո՞ւմ ես։

Ջոն խոյացավ և ուզում էր հրել Մարտինին, բայց նրան բռնող ձեռքերը չափազանց ուժեղ էին։ Երկուսով սկսեցին իրար ետևից վազ տալ սենյակում, բախվեցին աթոռին, որը ջարդ ու փշուր եղավ և վերջապես տապալվեցին հատակին։ Ջոն պառկած էր կռնակին, իսկ Մարտինը նստել էր նրա վրա՝ ծնկով ճնշելով նրա կուրծքը։ Ջոն հազիվ շունչ քաշեց, երբ Մարտինն ազատ թողեց նրան։

— Հիմա արդեն կարելի է խոսել,— ասաց Մարտինը,— ինչպես տեսնում ես, ավելի լավ է գլուխ չդնել ինձ հետ։ Ես ուզում եմ առաջին հերթին վերջացնել լվացքատան խնդիրը։ Հետո կգաս, և մենք կխոսենք մի այլ բանի մասին,

ինչպես անում էինք անցյալում։ Ասացի քեզ, չէ՞ որ հիմա ես զբաղված եմ։ Ի՞նքդ տես։

Հենց այդ րոպեին լակեյը բերեց առավոտյան փոստը— նամակների և ժուռնալների մի մեծ ծրար։

— Հնարավո՞ր է կարդալ այս ամենը և միաժամանակ խոսակցել։ Գնա, պարզիր լվացքատան խնդիրը և վերադարձիր այստեղ։

— Լա՛վ,— դժկամությամբ համաձայնեց Ջոնն։— Ես կարծեցի, որ դու պարզապես ուզում ես ազատվել իմ ներկայությունից։ Բայց հիմա տեսնում եմ, որ սխալվել եմ։ Միայն թե բոքսում դու ինձ չես կարող հաղթել, Մարտ։ Գրազ կգամ՝ ինչ-որ ուզում ես։

— Լա՛վ մենք հետո ձեռնոցներ կհագնենք ու կփորձենք,— ասաց Մարտինը ծիծաղելով։

— Անպայման։ Հենց որ ես կգնեմ լվացքատունը։— Ջոն երկարեց իր բռունցքը։— Տեսնո՞ւմ ես։ Ես քեզ երկու հարվածով կտապալեմ։

Երբ նա վերջապես գնաց, Մարտինը շունչ քաշեց թեթևացած։ Նա սկսել էր խուսափել մարդկանցից. Օրեցօր նրա համար ավելի դժվար էր դառնում շփվել մարդկանց հետ։ Նրանց ներկայությունը ճնշում էր Մարտինին, իսկ խոսակցելու անհրաժեշտությունը կատաղեցնում էր նրան։ Մարդկանց հետ հանդիպելիս նա անհանգստություն էր զգում և հանգստանում էր միայն այն ժամանակ, երբ հաջողվում էր պոկ գալ նրանցից։

Ջոյի գնալուց հետո Մարտինը իսկույն չսկսեց աչքի անցկացնել փոստը։ Նա գրեթե կես ժամ նստած մնաց բազկաթոռին՝ առանց ոչինչ անելու, իսկ նրա գլխում միայն հաղվագեպ թռչում-անցնում էին ինչ-որ անհարիր մտքեր— բնաթաթախ մարդու գիտակցության կարճատև ցոլքեր։

Վերջապես նա ոտքի կանգնեց և սկսեց ծանոթանալ նամակների բովանդակության հետ։ Գրեթե մի դյուժին նամակներում խնդրում էին նրան ուղարկել իր ինքնագիրը,— այդպիսի նամակները նա ճանաչում էր առաջին հայացքից.

հետո գալիս էին պրոֆեսիոնալ խնդրարկուների նամակներ, զանազան պարզամիտների և զանազան ծրագիրներ հղացողների նամակներ՝ սկսած հավերժական շարժիչի մոդել հնարած գյուտարարից և երկրի մակերևույթի՝ սնամեջ գնդի ներքին մասը լինելն ապացուցող մաթեմատիկոսից մինչև այն մարդը, որը ֆինանսական օգնություն էր խնդրում՝ դնելու համար մի թերակղզի հարավային Կալիֆորնիայում, ուր նա ուզում է կոմունիստական հասարակություն հիմնել։ Կային նամակներ՝ նրա հետ ծանոթանալ ցանկացող կանանցից։ Նամակներից մեկը ժպիտ առաջացրեց նրա մեջ. նրա հեղինակը, ցանկանալով ապացուցել, որ ինքը բարոյական ու երկյուղած աղջիկ է, նամակին առդրել էր եկեղեցում իր մշտական տեղի համար վճարի ստացականը։

Հրատարակիչներն ու խմբագիրները նրան հեղեղում էին նամակներով. ոմանք ծնկադիր խնդրում էին նրանից հոդվածներ, ուրիշները ծնկաչոք պաղատում էին նրանից նոր գրքեր,—բոլորը ծարավի էին նրա գրվածքներին—խեղճ գրվածքներին, որոնք ուղարկելու համար նա ժամանակին դրրավ էր դնում իր բոլոր իրերը։ Կային և անսպասելի չեկեր—վճար անգլիական հրատարակությունների համար, վճար օտար լեզուների թարգմանության իրավունքի համար։ Մարտինի անգլիական գործակալը հաղորդում էր որ Գերմանիայում իրավունք են ստացել հրատարակելու նրա գրքերից երեքը։ Նրա գրքերը թարգմանվում էին և Շվեդիայում, բայց այդ երկիրը չէր մասնակցում Բեռնի կոնվենցիային, այնպես որ այդ թարգմանությունների համար չէր կարելի ոչինչ ստանալ։ Հարցապնդում էր ստացվել և Ռուսաստանից, նույնպես զուտ ձևական, որովհետև Ռուսաստանն էլ չէր մասնակցում այդ կոնվենցիային։

Մարտինն աչքի անցկացրեց թերթի կտրոնների մի ամբողջ կույտ, որոնք ուղարկված էին հատուկ բյուրոյի կողմից. նա կարդաց, թե ի՞նչ են գրում նրա անձնավորության և փառքի մասին, որն աճում էր անչափ արագությամբ։ Մարտին Իդենը հոյակապ մի ժեստով ամբոխին նետեց

միանգամից իր բոլոր գրվածքները։ Ակներև է, որ դրանով էլ բացատրվում է նրա հանկարծական փառքը։ Նա գրոհով նվաճեց ամբոխին, ինչպես այդ պատահել էր և Կիպլինգի հետ, երբ նա պառկած էր մահամերձ, և ամբոխը, հնազանդվելով հոտային զգացմունքին, հանկարծ սկսեց կարդալ նրա գրքերը։ Մարտինը հիշեց, որ նույն ամբոխը մի քանի ամիս հետո, ոչ մի բան չհասկանալով կարդացածից, նույն Կիպլինգին ցեխի մեջ տրորեց։ Այդ միտքը դառը ժպիտ առաջացրեց Մարտինի մեջ։ Ո՞վ կարող է ասել, որ մի քանի ամսից նրան էլ չի սպասում նույն բանը։ Բայց նա կխաբի ամբոխին։ Նա այն ժամանակ կլինի արդեն հեռու, օվկիանոսում, իր եղեգնյա տնակում, մարգարտի առևտրով կզբաղվի, ստորջրյա խութերի վրայով կթռչի-կանցնի, կորսա շնաձկներ, վայրի այծի որսի կգնա՝ Տայոխային մոտիկ մի հովտում։

Եվ այդ բոպեին իր դրության անհուսալիությունը պարզ պատկերացավ նրա աչքին։ Նա հանկարծ հասկացավ, որ գտնվում է Ստվերների հովտում։ Նրա ամբողջ կյանքն անցյալումն էր. նա նսեմացել է, թառամել ու թեքվում է դեպի մահը։ Մարտինը հիշեց, թե նա այժմ որքան շատ է քնում և ինչպես ուզում է շարունակ քնել։ Իսկ դեռ մոտիկ անցյալում ատում էր քունը։ Քունը նրանից գողանում էր կյանքի ամենաթանկագին ժամերը։ Նա այն ժամանակ քսանչորս ժամից միայն չորսն էր հատկացնում քնի և, նշանակում է, չորս ժամ քիչ էր ապրում։ Նա ինչպե՞ս քնից ճնշված էր զգում իրեն այն ժամանակ։ Եվ ինչպե՞ս հիմա ճնշված է զգում իրեն կյանքից։ Կյանքը տխուր է, նրանից դառը համ է մնում։ Ահա, թե ի՛նչն էր տանում նրան դեպի կորուստ։ Կյանքին չձգտող մարդիկ մահվան ճանապարհն են փնտրում։ Ինքնապահպանման հին բնազդը դարթնեց նրանում։ Այո՛, նրան հարկավոր էր շտապ մեկնել։ Նա նայեց սենյակի չորս կողմը և սարսափեց այն մտքից, թե պետք է դարսել ու կապել իրերը։ Սակայն դա շտապ չի։ Առայժմ կարելի է զբաղվել գնումներով։

Գլխարկը հագնելով՝ նա դուրս եկավ և ամբողջ առավոտն անցկացրեց զինավաճառի խանութում՝ ջոկելով ավտոմատ զենքեր և ձկնորսական հանդերձանք։ Ապրանքների մոդան շատ հաճախ փոխվում է, այդ պատճառով նա վրճռեց, որ հասնելուց նա կպատվիրի առևտրի համար անհրաժեշտ բոլոր բաները։ Ապրանքները կարելի էր պատվիրել մինչև անգամ Ավստրալիայում։ Այդ միտքը շատ ուրախացրեց նրան։ Այն գիտակցությունը, որ պիտի անել ու ձեռնարկել ինչ-որ բան, նրա համար հիմա անհանդուրժելի էր։ Վերադառնալով հյուրանոց՝ նա հրճվանքով մտածում էր իր հանդստավետ բազկաթոռի մասին, որը պատրաստ էր ընդունելու նրան, և քիչ էր մնացել, որ վշշար կատաղությունից՝ տեսնելով, որ Ջոն սպասում է նրան այդ բազկաթոռին նստած։

Ջոն հիացած էր լվացքատնով։ Այնտեղ ամբողջ սարքավորումը կարգին էր և կարելի էր սկսել աշխատացնել այն թեկուզ վաղը։ Մարտինը պառկեց մահճակալին և կիսախուփ աչքերով լսում էր այն, ինչ պատմում էր Ջոն։ Մարտինի մտքերը սավառնում էին հեռվում, գրեթե գիտակցության սահմաններից դուրս։ Երբեմն նա իր վրա ճիգ էր գործադնում, որ մի բանով պատասխանի Ջոյին։ Չէ՞ որ նա սիրում էր Ջոյին։ Բայց Ջոն չափազանց կենսալի էր, այնպես որ հիմա նրա հետ շփվելը Մարտինի հյուծված մտքի համար հիվանդագին ազդեցություն էր գործում։ Դա չափազանց մեծ բեռ էր նրա հոգետանջ հոգու համար։ Երբ Ջոն հանկարծ հիշեցրեց նրան, որ մի օր նրանք երկուսով ձեռնոց կհագնեն՝ բոքսի մրցության համար, Մարտինը քիչ էր մնացել, որ գոռա ցավից։

— Մի՛ մոռանա, Ջո, որ դու լվացքատանդ պետք է սահմանես այն կարգ ու կանոնը, որի մասին խոսում էիր «Տաք աղբյուրներում»։ Ո՛չ մի արտաժամյա աշխատանք։ Ո՛չ մի գիշերային աշխատանք։ Վայելուչ վճար բանվորներին։ Ո՛չ մի դեպքում երեխաներին մի վարձի աշխատանքի։ Ո՛չ մի դեպքում, հասկանո՞ւմ ես։

Ջոն գլխով արեց և գրպանից հանեց հուշատետրը։

— Այսօր նախաճաշից առաջ ես սահմանել եմ լվացքատան կանոնները։ Ահա՛, լսիր։

Նա սկսեց կարդալ, իսկ Մարտինը հավանություն էր հայտնում՝ շարունակ մտածելով, թե Ջոն վերջապես ե՞րբ կհեռանա։ Արդեն բավական ուշ էր, երբ Մարտինը զարթնեց։ Աստիճանաբար նրա գիտակցությունը վերադարձավ իսկական կյանքի փաստերին։ Սենյակում մարդ չկար։ Անկասկած, Ջոն աննկատելիորեն հեռացել է՝ տեսնելով, որ Մարտինը քնել է։ «Դա մի փափկանկատություն է նրա կողմից», մտածեց Մարտինը։ Հետո նա աչքերը փակեց և նորից քնեց։

Հաջորդ օրերը Ջոն շատ էր զբաղված լվացքատան կազմակերպական գործերով և շատ չէր ձանձրացնում Մարտինին։ Միայն նրա մեկնումի նախօրյակին թերթերում հաղորդվեց, որ Մարտին Իդենը գնում է «Մարիպոզա» նավով։ Հնազանդվելով ինքնապահպանման նույն բնազդին՝ նա դիմեց բժշկին, խնդրելով քննել իրեն։ Նրանում ամեն բան կարգին էր։ Թոքերն ու սիրտը ուղղակի հիանալի էին։ Որքան կարող էր դատել բժիշկը, նրա բոլոր օրգանները կատարելապես առողջ էին և գործում էին բոլորովին նորմալ։

— Դուք ոչ մի հիվանդություն չունեք, միստեր Իդեն,— ասաց բժիշկը,— բացարձակապես ո՛չ մի հիվանդություն։ Ձեր օրգանիզմը հրաշալի է։ Ես պարզապես նախանձում եմ ձեզ։ Դուք հոյակապ առողջություն ունեք։ Ի՞նչ լանջավանդակ։ Այդ լանջավանդակը՝ ձեր հզոր ստամոքսի հետ միատեղ — առողջության և ուժի գրավական է։ Մարդկային այդպիսի նմուշ պատահում է հազարից, մինչև անգամ տասը հազարից մեկ։ Դուք կարող եք ապրել մինչև հարյուր տարի, եթե որևէ դժբախտ դեպք չպատահի։

Եվ Մարտինը համոզվեց, որ Լիզզիի ախտորոշումը ճիշտ էր։ Ֆիզիկապես նա բոլորովին առողջ է։ Բայց նրա գլխի հետ մի բան է պատահել, և միայն ուղևորությունը, օվկիանոսային ճամփորդությունը կարող է լիովին վերականգնել

մեխանիզմի խանգարված աշխատանքը։ Ամենից վատթարն այն է, որ հիմա, մեկնումի պահին, Մարտինը հանկարծ կորցրեց որևէ տեղ գնալու ցանկությունը։ Խաղաղ օվկիանոսը, ինչպես թվում էր նրան, ոչնչով լավ չի բուրժուական քաղաքակրթությունից։ Մեկնումի միտքը ոչնչով չէր ոգևորում նրան, ընդհակառակը, առաջիկա նոր հոգնությունը միայն ընկճում էր նրան, և նա կգերադասեր արդեն նավի վրա գտնվել և այլևս ոչնչի մասին հոդ չտանել ու չմտածել։

Վերջին օրը նրա համար իսկապես տանջանք էր։ Թերթերում կարդալով նրա մեկնումի մասին՝ Բեռնարդ Հիգգինբոթամը, Գերտրուդն և ընդհանրապես բոլոր աղգականներն եկան նրանից հրաժեշտ առնելու։ Հետո կարիք եղավ վերջացնել մի քանի գործեր, վճարել հաշիվներ, բավարարել պնդերես ռեպորտյորներին։ Լիզզի Կոնոլիին նա հապճեպ հրաժեշտ տվեց երեկոյան դպրոցի դռան առաջ։ Վերադառնալով հյուրանոց իր սենյակում գտավ Ջոյին, որն ամբողջ ցերեկը զբաղվել էր լվացքատանը և միայն երեկոյան դեմ ազատվել ու եկել հրաժեշտ տալու։ Դա լցրեց Մարտինի համբերության բաժակը, բայց նա այնուամենայնիվ ստիպեց իրեն կես ժամ լսելու իր բարեկամի շաղակրատությունը, ջղայնությունից սեղմելով բազկաթոռի արմունկները։

— Նկատի ունեցիր, Ջո,— ասաց նա ի միջի այլոց,— որ քեզ ոչինչ չի կապում այդ լվացքատանը։ Ուզածդ րոպեին կարող ես վաճառել այն և դրամը ցրիվ տալ քամուն։ Հենց որ այդ բոլորը ձանձրացնի քեզ և ուզենաս դարձյալ թափառաշրջիկ կյանք վարել,— լուծարքի ենթարկիր այդ ամենը և գնա։ Ջանա ապրել այնպես, ինչպես ուզում ես։

Ջոն գլուխը շարժեց բացասաբար։

— Ո՛չ, հերի՛ք է, ես այլևս չեմ չափչփի ճամփաները։ Թափառաշրջիկի կյանքը լավ է ամեն տեսակետից, բացի մեկից,— այսինքն, ես ուզում եմ ասել, աղջիկներից։ Ես չեմ կարող առանց նրանց։ Ինչ ուզում ես արա։ Դու ինքդ հասկանում ես, թափառել հարկավոր է մենակ։ Երբ անցնում ես մի տան առաջով, ուր նվագում են, պարում են լավիկ, սպի-

տակ շորեր հագին աղջիկներ, պատուհանից ինձ են նայում, ծպտում են։ Է՜հ, սատանա՛ն տանի։ Այդ բոպեին կյանքն անհաճո է դառնում։ Ես սիրում եմ դաշտահանդեսներ, պարեր, լուսնկա գիշերով շրջագայություններ և նման բաներ։ Այլ բան է լվացքատունը — վայելուչ կոստյում, գրպանում մի բուռ դոլլարներ, երբ կարիք կա ծախսելու։ Ես երեկ հանդիպեցի այստեղ մի աղջկա հետ։ Թվում է, որ ես հենց հիմա կամուսնանայի նրա հետ, ազնի՛վ խոսք։ Ամբողջ ցերեկը, որ հիշում եմ, հոգիս հրճվում է։ Աչքերն անչա՜փ սիրալից, իսկ ձայնը — պարզապես երաժշտություն։ Է՜հ, Մարտ, ինչո՞ւ չես ամուսնանում դու։ Քո այդ դրամներով կարող ես ամուսնանալ ամենաառաջին գեղեցկուհու հետ։

Մարտինը դառնորեն ժպտաց և իր հոգու խորքում զարմացավ, թե ինչո՛ւ առհասարակ մարդ ցանկություն է ունենում ամուսնանալ։ Դա նրան տարօրինակ ու անհասկանալի էր թվում։

«Մարիպոզայի» տախտակամածին կանգնած, նավի մեկնումից անմիջապես առաջ, Մարտինը ճանապարհ գցողների բազմության մեջ նկատեց Լիզզի Կոնոլլիին։ «Նրան վերցրո՛ւ քեզ հետ,—շշնջաց նրան ներքին մի ձայն»։ Չէ՞ որ շատ հաճելի բան է մեծահոգի լինել, իսկ այդ աղջիկը, չափազանց երջանիկ կլիներ։ Մի վայրկյան այդ միտքը փորձության ենթարկեց նրան, բայց իսկույն դրան հաջորդեց խուճապային սոսկումը։ Նրա խոշտանգված սիրտը խիստ բողոքում էր դրա դեմ։ Նա հեռացավ շոգենավի եզրից ու մրմնջաց ինքնիրեն. «Ո՛չ սիրելիս, դու չափազանց ծանր հիվանդ ես»։

Մարտինը իջավ իր կայուտը և նստած մնաց այնտեղ՝ մինչև որ նավը բաց ծովը դուրս եկավ։ Ընդհանուր նավաենյակում ճաշի ժամանակ նրան հատկացրին պատվավոր տեղ՝ կապիտանի աջ կողմը և նա անմիջապես համոզվեց, որ «Մարիպոզայի» ուղևորների միջև նա ամենանշանավոր ու կարևոր մարդն է։ Բայց դեռ երբեք ոչ մի նշանավոր անձնավորություն այդպես չէր հուսախաբել իրեն շրջապատող հասարակությանը։ Իր ժամանակի մեծագույն մասը մեծ մարդն

անց էր կացնում տախտակամածի վրա կիսախուփ աչքերով, իսկ երեկոյան բոլորից առաջ էր գնում քնելու։

Երկու օր անց ուղևորները կազդուրվեցին ծովային հիվանդությունից և առավոտից մինչև երեկո խռնվում էին սրահներում և տախտակամածի վրա։ Մարտինն ինչքան շատ էր զննում նրանց, այնքան շատ էր զայրանում նրանց վրա։ Սակայն նա հասկանում էր, որ դա անիրավացի է։ Վերջ ի վերջո նրանք լավ և բարեմիտ մարդիկ են. նա չէր կարող չընդունել այդ, բայց և այնպես մտովին ավելացնում էր. այդպես է ամբողջ բուրժուազիան՝ նրա հոգեկան ողորմելիությամբ և իմացական դատողությամբ։ Մարտինը գազազում էր խոսակցելիս այդ մարդկանց հետ, որոնք անչափ հիմար ու բթամիտ էին թվում։ Իսկ երիտասարդների աղմկալի զվարճությունը ջղայնացնում էր նրան։ Երիտասարդները բնավ հանգիստ չէին նստում. նրանք տախտակամածի վրա թռվռում էին շարունակ, հիանում էին դելֆիններով, ցնծության աղաղակներով էին ողջունում ծիծեռնաձկների երամներին։

Մարտինը ջանում էր ինչքան կարելի է շատ քնել։ Նախաճաշից հետո նա սարքվում էր բազկաթոռին ձեռքին ունենալով մի ժուռնալ, որը նա չէր կարողանում կարդալ մինչև վերջը։ Տպված տողերը հոգնեցնում էին նրան։ Նա զարմանում էր, թե ինչպե՞ս է լինում, որ մարդիկ գրելու նյութ են գտնում, և չկարողանալով լուծել այդ առեղծվածը՝ խաղաղ քնում էր աթոռին։ Երկրորդ նախաճաշի զանգը զարթեցնում էր նրան, և նա բարկանում էր, որ հարկավոր է զարթնել։

Մի անգամ, ցանկանալով թոթափել իրենից այդ քնկոտ թմրությունը, Մարտինը գնաց կամրջակը՝ նավաստիների մոտ։ Սակայն նավաստիներն էլ, թվում էր, փոխվել են, փոխվել են այն ժամանակից հետո, երբ ինքն էլ նավաստի էր։ Նա իր մեջ չէր գտնում ոչ մի ընդհանուր բան այդ բթամիտ, ձանձրալի, անասնանման մարդկանց հետ։ Նա բոլորովին վհատվել էր։ Այստեղ վերևում, Մարտին Իդենը ըստինքյան ոչ ոքի հարկավոր չէր, իսկ վերադառնալ իր դա-

սակարգի մարդկանց, որոնց նա ճանաչում և ժամանակին սիրում էր, նույնպես արդեն չէր կարող։ Նրանք հարկավոր չէին իրեն։ Նրանք նույնպես զայրացնում էին Մարտինին, ինչպես և առաջին կարգի տխմար ուղևորները։

Կյանքը տանջալից էր Մարտին Իդենի համար, ինչպես պայծառ լույսը հիվանդ աչքերով մարդու համար։ Կյանքը փայլում էր նրա առաջ և շողշողում ծիածանի բոլոր գույներով, և նրան ցավ էր պատճառում, անտանելի ցավ։

Մարտինը կյանքումն առաջին անգամ էր ճամփորդում առաջին կարգի տոմսով։ Անցյալում այդպիսի նավերի վրա ճամփորդելիս նա կամ կանգնած էր լինում ժամապահության կամ քրտինք էր թափում հնոցի խորքում։ Այդ օրերին նա հաճախ գլուխը դուրս էր հանում դռնակից և նայում էր շքեղ հագնված ուղևորների բազմությանը, որոնք շրջագայում էին տախտակամածին, ծիծաղում էին, խոսակցում, ոչինչ չէին անում. տախտակամածի վրա քաշած ծածկոցը պաշտպանում էր նրանց արևից ու քամուց, իսկ ժիր մատուցողները վայրկենապես կատարում էին նրանց ամենափոքր ցանկությունները։ Նրան, ածուխի այդ հեղձուցիչ ծակից դուրս եկողին, այդ ամենը պատկերանում էր որպես դրախտ։ Իսկ հիմա նա ինքը, որպես պատվավոր ուղևոր, ճաշասեղանի շուրջը նստում էր կապիտանի աջ կողմը, բոլորն ակնածանքով էին նայում նրան, իսկ ինքը կարոտն է քաշում կամրջակի և հնոցի, որպես կորած դրախտի։ Նա չզտավ նոր դրախտ, իսկ հինն անդարձ կորցրել է։

Որպեսզի մի կերպ ժամանակ անցկացնի, Մարտինը փորձեց զրուցել շոգենավի ծառայողների հետ։ Նա խոսակցեց մեխանիկի օգնականի— ինտելիգենտ և դուրեկան մի մարդու հետ, որը միանգամից նրա վրա ընկավ սոցիալիստական պրոպագանդով և նրա բոլոր գրպանները լցրեց պամֆլետներով ու թռուցիկներով։ Մարտինն անտարբեր լսեց ստրկական բարոյականության պաշտպանության համար նրա բերած բոլոր փաստարկությունները և հիշեց իր սեփական նիցշեական փիլիսոփայությունը։ Բայց վերջ ի վերջո ինչի՞

համար է այս բոլորը։ Նա հիշեց Նիցշեի ամենախելացնոր դրույթներից մեկը, որով այդ գիժը տարակույսի տակ է առնում մինչև անգամ ճշմարտությունը։ Թերևս իրավացի է Նիցշեն։ Թերևս ոչ մի բանում երբեք չի եղել, չկա և չի լինի ճշմարտություն։ Թերևս ճշմարտության հասկացողությունն էլ անիմաստ բան է։ Բայց նրա ուղեղը շուտով հոգնեց, և նա ուրախությամբ նստեց բազկաթոռին ու նիրհեց։

Որքան էլ ճնշիչ էր նրա գոյությունը շոդենավում, ավելի մեծ գլխացավանք էր սպասում նրան, երբ նավը հասներ Թաիթի, և նա դուրս գար ցամաքը։ Ինչքա՞ն կամքի ուժ հարկավոր կլինի լարել։ Պետք է հոգալ ապրանքների մասին, գտնել Մարկիզյան կղզիները գնացող նավ, անել հազար ու մի անհրաժեշտ և հոգնեցուցիչ բան։ Եվ ամեն անգամ, որ մտածում էր այդ բոլորի մասին, նա սկսում էր պարզ ըմբռնել իրեն սպառնացող վտանգը։ Այո՛, նա արդեն գտնվում էր խավարի Հովտում, և ամենասոսկալին այն էր, որ նա վախ չէր զգում։ Եթե գեթ մի քիչ վախենար, կարող էր վերադառնալ դեպի կյանքը, բայց նա չէր վախենում և այդ պատճառով ավելի խորն էր մխրճվում խավարի մեջ։ Կյանքում ոչինչ չէր ուրախացնում նրան, մինչև անգամ այն, ինչ նա ժամանակին անչափ սիրում էր։ Ահա «Մարիպոզային» ընդառաջ փչեց վաղուց ծանոթ հյուսիս-արևելյան պասատը, բայց այդ քամին, որը ժամանակին հարբեցնում էր նրան, որպես գինի, հիմա միայն ջղայնացնում էր։ Նա հրամայեց, որ տեղափոխեն իր բազկաթոռը, որպեսզի խուսափի պասատից—հին օրերի ու գիշերների այդ բարի ընկերոջ անկոչ շոյանքից։

Սակայն Մարտինն առանձնապես դժբախտ զգաց իրեն այն օրը, երբ «Մարիպոզան» մտավ արևադարձային գոտին։ Նրա քունը փախավ։ Նա չափազանց շատ էր քնում, իսկ հիմա ակամա պետք է զարթուն մնա, դեգերի տախտակամածին և հանդուրժի կյանքի շլացուցիչ փայլը։ Նա լուռ մաս էր գալիս ետ ու առաջ։ Օդը խոնավ էր ու տաք, իսկ հաճախակի հանկարծական տեղատարափ անձրևները չէին

հովացնում։ Ապրելը ցավ էր պատճառում Մարտինին։ Երբեմն ուժասպառ լինելով, նա ընկնում էր բազկաթոռին, բայց, մի քիչ հանգստանալուց հետո, վեր էր կենում և նորից սկսում դեգերել։ Նա իրեն ստիպեց մինչև վերջ կարդալ ժուռնալը և գրադարանից վերցրեց մի քանի հատոր բանաստեղծություններ։ Սակայն նա չէր կարողանում կենտրոնացնել նրանց վրա իր ուշադրությունը և գերադասեց շարունակել իր շրջագայությունը։

Երեկոյան Մարտինը բոլորից հետո իջավ իր կայուտը, բայց, չնայած ժամանակի ուշ լինելուն, չէր կարողանում քնել։ Կյանքից հանգստանալու միակ միջոցը դադարեց գործելուց։ Դա արդեն ամեն չափ ու սահմանից անց է։ Նա վառեց լույսը և վերցրեց Սուինբեռնի ոտանավորների մի հատորիկը։ Մարտինը մի որոշ ժամանակ թերթեց այն և հանկարծ նկատեց, որ հետաքրքրությամբ է կարդում։ Վերջացնելով մի ոտանավորի ընթերցումը՝ սկսեց կարդալ հաջորդը, բայց վերադարձավ արդեն ընթերցածին։ Հետո գիրքը դնելով կրծքին, նա տարվեց մտքերով։ Այո, դա՛ է, որ կա։ Հենց դա՛ է։ Տարօրինակ է, որ նա առաջ չեր մտածել այդ մասին։ Դա ամեն ինչի բանալին է. նա միշտ էլ անգիտակցորեն գնացել է այդ ճանապարհով, իսկ հիմա Սուինբեռնը ցույց տվեց նրան լավագույն ելքը։ Նրան հանգիստ էր հարկավոր, և հանգիստը սպասում է նրան։ Մարտինը նայեց լուսանցույցին։ Դա բավականաչափ լայն էր։

Երկար օրերից հետո նրա սիրտն առաջին անգամ բարեխնդ ուրախությունից։ Վերջապես, նա գտել էր հիվանդության ճարը։ Նա վերցրեց գիրքն ու կարդաց բարձրաձայն։

Բյուր վայելքներից հոգնած կարևեր,
Հոգնած մշտուրախ խնջույքներից,
Ջիմանալով ահ ու ցանկություններ,
Մենք շնորհակալ ենք աստվածներից
Այն բանի համար, որ սիրտը մարդու
Կրծքի տակ հավետ չէ թփրտալու,
Որ բոլոր գետերը այս աշխարհում
Մի օր ծովի մեջ են թափվելու։

Մարտինը նորից նայեց լուսանցույցին։ Սուինբեռնը ցույց է տվել նրան ելքը։ Կյանքը տաժանելի է, ավելի ճիշտը՝ տաժանելիորեն անտանելի ու տաղտկալի է դարձել։ «Որ սիրտը մարդու կրծքի տակ հավետ չէ թպրտալու» այս տողը համակեց նրան խորին երախտագիտությամբ։ Դա աստվածների միակ բարերարությունն է աշխարհին։ Երբ կյանքը դարձել է տաժանելի ու անտանելի, ինչքա՞ն հեշտ է ազատվել նրանից՝ մոռանալով իրեն հավերժական քնի մեջ։

Ինչ՞ու է սպասում։ Ժամանակ է գնալու։

Գլուխը դուրս հանելով լուսանցույցից՝ Մարտինը նայեց կաթնագույն-սպիտակ փրփուրներին։ «Մարիպոզան» ջատ խորն էր նստած ջրի մեջ, և եթե նա ձեռքերից կախվի, ոտքերով կարող է դիպչել ջրին։ Ճղփյուն չի լինի։ Ոչ ոք չի լսի։ Ջրի կաթիլները թրջեցին նրա երեսը։ Նա շրթունքներին զգաց աղի ջրի համը։ Դա դուր եկավ նրան։ Նա մինչև անգամ մտածեց. չգրե՞լ իր կարապի երգը։ Բայց իսկույն ծիծաղեց իր վրա։ Մանավանդ որ ժամանակ չկար։ Նա անչափ ուզում էր շուտով վերջացնել։

Ավելի ապահով լինելու համար կայուտի լույսը հանգցրնելուց հետո՝ Մարտինը իր ոտքերը մտցրեց լուսանցույցի մեջ։ Նրա ուսերը չէին մտնում. այդ պատճառով հարկ եղավ զոռով անցնել՝ մի ձեռքով պինդ սեղմելով իրանը։ Շոգենավի հանկարծակի ցնցումն օգնեց նրան, և նա սողանցավ ու ձեռքերով կախվեց։ Հենց որ ոտքերը դիպան ջրին, նա բացեց ձեռքերը։ Սպիտակ գոլ ջուրը բռնեց նրան։ «Մարիպոզան» անցավ նրա կողքից որպես ահագին սև պատ՝ փայլելով մի քանի լուսանցույցներով, որոնց մեջ լամպերը դեռ չէին հանգցրած։ Շոգենավն արագ էր գնում։ Եվ հազիվ նա կարողացավ մտածել այդ մասին, արդեն գտնվում էր նավախելից հեռու և սկսեց հանգիստ լող տալ օվկիանոսի փրփրադեզ մակերեսում։

Նրա մարմնի սպիտակությունից հրապուրված թյունոս ձուկը կծեց նրան, և Մարտինը ծիծաղեց։ Ցավը հիշեցրեց

նրան, թե ինչո՛ւ է նա ջրի մեջ։ Թվում էր, որ նա բոլորովին մոռացել էր իր գլխավոր նպատակը։ «Մարիպոզայի» լույսերն արդեն անհետանում էին հեռվում, իսկ Մարտինը դեռ լողում ու լողում էր՝ կարծես ուզում էր լողալով հասնել մինչև մոտակա ծովափը, որը այդտեղից հարյուրավոր մղոն հեռու էր։

Դա կյանքի անգիտակցական բնազդն էր։ Մարտինը դադարեց լող տալուց, բայց որ ալիքները միացան նրա վրա, նորից սկսեց աշխատել ձեռքերով։ «Ապրելու կամք»,— մտածեց նա և արհամարհանքով ծիծաղեց։ Այո՛, նա կամք ունի, և բավականաչափ հաստատուն կամք, որպեսզի մի վերջին ճիգով քայքայի իրեն և դադարի գոյություն ունենալուց։ Նա ուղղահայաց դիրք ընդունեց։ Նայեց աստղերին և միաժամանակ արտաշնչեց իր թոքերից ամբողջ օդը։ Ձեռքերի և ոտքերի արագ և հուժկու շարժումով նա մինչև կրծքի կեսը բարձրացավ ջրից, որպեսզի ավելի ուժեղ և արագ խորասուզվի։ Հետո նա, առանց շարժում անելու, ընկղմվեց որպես սպիտակ արձան դեպի ծովի հատակը։ Խորասուզվելով՝ նա սկսեց ջուր կուլ տալ, ինչպես հիվանդը կուլ է տալիս թմրադեղ, որպեսզի շուտով անզգայանա։ Բայց երբ ջուրը խուժեց դեպի կոկորդն և սկսեց խեղդել նրան, նա ակամա, բնազդական մի ճիգով ելավ ջրի մակերեսն և դարձյալ տեսավ իր գլխի վերև աստղերը։

«Ապրելու կամք»,—նորից մտածեց նա արհամարհանքով՝ զուր ջանալով չշնչել դիշերային զով օդն իր ցավազդայուն թոքերով։ Լա՛վ, նա կփորձի մի այլ միջոց։ Նա մի քանի անգամ ուժեղ շունչ առավ։ Ծծելով կարելի եղածին չափ օդ՝ նա վերջապես սուզվեց գլխիվայր, ամբողջ ուժով։ Նա ընկղմում էր ավելի ու ավելի խոր։ Բաց աչքերով նա տեսնում էր կապտավուն ֆոսֆորային լույս։ Թյունոսները, որպես ուրվականներ, արագ անցնում էին նրա մոտից։ Նա հույս ուներ, որ նրանք չեն դիպչի իրեն, որովհետև դա կարող էր թուլացնել նրա կամքի լարվածությունը։ Նրանք չդիպան, և

Մարտինը մտովին շնորհակալություն հայտնեց կյանքին այդ վերջին դիտարտության համար։

Ավելի ու ավելի խորը սուզվում էր նա՝ զգալով, թե ինչպես թմրում են ձեռքերն ու ոտքերը։ Նա հասկանում էր, որ գտնվում է մեծ խորության մեջ։ Թմբկաթաղանթների վրա ճնշումն անտանելի էր դառնում և կարծես գլուխը տրաքվում էր։ Կամքի անհավատալի ուժով նա ստիպեց իրեն ավելի խորասուզվել, մինչև որ թոքերից ամբողջ օդը դուրս եկավ։ Օդի պղպջակները սահելով անցան նրա այտերից ու աչքերից և արագ սուրացին վերև։ Հետո սկսեց խեղդվելու չարչարանքը։ Բայց նա իր հանգող գիտակցությամբ հասկացավ, որ այդ չարչարանքը դեռևս մահը չի։ Մահը ցավ չի պատճառում։ Դա դեռ կյանք է, վերջին ցնցում, կյանքի վերջին տառապանքը։ Դա վերջին հարվածն էր, որ կյանքը հասցնում էր նրան։

Նրա ձեռքերն ու ոտքերը սկսեցին շարժվել ջղաձգորեն և թույլ։ Ուշ է։ Նա խորամանկությամբ խաբեց ապրելու կամքը։ Նա հիմա արդեն չափազանց խոր է սուզվել։ Արդեն չի կարող ջրի երեսը բարձրանալ։ Թվում էր, թե հանդարտ ու համաչափ լողում է տեսիլքների անծայր ծովում։ Միածանի շողքը պատեց նրան, և նա կարծես ձուլվեց նրա մեջ։ Իսկ դա՞ ինչ է։ Ասես, փարո՞ս լինի։ Բայց դա նրա ուղեղումն էր վառվում սպիտակ լույսը։ Դա ավելի ու ավելի վառ էր փայլում։ Ինչ-որ տեղից սոսկալի դղրդյուն լսեց, և Մարտինին թվաց, թե ինքը հսկայական սեպ սանդուղքից գլխիվայր թռչում է դեպի մութ անդունդը։ Նա պարզ հասկացավ այդ։ Նա թռչում է դեպի մութ անդունդը և այն պահին, երբ նա հասկացավ այդ, գիտակցությունն ընդմիշտ լքեց նրան։

Վերջ

ՎԵՐՋԱԲԱՆ

«Մարտին Իդենը» առանձնահատուկ տեղ է գրավում ամերիկյան նշանավոր գրող Ջեկ Լոնդոնի (1876—1916) ստեղծագործության մեջ։ Ռոմանտիկ պատմվածքների մեծ ցիկլից և «Երկաթե կրունկը» ուտոպիական վեպից՝ կապիտալիզմի կործանումը ցույց տալու և դեպի սոցիալիստական ապագան նայելու այդ խիզախ փորձից հետո, Լոնդոնը դառնում է դեպի արդիականություն. նա գրում է «Մարտին Իդեն» ռեալիստական վեպը կապիտալիստական Ամերիկայի մասին։

«Մարտին Իդենը» ստեղծվել է 1909 թվին։ Այդ ժամանակ Լոնդոնը տարվում էր ռուս գրականությամբ, հատկապես Գորկու ստեղծագործությամբ։ Ամերիկայում հենց նոր լույս տեսած «Ֆոմա Գորդեևի» թարգմանության վերաբերյալ գրած իր դրախտության մեջ Ջեկ Լոնդոնը հիանում է «ջերմ և կրքոտ բողոքով», Գորկու ստեղծագործությունների մեջ «չարչիների աշխարհի մեղադրանքով», «ճնշվածների և վիրավորվածների» պաշտպանությամբ, «կյանքի մեծ դաժան ճշմարտության» պատկերմամբ։ «Մարտին Իդենում» արտահայտվել է Գորկու ազդեցության անհաղթահարելի ուժը։

«Մարտին Իդենը» զգալի չափով ինքնակենսագրական վեպ է։ Սկզբում նավաստի և բանվոր, ապա հռչակավոր գրող դարձած նրա հերոսի ճակատագրում մենք ճանաչում ենք իր՝ Լոնդոնի, աղքատ ֆերմերի որդու, թափառաշրջիկի, նավաստու, ուտելիքների ծովահենի, բանվորի ճակատագիրը, որն աշխատանքով ու համառությամբ գրողի իր անունը հասցրել է փառքի գագաթին։ Սակայն իր գաղափարական բովանդակությամբ Լոնդոնի գիրքը դուրս է գալիս սովորական գեղարվեստական ինքնակենսագրության սահմաններից, ձեռք է բերում սոցիալական վեպի խորություն և ուժ, լի ատելությամբ դեպի ոսկու անարդ թագավորությունը։

«Մարտին Իդենը» կառուցված է խիստ հակադրության վրա։ Մի կողմից՝ ժողովրդից ելած տաղանդավոր մարդը, որը հանդգնել է հայտարարել անկախության և ստեղծագործ աշխատանքի իր իրավունքի մասին, մյուս կողմից՝ բուրժուական հասարակությունը իր գայլային բարոյականությամբ, իր դոեհիկ չարչիական վերաբերմունքով դեպի հոգևոր գուլտուրան։

Վեպի կարևորագույն թեման՝ արվեստի և արվեստագետի ճակատագիրն է բուրժուական հասարակության մեջ։ Բուրժուազիան թշնամի է իսկական արվեստին, մեծ գաղափարների և մարդկայնության արվեստին։ Դոլլարի երկրում գրականությունը վեր է ածված ապրանքի, իսկ գրողը՝ սովորական ապրանք արտադրողի։ Գրական երկի հաջողությունը պայմանավորվում է գրողի հռչակավոր անունով, ինչպես ապրանքի հաջողությունը՝ գործարանային մարկայով։ Իդենը չունի այդ մարկան և հասարակ նավաստու տաղանդավոր պատմվածքները կլանում են խմբագրական զամբյուղները։ Գրականությունն այստեղ սովորական բիզնես է, որտեղ թույլատրելի են ամեն տեսակ գանգստերական եղանակներ, որտեղ հրատարակիչները դաժանորեն շահագործում են գրողներին, իսկ ժուռնալները գոյություն ունեն սոսկ բուրժուական ընթերցողի գռեհիկ ճաշակը բավարարելու համար։

Իդենը իր եռանդը վատնում է այն բանի վրա, որպեսզի քանդի բուրժուական գռեհկության այդ պատնեշը։ Նա ինտենսիվ մտավոր կյանքի մարդ է, արվեստագետ՝ բառի ամենալայն իմաստով։ Հավատը դեպի տաղանդի վերջնական հաղթանակը, գիտելիքների մեծ ծարավը և վերջապես, դեպի Ռութը տածած սերը նրան պայքարելու ուժ են տալիս։

Հսկայական համառությունն ու սխրագործ աշխատանքն անում են իրենց գործը. Իդենը համբավ է ձեռք բերում։ Նա դառնում է հռչակավոր գրող, և այն խմբագիրները, որոնք երկար ժամանակ փակում էին դեպի փառք տանող նրա ուղին, այժմ, դոլլարների փայլից շլացած, հիացմունքի գովք են երգում նրան։

Իդենը հաղթահարեց դեպի ինքը տածվող անտարբերությունը։ Բայց ի՞նչ բերեց նրան այդ հաղթանակը, բացի դրամից և էժանագին փառքից։ Իդենը թշնամի է ագահության։ Նա արհամարհում է նրանց, ովքեր իրենց կյանքը վեր են ածում կատաղի մրցավազքի՝ հարստություն դիզելու համար։ Նա ատում է կապիտալիստական Ամերիկան՝ «չարչիների այդ օլիգարխիան»։ Օրեցօր նրա մեջ ամրանում է այն գիտակցությունը, որ իբրև արվեստագետ նա խորթ է բուրժուազիային։ Նա խորթ է նրան, որովհետև չի ձգտում իր տաղանդը դրամի վերածել և ապրել «բոլորի պես», որովհետև որպես գրող նա կյանքին նայում է աշխատանքի մարդու պայծառ աչքերով և նրանում որոնում է միայն ճշմարտությունը։ Իդենը ռեալիստ է։ Ձգտումը դեպի ճշմարտացի արվեստը անխուսափելիորեն նրան տանում է դեպի կապիտալիստական սիստեմի ստորության մերկացումը։ «Ես միշտ ձգտել եմ ռեալիզմին, իսկ բուրժուազիան իր ոգով ռեալիզմի հակառակորդն է։ Բուրժուազիան վախկոտ է, նա վախենում է կյանքից»։ Իր մերկ ճշմարտությամբ քնքուշ Ռութին վախեցրած իր «Վիկի-Վիկի» պատմվածքի մասին Իդենն ասում է. «Դա իրական է։ Դա ճշմարիտ է։ Եվ ես պետք է գրեմ կյանքի մասին այնպես, ինչպես տեսնում եմ»։

Իդենն բնդհարվում է կապիտալիստական ջունգլիների տարբեր ներ-

կայացուցիչների հետ, սկսած կոպիտ խանութպան Հիգգինբոթամից, վերջացրած Մորզերի նրբակիրթ ընտանիքով։ Սկզբում անփորձ Մարտինին զարմացնում է այդ ընտանիքի արտաքին կուլտուրականությունը, կրթվածությունն ու աշխարհիկ փայլը։ Բայց աստիճանաբար նա սկսում է հասկանալ, որ այդ բոլորը բուրժուական գործամոլների հոգևոր աղքատությունն ու եսասիրական շահադիտությունը ծածկող դիմակ է։ Նա տեսնում է, որ գիսկական գրականությունը, իսկական նկարչությունը, իսկական երաժշտությունը Մորզերը և նրանց նմանները չէին զգում։ Նրա պատկերացման մեջ վերանում է տարբերությունը Մորզերի և Հիգգինբոթամի միջև։

Դեպի Ռութը՝ տածած սերը՝ Իդենին բուրժուական հասարակության հետ կապող վերջին կամրջակն է։ Մարտինի սերը դեպի այդ աղջիկը՝ հզոր ռոմանտիկ կիրք է, երջանկության համար մղած պայքարում նրան թևավորող հրաշագործ ուժ։ Բայց այդ կրքի հետ համեմատած որքան փոքր է դուրս գալիս Ռութի սերը դեպի նա։ Քանի դեռ Մարտինն աղքատ է, Ռութը չի ուզում ի սեր նրա իր կապերը խզել ընտանիքի հետ։ Նա վերադառնում է Մարտինի մոտ, երբ սա արդեն փառք և դրամ ունի։ Իսկ Մարտինն ամենայն իրավունքով հայտարարում է նրան, որ ինքը առաջվանն է մնացել, և որ Ռութը, այդպիսով, սիրում է ոչ թե նրան, այլ նրա փառքն ու հարստությունը։ Մարտինին բուրժուական հասարակության հետ միացնող վերջին կամրջակն այրված է։ Իդենը մնում է մենակ։

Բնությամբ արվեստագետ Իդենի համար «ո՞ւմ համար գրել» հարցը դառնում է հարց՝ «ինչո՞ւ ապրել»։ Շրջապատի անհասկացողությունն ու դաժանությունը, հիասթափությունը սեփական ստեղծագործական ուժերի նկատմամբ, խզումը սիրած աղջկա հետ, լիակատար մենակությունը շահի աշխարհում, այդ բոլորը Իդենին հանգեցնում են ինքնասպանության մտքին։

Իդենի մահը՝ հրաժարումն է պայքարից, դիրքերի հանձնումը թշնամուն։ Իդենը մինչև վերջ մնաց ինդիվիդուալիստ, ընդունակ միայն անարխիստական բողոքի։ Նա պայքարում էր առանց քաղաքական ծրագրի և նպատակի, քանի դեռ ուժ ուներ, իսկ երբ ուժերն սպառվեցին, նա անձնատուր եղավ։ Իդենի ողբերգությունը հենց այն է, որ նա չկանգնեց բուրժուական հասարակարգի դեմ ռևոլուցիոն պայքարի ուղու վրա։ «Նա զուր ձգտում էր դեպի ետ, դեպի նավաստիական տախտակամածն ու ածխի նավամբարը, որպեսզի վերադարձնի կորցրած դրախտը»,—ասում է Լոնդոնը իր հերոսի մասին։

Մարտինի ինդիվիդուալիզմի հետ անխզելիորեն կապված է նրա նիցշեականությունը։ Գրողներից մեկին ուղարկած՝ «Մարտին Իդեն» վեպի օրինակում Լոնդոնը գրում է. «Այս գրքում, ի միջի այլոց, ես հարձակ-

վում եմ ինդիվիդուալիզմի վրա (հանձին հերոսի)։ Բայց ի զարմանս իմ, քննադատներից ոչ մեկը չի նկատել այդ»։

Իր հերոսի նիցշեական հայացքները Լոնդոնն անվանում է «ռեակցիոն-ինդիվիդուալիստական հայացքներ»։ Իր՝ Լոնդոնի տեսակետն արտահայտված է Իդենի բարեկամ, պոետ Բրիսսենդենի խոսքերում. «Սոցիալիզմը անխուսափելի է, որովհետև ժամանակակից հասարակարգը փտած է և չի կարող երկար ժամանակ կանգուն մնալ, որովհետև ձեր «ճիավոր մարդու» ժամանակը անցել է»։ Եվ այնուհանդերձ, նիցշեականության ազդեցությունը մինչև վերջ չէր հաղթահարված իր՝ Ջեկ Լոնդոնի կողմից։ Դրանում է վեպի էական թուլությունը։

Այդ բոլորով հանդերձ, «Մարտին Իդենը» մինչև-այժմ էլ մնում է ընթերցողների լայն շրջանակի սիրելի գիրքը։ Եվ դա պատահական չէ։ Առաջին հերթին վեպի առավելություններից է կապիտալիստական Ամերիկայի քննադատությունը, Ուոլ-Ստրիտի զինակիրների հնացած կեղծ լեգենդայի մերկացումը ԱՄՆ-ի, որպես ընդհանուր բարգավաճման երկրի մասին, ի վերջո, Ջեկ Լոնդոնի անկեղծ հավատը աշխատավոր ժողովրդի ստեղծագործ ուժերի նկատմամբ։ Այդ ամենը արտահայտված է ռեալիստական վառ գույներով։

ՅՈՒ ՏՐՈՒՅԿԻ

Թարգմանության խմբագիր՝ Ա. Վարդապետյան
Նկարիչ՝ Ռ. Բեդրոսով
Տեխնիկական խմբագիր՝ Պ. Սարոյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Ազարյան

ՎՖ 05953։ Պատվեր 497։ Տիրաժ 5000։
Հանձնված է արտադրության 1951 թ. հուլիսի 17-ին, ստորագրված է տպագրության 1951 թ. դեկտեմբերի 27-ին, թուղթ՝ 84×108/32, տպագր. 31¼ մամուլ, հրատ. 21,2 մամուլ, հեղ. 20,3 մամուլ.
Գինը 10 ռ. 60 կ., կազմը՝ 1 ռ. 50 կոպ.։

Հայպոլիգրաֆհրատի վարչության № 1 տպարան,
Երևան, Ալավերդյանի փող. № 65, 1951 թ.։